Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1169

PA
64376

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ԼԱԶԱՐԵԱՆ ՏՈՀՄԻ

Յանուն Սրբոյն Կատարինէ.

Во имя Св. Екатерины Армянская церковъ въ С. Петербургѣ сооружена съ зданіями въ 1780 году Ихъ Превосх. Гг. Лазаревыми.

Au nom de S.t Cathérine. Église Arménienne. à S.t Pétersbourg érigée en 1780 avec ses hotels par la famille de L. Ex. M.rs de Lazareff.

Եկեղեցի Հայոց ի Ս.Պ. Բուրգ կառուցեալ շինուածովքն յամի 1780 ի նոցունց Գերազանցու-թեց Տեարց Լազարեանց:

Лит. Г. Траншель

ՅՈՒՇԱՏԱԿԱՐԱՆ

ԿԵՆԱՑ ԵՒ ԳՈՐԾՈՑ

ՄԵԾԱՆՈՒՆ ՊԱՅԱԶԱՏԱՑ

ԼԱԶԱՐԵԱՆ ՏՈՀՄԻ

ՇԱՐԱԳՐԵԱԼ

Ի ՄՍԵՐԱՑ ՄԱԳԻՍՏՐՈՍԷ ԵՒ ԱՍՊԵՏԷ

ԳՐԻԳՈՐԵԱՆ ՄՍԵՐԵԱՆՑ

Ի ՄՈՍԿՈՒԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՑ ՃԵՄԱՐԱՆԻ ՏԵԱՐՑ ԼԱԶԱՐԵԱՆՑ

1856. ՌՅԵ

1169-ԱՀ

Ս. Պ. Բուրգայ Լուսաւորչեան Հայոց Եկեղեցեաց Հոգևոր Կառավարութիւնն ընթերցեալ և քննեալ զայս մասեան զանուանեալն Յիշատակարան տօնի Տեարց Լազարեանց, հիմնողաց մայրաքաղաքական Հայոց Եկեղեցեաց և Լազարեանց Ճեմարանի Արևելեան Լեզուաց որ 'ի Մոսկուա. որոյ և ոչ ինչ գտեալ 'ի պարունակութիւնս նորին ընդդէմ օրինաց Տէրութեան, վասն որոյ դրոշմամբ կնքոյ իւրոյ և ստորագրութեամբ անդամոյն, վճռէ և հրամայէ մուծանել զայն 'ի տպագրութիւն:

'Նախանդամ Հոգևոր Կառավարութեան Հայոց Ս. Պ. Բուրգայ

Եփրեմ Վարդապետ Ալթունեան:

1855. Յունվարի 18.

'Ի Ս. Պ. Բուրգ:

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
ИМ. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
754-2013

ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԵԱՆ

Տ. ՀՈԳԱԲԱՐՁՈՒԻ ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՑ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

ԼԱԶԱՐԵԱՆՑ

ԵՒ

ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԵԱՆ

Տ. ՕԳՆԱԿԱՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԻ

ԽԱՉԱՏՐՈՅ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

ԼԱԶԱՐԵԱՆՑ

Գոհութեամբ բազմաւ.

Որ ընծայեալն 'ի լոյս՝ նուիրէ:

ԲԱՐԵԳՈՒԹ ՏԵԱՐՔ

Գերծ է հոյակապ անուն յաւէրժայիշատակ Նախնեաց Ձե-րոց՝ արգասաւորացն յաւէտ յերկս առաքինիս՝ փառաւորագունի հանդիպեալ համբաւոյ ամենայն ուրեք, քաղցրագոյն ինձ երեւեցոյց վաստակ՝ զմիոյ միոյ 'ի նոցունց զարժանի յիշատակաց արարս (որչափ և որպէս հնար էր 'ի սակաւում պարապութեանս ժամանակի) ընտրանաւ խմբագրեալ՝ մանրապատում կարգել Յիշատակարան գէթ 'ի վայելս՝ նմին փափագողաց։ Եւ փափագողք այնք 'ի մերոց են Հայրենասիրաց, որք 'ի հեռաստանէ անդամ չդադարեցին՝ գրաւոր հայցմամբ զՂ.ազարեան Տոհմին ծագմանէ խնդրել 'ի Ձէնջ տեղեկութիւն։

Աւելորդ ուրեմն՝ նա և անշահ բոլորովին է ըստ իս՝ այժմէն իսկ 'ի հոգ մտանել, զախորժակա՞նմն արդեօք իւրոյն քմաց, թէ զնոցուն հակառակս դատիցէ 'ի սմա քննասէրն վերծանող. այն զի շատ է ինձ 'ի լիովն չափ խնդութիւն սրտի՝ զՁեր և եթ տեսանել զախորժ ակնարկութիւն 'ի դուզնաքեայս երկասիրութիւն. յոր խմբվանն վաստակել յանձն առի՝ ոչ յանպատեհից ինչ, և ոչ զարձեալ խոհականութեան արտաքոյ դատեալ գործ՝ Բարեհամբաւելոյդ 'ի շրթունս Մերայնոյ Ազգին, և Նախնականաց փառաց Տենչողացդ՝ գէթ չափ միայն զիջանել 'ի հաճոյս։

Դասատու Կրօնական ուսմանց
և Հայկաբանութեան,

Մ. Մսէրեանց Օ.ձ—ոնացի։

1854.
Յօգոստոսի 1։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԳԻՏԵԼԻՔ

ՕԺԱՆԴԱԿԱՆԱՑ ԳՈՐԾՈՑ

Ա. Որ ինչ տեղեկութիւնք 'ի մատենիս կան զանձանցն՝ զորոց հարկ էր ինձ պատմող լինել, և որ ինչ դարձեալ զանցից իւրացն՝ որք արժանի գրոցս էին յիշատակի, քաղեցան ճշգրտիւ և հաւատարմութեամբ՝ կէս մի 'ի գրոց տպագրելոց, և կէս մի 'ի գրչագրացն՝ զորս ինքնին ջան տարան այլք հաւաքել յիմ ձեռս ընդ ժամանակս ժամանակս:

Բ. Զօրականութիւն գործոյս պատշաճ դատեցի յերկս տրոհել մասունս. այլ թէ զինչ ինչ 'ի միում միոջ յանդիման առնել իցէ, տեսցի 'ի Նախադրութիւնն:

Գ. Զանունս 'ի Հրովարտակացն և 'ի Պարգևագրաց և 'ի Վկայականացն թղթոց և 'ի նամակաց 'ի մատենիս շարայարելոց՝ ես ինքնին 'ի մերս թարգմանեցի բարբառ. և զոմանց զառ 'ի յայլոց թարգմանութիւնս՝ որ արդէն 'ի տպագիր մատեանս կամ 'ի ձեռագիրս գտանէին, պէտ անձին արարի ծայր 'ի ծայր ընթերցանել: 'Ի վերջինսդ՝ պահելով յամենայնի զիմաստիցն հարազատութիւն՝ հարկեցայ ուրեք ուրեք փոփոխումն առնել բառից՝ դէթ առ պակասեցուցանելոյ զօտարոտի ձայնիցն խառնուրդս, կամ (եթէ ներեսցի ինձ այսպէս ասել) առ փոքր մի համ տալոյ անընդելական ոճոյ խօսիցն, որ տաղտուկ յոյժ բերէ Հայ լսելեաց:

Դ. Զճառս և զքերթուածս գրեալս յառաջնոց աշակերտաց կամ 'ի վարժապետաց Ճեմարանին, և կամ յայլոց ումանց 'ի համբաւելոցն գիտնականութեամբ, պարտ վարկայ՝ որպէս և էին 'ի տպագրեալ օրինակս կամ 'ի բուն իսկ ձեռագիրս յօրինողացն՝ ամբողջ և անփոփոխ 'ի մէջ ածել:

Ն. 'Ի մատենագրութեանս յայսմիկ՝ զԳրոցն, այն է՝ զՀինն, զկանոնաւորն և զՀարազատն մեր 'ի կէր արկի բարբառ, և ոչ զնորն չմշակեալ, իմն զռամկացն՝ զկողմանց կողմանց զԱշխարհիկն անուանեալ՝ աղխառնուր լեզու: Զի որչափ Համեղական և ազդու և գեղեցիկ առաջինն է, այնչափ անՀամ է վերջինն, թոյլ, տգեղ, անՀեթեթ, և զուրկ միանգամայն 'ի կարի կարևորացն կանոնաց ուղղախօսութեան, որպէս և շատք իսկ ոչ յաննշանից արանց՝ որ քաջահմուտք լեզուիս ծանուցին, վկայեն անաչառապէս:

ՑՈՒՑԱԿ

ԱՆՁԱՆՑ ԵՒ ԳՈՐԾՈՑ ՅԻՇԱՏԱԿԵԼՈՑ ՅԱՌԱՋՆՈՒՄ ՄԱՍԻՆ ՄԱՏԵՆԻՍ։

Ա. Ինքնիշխան գաւառակալք աշխարհին Հայոց՝ յետ թագաւորութեանն բառնալոյ։

— Նախահայր տոհմին Լազարեան։

Բ. Մանուկ Եղիազարեան։

— Որդի նորա՝ Եղիազար։

— Ղազար երկրորդ (կամ Եղիազար) Նազարեան, թոռն Մանուկայ։

Գ. Գաղթել Ղազարայ Նազարեան 'ի Պարսկաստանէ 'ի Ռուսաստան։

— Բնակել նորա յայլեայլ քաղաքս Ռուսաստանի, կանգնել գործարանս 'ի Մոսկուա, և գնել զկալուածս։

— Գործածք ելեալք 'ի գործարանաց նորա։

Դ. Կայսրուհւոյն Ռուսաց Կատարինեայ Երկրորդի ամբառնալ զՂազար Նազարեան և զորդիս նորա յաստիճան և 'ի պատիւ Ազնուականութեան Ռուսաց։

— Փոխումն յաստեացս Ղազարայ Նազարեան, և ամուսնոյ նորա Աննայի Յովակիմեան։

Ե. Յովհաննէս Լազարեանց։

Զ. Կալուածք, ինչք և հարստութիւն Յովհաննու Լազարեանց։

Է. Արքունական պաշտմունք նորա։

Ը. Գործք նորա յօգուտ Տէրութեան Ռուսաց։

Թ. Կանգնել նորա զեկեղեցիս Հայոց 'ի Ս. Փ. Պուրկ, և զայլ շինուածս առ նոքօք։

Ժ. Աստիճանք և նշանք պատուոյ, զորս Կայսրուհին Ռուսաց՝ Կատարինէ Երկրորդ, և Կայսր Պաւղոս Առաջին, պարգևեցին Յովհաննու Լազարեանց։

ԺԱ. Հիւրընկալել Յովհաննու Լազարեանց զՅովսէփ Երկրորդ՝ զԿայսրն Հռովմէական, և զայլս 'ի կալուածն իւր 'ի Ռոփշա։

ԺԲ. Ամբառնալ Յովհաննու Լազարեանց 'ի պատիւ Պարոնութեան և Կոմսութեան՝ Պարգևական հրովարտակաւ Յովսէփայ Երկրորդի՝ Հռովմէական Կայսեր։

ԺԳ. Իջևանել Դքսուհւոյն Պատենեայ, և Կայսրուհւոյն Ռուսաց, և այլոց 'ի Ռոփշա։

— Մտերմութիւն Յովհաննու Լազարեանց ընդ Կայսեր Պաւղոսի։

ԺԴ. Վաճառումն Ռոփշայի։

— Ընդունել Յովհաննու Լազարեանց 'ի Կայսերէն Պաւղոսէ զԱսպետանշան Հրամանատար կարգի Ս. Յովհաննու Երուսաղէմացւոյ։

ԺԵ. Մասնակցութիւն Յովհաննու Լազարեանց ընդ արք եպիսկոպոսին Յովսէփայ Երկայնաբազուկ-Արղութեանց՝ 'ի գործս, որ հայէին յօգուտ Տէրութեան Ռուսաց։

ԺԶ. Թողուլ կտակաւ Յովհաննու Լազարեանց զմեծ գումար դրամոց վասն կառուցման ուսումնարանի Հայոց 'ի Մոսկուա։

— Վախճան կենաց նորա։

ԺԷ. Յարութիւն, որդի Յովհաննու Լազարեանց։
— Պաշտօն նորա՝ աստիճանք, և վախճան կենաց։
ԺԸ. Մինաս Լազարեանց։
— Պաշտօն նորա, և աստիճանք, և գործք, և վախճան կենաց։
ԺԹ. Խաչատուր Լազարեանց։
— Գործք նորա, և վախճան կենաց։
Ի. Յովակիմ Լազարեանց։
— Պատուաւորել նորա զկայսերուհին Ռուսաց զԿատարինէ Բ. 'ի գիւղն իւր Փորրովկի։
— Վախճան կենաց նորա։
ԻԱ. Յարութիւն, որդի Յովակիմայ Լազարեանց։
— Պաշտօն նորա, նշանք պատուոյ և աստիճանք, և անկումն 'ի պատերազմի։
ԻԲ. Յովհաննէս Յովակիմեան Լազարեանց։
— Աստիճանք և պատուանշանք նորա։
ԻԳ. Խաչատուր Յովակիմեան Լազարեանց։
— Աստիճանք և պատուանշանք նորա։
ԻԴ. Յովհաննէս, որդի Խաչատրոյ Լազարեանց։
ԻԵ. Ուղևորութիւն գերդաստանին Լազարեանց յաշխարհս Եւրոպեան Տէրութեանց։
ԻԶ. Հանգամանք անձին, և բոյսք բարուց մանկանն Յովհաննու Խաչատրեան Լազարեանց։
ԻԷ. Խնամով փոյթ ծնողացն զբարիոք դաստիարակութենէ նորա։
ԻԸ. Հիւանդանալ նորա, և անդրէն յառողջութիւն դառնալ։
ԻԹ. Վերջին հիւանդութիւն նորա, և մահ։
Լ. Յուղարկաւորութիւն նորա։
— Արձանագիր շիրմի նորա։
ԼԱ. Քրիստոնէական բարեպաշտութեան գործք՝ առ յիշատակի նորա եղեալք։
ԼԲ. Աստիճանք և Պատուանշանք Տ. Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց։
ԼԳ. Ղազար Յովակիմեան Լազարեանց։
— Կարգիլ նորա յառաջնորդութիւն գաղթականին Հայոց որ 'ի Պարսկաստանէ։
ԼԴ. Դժուարութիւնքն՝ որ ընդ առաջ ելին նմա 'ի գործումն։
— Յորդորական նամակ նորա առ Հայս 'ի գաղթել։
ԼԶ. Առանձին խնամք նորա առ չքաւորսն 'ի գաղթականաց։
ԼԷ. Թիւ գաղթականացն, և տեղիքն յորս բնակեցան։
— Օգուտ Տէրութեան Ռուսաց 'ի գաղթականութենէ անտի։
ԼԸ. Պաշտօնակատարութիւնք Ղազարայ Յովակիմեան Լազարեանց 'ի Տէրութեան Ռուսաց, այլ և Աստիճանք պատուոյ և Շքանշանք նորա։
ԼԹ. Որ այժմ կան՝ ժառանգորդք Տոհմին Լազարեանց։

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

ՅԱՌԱՋԱՆՈՒՄՆ ԱՅՍ Ի ՄԱՍԻՆ ԲԱՆԻՔ ԼԻՑԻՆ

—

Ա. Զելիցն 'ի Պարսկաստանէ՝ Նախահարց Լազարեան Տոհմի, և զբնակելոյ նոցա 'ի Ռուսաստան:

Բ. Զերևելի գործոց Պայազատացն Լազարեանց, զծառայութեանցն և զպաշտամանց՝ յորս գտան նոքա:

Գ. Զշքանաշանացն և զառանձնաշնորհութեանց պարգևելոց Լազարեան Պայազատաց 'ի Ռուսաց Տէրութենէ և յայլոց:

34289

Lith. par Vider   Peint par Lampi   Imp. par Chevalier

Պատկեր Եկեղեցւոյ Հայոց և Լազարեան Ճեմարանի, կառուցելոց ի Մոսկով ի
Նոյոն Գերազանցուեց Տեարց Լազարեանց։

Видъ Армянской Церкви и Лазаревскаго Института въ Москвѣ сооруженныя Ихъ Превосх. Гг. ЛАЗАРЕВЫМИ

Lith. p. Victor. Peint p. Lampi. Imp. p. Chevalier.

COMTE JEAN DE LAZAREFF.

Fondateur de l'Institut des Langues Orientales à Moscou, Conseiller d'État Actuel, Commandeur de l'Ordre souverain de S.t Jean de Jérusalem.
Né en 1735.

ГРАФЪ ИВАНЪ ЛАЗАРЕВИЧЪ ЛАЗАРЕВЪ.

Основатель Лазаревскаго Института восточныхъ языковъ, въ Москвѣ, Дѣйствительный Статскій Совѣтникъ и Державнаго Ордена Св.го Іоанна Іерусалимскаго Командоръ. Родился 1735 г.

Կոմս Իւհաննէս Յովհաննու Լազրեանց

Ներգործական Ներքին Խորհրդական Ռուսաց Կայսերութ. և Հրամանատար
Շքանշան Կարգի Սրբոյն Յովհաննու Երուսաղեմայ: Ծն. ի 1735:

Այժմու պատանեակ՝ արբուսց իմաստից
Հայրենի Ճեմարանի՝ յարկաց Տեառն էից.

Որոց Լազարեանց՝ տամ մեծ գովեստ.
Ընդ Ճեմարանաց՝ Վէհ Տէր փառաւոր:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ԿԵՆԱՑ ԵՒ ԳՈՐԾՈՑ

ՄԱԾԱՆՈՒՆ ՊԱՅԱԶԱՏԱՑ

ԼԱԶԱՐԵԱՆ ՏՈՀՄԻ

Ա. Ընդ բառնալ թագաւորութեան ազգիս Հայոց յեւր կայս չորեքտասաներորդի դարուն (*). ոչ իսկ և իսկ բարձաւ ՚ի ազգէ և ազատութիւն քաղաքական. զի կային յայնժամ՝ և կային եւ յետ այնորիկ յութեւտասներորդ դար ՚ի վերին կողմանս Հայաստանի աւագագոյնք ոմանք ՚ի մերոյ Իշխանաց (**), որք առանձին առանձին տիրապետէին պայազատաբար՝ շէնս, գեօղս, քաղաքս, և գաւառս իսկ զորաց ընդ ձեռամբ ունելով, և կառավարելով զբարմութիւն ժողովրդոց անկախ զօամբք (1)։

(*) Այն է յամի Տեառն 1393։

(**) ՚Ի սոցանէ դասու համարին՝ Պեղցեան Ամատունեան, որ տիրէր ՚ի մասին ուրեք Կոտայից յաշխարհին Սիւնեաց. Յովհաննէս իշխան յաշխարհին Ուտէացւոց և Գուգարաց. Թորոս և Կոստար՝ իշխանք գաւառին Չանգզուրայ. Պաղ, և Սանփաննոս Պրթանեան՝ իշխանք Կենտուզայ. Փարատան իշխան ՚ի Փոքր Սիւնիս. Ֆախրուլ իշխան Գողթան գաւառի. Յովհաննէս Խնասմբեան ՚ի Շահկերան սահմի. և այլք այլուր. զորոց թէ լինել որք կամիցի ունել տեղեկութիւն, ընթերցցի զՊատմ. Հայ. Չամչ. (հատ. Գ. յէջ 471. 784—790. 842)։

(1) ՚Ի Գրաբ. յԸնդհ. Բառ. տպագր. և գիտ. տպ. ՚ի Փարէզ յամին 1835 և 1837. հատ. ը՞. Հ. Եփրեմ Չագրջեան ՚ի Պատմ. Հայ. յէջ 432. տպ. ՚ի Վիեննա յամին 1851։

Մի ՚ի նոյանէ էր և Մանուկ Եղիազարեան (1)՝ Եղիան անուանի։ Սորա որդի էր Ղազար. ՚ի Ղազարայ ծնան Մանուկ և Սա-ֆար. ՚ի Մանուկայ՝ Նազար (կամ Նազարէթ). և ՚ի սմանէ՝ միւս Ղազար (կամ Եղիազար), այն՝ որ Պետ և Գլուխ եղաւ հռչակա-ւոր Տոհմին ԼԱԶԱՐԵԱՆՑ (2*). զորոյ արդ առաջի կայ ինձ տալ պատմութիւն։

Թէպէտ և զմիոյ միոյ ՚ի սոյանէ զամենայն զգործս ՚ի գիր հար-կանել ոչ ունիմ, զի սակաւուն առ մեզ յետին դարուց մնացոր-դում՝ յիշատակագիրք, սակայն ոչ զանց առնել զէթ կարճ ՚ի կար-ճոյ յառաջնոյն եղելոյս ծանօթաբանութեանց զկարևորագոյնս և եթ-առաջի ընծայել որոց վերծանութեանն փափագելեացն մտաւնին։

ՇԱՀԱԲԱՍ Առաջին՝ արքայ Պարսից (**), ոչ ինչ օգտակար յերկարատև յանյաջող պատերազմայն՝ որով աշխատ լինէր ընդ ձե-ռամբ նուաճել զինքնիշխան Գաւառակալսն աշխարհին Հայոց, հար-կեցաւ հուսկ ուրեմն ՚ի հաշտութիւն խաղաղութեան զիջանել. և այնուհետև տալ սկսաւ վարել ընդ նոսա և ընդ ամենայն իսկ Հայս սիրով քաղցրութեամբ (3***), մինչև բազմաց ՚ի նոյանէ՝ մտանել ընդ

(1) ՚Ի ձեռ. Յիշատ. ՚Ի Հրովարտ. Հաւմ. Կայսեր Աւստրիոյ Յովսեփայ Բ. զո-րոյ ունիմ ՚ի մէջ բերել զօրինակն յերկրորդում մասին մատենիս։

(2) ՚Ի նոյն տեղւոջ։

(*) Զառաջինն՝ ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ զՏոհմս զայս յորջորջէին. այլ առա ընդունէր զատեղա՝ համեմատ Ռուսական ձայնին Лазаревъ. Հայերէն յանուն ԼԱԶԱՐԵԱՆ կամ ԼԱԶԱՐԵԱՆՑ մականուանել (Տես ՚ի Կարգադր. Ճեմ. տպ. ՚ի Մոս-կուա յամին 1830. յէջ 12. ՚ի ծանօթ.) Զվերջինդ զայդ Տոհմանուն ունիմ և ես ՚ի վար արկանել ՚ի Պատմութեանս։

(**) Որ թագաւորեաց յամէն 1585 — 1629։

(3) Չամչ. ՚ի Պատմ. Հայ. հատ. Գ. յէջ 555։ Առաքել ՚ի Պատմ. յէջ 17. տպ. յԱմստերդամ յամին 1669։

(***) Զայն և Մեսրոպ Թաղիադեան յայտ առնէ յասելն «Այր աշխարհաշէն գոլով նորա (Շահ Աբասայ Ա) և արքունին վաճառականութեան ծաղկեցուցիչ ՚ի Պարսկաստան, զո՞ որ ՚ի շրջակայ խժից ազգի ընտրել կարէր յայն, եթէ ոչ զՀայս, հարս արդարև սկզբնական առից և արից... վասն որոյ ընտրեաց զազգն Հայոց, և բառ ամենայնի սիրով և քաղցրութեամբ վարելով ընդ նոսա՝ բնակե-ցոյց զնոսա ՚ի քաղաքի անդ իւրում (՚ի Պատմ. Պարս. յէջ 171. 172) տպ. ՚ի

ՀԱՅ
754-2013

Յեղապետ Լազար Նազարեան Լազարեանց,
ծնեալ յ3. ապրիլի 1700 ամի, հանգուցեալ յ8. յունվ. 1782 ամի։

Родоначальникъ Лазарь Назаровичь Лазаревъ
род. 3 Апрѣля 1700 г. сконч. 8 Января 1782 г.

L'Aieul Lazare Nazarian Lazareff.
né le 3 Avril 1700, mort le 8 Janvier 1782.

Lith. par Henri Tranzschel.

տիրանալոյն և փարթամանալոյ ընչիւք՝ ենթակալ կամօք հա-տուած ՚ի Պարսս գնալ, և բնակել ՚ի մայրաքաղաքին յԱսպահան, հրաւէրս ընկալեալ պէսպէս պատուութեանց (1)։ Կամեցեալ յայն-ժամ Շահաբասայ զնմա ՚ի նորանէ՝ մանաւանդ զորս աւազակայինք ըստ զարմից ախոյեանութեան Ճանաչէին՝ յինքն յանկուցանել, չարչարեաց նոյա տաժանմանս ինչ պատուոյ և իշխանութեան (2)։

Բ. Մի յերևելեաց անտի իշխանաւորաց՝ էր և Մանուկ Եղիա-զարեան՝ յԱգնուլեան ներեալ զարմէ (3)։ Նա որդի սորա Գասպար, յետ ժամանակաց յաւուրս Երկրորդին Շահաբասայ (*) Ոսկեան կարգեցաւ Երևանի գանձուց, և Տեառն փողերանոցի (4)։ Իսկ երկ-րորդն Գասպար՝ որդի Նազարայ (**)՝ թոռն Մանուկայ երկրորդի,

---

Կալկաթա յամին 1846։ Այսպէս և Մաղքենիէ գրէ աշխարհագիր Գաղղիացի (՚ի բանն Ալմենիա)․ զորոյ զբանսն ՚ի մէջ բերէ Հ․ Ղուկաս Ինճիճեան յԱշխարհագր․ ա հատ․ Ասիոյ յէջ 47․ տպ․ ՚ի Վենետիկ յամին 1806։

(1) ՚Ի ձեռ․ Յիշատ․ և ՚ի Հրովարտ․ Կայսերաց․ Կատար․ Բ։

(2) ՚Ի նոյն տեղիս․ եւ Զամչ․ ՚ի Պատմ․ Հայ․ հատ․ Գ․ յէջ 556․ և Աշաք․ ՚ի Պատմ․ յէջ 441, Հ․ Եփր․ Զաք․ ՚ի Պատմ․ Հայ․ յէջ 428։

(3) ՚Ի ձեռ․ Յիշատ․ ՚ի Հրովարտ․ Կայսեր․ Կատար․ Բ․ և Յավելեփ․ Բ։

(*) Որ թագաւորեաց յամէն 1642 — 1666։

(4) ՚Ի ձեռ․ Յիշատ։ ՚ի Հրովարտ․ Կայսերաց․ Կատար․ Բ։ ՚Ի Գաղղ․ յԸնդհ․ Բառ․ տրուեստ․ և գիտ․ հատ․ ԺԴ։

(**) Բազարէլ Պատմագիր ընդ այլոց անանց Հայկազանց՝ որք սիրելի և մեծարոյ լեալ էին առաջի Շահաբասայ Ա․ յիշատակէ զախաւթեամբ և զՆազար ոմն ընդ եղբօրն Սաֆար անուն՝ զայս ինչ գնդանէ գրելով »Շահաբաս առնէր սէր ընդ ազգին »Հայոց՝ և մեծարանս նոցա, և մանաւանդ ընդ Ջուղայեցւոց․ որոց գլխաւորի »անուանն էր Խօջայ Սաֆար, և սորին եղբօրն Խօջայ Նազար․․․ և հանապազ »ինքն Շահն գայր ՚ի տունս նոցա, ուտէր և ըմպէր ընդ նոսա առանց խորհ-»րդոյ․․․ այլև ինքն Շահն կոչէր զնոսա ՚ի տուն և ՚ի սեղան իւր, և պատուէր »ընդ մեծամեծս իւր․ այլ և պատուիրեալ էր իւրոց նախարարաց նոյնպէս առնել« (՚ի Պատմ․ յէջ 63)։ Եւ առանձինն զանձնաւորեալ զՆազարայ գրէ »Պետ և գլուխ »էր Խօջայ Նազարն ոչ միայն Ջուղայեցւոց, այլ և ամենայն Հայկազեան քրիս-»տոնէից բնակելոյն ընդ թագաւորութեամբն Պարսից․ քանզի յոյժ հզօր և երևելի »էր Խօջայ Նազարն, նաև սիրելի թագաւորին Պարսից Շահաբասին« (յէջ 500)։

Այլ թէ սա այս Նազար՝ հայրն իցէ Գասպարայ թոռին Մանուկայ, թէ այլ ոք, զայդ ոչ ընդգրկայտէ Պատմագիրն․ և ոչ որ առձեռն կան զարգեա աղբա-գիրք Նազարեանց՝ նշանակեն ինչ ՚ի բացայայտումն։

ծանօթ գոլով նոյնպէս Դիւանն Պարսից՝ ուրուք հնարագէտ հանճարով միջամուխ գտեալ յոլով անգամ յիրս նոր Քաղաքային Տէրութեանց՝ ըստ աւանդին յանձնարարութեանց արքային Նատըրշահայ (*)· կացուցաւ եւ Տեղակալ եւ Խնամակալ ժողովրդեան Հայոց բնակելոց ՚ի Նոր Ջուղայ (1**)· ուր եւ ապարանք կամ դարապաս նորա ընդարձակ եւ պայծառաշէն՝ պահպանի, ասեն, մինչեւ ցայսօր ՚ի բնակութիւն իշխող Ոստիկանի գաւառին (2)։

Գ. ՅԵՏ մահուան Նատըրշահայ՝ որ սպանաւ յաւուրսն Թեկնապահայ (3) յամին 1747, բազումք յերեւելեաց եւ յիշխանազանց Հայոց, ՚ի պատճառս աշխարհաւեր ապստամբութեանցն եւ խռովութեանց յուզելոց յաշխարհին Պարսից (4)՝ առնելեան թողուլ լքանել զբնակութիւն իւրեանց, եւ չուել անկանել ՚ի սահմանս օտար Տէրութեանց (5)։ Այսպէս եւ Գ̇ազար Նազարեան ապաւինեալ յա-

(*) Թագաւորեաց սա յամին 1736 — 1747։

(1) ՚Ի ձեռ. Յիշատ. ՚ի Գաղղ. յԸնդհ. Բառ. արուեստ. եւ գիտ. հատ. լդ։ Սերկէյ Գլինքա ՚ի գիրսն Обозрѣніе Исторіи Армянскаго Народа. հատ. Բ. յէջ 248. տպ. ՚ի Մոսկուա յամին 1832։

(**) Զքաղաքս զայս հիմնել ետ Շահաբաս Ա, յերկրին Պարսից, հանդէպ Սպահանայ յամին 1605, անդր տնել զժողովուրդն՝ զոր բռնի գաղթեցուցեալ էր ՚ի Հին Ջուղայէ, որ կայ ՚ի Վասպուրական նահանգի Մեծին Հայոց առ Երասխաւ (Առաքել ՚ի Պատմ. յէջ 62։ Չամչ. ՚ի Պատմ. Հայ. հատ. Գ. յէջ 555, Հ. Ղուկ. Ինճիճ. յԱշխարհագր. Ա հատ. Ասիոյ. յէջ 269։ Հ. Եփր. Զաք. ՚ի Պատմ. Հայ. յէջ 428։ Ս. Գլինք. ՚ի գիրսն Обозрѣніе Истор. Армян. Нар. հատ. Բ. յէջ 230։ Մեսրոպ Թաղիադ. ՚ի Պատմ. Պարս. յէջ 171։ Ղուկաս Լանկլեսեան Գաղղ. յԸնդհ. ծանօթ. ՚ի վերայ աշխ. Պարս. տպ. ՚ի Փարիզ։

(2) ՚Ի ձեռ. Յիշատակ։

(3) Չամչ. ՚ի Պատմ. Հայ. հատ. Գ. յէջ 836։ Հ. Գաբր. Այվազ. յՕսման. Պատմ. հատ. Բ. յէջ 261։ Մեսր. Թաղ. ՚ի Պատմ. Պարս. յէջ 198։ ՚Ի Բազմավէպն 1843 ամի. տպ. ՚ի Վենետիկ. յէջ 160։

(4) Հ. Ղուկ. Ինճիճ. ՚ի Դարապատ. հատ. Ա. յէջ 242. 243. տպ. ՚ի Վենետիկ յամին 1824։

(5) Չամչ. ՚ի Պատմ. Հայ. հատ. Գ. յէջ 857։ Հ. Եփր. Զաք. ՚ի Պատմ. Հայ. յէջ 445։ Ղուկ. Լանկ. յԸնդհ. ծանօթ. ՚ի վերայ աշխ. Պարս։ ՚Ի Գաղղ. Ընդհ. Բառ. արուեստ. եւ գիտ. հատ. լդ։ ՚Ի գիրս վաճառակ. Ռուսս. գԼ. գ. յէջ 94. տպ. յԱմստերդամ ՚ի Գաղղիական բարբառ. յամին 1777։ Ս. Գլինք. ՚ի գիրսն Обозрѣніе Истор. Армян. Нар. հատ. Բ. յէջ 243։ ՚Ի Ձեռ. Յիշատակ։

ւէս 'ի մարդասէր խնամակալութիւն Տէրութեան Ռուսաց՝ (որ 'ի ժամանակին յայնմիկ պաշտպան հզօր կայր ունելոյն 'ի սահմանս իւր՝ տալով նոցա առանձնաշնորհութիւնս ազգի ազգիս (*), անց 'ի Ռուսաստան հանդերձ ընտանեօք ամենեքումբք իւր 'ի կնոււմն ութեւտասներորդի դարուն (**), ընդ իւր բերելով հարստութիւն մեծ, և բազմագին ընչից մթերս՝ զորս իւրովքն էր շահեալ վաստակովք (1)։

Զորս որդիք էին նորա՝ ծնեալք 'ի Նոր Ջուղայ, Յովհաննէս, Մինաս, Խաչատուր, Յովակիմ (***)։

Անծանուն այս Իշխանազն, յետ մտանելոյ 'ի սահմանս Ռուսաց՝ շրջեցաւ առ ժամանակ մի ընդ գլխաւոր քաղաքս. բնակեցաւ առ Աժդարխան. և հուսկ՝ եկն հաստատեաց զիւր բնակութիւն 'ի Մոսկուա (****). ուր և յամին 1753 (*****) կանգնեաց գործարան կեր-

---

(*) Յուցանի այս և 'ի Հրովարտակէ Կայսեր Ռուսաց Մեծին Պետրոսի՝ տուելոյ յամին 1723, 'ի Յունիսի 3, եւ և յառանձին հրամանագրէ նորա առ պարսկական Քրիստոնէից, որոյ օրինակն գտանի 'ի գիրսն Собраніе Актовъ. հատ. Ա. յէջ 165. տպ. 'ի Մոսկուա յամին 1833։ Տես զայսմանէ և 'ի գիրսն Ս. Գլինք. Обозр. Ист. Арм. Нар. հատ. Բ. յէջ 242 և 245. և 'ի Գաղղ. Ընդհ. Բառ. արուեստ. և գիտ. հատ. ԼԴ։

(**) Այս է՝ յամին 1749 կամ 1750։

(1) 'Ի Նախայիշ. Հրովարտ. Կայսերուհ. Պատար. Բ։ 'Ի ձեռ. Յիշատ։ Ս. Գլինք. 'ի գիրսն Обозр. Ист. Арм. Нар. հատ. Բ. յէջ 246։

(***) Էր նորա և դուստր մի Աննա անուն, որ տուաւ 'ի կնութիւն Յովհաննու Ամբատեանց, և վախճանեցաւ յամին 1769, 'ի Մայիսի 18։ Ծնաւ 'ի նմանէ ուստր մի՝ որ անուանեցաւ Լազար. ծնան և դստերք հինգ, Մարիամ, Աննա, Կատարինէ, Նատեժտայ (Յոյս), և Յուստինէ։

(****) 'Ի քաղաքի աստ փողոցն՝ ուր Լազարեանց բնակարանքն են, և Ճեմարանն, և եկեղեցին Հայոց, առ յիշատակէ նոցա կոչի ցայսօր 'ի Ռուսաց Армянскій Переулокъ. (Փողոցի Հայոց)։ Տես 'ի Նկարագիրն Գաղթ. յէջ 16. տպ. 'ի Մոսկուա յամին 1832։

(*****) 'Ի գիրսն Собраніе Актовъ. հատ. Բ. (յէջն՝ զոր 'ի ստորեւ անդէն նշանակել) դնի «1735». բայց թուի՝ թուանշանացն վրիպակ շարադրութեամբ այնպէս եղեալ՝ փոխանակ թուականին 1753. քանզի յետոյ ուրեմն քան զյիշատակեալ թուականն (1735)՝ եղև գալն Լազարեայ Նազարեան 'ի Ռուսաստան, որպէս եդաք 'ի վերոյ, այն է՝ յամի Տեառն 1749 կամ 1750։ Եւ այսմ կրկին ապացոյց են։ Մի՝ զի կրտսերն յորդիս նորա՝ Յովակիմ, որ ծնեալ էր 'ի Նոր Ջուղայ յամին 1743, 'ի ժամանակի անդ գաղթմանն 'ի սահմանս Ռուսաց ընդ հօր իւրում՝ 'ի վեցից ամաց էր հասակի, ըստ Նորուն իսկ պատմութեանն՝ զոր յուշի ունին ցարդ կենդանի վկայք։ Եւ միւս՝ զի (որպէս տեսանի 'ի սոյնն յիշատա-

պատուց և կասւոյ 'ի մօտակայս ուրեք քաղաքին (1)․ զոր և մեծափայլ Հզաւրք և յոլով ծախիւք՝ որչափ հնար էր յայնմ ժամանակի՝ հասոյց 'ի կատարելութիւն, հրաւիրելով յօտար աշխարհաց վարպետս արուեստին և պճնու գործուածոյ (2)։ Սոյնպէս յետ այնորիկ գնոց արծաթոյ և կալուածս երևելիս յարձակելոցն անդ՝ որ վաճառուն և հինգ մղոնօք հեռի կայ 'ի քաղաքէն, այն է գիւղն Փրկանօվ, որ ունէր յայնժամ՝ բնակիչս վեց հարիւր (3)։

'Ի գեւղ անդր փոխադրեցան յետ ժամանակաց որ նախ. յիշատակեցան գործարանք ձեռնարուեստից՝ հանդերձ ազնի ազնի մեքենական կազմածովք (*)։ Դեղակք ոսկեթելք, կերպասք մետաքսեայք, թաւրինջք (бархатъ), և այլ պէսպէս գործածք որ 'ի գործարանաց անտի ելանէին՝ ընտիրք յոյժ էին, գեղեցիկք և ազնուագոյնք, ոչինչ ընդհատք 'ի Գաղղիացւոյն և յԱնգղիացւոց, մինչև Արքունեայն անգամ փեթերպուրկայ 'ի պէտս գալ (**)։

Այսօրինակ մեծախատակ արդիւնք Լազարեան Իշխանապետին՝ ոչ անձին և եթ 'ի փառս էին, այլ և 'ի շահ հասարակաց օգտի և Պետութեանն։ Քանզի մշակայն և գործաւորաց բազմութիւն՝ շահաւէտ առ նմա գտանէին վաստակս հանապազ․ նա մանաւանդ վարժելով 'ի գործարանս անդ՝ ոմն յայս ինչ և ոմն յայն, ուսանայուք ապա և յայլ արուեստս լինէին (4)։

կեալ Հրովարտակի Կայսերուհւոյն Կատարինեայ Բ․) գաղթումն Լազարեանց յաշխարհէն Պարսից 'ի սահմանս Ռուսաց՝ լեալ է յետ մահուանն Նադըրշահայ։ Իսկ մահն Նադըրշահայ՝ ըստ միաձայն վկայութեան պատմողացն գիտնալ (զոր 'ի գլուխն վայրի յիշատակեալ եմ զանուանն)՝ եղև յամին 1747։

(1) 'Ի գիրսն Собр. Акт. հատ․ Բ․ յէջ 299․ տպ․ 'ի Մոսկուա յամին 1838։ 'Ի Բազմավէպ 1843 ամի․ յէջ 187։ 'Ի ձեռ․ Յիշատ։

(2) 'Ի ձեռ․ Յիշատ։

(3) 'Ի ձեռ․ Յիշատ․ և 'ի Գաւառ․ Ընդհ․ Բառ․ արուեստ․ և գիտ․ հատ․ ԺԴ։

(*) Յիշատակէ զսոյն և Հ․ Գաբր․ Այվազ․ 'ի Պատմ․ Ռուսաց․ յէջ 397․ տպ․ 'ի Վենետիկ յամին 1836։

(**) Զի ծաղկայօրինութեան թաւրինջօքն որ 'ի գործարանն անդ գործէին՝ զԱրքունական Պալատն զարդէին զարմանս, որպէս գրէ և Ս․ Գլինքա 'ի գիրսն Обозр. Ист. Арм. Нар. հատ․ Բ․ յէջ 247։

(4) 'Ի ձեռ․ Յիշատ։

Դ. ՅԱՅՍ ամենայն հայեցեալ Վայելչուհւոյն Ռուսաց Կատարինեայ Բ, հաճեցաւ ամբառնալ զնա ի կարգն իշխանազանց Լազարեան և զչորեսին որդիս նորա յիշատակեալս ՚ի վեր անդր՝ յաւերժ և ՚ի պատիւ Ազնուականութեան Ռուսաց՝ բարձրահրաման Հրովարտակաւն՝ զոր ետ յամին 1776 (*)։

Արժանի ընթերցման յիշատակ Յեղապետոս տեսանի դրոշմեալ և ՚ի Գաղղիական Ընդհանուր Բառարանի արուեստից և գիտութեանց. ուր գոլութեամբ խօսելով զնմանէ մատենագիրն՝ ասէ. »Զարդարեալ գոլով երկնապարգև ձիրք Գազար Եղիազարեան »(Լազարեան), ունէր ապաքէն զայնպիսի կիրս ազատ ծառայութեան »մատուցանել Ռուսիոյ, որ երախտապարտ նմին կացուցանելոց էր »զազգս յոլովս (1)«։

Այսպիսում յայնժամ արժանայեալ պատուոյ մեծութեան Գոլոյ Տոհմին Լազարեանց՝ յաւագոյն բազում արժանաւորն, կաւամէք զվաստակոյ կեաց ժառանգեաց զկատարս. որով և պարծանք բարեպաշտութեան լեալ որդւոց, յետ վեցից ամսեանց ամաց՝ ՚ի լի կէտ կոչման զընթացս կատարեաց յամին 1782, ՚ի Յունուարի 8, ՚ի մայրաքաղաքին ՚ի Մոսկուա (**)։ Եղեն ամք կենաց նորա ութն պակաս քան զիննսուն (***)։

(*) Զթարգմանութիւն քաղուածոյ Հրովարտակիս ՚ի Հայ՝ կացեն խնդրողք յերկրորդում մասին մատենիս։ Իսկ Պերնալեր ցուցակի Լազարեանցն ազգահամարոյ՝ յայտնի բովանդակի բանս. «Ազգաբանութիւն Ազնուական Տոհմին Լազարեանց՝ »եղելոց հայրենիօք ՚ի Ջուղայ. որոյ Նախնիք յամին 1605, յաւուրս Շա-»հաբասայ Ա. արքային Պարսից, ՚ի Հին Ջուղայէ Հայաստանի փոխադրեալք »են ՚ի Նոր անուանեալ Ջուղայ, յայն որ առ երի կայ Սպահանայ քաղա-»քին Պարսից։ Յետինք նոցա եւ բնակեն զորդիս ՚ի Կայսրութեան Ռուսաց »զԱզնուականութեան ունելով զհաստատութիւն, ըստ Արքունական Հրո-»վարտակին տուելոյ նոցա վասն այսր՝ հանդերձ խորհրդոյն Տոհմանշան Կնքով։«

(1) ՚Ի հատ. ԼԹ։

(**) Զի էր ծնեալ յամին 1700, յԱպրիլի 3, որպէս յայտ ՚ի Տապանագրէն է, զոր ունիմ դնել ՚ի յետ կոյս երկրորդի մասին գրոցս։

(***) ՚Ի ցուցակի Ննջեցելոց այսպէս փոխման նորա յիշատակի. «Թուին 1782, Յուն-»վարի 8 ումն Նազարէթի որդի աղայ Եղիազարն առ Աստուած փոխեցաւ. և »տէր զհոգի նորա լուսաւորեսցէ. և իւր որդիքն Աստուած պահեսցէ. ամէն։»

Իսկ ամուսին նորա Աննա՝ դուստր Յովակիմայ Գուղայենցայ՝ ականաւոր առն, վաղագոյն քան զնա վճարեալ զկեանս ’ի վաթսունամեայ հասակի, յամին 1770, ’ի Յանուարի 13։

Առաջնոյն մարմին ամփոփեալ կայ յեկեղեցւոջ Հանգստարանին Հայոց որ ’ի Վականքով (*), և երկրորդին՝ յեկեղեցւոջն որ ’ի փրեսնեա (**), ’ի նմին քաղաքի։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՂԱԶԱՐԵԱՆ

ԵՐԻՑԱԳՈՅՆ ՈՐԴԻ

ՂԱԶԱՐԱՅ ՆԱԶԱՐԵԱՆ

—

Ն․ ՍԱ իւրովք բազմափորձ և խոր հանճարով և արդիւնաւէտ ծառայութեամբքն ’ի պէսպէս գործառնութիւնս Պետութեան և Արքունեաց, ’ի վերագոյն հաս յաստիճան պատուոյ՝ գործակից և ձեռնտու զհարազատն իւր ունելով յամենայնի։ Էր նորա հաստատուն բնակութիւն ’ի Ս․ Փեթերբուրգ․ ուր և զգերապանծ հանճարոյն իւրոյ զձիրս երևեցոյց առաւելապէս ’ի կարևորագոյն գործս Պետութեան՝ ևս և ’ի կարի իսկ դժուարինս․ զի յոր ինչ միանգամ ձեռնարկէր՝ զնոյն և ’ի կատար ածէր յաջողանի և օգտաւէտ վախճանաւ․ և թուէր իմն՝ թէ առանձին ինչ ոգի հանճարոյ յերկնից պարգևելոյ առաջնորդէ նմա յամենայնի։

(*) Այսպէս կոչի ’ի Ռուսաց վայրն՝ ուր Հայոց Հանգստարանն է՝ արտաքոյ քաղաքին։

(**) Զայս անուն առն Ռուսք այնմ մասին քաղաքին՝ ուր կայ հին եկեղեցին Հայոց՝ կառուցեալ յանուն Ս․ Աստուածածնի։

Զ. ԵՒ քանզի հարստութիւն ունէր նա մեծագումար դըրամոյ՝ կէս մի ընդ իւր բերեալ 'ի Պարսկաստանէ, և կէս մի 'ի հօրն ժառանգութենէ ընկալեալ 'ի բաժին (1), ըստ առաջարկութեան մեծանուն կոմսին Օռլովայ՝ գնեաց նախ յարքունուստ զՌոփշայն անուանեալ զաւան բարեշէն (2), որ բացատ 'ի նախայիշատակեալ մայրաքաղաքէն կայ մղոնօք վաթսուն։ Ստացաւ ապա (յամին 1778 և 1784) նոյնպէս գնոց արծաթոյ զԿոմսիցն Ստրոկոնովայ զգեղեցիկ դաստակերտս 'ի Փերմ նահանգի հանդերձ եղեռվքն 'ի նոսին գործարանօք (3*)։

Ունելով սորա ընդ վեհանձնական բարուցն՝ և սիրտ բարեգորով, ո՛չ միայն չծանրացաւ ինչ 'ի վերայ արծաթագին ծառայիցն, այլ և խոհականագոյն և բարեկարգ տնտեսութեամբն հասոյց զնոսա՝ որչափ 'ի կարի էր՝ 'ի վիճակ բարեկեցիկ. և որ մեծն է՝ քաջ գիտելով ընտրել և կարգել 'ի գործ կառավարութեան զարս հմուտս և փորձս, աճեցոյց ևս քան զևս զիւր հարստութիւն. որով և մարթաց իսկ օգտաբեր յոյժ լինել և՛ անձին և՛ Ռուսիոյ (4)։

Է. ԸՍՏ Բարձրագոյն հրամանի կայսերուհւոյն Կատարինեայ Բ. Յովհաննէս Ղազարեան (զոր յայժմ հետէ ԼԱԶԱՐԵԱՆ կամ ԼԱԶԱՐԵԱՆՑ ունիմ անուանել՝ ըստ արդեանս սովորական կոչման) ստանձնեալ զպաշտօն Խորհրդականի Արքունի Դրամանոցի (**), ձեռնամուխ այնուհետև 'ի բազում ինչ իրս պտոյ Տէ-

---

(1) 'Ի ձեռ. Յիշատ։

(2) 'Ի ձեռ. Յիշատ։

(3) 'Ի ձեռ. Յիշատ։

(*) Կալուածս այս ունի այժմ ոգիս 20,000 յարական սերէ։ Կան 'ի նմա գործարանք չորք՝ երկաթագործութեան և ձուլման չուգունն անուանեալ մետաղի, որք ամի ամի բերեն չուգուն մինչ ց500,000 փութ, և երկաթ՝ մինչ ց230,000 փութ։ Գոն և աղհանք, յորոց ելանէ աղ զուտ յ700,000 փութէ ց1,000000։ Տարածութիւն երկրին թէ մշակելոյն և թէ չմշակելոյն՝ ձգի ց700,000 օրավար (десятинъ).

(4) 'Ի ձեռ. Յիշատ. և 'ի Բազմավէպն 1843 ամի, յէջ 187. տող. 'ի Վենետիկ։

(**) Ըստ Ռուսաց՝ Совѣтникъ Государственнаго Банка.

րութեան. ուստի և հարկ լինէր նմա կենակից կցորդութիւն ունել յաճախակի և անմիջապէս ընդ գլխաւորագոյն Պաշտօնատարաց կամ Գործակալաց Տէրութեանն, այս է՝ ընդ Իշխանայն և Կոմսին Օռլովայ, ընդ Իշխանայն Փոթեմքինայ՝ Թաւրիչեսքի անուանելոյ, ընդ Կոմսին Պեզպորոտքեայ, ընդ Իշխանին Վեազեմսքեայ, ընդ Իշխանին Զուպովայ, ընդ Կոմսին Զուպովայ, ընդ Իշխանին Սուվորովայ Զօրավարի՝ Իտալական անուանելոյ, և ընդ մեծի Մարաջախտին Ռումեանցովայ, որում Զադունայսքի մականուն էր (1):

Ը. ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆ մեծ կրէր Տէրութիւնն Ռուսաց 'ի փոխադրել զպղնձի դրամն 'ի նահանգայն Փերմայ և Սիպիրոյ 'ի Ս. Փեթերպուրկ և յայլ քաղաքս Ռուսաստանի. ուստի հարկ 'ի վերայ կայր՝ զխորդ և է՝ հնարս ինչ գտանել զդժուարութիւնն բառնալոյ: Ոստիկանն Արքունի Գանձուց Իշխանն Վեազեմսքի, քանզի գիտէր փորձիւ զՅովհաննու Լազարեանց զաջողակութիւնն հանճարոյ և զարդիւնաւոր ջանիցն զնէր, առաջարկեաց նմա Թախանձանօք՝ զբաղմակնճիռն զայն յանձն առնուլ զգործ գէթ յընթացս ամաց երկոտասանից: Եւ նա կատարող խնդրոյն լեալ, և գեղեցիկ զգործն 'ի գլուխ տարեալ՝ յաւել զՏէրութեանն առ ինքն վստահութիւն, և զդրամոյն շրջաբերութիւն (*) առաւելոյքն դիւրացոյց (2):

Նահանգք և գաւառք սահմանակիցք Սեաւ և Ազով ծովուց, 'ի պատճառս բնակչայն սակաւութեան՝ ոչ միայն օգուտ ինչ ոչ տային Տէրութեան Ռուսաց, այլև յոլովից պէտս ունէին ծախուց՝ առ 'ի պաշտպանութիւն: Յովհաննէս Լազարեան խնամով իմն ուշ եդեալ օգտի Տէրութեան՝ խորհուրդ 'ի մէջ եառ յաւագախումբ Ատենին, և հիմնաւոր բանիւք կարեւոր եցոյց մարդալից առնել նորովք բնակչօք զՆորռուսայն — Արևելեան ռուսիա (3): Աջակցեալ

(1) 'Ի ձեռ. Ցեշաու:
(*) Ռուս. денежные обороты.
(2) 'Ի ձեռ. Ցեշաու:
(3) 'Ի ձեռ. Ցեշաու. և 'ի Գաղղ. յԸնդհ. Բառ. պատմութ. և գիտ. հատ. ԺԴ:

ապա և իշխանավլմն Յովսէփայ Վաճակաւոր Արքեպիսկոպոսն Հայոց՝ Երկայնաբազուկ — Արղութեանց, լիակատար ընկալեալ իշխանութիւն հրաւիրել զհամազգիս իւր զժողովուրդս Հայոց բնակեալս յԱսիա։ Ի հրաւիրմանէ անտի հազարաւոր գերդաստանք խրախուսեալք, և վստահեալք առհասարակ ՚ի բանս նորա, և բազմօք ՚ի նմանէ նպաստաւորեալք (1), միախուռն դիմեցին ՚ի Ռուսաստան, և հիմն քաղաքացն արկին Գզլարայ՝ Նոր Նախիջևանայ որ առ Տոնաւխն կայ գետով՝ և Գրիգորուպօլեայ (2)։ Եւ ապա որ այսմ զհետ եկին բարեք՝ արդարացուցին լիով զխոստմունս Լազարեան իշխանապետին՝ նորանոր ՚ի վեր հանեալ աղբիւրս հասից Տէրութեան (3)։

Թ. ԱՅՍՊԻՍԻ և այսչափ ծանրագոյն հոգք և զբաղմունք չկասեցուցին զԼազարեան իշխանապետն նաև ըստ կրօնական բարեպաշտութեանն խրախուսել զհայրենակիցս իւր ՚ի գործս հոգևորս և Աստուածահաճոյս։ Միակամ գործակցութեամբ եղբարց իւրոց՝ հիմն արկ երկոցունց եկեղեցեայն Հայոց որ ՚ի Ս. Փեթերպուրկ. և յետ յաջողակս յաւարտումն ածելոյ զշինութիւնն, յաւել առ հասոյթ նոցին և զայլս ևս կանգնել շինուածս բնակութեան՝ գեղեցկակերտ ճարտարապետեալս (4*)։

---

(1) ՚Ի ձեռ. Յիշատ. ՚ի Բազմավէպն 1843 ամի, յէջ 350. տպ. ՚ի Վենետիկ։

(2) ՚Ի ձեռ. Յիշատ. ՚ի Գաղղ. յԸնդհ. Բառ. պատմու. և գիտ. հատ. Ըէ։ Հ. Եփր. ՚ի Պատմ. Հայ. յէջ 444։

(3) ՚Ի ձեռ. Յիշատ։

(4) ՚Ի ձեռ. Յիշատ։

(*) Բաց յայսմանէ նաև ՚ի բազում գիւղօրայս՝ ՚ի նոցուն իսկ Լազարեանց կալուածս յայլ և այլ գաւառս՝ կառուցան ծախուք նոցա եկեղեցիք Ռուսաց վայելուչ շինուածովք, այլ և դպրոցք վասն գեղջկացն մանկանց վարժութեան, և հիւանդանոցք, որպէս ցուցանեն որ առ խոն կան գրչագիր յիշատակարանք։ Եւ այգուննակ ջանք նոցա և վաստակք կարի քաջ զօրեցին՝ որպէս յայնժամ, նոյն և յապայս զինքնակալացն Ռուսաց քաղցրացուցանել ՚ի վերայ նոցա զաչս։

Զկառուցմանէ եկեղեցեացն Հայոց եղելոց ՚ի Ս. Փեթերպուրկ և ՚ի Մոսկուա՝ ունիմ պատմել ընդարձակ բանիւ յիւրորդում մասին մատենիս։

Ժ. ԿԱՅՍՐՈՒՀԻՆ Կատարինէ Բ. յամին 1785 տուեալ Յովհաննու Լազարեան զիւրն Բարձրահրաման Հրովարտակ 'ի հաստատութիւն Ազնուականութեան նորա (*), ամբարձ զնա 'ի պատիւ Ատենական Խորհրդականի։ Նոյնպէս և Պաւղոս Ա. կայսր, հաճեցաւ նախ յամին 1800 ամբառնալ զնա 'ի պատիւ Ներգործական Պետական Խորհրդականի, և ապա յամին 1801 յաւել ևս պարգևել նմա զՇքանշանն (մեծ խաչ) Ասպետութեան Մելիտեայ (**), այն է' Հրամանատար կարգի Ս. Յովհաննու Երուսաղէմացւոց։ Այսոքիկ յայնպիսի Բարձրագոյն պատուոյ և աւագութեանց սակի են' որոց սակաւք յոյժ 'ի բազմայն արժանի գտանէին, կամ լաւ ևս ասել' հասանէին յայնմ ժամանակի։ Այլ մեծ ևս' և 'ի վեր քան զամենն' այն իսկ է փառք Լազարեանց Տոհմին, զի անխափան ունէր նա հաղորդակցութիւն ընդ կայսերն և ընդ բազմաց յաւագանւոյն Ռուսաց. առ որս և յաճախէին 'ի խօսել և 'ի տալ զիւր վարկ զիրաց իւրոց Պետութեան և զկարևորացն յուղղութիւն Քաղաքական կարգաց (1)։

ԺԱ. ՅՈՎՍԷՓ Բ. կայսր Հռոմէական, Արքայն Բրուսաց, Արքայական փառանգն' Բրինձ Շուէտայ, և այլք ևս 'ի Դքսից և Իշխանաց, յորժամ երթևեկէին 'ի Ս. Փեթերպուրկ առ Թագաւորութեամբ Կատարինեայ Բ. և Պաւղոսի Ա. երեկօթս առնէին յամենայն նուագս 'ի Ռոփշա, որ բարեվայելուչ և հոյաշէն ապատանարանն էր գրեթէ ամենեցուն' Ռուս և օտարազգի Թագաւորաց' Իշխանաց և Իշխանուհեաց (2)։

Յամին 1793 եկն 'ի Ռոփշա 'ի Միթաւայ և կոմն Արթուա, և 'ի վերջին ժամանակս' Արքայն Գաղղիոյ' Կարլոս Ժ. հանդերձ ազգակցօք իւրովք և բարեկամօք (3)։

(*) Յայսր Հրովարտակի վերայ' և Ազատախումբ ժողովքն Եարոսլաւայ և Ս. Փեթերպուրկոյ յաւելին տալ առանձին առանձին վկայագիրս յամին 1789 և 1792.

(**) Ռուս. Мальтійскій.

(1) 'Ի ձեռ. Յիշատ։

(2) 'Ի գիրսն Собраніе Актовъ. 'ի հատ. Գ. յէջ 305. տպ. 'ի Մոսկուա յամին 1838։

(3) 'Ի ձեռ. Յիշատ. 'ի գիրսն Собраніе Актовъ. 'ի հատ. Ե. յէջ 67. 68. տպ. 'ի Մոսկուա յամին 1838։

ԺԲ. ՅՈՎՍԷՓ Բ. կայսր Հռովմէական զմեծարգոյն սէր իւր առ Յովհաննէս Լազարեանց՝ այլով իմն եւս եցոյց օրինակաւ, այս է՝ տալով նմա Պարգեւագիրս (*) նախ՝ (յամին 1786) զՊարոնութեան, և ապա (յամին 1788) զԿոմսութեան Հռովմէական կայսրութեան զպատիւ և զաստիճան (1):

ԺԳ. ՚Ի ՌՈՒՍԻԱ երեկօթս կալաւ և Դքսուհին Պատե-նայ՝ Եղիսաբեթ Ալեքսէեւնա (**): Զկնի ամուսնութեան Մեծ Իշխանուհեայն Կատարինեայ՝ Մարիայ և Աննայի՝ դստերաց Պաւղոսի կայսեր, յաճախագոյն եւս լինէին երթեւեկք Արքունականաց ՚ի Ռոփշա· ուրանօր բերկրութիւն իմն էր ոգւոյ Իշխանապետին Լազարեանց՝ ընդունել և մեծարել ստէպ ստէպ զմեծափառ հիւրսն՝ ոչ միայն հացիւ և աղիւ Ռուսաց, այլ և Արեւելեան շքեղութեամբ, ըստ արժանի պատուոյն մեծութեան և համբաւոյ (2): Ե՛ր զի և ինքն իսկ Լազարեանն յանդիման լինէր կայսրուհւոյն, եւս և ժառանգի նորա՝ հրաւիրեալ ՚ի նմանէ ՚ի Կաթչինօ (***): Իսկ յորժամ ՚ի գահ կայսրութեան ամբարձաւ նա ինքն ժառանգն՝ Պաւղոս Ա. առաւելագոյն եղեւ առաջի նորա շնորհս ըստ առաջնոյ սիրոյ մտերմութեանն, և սեղանակից նմա լինէր յաճախակի՝ առանձին ունելով իւր օթեւան յԱրքունիս (3):

ԺԴ. ՚Ի ՀԻՒԱՆԴԱՆԱԼ երբեմն Յովհաննու Լազարեանց, հրաման ՚ի կայսերէ առեալ՝ ուղւոյ եղեւ գնալ ՚ի Կովկաս՝ ուր ջերմկաց ջուրքն են: Եւ մինչ դեռ ՚ի ճանապարհի էր նա մօտ ՚ի կողմանս Աժտարխանայ, հաս առ նա սուրհանդակ պատգամաբեր՝ բե-

(*) Զթարգմանութիւն Պարգեւագրացն ՚ի Հայ լեզու՝ անդ գտանել խնդրողն յերկրորդում մասին մատենիս:

(1) ՚Ի գիրսն Собраніе Актовъ. ՚ի հատ. Գ. յէջ 304:

(**) Այն որ ապա ամուսին եղեւ Կայսեր Ռուսաց Աղեքսանդրի Ա:

(2) ՚Ի ձեռ. Յիշատ:

(***) Կաթչինօ՝ քաղաք է վայելուչ զարդարեալ Արքունի ապարանօք և պարտիզօք, հեռի ՚ի Փեթերբուրգայ մղոնօք 40:

(3) ՚Ի ձեռ. Յիշատ. ՚ի գիրսն Собраніе Актовъ. ՚ի հատ. Բ. յէջ 304: Նոյնպէս ՚ի հատ. Գ. յէջ 304 և 305:

բերով հրաման՝ տալոյ ընդ քանս ինչ ածելոյ դարձ 'ի Փեթերպուրկ առնել փութանակի, և երեւեալ Կայսեր՝ կարեւորագունի իրիք գործոյ վասն: Ընդ ժամանել Լազարեանց Տեառնն 'ի մայրաքաղաք անդր՝ յայտնեալ նմա Կայսրն, թէ զՈսփշա կամք են իւր գնել՝ իբրու զմի 'ի Տոհմայնոյն կալուածոյ (*): Եւ ունէր յայնժամ Ոսփշա բնակիչս հազար և երկերիւր՝ հանդերձ մեծակառոյց գեղեցիկ շինուածովք, պալատիւք, և գործարանաւ թղթագործութեան: Թէպէտ և կամէր ոչ՝ Լազարեանն հանել 'ի ձեռաց զարդիւնաբերն զայն և զսիրելին ինքեան պատուական կալուած (զի վասն մտաւորութեանն՝ ստէպ ստէպ երթայր անդր՝ ոգի առնուլ և հանգչել յանհամար գործոյն և 'ի վաստակոց), այլ զի սովոր խնդրէր Կայսրն զնորին որոշել զարժէս, եւ նմա պատասխանի՝ թէ ամենայնի զինչ հաւատարիմ հպատակի է, տէր է Կայսր. և թէ՝ չմարթի ինքն զին հատանել կալուածոյն: Յետ բազմաց 'ի մէջ անկանելոյ զրուցաց առ Կոմսին Քութայիսովայ և առ Իշխանին Պեզբորոտքեայ և այլոց՝ ինքնին զգինն նշանակեաց Կայսրն՝ հինգ հարիւր հազար րուպլի թղթադրամ (1**): Հաւան ընդ այս լեալ Յովհաննու Լազարեան, յաւել ևս զման ինչ 'ի դրամագլխոյ անտի (այսինքն է՝ հարիւր հազար րուպլի թղթադրամ) նուիրել յօգուտ տնանկանացն՝ հիւանդանոցաց և ուսումնարանաց մայրաքաղաքին (2): Եւ Կայսրն իսկ առ 'ի ցոյց շնորհընկալ մեծարանաց՝ ետ նմա զՇքանշանն Հրամանատար Կարգի Ս. Յովհաննու Երուսաղէմացւոյ (3):

Նոյնպէս ահա Իշխանապետն Լազարեան իբր նուէր իմն առնելով զսիրելին իւր կալուած, զԻնքնակալին Մեծի շահեալ շահեցաւ զԲարձրագոյն կամացն հաճութիւն և զարժանին զանձնէ զվարկ (4):

(*) Ռուս. родовое имѣніе.

(1) 'Ի գիրն Собраніе Актовъ. 'ի հատ. Դ. յէջ 305. և 'ի ձեռ. Յիշատ:

(**) Ըստ թեթև գնահատութեան՝ արժէր յայնժամ Ոսփշա ոչ պակաս քան զմիլիոն րուպլի, որպէս նշանակի 'ի գիրն Собраніе Актовъ. 'ի հատ. Բ. յէջ 68:

(2) 'Ի գիրն Собраніе Актовъ. 'ի հատ. Դ. յէջ 305. և 'ի ձեռ. Յիշատ:

(3) 'Ի ձեռ. Յիշատ:

(4) 'Ի ձեռ. Յիշատ:

Եւ այս՝ ոչ տնտեսական միայն՝ այլ և ուշիմագոյն հանճարոյ համարելի է գործ, և կիրթ քաղաքականութեան անժխտելի հաւաստիք։

ԺԵ. ՕՂՅՆՈՒ ժամանակաւ դիպք 'ի բարի յաջողեցին Յովհաննու Ղազարեան՝ ընդ միջնակաւոր Արքեպիսկոպոսին Հայոց Յովսէփայ Արկայնաբազուկ — Արղութեանց՝ առաջի առնել Կայսեր մանրամասն տեղեկութիւնս գլոգանց այլեայլ իրաց՝ որ յօգուտ էին և 'ի շահ եթէ Տէրութեանն և եթէ իւրոյն համազգեաց՝ 'ի Ռուսաստան բնակելոց (1)։

Միջնորդութեամբ նորուն իսկ Ղազարեանց Տեառնն՝ ազգի ազգի պարգևեցան ազատութիւնք կամ առանձնաշնորհութիւնք՝ ժողովրդեան Հայոց բնակելոց յայլեայլ քաղաքս Ռուսաստանի, այս է՝ յԱշտարխան, 'ի Ղզլար, 'ի Մոզդոք, 'ի Գրիգորիուպօլիս, 'ի Ղրիմ, 'ի Նոր Նախիջևան, 'ի Դարբանդ, 'ի Մուրսքուր (2*)։

ԺԶ. ՁՂԱՏԱՑԵԱԼ Յովհաննու Ղազարեանց այնքանեօք բարեգործութեամբք՝ զորս 'ի կենդանութեանն առնէր, ցանկայր բարեգործ և յետ մահուանն լինել։ Նախանձաւոր եղեալ բարեաց և օգտի իւրոյն հայրենակցաց՝ եթող կտակաւ յամին 1801 երկերիւր հազար րուպլի թղթադրամ (**), յաղագս հոյաշէն ինչ կանգնելոյ ուսումնարան Հայոց 'ի մայրաքաղաքին 'ի Մոսկուա (3***)։ Բաշ-

---

(1) 'Ի ձեռ. Յիշատ. 'ի գիրն Собраніе Актовъ. 'ի հատ. Բ. յէջ 304։

(2) 'Ի ձեռ. Յիշատ։

(*) Պարգևագիրք առանձնաշնորհութեանցն տուան յամին 1799, 'ի Հոկտեմբերի 28. (Տես 'ի գիրն Собраніе Актовъ. 'ի հատ. Ա. յէջ 213. 218. 224)։

(**) Զայս գումար (որ հաշուի 1,000000 ղուրուշ Տաճկաց) և եւս աճեցուցին արժանաժառանգ յաջորդք նորա՝ Պետրոսն Յովակիմ Ղազարեան, և որ այժմ կեան բարեյիշատակ որդիք նորա՝ Իշխանազունքն Յովհաննէս՝ Խաչատուր և Ղազար Ղազարեանք, նուիրելով 'ի սեպհական դրոյց իւրեանց աւելի քան զմիլիոն րուպլի թղթադրամ 'ի կառուցումն և 'ի նորոգութիւն Ճեմարանին, տպարանի նորին, և այլոց շինուածոց առ նոքիմբ եղելոց (Տես 'ի գիրն Собраніе Актовъ. 'ի հատ. Գ. յէջ 12. 139)։

(3) 'Ի գիրն Собраніе Актовъ. 'ի հատ. Գ. յէջ 36. 39։ յԻնվալիտն անուանեալ լրագրի Ռուսաց ամ. յ2 Մայիսի 1825 ամի։ 'Ի Բազմավէպն 1843 ամի. յէջ 188։

(***) Զկառուցմանէ այսր ուսումնարանի, զկարգաւորութեանց նորին փոփոխմանէ ընդ

խնայ նա և յոլով գանձս յօգուտ և 'ի նպաստ շինութեան դպրոցաց Հայոց յայնմայն տեղիս (1)։ Նա յետ ա. բազումս բազմօրինակաբար բարերարելոյ՝ եթէ առ իւրսն և եթէ առ օտարազգիս, և յետ զայլ ևս 'ի գլուխ հանելոյ զբազմադիմի գործս՝ գոլութեան արժանիս (*), հանգեաւ 'ի Տէր խաղաղութեամբ 'ի վաթսներորդի վեցերորդի ամի կենացն։

Շիրիմ նորա՝ որ կայ 'ի Ս. Յարութեան տաճարին Հայոց Ս. Փեթերպուրկայ (**), օրինակ զայս ունի արձանագիր. «Առաջի տա-
»պանագրիս հանգչի մարմին կառուցանողի տաճարիս՝ բարեգործ-
»ան՝ Ներգործական Պետական Խորհրդականի՝ և Արքայն Յովհան-
»նու Երուսաղէմացւոյ Նշանակիր Հրամանատար Ասպետի, Յովհան-
»նու Լազարեան Լազարեանց, փառաւորելոյ բազմօրինակ օգտակար
»գործովք և բարեպաշտ կենօք, ծնելոյ 'ի Ջուղայ յամի 1735, 'ի 23
»Նոյեմբերի, և հանգուցելոյ 'ի Տէր 'ի 1801, 'ի 24 Հոկտեմբե-
րի (***)։«

ժամանակս ժամանակս, և զայծառայոյն վիճակէն՝ յորում այժմ կայ, ունիմ խօսել լիապէս յերրորդում մասին մատենիս։

(1) 'Ի ձեռ. Յիշատ։

(*) Զարժանին գովեստ մեծի Իշխանազնին ոչ զլացան և օտարազգի մատենագիրք հռչակել 'ի գիր։ Օրագիրն Ռուսաց տպեալ 'ի Մոսկուա յամին 1817, 'ի Փետրուարի 28. 'ի համարն 17, հրատարակէ զհետևեալդ. «Ներգործական Խորհրդականին Տէրութեան և Հրամանատարին Յովհաննէս Լազարեան անբուն արիութեամբ և խոհական հանճարով հաւաքեալ զհարստութիւն վերբերեալ հռչակաւոր անուան և փառաց, զմեծ մասն նորին հաճեցաւ նուիրել յօգուտ իւրոց հայրենակցաց... Բաց 'ի յոլով մարդասիրական գործոց, բաց 'ի շինուածոց եկեղեցեաց Հայոց 'ի Ս. Փեթերպուրկ, և բաց 'ի բազմապատիկ պարգևաբաշխութեանց յԱժտարխան՝ 'ի Նոր Նախիջևան՝ 'ի Գրիգորիուպօլիս և այլուր, այր այս բարեգործ՝ հուպ 'ի վախճան կենաց իւրոց յամին 1801, յօժարեցաւ կանգնել զնոր ուսումնարան Հայոց 'ի Մոսկուա՝ նուիրելով 'ի կառուցումն նորին զերևելի գումար դրամոց, ևն։

(**) Այն իսկ է կառուցեալն 'ի նմանէ երկրորդ եկեղեցի 'ի Հանգստարանին Հայոց։ Եւ է Հանգստարանն 'ի տեղւոջն անուանեալ Սմոլենսքի։

(***) Զթարգմանութիւն տապանագրիս 'ի Ռուս լեզու՝ դիր 'ի վախճանի երկրորդ մասին մատենիս։

COMTE APTEMIR LAZAREFF

Légua un capital considérable à l'Institut Lazareff de Moscou.

Né le 24 Juin 1768, mort le 12 Janvier 1791.

ГРАФЪ АРТЕМІЙ ИВАНОВИЧ ЛАЗАРЕВЪ

Сынъ основателя Лазаревскаго Института, въ память котораго пожертвованъ значительный капиталъ.

Род. 24 Іюня 1768, сконч. 12 Января 1791 г.

Կոմս Յարութիւն Յովհաննեսեան Լազարեանց,

որդի հիմնադրողի Լազարեան Ճեմարանի, որոյ ի յիշատակ ընծայեցա
մեծաթիւ գումար դրամոց, ծնեալ ի 24 յունիսի ի 1768 ամի, հանգեաւ ի 1
յունվար. ի 1791 ամի:

ԺԱ. ՅՈՎՀԱՆՆԷՍ Լազարեան չեթող ժառանգ զհետ իւր. զի երկոքին դստերք նորա՝ Աննա և Մարիամ՝ ՚ի մանկութեան վախճանեցան ՚ի տիս (*). և միակ որդին Յարութիւն (որ ՚ի Զինուորական կայր պաշտաման, և զաստիճան ունէր զՆախակարգ Զօրապետի Ռմբաձիգ զօրու՝ և զԳլխաւոր Աջակցի, և ծառայէր առ մեծի Մարաջախտին՝ Իշխանին Փոթեմքինի Թաւրիչեսքեայ (1), զրաւեցաւ ՚ի կենաց ՚ի ծաղկի հասակի ՚ի 12 Յունուարի 1791 ամի, մինչ էին ամաց քսան և երից (**):

Այալխեալ հարուածեալ չարաբաղդութեամբ հայրն բարեգորով, եթող կտակաւ զամենայն կալուածս իւր՝ եղբօր իւրում կրսերոյ՝ Յովակիմայ Լազարեանց. զի էր նա յայնժամ բարգաւաճեալ ընտանեօք՝ չորս որդիս ունելով և երկուս դստերս: Իսկ կնոջ իւրում Կատարինեայ (***)՝ որ ՚ի Միրզախանեանցն էր յազգատոհմէ, և եղբօր իւրում Մինասայ Լազարեանց, սահմանեաց տալ ամի ամի դրամս մինչ ցմահ նոցա՝ ըստ առաւելապէս բաւականի (2):

(*) ՚Ի տոցունց զլերջնոյն և ենթ վախճանէ գոյ յիշատակ ՚ի Ննջեցելոց ցուցակի՝ այսպէս. «՚ի 1776, Դեկտեմբերի 13, աղջ Յովհաննէսի դուստր մարիամ առ Աստուած փոխեցաւ. Աստուած պահէ իւր հայրն և այլն. ամէն»:

(1) ՚Ի գիրսն Собраніе Актовъ. ՚ի հատ. Գ. յէջ 302:

(**) Սորայս եւ շիրիմ կայ ՚ի նախայիշատակեալ Յարութեան տաճարի: Զտապանագիրն դնեմ յերկրորդ մասին մատենիս ՚ի վերջին:

(***) Վախճան առա եղև ՚ի 18 Օգոստոսի 1819 ամի, յեօթանասներորդ ամի կենացն. որոյ զտապանագիրն դնեմ յերկրորդ մասին մատենիս ՚ի վերջին:

(2) ՚Ի Հետ. Յիշատ:

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос Библиотека ՀԱՍՌ ССР Ա. Մ. МЯСНИКЯНА ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

ՄԻՆԱՍ ՂԱԶԱՐԵԱՆ

ԵՐԿՐՈՐԴԻՆ ՅՈՐԴԻՍ

ՂԱԶԱՐԱՅ ՆԱԶԱՐԵԱՆ։

—

ԺԲ. ՍԱ զառաջինն 'ի ծառայութեան կայր ՅԱրքունի (1)՝ զՊալատական Խորհրդականի ունելով զաստիճան։ Կամակար ապա հրաժեշտ 'ի պաշտամանէն տուեալ, և ամենայնիւ գործոց բարեպաշտութեան զանձն նուիրեալ մինչ ցվախճան իւր, անուն ժառանգեաց արժանապէս զառն բարեկարի՝ իմաստնոյ և հայրենասիրի. զի (որպէս և ականատեսացն վկայեն բանք) զամենայն աւուրս իւր նշանաւորս կացոյց նա՝ յօգուտ ազգին և հայրենեայն անխոնջ վաստակեալ, և յոլով կրեալ աշխատութիւն 'ի դէպս կարևորագոյն գործոց քաղաքայնոց և եկեղեցականաց, մանաւանդ 'ի բնակեցուցանելն 'ի Ռուսաստան զներգաղթեայ ժողովուրդս (2)։

Կանգնեաց սա երկուս տունս փայտակերտս, և երկուս ևս քարաշէնս՝ մերձ 'ի Ս. Խաչ եկեղեցին Հայոց որ 'ի Մոսկուա՝ յամին 1800 և 1806։ Աշխատ եղև զարենակցաց իւրոց հանգուցելոց զմարմինս՝ որ ամփոփեալ կային յեկեղեցւոջ Ս. Աստուածածնի (*), հրամանաւ Նահանգապետին Մոսկուայ՝ Պեկլեշովայ՝ փոխադրել 'ի Հանգստարանն Հայոց, որ առ երի կայ գերեզմանատանն Ռուսաց, 'ի տեղւոջն՝ որ անուանեալ կոչի Վագանկովսքի (3). ուր և ապա յամին 1815, ծախուք նորա և ծախուք եղբօր նորա Յովակիմայ Ղազարեանց եկեղեցի կանգնեցաւ՝ փոքր ըստ շինուածոյ՝ բայց գեղեցիկ ըստ ձևոյ՝

---

(1) 'Ի ձեռ. Յիշատ։

(2) 'Ի գիրն Собранiе Актовъ. 'Ի հատ. Գ. յէջ 302։ 'Ի բաղմանէջն 1843 ամի, յէջ 350։

(*) Եկեղեցին այս շինեալ է 'ի սկզբան եօթնևտասներորդ դարու, (որպէս գնի 'ի մատենին՝ որոյ մակագիր է Բարձրագոյն Հրովարտակք և Արձանագրութիւնք վերաբերեալք առ եկեղեցիս Հայոց. յէջ 119. տպ. 'ի Մոսկուա յամին 1842) 'ի Փրեսնա անուանեալ մասին նոյն քաղաքի, և կանգուն կայ ցայսօր։

(3) 'Ի ձեռ. Յիշատ։



Մինաս Լազարեան Լազարեանց, հիմնող Եկեղեցւոյ:

МИНА ЛАЗАРЕВИЧЪ ЛАЗАРЕВЪ	MONSIEUR MINA de LAZAREFF.
Сорудитель Церкви	Fondateur de l'église

յանուն Յարութեան Քրիստոսի (*), և առ նմին և այլ տուն փայտակերտ 'ի բնակութիւն պահապանաց, և անդր եկեղեց յուղարկաւորաց՝ 'ի հանգիստ:

Էր սա ամուսնացեալ ընդ Աննայի՝ դստեր Ներսեսի ուրումն Հաստատեանց (**), և անզաւակ ել յաշխարհէս (1), 'ի հասակի ամաց եօթանասուն և երկուց, 'ի 18 Յունվարի 1809 ամի, յետ զկնելն իւր թաղելոյ զծնակից, որ վաղագոյն ևս էր վախճանեալ 19 Յունիսի 1802 ամի: Առաջնոյն՝ 'ի Ս. Փեթերբուրգ է շիրիմ, և երկրորդին՝ 'ի Մոսկուա, 'ի Հանգստարանն՝ զորս յիշատակեցի:

ԽԱՉԱՏՈՒՐ ՂԱԶԱՐԵԱՆ

ԵՐՐՈՐԴ ՈՐԴԻ

ՂԱԶԱՐԱՅ ՆԱԶԱՐԵԱՆ:

—

ԺԹ. ՍՈՐԱՅՍ կառուցաւ արդեամբք մեծ և պայծառաշէն եկեղեցին Հայոց՝ որ յանուն Վերափոխման սրբոյ Խաչի՝ 'ի Մոսկուա, 'ի քաղաքամիջի, 'ի թաղն անուանեալ Մեասնիցքի, յամին 1779,

(*) Որպէս 'ի նորուն իսկ ցուցանի յարձանագրութենէ՝ որ բառ առ բառ է օրինակի.
»Կառուցաւ՝ տաճարս յանուն յարութեան Քրիստոսի ծախիւք բարեպաշտօն
»որդւոց՝ երկուց եղբարց՝ Մինասայ և Յովակիմայ Եղիազարեանց՝ 'ի մշանջենա-
»կան յիշատակ ննջեցելոց և ամենայն արենակցաց իւրեանց յամի Տեառն 1815,
»'ի Յունիսի 1, 'ի Մոսկով նախագահ մայրաքաղաքի:«

Մատեանն մակագրեալ »Բարձրագոյն Հրովարտակք« (յէջ 119) զշինութիւն եկեղեցւոյս դնէ յամին 1807: Իսկ նմա հարկ էր անփոփոխ պահել զթուական արձանագրին, որ և այն տպեալ է 'ի նոյն գիրս (յէջ 215—217):

(**) Ներսէս Հաստատեանց էր մի 'ի Հայկազուն յերևելի Զօրավարաց եկելոց յառաջ Կայսերուհւոյն Կատարինեայ Բ., (Տես 'ի Բազմավէպն 1843 ամի, յէջ 350):

(1) 'Ի ձեռ. Յեշտա:

որպէս յարձանագրութենէ անտի եկեղեցւոյն է յայտ (*)։ Իսկ ինքն վախճանեցաւ յամին 1774, ’ի 11 Յունիսի, մինչ էր ամաց երեսուն և երկուց՝ միով աւելի ամսով։ Գամբարան նորա կայ յեկեղեցւոջ Հանգստարանի նոյն քաղաքի՝ այսպիսի ունելով արձանագիր· »Յանդիման վիմիս ամփոփեալ կան ոսկերք ազնուատոհմիկ առն՝ »Խաչատրոյ Լազարեան Լազարեանց, որ ծնեալ ’ի Նոր Ջուղայ »մերձ յԱսպահան յամի 1741, ’ի 12 Դեկտեմբերի, փոխեցաւ ’ի »կեանս յաւիտենից ’ի 11 Յունիսի 1774 ամի· ’ի Մոսկով (**)։

ՅՈՎԱԿԻՄ ԼԱԶԱՐԵԱՆ

ՉՈՐՐՈՐԴՆ ՅՈՐԴԻՈՑ

ՂԱԶԱՐԱՅ ՆԱԶԱՐԵԱՆՆ։

—

Ի· ԱՄՈՒՍՆԱՑԵԱԼ էր սա ընդ Աննայի՝ դստեր Սարգսի Յովհաննիսեանց (***)։

Զբազմօրինակ ջանից և գովասանից յոգնելոյ Իշխանապետիս առ տարածանելոյ զլոյս գիտութեան յազգի մերում՝ կարէ ընթերցողն առնուլ զչափ ’ի բանից անտի Յայտարարական թղթոյն, զոր նա՝ (յետ կանգնելոյ՝ կարգաւորելոյ՝ և նոյն դասուք աշակեր-

(*) Որ է այսպէս· »Տաճարս այս կառուցաւ յանուն կենսատու Խաչի վերայն ար- »դեամբ առն արժանաւորի ’ի Տէր հանգուցելոյ Խաչատրոյ Եղիազարեանց ’ի »Թուին 1779։

(**) Ջատուերէնն դեռ յերկրորդում մասին մատենիս։

(***) Սարգիս Յովհաննիսեանց, այր ’ի նախապատիւ զարմէ, հանճարեղ և խոհականութեամբ երևելի, և այլովք ամենայնիւ՝ մեծարոյ յոյժ Ճանաչէր, առն, ’ի միջի մերազնեայցն բնակոց Աժդարխանայ։

Իշխանն Յովակիմ իշխան վեհապանծ. Զինեալ շառաւիղ Տանն Լազարեանց.
Հիմնող զՏաճարս և զճեմարան, Անզոյգ բարերար Տանս Արամազեան:

ЯКИМЪ ЛАЗАРЕВИЧЬ ЛАЗАРЕВЪ,
Учредитель и Попечитель
Лазаревскаго Института.

Mr. JOACHIME DE LAZAREFF,
Fondateur de l'Institut
à Moscou.

Lith. par Henri [illegible]

տաց զՀայկական Ճեմարանն 'ի Մոսկուա) առ համազգեան իւր առա-
քեաց ամենայն ուրեք յամին 1820 (*)։ Այլ են նորա և այլ գործք պիտանիք և շահաւորք, յորոց մի այն է՝ զի (յամին 1782)․ յաւել 'ի գաւթի եկեղեցւոյն Հայոց որ 'ի Մոսկուա՝ կանգնել տունս քանի մի (1), յորոց յոմանս բնակէին և բնակին պաշտօնեայք նոյն եկեղեցւոյ։ Նա և միւս՝ զի և նորոգումն իսկ եկեղեցւոյն (յամին 1821), նորայն եղև ծախուք (2)։

Կայսրուհին Կատարինէ Բ․ յուղևորութեան իւրում (յամին 1787) 'ի Քիև, և անտի 'ի Քերսոն՝ 'ի Խրիմ և յայլ քաղաքս Հարաւային կողմանց, 'ի Ճանապարհի անդ՝ հեռի 'ի Թուլայէ քառասուն և հինգ մղոնօք՝ իջևանեցաւ 'ի գեօղն Յովակիմայ Լազարեանց՝ յանուանեալն Փոքրովքի (**)․ ուր և եկաց աւուրս երկուս՝ բազմահարկի պատուասիրեալ հացկերոյթիւ․ ցանկացաւ տեսանել զընտանիս նորա․ և առ 'ի ցոյց շնորհակալեաց՝ ետ նմա 'ի պարգև մատանի մեծագին և տուփ ոսկեղէն ադամանդակուռ (3)։

Չէ անդէպ և զայն ես յիշատակել առ տեղեաւս՝ զի Ազատախումբ Ժողովն նահանգին Մոսկուայ (յամին 1792) ետ նմա Վկայագիր վասն Ազնուատոհմութեան նորա և սերնդոց նորա, որպէս և Յովհաննու Լազարեանց տուեալ էին Ազատախումբ Ժողովքն Նորոսլաւայ և Փեթերբուրկայ։

Կնքեաց զերջանիկ կեանս իւր երջանկացուցիչն կենաց մանկանց Հայկազանց՝ Յովակիմ Լազարեան յամին 1826, 'ի 24 Յունուարի, մինչ էր ամաց ութսուն և երից (***)։ Նորա ամփոփեալ կան ոս-

---

(*) Զօրինակ Թղթոյ՝ առ չընդհատելոյ զկարգ պատմութեանս՝ ունիմ դնել 'ի վախճանի այսր մասին մատենիս։

(1) 'Ի ձեռ․ Յիշատ․ և 'ի գիրսն Բարձր․ Հրովարտ․ յէջ 183։

(2) 'Ի ձեռ․ Յիշատ։

(**) Որպէս ասա և 'ի վերադարձին 'ի Լախաձթըով, որ և այն մի է 'ի շինիցն Լազարեանց։

(3) 'Ի ձեռ․ Յիշատ․ և 'ի գիրսն Собраніе Актовъ. 'ի հատ․ Գ․ յէջ 305․ 312։

(***) Զի էր ծնեալ յամին 1743, 'ի Սեպտեմբերի 5, 'ի Նոր Ջուղայ, որպէս ցուցանի 'ի ձեռ․ Յիշատ։

կերքն յեկեղեցւոջ Համդստարանին Հայոց 'ի Մոսկուա. և արձանագրին որ 'ի վերայ շիրմին՝ ըստ այսմ է օրինակի:

»Ղամբար լուսափայլ, Արփի Հայրենեաց,
»Վրձին հայելի վարուց քոց Նախնեաց,
»Ընդէր յայդ անլոյս դագաղ տուերաման
»Խաւարեալ հանգչիս 'ի սուգ Հայկազնեայց:
»Չէ քոյդ կայարան՝ այդ յարկ ուրուական:
»Ե՛ւ այսր, Ճախրեա փառօք Արփական
»Յանմահից հանդէս արդեանց արխարական,
»'Ի պայծառ երկնից կամար վերնական:
»Զի անբոյթ նուաղ ընդծով կենացդ այս
»Այոց փրփրածին ալեաց խուժայդ,
»Գործովք խնկելի՝ վարուք հոգելոյս
»Պանծացեալ դրսար յազգի քո խոխոյս:
»Ա՛ւ ե՛նչ քեզ տալ մեր խուն նուերալեան,
»Ա՛ւ ե՛նչ քեզ նանիր գիր դամբանական:
»Քոյդ բնակը դարին՝ դադարդ տուերական,
»Քոյդ տապանագիր՝ գործքդ վերօրհնական:
»Հանգիր սաքէն, Հայր անդուդական,
»Հանգիր խաղաղիկ, տածից անեչական:
»Խնկ մինչ զարթիցես 'ի լոյս յարութեան:
»Ընգքե փարեսցին որդիք Արամեան:

Ամուսին վեհայն Իշխանապետին՝ Աննա Սարգսեան, վաղագոյն ևս վախճանեաց զիւր կեանս 'ի 11 Մարտի 1820 ամի. որոյ և շիրմին այս է արձանագիր

Անբիծ հաւատով՝ երկնից սիրով լի,
Անբաստելի խրդճիւ լցեալ զուաշ խաչի,
Յայս հովտէ կենաց նեղ աշխատալի
Վերձեմեալ՝ հանգեաւ 'ի գոգ Քրիստոսի:
Կին առն գործակից Ճգանց և զբաղմանց,
Մայր 'ի հօր սփոփանս՝ մորգէշ զաւակաց.
Տնանկաց զօրաւիգ, խորհուրդ՝ գութ պաշտպան,
Ընկեր մտերիմ՝ անձմի մարդկութեան:
Յերկնի երկնային անՃառ բարութեան,
Անդորր տարրացոյ անմահ 'ի մահուան:



Лит. А. Беггрова.

Лазаревский Институтъ Восточныхъ языковъ въ Москвѣ

Լազարեանց Հայոց Ճեմարան Արեւելեան լեզուաց ի Մոսկուայ

Institut Lazareff des langues Orientales à Moscou.

Յովակիմայ Նազարեանց եղեն որդիք հինգ, Յովհաննէս, Խաչատուր, Յարութիւն, Գաբրիէլ Ա, Գաբրիէլ Բ: Եղեն և դստերք վեց, Աննա Ա, Եղիսաբէթ, Մարիամ, Կատարինէ, Մարթա, Աննա Բ: Մի յորդւոց անտի նորա՝ Գաբրիէլ Ա, և երկուք ՚ի դստերացն Աննայք, վաղահասպ մահուամբ վճարեցան ՚ի կենաց, առաջինն յմանկական ՚ի տիս, և յետինքն՝ ՚ի յարբունս հասանել: Իսկ չորրորդ դուստրն Կատարինէ ոչ քաջցրագոյն վայելեաց կեանս ընդ որում՝ ամուսնացաւ. զի յետ ծննդեան զաւակի մի՝ վախճանեցաւ յամին 1841: Զայսմանէ այսչափ ինչ ասել շատ է. իսկ զայլոցն յիշատակ տեսցուք՝ ըստ կարգի:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ:

—

ԻՆ. ՕՐՆ յամին 1791, ՚ի փետրուարի 15. ծնաւ՝ զարդացաւ և հրահանգեցաւ ընդ ձեռամբ բարեկիրթ դաստիարակաց: Առողջ էր նա անձամբն, հաստակազմ, զուարթ, հեզ բարոյիւք, և դիմօք պայծառ. այլ ոչ ընդ երկար զայս եւես զարեաւ: Քանզի մինչ դեռ ՚ի նորածաղիկ փթթէր հասակի՝ ամաց գոլով քսան և երկուց, բացաւ առաջի նորա արիւնաճեմ ասպարէզ ահագնագոռ պատերազմաց: Գոլով նորա զինուորեալ ՚ի կայսերական թիկնապահ Գնդին դասու ՚ի քառասուն պատերազմունս (1): Եւ յայնքան ՚ի մատաղ հասակի ամբարձաւ յաստիճանն անուանեալ Շթապ-Րօթմիսթր. ստացաւ զԱսպետանշան Ս. Աննայի երկրորդ աստիճանի, և զՎլատիմիրայն՝ չորրորդ աստիճանի՝ հանդերձ փնջով.

(1) ՚Ի ձեռ. Յիշտա:

տուաւ նմա և Սուսեր, և Խաչ վասն քաջութեանցն 'ի պատերազմին Քուլմեայ, այլև Շքադրամ արծաթի, և Ռուսացն անուանեալ Շքանշան 'ի վարձ արժանաւորացն վաստակոց (1)։ Բայց ըստ բաղդին ձախողելոյ՝ 'ի 4 Հոկտեմբերի 1813 ամի անկաւ նա դէն 'ի ձեռին յարձակողին Ճակատամարտի որ առ Լայփցիկաւ՝ հարեալ 'ի թնդանօթաձիգ ումբոյ (2*)։

Անդստին 'ի մատաղ տիոյն սիրող էր նա իմաստից, և Հայրենակցայն լուսաւորութեան առաւել յոյժ փափագող. և այնր իսկ աղագաւ գումարս դրամոց (**) նուիրեաց յօգուտ Ճեմարանին 'ի հօրէն իւրմէ կառուցելոյ (3)։

ԱՅԼՔ յորդւոյն Յովակիմայ Լազարեանց՝ կան 'ի կենդանութեան, որք են Վեհազնեայ Իշխանապետքն Յովհաննէս, Խաչատուր, Ղազար։ Թէպէտ և սոցայս որ առ ազգ մեր առհասարակ անհամար երախտիք, և որ առ ոմանս ոմանս 'ի մերայոցն և յօտարաց առանձինն բարերարութիւնք, և որ առ 'ի շահ օգտի հասարակաց ջանք և վաստակք (4), նոքին իսկ յաւէժական յիշատակարանք են գերապանծ Տոհմի նոցա՝ անջինջ 'ի սիրտս դրոշմեալք ամենայն Հայկազանց, սակայն անկ է և ինձ 'ի կարգի Պատմութեանս զմիոյ միոյ 'ի նոցանէ ասել ինչ համառօտիւ։

ԻԲ. ԻՇԽԱՆԱՊԵՏՆ Յովհաննէս Յովակիմեան Լազարեանց (***) (որ անզաւակ Հայրն է խմբելոյն 'ի Լազարեան Ճեմա-

---

(1) 'Ի ձեռ. Յիշատ։

(2) 'Ի գիրսն Собраніе Актовъ. 'ի հատ. Գ. յէջ 305. և 'ի Բազմավէպն 1843 ամի, յէջ 188 և 351։

(*) Մարմին նորա՝ ըստ հրամանի Տէրութեան՝ բերաւ 'ի Լայփցիկոյ 'ի Փեթերպուրկ յամին 1815։ Զշիրմի նորա արձանագիրսն Հայերէն և Ռուսերէն՝ գիտ յերկրորդ մասին։

(**) Այսինքն է՝ 50,000 րուպլի թղթադրամ, որ 250,000 ղուրուշ է Տաճկաց։

(3) 'Ի ձեռ. Յիշատ։

(4) 'Ի Բազմավէպն 1843 ամի, յէջ 188։

(***) Ծնունդ սորա 'ի Մկրտութեան Ցուցակի նշանակեալ կայ ըստ այսմ. «1786,

Peint p Lampi.

Imp. p Chevalier

Վսեմն Հոգաբարձու Յովհաննէս Լազարեանց:

Его Пво Иванъ Екимовичь Лазаревъ, Камергеръ, Попечитель Института

S. Ex. Jean de Lazareff, Curateur de l'Institut à Moscou

բանի որ 'ի Մոսկուա՝ դասուց դասուց մանկտւոյ ազգիս) յաղագս բազմադէմ ծառայութեանցն՝ զորս ծառայեալ է Տէրութեան Ռուսաց, և յաղագս բազմօրինակ բարերարութեանցն առ իւր Համազգիս, փառաւորագունից արժանացեալ է Աստիճանաց պատուոյ՝ և պարգևաց տուելոց 'ի մեծազօր Կայսերացն Ռուսաց՝ յԱղեքսանդրէ Առաջնոյ և 'ի Նիկողայոսէ Առաջնոյ:

Որք զայսմ ամենայնէ լի ցանկան ունել տեղեկութիւն, ընթերցցին զՔաղուածն համեալ 'ի նորա ծառայութեանցն Ցուցակէ, որոյ այս է թարգմանութիւն:

«Դրան Նորին Կայսերական Մեծութեան Սենեկապետ, Ներգործական Պետական Խորհրդական՝ Յովհաննէս Յովակիմեան Լազարեանց, Հոգաբարձու Լազարեան Ճեմարանի Արևելեան լեզուաց, ունի զՇքանշանս Ասպետական կարգաց՝ Ս. Աննայի Ա աստիճանի՝ զարդարեալ Կայսերական Թագիւ. Ս. Ստանիսլաւայ Ա աստիճանի. և Ս. Վլատիմերայ Գ աստիճանի: Ունի ևս զՊատուադիլն անուանեալ Նշան Ս. Յովհաննու Երուսաղէմացւոյ. զՆշան գովանի և անարատ ծառայութեան վասն 35 ամաց. զՇքադրամ Ազնուականութեան վասն Հայրենեաց պատերազմին՝ որ 'ի 1812 ամի, և զՆշան Առիւծու և Արեգական Ա աստիճանի՝ տուեալ յարքայէն Պարսից համդերձ պարգևագրով յամին 1853: Անուն Լազարեանց Տոհմի արձանագրեալ է յԱզգաբանական մատենի Նահանգին Եարոսլաւայ, յառաջնում մասին. 'ի Ս. Փեթերպուրկայն՝ 'ի չորրորդ մասին, և 'ի Մոսկուայն՝ յառաջնում մասին: Հրովարտակն յաղագս Ազնուականութեան տուեալ է նախահաւու նորա Ղազարայ Նազարեան Լազարեանց 'ի կայսրուհւոյն Կատարինեայ Բ. յ3 Հոկտեմբերի 1776 ամի:

Տոհմային կալուածքն են այսոքիկ: 'Ի վիճակս Փերմ Նահանգի՝

Փետրվարի մէկ, երեկոյեան 6 ուշաթուն՝ մին կարանն (խմ՝ քառորդին) ալայ յովակեմին Աստուած որդի պարգևեաց. 12ին մկրտեցին. կնքողն տէր պետրոսն էր, և կնքահայրն ալայ մեծաւն և անունն եդին Յովհաննէս. Աստուած բարի յիշատակ արասցէ և զօրացուսցէ»:

յանուանեալն Փերմքի, Սոլիքամսքի, Օխանսքի, և Չերդընքի, ըստ հաւատարմօր տեղեկութեամբ եղբօր նորա Ներգործական Գե-տական Խորհրդականին Մենեկալեան Խաչատրոյ Յովակիմեան Լա-զարեանց, 'ի ժամանակի վերջին ննջեցորդ Աշխարհագրին՝ ստուգեալ և ընդածնեալք յարական սեռէ՝ որք 19222։ Նախարանք աղի՝ 'ի վիճակին Սոլիքամսքի. գործարանք ձուլելոյ պղնձոյ և զերկաթ՝ 'ի վի-ճակին Փերմքի և Սոլիքամսքի. տուն մի փայտեայ 'ի Մոսկուա. տուն մի փայտեայ և տուն մի քարեայ 'ի Նիժնի-Նովկորոտ. ար-ծաթագինք՝ արդար վաստակօք ստացեալք՝ որք 27 յարական սեռէ՝ 'ի Տանիլովկի վիճակի նահանգին Եարոսլաւայ։

Դաստիարակեցաւ 'ի գլխաւոր ուսումնարանին Գերմանացւոց՝ որ առ Ս. Պետրոս եկեղեցեաւ Լուտերականաց 'ի Ս. Փեթերբուրգ։

Յամ Տեառն

1801. 'Ի Յուլիսի 3, եմուտ 'ի ծառայութիւն յեղեալն 'ի Մոսկուա 'ի Դիւանն կայսերական Ատենի Արտաքին գործոց։

—— 'Ի Նոյեմբերի 9, Բարձրագոյն Հրամանագրաւ կարգեցաւ թարգման 'ի սակս առաջինկայ գտանելոյ 'ի հանդիսի թագա-դրութեան կայսեր։

1804. 'Ի Յուլիսի 27, նշանակեցաւ 'ի գործս կայսերական Ատենի յԱսիական Բաժնի։

1805. 'Ի Դեկտեմբերի 31, 'ի նմին կալով պաշտաման՝ պարապե-ցաւ 'ի թարգմանութիւնս 'ի Հայ լեզուէ, և ըստ առաջադ-րութեան նոյն Ատենի՝ ամբարձաւ 'ի կառավարող Ծերակու-տէն յաստիճան Ատենական Դատողակցի։

1807. 'Ի Փետրուարի 5, կարգեցաւ 'ի խումբս երկրային կամ քա-ղաքական զինուորաց նահանգին Ս. Փեթերբուրգայ։

—— 'Ի նմին ամի ընկալաւ 'ի պարգև զՇքադրամ՝ ոսկի, և զմա-տանի ադամանդեայ։

1810. 'Ի Դեկտեմբերի 31, ըստ առաջադրութեան կայսերական Ատենին՝ ամբարձաւ 'ի կառավարող Ծերակուտէն յաստի-ճան Պալատական Խորհրդականի։

1811. Դեկտեմբերի 13, ըստ առանձին կայսերական Հրամանագրի՝

արձակուրդ ընկալաւ գնալ 'ի կաւկասեան Ջրբուղխս առ 'ի բժշկութիւն։

1812. 'Ի Մարտի 19, ոչ ևս օգտեալ 'ի ջրոց անտի՝ դարձաւ եմուտ վերստին 'ի ծառայութիւն։

1814. յՕգոստոսի 30, ընկալաւ զՇքադրամն Ազնուականութեան՝ սահմանեալ վասն պատերազմին Հայրենեաց որ եղև յամին 1812։

1815. 'Ի Մայիսի 3, կացուցաւ Հոգաբարձու Լազարեան Ճեմարանի Արևելեան լեզուաց որ 'ի Մոսկուա։

1816. 'Ի Սեպտեմբերի 10, արժանացաւ վարձատրութեան՝ Պատուադիր Նշանաւ Ասպետական Կարգի Ս. Յովհաննու Երուսաղեմայեաց։

1817. Հրաւիրեցաւ 'ի Զինուորական Հանրական Նահանգապետէն Մոսկուայ՝ լինել թարգման 'ի Դիւանատան նորա։

1818. 'Ի Դեկտեմբերի 31, ընկալաւ զաստիճան Ատենական Խորհրդականի՝ հանդերձ Ազնուութեան պատուով։

1819. 'Ի Մայիսի 31, փոխադրեցաւ ըստ առաջնոյն 'ի գործս Կայսերական Ատենին։

— 'Ի 28 օրեայ արձակման ելեալ 'ի Մոսկուա՝ 'ի կիր արկ զժամանակին յօգուտ պաշտաման՝ 'ի Թարգմանութիւնս 'ի Հայերէն՝ ըստ յանձնարարութեանն եղելոյ 'ի Կառավարչէ Դիւանին Կայսերական Ատենի Արտաքին գործոց՝ 'ի Ներքին Խորհրդականէն Մալինովսկեայ՝ 'ի յարաբերութիւնս դատաստանական տեղեաց և զանազան խնդրոց։

1823. յԱպրիլի 18, փոխադրեցաւ յԱսիական Բաժին Նախարարութեան Արտաքին գործոց։

— 'Ի Նոյեմբերի 15, ամբարձաւ յաստիճան Պետական Խորհրդականի՝ հանդերձ Ազնուութեան պատուով 'ի 31 էն Դեկտեմբերի 1820 ամի։

1826. 'Ի Սեպտեմբերի 22, 'ի վարձ ջերմեռանդօրէն կատարելոյն պաշտօնին յանձն եղեալ նմա յԱսիական Բաժնի առ ընթեր յայնկոյս-Կաւկասեան և Քերկիզեան Պատգամաւորաց եղելոյ 'ի 'ի Մոսկուա 'ի ժամանակի Թագադրութեան Կայսեր Նիկո-

ճայոսի, արժանացաւ ընդունել զՇքանշան Ասպետական կար-
գի Ս. Աննայի Գ աստիճանի:
—— Ի նմին լոկ ժամանակի փոխադրեցաւ առ Զինուորական Հան-
րական Նահանգապետն Մոսկուայ՝ ՚ի սակս կատարելոյ զզանա-
զան յանձնարարութիւնս:
1829. Ի փետրուարի 19, Բարձրագոյն Հրամանաւ հաստատեցաւ ՚ի
կոչման Պատուանուն Ատենակալի ՚ի Տեսչութեան Լազարեան
Ճեմարանի Նշանի Ս. Անդրէի Նախակոչ Առաքելոյ՝ առանց հատու-
թի, կրելով զպահմանադրեալ Նշանն:
1830. Ի Մարտի 15, ըստ վկայութեան Զինուորական Հանրական
Նահանգապետին Մոսկուայ՝ ծանուցաւ նմա բարեհաճութիւն
Գերամբարձ Միապետին:
—— յՕգոստոսի 22, Ամենողորմածաբար պարգեւատրեցաւ Նշանաւ
գովանի եւ անարատ ծառայութեան վասն 20 ամաց:
1831. Ի Յունուարի 22, ՚ի վարձ ջերմեռանդութեանն առ ծառայ
ութիւն ՚ի պաշտաման Հոգաբարձուի Լազարեան Ճեմարա-
նի Արեւելեան լեզուաց՝ արժանացաւ բարեհաճութեան Գե-
րամբարձ Միապետին՝ յայտնելոյ ՚ի ձեռն Օժանդակ Զօրա-
պետին Հեծելազօրու՝ կոմսին Ալեքսանդրի Պենկենտորֆայ:
—— Ի Մայիսի 22, ՚ի ժամանակի մաղձային ախտին (холера) ճա-
րակելոյ ՚ի Մոսկուա, օգնական գոլով Թաղապետի Մեսանից-
քի մասին, եւ վասն ջերմեռանդութեանն ՚ի փոյթ ջանից ՚ի
կարճել զցաւն, ըստ կարգաւորութեան Քաղաքային Նախարա-
րայ՝ Ամենողորմածաբար վարձատրեցաւ Թագազարդ Շքա-
նշանաւ Ասպետական կարգի Ս. Աննայի Գ աստիճանի:
—— Ի Յուլիսի 19, Նշանակեցաւ Անդամ Քաղաքային կարգելոյ ՚ի
կատարումն տեսարանի Ռուսական ձեռագործաց ՚ի Մոսկուա.
եւ վասն փութապէս ՚ի կատար ածելոյն զգործս զայս՝ Ամենո-
ղորմածաբար պարգեւեցաւ նմա մատանի ադամանդեայ՝ հան-
դերձ քանդակաւ փակագրի անուան Նորին Կայսերական Մե-
ծութեան:
1832. Ի Մայիսի 1, ՚ի կատար ած զշինութիւն մատենադարանի

Դիւանատան Զինուորական Հանրական Նահանգապետին Մոսկուայ, որում՝ ըստ հրամանագրութեան նոյն Նահանգապետի՝ սկիզբն առարեալ էր 'ի 16 էն Դեկտեմբերի 1830 ամի։

1834. 'Ի Հոկտեմբերի 22, գոլով Անդամ՝ Ժողովոյն կարգելոյ 'ի սակս կառուցման Յաղթական կամարին որ 'ի Մոսկուա, 'ի վարձ աշխատութեանն՝ Ամենողորմածաբար պարգեւատրեցաւ Շքանշանաւ Ասպետական կարգի Ս. Վլատիմիրայ գ աստիճանի։

1835. 'Ի Մարտի 14, նշանակեցաւ Անդամ վասն յօրինմանն 'ի Մոսկուա՝ երկրորդ տեսարանի արուեստակերտութեանց։

1836. 'Ի Յունվարի 19, վասն տեսարանի արուեստակերտութեանց եղելոյ 'ի Մոսկուա, Ամենողորմածաբար պարգեւատրեցաւ կոչմամբ Սենեկապետի Դրան Նորին Կայսերական Մեծութեան։

1837. 'Ի փետրուարի 24, վասն ջերմեռանդութեանն եւ վաստակոյն յօգուտ հասարակաց, Ամենողորմածաբար ամբարձաւ յաստիճան Ներգործական Պետական Խորհրդականի։

1838. 'Ի Դեկտեմբերի 12, վասն տպագրութեան Հայ եւ Ռուս բառարանին, արժանացաւ բարեհաճութեան Գերամբարձ Միապետին՝ յայտնելոյ 'ի ձեռն փոխանակի Գլխաւոր Կառավարչին Կայսերական Ատենի՝ Կոմսին Նեսսելրոդայ։

1839. 'Ի Մարտի 25, յաղագս գովանի եղանակաւ եւ ջերմեռանդօրէն կատարելոյն պաշտօնն Հոգաբարձուի Լազարեան Ճեմարանի Արեւելեան լեզուաց՝ որ 'ի Մոսկուա, Ամենողորմածաբար վարձատրեցաւ ոսկեայ ադամանդայեռ տփով պնչաղեղոյ՝ հանդերձ քանդակաւ փակագրի անուան Նորին Կայսերական Մեծութեան։

— 'Ի Նոյեմբերի 10, 'ի լրումն յանկութեանն ցուցելոյ յիւրմէ, եւ 'ի սակս յարակցութեանն ընդ Զինուորական Հանրական Նահանգապետին Մոսկուայ, դասեցաւ 'ի թիւ Անդամոց Նախարարութեան Արքունի հասից՝ իւրովք սեպհական ծախուք յառաջ քան զմտանելն 'ի նշանակեալն պաշտօն։

1840. յՕգոստոսի 22, Ամենողորմածաբար պարգեւատրեցաւ Նշանաւ գովանի եւ անարատ ծառայութեան եւ գերազոյն արժանաւորութեան։

1841. Յապրիլի 11, 'ի տրիտուր յարատեւ ջերմեռանդութեանն յօ-
գուտ Արեւելեան լեզուաց Ճեմարանին Լազարեանց՝ որ 'ի
Մոսկուա, վարձատրեցաւ Գրանշանաւ Ասպետական Կարգի
Ս. Սթանիսլաւայ ա աստիճանի:

1845. Ի Յուլիսի 27, 'ի լրումն Բարձրագոյն հրամանին եղելոյ 'ի
6 էն Յուլիսի այսր ամի, յաղագս 'ի բաց հանելոյ 'ի թուոյ
պաշտօնէից զատուցանողացն կարգեալը 'ի պէտս առանձին
յանձնարարութեանց Նախարարութեան Արքունի հարկաց, եւ
եւ զայնուհետեւ՝ որք ունին իշխանապետութեան պարապումն 'ի նմին
Նախարարութեան կամ՝ յայլ Ատեանս, նմանապէս եւ առ 'ի
սահմանափակել զթիւ նոցին առ հասարակ, 'ի բաց հանաւ
'ի թուոյ պաշտօնէից Նախարարութեան Արքունի հարկաց:

—— Ի Դեկտեմբերի 5, Ամենողորմածաբար պարգեւատրեցաւ Նշա-
նաւ զոլանի եւ անարատ ծառայութեան եւ գերապայծ արժա-
նաւորութեան վասն 35 ամաց:

1848. Ի Յունիսի 15, 'ի ցոյց առանձին բարեհաճութեան առ յա-
րատեւն ջերմեռանդութիւն նորա 'ի պահպանութիւն Լազա-
րեան Ճեմարանին Արեւելեան լեզուաց՝ որ 'ի Մոսկուա, պար-
գեւատրեցաւ Գրանշանաւ Ասպետական Կարգի Ս. Աննայ ա
աստիճանի:

1851. Ի Փետրուարի 12, 'ի տրիտուր նուիրանաց 60,000 րուբլի
արծաթոյ 'ի պէտս հաստատութեան Նախակրթական Բաժնի
'ի Լազարեան Ճեմարանի Արեւելեան լեզուաց՝ 'ի յիշատակ
մատաղահասակն Յովհաննու Լազարեանց, ծանուցաւ նմա
Կայսերական շնորհակալութիւն:

1853. Ի Մայիսի 20, 'ի յարգանս մեծամեծ նուիրաբերութեանցն
եղելոց 'ի նմանէ 'ի պահպանութիւն Լազարեան Ճեմարանին
Արեւելեան լեզուաց, եւ 'ի տարածումն լուսաւորութեան, վար-
ձատրեցաւ Թագաւորէ Գրանշանաւ Ասպետական Կարգի Ս.
Աննայ ա աստիճանի:

Վսեմն Օգնական Հոգաբարձու Խաչատուր Լազարեանց:

ЕГО ПР.ВО ХРИСТОФОРЪ ЕКИМОВИЧЬ ЛАЗАРЕВЪ | SON EX.CE CRISTOPHE DE LAZAREFF.

Камергеръ, П. Попечителя Института. | Adjoint du Curateur de l'Institut de Lazareff.

Lith. par Victor. Imp. par Chevalier.

Է՛ և Պատուանուն Անդամ Ս. Փեթերբուրգեայ և Մոսկուայ կայսերական Ընկերութեանց Բնագիտաց, Անդամ կայսերական Ընկերութեան Շինական Տնտեսութեան, և Անդամ Ասիական Ընկերութեան Փարիզու. նաև՝ ըստ Բարձրագոյն հրամանի Անդամ Ժողովոյն սահմանելոյ յաղագս բանդից, և այլ առանձին Ժողովոյ սահմանելոյ յաղագս չքաւորաց։

ԻԳ. ԳԵՐԱԶԱՆՑ Իշխանազեան Խաչատուր Յովակիմեան Լազարեանց (*), յետ ամուսնանալոյ ընդ չքնաղագունին գեղով մարմնոյ և առաքինի ոգւոյն բարեմասնութեամբք՝ ընդ Կատարինեայ դստեր Պալատ Իշխանի Մանուկ Պէյի Միրզայեան (յամին 1819, 'ի Հոկտեմբերի 13), ցանկայր միշտ և ուխտիւք լոկ յԱստուծոյ խնդրէր՝ գէթ զմի և եթ ունել որդեակ՝ ժառանգ հոյակապ զարմին. քանզի մինչ ցամն 1844՝ դստերաց և եթ (զորոց 'ի վերջ կայ մատենիս ունիմ խօսել) լեալ էր նա հայր։

ԻԴ. ԵՒ ահա 'ի նմին 'ի 1844 ամի, 'ի 12 Մայիսի, յաւուր Ուրբաթու, յերկրորդում ժամու յետ միջօրէի ծնաւ նմա ցանկացեալն ուստր, որ անուանեցաւ Յովհաննէս։ Յաշխարհ գալ մանկանս՝ ուրախութիւն մեծ եղև ծնողացն։ Վեհափառ Պատրիարքն և Կաթողիկոսն ամենայն Հայոց Տէր Ներսէս՝ որ յայնմ ժամանակի 'ի տան նորա բնակէր (**), ետ մանկանն՝ յետ մկրտութեան՝ զսրբազան խորհրդոյ Դրոշմին զկնիք 'ի 23 Մայիսի նոյն ամի (1)։

(*) 'Ի մկրտութեան Ցուցակի այսպէս կայ նշանակեալ ծննդ. սորա. «1789, ամսոյ «Յովակիմին Աստուած որդի ետ Յունիսի մէկին, գիշերին 11 ժամին. 14 ին «կնքեցինք. կնքահայրն իւր որդին (եմն՝ որդին Յովակիմայ՝ Յովհաննէս) էր, և «կնքողն տէր պետրոսն էր. անունն է Խաչիկ. Աստուած բարի յիշատակ արա-«ցէ. ամէն։»

(**) Զի ըստ միաձայն հաւանութեան ընդհանուր ազգիս ընտրեալ 'ի Կաթողիկոսու-թիւն՝ առանձին հրաւիրանաւ Ինքնակալին Ռուսաց եկեալ էր 'ի Փեթերբուրգ (յամսեան Յունիսի 1843 ամի) առ 'ի զընտրութեանն ընդունել զհաստատու-թիւն Հրովարտակաւ Արքունի։

(1) 'Ի ձեռ. Յիշատ։

ԻԸ. ԻՍԿ յետ սակաւուց ('ի 24 Օգոստոսի նոյն ամի) հարկ եղև համօրէն գերդաստանին Լապրեանց՝ 'ի սակս առողջութեան մանկանն ելանել 'ի Փեթերպուրկայ, և դնալ յօտար սահմանս: Գնացին նախ 'ի Քօվնօ և 'ի Վարշաւ՝ անցանելով ընդ Սիլեզիա՝ ընդ Մորաւիա՝ և ընդ մասն մի Հունգարիոյ: Կացին 'ի Վիեննա, 'ի Վենետիկ, 'ի Գենուա, 'ի Նիցցա, ամիսս մի: Չոգան ապա 'ի Լուքքա, 'ի Փիզէ, 'ի Լիվոռնա, 'ի Ֆլորենցիա: Անտի անցեալ ընդ Պոլոնի՝ ընդ Մոտենա՝ ընդ Մանտուա՝ ընդ Վերոնա՝ մտին 'ի Միւնխէն, և անտի յԱուգսպուրգ, 'ի Շթութկարտ, 'ի Հէյտէլ-պէրգ, 'ի Մանհէյմ, 'ի Մայնց, 'ի Ֆրանկֆուրթ՝ որ առ Մայն գետով, 'ի Վիսպատէն, 'ի Քրէյցնախ, 'ի Քոպլենց, 'ի Քէլն: Ան-ցին ապա յԱխէն, և անտի 'ի Պելգիա, 'ի Պրիւսսէլ, և հուսկ 'ի Գաղղիա: Ընդ երկար կացին 'ի Փարիզ. չոգան անտի 'ի Սթրաս-պուրկ. դարձան ապա անտի յետս՝ գնալով զՀելվետիա. դարձեալ զկայ առին 'ի զանազան քաղաքս Գերմանիոյ. և 'ի վախճանի ('ի 12 Օգոստոսի 1847 ամի) ծովագնացութեամբ եկին 'ի Քռոնշթատ, և անտի 'ի Փեթերպուրկ:

Զայս ճանապարհորդութիւն արարին նոքա՝ ոչ վասն անձանց ինչ զուարճութեան, և ոչ դարձեալ զբօսանաց ինչ կամ հետաքրքրութեան աղագաւ, այլ միայն առ 'ի առողջութիւնն կազդուրելոյ փոքրածին մանկանն: Երևելիք 'ի բժշկաց՝ որոց միանգամ դէպ եղև զմանուկն տեսանել, կամ դարման ինչ առնել տկարութեան նորա, յուսադիր լինէին ծնողացն՝ և դրեթէ երաշխաւորէին իսկ՝ ոչ միայն վասն առողջագոյն կենաց նորա 'ի յապայս, այլ և (որպէս ասենն) վասն երկարակեացն լինելոյ: Զայս առնէին՝ ըստ մարմնոյն կազմածի և ըստ խառնուածոյն և ըստ դատելով: Իսկ մանուկն իսկ զկնի դարձին 'ի Փեթերպուրկ (յամին 1848) է զի առողջ՝ և է զի կիսախօթ վարէր կեանս:

ԻԹ. ԹԻԿԻՊԻՏ և մանկանն տեսոյ՝ իմ չիք համդիպեալ, այլ բազում ինչ՝ յորոց ականատես նմին լեալ էին՝ լուեալ եմ ստէպ 'ի հրաշալեացն կարգի: Վաղագոյն քան զոր բնութեանն պահանջէ

կորդ, պարթեան՝ ասեն՝ 'ի նմա ոգեկան զօրութիւնք, և երբև ատն կատարելոյ՝ երևեցան նորա ձիրք մտացն, ընդ նմին՝ և սէր առատաձեռնութեան, զգացումն գորովոյ, կարեկցութիւն առ ընկերս, այլովքն հանդերձ։ Իբրու սովորական ինչ զբօսանք էին նմա՝ ստէպ ստէպ յայց ելանել արգելարանաց, տալ ողորմութիւն բանտարկելոց։ Նա այսօրէնք՝ էր նա միանգամայն առատ և զուարթ 'ի տուրս, մինչև յօժարակամ կամօք՝ որ ինչ յիւր ձեռն գայր՝ ընծայել այլոց։

Մինչ դեռ 'ի չորից ամաց էր հասակի՝ կամ թէ հնգից, երևեցոյց սէր առ իմաստս և առ գիտութիւն։ Խնամով իմն ուշադիր լինէր, ասեն, յերևոյթս կամ 'ի տեսարանս բնութեան, և ցանկայր մանրախուզել զերկնայնոցն լուսաւորաց ունել տեղեկութիւն։ Չէր նա սիրող մանկական խաղուց, այլ՝ ախորժէր յաւէտ զընթերցուածն լսել զպարզաճառ մատենից և զպատմականաց. և ընդ երիցագունից քան զինքն՝ խօսակից 'ի մէջ անցանէր։

Իսկ 'ի վերջին ժամանակս զոգցես իմն նախազգաց 'ի հոգին լինելով, որպէս պատմեն, ասէր ստէպ ցհայրն, թէ չէ՛ն ինչ պէտք վասն իւր՝ ծնողական վաստակոց և հոգողութեանց։ Չցանկայր աստիճանաց կամ նշանաց պատուոյ, և ո՛չ իսկ դրամոց ակն դնէր հարստութեան. միով բանիւ՝ կրկնէր և երեքկնէր յամենայն ժամ, թէ »չկամի ինձ և ո՛չ ինչ«։ Քան զամենայն ինչ պաշխարհէր՝ գեղեցիկ և պատուական զնա՛ համարէր։ Խոյս տայր յամենայն բժշկական դարմանոց, և ատէր զբժիշկս։ Սիրէր միշտ 'ի գնին կալ հանդիսից թաղման և յուղարկաւորութեանց, զորս և ինքնին աշխատ լինէր 'ի նկարու հանել։ Եւ աւուրբք ինչ յառաջ քան զմեռանելն՝ ընկողմնեցաւ, ասեն, 'ի վերայ սեղանոյ, իբրու այն թէ՝ զմեռելոյ բերելոյ զնմանութիւն։

Իւ. ԾՆՈՂՔ և ազգականք մանկանս ամենայն խնամով հըսկէին 'ի բարւոք դաստիարակութիւն նորա. սոյն և պատրաստէին զնա նախանձաւոր այնպիսւոյն լինել կենդանագրական վաստակոյ, որպիսւոյ 'ի հարիւրոց ամաց հետէ պայծառացեալ փայլէ Տոհմն նոցա 'ի կայսերութեան Ռուսաց. և (զամենայն միանգամայն

տացից) ջանային յորդարուն ամենայնիւ առնել զՃանապարհն՝ որ 'ի փառաւորագոյնն տանիցի յասպարէզ բազմահանդէս առաքինութեանց:

ԻԸ. ԵՂԱՒ երբեմն մանկանս հիւանդանալ դնել մերձ 'ի մահ. և այնչափ սաստկագունի հանդիպեալ էր նա ցաւոյ, մինչև ոչ ևս ակն ունել բժշկաց դարձի նորա յառողջութիւն: Այլ ըստ խնամոցն Աստուծոյ՝ վերստին ապաքինեալ, եկեաց յայնմ հետէ այլ ևս ամս երկու: Եւ ծնողացն անդրէն յառաջին 'ի յոյսն հաստատեալ՝ անպայման ուրախ լինէին յանձինս իւրեանց, մանաւանդ յորժամ զսիրելագոյն որդեկի իւրեանց զաճումն տեսանէին զըստ մարմնոյ, և զաջողապէսն զարգանալ 'ի բնական ձիրս ոգւոյն: Իսկ թէ քանիօն և որքանեաւ լնոյր զեղոյր խնդութեամբ գորովագութ սիրտ հօրեղբօր նորա Վեհազնին Յովհաննու Յովակիմեան Լազարեանց, սահմանաւ ասել ոչ է կար:

Յայտ իսկ է ամենեցուն, զի մեծ Իշխանապետքն Լազարեանք՝ որ բնաւիւք բարեբաստեալք էին Ճոխութեամբք և փառօք, ոչ իմիք կարօտանային, և ոչ իմիք այնպէս ըղձանային, որպէս զարմին իւրեանց յաւէրժանալոյ շառաւեղաւն այնուիկ՝ իբրու նորով ումամբ Իսահակաւ: Այլ Աստուած՝ որոյ խորոցն իմաստութեան և դատաստանաց չքաւեն հասանել միտք հողեղինի, հաճեցաւ կոչել առ ինքն զսուրբն իւր՝ զփոքրիկն Յովհաննէս՝ զաւարթնոց երկնից զուգատոհմ: Այլ թէ զիարդ այն դէպք անցին, պատմեցից:

ԻԹ. Ի 24 Նոյեմբերի 1850 ամի, մինչ դեռ տակաւ խաղայր մանուկն առաջի աչաց ծնողացն, տեսին նոքա 'ի նմա տխրութիւն ինչ անսովոր, և նեղսրտութիւն արտաքոյ բնաւորին նորա աշխուժից և զուարթութեան: Յերկրորդումն աւուր տարան զնա կառօք՝ ըստ բժշկին խորհրդոյ՝ 'ի զբօսանս. այլ չեղև ինչ այն յօգուտ: Գամ՝ քան զգամ՝ զայրացեալ արկածից ախտին (որ ազգ. ինչ էր վերնատութեան՝ ապստամբ յամենայն հնարից), հուսկ ապա Ճաշակեցոյց զանդարձ մահուն զբաժակ՝ նմին ցանկացողի, 'ի 26 երորդում աւուր նորին ամսոյ, յերրորդ և 'ի կէս ժամու՝ յետ աւուրն ընդմիջելոյ:

Այսօրինակ յանկարծահաս մահ միամօրն այն որդեկի՝ վեր 'ի վայր հարեալ կործանեաց զամենայն զյուսալից բերկրանս տանն Լազարեանց․ պարտասեաց լքոյց 'ի սպառ զսիրտ և զձեռս զաւակասէր ծնողացն․ դարձոյց 'ի սուգ զուրախութիւն նոցա․ և միանգամայն եւս խաւարաւ անփարատելի տրտմութեան ելից՝ նսեմացոյց զնոցուն զմեծապայծառ օթևանսն։

Լ․ ԱՅԼ յայսր ամենայնի վերայ, նոքին եւս համակեալքն 'ի սուգ և յարտօսր, ըստ Քրիստոնեական կրօնիցն բարեպաշտութեան՝ յորում չէին երբէք թերացեալք, հպատակելով Ամենահզօրին կամաց՝ փութացան 'ի 29 Նոյեմբերի վայելչական հանդիսիւ զպատ յուղարկաւորութեանն մատուցանել։ Եւ տարեալ զմարմին փոքրիկն Յովհաննու 'ի տաճար անդր Յարութեան, գերեզմանակից Մեծին արարին Յովհաննու Լազարեանց։

Շիրիմն կանգնեալ 'ի վերայ նորա՝ օրինակ զայս ունի արձանագիր․

»Յո՞յր անուն կանգնիս, անմռունչդ արձան․
Ո՞յր ընդ քեւ ոսկերք յերբ 'ի հող դարձան«

»Ո՛չ առ հինօրեայ մարմին կայ ծերոյ,
Այլ՝ զօղ եօթնամեայ հրաշագեղ մանկան.
Ոյր դէմք, միտք ըղձօն, բարք ազնուական,
Յուսադիր յոգւոց լինէին բարւոյ։
Էր նա փառք, պճնակ, պարծանք, խնդութիւն,
Համայն և ժառանգ Տոհմին Գերազանց,
Ծնունդ Խաչատրոյ Վեհին Լազարեանց,
Մեծին 'ի ծննդոց կանանց՝ համանուն։
Նման ա՛կն ունէր մանկանն Արամայ
Բարեզարդ Զարմին կրթեալ ընձիւղ․
Ընձոյն ազգ յաղէ մըշտընջենաձիւղ
Անձկայր տեսանել 'ի զարս բազմամեայ։
Այլ մահկանացուաց նա վա՛ղ 'ի միջոյ
Փոխեցաւ, յանա՛նց ձգեալ մուտ 'ի կեանս՝
Ու ոչինչ համա՛յն համարեալ զոր կեաս․
Զի այնպէս Վերինն կամացն էր հաճոյ։«

ԼԸ. ՕՐՀՆԵՑԱՒ ապաքէն հայրն վշտացած յամենաւորէն 'ի միակ որդւոյն. այլ ոչ զրկեցան 'ի նորուն հայրօրէն խնամոց՝ բազմաթիւ որդիք Արամայ: Քանզի հայրենասէր վաստակոց փոյթ և ջան՝ անդադրին 'ի սկզբանէ աննուաղելի մնայ և անմահ 'ի սիրտս Լազարեանց: Զփոխեցին նոքա զնպատակ մտաց իւրեանց և կամաց՝ և 'ի բազում անգամ յեղափոխութեան, այլ՝ կան հանապազորդեն միօրինակ 'ի նոյն յառաջնոյն վաստակոյն՝ յամենայնի զօգուտն խորհելով ազգայնոց իւրեանց. որով և 'ի կեան՝ յոր դէմ եղեալն էին՝ փութան ժամանել:

Մի և այն 'ի հաւաստեայ ապացուցս դնեսցի, զի բաց 'ի տրոյն ողորմութեան՝ զոր բաշխեցին նոքա առատապէս աղքատաց և անանկաց առ յիշատակի մանկանն հանգուցելոյ, յաւելին (յամին 1851) հաստատել և զառանձին Նախակրթական Բաժին կամ Դասատուն 'ի Ճեմարանի անդ իւրեանց որ 'ի Մոսկուա՝ յաղագս չքաւորանաց մատաղատիոց մանկանց վարժութեան (*), նուիրեալ 'ի պահպանութիւն նորին վաթսուն հազար ռուբլի արծաթ:

ԼԹ. Ի ԿԱՐԳ. Պատմութեանս հայեցեալ՝ պահանջեմ ատենօր ոչ զանց և զյիշատակութեամբ առնել զաստիճանայն և զՇքանշանաց՝ զորս վեհափառ Ինքնակալք Խաչատուր Յովակիմեան Լազարեանց արժանացաւ ընդունել ընդ ժամանակս ժամանակս 'ի մեծապօր Կայսերութենէն Ռուսաց՝ 'ի տրիտուր բազմօրինակ հասարակաշահ գործոց իւրոց և արդիւնական վաստակոցն 'ի պէսպէս Արքունի պաշտամունս յիշատակեալը 'ի Ցուցակի ծառայութեանց նորա, որոյ այս է թարգմանութիւն:

»Դրան Նորին կայսերական Մեծութեան Սենեկապետ, Ներգործական Պետական Խորհրդական, Խաչատուր Յովակիմեան Լազարեանց, Օգնական Հոգաբարձու Լազարեան Ճեմարանի Արեւելեան լեզուաց, ունի զՇքանշանս Ասպետական Կարգաց՝ Ս. Ան-

---

(*) Զկարեւոր տեղեկութիւնս զայսմ Դասատանէ տացէ ընթերցասէրն յերրորդում մասին մատենիս:

Վսեմն Յարութիւն Յովակիմեան Լազարեանց,
սպանեալ ի պատերազմին Լայպցիգայ յամի 1813 ի 4 հոկտեմ.։

АРТЕМІЙ ЕКИМОВИЧЪ ЛАЗАРЕВЪ | Mr ARTEMIR DE LAZAREFF,

Նոյն ա աստիճանի՝ զարդարեալ կայսերական թագիւ։ Ս. Ստանիս-լաւայ ա աստիճանի։ Ս. Վլատիմիրայ գ աստիճանի։ Ունի եւ զՊա-տուագիր Նշան (Խաչ մեծ) Ասպետական կարգի Ս. Յովհաննու Երուսաղեմացւոյ. զՆշան գովանի եւ անարատ ծառայութեան վասն 35 ամաց. զՄեդալ Ազնուականութեան վասն պատերազմին Հայ-րենեաց եղելոյ յամին 1812, եւ զարծաթի Մեդալ վասն պատե-րազմին եղելոյ ընդդէմ Տաճկաց յամսն 1828 եւ 1829, եւ զՊարս-կական Նշանն Առիւծու եւ Արեգական ա աստիճանի։

Ցուց.

1801. Ի Յունիսի 8, նշանակեցաւ Իւնքեր յեղեալն ի Մոսկուա ի Դիւանի կայսերական Ատենին։

1804. Ի Յուլիսի 27, փոխադրեցաւ ի գործս կայսերական Ատենին։

1805. Յօգոստոսի 21, եմուտ ի պաշտօն Թարգմանչի։

1808. Յօգոստոսի 29, ամբարձաւ յաստիճան Պատուանուն Խոր-հրդականի։

1811. Ի Յունիսի 25, փոխադրեցաւ յԱսիական Բաշխն Նախարա-րութեան Արտաքին գործոց։

1812. Ի Դեկտեմբերի 31, ընկալաւ զաստիճան Ատենական Դա-տողակցի։

1814. Յօգոստոսի 30, ընկալաւ զՄեդալ վասն պատերազմին Հայ-րենեաց եղելոյ յամին 1812։

1815. Ի Մայիսի 3, ստանձնեաց զպաշտօն կառավարչի Լազարեան Ճեմարանի Արեւելեան լեզուաց։ Աշխատեցաւ, եւ ծառայեաց Ճեմարանին յընթացս 40 ամաց։

1816. Ի Սեպտեմբերի 10, արժանացաւ Պատուագիր Նշանի Աս-պետական կարգի Ս. Յովհաննու Երուսաղեմացւոյ։

— Ի Դեկտեմբերի 28, Բարձրագոյն (կայսերական հաճութեամբ) թոյլատրեցաւ նմա կրել զԱսպետականս զայս Նշան։

1817. Ի Դեկտեմբերի 31, ամբարձաւ յաստիճան Պալատական Խոր-հրդականի։

1819. Ի Մայիսի 31, փոխադրեցաւ ի գործս կայսերական Ատենին։

1823. Ի Դեկտ․ 31, ընկալաւ զաստիճան Ատենական Խորհրդականի։

1826. Ի Սեպտեմբերի 12, ըստ Բարձրագոյն Հրամանի կարգեցաւ Օժանդակ Զօրապետին՝ կոմսին Պենկենտորֆայ, ՚ի կատարումն յանձնարարութեանց:

1827. Ի փետր՛ 22, ընկալաւ զաստիճան Պետական Խորհրդականի:

— Ի Դեկտեմբերի 6, ընկալաւ զՇքանշան Ռուսետական կարգի Ս. Աննայի Բ աստիճանի:

1829. Ի Դեկտեմբերի 17, ընկալաւ զՇքադրամն սահմանեալ յաղագս Տաճկական պատերազմին յամին 1828 և 1829:

— Ի Դեկտեմբերի 31, պարգևեցաւ նմա Շքանշանն Ռուսետական կարգի Ս. Աննայի Բ աստիճանի՝ զարդարեալ կայսերական թագիւ:

1831. Ի Յունուարի 31, յաղագս ընդունելոյն զկոչումն կառավարչի Լազարեան Ճեմարանի Արևելեան լեզուաց՝ ծանուցաւ նմա կայսերական Բարեհաճութիւն:

1833. Յօգոստոսի 22, վարձատրեցաւ Նշանաւ զօլանի և անարատ ծառայութեան վասն 25 ամաց:

1834. Ի Յունուարի 19, ընկալաւ զաստիճան Ներգործական Պետական Խորհրդականի:

— Ի Հոկտեմբերի 4, ՚ի ժամանակի այցելութեան Ինքնակալ կայսեր ՚ի Լազարեան Ճեմարանն Արևելեան լեզուաց, յաղագս բարեկարգութեանն յայտնեցաւ նմա՝ որպէս և այլոց՝ կայսերական Բարեհաճութիւն:

1837. Ի փետրուարի 19, պարգևատրեցաւ Շքանշանաւ Ռուսետական կարգի Ս. Վլատիմիրայ Գ աստիճանի:

1839. Ի Մարտի 25, ընկալաւ զկոչումն Սենեկապետի Դրան Նորին կայսերական Մեծութեան:

— Յօգոստոսի 22, վարձատրեցաւ Նշանաւ զօլանի և անարատ ծառայութեան վասն 30 ամաց:

1842. Յապրիլի 22, պարգևեցաւ նմա տուփ պնչադեղոյ՝ հանդերձ քանդակաւ փակագրի անուան Նորին կայսերական Մեծութեան:

1843. Յօգոստոսի 22, վարձատրեցաւ Նշանաւ զօլանի և անարատ ծառայութեան վասն 35 ամաց:

1844. Ի Մարտի 17, պարգեւատրեցաւ Շքանշանաւ Ասպետական կարգի Ս. Ստանիսլաւայ ա՛ աստիճանի։

— ՅՕգոստոսի 5 և 8, ծանուցաւ նմա Բարձրագոյն շնորհակալութիւն վասն ջերմեռանդութեանն 'ի կատարումն պաշտամանց Օրապահութեան (дежурство) առ դխակամբ հանգուցեալ Թագուհւոյ և մեծ Իշխանուհւոյ Աղեքսանդրայ Նիկոլայեւնայի։

1846. ՅԱպր" 27, արձակեցաւ 'ի Նախարարութենէ Արտաքին գործոց։

1848. Ի Յունիսի 15, պարգեւատրեցաւ Շքանշանաւ Ասպետական կարգի Ս. Աննայի ա՛ աստիճանի։

1850. Ի Յունուարի 1, կարգեցաւ Օգնական Հոգաբարձուի Լազարեան Ճեմարանի՝ արձակելով 'ի պաշտամանէ կառավարչի։

1851. Ի փետրուարի 12, 'ի տրիտուր նուիրանաց 60,000 արծաթ րուբլեաց 'ի հաստատումն Նախակրթական Բաժնի 'ի Լազարեան Ճեմարանի՝ 'ի յիշատակ մատաղահասակն Յովհաննու Խաչատրեան Լազարեանց, յայտնեցաւ նմա կայսերական շնորհակալութիւն։

1853. Ի Մայիսի 20, Ամենողորմածաբար վարձատրեցաւ Թագազարդ Շքանշանաւ Ասպետական կարգի Ս. Աննայի ա՛ աստիճանի։

— Ընկալաւ յարքայէն Պարսից զՇքանշանն Առիւծու և Արեգական ա՛ աստիճանի՝ հանդերձ Պարգեւագրով։

Է՛ նա՝ և Պատուանուն Անդամ Ս. Փեթերբուրկայ և Մոսկուայ կայսերական Ընկերութեան Բնաբննաց, Անդամ կայսերական Ընկերութեան Շինական Տնտեսութեան, և Անդամ Ասիական Ընկերութեան Փարիզու։

ԼԳ· ՂԱԶԱՐ Յովակիմեան Լազարեանց, զօրավար ամուսնացեալ ընդ Անթուանէթթայ Դուշխային Պիրոնեան (*), երից դստերաց է հայր. և դստերայն այս անուանք են, Տարիա, Աննա, Լէոնիլա:

Սորա ջանիւք և արթնամիտ առաջնորդութեամբ յաջողեցաւ Ռուսաստանի առնուլ ածել 'ի ծոց իւր զմեծն զայն բազմութիւն մերազնեայ Գաղթականին՝ որ 'ի Պարսկաստանէ: Այլ թէ որպէս 'ի գլուխ գործ եղ՝ պատմեցից ըստ կարգի:

'Ի ժամանակս պատերազմին Ռուսաց ընդդէմ Պարսից (յամին 1827), Հանրական Սպարապետն և կոմն Փասքևիչ տեսանելով՝ թէ ամենայն ուրեք 'ի սահմանս Պարսից՝ յորս յաղթանակէրն՝ պատահին յոգնաթիւ ժողովուրդք յազգէ Հայոց, և կամելով միանգամայն զնոցին գրաւել զսիրտս, կոչեաց 'ի Փեթերպուրկայ՝ հաճութեամբ կայսեր՝ զԳնդապետն Ղազար Յովակիմեան Լազարեանց (**). քանզի ակն ունէր, թէ Հայկազունքն այնոքիկ, ընդ տեսանել զիւրեանցն Համազգին՝ զհռչակեալն անուամբ և փառօք և ճոխութեամբ, ևս և ևս 'ի նա յարեսցին, և ձգեսցին սիրով 'ի հպատակութիւն կայսեր՝ գաղթելով 'ի սահմանս Ռուսաց (1): Եւ արդարև չվրիպեաց նա յայսմ. զի առաւել քան զոր խորհէրն՝ ելք իրայն յաջողեցին անդուլ ջանիւք և իմաստուն կարգաւորութեամբ քաջափայլ Գնդապետին, որպէս Պատմութեանս կարգ ունի ցուցանել:

(*) Էր Պիրոնդ յերևելի ազնմէ փոխանորդի Տէրութեան Քուրլանտոյ՝ բնակեալ 'ի Ռուսիա. որոյ նախահայն Դուքս էր Քուրլանտոյ յՕգոստէյ նահանգի, և 'ի բազում ժամանակս եկաց ընդհանուր Հրամանատար զօրացն Ռուսաց առ թագաւորութեամբ Կայսրուհւոյն Աննայի Իւանովնայի:

(**) Այս ցուցանի 'ի նամակէ Զօրավարին Տիպիչայ առ Աջակից Զօրագլխապետն և կոմն Քոմարովսքի, յորում գրի այսպէս. »Հրամանատարն Կովկասեան բանա»կի Աջակից Զօրագլուխն և կոմն Փասքևիչ պէտս ունելով Սպասաւորի »որ ամենայնիւ հաւատարիմ իցէ Տէրութեան, և միանգամայն մեծարոյ և պատ»կառելի յաչս Հայոց, խնդրէ զԳնդապետն Լազարեան՝ որ կայ այժմ 'ի սպա»սու Ձերդ Պայծառափայլութեան, առաքեսցի առ նա 'ի պաշտօն առանձին »յանձնարարութեանց: Գրեալ 'ի քաղաքն Վեազմա 'ի 10 Մայիսի 1827 ամի: (Տես 'ի գիրսն Собранiе Актовъ. 'ի հատ. Է. յէջ 149):

(1) 'Ի Նկարագիրն գաղթ. յէջ 28. տպ. 'ի Մոսկուա յամին 1832:



Գնդապետ Ե. Յ. Լազարեանց, ընդ որոյ կարգադրութեամբ փոխե
ցին 40000 Հայք ի Պարսկաստանէ ի Ռուսաստան յամի 1828։

Полковникъ Л. Е. ЛАЗАРЕВЪ

подъ его распоряженіемъ переселено 40000 Армянъ изъ Персіи въ Россію въ 1828 году.

COLONEL de LAZAREFF

sous ses ordres ont été transmigré 40000 Arméniens de Perse en Russie en 1828.

ԼԴ. ՚Ի ՆՈՒԱՃԵԼ Ռուսաց զԹաւրէժ՝ Քաղաքապետ 'ի նմա կարգեաց Սպարապետն Փասքեւիչ զնա ինքն զԳնդապետն Լազարեան։ Այս գործ՝ որ նոր իմն էր յայնժամ եւ արտաքոյ ակնկալեաց, մանզի քան զչափ ուրախ արար զՀայազգի ժողովուրդն՝ ոչ միայն զոր 'ի քաղաքի անդ էին, այլ եւ զամենայն զբնակեալսն յայլ եւ այլ գաւառս Ատրպատականի աշխարհին, որք 'ի լռկց համբուրոյ շարժեալք՝ փութային անձկաւ 'ի տես իւրեանց Ազգակցի. »Լուաք, տեսէք, վեհապանծ Իշխան, լուաք զգալուստ Ձեր, եւ ցանկացաք զՁեզ տեսանել. տեսաք՝ եւ ուրախ եմք։ Գտաք զՁեզ՝ զմխիթարիչ ազգի մերոյ, եւ ոչ մեկնեսցուք 'ի Ձէնջ։ Հրամայեա, կամ մի թողուք զմեզ, կամ թողէք մեզ գոլ զհետ Ձեր՝ առաջնորդելով յո եւ կամիցիք (1)«։

Զայս ամենայն լսէր գթով քաղցրութեամբ Քաղաքապետն Գ. Լազարեանց, եւ զմի մի յեկելոյն յուսալից բանիւք մխիթարեալ առժամն՝ զգայուցանէր ապա եւ Սպարապետին զայնպիսի զյօժարակամ պատրաստութիւն նոցա 'ի մտանել ընդ հովանեաւ Տէրութեան Ռուսաց (2)։

Թէպէտ եւ չհաւատալի իմն թուէր Ռուսաց այնօրինակ անձնամատոյց լինել նոցա. այլ Լազարեանն լաւ քան զնոսա՝ զազգայնոյն իւրոյ գիտելով զպարզմտութիւն, եւ զանկեղծութիւն 'ի բարս, պնդէր աներկբայաբար՝ թէ զոր ասենն բանիւ, ցուցցեն եւ արդեամբք (3)։ Ուստի մի եւ այս եղաւ պայման 'ի դաշնադրութեանն՝ որ հաստատեցաւ 'ի տեղւոջն անուանեալ Տէյկարկան յամին 1828, 'ի կամս ազատութեան թողուլ զքրիստոնեայ բնակիչս զամ մի ողջոյն՝ փոխադրել յերկիր Տէրութեան Ռուսաց (4)։ Եւ Սպարապետն Փասքե-

(1) Ս. Գլինկա 'ի գիրսն Обозр. Ист. Арм. Нар. 'ի հատ. Բ. յէջ 258. 259։ Եւս՝ 'ի Նկար. Գաղթ. յէջ 29. 30։

(2) Որպէս նա ինքն յայտ առնէ Գնդապետն 'ի թղթ. առ Փասքեւիչ՝ գրեալ 'ի 24 Դեկտ. 1829 ամի. որոյ գտանի օրինակն 'ի Նկար. Գաղթ. յէջ 80—96։

(3) 'Ի Նկար. Գաղթ. յէջ 30։

(4) 'Ի Նկար. Գաղթ. յէջ 33։ Հ. Եփր. Զամ. 'ի Պատմ. Հայ. յէջ 444։ Ամբողջ օրինակ Դաշնագրին գտանի 'ի գիրսն Собраніе Актовъ. 'ի հատ. Ա. յէջ 270 — 276։

ւէջ թողեալ զնման մի զօրաց ընդ հրամանատարութեամբ Գնդապետին Գ. ապարայ՝ յանձն արար նմա պհպս անցից գաղթականին 'ի Պարսից սահմանէ 'ի Ռուսայն, այս խնդ է նորանուաճն երկիր՝ Հայաստանին մասն (յորում գաւառք են՝ Հնոյն Նախիջևանայ, Երևանոյն և Արցախայ) կոչեցեալ 'ի ժամանակին յայնմիկ առանձին անուամբ «Նահանգ Հայոց (*)։»

Նա այս փոխման՝ և Արքայուն Ներսէս Արք Եպիսկոպոս (**), այն՝ որ այժմ զծայրագոյն Պատրիարքութեան և զԿաթողիկոսութեան ունի զԱթոռ ամենայն Հայոց, առաքեաց 'ի կողմանս յայնոսիկ զերկուս քարոզիչս յԷջմիածնէ, զԱռնփոխնոս եպիսկոպոս Նշուկքեան և զՆիկողայոս վարդապետ Արցախեցի, յորդորել զժողովուրդս Հայոց 'ի գաղթել (1)։

ՆԵ. ՆՅՍ գործ՝ որ յանձնեցաւ Գնդապետին Գ. ապարայ, թէպէտ և զառաջինն չթուէր լինել ծանր, բայց որում յոյսք 'ի ժողովրդեանն (որպէս վերագոյնդ ասացաւ) նախնին եկեալ յայնմէն յօժարութեան խռովեալ 'ի գաղթել, բայց ապա առաւել քան զայժ դժուարագոյն ծանրացաւ։ Քանզի երբև եկն հաս ժամանակ մեկնելոյ մարդկանց յընչից խռովեալ և 'ի սուրբայսմց, այս է՝ 'ի տանց, 'ի կլրակայ, յանդոց, յայգեաց, 'ի պտղալէս ծառաստանաց, 'ի պարտիզաց, ևն, ոգիս խնն 'ի խնդիր մնացանել զկզեանս թեթևեալ՝ «փոխանակ սովորականացն մերոց գոյից՝ յորոց ունիմք զելել՝ հատուցին, ասէին, զբամբ զանես ըստ երկր մասին (2)»։ Թող զի

(*) Որպէս յայտ է 'ի Կայսերական Հրովարտակէն առ 'ի յԿառավարող Ծերակուտին 'ի 22 Մարտի 1828 ամի. յորում գրի այսպէս. «Ըստ զօրութեան գաշինն հաստատելոյ ընդ Պարսկաստանի, զԽանութիւնն Երևանու և Նախիջևանայ՝ հրամայեմք յայսմ հետէ յամենայն բանս անուանել «Նահանգ Հայոց», և «մուծանել զայն 'ի Մակնանւն մեր» (Տե՛ս 'ի գիրն մնացելոյ Բաքր. Հրովարտ. յէջ 389)։

(**) Կայր նա յայնժամ յԵրևան, և ընդ հովուէրին նա և զաշխարհական անասնութեան ունէր զհոգ, երբև գործակից Զօրավարին Քրասովսքեայ (Տե՛ս 'ի Նկար. գաղթ. յէջ 27։ Ա. Կլինթա 'ի գիրն Обозр. Ист. Арм. Нар. 'ի հատ. Է. յէջ 256)։

(1) 'Ի Նկար. գաղթ. յէջ 19. 70։

(2) 'Ի Նկար. գաղթ. յէջ 37. 81։

դատնէին 'ի նոսա և աղքատք յաղքատաց՝ աւուրն պարենի կարօտք. դոյին և հաշմանդամք, և այլք այնպիսիք՝ որք մանրիկ ունէին մանկտի և ընտանեաց բազմութիւն. և նոցա ամենեցուն պէտք էին դրամոց (1)։

Զայս ամենայն տեսեալ Գնդապետին Լազարայ՝ փութացաւ առնել Սպարապետին՝ նախ առաջին գրով, և ապա ինքնին յանդիման լինելով նմա 'ի Ծոփաց գաւառի. յորմէ և հրաման եւս ընկալաւ օգնել չքաւորագունիցն՝ դրամս 'ի փոխ տալով, այլ պայմանաւ՝ զի զինչ և առցէ որք, պարտական լիցի յետ հնգից ամաց անթերի վճարելոյ (2)։ Եւ յայս եւս պէտս տուաւ նմա յայնժամ՝ և յետ այնորիկ յԱրքունի համարոյ 14,000 ոսկի դահեկանք, և 400 բաղլի արծաթ (3)։

Թէպէտև նկատմամբ առ այնչափ բազմութիւնն՝ որ համախմբեալ էր 'ի գաղթումն, դոյզն ինչ էր այս նպաստ և գրեթէ ոչինչ (*), սակայն Գնդապետն Լազարեան քաջայոյս և վստահ ամենայնիւ գոլով 'ի խոստմունս Սպարապետին, և միանգամայն եւս 'ի նորայոցն խրախուսեալ 'ի քաջալեր բանից, ոչ ինչ խղճեաց և ինքն յուսալից զժողովուրդն առնել 'ի գլուխ ազգային բարեաց՝ անդորրութեան՝ և լաւագունի կենաց վիճակի ընդ հովանեաւ Քրիստոսապաշտ Տէրութեանն, առաջի առնելով նոցա զպատուիրանսն՝ զոր առեալ ունէին 'ի գաւառն անդ նորոգ նուաճելոյ, եւս և զդրամոյն նպաստ առ կարօտեալս, այլովքն հանդերձ (4)։

Զայս ամենայն մարթ է և 'ի նորուն եւս տեսանել 'ի շրջաբերական նամակի, որոյ այս է օրինակ անփոփոխ բառիւք (5)։

---

(1) 'Ի Նկար. գաղթ. յէջ 39. 84։

(2) 'Ի Նկար. գաղթ. յէջ 39. 40. 77։

(3) 'Ի Նկար. գաղթ. յէջ 65. 94։

(*) Զի թիւ անձանցն որ գաղթեցին՝ էր 40,000, և դրամք տուեալք նոցա 'ի նպաստ՝ ոչ անցանէին քան զ10 բաղլի արծաթ առ մէն մի գերդաստան (Տես 'ի Նկար. գաղթ. յէջ 85. և 'ի գիրսն Собраніе Актовъ. 'ի հատ. Ը. յէջ 183. 215)։

(4) 'Ի Նկար. յէջ 85։

(5) 'Ի Նկար. գաղթ. յէջ 77—79. և 'ի գիրսն Собраніе Актовъ 'ի հատ. Ը. յէջ 163—166։

ՔՐԻՍՏՈՆԵԱՅՔ,

»Լսելի եղև յականջս իմ, թէ որք չարամիտք ջանան ոչ միայն հրապարակել զսուտ և զանպատեհ զրոյցս, այլև տալ երկեւղ մեծ որոց կամին անցանել յօրհնեալ Ռուսաստան. և զայս օրինակ կամին դարձուցանել զձեզ 'ի գովելի յանկութենէ սրտի ձերոյ:

»Նա ես առ 'ի հերքել զայս ամենայն ըստ պարտեայն՝ որովք բեռնաւորեալ եմ 'ի Սպարապետէն, և 'ի հաւատարմութենէ աղգին՝ որ առ իս, յայտ առնեմ ձեզ, թէ մեծահոգի Կայսերական ամենայն Ռուսաց պարգևէ այնոցիկ որք յանկան գաղթել՝ զապահով, զխաղաղ և զերջանիկ տեղի ապաստանի 'ի յընդարձակ Կայսերութեան իւրում:

»'Ի գաւառն Երևանայ՝ Նախիջևանայ և Ղարապաղու, զոր դուք ընտրեսջիք, տայի ձեզ լայնատարած և արգասաւոր երկիր, որ այժմէն իսկ ըստ մասին սերմանեալ է. և 'ի պտղոյ նորին տասներորդ մասն միայն տայցիք Տէրութեան. և յետ այս վեց ամաց ազատ լիջիք յամենայն հարկատուութենէ. և որք միանգամ՝ աւելի աղքատ իցեն 'ի ձէնջ՝ տայի նոցա օգնութիւն չուելոյ:

....»'Ի Ռուսաստան տեսջիք զթշուառութիւն ամենայն կրօնից, և զհաւասարութիւն իրաւանց Ռուսաց ընդ այլոց հպատակաց Կայսերն. անդ մոռասջիք զամենայն նեղութիւնս զոր կրեցիք. անդ գտջիք զնոր հայրենիք բնակեալ 'ի քրիստոնեայս, և ոչ ևս տեսջիք զսուրբ կրօնն մեր 'ի նեղութեան, անդ կեցջիք ընդ հովանաւորութեամբ օրինաց, և գտջիք վաղվաղակի զշարունակ ապահովութիւն նոցին. հուսկ ապա անդ վիճակ ձեր բարեդէմ լիցի. և փոխանակ սակաւուն զոր կորուսջիք՝ անդ տայի ձեզ հարիւրապատիկ: Ճշմարիտ է՝ թէ թողուք զերկիր ծննդեան ձերոյ, որ սիրելի է ամենեցուն. բայց մտածելն՝ թէ բնակելոց էք 'ի քրիստոնեայ Տէրութեան՝ պարտի ազդել 'ի ձեզ զմեծ ցնծութիւն:

»Քրիստոնեայքն Ճապաղեալք 'ի գաւառս Պարսկաց՝ տեսցեն վերջապէս զանձինս ժողովեալ 'ի մի վայր. և գիտէք արդեօք, թէ

բարութիւնք մեծ Խնամակալին Ռուսաց ո՛րչափ ունի վարձատրել զհաւատարմութիւն ձեր։

»Փութացարուք, բարեկամք իմ, ժամանակն անգին է. զօրքն մեր ընդ հուպ դատարկեսցեն զգաւառն Պարսկաստանի. յայնժամ դուցէ բազում արգելս դիցեն ձեզ (Պարսիկք), և մեք կորուսանիցեմք զմիջոցս պաշտպանելոյ և ապահով առնելոյ զգաւառս ձեր. վռնեցէք զխանն և 'ի սակաւ ժամանակի, և առատօրէն ընկալջիք զամենայնն և 'ի մշտնջենաւորս։«

Պօլկօվնիկ և Կաւալեր Կայսեր Ռուսաց Ղազարոս Ղազարեանց։

'Ի 30 Մարտի
'Ի քաղաքս Ուրմի։

Յայս և յայսպիսեաց քաղցրահրաւէր բանից Գնդապետին Ղազարայ յորդորեալ ժողովրդոյն մերազնեայց, ո՛րպէս միակամ միասիրտ յաներկեան հաստատեցան 'ի յոյս, մինչ զի յանձն առեալ թողուլ լքանել անդէն զտացուածս իւրեանց՝ զբազմամեայ քրտանց վաստակս, դիմեցին միախուռն յամենայն կողմանց առ նա, և միաբանկամ զիւրեանց յայտնեցին զկամակար յօժարութիւն 'ի գաղթել. »Փրկանակ զի փրկիչ առ մեզ յԱստուծոյ առաքեցայք, ասէին, արժա՛ն է և մեզ զամենայն ինչ զմեր պատարագել զնմա յազատութիւն մերոյ զաւակաց։ Առաջնորդեա մեզ ուրեմն յառ 'ի Քէնդ խոստացեալ յերկիրն 'ի բարի (1)։«

Զայս լուեալ Գնդապետին Ղազարայ՝ մտադիւրագոյն ջանիւք սկսաւ հոգ տանել զկարեւորայն առ յաջողապէս յանգ հանելոյ զգաղթումն։ Այլ զի զօրք Ռուսաց ընդ փոյթ ելանել ունէին 'ի

(1) 'Ի Նկար. գաղթ. յէջ 38։

Դաւրիժոյ ըստ կարգաւորութեան Սպարապետին, թողեալ անդ զկիսապնդապետն Մուխէս Զաքարեան Երկայնաբազուկ - Արղութեանց՝ Տեառն կալ պաղթման Հայազգի բնակչաց քաղաքին և շինիցն որ զնովաւ, և տուեալ նմա քինապետս յօգնականութիւն, ևս և զրամն 'ի նպաստ չքաւորաց, չոգաւ ինքն ընդ պաշտօնակցաց ումանց 'ի Մարաղա։ Անդանօր եբրև տեսին զնա Հայք՝ լցան խնդութեամբ, և աղաղակեցին մեծաձայն »Ողջամբ եկիր, ո՛ հաւատակից մեր և փրկիչ (1)։«

'Ի տեսանել Պարսից զխումբս խումբս գաղթականին հօրդան տուեալ ամենայն ուստեք՝ յոյժ հարեալ պշուցին· և յահէ մեծի լեալ՝ ծփէին 'ի սիրտս իւրեանց, զի և ո՛չ իսկ ընդ միտս անգամ ուրուք 'ի նոցանէ անցանէր, թէ 'ի սակաւուցն ժամանակի այնչափ տունք այնպէս մարդաթափ 'ի բնակչաց լինիցին։ Եւ կարծեալ թէ այնպէս՝ եթէ բռնիւ կամ ստիպաւ վարեն Ռուսք զՀայս, կարգեցին զերկուս ոմանս՝ որոց անուանք էին Մահմէտ Թահէր Խան, և Միրզայ Մուստաֆայ, ևս և զպաշտօնական Անգղիացւոց զՄ. Կելոթ, և զայլ ոմն Գաղղիացի Սեմենոյ անուն, գործակից լինել Գնդապետին Լազարեան 'ի տեսչութիւն գաղթականին (2)։

Եւ թէպէտ զօրեցին ո՛չ և է հնարագիտութիւնք Պարսից՝ դըրդուեցուցանել զՀայս 'ի հաստատուն կամաց· զի արդէն իսկ յանձն առեալ էին նոքա զամենայն զրկանս, և փութային ձեռն 'ի ձեռին 'ի չու անկանել· այլ զի դեռ ձիւնաթաղ կային դաշտօրայք, նեղութիւն մեծ կրէին նոքա զճանապարհայն, կարելով ո՛չ՝ ճարակ ըստ բաւականին գտանել զրաստուց իւրեանց։ Այլ իսկ աղագաւ Գընդապետն Լազարեան՝ որ յանդ խոհական հանճարով նկատող հանդերձելոյն էր, առ 'ի զգուշն դժուարութեանց՝ լաւ վարկաւ դադարեցուցանել առ վայր մի զչու գաղթականին· և ապա ինքնին երթեալ շրջեալ զգաւառօքն Սաղմաստոյ և Ուրմեայ, յամենայն քաղաքս՝ 'ի շէնս և յաւանս՝ յորս հայորդւոց բնակութիւն էր, Տե-

(1) 'Ի Նկար. գաղթ. յէջ 35. 56. 82. 83։

(2) 'Ի Նկար. գաղթ. յէջ 35. 56. 88. 90։

ուր առանձին առանձին կարգէր 'ի պաշտօնէից անտի՝ որ ընդ իւրովն էին ձեռամբ. և միանգամայն եւս պատուէր հրամանատար նոցա 'ի դէպ ժամանակի սկիզբն առնել գաղթին (1):

Եւ ահա ընդ բանիլ զեղածանող գարնայնոյն՝ սկիզբն եղև չուոյ գաղթականաց, որք 'ի կողմանց կողմանց Ատրպատական աշխարհին հեղան լեղան գունդագունդ յափունս Երասխայ: 'Ի տեսանել Պարսից խուժանին զփախուստ զայն բազմութեան, և 'ի լսել զանուն Ինքնակալին Ռուսաց 'ի շրթունս նոցա բարբառեալ՝ յանհնարին բրդեցան 'ի պայրյթ: Այլ զի չէին ինչ տակ խափան առնելոյ չուոյն (զի յիւրաքանչիւր խմբի կային զօրք 'ի Ռուսաց, և 'ի գաղթականացն ոչ սակաւք 'ի պահ զինուորեալք) սկսան սպառնալեօք երդմնութեամբ թշնամանս դնել նոցա, և նզովս 'ի հետ արկանել (2): Եւ մինչափ իմն անհամեցան նոքա, զի և կորովիքն Հայոց ոչ եւս կարացեալ համբերել՝ զէն 'ի վեր առին, պատրաստեցան անդէն իսկ առ տեղեաւն ընդ կառավին հանել նոցա զչարիսն. և հանէին իսկ՝ եթէ չէին արգելեալք 'ի վերակացուացն, որք ըստ պատուիրելոյ Գնդապետին Լազարեան՝ զգուշանային բարեկարգութեան, և զուն գործէին՝ առանց աղմկի և արեան հեղման՝ խաղաղօրէն զիրսն վճարել (3):

'Ի խումբս այնպիսի գաղթականաց և ա՛յլք եւս յաւելան՝ թէև նուազունք՝ 'ի Հայազգի բնակչաց Խազբինոյ, քաջալերեալք 'ի բանից միոյ ուրումն իւրեանց համազգւոյ: Յայս և այլոյն հայեցեալ 'ի բնակչաց մօտակայ կամ հեռաւոր սահմանաց՝ չոգան և նոքա զհետ գաղթելոյ (4):

Այսպէս ահա յողնախուռն այն բազմութիւն Հայկազն որերոյ 'ի ջոկս ջոկս բաժանեալք, գոլով իմն 'ի նմանութիւն ծովու՝ անցանէին կարգ ըստ կարգէ ընդ Երասխ գետ, որ սահման անջր-

---

(1) 'Ի Նկար. գաղթ. յէջ 86 — 89.

(2) 'Ի Նկար. գաղթ. յէջ 40. 41. 44:

(3) 'Ի Նկար. գաղթ. յէջ 40. 41. 87.

(4) 'Ի Նկար. գաղթ. յէջ 41:

պետ ընդ մէջ կայր երկոցունց Տէրութեանցն. և ամենքին առ հասարակ ցնծալից հրճուալից ուրախ չուէին գնային թափէին 'ի ծոց անդր բուն և նախնոյ Հայրենեաց խորեանց 'ի լայնածաւալ դաշտավայրս Արարատոյ և Նախիջևնայ (1):

ԼԶ. ԱՆԱԿՆԿԱԼ վերջումն այսքանոյ բազմութեան 'ի նորանուաճ գաւառն՝ պատճառեաց 'ի նոսա սղութիւն հացի: Որոյ վասն հրաման 'ի Սպարապետէն եհաս առ Գնդապետն Լազարեան, զայլոց գաղթականաց որ 'ի չուելն իւրեանց՝ ջանալ ուղղել զընթացս մի յԵրեւանու կողմ և 'ի Նախիջևանայ, այլ՝ յԱրցախայ (ուր թուէր թէ առատութիւն կայցէ կերակրոյ), և զորս չև էին անկեալ յուղի՝ յիւրեանց տեղիսն թողուլ մինչ ցժողովս հնձոյ. իսկ որ զուրկք էին 'ի սպառ 'ի պիտոյից հայթհայթանաց՝ փոխս չառնել ամենւին տեղափոխս (2): Այլ այս (թէ վարդարն ոք կամիցի ընել) 'ի բնաւին իսկ յանկարելեաց էր. զի որք միանգամ 'ի մտի եդեալ էին գաղթել, նոքա ոչ ևս այլում միայն հրամանի, այլ՝ արդէն իսկ ելեալ էին կամ ելանէին 'ի ճանապարհ, խթալով այլ ևս 'ի նախկին բնակութիւնսն կալ յերեսաց ահի Պարսիցն Օսմանեաց: Յայտնապէս դիպուածն՝ յորմէ ոչ փոքր ծագէր դժուարութիւն յաջողակէս յանգ ելանելոյ գործոյն, չէթէ ամենեւին Գնդապետն Լազարեան՝ այրն մեծախոհ, և ոչ իսկ լքոյց զոք, այլ՝ ըստ թելադրելոյ վեհանձնական ոգւոյն որ 'ի նմա, և ըստ աննուազութ սիրոյն առ իւր Համազգիս, փութայր ընել՝ որչափ 'ի կարի էր՝ զամենայնն զպէտս յառատութենէ ձեռինն՝ առանց ինչ ումեք ծանրանալոյ (3):

ԼԷ. ԳՈՂԹԱԿԱՆՔՍ այսոքիկ, ընդ այր և ընդ կին, ընդ ծեր և ընդ տղայ, հաշուին միահամուռ ոգիք իբրու քառասուն հազար (*). յորոց ոմանք արք աջողակք էին 'ի վաճառաշահութիւն,

---

(1) 'Ի Նկար. գաղթ. յէջ 53. 62:

(2) 'Ի Նկար. գաղթ. յէջ 62. 63. 91:

(3) 'Ի Նկար. գաղթ. յէջ 63. 64. 94:

(*) Թիւ գաղթականացս՝ 'ի Նկար. գաղթ. դնի նախ (յէջ 66) սխալմամբ՝ չորեք հարիւր հազար ոգի. և ապա (յէջ 67) ուղղութեամբ՝ քառասուն հազար:

Յովհաննէս Խաչատուրեան Լազարեանց, որոյ ի յիշատակ հիմնեալ է ի Լազարեան Ճեմարանի առանձին դասատան վասն նորատիս մանկանց:

Иванъ Христофоровичъ Лазаревъ,	Jean de Lazareff,
въ память коего основано въ Лазаревскомъ Институтѣ Малолѣтное Отдѣленіе.	en sa memoire á l'Institut Lazareff est fondé une section préparatoire.

կէսք՝ արեւմտից հմուտք, և այլք ևս յոլովագոյն մասամբ՝ երկրագործք, և ամենքին առ հասարակ սիրողք վաստակոց և աշխատութեան։ Տեղիքն՝ ուր բնակեալին նոքա, ծովային լցան մարդկութեամբ, զարդարեցան բարեշէն քաղաքօք՝ շինիւք և ագարակօք. որով և նորոգ իմն գոյնիւ զգեցաւ կենդանութիւն ցանկալին մեր Հայաստան՝ նախաբնակն օթեւան մարդկային ազգի (1)։

Զայն իսկ ևս արժան է աստանօր խոստովանել, զի Գնդապետն Լազարեան բարեբաստ վախճանաւ պսակելով զայս գործ ծանր և բազմարդեւ՝ և միանգամայն շահաւէտ և՛ մարդկութեան և՛ մեծի կայսրութեան Ռուսաց, և նովին դարձեալ նորանոր բղխեցուցանելով աղբիւրս հարստութեան Ռուսաստանի (2), քաջախոհապէս պչքնաղն զայն յանձին եբեր զօրինակ զաշխարհաշէն վաստակոյն՝ զոր կանխագոյն ևս հօրեղբայր նորա Ներգործական Պետական Խորհրդականն և Կոմն Յովհաննէս Լազարեանց (որպէս 'ի դիպումն վայրի գրեալ եմ) երևեցոյց արդեամբք, նախապատճառ լինելով բազմամարդանալոյ Հարաւային կողմանց Ռուսաստանի բնակութեամբ մերազգեաց ժողովրդոց (3)։

ԼԲ. ՎԱՍՏԱԿԱՆՍ Գնդապետի պաշտօնակատարութիւնք 'ի Տէրութեան Ռուսաց, այլ և Աստիճանք պատուոյ և Շքանշանք ցուցանին կարգաւ 'ի բուն իսկ Ցուցակի ծառայութեանց նորա, որոյ այս է թարգմանութիւն.

Ցուց Տէրուն

1810. 'Ի Հոկտեմբերի 18, եմուտ աշակերտ 'ի Կրթարանն Հաղորդակցութեան Ճանապարհաց՝ որ 'ի Ռուսաց կոչի Корпусъ Путей Сообщенія.

1812. 'Ի Յունիսի 11, 'ի վարձ յառաջադիմութեանն յուսմունս՝ ըստ Բարձրագոյն Հրամանի ամբարձաւ յառաջին աստիճանն Օփիցերական՝ անուանեալ Прапорщикъ.

(1) 'Ի Նկար. գաղթ. յէջ 66. 67. 95։
(2) 'Ի Նկար. փաղթ. յէջ 66. 67. 68. 95։
(3) 'Ի Նկար. գաղթ. յէջ 58։

1813. 'Ի Մայիսի 29, վասն մտանելոյ 'ի Գունդն Հեծելազօրայ անուանեալ Сумскій Гусарскій Полкъ, արձակեցաւ 'ի Կրթարանէ Հաղորդակցութեան Ճանապարհաց:

1814. 'Ի Դեկտեմբերի 13, փոխադրեցաւ յայնմ Գնդէ առաջին աստիճանաւ Հեծելազօրայ՝ որ անուանի Корнетъ, 'ի Գունդն կոչեցեալ Лейбъ Гвардій Гусарскій Полкъ.

1826. 'Ի Յունիսի 14, ամբարձաւ յաստիճան Պնդապետի:

1829. 'Ի Սեպտեմբերի 16, վարձատրեցաւ Շքանշանաւ Ասպետական կարգի Ս. Աննայի Բ աստիճանի:

—— Ընկալաւ զՇքադրամ սահմանեալ վասն պատերազմին՝ որ ընդդէմ Պարսից յամին 1827 և 1828:

1830. Ընկալաւ յարքայէն Պարսից ընդ ձեռն քաւանդի նորա Աբբաս Միրզայի զՇքանշանն Առիւծու և Արեգական Ա աստիճանի:

ԼԹ. ԺԱՄ է արդ և զայլոյն ժառանգորդաց և համատոհմիցն Լազարեանց՝ սղագունիւ յիշատակ առնել բանիւ:

Զարդարեալն բարեպաշտութեամբ և խոհականութեամբ մեծ Տիկինն Եղիսաբէթ (*) Յովակիմեան, որ ամուսին էր Հազարապետին Ռմբաձիգ զօրաց՝ Յովհաննու (**) Հայրապետեանց, կեայ անզաւակ, բայց մայրօրինակ գոլով խնամածու յոգունց որբեւայրեաց: Իսկ քոյր նորա մեծ Տիկինն Մարիամ (***) Յովակիմեան՝ ամուսին

(*) 'Ի Մկրտութեան Ցուցակի եկեղեցւոյն Մոսկուայ՝ այսպէս նշանակեալ է ծնունդ նորա. 1783, Մարտի 6. Ե շաբաթի առաւօտեան եօթն սահաթին աղայ Յովակիմին Աստուած դուստր պարգեւեաց. անունն եդին Եղիսաբեթ. կնքահայրն աղայ Մինասն էր. 18 ին մկրտեցին. Աստուած երկայնակեաց արասցէ. կնքողն տէր պետրոսն էր»:

(**) Արժանացեալ էր սա Ասպետական Շքանշանաց Ս. Աննայի Բ աստիճանի, և Ս. Յովհաննու Երուսաղէմացւոյ: Ստացեալ էր Շքադրամ ոսկեպղնձի վասն 1812 ամի: Ունէր զպաշտօն Կաչանդային Գլխաւորի Աղատանւոյն Թուլայի: Հանգեաւ 'ի Տէր 'ի 26 Մայիսի 1846 ամի, 'ի հասակի 72 ամաց. և մարմին նորա ամփոփեալ կայ յեկեղեցւոջ Հանգստարանին Հայոց որ 'ի Մոսկուա:

(***) Ծնունդ սորա՝ այսպէս 'ի Մկրտութեան Ցուցակի կայ նշանակեալ. «1784,

ւեալ Զօրագլխապետին Պաւղոսի (*) Յարութիւնեան Տէլանեանց, ունի երկուս որդիս՝ զՆիկողայոս և զՅովհաննէս. որոց առաջինն գնդապետ է կայսերական թիկնապահ զօրու (թէ և հրաժարեալ ՚ի պաշտամանէ). և երկրորդն՝ Ներգործական Պետական Խորհրդական և Սենեկապետ կայսերական Դրան (**): Է՛ նորա և դուստր մի Հեղինէ անուն, որ ամուսնացեալ է ընդ Պայազատ Իշխանին Յովհաննու Մանուկ-Պէյեան:

Համարուեցելոյ յամին 1844՝ Մարթայի Յովակիմեան՝ ամուսնոյ Զօրագլխապետին և Իշխանին (Князь ***) Պաւղոսի (****) Սիմէօնեան Աբամէլիքեանց՝ երեք որդիք եղեն, Սիմէօն, Յովակիմ, Յարութիւն: Սոքա ծառայեն այժմ ՚ի կայսերական թիկնապահ գնդի. և առաջինն է գնդապետ, և Շքանշան ունի զՍ. Աննայի Բ աստիճանի:

փետրուարի 6. Բ առաւօտին աղայ յովակիմին Աստուած դուստր պարգևեաց. 18 ին կնքեցին. կնքահայրն աղայ մինասն էր. և կնքօղն տէր պետրոսն էր. Աստուած երկայնաւուրս արասցէ. ամէն. անունն Մարիամ եդին«:

(*) Արժանացեալ էր սա Ազնուական Շքանշանաց՝ Ս. Աննայի Ա աստիճանի: Ս. Վլատիմիրայ Գ աստիճանի: Ս. Գէորգայ Դ աստիճանի: Ստացեալ էր և սուսեր ոսկի վասն քաջութեան, և զՇքանշանն Բրուսիոյ Բ աստիճանի, վասն արժանաւորութեան և վասն ջերմեռանդութեան. և երկու արծաթի Շքադրամս վասն պատերազմին ընդդէմ Գաղղիացւոց: Էր Հրամանատար Գնդի բիւրաթիւ զօրաց: Եկաց ՚ի պաշտաման աւելի քան զամս 50: Ընկալաւ ՚ի պարգև ՚ի Կայսերէն տուփ ոսկեզօծ զարդարեալ ադամանդիւք: Վախճանեցաւ յԷ Յուլիսի 1837 ամի: Մարմին նորա թաղեալ կայ յեկեղեցւոջ Համգստարանին Հայոց՝ որ ՚ի Մոսկուա:

(**) Արժանացեալ է սա Շքանշանաց Ազնուական Կարգաց՝ Ս. Աննայի Բ աստիճանի՝ հանդերձ Թագիւ: Ս. Ստանիսլաւայ Բ աստիճանի. և Ս. Վլատիմիրայ Դ աստիճանի:

(***) ԶՌուսական Պատուանունդ Князь՝ Ե Աշխարհաբառ այլք թարգմանեն. իսկ ես Իշխան փոխանակ այնր գրել կարևոր դատեցի՝ յայլմէ պատճառէ առեալ:

(****) Էր սա հաստատեալ յԻշխանական պատիւ՝ ՚ի Կայսերէն Ռուսաց՝ ՚ի Պաւղոս Ա. ըստ դաշնադրութեանն եղելոյ ընդ Վրաստանի. ծառայէր ՚ի կայսերական թիկնապահ զօրու, ՚ի Հեծելազնդին՝ որում անուն տան Гусарскій: Շքանշանքն՝ զորս ստացեալ էր սա, են՝ Ս. Վլատիմիրայ Դ աստիճանի: Ս. Աննայի Բ աստիճանի: Ս. Գէորգայ Դ աստիճանի: Ընկալեալ էր և սուսեր ոսկի վասն քաջութեան. երկուս Շքադրամս արծաթիս վասն 1812 ամի, և երկուս տուփս ոսկեզօծս ադամանդակուռս. ես և զԲրուսիոյ Շքանշան Բ աստիճանի:

Նորին նմա և դստերք երեք, Աննա, Կատարինէ, Սոփիա. որոց աւագինն ամուսնացեալ է ընդ Զօրավարին և Զինուորական Նահանգապետին Խազանու՝ Պարատինսքեայ (*). երկրորդն՝ ընդ Իշխանին Գուդուշայ. և երրորդն՝ ընդ Վաշտապետին՝ Զախլնեան մականուանելոյ:

Վեհազնն Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց երեք դստերք են այժմ (**), Մարիամ, Աննա, Եղիսաբէթ: Մարիամ վաղու եւ ամուսնացեալ է ընդ Գնդապետին կայսերական Թիկնապահ զօրու՝ կոմսին Նիրոդայ, որ է Շվէտ յազգէ, դաւանութեամբ՝ Լուտերական: Իսկ վերջին երկուքն ամուսնացան յամին 1852. այսինքն է, Եղիսաբէթ ամուսնացաւ ընդ Գնդապետին կայսերական Թիկնապահ զօրու՝ Իշխանին Սիմէօնի Դաւթեան Աբամէլիքեանց, և Աննա՝ ընդ Ներգործական Պետական Խորհրդականին և Սենեկապետին կայսերական Դրան՝ Յովհաննու Դաւթեան Դէլեանեանց: Եւ երկոքին եւս զպտուղս ցուցեալ զօրհնութեանն Աստուծոյ՝ լցին զխափագ վշտացելոց ծնողաց իւրեանց. քանզի ծնաւ Աննայի որդի ('ի 5 Փետրուարի 1853 ամի) և անուանեցաւ Խաչատուր. ծնաւ և Եղիսաբէթի որդի ('ի 6 Հոկտեմբերի նոյն ամի), և կոչեցաւ Սիմէօն:

«Ազգ երթայ և ազգ գայ,
և երկիր յաւիտեան կայ»:

Ժող. Ա. 4:

(*) Շքանշանք սորա են՝ Ս. Աննայի Ա աստիճանի: Ս. Ստանիսլաւայ Ա աստիճանի: Ս. Վլատիմիրայ Գ աստիճանի: Ս. Գէորգեայ Դ աստիճանի: Են սորա և սուսեր վասն քաջութեան. Շքադրանք վասն 1812 ամին. Նշանն Польскій անուանեալ վասն Զինուորական արժանաւորութեան. Շքադրամ՝ Տաճկական կոչեցեալ. Տուփ ռնչադեղոյ ադամանդեայ:

(**) Լեալ է նորա և չորրորդ դուստր Աղեքսանդրա անուն՝ վախճանեալ 'ի տղաժամ հասակի (յամին 1839, 'ի Յունուարի 27) մինչ ութամեայն էր:

Գաղթականութիւն 40000 Հայոց ի Պարսկաստանէ ի Ռուսաստան ընդ կարգադրութեամբ Գնդապետի Ե. Յ. Լազարեանց յամի 1828.

Переселеніе 40000 Армянъ изъ Персіи въ Россію подъ распоряженіемъ Полковника Л. Е. ЛАЗАРЕВА въ 1828 году.

Տ. ՅՈՎԱԿԻՄԱՅ ԼԱԶԱՐԵԱՆ

ԼԱԶԱՐԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԱՌ ԻՒՐ ՀԱՄԱԶԳԻՍ

—

Գերապատիւ Տեառն,

ՍՔԱՆՉԵԼԻ է Աստուած յամենայն գործս իւր, և առաւել քան զառաւել սքանչելի յարարչութեան մարդկային սեռի. որոյ ստեղծեալ յխկարքանչ նմանութիւն նորա, և պերճացեալ բանական տրամախորհ մտօք՝ ինքն միայն մարթանայ 'ի մէջ բնաւից կենդանեաց զԱրարիչն իւր ճանաչել, և անսահման արարչագործական բարերարութեան նորա լինել խելամուտ:

Սա թէպէտ այսպէս է և այսչափ առատ ձիր պարգևաց Նախագոյն Էին հեղեալ 'ի մարդն, սակայն առ 'ի վայելել նորա անխըթար 'ի նոյն, և առ 'ի զանազանել յանբան կենդանեաց ըստ արժանւոյն՝ պէտք են նմա կրթութեան բանական կարողութեան իւրոյ. ապա թէ ոչ՝ իբրև զողջ մշտատատան և խակամիտ, կամ յուեղոյն եւ՝ իբրև զանխօս անասուն և շնչաւոր՝ ապարդիւն կայացանէ զառ 'ի վերուստ շնորհեալ ինքեան զայն պարգև, որ հրեշտակաց է սեպհական: Սա յայս սակս խակ սպառնաց երջանկութեան, առիթ զօրութեան, քանոն վարուց բարեկաւութեան, և 'ի գլուխ ամենայնի՝ միջոց անսահման աստուածպաշտութեան՝ առ 'ի քաջահըմուտ արանց յամենայն 'ի դարս համարեալ հրահանգութիւն բանեղէն մտաց, և վարժութիւն հարկաւոր գիտելեաց:

Սա կարի քաջ յիրաւունս. վասն զի չէ՝ և չէ հնար, նստեալ յաղջամուղջ խաւարի՝ գործել զպատեհաւոր և զկատարեալ ինչ. այլ առաջնորդութեամբ լուսոյ սկզբնաւորի ամենայն և 'ի գլուխ ելանէ: Ըստ որոյ՝ ոչ ոք երբեք զօրեաց առնել զարժանաւոր ինչ և հասարակօգուտ, որ չէր յառաջին կիրթ և լուսափայլ մտաց աչօք:

Այսու օրինակաւ քաջահամբաւ ազգք հնագոյնք մարթացան զհայրենիս իւրեանց աշխարհի գերամեծար ընծայեցուցանել, և 'ի թշնամեաց փնասաբեր յորձանաց յարձակմանց պատսպարել և ազատ կացուցանել. 'ի ձեռն դպրութեան միայն ձեռնհաս եղեն ամենեքեան առհասարակ զազգս իւրեանց բազմազան քաջօգտակար արուեստիւք ճոխացուցանել, զվարս և զբարս քաղաքակցային ուղղել և քաղցրացուցանել. հրահանգութեամբ և եթ 'ի գլուխ ելին արդեօք զանձինս կենցաղօգուտ և միաբան պահպանել ընդ իրեարս, ահարկու և շքեղաշուք ընդ օտարս. և որ եան է՝ անմահ և գերահամբաւ արձան յիշատակի կանգնել 'ի միտս ապագայից։

Ո՞րդէ՝ հարցցուք ցնախնի Հռովմայեցիս և ցԵլլենացիս, թէ զիա՞րդ՝ կամ ի՞ւ իւիք արդեօք յաջողեցաւ նոցա լինել այնքան երեւելի, իմաստուն և քաջագործ քան զայլ ամենայն ազինս աշխարհի։ Որո՞վ արդեօք բարեդիպեցան նոքա տիրել երից մասանց երկրագնտոյս. և առհասարակ յամենեցունց իբրև գերաբուն ազգ մարդկան համարիլ և մեծարիլ։ Եթէ հայեսցուք 'ի կարգս օրինաց, 'ի սահմանս իրաւաբանութեանց, 'ի քաղաքականութիւն և 'ի տնտեսութիւն նոցա, յընտրութիւնս և 'ի հնարաւորութիւնս աստիճանաց և իշխանութեանց, 'ի մարզութիւնս պատերազմական մրցմանց, և յոր յայսպիսի աշխարհալուր մասանց են սակի, նոյնհետայն հարկեսցուք խոստովանել, զի այն ամենայն պատշաճաւորութիւն և շահեկանութիւն՝ լուսաւորութեամբ մտաց և կրթականութեամբ բարուց է նոցա 'ի ձեռս բերեալ և յառաջ մղեալ։

Ո՛չ ապաքէն նովիմբ յաջողութեամբ տեսանեմք զաւուրբք մերովք պանծացեալն զԱնգղիացիս, զԳաղղիացիս, զԳերմանացիս, և 'ի յետնումս զՌուսս իսկ. որք մինչեւ ընկղմեալ էին 'ի խոր անհնարին տգիտութեան և 'ի սոսկ կենակցութեան՝ զիարդ խարխափելով ընթանային յայսմ աշխարհի լրապատար տեսանիս. բայց այն ինչ եհաս նոցա ժամանակ ընդունելի և օր փրկութեան. երբ քաղցր ակնարկութիւնն երկնային վերածեաց զնոսա 'ի լոյս երեսաց իւրոց, և եբաց զդրունս խաւար մտաց նոցա յըմբռնումն բազմապատիկ կենցաղօգուտ մասանց ուսումնականութեան յայնմ հետէ

փութացան ուշի ուշով զաստուածածնի յատկութիւնս սեռի իւրեանց մերկապարանոց կացուցանել, և զամենայն պարտուպատշաճն հնարել և սփռել տարածանել յօգուտ և ՚ի զուարճութիւն ինքեանց, ՚ի շուք պարծանաց ազգի իւրեանց, և ՚ի փառս օրհնաբանեալ Հաստչին ամենայնի։

Ահա այս է և այսչափ շահեկանութիւն և պիտանութիւն դըպրութեան. զորոյ զպտուղն մինչդեռ աշխարհահամբաւ հարք մեր ճաշակէին, և ՚ի հայրենիս մեր մուծանել նկրտէին՝ մեք ևս զօրէն այնց լուսաշաւիղ ազգաց ազատաքայլ ճեմէաք, և վեհապանծ փառօք բերկրամիտ կենցաղավարէաք։ Բայց բաբէ՜ թշուառութեան մերում. երբ դպրութիւնն ՚ի մէնջ անգոսնեցաւ, և ուսումնականութիւնն տեղի տուեալ դադարեցաւ, սկսաք այնուհետև զօրինօք բարուք կենցաղավարութեան ապախտ առնել, և զազատականութիւն մեր յանդգնս մատնել, յանձանց մերկացեալ մինչ խոյառ զամենայն զպարծանս տիեզերասաստ մերոց նահապետաց, որով առ սակաւ սակաւ ընտելացաք զստրկութիւնն յօժարակամ յանձն առնուլ, և նախամեծար համարել զայն քան զշքեղաշուք վեհանձնութիւն նախնի Հայկազանց։

Ով մեծի տարաբախտութեան Արամեան տոհմիս. և թէպէտ երբեմն երբեմն ոմանք ՚ի հայրենասէր իշխանաց և ՚ի հոգևոր առաջնորդաց մերոց՝ զուշ ՚ի կուրծս եդին մուծանել յաշխարհ մեր զանվրէպ միջոցս բարուոք քաղաքավարութեան և նախանձելի կենակցութեան, սակայն տարբերութիւն ժամանակին, անանդորրութիւն մերս աշխարհի, անմիաբանութիւն ազգիս, և մանաւանդ տնանկութիւն ամենեցունց՝ արգելառիթ գտան այդմ։ Զոր քաջ նկատեալ ոմանց ՚ի գլխաւորական հոգևորականաց մերոց՝ ՚ի յեօթնևտասներորդ դարուն՝ ապաստան անկան ՚ի խաղաղաւէտ տէրութիւնս Եւրոպացւոց, զառ յինքեանց յղացեալ զհայրենաշահ զխորհուրդն անդ ծնանել։ Արդարև սկիզբն կալան անդէն լուսաւորել զմիտս մեր թարգմանութեամբ և տպագրութեամբ օգտակար իմաստալից ինչ ինչ գրեանց. բայց չև հասեալ նոցա ՚ի նպատակ ձեռնարկութեան իւրեանց՝ վասն անփարթամ՝ անպաշտպան և սակաւաթիւ գոլոյ նոցա՝

յետ սակաւուց լքեալ ուխտացն, և ակամայ կամօք հրաժեշտ տուեալ յաստուածահրաւէր խորհրդոց իւրեանց՝ տեսին դառնութեամբ սրտի զայնքան աշխատանս իւրեանց յանարգանս մատնեալ և յունայնս կարգեալ։ Սոքա էին անմահական յիշատակաց արժանի գերաշուք Ոսկան վարդապետն, Թովմաս եպիսկոպոսն, Ղուկաս դպիրն Վանանդեցի, և այլք ոմանք։

Յաջորդեցին սոցա սոյն այլ Մխիթարեան Կրօնաւորք ոմանք. որք թէպէտ գովանի աշխատասիրութեամբ և յաջողաձեռն հետազօտութեամբ իւրեանց երևելի ընծայեցուցին զանձինս ՚ի նորոգումն բազմահարուստ Հայկական բարբառոյ մերոյ. որպէս և ՚ի ձեռն ազգի ազգի յոգնիմաստ մատենից շարադրութեամբ և թարգմանութեամբ՝ քաջադիպութեամբ իմն յառաջադէմ մատուցան ըստ կարի յարդարել զմիտս մեր յըմբռնումն կարևոր մակացութեանց, բայց սակայն բաժանեալք ՚ի մէնջ, և յարեալք յեկեղեցին Հռովմայ՝ գոն գործեցին ՚ի սկզբանէ անտի և այսր՝ աչալուրջ ճարտարութեամբ առ սակաւ սակաւ և զմեզ օտարացուցանել յուղղադաւան սրբոյ Եկեղեցւոյ մերմէ, և ՚ի շաւղաց մերոց լուսաբուղխ աստուածաձիր Հայրապետաց։ Նմին իրի՝ զոր ինչ իմաստութեամբ յօրինեալ ցարդ ՚ի լոյս ընծայեցին՝ զնոյն և յաւելուածովք օտարաձև վարդապետութեան այլափոխել նկրտեցին. և զկարևորագոյն ձեռնարկութեամբ ըստ մեծի մասին զանց արարեալ՝ նոքօք և եթ շատացան, որք յարմարաւորք էին ՚ի գլուխ տանել զդիտաւորեալն ՚ի սիրտս իւրեանց։

Տեսէք ուրեմն՝ թէ քանի ողբալի է վիճակ Հայրենեաց մերոց, որ յամենայնի առհասարակ բարձի թողի եղեալ մինչ խալայառուկ այցելութեան Բարձրելոյն կարօտի, և բարեխօսութեան իւր բազմերախտ սուրբ Հայրապետին Գրիգորի՝ զի յանշքութենէ իւրմէ անդրէն վերանալ կարողասցի յառաջին բարեզարդութիւն։ Ի վերայ այսր ամենայնի ըստ ներկայ ժամանակին և ըստ անօրինելոյ վերնական տեսչութեանն՝ ոչ յունայնս լինի զարդիս ձեռն կարկառել նմա. որպէս զի սթափեալ ՚ի խաւարամած թմրութենէ՝ փոյթ կալցի վերստին զարդիս իւր ՚ի լոյս տանջեան շրջեցուցանել, և կարևոր դաստիարակութեամբ զնոսին պայծառացուցանել։

Եւ թէ զիա՞րդ մարթ է այդմ լինել. երեւի թէ հաստատութիւն դպրոցաց 'ի Խաղաղաւէտ աշխարհս Եւրոպացւոց 'ի պէտս մարզութեան մանկանց Հայաստանեայց՝ կարէ ըստ արժանեաց 'ի լաւ անդր փոխարկել զայժմեան վիճակ մերս Հայրենեաց։

Յայսպիսի ազգախնամ խորհրդածութիւնս յուզեալ զցայգ և զցերեկ երէց եղբայր իմ, Ներքին Խորհրդական Տէրութեան, և մեծ Ասպետ առաջին աստիճանի սրբոյն Երուսաղէմի՝ բարեյիշատակ գերապատիւ Աղայ Յովհաննէսն Եղիազարեան, բազում ամօք յառաջ քան զփոխիլն իւր յաստեացս՝ յառաջադիր եղև բուռն հարկանել զայսպիսի համբուրելի հիմնարկութենէ. այլ յաղագս յոգնախուռն զբաղմանց, ընդ որովք ծանրաբեռնեալ կայր զօրհանապազ՝ օրաձիգ արարեալ զայն՝ հուսկ ապա 'ի կէտ կոչման իւրոյ 'ի վերինն կայան՝ կտակաւ աւանդեաց նուաստութեան իմում կատարել զքաղձանս սրտի իւրոյ լաւագոյն իմն եղանակաւ։

Յաղագս այսորիկ յամին 1814 եկեալ իմ 'ի Ս. Պետերբուրգայ աստ 'ի Մոսկով՝ օգնականութեամբ Աստուծոյ, և բարեհաճութեամբ օրհնեալ ազգախնամ Տէրութեանս՝ ձեռն արկի շինել ընդլայնանիստ հոյակապ Ճեմարանի (*). և յետ ծախելոյ աւելի քան զ200 հազար ռուբլի 'ի սեփական գոյից իմոց՝ բաց յայնմ գումարէ, զոր ընկալայ յորբունական գանձանակէ. (այն է զտոկոսիս բարդեալս 'ի բազում ամաց հետէ 'ի մայր գումարէ անդր մնացելոյ յինէն, ըստ զօրութեան կտակի գերապատիւ եղբօր իմոյ Աղայ Յովհաննիսի), հազիւ թէ հասուցի զայն յիւր աւարտ 'ի 1816. և 'ի սկզբան յետագայ ամի ժողովեցի զՀայկածին մանկունս յամենայն շրջակայ նահանգաց, և սկիզբն կալայ 'ի ձեռն քաջակիրթ դաստիարակաց վարժել զնոսա 'ի փառս մարդասիրին Աստուծոյ։

Եւ քանզի զարդիս Եղիազարեան Ճեմարանս ողջունեալ է զուխ կատարելութեան, և աշակերտք որք 'ի սմա՝ զարգացեալ են

(*) ՃԵՄԱՐԱՆ անուն՝ 'ի Թղթի աստ և նթ տեառնի ընծայեալ Ճեմարանին Լազարեանց, և այն՝ յայտ է թէ՝ ըստ կամս կարծեաց կամ ըստ առանձին ինչ հաճոյից շարագրողի բանիցդ։

յուսմունս իմաստից, գիտնական լեզուաց և քաղաքավարութեան, Ճահաւոր վարկայ յանդիման առնել բարեսէր պատուելի Ազգիդ իմում՝ զամենայն զներքին և զարտաքին հանգամանս սորա, հանդերձ նկատիւ տեսարանաւ շինուածոյն. որպէս զի ըստ ազգասիրութեան ձերում զմխիթարութիւն զգեցջիք, և զյոյս ձեր առ Աստուած ընդարձակեսջիք, որ վերստին արարչական խնամով իւրով դարձեալ առ մեզ՝ կամի նորոգել զազգ մեր 'ի նորոգումն լուսաւոր մտաց և բանաւոր կենցաղավարութեան:

Արդ Լազարեան Համալսարանս 'ի գերագանց Աղայ Յօհաննէս եղբօրէ իմմէ կտակաւ աւանդեալ, և յինէն յաւարտ հանեալ՝ ունի զ200 հազար ռուբլի. որ առնէ 280 հազար ղուռուշ, 'ի գանձանակն արքունի. յորմէ առնայ 10 հազար ռուբլի, այն է 14 հազար ղուռուշ 'ի տարին: Բայց յայսմանէ ես յարդեանց իմոց յաւելեալ եմ զայն մայր գումար. մինչև կարողանալ պահպանել ըստ ամենայն հանգամանաց բարելաւութեան զ30 Հայ մանկունս որբոց և աղքատաց:

Զբաղմունք իմ և երեկոյացեալ հասակ՝ ոչ ներելով անձամբ անձին հասանել ամենայն մասանց կառավարութեան սորա՝ յանձն արարի զայն լինելն 'ի ձեռս երկուց երիցագոյն որդւոց իմոց՝ Յօհաննու, որ է Խորհրդականն Կալէկին, այսինքն Գնդապետ Տէրութեան և Ասպետ. և Խաչկայ, որ է Խորհրդական Պալատին, այսինքն Կիսագնդապետ և Ասպետ: Սոքա զարդացեալ իսկ յերևելի Ճեմարանս Ռուսաց՝ քաջայարմարք են յուղել զընթացս սոր 'ի բարին և 'ի կատարեալն: Եւ ունին յօգնականութիւն ինքեանց զԽորհրդարան բաղկացեալ յերևելի յաստիճանաւոր և 'ի գիտնական ոմանց ականաւորաց երկրիս, և 'ի Թագաւորական Պռոֆէսորաց Ճեմարանին Մոսկովու. ընդ որս է և գերապատիւ Սերովբէ գիտնական վարդապետն մեր, առաքեալ յառաջագոյն 'ի Սրբազնակատար և 'ի Ծայրագոյն Քահանայապետէ Սրբոյ Էջմիածնի՝ յԵփրեմայ, լինել գործակից որդւոց իմոց, և Տեսուչ Համալսարանիս:

Թիւ աշակերտաց Համալսարանիս՝ որք ձրի պահպանին, է այժմ լրացեալ. բայց 'ի նոցանէ են և այլ բազում վարձատուք յօտար ազգաց: Ամենքեան առհասարակ ուսանին զհինգ լեզուս. այն է Հայս-

րէն, Ռուսերէն, Լատիներէն, Գաղղիարէն և Գերմաներէն։ Ընթացք ուսումնականութեան աւարտին 'ի 6 կամ 7 ամս. և այս յաւէտ կամ նուազ ըստ իւրաքանչիւրոց կորովամտութեան և ընդունակութեան։ Որք յերեսուն Հայկածին աշակերտաց են սակի՝ ունին ձրի զվայելուչ կենցաղավարութիւն. այսինքն՝ զկերելիս, զզգենելիս, այլովքն հանդերձ։ Բայց 'ի Քերթողութենէ և 'ի Հռետորութենէ իւրաքանչիւր լեզուաց՝ հետ զհետէ ուսցին նաև զԱշխարհագրութիւն, զՊատմութիւն, զՉափաբերական մակացութիւնս, զՏրամաբանութիւն, զՆկարչութիւն, և զայլ ազատական արուեստս։ Ոմանք 'ի նոցանէ՝ որք զանձինս Եկեղեցւոյ նուիրել խորհեսցին, ուսցին նաև զԱստուածաբանութիւն. որպէս զի Եկեղեցիք Հայաստանեայց պայծառասցին ուսեալ հոգևորականօք։ Սոքա ամենեքեան բաց 'ի հոգևորականաց զկնի զընթացս ուսումնականութեան կատարելոյ՝ կարեն զանձինս ընծայեցուցանել Օրինաւորութեան, Իրաւաբանութեան, Բժշկականութեան, Քարտուղարութեան, Վարժապետութեան, Վաճառականութեան, և այլն. ըստ իւրաքանչիւր ծնողաց յօժարակամութեան, և կամ ըստ նոյին իսկ աշակերտացն հակամիտութեան։

Բայց յերեսուն աշակերտաց ատոր՝ Եղիազարեան Համալսարանս որոշեալ է ընդունել և զ15 Հայ աշակերտս 'ի շրջակայ գաւառաց, և զնոյնչափ յօտարաց. որք հատուցեն զտարեկան վարձս վասն կերակրոյ, բնակութեան, և այլ պիտոյից կենցաղավարութեան։ Վասն Հայոց՝ վարձք միոյ ամի է 600 ռուբլի. որով մանկունքն առաքեալք 'ի ծնողաց, և կամ յազգականաց իւրեանց՝ վճարմամբ այսր գումարի պահպանեսցին ատ ամենայն խնամով, և ուսցին զամենայն զվերոյիշեալ գիտութիւնս. բայց զզգեցուցանելն զնոսա կախի միշտ զծնողաց. որք վայելչապէս պարտին հոգալ յիւրում ժամանակի։ Միայն թէ առաքեալքն լինին 'ի 11 ամաց հասակէ մինչև 'ի 14. և ըստ ամենայնի առողջք՝ յաջողամիտք և բարեբարոյք. և գիտասցեն զոնէ ընթեռնուլ և գրել Հայերէն։

Ապաքէն զայս ամենայն նախակարգեալ բանս տեղեկութեան 'ի ընելիս պատուելի ուսումնատենչ Ազգին Հայոց հասուցանել 'ի դէպ վարկայ. զի զկնի փառս վերառաքելոյ պարգևատուին ամենայն բա-

րեայ՝ զգերահռչակ կենն Աւետարանին ձեռն 'ի նմանութիւն բերջիք, և ըստ վաղեմի հայրենաւանդ կարեկցութեան՝ ըմպայապարս օժանդակութեամբ յօժարասէր լինջիք գործակից լինել Ճոխութեան և յառաջընթացութեան Ճեմարանիս: Որչափ կարացի ես՝ փոյթեամբն կամօք ընծայեցի 'ի լրումն Կրթականութեան երախտապարդայ մերոյ· աւելի քան զայս առնել զձէնջ կախի բոլորովիմբ:

Եթէ 'ի փառս Աստուծոյ և 'ի պայծառութիւն Հայրենեաց մերոյ ոմանք 'ի ձէնջ ցանկասցին զնուէրս ինչ դրամոց հասուցանել աստ, նօքօք Ճեմարանս կարողասցի յայնժամ անցանել քան զորոշեալ թիւ 30 աշակերտաց, և ընդունել աւելի ևս 'ի դաստիարակութիւն մինչև ց40 կամ ց50: Այլ որ միանգամ 'ի մերազնէից բարեհաճեսցի նուիրել Ճեմարանիս զտպագիր կամ զձեռագիր մատեանս, և կամ զոհտրակս· որպիսի են Պատմագրութիւնք, Ճառընտիրք, Մեկնութիւնք, և այլն, հաւաստի կարէ լինել՝ զի մեք պահպանեսցուք խնամով 'ի բազմահարուստ գրատան մերում, (յորոյ վերայ արդէն ծախեալ եմ աւելի քան զ20 հազար ռուբլի)· արձանացուցանելով զանուն նորա 'ի ճակատ ընծայեալ մատենին· և հանդերձ Խորհրդարանաւ իմով շնորհակալ եղէց զնմանէ յատուկ նամակաւ: Նոյնպէս որ կտակաւ ախորժեսցէ աւանդել ըղնուէրս ինչ յընդարձակութիւն և յառաւելութիւն աշակերտաց Ճեմարանիս, ընկալցի շնորհակալութիւն 'ի մէնջ, և անուն նորա յիշատակեսցի յազգաց յազգս:

'Ի վախճանի՝ որք առհասարակ այսպէս գործակից լինին յառաջադիմութեան Ճեմարանիս Մոսկուայ, և աղօթս առնեն առ Աստուած զի թագակալ պսակաւ պսակազարդեսցէ զսկզբնաւորեալն յինէն, ընկալցին զհատուցումն բարեաց 'ի Տեառնէ, և ազգասիրութեան պսակաւ վարձատրեսցին 'ի միւսանգամ գալստեան իւրում· Ամէն:

'Ի Յուլիսի 1, 1820· 'ի Մոսկով:

Ձերում Ազգակից Գերապատուութեան
խոնարհ և անձնադիր ծառայ
Յովակիմ Եղիազարեան:

Ծանօթ. Թուղթս այս տպագրեալ է 'ի Մոսկուա 'ի տպարանի Օգոստեայ Սեմնեանց յամին 1820:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Ի ՄԱՍԻՆՍ ՅԱՅՍՄԻԿ ՅԱՆԳԻՄԱՆ ԱՌՆԻՆ

—

Ա. Պատճէնք Կայսերական Հրովարտակաց՝ Պարգևագրաց և Վկայագրաց տուելոց Պայազատաց Լազարեան Տոհմի։

Բ. Ցուցակ ազգի ազգի Ապահովագրաց՝ Հրամանագրաց՝ Յայտարար Նամակաց՝ Գործառնական Թղթոց գրելոց առ Լազարեան Պայազատս, կամ վասն նոցա առ այլս՝ յաւագագոյն Պաշտօնակալաց Տէրութեան յայլևայլ դէպս և 'ի ժամանակս։

Գ. Օրինակք Տապանագրաց Ննջեցելոց Լազարեան Տոհմի։

ՑԱՆԿ

Պարգեւական Հրովարտակաց, Վկայական Թղթոց տուելոց Պայազատաց Լազարեան Տոհմի, եւս և Յայտարար և Շնորհակալական Նամակաց ոմանց գրելոց առ նոսա:

1.

Քաղուած 'ի Պարգեւական Հրովարտակէ Մեծի կայսրուհւոյն Ռուսաց Կատարինեայ Բ. որով Պայազատ Իշխանն Հայկազուն՝ Ղազար Նազարեան Լազարեանց, և որդիք նորա, համադասեցան Ազնուականաց Ռուսաց:

2.

Պարգեւական Հրովարտակ Հռովմէական կայսեր՝ Յովսեփայ Բ. որով տուաւ Տ. Յովհաննու Լազարեան Լազարեանց՝ Պատուանունս ԲԱՐՈՆ:

3.

Պարգեւական Հրովարտակ Հռովմէական կայսեր՝ Յովսեփայ Բ. որով ամբարձ նա զՅովհաննէս Լազարեան Լազարեան 'ի պատիւ ԿՈՄՍՈՒԹԵԱՆ:

4.

Վկայագիր Տեղակալութեան Եարոսլաւայ, 'ի Նահանգային Ազնուական Նախագահէ, և 'ի Վիճակային Ազնուական Պատգամաւորաց՝ ժողովելոց յաղագս յօրինման Տոհմագրի Ազնուականութեան տուելոյ Ազնուականին Տ. Ատենական Խորհրդականին՝ Յովհաննու Լազարեան Լազարեանց:

5.

Պարգեւական Հրովարտակ կայսրուհւոյն Ռուսաց՝ Կատարինեայ Բ. որով տուաւ Ազնուականին Տ. Յովհաննու Լազարեան Լազարեանց՝ Աստիճան Ատենական Խորհրդականի:

6.

Վկայագիր Նահանգին Ս. Փեթերպուրկայ, 'ի Նահանգային Ազնուական Նախագահէ, և 'ի Վիճակային Ազնուական Պատգամաւորաց՝ ժողովե-

լոց յաղագս յօրինման Տոհմագրի Ազնուականութեան տուելոյ Ատենական խորհրդականին Տ. Ազնուականին Յովհաննու Լազարեան Լազարեանց։

7.

Պարգեւական Հրովարտակ կայսեր Ռուսաց՝ Պաւղոսի Ա. որով տուաւ Տ. Յովհաննու Լազարեան Լազարեանց՝ Աստիճան ներգործական պետական խորհրդականի։

8.

Պարգեւական Հրովարտակ կայսեր Ռուսաց՝ Պաւղոսի Ա. որով տուաւ Տ. Յովհաննու Լազարեան Լազարեանց՝ Շքանշան Հրամանատար կարգի Ս. Յովհաննու Երուսաղէմացւոյ։

9.

Վկայագիր Նահանգին Մոսկուայ, 'ի Նահանգային Ազնուական նախագահէ, 'ի Վիճակային Ազնուական պատգամաւորաց՝ ժողովելոց յաղագս յօրինման Տոհմագրի Ազնուականութեան տուելոյ Ազնուականին Տ. Յովակիմայ Լազարեան Լազարեանց։

10.

Պարգեւական Հրովարտակ կայսեր Ռուսաց՝ Աղեքսանդրի Ա. որով Յարութիւն Յովակիմեան Լազարեան կարգեցաւ Թարգման 'ի կայսերական Ատենի Արտաքին Գործոց։

11.

Վկայագիր տուեալ Տ. Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց 'ի խորհրդարանէ »Педагогическій« անուանեալ ուսումնարանին Ս. Փեթերբուրգայ, յաղագս յառաջադիմութեանց նորա յուսմունս լեզուաց և գիտութեանց։

12.

Վկայագիր տուեալ Տ. Յովակիմայ Լազարեան Լազարեանց 'ի գաւհերիցէ Ազնուականացն Ս. Փեթերբուրգայ, յաղագս կրելոյ զոսկեպղնձեայ Շքադրամ Վլատիմիրեան Ժապաւինաւ։

13.

Պարգեւագիր տուեալ Տ. Յովհաննու Յովակիմեան Լազարեանց յաղագս կրելոյ զԱսպետական Շքանշան Հրամանատար կարգի Ս. Յովհաննու Երուսաղէմացւոյ։

14.

Յայտարար նամակ կոմսին Նեսսելրոտայ առ Յովհաննէս Յովակիմեան Լազարեանց. որով ծանուցանէ նմա զԲարձրագոյն հաճութիւն կայսեր յաղագս թոյլ տալոյ կրել զխաչն Ասպետական կարգի Ս. Յովհաննու Երուսաղէմացւոյ։

15.

Յայտարար Նամակ կոմսին Նեսսելրոտայ առ Խաչատուր Յովակիմեան Լազարեանց. որով ծանուցանէ նմա զԲարձրագոյն հաճութիւն կայսեր յաղագս թոյլ տալոյ կրել զխաչն Ասպետական կարգի Ս. Յովհաննու Երուսաղէմացւոյ։

16.

Վկայագիր տուեալ Տ. Խաչատրոյ Յովակիմեան Լազարեան 'ի Բնազննաց կայսերական Ընկերութենէն Մոսկուայ, յաղագս համաթուելոյ նորա ընդ Պատուանուն Անդամս նորին ընկերութեան։

17.

Վկայագիր տուեալ Տ. Յովհաննու Յովակիմեան Լազարեանց 'ի կառավարութենէ կայսերական Համալսարանին Մոսկուայ, յաղագս յառաջադիմութեանց նորա յուսմունս լեզուաց և գիտութեանց։

18.

Վկայագիր տուեալ Տ. Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց 'ի Շինական Տնտեսութեան կայսերական Ընկերութենէ Մոսկուայ, յաղագս կարգելոյ նորա 'ի թիւս Գործօնեայ Անդամոց նորին ընկերութեան։

19.

Պարգևական Հրովարտակ կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. որով Ղազար Յովակիմեան Լազարեանց ամբարձաւ յԱստիճան Գնդապետի։

20.

Յայտարար Նամակ կոմսին Նեսսելրոտայ. որով ազդ առնէ նա Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց 'ի լրումն Բարձրագոյն կամաց կայսեր, գործակից լինել Օժանդակ Զօրապետին Պենկենտորֆայ 'ի կատարումն առանձին յանձնարարութեանց։

21.

Պարգևական Հրովարտակ կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. որով տուաւ Յովհաննու Յովակիմեան Լազարեանց Աստիճան Պետական Խորհրդականի։

22.

Յայտարար Նամակ Ատենին (Քափիթուլին) կայսերական Ասպետանշանաց Ռուսաց. որով ծանուցանի Տ. Յովհաննու Յովակիմեան Լազարեանց ամբառնալ նորա 'ի կոչումն Պատուաւոր Ատենակալի (Հերոլտի) 'ի Տեսչութեան Ասպետանշանի Ս. Նախակոչ Առաքելոյն Անդրէի։

23.

Պարգևական Հրովարտակ կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. որով Խա-

չատուր Յովակիմեան Լազարեանց ամբարձաւ յԱստիճան Պետական Խորհրդականի։

24.

Պարգեւական Հրովարտակ կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. որով տուաւ Ղազարայ Յովակիմեան Լազարեանց Շքանշան Ասպետական կարգի Ս. Աննայի բ աստիճանի։

25.

Գիր Հաղորդակցական Գլխաւորի Զինակիր Հեծելոց. որով առաքեաց նա առ Խաչատուր Յովակիմեան Լազարեանց զսահմանեալն 'ի յիշատակ բարեյաջող վախճանի պատերազմին ընդդէմ Տաճկաց՝ զարծաթի Շքադրամ հանդերձ ժապաւինաւ։

26.

Գիր Հաղորդակցական Վերատեսչական Բաշխուածի Գլխաւոր Զինուորական Ատենի կայսերութեան. որով առաքեցաւ առ Ղազար Յովակիմեան Լազարեանց Պարգեւագիրն յաղագս Շքանշանին Ասպետական կարգի. Ս. Աննայի բ աստիճանի՝ պարգեւելոյ նմա 'ի կայսերէ։

27.

Պարգեւական Հրովարտակ կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. որով տուաւ Տ. Յովհաննու Յովակիմեանն Լազարեանց Նշանն գովանի և անբիծ ծառայութեան առ 'ի կրել Վլատիմիրեան ժապաւինաւ։

28.

Յայտարար Նամակ կառավարութեան Զինուորական Ընդհանուր Նահանգապետի Մոսկուայ. որով առաքեցան առ Յովհաննէս Յովակիմեան Լազարեան Նշանքն գովանի և անարատ ծառայութեան վասն պաշտօնակատարութեան նորա։

29.

Պարգեւական Հրովարտակ կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. որով տուաւ Տ. Յովհաննու Յովակիմեան Լազարեանց Նշանն Ասպետական կարգի Ս. Աննայի բ աստիճանի՝ զարդարեալ կայսերական Թագիւ։

30.

Յայտարար Նամակ կառավարութեան Զինուորական Ընդհանուր Նահանգապետի Ս. Փեթերպուրկայ. որով առաքեցաւ առ Յովհաննէս Յովակիմեան Լազարեանց ադամանդեայ մատանի պարգեւեալ նմա 'ի կայսերէ։

31.

Պարգեւական Հրովարտակ կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. որով տուաւ Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց Նշան գովանի և անարատ ծառայու-

թեան վասն քսան և հնգամեայ պաշտօնակատարութեան՝ առ ՚ի կրել Վլատիմիրեան ժապաւէնս։

32.

Հրովարտակ կայսեր Ռուսաց Նիկողայոսի Ա. տուեալ կառավարող Ծերակուտին, յաղագս պարգևելոյ Տ. Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց զԱստիճան Ներգործական Պետական Խորհրդականի։

33.

Հրամանագիր կառավարող Ծերակուտի, յաղագս յայտնելոյ Տ. Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց զԲարեհաճութիւն կայսեր ՚ի պարգևել նմա զԱստիճան Ներգործական Պետական Խորհրդականի։

34.

Պարգևական Հրովարտակ կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. որով տուաւ Տ. Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց Աստիճան Ներգործական Պետական Խորհրդականի։

35.

Յայտարար Նամակ կառավարութեան Զինուորական Հանրական Նահանգապետին Մոսկուայ. որով առաքեցաւ առ Յովհաննէս Յովակիմեան Լազարեանց Շքանշանն Ասպետական կարգի Ս. Վլատիմիրայ Դ. աստիճանի՝ պարգևեալ նմա ՚ի կայսերէ։

36.

Պարգևական Հրովարտակ կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. որով տուաւ Տ. Յովհաննու Յովակիմեան Լազարեանց Շքանշանն Ասպետական կարգի Ս. Վլատիմիրայ Դ աստիճանի։

37.

Հրովարտակ կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. տուեալ յԱրքունի Դիւանատունն, յաղագս պարգևելոյ Տ. Յովհաննու Յովակիմեան Լազարեանց զԿոչումն Սենեկապետի Դրան կայսերական Մեծութեան։

38.

Հրովարտակ կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. տուեալ կառավարող Ծերակուտին, յաղագս պարգևելոյ Տ. Յովհաննու Յովակիմեան Լազարեանց զԱստիճան Ներգործական Պետական Խորհրդականի։

39.

Պարգևական Հրովարտակ կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. որով տուաւ Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց Շքանշանն Ս. Վլատիմիրայ Դ աստիճանի։

40.

Հրովարտակ կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. տուեալ ՚ի Գրասենեակն

Պալատան (Придворный Конторъ), յաղագս պարգևելոյ Տ. Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց զկոչումն Սենեկապետի կայսերական Դրան։

41.

Ազգարար Նամակ Գլխապետի Զինակիր Հեծելոց. որով ծանուցանէ նա Տ. Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց, թէ պարգևեալ է նմա 'ի կայսերէ կոչումն Սենեկապետի։

42.

Պարգևական Հրովարտակ կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. որով տուաւ Տ. Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց Նշանն գովանի և ամբիծ ծառայութեան՝ յաղագս երեսնամեայ պաշտօնակատարութեան նորա, առ 'ի կրել Վլատիմիրեան ժապաւինաւ։

43.

Պարգևական Հրովարտակ կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. որով տուաւ Տ. Յովհաննու Յովակիմեան Լազարեանց Նշանն գովանի և անարատ ծառայութեան՝ յաղագս երեսնամեայ պաշտօնակատարութեան, առ 'ի կրել Վլատիմիրեան ժապաւինաւ։

44.

Պարգևական Հրովարտակ կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. որով տուաւ Տ. Յովհաննու Յովակիմեան Լազարեանց Շքանշանն Ասպետական կարգի Ս. Սթանիսլաւայ ա՛ աստիճանի։

45.

Յայտարար Նամակ Գլխապետի Զինակիր Հեծելոց. որով ծուցանէ նա Տ. Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց, թէ Օգոստափառ կայսրն հաճեալ է պարգևել նմա զտուփ պնչաւեղը, յորոյ վերայ նշանագրեալ կայ անուն Նորին կայսերական Մեծութեան։

46.

Գիր Հաղորդակցական Գլխապետի Զինակիր Հեծելոց. որով առաքեաց նա առ Խաչատուր Յովակիմեան Լազարեանց զպարգևեալն նմա 'ի կայսերէ զտուփ պնչաւեղը քանդակաւ փակագրի անուան Նորին կայսերական Մեծութեան։

47.

Հաղորդակցական Գիր Բաշխումնի Տնտեսական և Հաշուական Գործոց. որով առաքեցաւ առ Խաչատուր Յովակիմեան Լազարեանց Նշանն գովանի և անարատ ծառայութեան պարգևեալ 'ի կայսերէ 'ի տրիտուր երեսուն և հինգամեայ պաշտօնակատարութեան նորա։

48.

Պարգևական Հրովարտակ կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. որով տուաւ

Տ. Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց Շքանշանն Ասպետական կարգի Ս. Սթանիսլաւայ ա̅ աստիճանի։

49.

Յայտարար Նամակ Գահագլխոյ Ընկերութեանն Հաստատելոյ 'ի խնամատարութիւն բանտից. որով ծանուցանի Տ. Յովհաննու Յովակիմեան Լազարեանց, թէ հաճեալ է կայսրն կարգել զնա Անդամ Ժողովոյն Ս. Փեթերպուրկայ Հաստատելոյ 'ի խնամատարութիւն բանտից։

50.

Թուղթ Նախարարութեան Արտաքին Գործոց, 'ի Բաշխուածոյ Հանգիսական գործոց. որով առաքեցաւ առ Յովհաննէս Յովակիմեան Լազարեանց պատճէնն Յարաբերական թղթոյ Տ. Պալատապետի (Гофмейстеръ) Դրան Մեծի Իշխանին Միխայէլ Փաւլովիչի և Մեծի Իշխանուհւոյն Ելենէ Փաւլովնայի յաղագս շնորհակալութեանն յայտնելոյ 'ի նոցանէ զանձանցն գտելոց յՕբապահութեան առ դիւկամբ Մեծի Իշխանուհւոյն Մարիայ Միխայէլովնայի։

51.

Վկայագիր տուեալ յԱսիական Ընկերութենէ Փարիզոյ՝ յաղագս նշանակեալ գոլոյ Տ. Յովհաննու Յովակիմեան Լազարեանց 'ի թիւս Անդամոց նոյն ընկերութեան։

52.

Վկայագիր տուեալ յԱսիական Ընկերութենէ Փարիզոյ յաղագս նշանակեալ գոլոյ Տ. Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց 'ի թիւս Անդամոց նոյն ընկերութեան։

53.

Պարգևական Հրովարտակ կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. որով տուաւ Տ. Յովհաննու Յովակիմեան Լազարեանց Շքանշանն Ասպետական կարգի Ս. Աննայի ա̅ աստիճանի։

54.

Պարգևական Հրովարտակ կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. որով տուաւ Տ. Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց Շքանշանն Ասպետական կարգի Ս. Աննայի ա̅ աստիճանի։

55.

Պարգևական Հրովարտակ կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. որով տուաւ Տ. Յովհաննու Յովակիմեան Լազարեանց Շքանշանն Ասպետական կարգի Ս. Աննայի ա̅ աստիճանի՝ զարդարեալ կայսերական Թագիւ։

56.

Պարգևական Հրովարտակ կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. որով տուաւ

Տ. Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց Շքանշանն Աստեղական կարգի Ս. Աննայի ա̄ աստիճանի՝ զարդարեալ կայսերական Թագիւ։

57.

Յայտարար Նամակ Գլխաւոր Իշխանապետի Լազարեան Ճեմարանի՝ Կոմսին Օռլովայ. որով ազդ առնէ նա Տ. Յովհաննու Յովակիմեան Լազարեանց, թէ հաճեալ է կայսրն պարգեւել նմա զՇքանշանն Աստեղական կարգի Ս. Աննայի ա̄ աստիճանի՝ զարդարեալ կայսերական Թագիւ։

58.

Գիր Հաղորդակցական Գլխաւոր Իշխանապետի Լազարեան Ճեմարանի Կոմսին Օռլովայ, որով յայտնէ նա Հոգաբարձուի նոյն Ճեմարանի Տ. Յովհաննու Յովակիմեան Լազարեանց. թէ հաճեալ է կայսրն հրամայել, զի զտունն՝ որ ՚ի Մոսկուա ՚ի Մեասնիցքի անուանեալ մասին երկրորդ թաղի, զնուիրեալն ՚ի նմանէ և յեղբօրէ նորա՝ ՚ի Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց՝ յօգուտ յիշատակեալն Ճեմարանի, ընկալցին հանդերձ շինուածովքն և գետնով։

59.

Յայտարար Նամակ Գլխաւոր Իշխանապետի Լազարեան Ճեմարանի Կոմսին Օռլովայ. որով ազդ առնէ նա Օգնականի Հոգաբարձուի Լազարեան Ճեմարանի Տ. Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց, թէ հաճեալ է կայսրն պարգեւել նմա զՇքանշանն Աստեղական կարգի Ս. Աննայի ա̄ աստիճանի զարդարեալ կայսերական Թագիւ։

60.

Պարգեւական Հրովարտակ Արքային Պարսից Նասրէտ-Դին-Շահի. որով տուաւ Տ. Յովհաննու և Խաչատրոյ Յովակիմեանց Լազարեանց Շքանշանն Առիւծու և Արեգական ա̄ աստիճանի։

61.

Քաղուած ՚ի Ցուցակէ Ծերակուտին Ս. Փեթերպուրկայ ՚ի 16 Յունիսի 1853 ամի, համար 48, յաղագս Բարձրագոյն Հրամանին ծանուցելոյ կառավարող Ծերակուտին ՚ի 29 Մայիսի ՚ի Տ. կառավարչէ Նախարարութեան Իրաւանց։

62.

Բարձրագոյն Հրաման Շահին Պարսից յանուն Դեսպանին Պարսից որ ՚ի Ս. Փեթերպուրկ, յաղագս Հրովարտակացն՝ որովք պարգեւեցան Տ. Յովհաննու և Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց Շքանշանքն Առիւծու և Արեգական ա̄ աստիճանի։

63.

Յայտարար Նամակ Դեսպանին Պարսից՝ Մահմուտ Խանի որով յայտնէ

նա Հոգաբարձուի Լազարեան ճեմարանի Տ. Յովհաննու Յովակիմեան Լազարեանց, թէ պարգևեալ է նմա Շահն զՇ.քանշանն Առիւծու և Արեգական ա̄ աստիճանի։

64.

Այլ նամակ նոյն Դեսպանի. որով առաքեցաւ առ Յովհաննէս Յովակիմեան Լազարեանց Շ.քանշանն Առիւծու և Արեգական ա̄ աստիճանի։

65.

Այլ նամակ նոյն Դեսպանի. որով ծանուցաւ Օգնականի Հոգաբարձուի Լազարեան ճեմարանի՝ Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց, թէ պարգևեալ է նմա Շահն Պարսից զՇ.քանշանն Առիւծու և Արեգական ա̄ աստիճանի։

66.

Այլ նամակ նոյն Դեսպանի. որով առաքեցաւ յիշատակեալ Շ.քանշանն առ Խաչատուր Յովակիմեան Լազարեանց։

67.

Յայտարար նամակ կոմսին Օռլովայ. որով ծանուցանէ նա Տ. Յովհաննու Յովակիմեան Լազարեանց, թէ հաճեալ է կայսրն թոյլ տալ նմա կրել զՇ.քանշանն Առիւծու և Արեգական զպարգևեալն 'ի Շահէն Պարսից։

68.

Յայտարար նամակ կոմսին Օռլովայ. որով ծանուցանէ նա Տ. Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց, թէ հաճեալ է կայսրն թոյլ տալ նմա ընդունել և կրել զպարգևեալն 'ի Շահէն Պարսից զՇ.քանշանն Առիւծու և Արեգական։

ՑԱՆԿ

ՏԱՊԱՆԱԳՐԱՑ ՆՆՋԵՑԵԼՈՑ ԼԱԶԱՐԵԱՆՑ·

1. Յովհաննու Լազարեան Լազարեանց։
2. Ամուսնոյ նորա Կատարինեայ Յովհաննիսեան Լազարեանց։
3. Մինասայ Լազարեան Լազարեանց։
4. Յովհաննու Խաչատուրեան Լազարեանց։
5. Յարութիւնի Յովհաննիսեան Լազարեանց։
6. Յարութիւնի Յովակիմեան Լազարեանց։
7. Աղեքսանդրայ՝ դստեր Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց։
8. Կատարինեայ Յովակիմեան Լազարեանց։
9. Խաչատրոյ Լազարեան Լազարեանց։
10. Գազարայ Նազարեան Լազարեանց,
11. Աննայի Յովակիմեան Լազարեանց։
12. Աննայի Ներսիսեան՝ կենակցի Մինասայ Լազարեանց։
13. Միւս Աննայի Յովակիմեան Լազարեանց։

14.–15. Յովակիմայ Լազարեան Լազարեանց, և ամուսնոյ նր̃ Աննայի Սարգսեան։

16. Աննայի Յովակիմեան՝ ամուսնոյ Գազարայ Լազարեանց։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ.

—

Ա. ՊԱՏՃԷՆՔ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՐՈՎԱՐՏԱԿԱՑ՝ ՊԱՐԳԵՒԱԳՐԱՑ ԵՒ ՎԿԱՅԱԳՐԱՑ ՏՈՒԵԼՈՑ ՊԱՅԱԶԱՏԱՑ ԼԱԶԱՐԵԱՆ ՏՈՀՄԻ։

1.

ԲՆԱԳԻՐՆ

'Ի Պարգեւական Հրովարտակէ (*) մեծի կայսրուհւոյն Ռուսաց ԿԱՏԱՐԻՆԵԱՅ Բ. որով Պայազատ Իշխանն Հայկազուն Ղազար Նազարեան Լազարեանց և որդիք նորա համարասին Ազնուականացն Ռուսաց։

—

.....Յայտնի լիցի է մեզ, զի որ գտանի արդէն 'ի Մերում Կայսրութեան՝ Ղազար (Նազարեան) Լազարեանց ընդ որդւոց իւրոց, է յԱզնուական ազգաց եղելոց 'ի Հայս. որում վկայեն և մատուցեալքն առ 'ի նմանէ վաւերական Վկայագիրք տուեալք յԱրքայէն Վրաց 'ի Թէյմուրազայ (**), և 'ի Ծայրագոյն Պատրիարգէն Հայոց (***). և զի Նախահայր նորա Մանուկ

(*) Ռուսերէն համառօտ Քաղուածն Հրովարտակիս դնի 'ի գիրսն (Собраніе Актовъ.) 'ի հատ. ա. յէջ. 176. 177։ Եւ զաւաւել համառօտագիրն 'ի հատ. բ. յէջ. 298. 299։

(**) Թուի՝ թէ Թամրազն իցէ սա՝ հայր մեծի Իշխանին Վրաց Հերակլեայ, յիշատակեալ 'ի Պատ. Հայ. (հատ. գ. յէջ. 852) որ թագաւորեաց յամին 1724—1762. որպէս դնի 'ի Տարեգիրսն Վրաց տպ. 'ի Փեթերբուրգ յամին 1854 ('ի հատ. բ. յէջ. 141)։

(***) Պատրիարգին անուն չյիշատակի 'ի տպ. օրինակի Հրովարտակին։

Լազարեան, յետ սպանելոյ 'ի Հայաստան Արքայական զարմի, և յետ բաժանման նոյն Թագաւորութեան 'ի մասունս, էր մի 'ի Պայազատացն՝ որք տիրէին յատենէն առանձին գաւառս: Շահաբաս Առաջին (արքայ Պարսից) ոչինչ օգտեալ յերկարատև յաղթող պատերազմացն՝ զորս մղէր ընդդէմ նոցա, հարկեցաւ զիջանիլ 'ի հաշտութիւն, և սկսաւ վարիլ ընդ նոսա շողոմիւք և քաղցրութեամբ, այնպէս՝ զի բազումք յականաւոր և 'ի մեծահարուստ գերդաստանաց յօժարեցան ունել բնակութիւն 'ի մայրաքաղաքի անդ նորա (այն է յԱսպահան), ընկալեալ զազատութիւն յամենայն զինուորական ծառայութեանց: Իսկ Շահաբաս 'ի մահ եղեալ զմանս 'ի նոցանէ յինքն յանկուցանել, շնորհեաց նոցա քաղաքական ինչ աստիճանս՝ առ 'ի պատիւ և եթ: 'Ի թիւ Աստիճանաւորացն այնոցիկ՝ էր և նա ինքն Մանուկ Լազարեանց: Էր նորա որդի մի Լազար անուն, որ յաւուրս Երկրորդին Շահաբասայ կարգեցաւ Վերատեսուչ փողերանոցի և Գանձապետ Արքունի: 'Ի նմանէ ծնան Մանուկ և Սափար. 'ի Մանուկայ՝ Նազարէթ. և 'ի սմանէ միւս Լազար, որ մինչ էր 'ի Պարսս, ծանօթ գոլով Արքունի Դրանն՝ կատարեաց զբազում պաշտամունս յանձնարարութեամբ Նատիրշահայ. կացուցաւ և Հրամանատար կամ Պետ (Начальникъ) 'ի վերայ ժողովրդեան Ջուղայ քաղաքի: Այլ ապա 'ի պատճառս աղմկացն յուզելոց 'ի Պարսս՝ ել անտի, և եկեալ 'ի սահմանս Կայսրութեան մերոյ հանդերձ որդւովք և ստացուածովք իւրովք. ուր և կանգնեաց զերեսելի գործարանս, և եցոյց մեծ հանապազ ընդ որդւոց իւրոց բազմապիսի ծառայութիւնս: Որոյ վասն շնորհեցաք Մեք նմին Լազարու Լազարեանց և որդւոց նորա զիրաւունս Ազնուականութեան (Дворянство) Ռուսաց, 'ի 20 Մայիսի 1774 ամի (*):

(*) Թէպէտ և առանձին Լազարեանց զիրաւունս Ազնուականութեան Ռուսաց լեալ է 'ի յիշատակեալ Թուականին. այլ գրութիւն հրովարտակին յետոյ ուրեմն է, այն է յամին 1776 'ի Հոկտեմբերի 3. որպէս դնի 'ի տպեալ օրինակն:

2.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Պարգևական Հրովարտակի Հռովմէական կայսեր Յովսէփայ Բ. որով տուեալ լինի Յովհաննու Լազարեանց՝ պատուանունս ՊԱՐՈՆ:

—

Ողորմութեամբ Աստուծոյ

ՄԵՔ ՅՈՎՍԷՓ ԵՐԿՐՈՐԴ.

Ընտրեալ կայսր Հռովմէական, յարաժամ ընդարձակող կայսրութեան, Արքայ Գերմանացւոց, Երուսաղէմի, Ունկարիոյ, Բոհեմիոյ, Դալմատիոյ, Խրօացիոյ (այն է Խրուաթիայ), Սլաւոնիոյ, Կալիցիոյ և Լոտոմիրայ, Արհի Դուքս Աւստրիոյ, Դուքս Բուրգոնտիայ, Լօթարինգիոյ, Շտիրիոյ, Կարինթիոյ և Կռայնոյ. Մեծ Դուքս Թօսքանայ. Մեծ Իշխան Եօթնաքաղաքեան երկրի (.......*) և այլոց և այլոց և այլոց:

Սովին հրովարտակաւ ընդունեմք հանդիսապէս վասն մեր՝ և մերոյս սրբազան Հռովմէական Կայսրութեան ազգացն, և յայտ առնեմք ամենեցուն և իւրաքանչիւրոց առհասարակ, զի թէ և Հռովմէական Կայսերական պատիւն՝ յոր ամբարձեալս եմք յամենակալողէն Աստուծոյ ըստ Նորին Հայրական տեսչութեան, ՚ի վաղուց հետէ ճոխանալով ճոխանայ բազում փառաւոր և ազնուական սերնդովք և հպատակօք. այլ Մեք ոչ հայեցեալ յայս՝ զեջանիմք և զանուանս և զսերունդս այնոցիկ՝ որք աշխատ լինին երևելի կացուցանել զանձինս արժանագով վարուք և գործովք՝ ամբառնալ ՚ի գերագոյն աստիճան պատուոյ և արժանաւորութեան. Որպէս զի այսպիսաւ ողորմածագոյն վարձատրութեամբ որ տուեալ լինի փոխարէն գովանի հանդամանաց նոցա, խրախուսեսցուք և զայլս զհետ գնալ ազնուական և արժանագով գործոց նոցա:

(*) Աստանօր դնին այլ ևս անուանք երևելի քաղաքաց և գաւառաց աւելի քան զերեսուն:

Իսկ արդ՝ ծանուցեալ է Մեզ ամենահպատակաբար 'ի Յովհաննէ Լազարեանց, զի ծագեալ է նա յազնուական տոհմէ եղելոյ 'ի Հայաստանէ. և յետ զրաւման Իսլամացն գաւառաց անդանօր 'ի հնգետասաներորդ դարու, մին 'ի նախնեաց նորա՝ Մանուկ Լազարեանց հրաւիրեալ է 'ի Շահէն Պարսից Աբբասայ իբրև մի ումն յառաջնոր անձանց Տէրութեան վասն բնակաւորելոյ 'ի մայրաքաղաքին Սպահան, ուր յետինք նորա վայելէին յարտօնութիւնս շնորհեալս 'ի նմանէ (այսինքն՝ 'ի Շահէն). բայց 'ի ժամանակի աղմկացն յարուցելոց զկնի մահուան Նատիր-Շահայ չուեաց ծնողք հանդերձ և ազգականօք 'ի Ռուսաստան. ուր և զարժանի յարգանաց զարդիւնս ցուցեալ առաջի ամենողորմած Կայսերուհւոյն Ռուսաց՝ ամբարձաւ 'ի Նմանէ յարժանաւորութիւն (կամ 'ի պատիւ) Ազնուականութեան: Իսկ որդի նորա ծառայէ 'ի Կայսերական Թնդանօթապահ զօրու: Իսկ որովհետև նա ինքն ոչ խնդք այնպէս բղձանօք տենչայ, որպէս այնմ՝ զի արժանի համարեսցուք ամբառնալ զինքն յաստիճան Պարոնութեան Սրբազան Հռոմէական Կայսրութեան. և զի ջանայ նա՝ և պատրաստ է փոխանակ Կայսերականս ողորմութեան՝ ամենախոնարհաբար յամենայն սրտէ ցուցանել զարդիւնս վաստակոց՝ Մեզ և Սրբազան Հռոմէականս Կայսրութեան, յայն սակս և Մեք բարի դիտմամբ՝ բարի խորհրդով և ստուգապաշած տեղեկութեամբ՝ պարգևեցաք ըստ բարձրագոյն Կայսերական իշխանութեան՝ վերագոյնդ յիշատակելոյ Տ. Յովհաննու Լազարեանց՝ ընդ նմին և օրինաւոր ժառանգաց և ապագայից նորա՝ արական և իգական սեռից՝ ուղեղ ծնեներելոց՝ ոչ միայն զիրաւունս Քաղաքացւոյ Սրբազան Հռոմէական Կայսրութեան, այլ և ամենողորմածաբար արժանի համարեցաք ամբառնալ զնա և զյիշեալ օրինաւոր ժառանգս և զապագայս նորա՝ յաստիճան, 'ի պատիւ և յարժանաւորութիւն Մեր և Սրբազան Հռոմէական Կայսրութեան ներկայ Պարոնաց՝ մտեալ զնոսա 'ի համարակութիւն և 'ի կարգ նոցին, և հաւասարելով ընդ նոսա: Այլ և այսու բարձրացուցանեմք զնա ինքն զՅովհաննէս

Լազարեանց, և արժանի համարելով՝ շնորհեմք նմա և օրինաւոր ժառանգաց և ապագայից նորա՝ արական և իգական սեռից ուղիղ գծիւ սերելոց՝ զաստիճան Մեր և Սրբազան Հռոմէական Կայսերութեան ներկայ Պարոնաց, պարգևելով զՊարոնական արժանաւորութիւն կանանց և դստերաց նոցա, մուծանելով զնոսա 'ի Հասարակութիւն՝ 'ի կարգ և 'ի թիւ նոցա: Շնորհեմք և տամք նոցա զպատուանուն և զկոչումն Մերոց՝ Սրբազան Հռոմէական Կայսերութեան Պարոնաց, թոյլ տալով նոցա որպէս առաջի մեր՝ նոյնպէս և առաջի այլոց՝ այսու պատուանուամբ անուանիլ և ստորագրիլ: Որոշեմք՝ կարգեմք և կամիմք, զի յիշատակեալն բազում անգամ Պարոն Յովհաննէս Լազարեանց, և ամենայն օրինաւոր ժառանգք և ապագայք նորա թէ արական և թէ իգական սերի՝ ուղիղ գծիւ սերեալք, միշտ և յամենայն ժամ լինիցին Մեր և Սրբազան Հռոմէական Կայսերութեան Պարոնայք: Իսկ կանայք և դստերք նոցա՝ Պարոնուհիք. և զի այսու տիտղոսաւ անուանեալ ստորագրեսցին, և այսու ծանուցեալ լիցին և պատուեալ որպէս 'ի մէնջ՝ նոյնպէս և յայլոց ամենեցունց. ընդ նմին և մասնակից լինիցին յամենայն և յիւրաքանչիւր ողորմութեան, 'ի յարգանս, յարժանաւորութիւնս, յօգուտս բարեկեցութեան, 'ի ժողովս և 'ի ձայնս, 'ի նախնի սերունդս, յիշխանութիւնս, յարտօնութիւնս, յիրաւունս և յազատութիւնս իշխանաց. և զի ունիցին իրաւունս ընդունելոյ զհոգևոր պաշտօնս 'ի հոգևորական տեղիս. ես և կարասցեն մասնակից լինել յամենայն և յիւրաքանչիւր բարի գործս, 'ի կենցաղավարութիւնս և 'ի զբաղմունս: Իսկ զի Պարոնայք և Պարոնուհիք և դստերք նոցա արժանի են, յայն սակս և սոքա ունիցին իրաւունս տիրանալոյ կալուածոց, և տալոյ զայնս այլոց, նաև 'ի կիր արկանելոյ զայնս և օգտելոյ նոքիմբք այնչափ, որչափ օգտին իրաւամբք այլ մեր և Սրբազան Հռոմէական Կայսերութեան ներկայ Պարոնայք, ամուսինք և դստերք նոցա՝ սերեալք 'ի նախնեաց չորրորդ զարմի 'ի հօր և 'ի մօր կողմանէ, ըստ իրաւանց և սովորութեանց առանց իրիք արգելմանց յումեքէ:

Բաց յայսմանէ առ բարիոք յիշատակի Մերս Կայսերական ողորմութեան, Մեք՝ յիշատակաւն Յովհաննու Լազարեանց՝ Արքազն Հռովմէական Կայսրութեան Պարոնի, օրինաւոր ժառանգաց նորա և ապագայից երկուց սերից՝ ուղիղ գծիւ սերելոց, Թոյլ տուաք ամենողորմածաբար՝ զ'ի ստորև գծեալ Պարոնական կնիքն 'ի գործ դնել, այն է՝ վահան բաժանեալ 'ի չորս մասունս. յորոց յառաջնումն յոսկենկար ենթակայի նկարեալ է Ռուսաց Կայսերական Արծիւն. յերկրորդումն 'ի նոյնգունակ ենթակայի՝ սեաւ թև Արծուոյ՝ թեքելոյ յաջ կողմն. յերրորդումն 'ի կապուտակ ենթակայի՝ հնգանկիւնի աստղ ոսկեղէն՝ շրջապատեալ բազմութեամբ նոյնպիսի իսկ մանունց աստեղաց. իսկ 'ի չորրորդումն՝ որ է նոյնպէս կապուտակ՝ Առիւծ ընկողմանեալ յաջ: Վահանն պսակեալ է Պարոնական Թագիւ, յորոյ վերայ գտանին երեք ոսկե Թագ Ասպետական սաղաւարտք 'ի դոյն բաց և Թխագոյն կարմիր՝ զարդարեալ ակամբք պատուականօք և պատեալ ծածկութիւ: Աջ կողմն զօծեալ է ոսկւով՝ խառն ընդ սեաւ. և ձախն նոյնպէս ոսկեզօծ և կապուտակ: 'Ի միջակիտի սաղաւարտին գոյ նկարեալ 'ի կնիքն սեաւ թև Արծուոյ՝ թեքեալ յաջ կոյս՝ որոյ առաջի երեւի վերոյիշեալ առիւծն ոսկեղէն: Վահանակալք, յաջ կողմանէ՝ առիւծ ոսկեղէն՝ որ հայի 'ի նոյն կողմն 'ի վեր ամբարձեալ գձեան, և արտաքս հանեալ զկարմիր լեզուն. 'ի ձախմէ՝ Հայ զինուոր՝ զգեցեալ հանդերձ կարմիր և սպիտակ մինչ ցծունգս՝ ունելով գլխարկ 'ի կարմիր մորթոյ՝ զարդարեալ սպիտակ փետրովք, և եդեալ զձախ ձեռն 'ի սուսերին վերայ: Այս կնիք Պարոնական պարզագոյն եւս գծեալ կայ և ներկօք նկարեալ 'ի միջոցի Կայսերականս մեր հրովարտակի:

Եւ զի յիշատակեալն բազում անգամ՝ Արքայազն Հռովմէական Կայսրութեան Պարոն՝ Յովհաննէս Լազարեանց առաւել ես ծանիցէ զՄերս Կայսերական ողորմութիւն՝ զոր հաճեցաք ցուցանել նմա բարի գիտմամբ, բարի խորհրդով, և պարտուպատշաճ տեղեկութեամբ, արարաք նմա և օրինաւոր ժառանգաց նորա և

ապագայից երկուց սեռից՝ ուղիղ գծիւ սերելոց՝ զառանձին իմն շնորհ Կայսերական, և պարգևեցաք զիրաւունս, զի յայսմ հետէ 'ի Մէնջ և 'ի մերոց ժառանգաց Սրբազան Հռովմէական Կայսերութեան և 'ի Թագաւորաց յամենայն առ նոսա գրեալ նամակս և 'ի Թուղթս, 'ի Մեր և 'ի ժառանգաց մերոց դիւանատանց՝ յիշեալ Պարոն Լազարեանցն, օրինաւոր ժառանգք նորա և յետագայք երկուց սեռից՝ ուղիղ գծիւ սերեալք մեծարեսցին յարգական անուամբ „Ազնուական Պարոն Լազարեանց“:

Որոյ աղագաւ հաստատապէս հրամայեմք Մայնցեան՝ Տրիրեան և Կէօլնեան Արք Եպիսկոպոսաց, նաև Մերոց Սրբազան Հռովմէական Կայսերութեան Կայսրընտրաց և Իշխանապետաց եղելոց 'ի համայն Գերմանիա՝ 'ի Գաղղիա՝ յԱրելատեան Թագաւորութեան՝ և յԻտալիա, և այլոց ամենեցուն՝ Իշխանապետաց մերոց, Կառավարչաց դիւանատանց և Քարտուղարաց, ներկայից և ապագայից. և կամիմք այսու հրովարտակաւ՝ զի նոքա 'ի Մեր՝ և յապագայից մերոց 'ի դիւանատունս հրաման տացեն, և հոգ կալցեն ամենայն ջանիւք և ուշադրութեամբ, զի բազում անգամ յիշատակելոյն՝ Սրբազան Հռովմէական Կայսերութեան Պարոնին Լազարեանց, և օրինաւոր սերնդոց նորա երկուց սեռից ուղիղ գծիւ իջելոց տուեալ լիցի պատիւ և կոչումն յարգական „Ազնուական Պարոնաց, Պարոնուհեաց Լազարեանց“:

Նոյնպէս և ամենայն և իւրաքանչիւր Կայսրընտրաց, հոգևորական և աշխարհական Իշխանաց, Կոմսից, Պարոնաց, Ասպետաց, զօրականաց նոցա, քաղաքական Մարաջախտից, քաղաքական Կառավարչաց, Նաւապետաց, Կուսակալաց, Հոգաբարձուաց, փոխանորդաց, Իշխանապետաց, Քաղաքապետաց, Դատաւորաց, Խորհրդականաց, Քաղաքայնոց, Հասարակութեանց, և այլոց ամենեցուն՝ Մեր և Սրբազան Հռովմէական Կայսերութեան հաւատարիմ հպատակաց, խստագոյնս և հաստատագոյնս հրամայեմք այսու հրովարտակաւ, և կամիմք՝ զի նոքա զյիշատակեալն բազում անգամ զՍրբազան Հռովմէական Կայսերութեան զՊարոնն Լազարեանց, զօրինա-

ւոր ժառանգս և զապագայս նորա երկուց սեռից՝ ուղիղ գծիւ սերեալս, յամենայն 'ի պատուաւոր Ազնուական և 'ի Պարոնական ժողովս, 'ի կենցաղավարութեան, 'ի վերին և 'ի ստորին դատաստանատունս, 'ի հոգևորական և յաշխարհական ուսումնարանս, և յամենայն տեղիս ծանիցեն և համարեսցին՝ Մեր և Սրբազան Հռովմէական Կայսրութեան Պարոնս և Պարոնուհիս, և տացեն զանուն յարգանաց՝ Ազնուական Սրբազան Հռովմէական Կայսրութեան Պարոնաց և Պարոնուհեաց Նազարեանց: Եւ այսոքիւք՝ Թոյլատրեսցեն ևս՝ ընշանակեալն տառն՝ զողորմութիւնս, զյարգանս, զարժանաւորութիւնս, զազատութիւնս և զիրաւունս խաղաղապէս 'ի գործ դնել, վայելել 'ի նոսին, և օգտիլ նոքիմբք առանց իրիք արգելման: Այլ և կամիմք՝ զի յամենայն 'ի վերագրեալդ՝ ըստ Մերոյ՝ և Սրբազան Հռովմէական Կայսրութեան իրաւանց՝ սնդագոյնս օգնեսցեն, պաշտպանեսցեն զնոսա և պահպանեսցեն, և մի հակառակ ինչ արասցեն, և մի այլոց թոյլ տացեն առնել: Իսկ եթէ իշխեսցէ ոք առնել ինչ ընդդէմ այսոցիկ, և շարժեսցէ այնու զբարկութիւն Մեր և Սրբազան Հռովմէական Կայսրութեան, յայնժամ առ 'ի պատիժ տուգանս տացէ հարիւր ոսկի մաքուր. զորոյ զկէսն տացէ յիւրաքանչիւր նուագի 'ի Մեր՝ և 'ի Մեր Կայսրութեան Գանձարանն, և զկէսն՝ ազնուական Սրբազան Հռովմէական Կայսրութեան Պարոնին՝ Յովհաննու Նազարեանց, օրինաւոր ժառանգաց նորա և ապագայից երկուց սեռից՝ ուղիղ գծի սերելոց. որոց պարտի (յանցաւորն) հատուցանել առանց յայլ ինչ հայելոյ: Սակայն և նոքա պարտին աննենգ մտօք և առանց վնասելոյ ինչ Մեզ և Մերոյն ժառանգաց Սրբազան Հռովմէական Կայսրութեան վայելել 'ի պատկանեալն ինքեանց՝ յիրաւունս և յառանձնաշնորհութիւնս: Յորոյ 'ի վկայութիւն՝ դնի 'ի հրովարտակի աստ Կայսերական Մեր կնիք:

Տուեալ 'ի Վիեննա յերկոտասաներորդում աւուր Մարտի- յամի ծննդեան փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի 'ի 1786. 'ի քսաներորդ երկրորդ ամի Հռովմէական Թագաւորութեան մերոյ,

և 'ի վեցերորդումն՝ (տէրութեան) Վենգերիոյ և Պոհեմիոյ:

ՅՈՎՍԷՓ.

Հռովմէական Իշխան Կօլլօրետօ:
Ըստ իսկական հրամանի Սրբազան Կեսարական Մեծութեան
Կարոլոս Պարոն ֆոն-Լէ-Սիւլս:
Համեմատեաց և արձանացոյց 'ի մատենի Հ. Ե. ֆոն-Մաննէր:

3.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Պարգևական Հրովարտակի Հռովմէական կայսեր Յովսէփայ Բ. որով ամբառնայ նա զՅովհաննէս Լազարեանց 'ի պատիւ ԿՈՄՍՈՒԹԵԱՆ:

—

Ողորմութեամբ Աստուծոյ

ՄԵՔ ՅՈՎՍԷՓ ԵՐԿՐՈՐԴ.

Ընտրեալ Կայսր Հռովմէական, յարաջան ընդարձակող Կայսերութեան, Արքայ Գերմանացւոց, Երուսաղէմի, Ունկարիոյ, Պոհեմիոյ, Դալմատիոյ, Խռօացւոց (այն է Խռուաթիայ), Սլաւոնիոյ, Կալիցիոյ և Լոտոմերիայ. Արհի Դուքս Աւստրիոյ, Դուքս Բուրգոնտիոյ, Լօտարինգիոյ, Շտիրիոյ, Քարինթիոյ և Քռայնայ. Մեծ Դուքս Թօսքանայ. Մեծ Իշխան Եօթնաքաղաքեան երկրի (....*) և այլոց և այլոց և այլոց:

Հրովարտակաւս այսու՝ զՊարոն Յովհաննէս Լազարեանց, և զօրինաւոր ժառանգս և զյետնորդս նորա ամենայն 'ի նմանէ ուղիղ գծիւ ըստ կրկին սեռից՝ ընդունիմք հրապարակաւ և համադասեմք Կոմսից և Կոմսուհեաց Սրբազան Հռովմէական Կայսերութեան Մե-

(*) Աստանօր են չորքայրքն անուանք գլխաւոր քաղաքաց և գաւառաց աւելի քան զքառասնից:

րոյ. և յայսմիկ ամենեցուն և իւրաքանչիւր ումեք առ հասարակ, զի Թէպէտ և Հռովմէական-Կայսերական Արժանապատուութիւն, յոր ամբարձեալ գտանիմք Մեք յամենակարողէն Աստուծոյ՝ ըստ Հայրական Նորին Տեսչութեան, արդէն 'ի վաղ ժամանակաց հետէ փարթամացեալ գտանի բազմութեամբ հոյակապ և ազնուական ցեղից և հպատակաց, այլ Մեք ոչ հայեցեալ յայս՝ յօժարիմք 'ի գերագոյն աստիճան պատուոյ ամբառնալ զանուանս և զազգատոհմս այնոցիկ՝ որք ջան դնեն երևելի զանձինս հանդիսացուցանել արժանագով վարուք և գործովք. որպէս զի այսօրինակ բարեպարգև վարձատրութեամբ 'ի տրիտուր նոցուն գովանի բարեմասնութեանց՝ քաջալերեսցուք և զայլս նմանող լինել նոցա ազնուական և գովելի գործովք:

Ամենահրապարակօրէն ծանուցեալ է Մեզ, զի բարեսիրտն մեր և Սիրելի Հռովմէական Կայսրութեան՝ Պարոն Լազարեանն սերեալ է յականաւոր Տոհմէ ելելոյ 'ի Հայաստանէ. և 'ի սպառել ցեղի Իշխանացն անդէն 'ի հնդետասներորդ դարու, մին 'ի Նախնեաց նորա՝ Մանուկ Լազարեան նախամեծար համարեալ 'ի միջի այլոց աւագագունից, հրաւիրեցաւ յարքայէն Պարսից 'ի Շահաբասայ՝ հաստատել զբնակութիւն իւր յՍպահան մայրաքաղաքի. ուր աստ և յետագայք նորա վայելէին յիրաւունս և յառանձնաշնորհութիւնս պարգևեալս 'ի նմանէ (այսինքն յարքայէ): Իսկ 'ի ժամանակս խռովութեանց ծագելոց զկնի մահուան Նատիրշահայ՝ ելեալ անտի ընդ ծնողաց և ազգականաց իւրոց 'ի միասին՝ չոգաւ բնակեցաւ 'ի Ռուսաստան. ուրանօր 'ի տրիտուր հաւատարիմ ծառայութեանց իւրոց՝ ամենողորմածաբար պարգևատրեցաւ 'ի Կայսերուհւոյն Ռուսաց՝ պատուով Ազնուականութեան. իսկ որդի նորա գտանի 'ի զինուորական պաշտաման 'ի Կայսերական յԱնձնապահ Գնդէն Ռուսաց: Մեք ևս առ 'ի վարձատրութիւն նախագրեալ բազմարդիւն վաստակոց նորա՝ յամին 1786 դասեցաք զնա ամենողորմածաբար 'ի Թիւ Պարոնաց Սրբազան Հռովմէական Կայսրութեան: Իսկ այժմ խնդրէ նա ամենախոնարհաբար զԿոմս-

կամն շնորհել ինքեան զպատիւ Սրբազան Հռովմէական Կայսրութեան՝ պարտաւորելով զանձն, որպէս Մեզ՝ նոյնպէս և Սրբազան Հռովմէական Կայսրութեան, ցուցանել՝ որչափ և ձեռնհաս գտանիցի՝ զարդիւնաւէտ փաստս 'ի նշան շնորհակալեաց:

Յայտնեաց պատճառաց շարժեալ և Մեր՝ բարի դիտմամբ և խորհրդով և պարտուպատշաճ տեղեկութեամբ ցուցաք զՄերս Կայսերական ողորմութիւն՝ Պարոնի Սրբազան Հռովմէական Կայսրութեան՝ Յովհաննու Լազարեանց, արժանաւորելով զնա և զօրինաւոր ժառանգս նորա և զյետագայս սերեալս 'ի նմանէ ուղիղ գծիւ՝ աստիճանի, պատուոյ և արժանաւորութեան Մերոց՝ Սրբազան Հռովմէական Կայսրութեան Կոմսից և Կոմսուհեաց. զորս և մուծանեմք և հաստատեմք 'ի համար և 'ի դաս Ազնուազարմից հաւասարապէս, և պարգևեմք և տամք նոցա զիշխանութիւն (տիտղոս) և զկոչումն Մերոցն Կոմսից և Կոմսուհեաց Սրբազան Հռովմէական Կայսրութեան՝ անելով զպատշաճաւորն տնօրէնութիւն: Այլ և կամիմք՝ զի եղիցին նոքա 'ի մշտնջենաւորս Կոմսք և Կոմսուհիք Սրբազան Հռովմէական Կայսրութեան, և զի զնոյն ունիցին կոչումն 'ի բան և 'ի գիր, և պատուեսցին 'ի Մէնջ և 'ի ժառանգաց Գահուս Մերոյ և յամենայն ումեք առ հասարակ: Առ այսոքիւք՝ հաղորդակից լիցին նոքա ըստ ամենայնի՝ շնորհաց, պատուոյ, մեծարանաց, օգտի, ազատութեան, իրաւանց և արտօնութեանց, 'ի Թագաւորական կամ յայլ ժողովս, և 'ի խաղս Ասպետականս, հանգոյն այլոց Կոմսից և Կոմսուհեաց Մերս Կայսերութեան, իբրու այն թէ՝ սերեալք իցեն և սոքա 'ի Նախահարց չորրորդ սերնդոյ 'ի հօր և 'ի մօր կողմանէ, և մասնակիցք լեալ իցեն և արժանաւորեալք այսմ պատուի, և ունիցին իրաւունս Արքեպիսկոպոսութեան՝ Եպիսկոպոսութեան՝ հոգևոր և աշխարհական պաշտամանց՝ ևս և տիրանալոյ Պարգևական երկրի (Лены):

Բաց յայսմանէ, առ յաւէրժ յիշատակի Մերս Կայսերական ողորմութեան՝ հրամայեցաք ամենողորմածաբար, զի նախայիշեալ Կոմսն Սրբազան Հռովմէական Կայսրութեան՝ Յովհաննէս Լազա-

բեանց, և օրինաւոր ժառանգք նորա և յետագայք ազգատոհմի նորա ըստ կրկին սեռից (արական և իգական) սերեալք ուղիղ գծիւ, ունիցին և 'ի կիր առցեն զնիկք կամ դրոշմակ (Гербъ) Կոմսից Սրբոյ Կայսրութեան, այն է՝ զՎահան բաժանեալ 'ի քառեակ մասունս. յորոց յառաջնումն նկարեալ կայ յակնեթոյր ենթակայի Արծուին Կայսրութեան Ռուսաց. յերկրորդումն 'ի կապուտակ ենթակայի՝ Առիւծ ընկողմնեալ յաջու կողմն. յերրորդումն նոյնպէս 'ի կապուտակ ենթակայի՝ ոսկեայ Աստղ վեցանկիւնի՝ շրջապատեալ յայլոց բազմաց 'ի փոքրիկ աստեղաց. իսկ 'ի չորրորդումն յակնեթոյ ենթակայի՝ սեաւթոյր Թև արծուոյ՝ դարձուցեալ ունելով յաջ կողմն զպարիսպն: Բովանդակ վահանն պսակեալ է Կոմսական Թագիւ Հռովմէական Կայսրութեան: 'Ի վերայ քան զայն՝ դասանին երկնագոյն և փարգագոյն Ասպետական սաղաւարտք՝ պսակազարդեալք ոսկեայ Թագօք, յորոց վերայ կախեալ տեսանին ոսկեհիւս վերջաւորք: Սաղաւարտքն յաջմէ կողմանէ՝ զօծեալք են ոսկւով խառն ընդ սեւոյ. իսկ յահեկէ՝ զօծեալք են նոյնպէս ոսկւով խառն ընդ կապուտոյ: 'Ի վերայ քան զմիջին սաղաւարտն գտանի Կայսերական Արծուին Ռուսաց, զոր կանխագոյն յիշատակեցաք: Նոյնպէս և 'ի վերայ քան զսաղաւարտն աջու կողմանն՝ տեսանի Թև արծուոյ՝ յահեակ կոյս դարձուցեալ ունելով զպարիսպն: Իսկ 'ի վերայ քան զձախակողմեան սաղաւարտն՝ տեսանի նախանշանակեալն Առիւծ, որ յառնել կամի և դառնալ յաջ: Վահանակալք են՝ յաջմէ կողմանէ Առիւծ ոսկեայ, որ հայի 'ի նոյն իսկ 'ի կողմն՝ 'ի վեր կոյս զաղէն ունելով ամբարձեալ, և 'ի ճանկս արձակեալ զլեզուն բոցաւոր: 'Ի ձախմէ կողմանէ՝ Զինուոր Հայկազուն, որ հայի յետս՝ զգեցեալ հանդերձս կարմիր և սպիտակ ցծունկս, շառագոյն գդակ մորթեայ 'ի գլուխն՝ սպիտակաթոյր փաղփողեալ փետրովք, պահեալ զձեռնն 'ի վերայ սուսերին ունելով: Այս կնիք կամ նշանակ Կայսերականն յատակագծիւս ձևացեալ և նկարեալ է նիկօք 'ի միջավայրի սոյն Կայսերական Կոմսութեան Հռովմայականի Սրբոյ:

Բաց յայսմանէ, որպէս զի յիշատակեալ Կոմն Սրբազան Հռովմէական Կայսրութեան՝ Յովհաննէս Լազարեանց, առաւել ևս ծանիցէ զմեծութիւն Կայսերական շնորհացն՝ զոր հաճեցաք առնել նմա և յետնորդաց նորա, ամենողորմածաբար շնորհեմք նմա և օրինաւոր ազգայնոց նորա և յետնորդաց կրկին սեռից (արուաց և իգաց) զիրաւունս, զի յայսմ հետէ և անդր 'ի մշտնջենաւոր յարգեսցին 'ի Մէնջ և 'ի Մերոց ժառանգաց Սրբազան Հռովմէական Կայսրութեան՝ այսու տիտղոսաւ և պատուանուամբ յամենայն 'ի մեր՝ և 'ի նոցա առ մեզ թուղթս և 'ի գրուածս՝ յորս յիշատակիցին: Եւ զայսմանէ հրամայեալ եմք Դիւանատանց Մերոց, և զպարտուպատշաճն առարեալ եմք զանօրէնութիւն:

Եւ 'ի լրումն այսր ամենայնի, հրամայեմք այսու և Արքեպիսկոպոսացն Մայնցոյ՝ Տրիրոյ՝ և Քէլնոյ, ևս և Մեր՝ և Կայսրութեան Մերոյ Գլխաւոր Դիւանապետաց եղ՚լոց յամենայն 'ի Գերմանիա՝ 'ի Թագաւորութեան Արելաթոյ և Իտալիոյ, և այլ ամենայն Դիւանապետաց՝ Կառավարչաց Դիւանատանց՝ և Քարտուղարաց արդեաց և ապագայից, և յայտ առնեմք այսու Հրովարտակաւ զհաճութիւն մեր և զկամս, զի նոքա 'ի Մեր և 'ի Մերոց յաջորդաց Դիւանատունս արասցեն զլիակատար և զպարտուպատշաճ անօրէնութիւն, ըստ նմին և ամենայն խնամով ուշադիր լիցին յայսմ հետէ՝ յիշատակելոյն յորժամ անուամբ՝ Կոմսին Սրբազան Հռովմէական Կայսրութեան՝ Յովհաննու Լազարեանց, և օրինաւոր ժառանգաց և յետնորդաց նորա կրկին սեռից՝ սերելոց 'ի նմին ցեղէ ուղիղ գծիւ, յորջորջել ըստ նմին տուեալ զտիտղոսն:

Նմանապէս ամենեցուն՝ և իւրաքանչիւր Կայսերական Իշխանաց, Պայազատաց, Եկեղեցական և Աշխարհական Առաջնորդաց, Կոմսից, Բարոնաց, Ասպետաց, Պաշտօնէից ընդ ձեռամբ նոցին եղելոց, Մարաջախտից, Զօրագլխաց, Գաւառատեսչաց, Տեղակալաց, Կառավարչաց, Հոգաբարձուաց, Փոխանորդաց (Викарiямъ), Դատաւորաց, Գահերիցանց, Քաղաքապետաց, Մարտա-

ծանոյց Պատգամաւորաց (Персевантамъ), Քաղաքացեաց, Հասարակութեանց, և այլ ամենայն Մեր` և Սրբազան Հռովմէական Կայսրութեան հաւատարիմ հպատակաց, յորմէ աստիճանէ կամ 'ի պատուոյ կամ 'ի կոչմանէ և իցեն, խստագոյնս և պնդագոյնս հրամայեմք այսու Հրովարտակաւ, և յայտնեմք զհաճութիւն մեր, զի նոքա յայսմ հետէ յամենայն ժամանակի զյիշատակեալն ստէպ` զԿոմսն Սրբազան Հռովմէական Կայսրութեան` զՅովհաննէս Լազարեանց, և զօրինաւոր ժառանգս նորա և զյետնորդս ըստ կրկին սեռից` սերեալս ուղիղ գծիւ, ընկալցին` ծանիցեն և մեծարեալ պատուեսցեն իբրև զՄեր և զՍրբազան Հռովմէական Կայսրութեան զիշխական Կոմս և Կոմուհիս յամենայն ժողովս` յամենայն գործս, 'ի կենցաղակցութեան և յամենայն դէպս. և զի թոյլտարեսցեն զամենայն զգրեալսն 'ի սմա` զշնորհս, զպատիւ, զազատութիւն, զիրաւունս և զառանձնաշնորհութիւնս անզորրապէս 'ի կիր առնուլ, և անխափան վայելել 'ի նոսին: Եւ այսոքիւք` և առանց որ և է արգելման և խափանաց յամենայն 'ի վերոյ գրեալսն օժանդակեսցեն նոցա, պաշտպանեսցեն զնոսա և պահպանեսցեն մինչև յայժ: Նոյնպէս ևս մի և մի իւիք ընդդէմ ասացելոցս գործեսցեն ինչ, և մի ումեք որով և իցէ եղանակաւ թոյլ տասցեն գործել, զգուշացուցանելով` չարկանել զանձինս ընդ Մեր` և ընդ Սրբազան Հռովմէական Կայսրութեանն ցասմամբ և պատուհասիւ` տուժելով զերկերիւր մարքս զուտ ոսկւոյ. յորոց` եթէ ոք յանդգնեսցի ընդդէմ հրամանիս ընթանալ յիւրաքանչիւր նուագի պարտի տալ անշուշտ զկէսն` 'ի Մեր և 'ի Կայսրութեան Մերոյ Գանձարանն, և զմիւս կէսն` յիշատակեալ Կոմսին Սրբազան Հռովմէական Կայսրութեան` Յովհաննու Լազարեանց, կամ օրինաւոր ժառանգաց նորա և յետնորդաց կրկին սեռից սերելոց ուղիղ գծիւ` եթէ անպատուեսցէ իւիք զնոսա. միայն թէ և նոքա վայելեսցեն զշնորհս մեր առանց վնասաբեր լինելոյ իւիք թէ Մեզ և Սրբազան Կայսրութեան, և թէ իրաւանցն սեպհականելոց Մեզ և Մերոց հպատակաց:

'Ի վկայութիւն այսորիկ՝ դրոշմեմք Կայսերական կնքով Մերով զայս Հրովարտակ: Տուեալ եղև 'ի Վիէն՝ որ յԱւստրիա, յերեսներորդում աւուր Մարտի 'ի 1788 ամի ծննդեան Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, 'ի քսաներորդ հինգերորդ ամի Հռովմէական Թագաւորութեան Մերոյ, յութերորդում ամի Տէրութեան Մերոյ յՈւնկարիա և 'ի Պոհէմիայ:

ՅՈՎՍԷՓ·

Տ· Իշխան Կօլլօրետօ:

Ըստ առանձին հրամանի Սրբազան Կայսերական Մեծութեան Անձնոյ:

Համեմատեաց և արձանացոյց 'ի գիր Մ· Մուլլեր:

Ծանօթ. Թարգմանութիւն հրովարտակիս 'ի գերմանական լեզուէ՝ 'ի Ռուս՝ գտանի 'ի գիրսն Собраніе Актовъ. 'ի հատ. ա. յեր. 181—187:

4.

ՎԿԱՅԱԳԻՐ

Տեղակալութեան Նախարարաց.

'Ի Նահանգային Ազնուական Նախագահէ, և 'ի Վիճակային Ազնուական Պատգամաւորաց՝ ժողովելոց յաղագս յօրինման Տոհմագրի Ազնուականութեան տուեալ Ազնուականին Տ· Ատենական Խորհրդականին՝ Յովհաննու Լազարեան Լազարեանց:

Հայելով 'ի հիմունս Հրովարտակին Ամենողորմածաբար պարգևելոյ 'ի Նորին Կայսերական Մեծութենէ յամի 1785, Ապրիլի 21, և 'ի վկայագիրս Ազնուականութեան 'ի յայտ բերեալ յառաջնմէ 'ի նոյն ինքն 'ի Լազարեանց Տեառնէն յաղագս Ազնուատոհմական արժանեաց իւրոց, գտաք և ծանեաք զայնս համաձայնս կանոնացն առաջնոց եղելոց 'ի մասին այնորիկ: Ուստի ըստ

զօրութեան եօթանասներորդ եօթներորդ յօդուածոյ ծանուցեալ Հրովարտակի՝ թէ նա և թէ սերունդք նորա արձանագրեալք են յառաջնումն մասին գրոց ազգաբանութեան Ազնուականաց Տեղակալութեանն Եարոսլավլայ: Յորս 'ի վկայութիւն մեք Նահանգային Ազնուական Գաւառաց և Պատգամաւորք, 'ի լրումն հաճոյից Նորին Գերամբարձ Կայսերական Մեծութեան՝ տուաք նմա զայս վկայագիր մերովք ստորագրութեամբք, հաստատելով զայն կնքով Խորհրդոյն Ազնուականաց Տեղակալութեանն Եարոսլավլայ, 'ի 29 Նոյեմբերի 1789 ամի:

(Ստորագրեցին) Նահանգային Ազնուական Գաւառագլուխ՝ Փէօտր Շօրմին:
Վիճակային Պատգամաւոր Ազնուականացն Եարոսլավլայ՝ Միխայլ Շէյնէր:
Վիճակային Պատգամաւոր Ազնուականացն Ռոստովայ՝ Իվան Գէլմէլ:
Վիճակային Պատգամաւոր Ազնուականացն Փեթրովայ՝ Ալէքսէյ Բէարանօվ:
Վիճակային Պատգամաւոր Ազնուականացն Պորիսոգլեվայ՝ Ալէքսանդր Խոմանօվ:
Վիճակային Պատգամաւոր Ազնուականացն Ուգլինայ՝ Ֆէօդոր Պոտոմկին:
Վիճակային Պատգամաւոր Ազնուականացն Մըշքինայ՝ Լուկա Միխայլօվ:
Վիճակային Պատգամաւոր Ազնուականացն Մոլոգայ՝ Իվան Վէլեաշ Վոլինց:
Վիճակային Պատգամաւոր Ազնուականացն Փոշեխոնայ՝ Իվան Գոլենիշչէվ-Քութուզօվ:
Վիճակային Պատգամաւոր Ազնուականացն Լիւբիմայ՝ Լուքեան Պոպորդին:
Վիճակային Պատգամաւոր Ազնուականացն Տանիլովայ՝ Սէրգէյ Շէնեադէյ:
Վիճակային Պատգամաւոր Ազնուականացն Ռոմանովայ՝ Նիքիտա Մալէւտին:
Քարտուղար Խորհրդոյն Ազնուականաց՝ Փաւել Իվանով:

5.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Պարգեւական Հրովարտակի կայսրուհւոյն Ռուսաց Կատարինեայ Բ. որով տուեալ լինի Ազնուականին Յովհաննու Լազարեանց՝ Աստիճան Ատենական Խորհրդականի։

—

Ողորմութեամբ Աստուծոյ

ՄԵՔ ԵԿԱՏԵՐԻՆԷ ԵՐԿՐՈՐԴ, ԿԱՅՍՐՈՒՀԻ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼՈՒՀԻ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՑ,

և այլոց, և այլոց, և այլոց։

Յայտնի լիցի ամենեցուն, զի Մեք հաստ եղեալ ժրախոյժ ջանիցն և վաստակոց Ազնուականին Յովհաննու Լազարեանց՝ ամենողորմածաբար կարգեցաք զնա Ատենական Խորհրդական (Коллежскій Совѣтникъ) համաստիճան գնդապետի ցամաքային զօրաց 'ի հազար եօթն հարիւր ութսուն և վեց ամի, 'ի քսան և երկրորդում աւուր Սեպտեմբերի. զոր և հաստատեալ այսու Մերով Հրովարտակաւ՝ հրամայեմք ամենայն հպատակաց Մերոց՝ զնա ինքն զՅովհաննէս Լազարեանց՝ զԽորհրդականն Դիւանատան մերոյ՝ որ համաստիճանն է գնդապետի ցամաքային զօրաց, ճանաչել և յարգել ըստ արժանւոյն։ Եւ Մեք ակն ունիմք՝ թէ 'ի սմին իսկ յԱստիճանի զոր պարգեւեցաք նմա, որպէս հաւատարմաբար և մտադիւր ջանիւք մատուցէ Մեզ սպաս ծառայութեան, որպէս անձն է հաւատարիմ հպատակի։ 'Ի վկայութիւն այսորիկ ստորագրեցաք զՀրովարտակս զայս Մերով սեփական ձեռամբ. և հրամայեցաք ամրացուցանել Թագաւորական կնքով Մերով։ Տուեալ եղև 'ի Ս. Փ. բուրգ. 'ի 1 Դեկտեմբերի 1791 ամի։

ԵԿԱՏԱՐԻՆԷ.

Վիցէ-կանցլէր կոմս Իվան Օստերման.

Արձանագրեալ է 'ի մատենի
Ծերակուտին ընդ համարով 180։

Ծանօթ. Բուն բնագիր հրովարտակիս գտանի 'ի գիրսն Собраніе Актовъ, տպ. 'ի Մոսկուա յամին 1833. հատ. Ա. եր. 188։

6.

ՎԿԱՅԱԳԻՐ

Նահանգին Ս. Փեթերբուրգայ. 'ի Նահանգային Ազնուական Նախագահէ, և 'ի Վիճակային Ազնուական Պատգամաւորաց՝ ժողովելոց յաղագս յօրինման Տոհմագրի Ազնուականութեան տուելոյ Առնական Խորհրդականին՝ Ազնուականին Յովհաննու Լազարեան Լազարեանց:

Հայելով 'ի հիմունս Հրովարտակին Ամենողորմածաբար պարգևելոյ 'ի Նորին Կայսերական Մեծութենէ 'ի 21 Ապրիլի 1785 ամի, 'ի վկայագիրն Ազնուականութեան 'ի յայտ բերեալս կանխաւ 'ի նոյն Լազարեանց Տեառնէն յապացոյց Ազնուատոհմական արժանեաց իւրոց, գտաք և ծանեաք զայս համաձայնս կանոնացն առաջնոց եգելոց 'ի մասին այնորիկ: Աստի ըստ զօրութեան եօթնասներորդ եօթներորդ յօդուածոյ ծանուցեալն Հրովարտակի՝ թէ նա և թէ սերունդք նորա արձանագրեալք են 'ի չորրորդում մասին գրոց ազգաբանութեան Ազնուականաց նահանգին Ս. Փեթերբուրգայ: Յորոյ 'ի վկայութիւն մեք Նահանգային Ազնուական Գահերէց և Պատգամաւորք, 'ի լրումն հաճոյից Նորին Գերամբարձ Կայսերական Մեծութեան՝ տուաք նմա զայս վկայագիր մերովք ստորագրութեամբք, հաստատելով զայն կնքով Ժողովոյն Ազնուականաց նահանգին Ս. Փեթերբուրգայ, յամին 1792, 'ի փետրուարի 7:

Հմր 126.

(Ստորագրեցին) Նահանգային Ազնուական Գահագլուխ

Կոմս Ալէքսանդր Սամոյլով:

Պատգամաւոր վիճակին Ս. Պետերբուրգայ՝ Պետր Թումանսկի:

Պատգամաւոր վիճակին Շլիսսելբուրգայ՝ Պետր Տոլմաչեւ:

Պատգամաւոր վիճակին Սոֆիոյ՝ Ալէքսանդր Տեպլով:

Պատգամաւոր վիճակին Օրանիենբաումայ՝ Վասիլի Մոխինին:

Պատգամաւոր վիճակին Ռոժեստվէնայ՝ Փէօդոր Տեպլով:

Պատգամաւոր վիճակին Յամբուրգայ՝ Ալէքսանդր Բոլոտով:

Պատգամաւոր վիճակին Նարվէքայ՝ Իվան Մալեր:

Պատգամաւոր վիճակին Նովոլադոկայ՝ Նիկոլայ Մորդվինով:

Պատգամաւոր վիճակին Կոպորյայ՝ Ալէքսեյ Վլասով:

Պատգամաւոր վիճակին Լուկայ՝ Սեմեոն Սելիվանով:

Քարտուղար Ժողովոյն Ազնուականաց Գօլլէժսքիյ Ասեսոր

Վասիլի Իվանիենով:

7.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Պարգեւական Հրովարտակի կայսեր Ռուսաց Պաւղոսի Առաջնոյ. որով տուեալ լինի Յովհաննու Լազարեանց Աստիճան Ներգործական Պետական Խորհրդականի։

—

Ողորմութեամբ Աստուծոյ

ՄԵՔ ՊԱՒՂՈՍ ԱՌԱՋԻՆ, ԿԱՅՍՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՑ,

և այլոց, և այլոց, և այլոց։

Յայտնի լիցի ամենեցուն, զի Մեք տեսանելով զփոյթ և զջան Պետական Խորհրդականի Յովհաննու Լազարեանց 'ի ծառայութեանն առ մեզ, ամենողորմածաբար հաճեցաք անուանել զնա յԱստիճան Ներգործական Պետական Խորհրդականի։ Ուստի և հաստատելով զայս՝ հրամայեմք ամենայն հպատակաց Մերոց՝ զնա ևեթ զՅովհաննէս Լազարեանց զՆերգործական Պետական Խորհրդականն Մեր ճանաչել և մեծարել պարտուպատշաճ յարգանօք։ Եւ 'ի արխատուր պարգեւատրութեանն՝ ակն ունիմք, թէ նա այնպէս հաւատարմօրէն և մտադիւր հարցէ Մեզ ծառայութիւն, որպէս վայել է հաւատարիմ հպատակի։ 'Ի վկայութիւն այսորիկ՝ ստորագրեցաք զՀրովարտակս զայս Մերով իսկական ձեռամբ, և հրամայեցաք Թագաւորական կնքով Մերով ամրացուցանել։ Տուեալ եղեւ 'ի քաղաքին Փաւլով յ3 Յունիսի 1800 ամի։

ՊԱՒՂՈՍ.

Վերագոյն ստորագրեալ է կոմս Ռոստոպչին։

Ծանօթ. Զսոյն բնագիր հրովարտակիս գտես 'ի գիրսն Собраніе Актовъ. տպ. 'ի Մոսկուա յամին 1833. 'ի հատ. Ա. յեր. 241. 242։

8.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Պարգևական Հրովարտակի կայսեր Ռուսաց՝ Պաւղոսի Առաջնոյ. որով տուեալ լինի Յովհաննու Լազարեանց Շքանշան Հրամանատար կարգի Ս. Յովհաննու Երուսաղէմացւոյ:

—

Ողորմութեամբ Աստուծոյ

ՄԵՔ ՊԱՒՂՈՍ ԱՌԱՋԻՆ, ԿԱՅՍՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՑ,

և այլոց, և այլոց, և այլոց:

ՄԵՔ ՄԱԳԻՍՏՐՈՍ ՆՇԱՆԱԿԻՐ Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵՐՈՒՍԱՂԷՄԱՑՒՈՑ,

և այլոց, և այլոց, և այլոց:

Մերում սիրելւոյն մերումս՝ Ներգործական Պետական Խորհրդականի Յովհաննու Լազարեանց:

Արտեռանդն և հաւատարիմ ծառայութիւն ձեր՝ դարձոյց առ ձեզ զկայսերական Մեր ախորժութիւն: Ուստի առ 'ի ցոյց Մերոյս առ ձեզ յատկական բարեհաճութեան՝ շնորհեմք ձեզ զՇքանշան Հրամանատար կարգի Ասպետութեան Ս. Յովհաննու Երուսաղէմացւոյ, Աստուածայնումն զձեզ յանձն արարեալ խնամակալութեան: Տուեալ եղև 'ի Միխայէլովսքի անուանեալ ամրոցի մերում 'ի 24 փետրուարի 1801 ամի. 'ի հինգերորդում ամի Թագաւորութեան Մերոյ, և չորրորդում ամի Մեծի Մագիստրոսութեանս:

ՊԱՒՂՈՍ.

Մեծ Ատենադպիր (*Великой Канцлеръ*) կոմս Ֆոն-Տէր-Փալէն:

Ծանօթ. Զռուս բնագիրն գտցես 'ի նախայիշատակեալն մատենի. 'ի հատ. ա. յեր. 245. 246:

9.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Վկայագրի նահանգին Մոսկուայ, տուելոյ 'ի նահանգային Ազնուական նախագահէ, և 'ի Վիճակային Ազնուական Պատգամաւորաց՝ ժողովելոց յաղագս յօրինման Տոհմագրի Ազնուականութեան Տ. Յովակիմայ Լազարեան Լազարեանց։

Հայելով 'ի հիմունս Հրովարտակին Ամենողորմածաբար պարգևելոյ 'ի Նորին Կայսերական Մեծութենէ 'ի 21 Ապրիլի 1785 ամի, և 'ի վկայագիրս Ազնուականութեան 'ի յայտ բերեալս կանխաւ 'ի նոյն Լազարեանց Տեառնէն յապացոյց Ազնուատոհմական արժանեաց իւրոց, զորս և ծանեաք զայնս՝ համաձայնս կանոնացն առաջնոց եղելոց 'ի մասին այնորիկ։ Ուստի ըստ զօրութեան եօթանասներորդ եօթներորդ յօդուածոյ ծանուցեալն Հրովարտակի՝ թէ նա և թէ սերունդք նորա արձանագրեալք են յառաջնում մասին գրոց ազգաբանութեան Ազնուականաց նահանգին Մոսկուայ։ Յորոյ 'ի վկայութիւն մեք Նահանգային Ազնուական Գահերէց և Պատգամաւորք, 'ի լրումն հանճոյից Նորին Գերամբարձ Կայսերական Մեծութեան՝ տուաք նմա զայս վկայագիր մերովք ստորագրութեամբք, հաստատելով զայն կնքով ժողովոյն Ազնուականաց նահանգին Մոսկուայ, յ30 Ապրիլի 1792 ամի։

Հմր 372.

(Ստորագրեցին) Նահանգային Ազնուական Գահագլուխ՝ Իվան Արխարով։
Պատգամաւոր վիճակին Մոժայսկոյ՝ Նիկօլայ Բուլգակով։
Պատգամաւոր վիճակին Պրոննիցայ՝ Նիկօլայ Իվանովիչ Փէտրով։
Պատգամաւոր վիճակին Մոքոլամայ՝ Քնեազ Ալեքսեյ Շախովսքոյ։
Պատգամաւոր վիճակին Բրոլոմնայ՝ Նիկօլայ Սերգով։
Պատգամաւոր վիճակին Զվենիգորոդայ՝ Իվան...։
Պատգամաւոր վիճակին Մոսկուայ՝ Քնեազ Իվան Թրուբեցկոյ։
Պատգամաւոր վիճակին Մամոյայ՝ Փէտր Սովէլով։
Պատգամաւոր վիճակին Սերփուխովայ՝ Ալեքսանդր Քուրղուզէվ։
Պատգամաւոր վիճակին Փոտոլսքայ՝ Քնեազ Ալեքսանդր...։
Պատգամաւոր վիճակին Բլինսքայ՝ Քնեազ Լոփուխին։
Քարտուղար Ազնուականաց ժողովոյն՝ Միխայլ Նարիշկին։

10.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Պարգևական Հրովարտակի կայսեր Ռուսաց՝ Աղէքսանդրի Ա. որով Յարութիւն Յովակիմեան Լազարեանց կարգեցաւ Թարգման 'ի կայսերական Ատենի Արտաքին գործոց։

—

Ողորմութեամբ Աստուծոյ

ՄԵՔ ԱՂԷՔՍԱՆԴՐ ԱՌԱՋԻՆ, ԿԱՅՍՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՑ,

և այլոց, և այլոց, և այլոց։

Յայտնի և գիտելի լիցի իւրաքանչիւր ումեք, զի Մեք զՅարութիւն Լազարեանց՝ որ ծառայէրն մեզ պաշտամամբ խնդէրի, 'ի տրիտուր հաւատարմութեանն և ժրաջանութեան 'ի ծառայութեան՝ հաստատեցաք Թարգմանիչ 'ի Մերում Կայսերական Ատենի Արտաքին Գործոց յամին հազար ութ հարիւր հինգ, 'ի քսան և իննն Օգոստոսի. ուստի և հրամայեմք այսու ամենայն հպատակաց Մերոց՝ զՅարութիւն Լազարեանց՝ զծառայողն 'ի Մերում Կայսերական Ատենի Արտաքին Գործոց պաշտամամբ Թարգմանչի, ճանաչել և պատուել պատշաճապէս։ Եւ Մեք ակն ունիմք, թէ նա յայսմ՝ յառ 'ի Մէնջ նմա պարգևեալս յաստիճանի այնպէս անարատաբար և ժրաջանութեամբ ընթասցի, որպէս վայել է հաւատարիմ հպատակի։ 'Ի վկայութիւն այսորիկ՝ հրամայեցաք Կառավարող Ծերակուտին՝ ստորագրել զայս, և Մերով Թագաւորական կնքով ամրացուցանել։ Տուեալ 'ի Ս. Փեթերպուրկ յ30 Յուլիսի 1811 ամի։

(Ի բնագրին) Ատենակալ Ծերակուտի և Ասպետ կոմս Սերգէյ Սալթիքով։
Ատենակալ Ծերակուտի և Ասպետ Տմիտրէյ Իվանով։
Ատենակալ Ծերակուտի և Ասպետ կոմս Լէվ։
Օգնական Գլխաւոր Տեսչի Կայսերական Ատենի, և Ասպետ
Վասիլէյ Բրոնովսկէյ։
Ատենադպիր Եգոր Իվանով։
(Տեղի Կնքոյ)
Գրեալ է 'ի մատենի ընդ համբ 1370։
Ի տպեալն 'ի Կայսերական Ատենի Արտաքին գործոց՝ համր 2630։

11.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Վկայագրի տուելոյ Տ. Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց 'ի Խորհրդարանէ »Педагогическій« անուանեալ ուսումնարանին Ս. Փեթերբուրգայ, յաղագս յառաջադիմութեանց նորա յուսմունս լեզուաց և գիտութեանց:

Թարգման Կայսերական Ատենի (Коллегія) Արտաքին Գործոց՝ Խաչատուր Լազարեանց, 'ի հարցաքննութեանն որ եղև 'ի ժողովի հաստատելոյ ըստ Բարձրագոյն Կայսերական Հրովարտակի 'ի 6էն Օգոստոսի 1809 ամի՝ յաղագս հարցաքննութեան 'ի Педагогическій անուանեալ Ուսումնարանի Ս. Փեթերբուրգայ, եցոյց զ'ի ստորև նշանակեալ յառաջադիմութիւնս: —

Ունի Քերականական տեղեկութիւն զՌուս լեզուէ, և շարադրէ 'ի նոյն լեզու ըստ կանոնի. թարգմանէ 'ի Գաղղիական և 'ի Գերմանական լեզուաց 'ի Ռուս՝ յաջողակի. ունի ծանօթութիւն զօրինաց գլխապարտութեան կամ քրէական յանցանաց. ըզԹուաբանութիւն և զԱշխարհագրութիւն գիտէ կարի քաջ. 'ի Բնաբանութեան, 'ի Համաշխարհական Պատմութեան, 'ի Ժամանակագրութեան, յընդհանուր և 'ի Ռուսաց Աշխարհագրութեան, յԸնդհանուր և 'ի Ռուսաց վիճակագրութեան (Статистика), և 'ի Տնտեսութեան Տէրութեան (Государственная Экономія), քաջ է. Պատմութեան Ռուսաց, Բնական և Հռովմէական օրինաց, ևս և յարաբերութեան վերջնոյս առ օրէնս Ռուսաց՝ հիմնապէս տեղեակ:

Ի վկայութիւն այսորիկ՝ տուաւ նմա այս Վկայագիր 'ի Խորհրդարանէ (Отъ Конференціи) նոյն Ուսումնարանի՝ դրութեամբ Կնքոյ նորին, 'ի 15 Յունիսի 1812 ամի:

(Ի բնագրին) Ն. Մ—րթե—վ:

Մաղխաս Սֆերն:

12.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Ի կայսերէ տուելոյ Տ. Յովակիմայ Լազարեան Լազարեանց 'ի Գահերիցէ Ազնուականացն Ս. Փեթերբուրգայ, յաղագս կրելոյ զոսկեպղնձեայ Շքադրամ Վլատիմիրեան ժապաւինաւ:

—

Տեառն Ազնուականին Յովակիմայ Լազարեան Լազարեանց:

Յետ պատերազմին ընդ Գաղղիացւոց՝ որ յաջողապէս վախճան էառ օգնականութեամբ Բարձրելոյն, հաճոյ թուեցաւ Նորին Կայսերական Մեծութեան Ամենողորմած Թագաւորի Մերում 'ի միջի բազմաց ողորմութեանց պարգևելոց առ հասարակ ամենայն հաւատարիմ հպատակաց իւրոց, մեծարել զբարետոհմիկ Ազնուականսն Ռուսաց առանձին իմն նշանաւ Խորին Բարձրագոյն Միապետական բարեհաճութեան և երախտագիտութեան, որք բացայայտեալք են 'ի Յայտարարութեանն (**Манифестъ**) *յ*30*էն Օգոստոսի* **1814** *ամի՝ հետագայ բանիւքս:*

,,Բարետոհմիկ Ազնուականքն մեր՝ որք հաւատարիմ և ամուր պարիսպ են Աթոռոյ (Թագաւորութեանս) և միանգամայն սիրտ և հոգի ժողովրդեան, որք 'ի վաղուց անտի բարեհամբաւեալք են 'ի քաջութեան և 'ի բարեպաշտութեան, որք 'ի վաղուց անտի բազմադէմ փորձիւք ապացուցեալ են զանդրդուելին իւրեանց զսէր առ Հայրենիս. և որք առաւելապէս զարդիս երևեցուցին զանօրինակ հաւատարմութիւն իւրեանց առատագոյն նուիրաբերութեամբ ոչ միայն ստացուածոց՝ այլ և արեան և կենաց, զարդարեսցին ոսկեպղնձեայ Շքադրամաւ 'ի վերայ Վլատիմիրեան ժապաւինի, այնու ձևակերպութեամբ՝ որ դրոշմի արդէն 'ի վերայ Շքադրամոյն սահմանելոյ յամին **1812**: *Զայս ոսկեպղնձեայ Շքադրամ՝ զհամանմանն ոգւոց նոցին ամրութեան՝ կրեսցեն հարք կամ երիցագոյնք գերդաստանաց. յորս՝ յետ մահուան կրողացն՝ կացցէ մնասցէ այն 'ի պահեստի առ յետնորդս նոցա՝ իբրև նշանակ անմոռանալի ծառայութեանց առ Հայրենիս՝ ցուցելոց 'ի Նախնեաց նոցա յայսմ ամի:*

Այժմ այս ամենայնձեւոյ Շ․քադրամք հաւատալք են առ խաղաղս զարդարելոյ նորին զԱզնուական նահանգըն Ս. Փեթերբուրկոյ: Ուստի և ես 'ի կատարել զհրաման Կառավարող Ծերակուտին՝ առաքեմ ընդ սմին զմի յայնց Շ․քադրամաց առ Ձեր Ազնուականութիւն առ 'ի կրել Վլադիմիրեան ժապաւինաւ յօձիս, որպէս հրամայեալն է 'ի Բարձրագոյն Յայտարարութեան Նորին Կայսերական Մեծութեան, և 'ի Հրովարտակին՝ որ տուաւ յանուն Տ. Նախարարին Խրատուց յ30 Օգոստոսի 1814 ամի:

'Ի բնագրին. Նահանգային գահերէց Ազնուականաց Ս. Փեթերբուրկոյ,
Ներգործական Պետական Խորհրդական, և Նշանակիր Ասպետ
Ս. Աննայի ա աստիճանի Ալէքսէյ Մերէզով:

Ծանօթ. Ըստ այսմ զօրութեան են և գրութիւնք առաքեալք յանուն որդւոց նորա՝ Յովհաննու, Խաչատրոյ և Լազարու Լազարեանց, հանդերձ Շ․քադրամօք:

13.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Պարգեւագրին՝ որով Յովհաննու Յովակիմեան Լազարեանց տուեալ եղև Ասպետական Շքանշան Հրամանատար կարգի Ս. Յովհաննու Երուսաղեմացւոյ:

Թագաւորութեան Սարդենիոյ՝ արքայ Կարլի Դեսպան՝ Դուքս Սերա Կափրիօլա, Բարձրաստիճան Պաշտօնակալ Թագաւորութեան Սարդենիոյ, Հրամանատար ամենայն Ասպետանշանաց աւագին աստիճանաց, յորոց կարգի՝ և աւագին Ասպետանշանի Ռուսաց՝ Ս. Անդրէի Նախակոչ Առաքելոյ Ասպետ, Կառավարող գործոց կղզւոյն Մալթայի:

Եղբայր Անդրէաս Տէօ Գօվանի Սինթէլ, խոնարհ ունակ լեակատար իշխանութեան՝ կատարող Կառավարութեան և իշխանութեան Հզօրաւոր Ատենի (Կափիթուլի) Արքայական Ասպետանշանի Ս. Յովհաննու Երուսաղէմացւոյ, և Օրինաւորական Շքա-

նշանի Ս. Գերեզմանի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ամենեցուն և իւրաքանչիւր ումեք ողջոյն և յարգանք: Ծանիցեն նոքա և պահեսցեն զսահմանեալն ըստ օրինաց և ըստ կանոնի:

Գիտասցեն ստուգիւ զայս կանոնաւոր յայտարարութիւն, զի հաստատեալն աստէն Կոնդակ (Булла) է հրաման, բովանդակութիւն և քաղուած 'ի Կոնդակէ պահպանելոյ 'ի մերում Թագաւորական Դիւանի: Միտք և զօրութիւն այսր Կոնդակի պարփակի 'ի հետևեալդ:

'Ի Թուոյ մերոցն ունողաց գլխաւոր իշխանութիւն՝ եղբայր մեր Անդրէաս Տէօ Գօլանի Սէնթէլ, խոնարհ՝ ունող գլխաւոր իշխանութիւն Գլխաւոր Ատենի (Քափիթուլի) և Կառավարութեան Արքայական Ասպետանշանի Ս. Յովհաննու Երուսաղէմացւոյ (ունողի տեղի բնակութեան զմայրաքաղաքն կղզւոյն Մալթայի), և Զինուորական Շքանշանի Ս. Գերեզմանի Տեառն մերոյ փրկչի, և մեք եղբարք այսր ընկերութեան և Արքայական Շքանշանաց, 'ի մերում համաժողով գումարման սահմանեցաք և հաստատեցաք: — Ազնուատոհմիկ առն՝ Յովհաննու Յովակիմեան Լազարեանց, մերում եղբայրակցի և բարեկամի, ողջոյն՝ պատիւ, և որ մեծն է՝ առաքեմք զօրհնութիւն Տեառն մերոյ, Ազատարարի ազգի մարդկան: Զեր Ազնուական վեհանձնութիւն, Զեր բարուց մաքրութիւն, Զեր յօժարամիտ բերումն և հաւատարմութիւն առ Շքանշանն մեր, ես և սեպհականն Զեզ 'ի բնէ՝ բարեգործութեան ջան և փոյթ, միանգամայն այդ ամենայն գովանի հանգամանք արժանաւորագոյն զԶեզ կացուցանեն. և զհատարակացն զրաւեն զառանձին զբարեհաճ նկատումն և զվարձատրութի:

Ուշ եղեալ հաւաստագոյն պատճառաւս, համաձայն Զերումդ փափագանաց և խնդրոյ՝ մեք, ըստ հասարակականն վարկածի և լիակատար իշխանութեան տուելոյ 'ի Բարձրագոյն իշխանութենէ մերս Արքայական Շքանշանի՝ և մեծի Գլխաւոր Տեաչի (Гроc-мейстеръ) պարգևեմք Զեզ զօրութեամբ Կոնդակի ըստ տարազու (по формѣ) զոսկեայ՝ սպիտակ արծնապակեայ (съ бѣ-

лою Эмалью) Շքանշան Ս. Յովհաննու Երուսաղէմացւոյ, մայրաքաղաքի կղզւոյն Մալթայի, հանդերձ իրաւամբք սեպհականելովք Շքանշանին՝ առ 'ի կրել 'ի վերայ Ձեր: 'Ի վերայ այսր՝ պարգեւեմք Ձեզ՝ որպէս զառանձնաշնորհութիւնն, նոյն եւ զազատութիւն (свободу):

Առ 'ի վաւերականութիւն եւ 'ի վկայութիւն այսորիկ եւ նոյն իսկ ճշմարտութեան՝ մուծաւ այս իրաւունք Ձեր եւ պարգեւընկալութիւն 'ի քաղուածս եւ յօրագիրս ժողովոյն մերոյ՝ որ հաստատեալն է կոնդակաւ, հանդերձ յարադրութեամբ կնքոյ Արքայական Շքանշանի: (Նշի) Ձեզ յարատեւել նոյնպէս 'ի բարեպաշտութեան ըստ զօրութեան կարգին, ընդ զառ 'ի Շքանշանէս 'ի վերայ եդեալ զպարտն, 'ի բաց հերքել զդժողութիւնն:

Անցեալ քաղուածս այս Պարգեւագրի եւ Հրովարտակի: Վաւերական ստորագրութեամբ եւ Արքունի կնքով տուեալ լինի Ձեզ այն:

Տուաւ 'ի Քաղաքն՝ ուր Քափիթուլն է: Եղբայրակից Ձեր եւ Ընդամակից՝
փոխանակ — Դպրապետի (Вице Канцлеръ) Ամադէօ Վէլլա:
Մուծաւ 'ի Քաղուածն, 'ի Դիւանատան, 'ի Ս. Փեթերպուրկ. համար 47.
'ի 6 Դեկտեմբերի 1816 ամի:
Համեմատ է բնագրին. Ասպետ Յովհաննէս Անդրէաս Տէօ Գօլճեն:
Գլխաւոր Դիւանադպիր եւ ունող գլխաւոր իշխանութիւն Քարողչաց եւ Դեսպանութեան Արքայական Շքանշանի Ս. Յովհաննու Երուսաղէմացւոյ Մալթայի:

Ծանօթ. Սովին մօք եւ զօրութեամբ՝ եւ եղբարց նորա՝ Խաչատրոյ եւ Լազարոյ Լազարեանց տուեալ են Պարգեւագիրք վասն կրելոյ զՇքանշանն Ս. Յովհաննու Երուսաղէմացւոյ

14.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Յայտարար նամակի կոմսին Նեսսելրոդայ առ Յովհաննէս Յովակիմեան Լազարեանց. որով ծանուցանէ նմա զԲարձրագոյն հաճութիւն կայսեր յաղագս թոյլ տալոյ կրել զխաչն Ասպետական կարգի Ս. Յովհաննու Երուսաղէմացւոյ։

—

Ողորմած Տէր իմ, Յովհաննէս Յովակիմեան,

Նորին Կայսերական Մեծութիւնն Բարձրագոյն հաճութեամբ թոյլ տայ Ձեզ կրել զխաչն Ասպետական Կարգի Սրբոյն Յովհաննու Երուսաղէմացւոյ՝ որ ընդ ձեռն Նախարարին Նէապօլեայ Տ. Տիւք — Սէրրայ Կափրիոլեայ առաքեցաւ է Ձեզ օրինաւոր Պարգեւագրաւ ՚ի հաստատութիւն ամբառնալոյ Ձեր ՚ի սոյն կոչումն Ասպետական։

Ծանուցանելով Ձեզ զայս Բարձրագոյն հաճութիւն (Կայսեր), մնամ իսկական յարգանօք

Ձեզ, Ողորմած Տէր իմ, խոնարհ ծառայ կոմս Նեսսելրօտ։
հմր 6727. ՚ի 28 դեկտեմբերի 1816 ամի։

15.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Յայտարար նամակի կոմսին Նեսսելրոդայ առ Խաչատուր Յովակիմեան Լազարեանց. որով ծանուցանէ նմա զԲարձրագոյն հաճութիւն կայսեր յաղագս թոյլ տալոյ կրել զխաչն Ասպետական կարգի Ս. Յովհաննու Երուսաղէմացւոյ։

—

Ողորմած Տէր իմ, Խաչատուր Յովակիմեան,

Նորին Կայսերական Մեծութիւնն Բարձրագոյն կամօք թոյլ տայ Ձեզ կրել զխաչն Ասպետական կարգի Սրբոյն Յովհաննու Երուսաղէմացւոյ, որ ընդ ձեռն Նախարարին Նէապօլեայ Տ.

Տիւք - Սերգեայ Վասիլեւեայ առաքեցեալ է Ձեզ օրինաւոր Պարգեւագրաւ 'ի հաստատութիւն ամրանալոյ Ձեր 'ի սոյն կոչումն Նախետական:

Ողջունելով Ձեզ այս Բարձրագոյն հաճութիւն (Կայսեր), մնամ խնական յարգանօք

Ձեզ, Ողորմած Տէր իմ, խոնարհ ծառայ կոմս Նեսսելրօտ:

Համ 6728. 'ի 28 դեկտեմբերի 1816 ամի:

16.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Ի կնքագրի տուելոյ Տ. Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց 'ի Բնաքննեաց կայսերական ընկերութենէն Մոսկուայ, յաղագս համաձայնելոյ նորա ընդ պատուանուն Անդամս նորին ընկերութեան:

—

Ըստ Հրամանի Օգոստափառ և Մեծազօր Թագաւորի

ԱՂԵՔՍԱՆԴՐԻ ԱՌԱՋՆՈՅ ԿԱՅՍԵՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼԻ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՑ,

և այլոց, և այլոց, և այլոց:

Ընդ Նախագահութեամբ Ալեքսեայ Կիրիլովիչի Կոմսի Ռազումովսքեայ, Ներգործական Ներքին Խորհրդականի և Սենեկապետի, Անդամոյ Կայսերական Խորհրդանոցի (Совѣта) և Նախետի Կարգաց՝ Ս. Աղեքսանդրի Նեւսկւոյ, և Վլատիմիրայ առաջին աստիճանի,

Քննողաց (Испытателей)

Կայսերական Ընկերութիւն Մոսկուայ,

՚ի գումարման ՚ի 15 Մայիսի 1817 ամի համաթուեաց ընդ իւրոց Պատուանուն Անդամոց Զմեծապատուելին Ազնուական (Высокоблагородный) և զհռչակաւոր այրն՝ զԽաչատուր Յովակիմեան Լազարեանց։

Յանուանէ Բնագիտաց կայսերական ընկերութեան
կարգավար (Директоръ)
Գեզեմպօնիկ Գէշէր
Ատենադպիր
Փ. Տր--ձէնէ։

Հանրական ժողով այսր ընկերութեան 1817 ամի։ Համար 79։

17.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Վկայագրի տուելոյ Տ. Յովհաննու Յովակիմեան Լազարեանց ՚ի կառավարութենէ կայսերական Համալսարանին Մոսկուայ, յաղագս յառաջադիմութեանց նորա յուսմունս լեզուաց և գիտութեանց։

Ատենական խորհրդականն և Ասպետ Յովհաննէս Լազարեանց, ՚ի հարցաքննութեանն՝ որ եղև ՚ի ժողովի հաստատելոյ Բարձրագոյն Հրովարտակաւ ՚ի 6էն Օգոստոսի ՚ի Կայսերական Համալսարանին Մոսկուայ, ՚ի զանազան լեզուս և ՚ի գիտութիւնս նշանակեալս ՚ի նմին Հրովարտակի՝ եցոյց զհետևեալ յառաջադիմութիւնս։

1) ՚Ի Քերականական հմտութեան Ռուս լեզուի, ՚ի շարադրութեան ՚ի նոյն բարբառ, և ՚ի թարգմանութիւնս ՚ի Գաղղիական և ՚ի Գերմանական լեզուաց ՚ի Ռուս, քաջ։ 2) ՚Ի կանոնս Բնական՝ Հռովմէական՝ և Մասնաւոր Քաղաքական իրաւանց, և ՚ի յարակցեալն ընդ վերջնոյս ՚ի Ռուսացն օրինագիտութեան, ևս և յօրէնս՝ որ վասն գլխապարտութեան և քրէական յանցանաց՝ և

Տնտեսութեան Տէրութեան, բաւական։ 3) 'Ի Պատմութեան Ռուսաց, 'ի Համաշխարհական Պատմութեան՝ 'ի Հին և 'ի Նորն, և 'ի մասունս առ այն պատկանեալս, այն է՝ յԱշխարհագրութեան, 'ի ժամանակագրութեան, նոյնպէս և 'ի վիճակագրութեան՝ մանաւանդ Ռուսաց Տէրութեան, բաւական։ 4) 'Ի Թուաբանութեան, քաջ։ յԵրկրաչափութեան, և 'ի բնագիտութեան, բաւական։

'Ի վկայութիւն այսոցիկ՝ տուեալ լինի նմին Լազարեանց Տեառնն վկայագիրս այս 'ի Կառավարութենէ Կայսերական Համալսարանին Մոսկուայ 'ի 4 Ապրիլի 1821 ամի։

('Ի Բնագրին) Կարգավար Անտոն Փրոկոփովիչ Անտոնսկի։

Գլխաւոր ուսուցչապետ (деканъ) Իվան Տվիգուպսկի։

Գլխաւոր ուսուցչապետ Ալէքսէյ Մէրզլեակով։

Ատենադպիր Քոնստանտին Մոտիլէվ։

Գրասեղանապետ (Столоначальникъ) Ատենական Քարտուղար Զախարով։

'Ի վերայ վկայագրիս դրոյ կնիք նորին Կայսերական Մեծութեան՝ Համալսարանին Մոսկուայ։

(տեղի կնքոյ)։

Համ 711։

18.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Վկայագրի տուելոյ Տ. Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց 'ի Շինական Տնտեսութեան կայսերական ընկերութենէ Մոսկուայ, յաղագս կարգելոյ նորա 'ի թիւս գործօնեայ Անդամոց նորին ընկերութեան։

—

Ընդ Բարձրագոյն հովանաւորութեամբ Մեծի Ամենալուսափայլ Հզօր Թագաւորի

ԱՂԵՔՍԱՆԴՐԻ ԱՌԱՋՆՈՅ ԿԱՅՍԵՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼԻ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՑ,

և այլոց, և այլոց, և այլոց։

Շինական Տնտեսութեան կայսերական Ընկերութիւն Մոսկուայ, կարգելով զարգասիս ջանից Տեառն Խորհրդականի Պա-

լատն՝ Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց՝ գործակից եղելոյ 'ի յառաջադիմութիւն Հայկական Տնտեսութեան 'ի Ռուսիա, ծանեաւ և ընկալաւ զՆա 'ի հանրական ժողովն որ եղև յ3 Յուլիսի 1823 ամի՝ Խոր Գործունեայ Անդամ:

(Ի բնագրին) Նախագահ ընկերութեան Գօլիցին:
Կարգավար Գոթթգելֆ Ֆիշէր:
Ատենադպիր Խորհրդանոցի Ստեֆան Մոլլ:

(տեղի կնքոյ)
հմր 255:

19,

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Պարգևական Հրովարտակի Կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. որով Լազար Յովակիմեան Լազարեանց ամբարձաւ յԱստիճան Գնդապետի:

—

Ողորմութեամբ Աստուծոյ

ՄԵՔ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՌԱՋԻՆ ԿԱՅՍՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՑ,

և այլոց, և այլոց, և այլոց:

Յայտնի և գիտելի լիցի իւրաքանչիւր ումեք, զի Մեք զԼազար Լազարեանց, որ ծառայէրն Մեզ պաշտամամբ Վաշտապետի (Ротмистръ) Թիկնապահ զօրու, 'ի տրիտուր հաւատարմութեանն և փութաջանութեանն ցուցելոյ 'ի նմանէ 'ի ծառայութեանն՝ զոր ծառայեաց Մեզ, ամբարձաք Ամենողորմածաբար յաստիճան Գնդապետի յամի հազար ութհարիւր քսան և վեց, 'ի Յանուարի քսան և ութ. զոր և հաստատեալ այսու՝ հրամայեմք ամենայն հպատակաց Մերոց՝ զնոյն ինքն զԼազար Լազարեանց զծառայողն Մեզ պաշտամամբ Գնդապետի՝ պարտուպատշաճ եղանակաւ ճանաչել և պատուել: Եւ Մեք ակն ունիմք, թէ նա յայսմ յառ 'ի Մէնջ պարգևեալս յաստիճանի՝ այնպէս հա-

ւստարիմաբար և ժրաջանութեամբ ընթացի, որպէս վայելէ հաւատարիմ և բարեմիտ պաշտօնէի (Офицеръ)։ 'Ի վկայութիւն այսորիկ՝ հրամայեցաք Մերում Գլխաւոր Ատենի Զինուորական կառավարութեան (Штабъ) ստորագրել զայս և Մերով Թագաւորական կնքով ամրացուցանել։ Տուեալ 'ի Ս. Փեթերբուրգ, 'ի 14 Յունիսի 1826 ամի։

(Ստորագրեցին) Պետ Գլխաւոր Զինուորական Ատենի

Օրապահական Զօրագլուխ (Дежурный Генералъ) Փոթափոֆ։
Կատարող պարտաւորութեան փոխանակի կառավարչի։

20.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Յայտարար նամակի կոմսին Նեսսելրոտայ. որով ազդ առնէ նա Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց 'ի լրումն Բարձրագոյն կամաց Կայսեր, գործակից լինել Օժանդակ Զօրապետին Պենկենտորֆայ 'ի կատարումն առանձին յանձնարարութեանց։

—

Ողորմած Տէր իմ, Խաչատուր Յովակիմեան,

'Ի լրումն Բարձրագոյն կամաց Օգոստափառ Կայսեր՝ գրեմ Ձեզ յանդիման լինել Օժանդակ Զօրապետին Պենկենտորֆայ, կատարել զամենայն՝ որ ինչ յանձնեսցի Ձեզ 'ի նմանէ, և կալ ընդ իշխանութեամբ նորա։ 'Ի վերայ այսր ամենայնի՝ մատչիք Դուք ըստ առաջնոյն 'ի կարգի Պաշտօնատարաց Կայսերական Դիւանի Արտաքին Գործոց։

Ներկայս եմ ես՝ թէ Դուք Ձերով ջերմեռանդութեամբ և զգուշաւորութեամբ 'ի կատարման անդ յանձնարարութեանցն՝ որք 'ի Ձեր վերայ ունին դնիլ 'ի Տ. Օժանդակ Զօրապետէն Պենկենտորֆայ, դարձուսջիք զբարեհաճ ուշադրութիւն նորա առ Ձեզ։

Մնամ խականն յարգանօք խոնարհ ծառայ Ձեր Կոմս Նեսսելրոտ։
'Ի Մոսկուա. Համար 876։
'Ի 12 Սեպտեմբերի 1826 ամի։

21.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Պարգեւական Հրովարտակի կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. որով տուաւ Յովհաննու Յովակիմեան Լազարեանց Աստիճան Պետական Խորհրդականի:

—

Ողորմութեամբ Աստուծոյ

ՄԵՔ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՌԱՋԻՆ, ԿԱՅՍՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՑ,

և այլոց, և այլոց, և այլոց:

Յայտնի և գիտելի լիցի իւրաքանչիւր ումեք, զի երջանիկն և արժանին յաւէժական յիշատակաց, ամենապայծառ հզօր Մեր-նական, Մեծ Թագաւոր Աղէքսանդր փաւլովիչ Կայսր ամենայն Ռուսաց, Մերս ամենասիրելի եղբայր, Յովհաննու Լազարեանց՝ որ ծառայէրն Նորին Մեծութեան՝ պաշտամամբ Դիւանական Խորհրդականի, յաղագս հաւատարմութեանն և ջանիցն ցուցելոց 'ի նմանէ 'ի ծառայութեան, ամենողորմածաբար պարգևեալ էր զԱստիճան Պետական Խորհրդականի 'ի հազար ութ հարիւր քսան երեք ամի, յիններորդում աւուր Հոկտեմբերի. բայց Պարգևական վկայագիրն (патента) վասն այսր Աստիճանի՝ չէր տուեալ նմա մինչև ցայժմ: Այլ աղագաւ Մեք այսու պարգևեմք և հաստատեմք՝ հրամայելով ամենայն հպատակաց Մերոց, զի զնա ինքն զՅովհաննէս Լազարեանց ծանիցեն և պատուեսցեն ըստ արժանավայելուչն կարգի իբրև զՄեր Պետական Խորհրդական: Եւ Մեք ակն ունիմք, թէ նա 'ի սմին յառ 'ի Մէնջ պարգևեալս յաստիճանի՝ այնպէս անարատ և փութաջան զանձն հանդիսացուցէ, որպէս պատկանի հաւատարիմ հպատակի: 'Ի վկայութիւն այսորիկ հրամայեցաք Կառավարող Ծերակուտին ստորագրել զայն, և Մե-

րով Թագաւորական կնքով ամրացուցանել։ Տուեալ եղև 'ի Ս. Փ. պուրկ, 'ի 5 Յուլիսի 1827 ամի։

Ատենակալ Ծերակուտի և Ասպետ Փաւէլ Փուշչին։
Ատենակալ Ծերակուտի և Ասպետ Քիրիլլ Մէշչէրսկէյ։
Ատենակալ Ծերակուտի և Ասպետ Վլադէմէր Կրաշէնէկէյ։
Ատենակալ Ծերակուտի և Ասպետ Փաւէլ Լանսկօյ։
Ատենակալ Ծերակուտի և Ասպետ Ցարէվէչ Գագարին։
Կերոլտմէյսթէր և Ասպետ Ալէքսանդր Ջէմչուժնէկ։

Ծանօթ. Ռուս բնագիր հրովարտակիս գտանի 'ի գիրսն Собраніе Актовъ տպ. 'ի Մոսկուա յամին 1833. հատ. Ա. յեր. 264։

22.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Յայտարար Նամակի Ատենին (Փափիլթուլին) կայսերական Ասպետանշանաց Ռուսաց. որով ծանուցանի Տ. Յովհաննու Յովակիմեան Լազարեանց ամբառնալ նորա 'ի կոչումն Պատուաւոր Ատենակալի (Հերոլտի) 'ի Տեսչութեան Ասպետանշանի Ս. Նախակոչ Առաքելոյն Անդրէի։

Քափիթուլ կայսերական Ասպետանշանաց Ռուսաց։

1. Էքսպէդիցիա։
'ի 20 փետրուարի 1829 ամի. համար 668։

Առաքմամբ հասարակական նշանի Ասպետական կարգի Ս. Առաքելոյն Անդրէի։

Ծառայողին առընթեր Զինուորական ընդհանուր Նահանգապետի Մոսկուայ՝ Տ. Պետական Խորհրդականին և Ասպետին (Յովհաննու) Լազարեանց։

Օգոստափառ Կայսրն՝ համաձայն խնդրոյ ամենախոնարհ առաջարկութեան՝ 'ի 19 այսր փետրուարի Բարձրագոյն կամօք հրամայել հաճեցաւ՝ ամբառնալ զՁեզ 'ի կոչումն Պատուաւոր Ատենակալի 'ի Տեսչութեան Ասպետանշանի Ս. Նախակոչ Առաքելոյն Անդրէի, առանց թոշակի, կրելով զհասարակական (Оффиціальный) նշանն։

Ախորժական ինձ համարելով պարտաւորութիւն ծանուցանել Ձեզ զայսմ Բարձրագոյն հաճութենէ, և ընդ սմին 'ի միասին առաքել զհրատարակական նշանն Ասպետական կարգի Ս. Անդրէի՝ առ ի կրելոյ ըստ սահմանելումն, խնդրեմ խոնարհաբար զեկուցանել ինձ զստացմանէ նորին։

Գլխաւորապետ Ասպետանշանաց Ռուսաց Քնեազ Ալեքսէյ Քուրաքին։

23.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Պարգևական Հրովարտակի կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. որով Խաչատուր Յովակիմեան Լազարեանց ամբարձաւ յԱստիճան Պետական խորհրդականի։

—

Ողորմութեամբ Աստուծոյ

ՄԵՔ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՌԱՋԻՆ, ԿԱՅՍՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՑ,

և այլոց, և այլոց, և այլոց։

Յայտնի և գիտելի լիցի իւրաքանչիւր ումեք, զի Մեք ըզԽաչատուր Լազարեանց՝ որ ծառայէրն Մեզ պաշտամամբ Ատենական խորհրդականի, յաղագս փութաջան վաստակոցն ցուցելոց 'ի նմանէ 'ի ծառայութեան առ մեզ՝ ամբարձաք Ամենողորմածաբար յԱստիճան Պետական խորհրդականի, 'ի հազար ութ հարիւր քսան և եօթն ամի, 'ի փետրուարի քսան և երկու. զոր և հաստատեալ այսու Մերով Հրովարտակաւ՝ հրամայեմք ամենայն հպատակաց մերոց՝ զնա ինքն զԽաչատուր Լազարեանց ճանաչել և յարգել արժանաւորութեամբ մեծարանօք իբրև զՄեր Պետական խորհրդական։ Եւ մեք ակն ունիմք՝ թէ յայսմ յառ 'ի մէնջ պարգևեալ յԱստիճանի այնպէս ժրափոյթ և գովանի զանձն հանդիսացուցէ նա, որպէս վայել է հաւատարիմ հպատակի։ Ի

վկայութիւն այսորիկ՝ հրամայեցաք Կառավարող Սինկղիտոսին ստորագրել զայս և ամրացուցանել Մերով Թագաւորական կնքով։

Տուեալ ՚ի Ս. Փեթերպուրգ ՚ի 25 փետրուարի 1829 ամի։

Սինկղիտիկոս և Ասպետ Սերգէյ Խիթրովօ։
Սինկղիտիկոս և Ասպետ Փետր Շուլէփով։
Սինկղիտիկոս և Ասպետ Փավել Մանսուրով։
Սինկղիտիկոս և Ասպետ Վ. Մերլինս։
Սինկղիտիկոս և Ասպետ Կոմս Գէորգ Թոլստոյ։
Սինկղիտիկոս և Ասպետ Սերգէյ Զույեւով։
Հերոլդմէյսթէր և Ասպետ Ալէքսանդր Զվանցով։

24.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Պարգևական Հրովարտակի կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. որով տուաւ Գ. Լազարայ Յովակիմեան Լազարեանց Շքանշան Ասպետական կարգի. Ս. Աննայի Բ աստիճանի.

Ողորմութեամբ Աստուծոյ

ՄԵՔ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՌԱՋԻՆ, ԿԱՅՍՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՑ,

և այլն, և այլն, և այլն։

Մերում Գնդապետի Յամպուրգի Ուլանաքի անուանեալ գնդի, (Գ. Լազարայ) Լազարեանց, ծառայողի առանձին յանձնարարութեամբ առ ընթեր Հրամանատարի Կովկասեան բանակի Օժանդակ Զօրապետին Կոմսին Փասքևիչի Երիվանսքեայ։

՚Ի տրիտուր ջանատարիմ ծառայութեան ձերոյ, և երևելի վաստակոցն՝ զորս յուցիք ՚ի մարտս պատերազմի ընդդէմ Տաճկաց ՚ի նուաճման ամրոցին Ախալցխայի յամին 1828 յՕգոստոսի 5 և 9. ուրանօր կալով Ձեր առ Օժանդակ Զօրապետին Կոմսին

Փասքեւիչի Էրիվանսքեայ՝ զամենայն զգործս Ձեր յանձնեցեալս 'ի կատար ածիք ջերմեռանդօրէն եւ շուտափիթ արագութեամբ, Հրովարտակաւ Մերով տուելով՝ 'ի 1 Յունուարի 1829 ամի 'ի Գափիթուլն՝ Ամենողորմածաբար պարգեւեցաք Ձեզ զՇքանշան Ասպետական Կարգի Ս. Աննայի երկրորդ աստիճանի: Հրամայեցաք Գափիթուլին Կայսերական Շքանշանաց Ռուսաց՝ զՊարգեւագիրս զայս ստորագրել առ 'ի վկայութիւն եւ կնքով Ասպետական կարգին ամրացուցանել, եւ զՇքանշանն առաքել առ Ձեզ:

Տուեալ 'ի Ս. Փեթերբուրգ 'ի 16 Սեպտեմբերի 1829 ամի:

(Ստորագրեցին) 'Ի պատճառս բացակայութեան Գլխաւոր Տեսչի Զօրապետ Հեծելախումբ զօրաց՝ Քնեազ Լոպանով Ռոստովսքի:
Գլխաւոր Արարողապետ՝ կոմս Փոնոցքի:
Գանձապետ Շքանշանաց՝ Քրէժանովսքի:

25.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Հաղորդակցական Գրոյ Գլխապետի Զինակիր Հեծելոց. որով առաքեաց նա առ Խաչատուր Յովակիմեան Լազարեանց զսահմանեալն 'ի յիշատակ բարեյաջող վախճանի պատերազմին ընդդէմ Տաճկաց՝ զարծաթի Շքադրամ հանդերձ ժապաւինաւ:

—

Գլխապետ Զինակիր Հեծելոց, Հրամանատար կայսերական Գլխաւոր օթեւանաց:

—

'Ի Ս. Փեթերբուրգ Հմր 1897. 'ի Դեկտեմբերի 17, 1829 ամի:

Ողորմած Տէր

Խաչատուր Յովակիմեան,

Պատիւ է ինձ առաքել ընդ սմին Ձերում Գերազանցութեան զսահմանեալն 'ի յիշատակ բարեյաջող վախճանի պատերազմին ընդդէմ Տաճկաց՝ զարծաթի շքադրամն (մետալն) հանդերձ ժապաւինաւն 'ի սին

պատկանելով, որ առաքեալն է վասն Ձեր յՕրապահ Զօրապետէն Գլխաւոր Շտաբի Նորին Կայսերական Մեծութեան, և խնդրեմ խոնարհաբար տալ ինձ ծանօթս զստացմանէ նորին։

Ի նկատման յարգանօք և հպատակութեամբ պատիւ համարիմ լինել, Ողորմած Տէր, Ձերում Բարձրատոհմութեան խոնարհագոյն ծառայ

Ա. Պենկէնդորֆ։

26.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Հաղորդակցական գրոյ Վերատեսչական Բաշխուածի Գլխաւոր Զինուորական Ատենի Կայսրութեան. որով առաքեցաւ առ Գ. Լազար Յովակիմեան Լազարեանց Պարգևագիրն յաղագս Շքանշանին Ասպետական կարգի Ս. Աննայի բ̄ աստիճանի՝ պարգևելոյ նմա ՚ի կայսերէ։

—

Վերատեսչական Բաշխուած Գլխաւոր Զինուորական Ատենի Նորին Կայսերական Մեծութեան։

—

Բաժին 3.

Սեղան 1.

—

՚Ի Ս. Փեթերբուրգ.

՚ի 28 Յունվարի 1830 ամի։

Համար 749։

Նշելումն ՚ի Հեծելազնդի Տեառն (Լազարայ) Լազարեանց։

Վերատեսչական Բաշխուածն առաքելով ընդ այսմ առ Ձերդ Բարձրատոհմութիւն զՊարգևագիրն յաղագս Ամենողորմածաբար պարգևատրութեանն եղելոյ Ձեզ Շքանշանաւ Ասպետական կարգի Ս. Աննայի երկրորդ աստիճանի ըստ միջնորդութեան Գլխաւոր Հրամանատարի Առանձին Կովկասեան բանակի Զօրագլխապետին Կոմսին Փասքևիչի Էրիվանեայ՝ ՚ի արիութեան երևելի վաստակոցն Ձերոց յայժմեան պատերազմի ընդդէմ Տաճկաց, հրամանագրէ՝ զստացմանէ նորին զեկուցանել այսմ Բաշխուածոյ։

(Ի բնագրին) փոխանակ կառավարչի ընդհանուր Զօրապետ Շոնչին։

Գրասենեկապետ Լեֆրոլեն։

27.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Պարգևական Հրովարտակի կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. որով տուաւ Տ. Յովհաննու Յովակիմեան Լազարեանց նշանն գովանի և անբիծ ծառայութեան առ 'ի կրել Վլատիմիրեան ժապաւէնաւ։

—

Օղորմութեամբ Աստուծոյ

ՄԵՔ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՌԱՋԻՆ, ԿԱՅՍՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՑ,

և այլոց, և այլոց, և այլոց։

Մերում Պետական խորհրդականի՝ ծառայողի առընթեր Զինուորական ընդհանուր Նահանգապետին Մոսկուայ՝ Յովհաննու Լազարեանց։

'Ի վարձ քսանամեայ անարատ ծառայութեան Ձերոյ՝ Ամենողորմածաբար պարգևեցաք Ձեզ 'ի 22 Օգոստոսի 1839 ամի համաձայն կանոնաց՝ զնշանն գովանի և անբիծ ծառայութեան՝ առ 'ի կրել ըստ սահմանադրեալն կարգի՝ Վլատիմիրեան ժապաւէնաւ։ Հրամայեցաք Կապիտուլին Կայսերական Ասպետանշանաց Ռուսաց՝ զՊարգևագիր սորին ստորագրել և ամրացուցանել կնքով, և զնշանն առաքել առ Ձեզ։

Տուեալ 'ի Ս. Փեթերբուրգ 12 Նոյեմբերի 1830 ամի։

(Ստորագրեցին) Կայսերական Ասպետանշանաց Ռուսաց
Ատենապետ Քնեազ Ալէքսանդր Գօլիցին։
Գանձապետ Քրիժանովսկի։
Դրան Նորին Կայսերական Մեծութեան (Гофмейстеръ)
Կոմս Իվան Մուսին - Փուշկին։
Արարողապետ (Церемонiймейстеръ) Քնեազ [illegible]

Համր 126.

28.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Յատարար նամակի կայսերութեան Զինուորական ընդհանուր Նահանգապետի Մոսկուայ. որով առաքեցան առ Յովհաննէս Յովակիմեան Լազարեան նշանքն գովանի և անարատ ծառայութեան վասն պաշտօնակատարութե նորա։

—

Կառավարութիւն Զինուորական ընդհանուր Նահանգապետի Մոսկուայ։

—

Քաղաքական Դիւանատուն.
Էքսփէտիցիա 2.
Սեղան 2.

—

Մոսկուայ.
21 Դեկտեմբերի 1830 ամ.
Համր 7822.

—

Առաքման նշանի գերօրինակ ծառայութեան։

Տ. Գեներալ խորհրդականի և Ասպետի (Յովհաննու) Լազարեանց։

Օգոստափառ Կայսրն՝ ըստ յայտարարութեան խորհրդարանի յաղագս նշանի գովանի և անարատ ծառայութեան՝ Բարձրագոյն կամօք հաճեցաւ՝ 'ի վարձ լրացուցանելոյ Ձեր զայմաննեալն ժամանակ քսանեամեայն և անարատ ծառայութեան Արքունի պաշտամանս՝ պարգևել Ձերում Բաջատոհմութեան զնշանն այդր քսանամեայ գովանի ծառայութեան։

Առաքելով զայսոսիկ նշանս վասն կրելոյ ըստ օրինադրեալն կարգի, յայտ առնեմ Ձեզ՝ զի Պարգևագիրն և ցուցակն կանոնաց զկիրառութենէ այսր նշանի. համանայն կարգաւորութեան ժողովոյն Նախարարաց Բարձրագոյնս հաստատելոյ՝ ունին հասանել Ձեզ 'ի Պաթրբուրգէ՝ յորժամ հասուսցին 'ի Ձէնջ դրամքն՝ վասն այնր սահմանեալք։

(Ստորագրեաց) Զինուորական ընդհանուր Նահանգապետ Մոսկուայ՝

Քնեազ Գոլիցին։

29.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Պարգեւական Հրովարտակի կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. որով տուաւ Տ. Յովհաննու Յովակիմեան Լազարեանց նշանն Ասպետական կարգի Ս. Աննայի Բ աստիճանի զարդարեալ կայսերական Թագիւ։

—

Ողորմութեամբ Աստուծոյ

ՄԵՔ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՌԱՋԻՆ ԿԱՅՍՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՑ,

և այլոց, և այլոց, և այլոց։

Մերում պետական խորհրդականի՝ ծառայողի առընթեր Զինուորական ընդհանուր Նահանգապետի Մոսկուայ՝ Տ. (Յովհաննու) Լազարեանց։

՚Ի վարձ փութաջան ծառայութեան Ձերոյ, և դերօրինակ ջերմեռանդութեան ցուցելոյ ՚ի գործադրութեան հնարից յաղագս կարճելոյ զմաղձայոյզ ախտն (խօլէր)՝ որ տարածեալն էր ՚ի Մոսկուա և ՚ի սահմանս նորին, ըստ առաջարկութեան Զինուորական ընդհանուր Նահանգապետին, և ըստ արժանապատ վարկածի ժողովոյն Նախարարաց, Ամենողորմածաբար պարգեւեցաք Ձեզ հրովարտակաւ տուեալ ՚ի Կապիթուլն ՚ի 22 Մայիսի 1831 ամի՝ զնշանն Ասպետական Կարգի Ս. Աննայի երկրորդ աստիճանի զարդարեալ Մերով Կայսերական Թագիւ։ Հրամայեցաք Կապիթուլին Կայսերական Ասպետանշանաց՝ ստորագրել զհրովարտակս զայս առ ՚ի վկայութիւն, և ամրացուցանել կնքով նշանին, և զնշանն Ասպետական յղել առ Ձեզ։

Տուեալ ՚ի Ս. Փեթերպուրկ ՚ի 4 Յունիսի 1831 ամի։

(Ստորագրեցին) Կայսերական Ասպետանշանաց Ռուսաց Ատենապետ՝

Ատենապետ՝ Քնեազ Ալէքսանդր Գօլիցին։

Գլխաւոր Արարողապետ՝ Կոմս Փօլոցկի։

Գանձապետ՝ Քրէշտօֆովիչ։

Արարողապետ՝ Կոմս Զաւադովսկի։

30.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Յայտարար նամակի կառավարութեան Զինուորական ընդհանուր նահանգապետի Ս. Փեթերբուրգայ, որով առաքեցաւ առ Յովհաննէս Յովակիմեան Լազարեանց ազամանդեայ մատանի պարգեւեալ նմա 'ի կայսերէ:

—

Կառավարութիւն Զինուորական ընդհանուր նահանգապետի:

—

Քաղաքական դիւանատուն.
Էքսփէտիցիա.
Սեղան.

—

Ս. Պետերբուրգ.
9 Փետրուարի 1833 ամի:
Համար 136:

—

Առաքմամբ ազամանդեայ մատանւոյ՝ ունողի զնշանագիրս անուան Նորին Մեծութեան:

Ողորմածդ տէր՝ պետական խորհրդականի և Ասպետի Յ. (Յովհաննու) Լազարեանց:

Տ. Նախարարն Արքունի գանձուց՝ Կոմն Կանկրին ընդ յարաբերական նամակի յ8էն փետրուարի առաքեաց առ իս ազամանդեայ մատանի (յորում նշանագրեալ կայ անուն Նորին Մեծութեան) Ամենողորմածաբար պարգեւեալ Ձերում Քաջատոհմութեան՝ 'ի վարձ մասնակցելոյ Ձեր 'ի կառուցումն շինուածոյն՝ որ 'ի պէտս համայնին տեսարանի արուեստակերտուածոցն Ռուսաց՝ 'ի Մոսկուա:

Առաքելով առ Քաջատոհմութիւն Ձեր զմատանիս զայս՝ խնդրեմ զստացմանէն այնորիկ տալ ինձ գիտութիւն:

(Ստորագրեաց) Զինուորական ընդհանուր Նահանգապետ Քնեազ Գօլիցին:

31.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Պարգեւական Հրովարտակի կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. որով տուեալ Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց Նշան գովանի և անարատ ծառայութեան վասն քսան և հնգամեայ պաշտօնակատարութեան՝ առ 'ի կրել Վլատիմիրեան ժապաւինաւ:

—

Ողորմութեամբ Աստուծոյ

ՄԵՔ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՌԱՋԻՆ, ԿԱՅՍՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՑ,

և այլոց, և այլոց, և այլոց:

Մերում Պետական Խորհրդականի եղելոյ 'ի պաշտօնատարութեան Նախարարութեան Արտաքին Գործոց՝ Խաչատրոյ Լազարեանց:

'Ի վարձ քսան և հնգամեայ անարատ ծառայութեան Ձերոյ՝ Ամենողորմածաբար պարգևեցաք Ձեզ 'ի 22 Օգոստոսի 1833 ամի զնշանն գովանի և անարատ ծառայութեան ըստ սահմանադրութեանն եղելոյ զայնմանէ՝ առ 'ի կրել ըստ կանոնայն կարգի Վլատիմիրեան ժապաւինաւ: Հրամայեցաք Կափիթուլին Կայսերական և Թագաւորական Ասպետանշանաց Ռուսաց՝ զՀրովարտակս զայս ստորագրել 'ի վկայութիւն և ամրացուցանել կնքով, և զնշանն գովանի ծառայութեան առաքել առ Ձեզ:

Տուեալ 'ի Ս. Փեթերպուրգ, 'ի 16 Նոյեմբերի 1833 ամի:

(Ստորագրեցին) Կայսերական և Թագաւորական Ասպետանշանաց Ռուսաց
Գլխաւոր Տեսուչ՝ Քնեազ Ալէքսանդր Գոլիցին:
Գլխաւոր Արարողապետ կոմս Վորոնցով-Տաշկով:
Գանձապետ Քրիժանովսկի:
Կառավարիչ Էքսպէտիցիայի Նշանաց գովանի ծառայութեան
Արարողապետ Քնեազ Յուսուպով:

Համ. 341:

32.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Հրովարտակի կայսեր Ռուսաց Նիկողայոսի Ա. տուեալ կառավարող Ծերակուտին, յաղագս պարգևելոյ Տ. Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց զԱստիճան Ներգործական Պետական Խորհրդականի։

—

Հրովարտակ (տուեալ) Կառավարող Ծերակուտին (*)։

Ըստ վկայելոյ Կառավարութեանն զքրտնաջանաստակ ծառայութենէ և զգօնանի աշխատութենէ Կառավարչի Արևելեան լեզուաց Ճեմարանի Լազարեանց՝ որ 'ի Մոսկուա՝ Պետական Խորհրդականին Լազարեանց (**), համաձայն արժանաւոր վարկածի ժողովոյն Նախարարաց, Ամենողորմածաբար պարգևեմք զաստիճան Ներգործական Պետական Խորհրդականի։

'Ի բնագրին ստորագրեալ է Նորին Կայսերական Մեծութեանն իւրով ձեռամբ

ՆԻԿՈՂԱՅՈՍ։

'Ի Ս. Փեթերբուրգ. 'ի 19 Յունվարի 1834 ամի։

(*) Ռուսերէն օրինակն գտանի 'ի գիրսն Собраніе Актовъ. 'ի համ. ա. յեր. 390։

(**) Իմա՝ Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց։

33.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Հրամանագրի կառավարող Ծերակուտի, յաղագս յայտնելոյ Տ. Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց զԲարեհաճութիւն կայսեր 'ի պարգևել նմա զԱստիճան Ներգործական Պետական Խորհրդականի։

Հրովարտակ Նորին Կայսերական Մեծութեան Ինքնակալի ամենայն Ռուսաց, 'ի Կառավարող Ծերակուտէ, Տ. Փոխանակի

Կանցլերի (Вице Канцлеру) Ներգործական Ներքին Խոր-հրդականի Ընդամից Կայսերական Խորհրդանոցի և Ասպետի Կոմսին Քառլ Վասիլևիչի Նեսսելրոդայ։ Ըստ Բարձրագոյն Հրո-վարտակի Նորին Կայսերական Մեծութեան տուելոյ Կառավարող Ծերակուտին 'ի 19 այսր Յունուարի սեփական ստորագրութեամբ Նորին Մեծութեան, յորում ցուցանի, թէ „ըստ վկայելոյ Կա-ռավարութեան զփութաջան ծառայութենէ և զգովանի վաստակոց Կարգավարի Լազարեան Ճեմարանի Արևելեան լեզուաց որ 'ի Մոսկուա, Պետական Խորհրդականի Խաչատրոյ Լազարեանց՝ հա-մաձայն արժանաւոր վարկածի Ժողովոյն Նախարարաց՝ Ամենողոր-մածաբար պարգևեմք զաստիճան Ներգործական Պետական Խոր-հրդականի", Կառավարող Ծերակոյտն Հրամայեաց՝ զնոյն զայս Ամենողորմած բարեհաճութիւն Նորին Կայսերական Մեծութեան յայտնել Տ. Ներգործական Պետական Խորհրդականին Լազարեանց տալով զՆա յերդումն յատենի Ծերակուտին, և զհրամանս պա-հանջումն առնել ըստ օրինաց. զորմէ և առ Ձեզ առ Փոխանակ Կանցլերի և առ Տ. Նախարարն հասից Տէրութեան առաքել հրամանագիր, 'ի 25 Յունուարի 1834 ամի։

(Ստորագրեցին) Փոխանորդ Գլխաւոր Ատենադպրի Ն. Շ-հ-վ։
Ատենադպիր Փ. Տ-Ղ-Բ-վ։
Կրասեղանապետ Գ-լ-ֆ-վ-վ։

Ըստ ձ Բաշխուածի։

Համր 372.

34.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Գործեական Հրովարտակի կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. որով տուաւ Տ. Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց Աստիճան Ներգործական Պետական Խորհրդականի:

—

Ողորմութեամբ Աստուծոյ

ՄԵՔ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՌԱՋԻՆ ԿԱՅՍՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՑ,

և այլոց, և այլոց, և այլոց:

Յայտնի և գիտելի լիցի ամենայն ումեք, զի Մեք զԽաչատուր Լազարեանց՝ որ ծառայէրն Մեզ պաշտամամբ Պետական Խորհրդականի, 'ի արիտուր մեծափոյթ ջանիցն և վաստակոց ցուցելոց 'ի նմանէ 'ի ծառայութեան առ Մեզ՝ ամբարձաք յԱստիճան Ներգործական Պետական Խորհրդականի, յամի հազար ութ հարիւր երեսուն և չորս, յիններորդում աւուր Յունուարի. զոր և հաստատեալ այսու՝ հրամայեմք ամենայն հպատակաց մերոց՝ զնա ինքն զԽաչատուր Լազարեանց ճանաչել և յարգել պարտուպատշաճ եղանակաւ իբրև զՄեր Ներգործական Պետական Խորհրդական: Եւ Մեք ակն ունիմք՝ թէ նա 'ի սմին յառ 'ի մէնջ Ամենողորմածաբար պարգևեալս յԱստիճանի այնպէս բարեփոյթ և քաջամիր հանդիսացի, որպէս վայել է հաւատարիմ հպատակի: 'Ի վկայութիւն այսորիկ՝ ստորագրեցաք զայս Մերով խակական ձեռամբ, և հրամայեցաք ամրացուցանել Մերով Թագաւորական Կնքով:

Տուեալ 'ի Յարքայն Սէլօ. 'ի 16 Մարտի 1834 ամի:

ՆԻԿՈՂԱՅՈՍ:

35.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Յայտարար նամակի կառավարութեան Զինուորական Հանրական Նահանգապետին Մոսկուայ. որով առաքեցաւ առ Յովհաննէս Յովակիմեան Լազարեանց Շքանշանն Ասպետական կարգի Ս. Վլատիմիրայ Դ. աստիճանի պարգեւեալ նմա 'ի կայսրէ:

—

Կառավարութիւն
Զինուորական Հանրական
Նահանգապետին Մոսկուայ:
—
Դիւանատուն Քաղաքական.
Էքսփէտիցիա 2.
Սեղան 2.
—
'ի Մոսկուա.
'ի 23 Հոկտեմբերի 1834 ամ:
Համար 5594:
—
Յաղագս Շքանշանի
Ամենողորմածաբար պարգեւելոյ:

Կատարողի առանձին յանձնարութեանց, Տ. Պետական Խորհրդականի (Յովհաննու) Լազարեանց:

Թագաւոր Կայսրն ըստ վկայելոյ իմ ըզգովանի ջերմեռանդութենէ և զվաստակոց Ձերոյին Բարեգործութեան 'ի մասին կառուցման Յաղթական Կամարին 'ի Մոսկուա, Ամենողորմածաբար հաճեցաւ պարգեւել Ձեզ 'ի 22 այսր Հոկտեմբերի ըզՇքանշանն Ասպետական Կարգի Ս. Վլատիմիրայ Դ աստիճանի:

Առաքելով զպարգեւեալն Ձեզ զԱսպետական Նշանն, առանձին իմն հաճութեամբ շնորհաւորեմ Ձեզ զայն զայս կայսերական ողորմութիւն, առաջադրելով ըզդրամն սահմանեալս յԱսպետական Կարգաց 'ի պէտս Աստուածահաճոյ շինուածոյ՝ ուղղակի 'ի Ձէնջ առաքել 'ի Կապիտուլն Կայսերական և Արքայական Շքանշանաց Ռուսաց:

(Ի բնագրին) Զինուորական Հանրական Նահանգապետ Մոսկուայ,

Գօլիցին:

36.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Պարգեւական Հրովարտակի կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. որով տուաւ Տ. Յովհաննու Յովակիմեան Լազարեանց Շքանշանն Ասպետական կարգի Ս. Վլատիմիրայ գ. աստիճանի։

—

Ողորմութեամբ Աստուծոյ

ՄԵՔ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՌԱՋԻՆ ԿԱՅՍՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՑ,

և այլոց, և այլոց, և այլոց։

Մերում Պետական Խորհրդականի Յովհաննու Լազարեանց՝ եղելոյ առանձին պաշտօնատարութեամբ առ ընթեր Զինուորական Հանրական Նահանգապետին Մոսկուայ։

'Ի տրիտուր գովանի և ջերմեռանդն Ծառայութեան Ձեր և սեպհական աշխատութեանց՝ զորս ցուցեալ էք Դուք 'ի կառուցման Յաղթական Կամարին (Тріумфальныхъ Воротъ) 'ի Մոսկուա, և զորոց վկայեալ է Կառավարութիւնն, Մեք Հրովարտակաւ մերով տուելով 'ի Կափիթուլն 'ի 22 Դեկտեմբերի 1834 ամի՝ պարգեւեցաք ձեզ ամենողորմածաբար զՇքանշան Ասպետական Կարգի Ս. Վլատիմիրայ երրորդ աստիճանի։ Եւ հրամայեցաք Կափիթուլին ստորադրել զՊարգեւագիրս զայս առ 'ի վկայութիւն, և հաստատել կնքով Ասպետական կարգին և զնշանն առ ձեզ առաքել։

Տուեալ 'ի Ս. Փեթերբուրգ 'ի 31 Դեկտեմբերի 1834 ամի։

(Ստորագրեցին) Ատենապետ Իշխան Ալէքսանդր Գոլիցին։

Մեծ-Արարողապետ (Оберъ Церемоніймейстеръ)

կոմս Վօրօնցով Դաշկով։

Գանձապետ Քրէյծոնվլէէյ։

37.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Հրովարտակի կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. տուեալ յԱրքունի Դիւանատունն, յաղագս պարգևելոյ Տ. Յովհաննու Յովակիմեան Լազարեանց զկոչումն Սենեկապետի Դրան կայսերական Մեծութեան։

—

Հրովարտակ (տուեալ) յԱրքունի Դիւանատունն։

Զ Յովհաննէս Լազարեանց՝ զՊետական Խորհրդականն՝ որ ըստ առանձին յանձնարարութեան կայ առընթեր Զինուորական Հանրական—Նահանգապետին Մոսկուայ, Թագաւոր Կայսրն Հրովարտական տուելով յԱրքունի Դիւանատունն 'ի 19 Յունուարի այսր 1836 ամի՝ հաճեցաւ Ամենողորմածաբար վասն արուեստականացն կերտուածոց (զորս ցուցեալ է նա 'ի համազգին տեսարանի 'ի Մոսկուա յանցեալ 1835 ամի)՝ պարգևել նմա զկոչումն Սենեկապետի Դրան Նորին Կայսերական Մեծութեան։

ՆԻԿՈՂԱՅՈՍ։

'Ի 19 Յունուարի 1836 ամի։

38.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Հրովարտակի կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. տուեալ կառավարող Ծերակուտին, յաղագս պարգևելոյ Տ. Յովհաննու Յովակիմեան Լազարեանց զԱստիճան Ներգործական պետական խորհրդականի։

—

Հրովարտակ (տուեալ) Կառավարող Ծերակուտին։

Հոգաբարձուի Լազարեան Ճեմարանի Արևելեան լեզուաց որ 'ի Մոսկուա, Սենեկապետի Դրան Մերոյ՝ Պետական Խորհրդականի (Յովհաննու) Լազարեանց, ըստ առաջադրութեան Կառավա-

րութեան վերադիտելոյ 'ի ժողովի Նախարարաց, Ամենողորմածաբար պարգեւեմք 'ի տրիտուր ջերմեռանդութեան եւ վաստակոց նորա յօգուտ հասարակաց՝ զաստիճան Ներգործական Պետական Խորհրդականի։

'Ի բնագրին իսկական ձեռամբ Նորին կայսերական Մեծութեան գրեալ է

ՆԻԿՈՂԱՅՈՍ։

'Ի Ս. Փեթերպուրգ. 'ի 24 փետրուարի 1837 ամի։

39.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Պարգեւական հրովարտակի կայսեր Ռուսաց Նիկողայոսի Ա. որով տուաւ Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց Շքանշանն Ս. Վլատիմիրայ Գ. աստիճանի։

Ողորմութեամբ Աստուծոյ

ՄԵՔ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՌԱՋԻՆ, ԿԱՅՍՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՑ,

եւ այլոց, եւ այլոց, եւ այլոց։

Մերում Ներգործական Պետական Խորհրդականի, Կարգաւորի Լազարեան Ճեմարանի Արեւելեան լեզուաց որ 'ի Մոսկուա՝ (Խաչատրոյ) Լազարեանց։

'Ի տրիտուր ջերմեռանդութեան եւ վաստակոց Ձերոց ցուցելոց յօգուտ հասարակաց՝ վկայելոց 'ի Կառավարութենէ եւ գովաբանելոց 'ի ժողովոյն Նախարարաց, Մեք Ամենողորմածաբար պարգեւեցաք Ձեզ Հրովարտակաւ տուեալ 'ի Քափիթուլն Ասպետութեան կարգաց 'ի 19 փետրուարի 1837 ամի՝ զՇքանշան Ս. Վլատիմիրայ երրորդ աստիճանի։ Հրամայեցաք Քափիթուլին Ռուսաց Կայսերական եւ Արքայական Շքանշանաց Ասպետութեան՝

զԳարգեւագիրս զայս ստորագրել առ 'ի վկայութիւն, և կնքով Ասպետական կարգին ամրացուցանել, և զնշանն առաքել առ Ձեզ:

Տուեալ 'ի Ս. Փեթերպուրգ, 'ի 25 փետրուարի 1837 ամի:

(Ստորագրեցին) Ռուսաց կայսերական և Արքայական Շքանշանաց Ասպետութեան
Գլխաւոր Տեսուչ՝ Քնեազ Ալէքսանդր Գոլիցին:
Գլխաւոր Արարողապետ՝ Կոմս Վորոնցով-Դաշկով:
Գանձապետ՝ Քոչուպէյ:

40.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Հրովարտակի կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. տուեալ 'ի Գրասենեակն պալատան (Придворный Конторъ), յաղագս պարգևելոյ Տ. Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց զկոչումն Սենեկապետի կայսերական դրան:

—

Հրովարտակ (տուեալ) 'ի Գրասենեակն Պալատան:

Առինձնաւորաց առանձին յանձնարարութեանց. այս է՝ ծառայողի առ ընթեր Հեծելապետի (Шефъ Жандармовъ)՝ Ներգործական Պետական Խորհրդականի Խաչատրոյ Լազարեանց, ծառայողի 'ի Նախարարութեան Հանից Տէրութեան՝ Պետական Խորհրդականի՝ Անդրէի Սապուրովայ, և Պատուանուն Խորհրդականաց՝ ծառայողի 'ի Նախարարութեան Արտաքին Գործոց՝ Նիկողայոսի Պեզոպրազովայ, և ծառայողաց 'ի Մերում Զինուորական Գիւմնատան՝ Աղէքսանդրի Պարանովայ, և Միխայէլի Զէլենեւայ, Ամենողորմածաբար պարգևեցաք Մեք երկուցն առաջնոց՝ զկոչումն Սենեկապետի, և վերջնոցն՝ զկոչումն Կամեր-Իւնքերի Դրան Մերոյ:

'Ի բնագրին ձեռամբ Նորին կայսերական Մեծութեան գրեալ է

ՆԻԿՈՂԱՅՈՍ:

'Ի Ս. Փեթերպուրգ. 'ի 25 Մարտի 1839 ամի:

Ուղիղ է. Ասենական Պատաղակից Շ.

41.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Ազդարար նամակի Գլխապետի Զինակիր Հեծելոց. որով ծանուցանէ նա Տ. Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց, թէ պարգեւեալ է նմա 'ի կայսրէ կոչումն Սենեկապետի:

—

Գլխապետ Զինակիր Հեծելոց (Шефъ Жандармовъ).

—

Հրամանատար Կայսերական գլխաւոր օթեանաց.

—

Բաժին 2.

—

'Ի Ս. Փեթերբուրգ.
յ31 Մարտի 1839 ամի.
Համար 1724:

Ծառայողի առ իս առանձին յանձնարարութեամբ՝ Ներգործական Պետական Խորհրդականի և Ասպետի Տ. (Խաչատրոյ) Լազարեանց:

Բարձրագոյն Հրովարտակաւն՝ որ տուեալ եղև 'ի 25 այսր ամսոյ 'ի Դիւանն Արքունի, Ամենողորմածաբար պարգևեցաւ Ձերում Գերազանցութեան կոչումն Սենեկապետի:

'Ի լրումն բանից յայտարար նամակի գրելոյ առ իս 'ի Նախարարէն Կայսերական Պալատան յՕժանդակ Զօրապետէն յԻշխանէն Վոլխոնսքեայ, ախորժելի իմն պարտս համարիմ ինձ ազդ առնել Ձեզ՝ ողորմած Տէր՝ զայս Կայսերական ողորմութիւնն:

(Ստորագրեցին) Օժանդակ Զօրապետ՝ կոմս Պենկէնդորֆ:

Տեսուչ Արքունականաց՝ Տուպելտ:

42.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Պարգևական Հրովարտակի կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. որով տուաւ Տ. Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց նշանն գովանի և ամբիծ ծառայութեան՝ յաղագս երեսնամեայ պաշտօնակատարութեան նորա, առ 'ի կրել Վլատիմիրեան ժապաւինաւ։

—

Ողորմութեամբ Աստուծոյ

ՄԵՔ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՌԱՋԻՆ ԿԱՅՍՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՑ,

և այլոց, և այլոց, և այլոց։

Մերում Ներգործական Պետական Խորհրդականի և Սենեկապետի՝ ծառայողի 'ի Նախարարութեան Արտաքին Գործոց եղելումն առ ընթեր Օժանդակ Զօրապետին Կոմսին Պենկենդորֆայ՝ Խաչատրոյ Լազարեանց։

'Ի տրիտուր երեսնամեայ անարատ ծառայութեան Ձերոյ՝ Ամենողորմածաբար պարգևեցաք Մեք Ձեզ 'ի 22 Օգոստոսի 1839 ամի զնշան գովանի և ամբիծ ծառայութեան, առ 'ի կրել ըստ սահմանադրեալն կարգի Վլատիմիրեան ժապաւինաւ։ Հրամայեցաք Կափիթուլին Կայսերական և Արքայական Շքանշանաց Ռուսաց՝ զՊարգևագիրս զայս ստորագրել առ 'ի վկայութիւն, և ամրացուցանել կնքով, և զնշանն գովանի ծառայութեան առաքել առ Ձեզ։

Տուեալ 'ի Ս. Փեթերպուրկ, 'ի 4 Հոկտեմբերի 1839 ամի։

Կայսերական և Արքայական Շքանշանաց Ռուսաց
Գլխաւոր Տեսուչ՝ Քնեազ Ալէքսանտր Գոլիցին։
Գլխաւոր Արարողապետ՝ Կոմս Վորոնցով-Դաշկով։
Գանձապետ՝ Պարոն Կառավարիչ Աշքափետիցեոյ Նշանի գովանի և անարատ ծառայութեան Արարողապետ՝ Վոեվոդսքի։
(տեղի կնքոյ)
Համր 887.

43.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Պարգևական Հրովարտակի կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. որով տուաւ Տ. Յովհաննու Յովակիմեան Լազարեանց Նշանն գովանի և անարատ ծառայութեան՝ յաղագս երեսնամեայ պաշտօնակատարութեան, առ 'ի կրել Վլատիմիրեան ժապաւինաւ։

—

Ողորմութեամբ Աստուծոյ

ՄԵՔ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՌԱՋԻՆ, ԿԱՅՍՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՑ,

և այլոց, և այլոց, և այլոց։

Մերում Ներգործական պետական խորհրդականի Յովհաննու Լազարեանց, եղելումն առ Զինուորական Հանրական Նահանգապետի Մոսկուայ վասն կատարման առանձին յանձնարարութեանց։

'Ի տրիտուր երեսնամեայ անբիծ ծառայութեան Ձերոյ՝ Ամենողորմածաբար պարգևեցաք Մեք Ձեզ 'ի 22 Օգոստոսի 1840 ամի, զՆշան գովանի և անարատ ծառայութեան, առ 'ի կրել զայն Վլատիմիրեան ժապաւինաւ ըստ սահմանադրեալն կանոնի։ Հրամայեցաք Կափիթուլին կայսերական և Արքայական Շքանշանաց՝ զՊարգևագիրս զայս առաքել առ 'ի վկայութիւն, ամրացուցանել կնքով, և զՆշանն գովանի ծառայութեան առաքել առ Ձեզ։

Տուեալ 'ի Ս. փեթերպուրկ, 'ի 27 Սեպտեմբերի 1840 ամի։

(Ի բնագրին) Ռուսաց կայսերական և Արքայական Շքանշանաց
Դիւանադպիր Քնեազ Ալեքսանդր Գոլիցին։
Գանձապետ Պօբօն։
Կառավարիչ Լըքսինտիցի Շքանշանի Գովանի և անարատ ծառայութեան
Արարողապետ՝ կոմս Պուբէ։
Կնիք Նշանի գովանի և անարատ ծառայութեան
(տեղի կնքոյ)
Համր 252.

44.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Պարգեւական Հրովարտակի կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. որով տուաւ Տ. Յովհաննու Յովակիմեան Լազարեանց Շքանշանն Ասպետական կարգի Ս. Սթանիսլաւայ ա՛ աստիճանի:

Ողորմութեամբ Աստուծոյ

ՄԵՔ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՌԱՋԻՆ ԿԱՅՍՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՑ, ԱՐՔԱՅ ԼԵՀԱՑ

եւ այլոց, եւ այլոց, եւ այլոց:

Սենեկապետի Դրան Մերոյ՝ Ներգործական Պետական Խորհրդականի (Յովհաննու) Լազարեանց:

'Ի տրիտուր յարատեւ ջերմեռանդութեան Ձեր յօգուտ Լազարեան Ճեմարանին Արեւելեան լեզուաց եղելոյ 'ի Մոսկուա՝ զորոյ կրէք Դուք զՀոգաբարձուի կոչումն, Ամենողորմածաբար պարգեւեմք Ձեզ՝ համաձայն առաջադրութեան Կառավարութեան եւ արժանաւոր համարելոյն ժողովոյն Նախարարաց՝ զԿայսերական եւ զԱրքայական Շքանշանն Մեր Ասպետական Կարգի Ս. Սթանիսլաւայ առաջին աստիճանի. զորոյ զնշանս ընդ սմին առաքելով՝ հրամայեմք Ձեզ կրել զայն ըստ սահմանադրութեան:

Մնալով բարեյօժար առ Ձեզ Մերով Կայսերական եւ Արքայական ողորմութեամբ:

'Ի Պարգեւագրին սեպհական ձեռամբ Նորին Կայսերական Մեծութեան գրեալ է

ՆԻԿՈՂԱՅՈՍ:

'Ի Ս. Փեթերպուրկ, 'ի 11 Ապրիլի 1841 ամի.

Վաւերացոյց ստորագրութեամբ Գլխաւոր Տեառն

Կայսերական եւ Արքայական Շքանշանաց Ռուսաց՝ Քնեազ Ալէքսանդր Գոլիցին՝

Համար 44:

45.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Յայտարար նամակի Գլխաւոր Ձինակիր Հեծելոց. որով ծուցանէ նա Տ. Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց, թէ Օգոստափառ կայսրն հաճեալ է պարգևել նմա զոսկի պնչակեղէ, յորոյ վերայ նշանագրեալ կայ անուն Նորին կայսերական Մեծութեան:

—

Գլխաւոր Ձինակիր Հեծելոց, Հրամանատար կայսերական գլխաւոր օթևանաց:

—

'Ի Ս. Փեթերպուրկ.
'ի 4 Մայիսի 1842 ամի:
Համար 1773:

Ողորմած Տէր
Խաչատուր Յովակիմեան,

Օգոստափառ Կայսր՝ ըստ կարգադրութեան Քոմիտէին Նախարարաց եղելոյ ըստ միջնորդութեան իմոյ՝ Ամենողորմածաբար հաճեցաւ, Ողորմած Տէր, 'ի վարձ վեշտասանամեայ ծառայութեան Ձեր առ ի կոչմամբ Կառավարողի առանձին յանձնարարութեանց՝ պարգևել Ձեզ զոսկի պնչակեղէ՝ յորոյ վերայ նշանագրեալ կայ անուն Նորին Կայսերական Մեծութեան:

Առանձին իմն հաճութեամբ ծանուցանելով Ձերում Գերազանցութեան զայսօրինակ Կայսերական ողորմութիւն, կցորդելով և՝ թէ յիշատակեալ տուփն ունի առաքիլ առ Ձեզ անյապաղ ըստ ազդարարութեանն տուելոյ ինձ 'ի Դիւանատանէ Նորին Մեծութեան, խնդրեմ 'ի Ձէնջ վստահ յիմս լինել 'ի կատարեալ ջերմեռանդութիւն և 'ի հպատակութիւն:

Կոմս Պէնկէնտորֆ:

46.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Հաղորդակցական Գրոյ Գլխապետի Զինակիր Հեծելոց. որով առաքեաց նա առ Խաչատուր Յովակիմեան Լազարեանց զպարգեւսն Նմա 'ի կայսերէ զտուփ ոսկեզօծ քանդակաւ փակագրի անուան Նորին կայսերական Մեծութեան։

—

Գլխապետ Զինակիր հեծելոց, Հրամանատար կայսերական գլխաւոր օթեւանաց։

—

Բաժին 2.

—

'Ի Ս. Փեթերպուրգ.
'ի 11 Մայիսի, 1842 ամի.
համար 1890։

Ողորմած Տէր

Խաչատուր Յովակիմեան,

'Ի լրումն յարաբերութեան իմոյ առ Ձերոյին Գերազանցութիւն 'ի 4էն Մայիսի համար 1773, յորդ համարիմ առաքել ընդ այսմ զպարգեւսն Ձեզ Ամենողորմածաբար զտուփ ոսկեզօծ՝ քանդակաւ փակագրի անուան Թագաւոր Կայսեր, ամենախոնարհաբար խնդրելով 'ի Ձէնջ, ողորմած Տէր, յորդել զիս Ձերով գեկուցմամբ զստացմանէն այնորիկ։

Մնամ հերուք լիմս կատարեալ պատիւ և 'ի հաւատարմութիւն։

'Ի բնագրին կամս Պենքենդորֆ։

47.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Հաղորդակցական Գրի Բաշխուածին Տնտեսական և Հաշուական գործոց. որով առաքեցաւ առ Խաչատուր Յովակիմեան Լազարեանց նշանն գովանի և անարատ ծառայութեան պարգևեալ 'ի կայսերէ 'ի տրիտուր երեսուն և հինգամեայ պաշտօնակատարութեան նորա:

—

Բաշխուած Տնտեսական և Հաշուական գործոց:

—

Բաժին Լրացուցիչ:

Սեղան 3:

—

'Ի 11 Հոկտեմբերի 1843 ամի:

Համար 3272:

Տ. Ներգործական Պետական Խորհրդականի Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց:

Բաշխուածն Տնտեսական և Հաշուական գործոց առաքելով ընդ այսմ առ Ձերդ Գերազանցութիւն զնշանն գովանի և անարատ ծառութեան Ձերոյ՝ պարգևեալն Ձեզ Ամենողորմածաբար վասն 35 ամաց, խնդրէ խոնարհաբար՝ զառաջին նշանն գովանի ծառայութեան որ կայ առ Ձեզ՝ դարձուցանել 'ի սոյն Բաշխուած՝ վասն յղելոյ 'ի Դիւանն Ասպետանշանաց:

Առ այս՝ Բաշխուածն Տնտեսական և Հաշուական գործոց յարգ համարի կցորդել, թէ մինչ ցօրն՝ յորում առաջարկութիւնն եղև վասն նշանի գովանի ծառայութեան Ձերոյ (այսինքն՝ մինչ ց31 Դեկտեմբերի 1842 ամի) բովանդակ (ժամանակ) ծառայութեան Ձերոյ հաշուի 'ի Բափիթուլէն 35ամ, 3 ամիս, և 19 օր:

(Ստորագրեցին) Կառավարիչ Կոմս Պօչէ:

Պետ Բաժնի Եւտուխէվ:

48.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Պարգևական Հրովարտակի կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. որով տուաւ Տ. Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց Շքանշանն Ասպետական կարգի Ս. Ստանիսլաւայ ա̅ աստիճանի։

—

Ողորմութեամբ Աստուծոյ

ՄԵՔ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՌԱՋԻՆ, ԿԱՅՍՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՑ,

և այլոց, և այլոց, և այլոց։

Մերում Ներգործական Պետական Խորհրդականի՝ ծառայողի առ Օժանդակ Զօրավարին Կոմսին Պենկենտորֆայ ՚ի սեփհական յանձնարարութեանց, ունողի զկոչումն Սենեկապետի, (Խաչատրոյ) Լազարեանց։

՚Ի տրիտուր գովանի և ջերմեռանդն ծառայութեան Ձեր ՚ի գործս Ձեզ յանձն եղելոց, և փոխարէն փութաջան վաստակոց Ձերոց յօգուտ առ ՚ի Ձէնջ կառավարելոյ Լազարեան Ճեմարանին Արևելեան լեզուաց որ ՚ի Մոսկուա, համաձայն միջնորդութեան Օժանդակ Զօրավարին Կոմսին Պենկենտորֆայ՝ և ըստ արժանադատ վարկածի Ժողովոյն Նախարարաց՝ Ամենողորմածաբար պարգևեմք Ձեզ զՇքանշանն Մերս Կայսերական և Արքայական Կարգի Ասպետութեան Ս. Ստանիսլաւայ առաջին աստիճանի. զորոյ և զնշանսն առաքելով ընդ այսմ՝ հրամայեմք Ձեզ կրել զայն ըստ սահմանադրութեան։ Մնամք բարեյօժար առ Ձեզ Մերով Կայսերական ողորմութեամբ։

՚Ի բնագրին՝ Իւրական ձեռամբ Նորին Կայսերական Մեծութեան գրեալ է

ՆԻԿՈՂԱՅՈՍ։

՚Ի Ս. Փեթերպուրգ. ՚ի 17 Մարտի 1844 ամի։

Վաւերացոյց ստորագրութեամբ Գլխաւոր Տեսուչ Կարգաց Ասպետաց

Քնեազ Վոլքոնսքիյ։

Համար 51։

49.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Յայտարար նամակի Գահագլխոյ ընկերութեանն հաստատելոյ 'ի խնամատարութիւն բանտից. որով ծանուցանի Տ. Յովհաննու Յովակիմեան Լազարեանց, թէ հաճեալ է կայսրն կարգել զնա Անդամ Ժողովոյն Ս. Փեթերպուրկայ հաստատելոյ 'ի խնամատարութիւն բանտից:

—

Գահագլուխ ընկերութեն Բարձրագոյնս հաստատելոյ 'ի խնամատարութիւն բանտից:

—

'Ի 22 Օգոստոսի 1845 ամի. համար 202:

Ողորմած Տէր Յովհաննէս Յովակիմեան,

Օգոստափառ Կայսրն՝ ըստ իւրում ամենախնամ յայտարարութեան՝ 'ի 16 այսր Օգոստոսի Բարձրագոյն կամօք հաճեցաւ զՁերդ Գերազանցութիւն կարգել Անդամ Ժողովոյն Ս. Փեթերպուրկայ՝ հաստատելոյ 'ի խնամատարութիւն բանտից:

Ծանուցանելով Ձերում Գերազանցութեան զայսօրինակ Բարձրագոյն հաճութիւն, խնդրեմ ամենախոնարհաբար վստահ յիս լինել կատարելագոյն հպատակութեան և 'ի յարգանս:

Ստորագրեալ Կոմս Օռլով:

50.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Թղթոյ Նախարարութեան Արտաքին Գործոց, 'ի Բաշխուածոյ Հանդիսական Գործոց. որով առաքեցաւ առ Յովհաննէս Յովակիմեան Լազարեանց պատճէնն Յարաբերական Թղթոյ Տ. Պալատապետի (Гофмейстеръ) *Դրան Մեծի Իշխանին Միխայէլ Փաւլովիչի և Մեծի Իշխանուհւոյն Ելենէ Փաւլովնայի յաղագս շնորհակալութեանն յայտնելոյ 'ի նոցանէ զանձանցն գտելոց յՕրապահութեան առ դիտակամբ Մեծի Իշխանուհւոյն Մարիայ Միխայէլովնայի։*

—

Նախարարութիւն
Արտաքին գործոց։

—

Բաշխուած
Հանդիսական գործոց։

—

'Ի 23 Դեկտեմբերի 1846 ամի։

Գլխաւոր Արարողապետ Դրան Նորին Կայսերական Մեծութեան, յարգ համարի առաքել ընդ այսմ առ Նորին Գերազանցութիւն Յովհաննէս Յովակիմեան զպատճէն յարաբերական Թղթոյ Տեառն Պալատապետի (**Гофмейстеръ**) Դրան Նոցին Կայսերական Բարձրութեանց՝ Մեծի Իշխանին Միխայէլ Փաւլովիչի, և Մեծի Իշխանուհւոյն Ելենէ Փաւլովնայի յաղագս շնորհակալութեանն յայտնելոյ 'ի Նոցունց Կայսերական Բարձրութեանց՝ զանձանցն գտելոց յօրապահութեան առ դիտակամբ Մեծի Իշխանուհւոյն Մարիայ Միխայէլովնայի։

51.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Վկայագրի տուելոյ յԱսիական Ընկերութենէ Փարիզու՝ յաղագս նշանակելոյ գոլոյ Տ. Յովհաննու Յովակիմեան Լազարեանց 'ի թիւս Անդամոց նոյն Ընկերութեան։

—

Վկայագիր (*Дипломъ*) յԱսիական Ընկերութենէ հաստատելոյ 'ի Փարէզ։

Խորհրդարանն Ասիական Ընկերութեան 'ի Փարէզ, 'ի գումարման իւրում 'ի 4ին Մայիսի 1847 ամի, ըստ առաջադրու-

թեան Անդամոյն Տ. Ռէնօ և Տ. Էդուարդ-Պիօթայ՝ ընտրեաց և նշանակեաց զՆերգործական Պետական Խորհրդականն (Յովհաննէս) Լազարեանց՝ Անդամ Ասիական Ընկերութեան։

՚Ի վկայութիւն այսորիկ՝ տուաւ և այս վկայագիր Տ. (Յովհաննու) Լազարեանց, Սենեկապետի Դրան Նորին Մեծութեան Կայսեր ամենայն Ռուսաց։

Ստորագրեաց Նախագահ Ընկերութեան Ա. Ռէնօ։

Ատենադպիր Ժիւլ Մօլ։

՚Ի Փարէզ, ՚ի 14 Մայիսի 1847 ամի։

52.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Վկայագրի տուելոյ յԱսիական ընկերութենէ փարիզոյ յաղագս նշանակեալ գոլոյ Տ. Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց ՚ի թիւս Անդամոց նոյն ընկերութեան։

—

Վկայագիր (*Дипломъ*) յԱսիական Ընկերութենէ հաստատելոյ ՚ի Փարէզ։

Խորհրդարանն Ասիական Ընկերութեան ՚ի Փարէզ, ՚ի գումարման իւրում ՚ի 4էն Մայիսի 1847 ամի, ըստ առաջարկութեան Անդամոյն Տ. Ռէնօ և Տ. Էդուարդ-Պիօթայ՝ ընտրեաց և նշանակեաց զՆերգործական Պետական Խորհրդականն (Խաչատուր) Լազարեանց՝ Անդամ Ասիական Ընկերութեան։

՚Ի վկայութիւն այսորիկ՝ տուաւ և այսր վկայագիր Տ. (Խաչատրոյ) Լազարեանց, Սենեկապետի Դրան Նորին Մեծութեան Կայսեր ամենայն Ռուսաց։

Ստորագրեաց Նախագահ Ընկերութեան Ա. Ռէնօ։

Ատենադպիր Ժիւլ Մօլ։

՚Ի Փարէզ, ՚ի 14 Մայիսի 1847 ամի։

53.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Պարգեւական Հրովարտակի կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. որով տուաւ Տ. Յովհաննու Յովակիմեան Լազարեանց Շքանշանն Ասպետական կարգի Ս. Աննայի ա աստիճանի։

—

Ողորմութեամբ Աստուծոյ

ՄԵՔ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՌԱՋԻՆ, ԿԱՅՍՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՑ,

և այլոց, և այլոց, և այլոց։

Մերում Ներքորձական Պետական Խորհրդականի՝ Յովհաննու Լազարեանց։

՚Ի յայտնութիւն Մերս առանձին բարեհաճութեան առ Ձեզ վասն ջերմեռանդութեանն՝ զոր ցուցէք Դուք ՚ի պահպանութիւն Լազարեան Ճեմարանի Արեւելեան լեզուաց, և յաղագս մեծամեծ նուիրանացն՝ զորս առատաձեռնեալ էք յօգուտ նորին, համաձայն միջնորդութեան Գլխաւոր Իշխանապետին վերատեսչի Ճեմարանի՝ Օժանդակ Զօրապետին Կոմսին Օռլովայ, և ըստ արժանաւոր վարկածի Կոմիտէյն Նախարարաց, պարգեւեմք Ձեզ զՇքանշան Ասպետական Կարգի Ս. Աննայի առաջին աստիճանի. զորոյ նշանս առաքեալս ընդ սմին՝ Հրամայեմք Ձեզ կրել ըստ սահմանադրութեանն։

՚Ի բնագրին խորոյն ձեռամբ Նորին Կայսերական Մեծութեան գրեալ է

ՆԻԿՈՂԱՅՈՍ։

՚Ի Ս. Փեթերպուրգ. ՚ի 15 Յունիսի 1848 ամի։

Վաւերացեալ ստորագրութեամբ Գլխաւոր Տեսուչ Ասպետական կարգաց՝

Քնեազ Դոլգորուկի։

54.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Պարգեւական Հրովարտակի կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. որով տուաւ Տ. Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց Շքանշանն Աստեղական կարգի Ս. Աննայի Ա աստիճանի։

—

Ողորմութեամբ Աստուծոյ

ՄԵՔ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՌԱՋԻՆ, ԿԱՅՍՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՑ,

եւ այլոց, եւ այլոց, եւ այլոց։

Մերում Ներգործական Պետական Խորհրդականի Խաչատրոյ Լազարեանց։

'Ի ցոյց Մերս առանձին բարեհաճութեան առ Ձեզ՝ յաղագս անյողդողդ ջերմեռանդութեանն՝ զոր երեւեցուցանէք 'ի պաշտպանութիւն Լազարեան Ճեմարանի Արեւելեան լեզուաց որ 'ի Մոսկուա, եւ յաղագս բազմապատիկ նուիրմանց Ձերոց 'ի նորին օգուտ, համաձայն միջնորդութեան Գլխաւոր Իշխանապետի վերատեսչական Ճեմարանի՝ Օժանդակ Զօրապետին Կոմսին Օռլովայ՝ եւ ըստ արժանաւոր վարկածի Ժողովոյն Նախարարաց՝ պարգեւեմք Ձեզ զՇքանշանն Աստեղական կարգի Ս. Աննայի առաջին աստիճանի. զորս եւ զնշանսն առաքեալս ընդ սմին՝ հրամայեմք Ձեզ կրել ըստ սահմանադրութեան։

Մնամք բարեհաճ առ Ձեզ Մերով կայսերական ողորմութեամբ։

'Ի բնագրին Իւրական ձեռամբ Նորին կայսերական Մեծութեան գրեալ է

ՆԻԿՈՂԱՅՈՍ։

'Ի Ս. Փեթերպուրգ. 'ի 15 Յունիսի 1848 ամի։

Վաւերացոյց ստորագրութեամբ՝ Գլխաւոր Տեսուչ Աստեղական կարգաց՝

Քնեազ Վոլքոնսքի։

55.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Պարգևական Հրովարտակի կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. որով տուաւ Տ. Յովհաննու Յովակիմեան Լազարեանց Շքանշանն Ասպետական կարգի Ս. Աննայի ՚ի աստիճանի զարդարեալ կայսերական թագիւ:

—

Ողորմութեամբ Աստուծոյ

ՄԵՔ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՌԱՋԻՆ, ԿԱՅՍՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՑ,

և այլոց, և այլոց, և այլոց:

Հոգաբարձուի Լազարեան Ճեմարանի Արևելեան լեզուաց, Մերում Ներգործական Պետական Խորհրդականի՝ ունողի զկոչումն Սենեկապետի, (Յովհաննու) Լազարեանց:

Յարատև ջերմեռանդութիւն Ձեր առ պայծառութիւն Ճեմարանին Արևելեան լեզուաց՝ հաստուցելոյ ՚ի Մոսկուա ՚ի Տոհմէն Լազարեանց, և բազմապատիկ նուիրաբերութիւնքն առատաձեռնեալք ՚ի Ձէնջ յօգուտ այսր Ճեմարանի, արժանի եղեն հանապազ Մերում առանձին ուշադրութեան: Յարգելով մեր զայդչափ զգովանի և զբարեփոյթ ճիգն Ձեր ՚ի տարածումն լուսաւորութեան, առ յայտնելոյ զՄեր առ Ձեզ զառանձին բարեհաճութիւն՝ Ամենողորմածաբար պարգևեմք Ձեզ զշքեղն ընդ այսմ զՇքանշան Ասպետական կարգի Ս. Աննայի առաջին աստիճանի զարդարեալ Կայսերական Թագիւ, մնալով Մերով Կայսերական ողորմութեամբ բարեհաճ առ Ձեզ:

'Ի բնագրին՝ Իւրական ձեռամբ Նորին Կայսերական Մեծութեան գրեալ է

ՆԻԿՈՂԱՅՈՍ:

Նախարար Կայսերական Դրան՝ Կոմս Ադլերբերգ:

Ցարսքոյե Սելօ.

՚ի 20 Մայիսի 1853 ամի.

Համր 372.

56.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Պարգեւական Հրովարտակի կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. որով տուաւ Տ. Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց Շքանշանն Ասպետական կարգի Ս. Աննայի ա աստիճանի զարդարեալ կայսերական թագիւ։

—

Ողորմութեամբ Աստուծոյ

ՄԵՔ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՌԱՋԻՆ, ԿԱՅՍՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՑ,

և այլոց, և այլոց, և այլոց։

Օգնականի Հոգաբարձուի Լազարեան Ճեմարանի Արեւելեան լեզուաց, Մերում Ներգործական Պետական Խորհրդականի՝ ունողի զկոչումն Սենեկապետի (Խաչատրոյ) Լազարեանց։

Յարատեւ ջերմեռանդութիւն Ձեր առ պայծառութիւն Ճեմարանին Արեւելեան լեզուաց կառուցելոյ 'ի Մոսկուա 'ի Տոհմէն Լազարեանց, և բազմապատիկ նուիրաբերութիւնքն առատաձեռնեալք 'ի Ձէնջ յօգուտ այսր Ճեմարանի՝ արժանի եղեն հանապազ Մերում առանձին ուշադրութեան։ Յարգելով Մեր զայդչափ զգօնանի և զբարեփոյթ ծիգն Ձեր 'ի տարածումն լուսաւորութեան, առ յայտնելոյ զՄեր առ Ձեզ զառանձին բարեհաճութիւն՝ Ամենողորմածաբար պարգեւեմք Ձեզ զկցեալն ընդ այսմ զՇքանշան Ասպետական կարգի Ս. Աննայի առաջին աստիճանի զարդարեալ կայսերական թագիւ, մնալով Մերով կայսերական ողորմութեամբ բարեհաճ առ Ձեզ։

'Ի բնագրին իւրական ձեռամբ նորին կայսերական Մեծութեան գրեալ է

ՆԻԿՈՂԱՅՈՍ։

Նախարար կայսերական Դրան կոմս Ադլերբերգ։

Յարսքոյէ Սելօ

'ի 20 Մայիսի 1853 ամի.

Համար 130։

57.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Յայտարար նամակի Գլխաւոր Իշխանապետի Լազարեան ճեմարանի՝ կոմսին Օռլովայ. որով ազդ առնէ նա Տ. Յովհաննու Յովակիմեան Լազարեանց, թէ հաճեալ է կայսրն պարգեւել նմա զՇքանշանն Ասպետական կարգի Ս. Աննայի ա՛ աստիճանի՝ զարդարեալ կայսերական թագիւ:

—

Գլխաւոր Իշխանապետ Լազարեան ճեմարանի Արեւելեան լեզուաց:

—

'Ի Ս. Պետերբուրգ.
'ի 23 Մայիսի 1853 ամի:
համար 821:

Հոգաբարձուի Լազարեան Ճեմարանի Արեւելեան լեզուաց, Տեառն Ներգործական Պետական Խորհրդականի ունողի զկոչումն Սենեկապետի, Յովհաննու Լազարեանց:

Թագաւոր կայսրն ուշ եդեալ 'ի յարատեւ ջերմեռանդութիւն Ձերայն Գերազանցութեան 'ի պաշտօնութիւն Լազարեան Ճեմարանի Արեւելեան լեզուաց եւ 'ի մեծամեծ նուիրաբերութիւնս յօգուտ նոյն Ճեմարանի, 'ի 20 այսր Մայիսի Ամենողորմածաբար հաճեցաւ պարգեւել Ձեզ, ողորմած Տէր, զՇքանշան Ասպետական կարգի Ս. Աննայի առաջին աստիճանի՝ զարդարեալ կայսերական Թագիւ:

Շնորհաւորելով Ձերում Գերազանցութեան զայն կայսերական ողորմութիւն՝ պատիւ վարկանիմ յաւելուլ, թէ բնագիրն Պարգեւական Հրովարտակի ստորագրեալ սեպհական ձեռամբ Մեծի կայսեր՝ առաքեալ է 'ի Կապիտուլն Ասպետական կարգաց վասն վաւերացուցանելոյ զայն, եւ վասն դրոշմելոյ 'ի նմա զնիշն Ասպետական կարգի. եւ յետ առաքմանն անոր՝ ունի հասնել առ Ձեզ, ողորմած Տէր:

'Ի բնագրին Գլխաւոր Իշխանապետ Ճեմարանին, Օժանդակ Զօրապետ
կոմս Օռլով:

58.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Հաղորդակցական Գրոյ Գլխաւոր Իշխանապետի Լազարեան Ճեմարանի կոմսին Օւլովայ, որով յայտնէ նա Հոգաբարձուի նոյն Ճեմարանի Տ. Յովհաննու Յովակիմեան Լազարեանց. թէ հաճեալ է կայսրն հրամայել, զի զտունն որ 'ի Մոսկուա 'ի Մեասնիցքի անուանեալ մասին երկրորդ թաղի, գնուիրեալն 'ի նմանէ և յեղբօրէ նորա՝ 'ի Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց՝ յօգուտ յիշատակելոյն Ճեմարանի, ընկալցին հանդերձ շինուածովքն և գետնով։

—

Գլխաւոր Իշխանապետ Լազարեան Ճեմարանի Արևելեան լեզուաց։

—

'Ի Ս. Փեթերբուրգ. 'ի 23 Մայիսի 1853 ամի. համար 824։

Հոգաբարձուի Լազարեան Ճեմարանի Արևելեան լեզուաց՝ Տեառն Ներգործական պետական խորհրդականի՝ ունողի զկոչումն Սենեկապետի (Յովհաննու) Լազարեանց։

Գերապայծառութիւն Ձեր 'ի նամակին զոր գրեալ էք ընդ եղբօր Ձերում՝ Օգնականի Հոգաբարձուի Լազարեան Ճեմարանի Արևելեան լեզուաց՝ Ներգործական պետական խորհրդականի՝ Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց՝ 'ի 10 էն անցեալ Ապրիլի ընդ համարով 145, յայտնէք զՁեր ցանկութիւնն պարգևելոյ յօգուտ այսր Ճեմարանի զպատկանեալն Ձեզ երկոցունցդ զտունն որ կայ 'ի Մոսկուա՝ 'ի Մեասնիցքիյ անուանեալ մասին երկրորդ թաղի ընդ համարով 240, հանդերձ ամենայն շինուածովքն՝ որ առ նմին, և գետնովն՝ որոյ տարածութիւնն է 2983½ քառակուսի սաժէն, այսու պայմանաւ՝ զի մրտցեն այնոքիկ ընդ լծակատար իշխանութեամբ Ճեմարանի յետ վախճանի Ձեր երկոցուն.

և զի՛ որպէս շինուածքն՝ նոյնպէս և գետինն մի՛ երբէք վաճառեսցին, այլ լինելով սեպհական կալուած Ճեմարանի՝ մնասցեն 'ի մշտնջենաւորս անփոխադրելի (неприкосновенный) առ այլ:

Զայն զայս նպաստ յայտնեցի ես առաջարկութեամբ՝ Կովկասեան Ժողովոյն:

Զարդիս Գաղտնածով օրագրի այս Ժողովոյ հաղորդեցաւ ինձ, թէ Թագաւոր Կայսրն՝ ըստ նոյն կարգադրութեան՝ 'ի 13 այս Մայիսի Բարձրագոյնս հաճեցաւ հրամայել՝ զի զտունն նուիրեալ յերկոցունց 'ի Չէնջ յօգուտ Լազարեան Ճեմարանի հանդերձ շինուածովքն և գետնով՝ ընկալցին:

Զայսօրինակ Կայսերական Բարեհաճութիւն հաղորդելով Ձեզ, ողորմած Տէր, յաղագս պատկանաւորն տնօրէնութեանց, կարևոր զատիմ յաւելուլ, թէ զայսմանէ ես արդէն իսկ զեկուցեալ եմ Տ. Պաշտօնակցի (товарища) Նախարարին Իրաւանց, 'ի կարգաւորութիւն Կառավարող Ծերակուտին:

Ստորագրեաց՝ Գլխաւոր Իշխանապետ Ճեմարանի Օժանդակ Զօրապետ
Կոմս Օռլով:

59.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Յայտարար նամակի Գլխաւոր Իշխանապետի Լազարեանց Ճեմարանի կոմսին Օռլովայ. որով ազդ առնէ նա Օգնականի Հոգաբարձուի Լազարեան Ճեմարանի Տ. Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց, թէ հաճեալ է կայսրն պարգևել նմա զՇքանշանն Ասպետական կարգի Ս. Աննայի ա̅ աստիճանի զարդարեալ Կայսերական Թագիւ:

—

Գլխաւոր Իշխանապետ Լազարեան Ճեմարանի Արևելեան լեզուաց:

—

'Ի Ս. Փեթերբուրգ.
'ի 23 Մայիսի, 1853 ամի.
Համար 822:

Օգնականի Հոգաբարձուի Լազարեան Ճեմարանի Արևելեան լեզուաց, Տեառն Ներգործական Պետական Խորհրդականի ունողի զկոչումն Սենեկապետի Խաչատրոյ Լազարեանց:

Թագաւոր կայսրն ուշ եդեալ 'ի յարատեւ ջերմեռանդու-թիւն Ձերոյին Գերազանցութեան 'ի պայծառութիւն Լազարեան Ճեմարանի Արեւելեան լեզուաց և 'ի մեծամեծ նուիրաբերութիւնս յօգուտ նոյն Ճեմարանի, 'ի 20 այսր Մայիսի Ամենողորմածաբար հաճեցաւ պարգևել Ձեզ, ողորմած Տէր, զՇքանշան Ասպետա-կան Կարգի Ս. Աննայի առաջին աստիճանի զարդարեալ կայսե-րական Թագիւ:

Շնորհաւորելով Ձերում Գերազանցութեան զայն կայսե-րական ողորմութիւն՝ պարտ վարկանիմ յաւելուլ, թէ բնագիրն Պարգևական Հրովարտակի ստորագրեալ սեպհական ձեռամբ Մեծի Կայսեր՝ առաքեալ է 'ի Կափիթուլն Ասպետական Կարգաց վասն վաւերացուցանելոյ զայն, և վասն դրոշմելոյ 'ի նմա զնիշքն Ասպե-տական Կարգի, և յետ ստացմանն անտի՝ ունի հասանել առ Ձեզ, ողորմած Տէր:

'Ի բնագրին Գլխաւոր Իշխանապետ Ճեմարանին, Օժանդակ Զօրապետ՝
կոմս Օստրէ:

60.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Պարգևական Հրովարտակի Արքային Պարսից Նասրէտ-Դին-Շահի. որով տուաւ Տ. Յովհաննու և Խաչատրոյ Յովակիմեանց Լազարեանց Շքանշանն Առիւծու և Արեգական ա՛ աստիճանի (*):

Որովհետև երկոքին Տէրութիւնք՝ Պարսից և Ռուսաց՝ գտա-նին 'ի Բարեկամական յարակցութեան, յայն սակս և Մեք պար-տաւորութիւն համարիմք՝ զիւրաքանչիւր ոք՝ որ սպաս ծառայու-

(*) Հրովարտակս այս նախ 'ի Պարսկական լեզուէ թարգմանեցաւ 'ի Ռուս 'ի Կաւկասեան Նամեստնիկութենէ 'ի Թիֆլիզոյ 'ի Փեթերբուրգ. և ապա 'ի թարգմանութենէ անտի փոխեցաւ 'ի Հայ:

թեան մատուցանիցէ, և կենցաղօգտակարագոյն գործովք երևելի զանձն հանդիսացուսցէ, չզրկել և 'ի Մերոց ողորմութեանց:

Ազդ եղև Մեզ, թէ արժանաւորագոյն պատւոյ՝ պերճափառն՝ մեծանձնն Խաչատուր Յովակիմեան Լազարեանց, ընդարձակեալ և տուեալ յոյժ պայծառացուցեալ է զԱրևելեան լեզուաց Ճեմարանն 'ի Մոսկուա քաղաքի՝ զհիմնեալն 'ի հօրեղբօրէ նորա և 'ի հօրէ նորա և զհաստատեալն 'ի Նորին Վսեմութենէ, յորում ուսանին մանկանց՝ բաց յայլոց գիտութեանց՝ նա և օտար լեզուք, Արաբացւոց՝ Պարսից և Տաճկաց. որով և հրահանգեալ պատրաստին թարգմանք ընտիրք և միանգամայն պիտանացուք Պարսկաստանի, որպիսի եղեն որդին և եղբօրորդին գերաստիճան Խամայիլ (Սանփան) Խանի, որք վարժեցան 'ի նմին շահաբեր Ճեմարանի:

'Ի տրիտուր այսպիսեաց վաստակոց և արդեանց Ձերոց, Մեք՝ ըստ Մեծում Արքայական ողորմութեան՝ պարտ համարիմք պարգևել Ձեզ զՇքանշանն Առիւծու և Արեգական առաջին աստիճանի, և առաքեցաք կրել ըստ սահմանեալ կարգի: Ընդ նմին ցանկամք՝ զի Դուք ցուցջիք (յայսմհետէ) զայլ ևս օգտակար ծառայութիւնս:

Հրամայեմք՝ զի Հրովարտակս արձանագրեսցի 'ի մատենի Թագաւորական Հրովարտակաց:

Յամսեանն Ջամադի-օլ-ավվալ 1269 ամի (*):

(*) Որ համեմատի փրկչական թուականիս 1853:

Ծանօթ. Սոյն մտօք և զօրութեամբ պարգևեցաւ և Յովհաննու Յովակիմեան Լազարեանց Հրովարտակ 'ի Շահէն Պարսից հանդերձ Շքանշանաւ Առիւծու և Արեգական առաջին աստիճանի:

61.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Քաղուածոյն որ 'ի Ցուցակէ Ծերակուտին Ս. Փեթերպուրկայ 'ի 16 Յունիսի 1853 ամի, համար 48, յաղագս Բարձրագոյն Հրամանին ծանուցելոյ կառավարող Ծերակուտին 'ի 29 Մայիսի 'ի Տ. կառավարչէ Նախարարութեան Իրաւանց:

Իշխանապետեան Լազարեան Ճեմարանի Արեւելեան լեզուաց, ծանոյց նմին Տ. կառավարչի Նախարարութեան Իրաւանց, թէ Ներգործական պետական խորհրդականքն, և Սենեկապետքն, այն է՝ Հոգաբարձուն Լազարեան Ճեմարանի՝ Յովհաննէս, և Օգնականն Հոգաբարձուի այսր Ճեմարանի՝ Խաչատուր, Լազարեանք, բաց յառաջնոց մեծագումար նուիրաբերութեանց՝ եղելոց 'ի Նախնեաց նոցա և 'ի նոցունց յինքեանց 'ի կառուցումն Ճեմարանին որ 'ի Մոսկուա՝ և 'ի պահպանութիւն նորին, հոգ կալեալ առ առաւել ևս յապահովութիւն նորին՝ յանձնեցին զփափագ իւրեանց 'ի նուիրել յօգուտ նորին զիւրեանց զսեպհական տունն՝ որ կայ 'ի Մոսկուա, 'ի Մեասնիցքի անուանեալ մասին երրորդ թաղի ընդ համարով 240 հանդերձ ամենայն շինուածովքն նմին պատկանելովք, և գետնովն՝ որոյ տարածութիւնն է 2983½ քառակուսի սաժէն: Այն տուն է զոր ստացեալ էր հօրեղբայր նոցա՝ Ներգործական պետական խորհրդականն Յովհաննէս Լազարեանց՝ ըստ զօրութեան կալուածագրին (по купчей крѣпости) գրելոյ 'ի 13 Ապրիլի 1800 ամի՝ յիշխանացն յԻւանայ՝ 'ի Վասլէ և 'ի Պետրոսէ՝ Մեշչէրսքի մականուանելոց. բայց նոքա (Լազարեանքն) ունին ըստ իրաւանց ժառանգութեան յետ մահուան հօրն իւրեանց՝ Ազնուականին Յովակիմայ Լազարեանց, համաձայն բաժանարար թղթոյն (раздѣльному акту) արարելոյ յամին 1821: Նուիրեն նոքա զնշանակեալ տունն յօգուտ Ճեմարանին այնու պայմանաւ՝ զի գնի փոխանակի նոցունց Լազարեանց՝ մինչ այն (այսինքն՝

տունն) հանդերձ շինուածովքն և գետնով ընդ լիակատար իշխանութեամբ Ճեմարանին. և զի որպէս շինուածքն, նոյն և գետինն մի՛ երբէք վաճառեսցին 'ի Ճեմարանէ. այլ լինելով սեպհական կալուած նորին՝ մնասցէ մշտնջենապէս անանցանելի առ այլս (неприкосновенный)։

Թագաւոր Կայսրն, ըստ առաջադրութեան Տ. Օժանդակ Զօրապետին Կոմսին Օրլովայ, և ըստ տնօրէնութեան Կովկասեան Ժողովոյն, 'ի 13 Մայիսի այսր ամի, Բարձրագոյնս բարեհաճեցաւ հրամայել՝ զի զտունն նուիրեալ 'ի Ներգործական Պետական Խորհրդականաց Լազարեանց հանդերձ շինուածովքն և գետնով ընկալցին։

62.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Բարձրագոյն Հրամանի Շահին Պարսից յանուն Դեսպանին Պարսից որ 'ի Ս. Փեթերպուրգ, յաղագս Հրովարտակացն որովք պարգևեցան Տ. Յովհաննու և Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց Շքանշանքն Առիւծու և Արեգական ա̃ աստիճանի (*)։

Մերում փառաւոր և մտերմագոյն Պաշտօնատարի, ե՛ն։

'Ի տրիտուր շահաւետագոյն վաստակոց ցուցելոց 'ի Սենեկապետէն Դրան Ռուսաց Նորին Կայսերական Մեծութեան, 'ի Ներգործական Պետական Խորհրդականէ՝ 'ի Հոգաբարձուէ Լազարեան Ճեմարանի Արևելեան լեզուաց՝ 'ի Յովհաննէ Յովակիմեան Լազարեանց, և 'ի Նորին եղբօրէ՝ 'ի Սենեկապետէ Դրան Նորին Կայսերութեան Մեծութեան՝ 'ի Ներգործական Պետական Խորհրդականէ՝ յՕգնականէ Հոգաբարձուի Լազարեան Ճեմարանի

(*) Թարգմանութիւնն Հրամանագրիս 'ի Պարսից լեզուէ 'ի Ռուս՝ արարաւ 'ի Ս. Փ. պուրգ 'ի Թրիրոկով անուն Կաւկասեան Ակադեմէ. և յոյնմանէ այս թարգմանեցաւ յԻնէն 'ի Հայ։

Երևելեան ընծայ՝ 'ի Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց, դեռ ևս 'ի լինելն Ձեր 'ի մայրաքաղաքի Մերս Տէրութեան՝ հաստատեցան 'ի Մէնջ երկու Բարձրագոյն Հրովարտակք վասն պարգևելոյ Նոցա զՇքանշանս Առիւծու և Արեգական: Այն երկու Հրովարտակք տուան Ձեզ վասն հասուցանելոյ 'ի ձեռս Դեսպանի Մերոյ ունողի գլխակատար իշխանութիւն. բայց յետ վերադարձի Նորա մնացեալ են այն Հրովարտակք 'ի Դիւանատան Նորա 'ի Ս. Փեթերպուրկ. և մինչև ցայժմ չեն մատուցեալք Նոցին Գերազանցութեանց Տեարց Լազարեանց: Այլ զի Կառավարութիւնն Մեր ցանկայ վարձատրել զնոսա, յայն սակս կարևոր դատի հրամայել Ձեզ՝ զի անյապաղ 'ի տանալն Ձեր զայս հրամանագիր՝ զՀրովարտակսն զայնոսիկ հասուսջիք նոցա. և 'ի Ձէնջ ևս գրեսջիք զնամակ 'ի յայտ առնել զՄեր Բարձրագոյն զողորմութիւն և զբարեյօժարութիւն առ նոսա. և ընդ Հրովարտակացն 'ի միասին մատուսջիք Նոցին Գերազանցութեանց Տեարց Լազարեանց:

'Ի Հիճրէթի 1270 (այն է յամի Տեառն 1854):

63.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Յայտարար նամակի Դեսպանին Պարսից՝ Մահմուտ խանի որով յայտնէ նա Հոգաբարձուի Լազարեան Ճեմարանի Տ. Յովհաննու Յովակիմեան Լազարեանց, թէ պարգեւեալ է նմա Շահն զՇքանշանն Առիւծու եւ Արեգական ա՟ աստիճանի։

Պարսից Դեսպանութիւն

Ձերոյն Գերազանցութեան

Ողորմած Տէր

Յովհաննէս Յովակիմեան,

Ըստ հաստատուն համաձայնութեան եւ սերտ յարակցութեան՝ զոր ունին 'ի մէջ իւրեանց երկոքին հզօրագոյն Պետութիւնք՝ Պարսից եւ Ռուսաց, Կառավարութիւնն Պարսից պարտ վարկանի յայտնել զիւր երախտագիտութիւն իւրաքանչիւր հպատակի Ռուսաց՝ որ օգտակար լինի վաստակս ցուցանիցէ վասն Պարսկաստանի։

Ձերդ Գերազանցութիւն, որպէս Հոգաբարձու Լազարեան Ճեմարանի եղելոյ 'ի Մոսկուա, յարաջան հոգողութեամբ հանապազ փոյթ եւ խնամ կալայք դաստիարակելոյն 'ի նմա՝ հպատակաց Նորին Մեծութեան Շահի։

'Ի ցոյց իւրոյ Մխիթարական բարեհաճութեան առ այդգունակ հոգողութիւն, Նորին Մեծութիւնն՝ Շահն Պարսից՝ Ամենողորմածաբար պարգեւեաց Ձեզ զՇքանշան Առիւծու եւ Արեգական՝ առաջին աստիճանի։

Ախորժելի է ինձ՝ յայտնել Ձեզ զայս ողորմութիւն Ինքնակալին իմոյ. եւ ես փութամ առաքել ընդ այսմ զվիճակեալ Նշանն եւ զՀրովարտակն տուեալ վասն այնորիկ՝ խնդրելով զեկուցանել ինձ զստացումնն թէ՛ զՆշանին եւ թէ՛ զՀրովարտակին, եւ վստահ յիմս լինել 'ի կատարեալ պատիւ։

Մահմուտ խան։

'ի 10 Նոյեմբերի 1854 ամի։

64.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Այլ նամակի նոյն Դեսպանի. որով առաքեցաւ առ Յովհաննէս Յովակիմեան Լազարեանց Հրամանն Առիւծու և Արեգական ա՛ աստիճանի։

—

Ձերոյին Գերազանցութեան

Որովհետև Տէրութիւնք Պարսից և Ռուսաց գտանին 'ի բարեկամական կապակցութեան, յայն սակս Մեծափառ Շահն մեր զիւրաքանչիւր ոք՝ որ կայցէ 'ի պաշտաման Արքունի՝ և կենցաղօգուտ վաստակովք գովանի զանձն հանդիսացուցէ, պարտաւորութիւն համարի չզլել յԱրքայական ողորմութենէ: Եւ քանզի բարերար սխրագործութեամբ Հօրեղբօր և Հօր Ձերոյ հիմնեալ է 'ի Մոսկուա Լազարեան Ճեմարանն Արևելեան լեզուաց. և զի Դուք ևս ընդարձակեալ էք զայն և յապահով կացուցեալ Ձերովք նուիրաբերութեամբք. և զի բաց յայդցանէ՝ և Ճեմարանն այն տայ զփոխադարձ օգուտ՝ Մեր և Ձեր Տէրութեանց, այսորիկ վասն՝ Մեծափառ Շահն ևս վարձատրէ զՁեզ Հրամանաւ Առիւծու և Արեգական առաջին աստիճանի. որ և առաքի առ Ձեզ:

Բարեհաճեցարուք ծանուցանել ինձ զստացմանէ այսր Արքայական Պարգևի:

Ստորագրեալ է. Մահմուտ Խան, Դեսպան Պարսից 'ի կայսերական Դրան Ռուսաց 'ի Ս. Փեթերպուրկ։

'Ի 10 Սեպտեմբերի 1854 ամի։

65.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Այլ նամակ նոյն Դեսպանի. որով ծանուցանէ Օգնականի Հոգաբարձուի Լազարեան Ճեմարանի՝ խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց, թէ պարգեւեալ է նմա Շահն Պարսից զՇքանշանն Առիւծու և Արեգական ա՛ աստիճանի։

—

Պարսից Դեսպանութիւն

Ձերոյին Գերազանցութեան

Ողորմած Տէր

Խաչատուր Յովակիմեան,

Ըստ հաստատուն համաձայնութեան և սերտ յարակցութեան՝ զոր ունին 'ի միջի իւրեանց երկոքին հզօրագոյն Պետութիւնք՝ Պարսից և Ռուսաց, Կառավարութիւնն Պարսից պարտ վարկանի յայտնել զիւր երախտագիտութիւն իւրաքանչիւր հպատակի Ռուսաց՝ որ օգտակար ինչ վաստակս ցուցանիցէ վասն Պարսկաստանի։

Ձերդ Գերազանցութիւն, որպէս օգնական Հոգաբարձուի Լազարեան Ճեմարանի եղելոյ 'ի Մոսկուա, յառաջեան հոգողութեամբ հանապազ փոյթ և խնամ կալայք դաստիարակելոցն 'ի նմին՝ հպատակաց Նորին Մեծութեան Շահի։

'Ի ցոյց Իւրոյ Միապետական բարեհաճութեան առ այդգունակ հոգողութիւն Նորին Մեծութիւնն՝ Շահն Պարսից՝ Ամենողորմածաբար պարգեւեաց Ձեզ զՇքանշան Առիւծու և Արեգական՝ առաջին աստիճանի։

Ախորժելի է ինձ յայտնել Ձեզ զայս ողորմութիւն Ինքնակալին իմոյ. և ես փութամ առաքել զյիշատակեալ Նշանն և զՀրովարտակն տուեալ վասն այնորիկ, խնդրելով՝ զեկուցանել ինձ զստացմանէն թէ՛ զՆշանին և թէ՛ զՀրովարտակին, և վստահ լինիմ լինել 'ի կատարեալ պատիւ։

Մահմուդ Խան։

'Ի 10 Սեպտեմբերի 1854 ամի։

66.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Այլ Նամակի նոյն Դեսպանի. որով առաքեցաւ յիշատակեալ Շքանշանն առ Խաչատուր Ցովակիմեան Լազարեանց:

—

Ձերոյին Գերազանցութեան,

Որովհետեւ Տէրութիւնքն Պարսից եւ Ռուսաց գտանին 'ի բարեկամական կապակցութեան, յայն սակս Մեծափառ Շահն մեր զիւրաքանչիւր ոք՝ որ կայցէ 'ի պաշտաման Արքունի, եւ կենցաղօգուտ վաստակովք դովանի զանձն հանդիսացուցէ, պարտաւորութիւն համարի չզրկել յԱրքայական ողորմութենէ: Եւ քանզի բարերար ախրագործութեամբ Հօրեղբօր եւ Հօր Ձերոյ հիմնեալ է 'ի Մոսկուա Լազարեան Ճեմարանն Արեւելեան լեզուաց. եւ զի Դուք ես ընդարձակեալ էք զայն եւ յապահովս կացուցեալ՝ Ձերովք նուիրաբերութեամբք. եւ զի բաց յայդցանէ՝ եւ Ճեմարանն այն տայ զփոխադարձ օգուտ՝ Մեր եւ Ձեր Տէրութեանց, այսոցիկ վասն՝ Մեծափառ Շահն եւս վարձատրէ զՁեզ Շքանշանաւ Առիւծու եւ Արեգական՝ առաջին աստիճանի, որ եւ առաքի առ Ձեզ:

Բարեհաճեցարուք ծանուցանել ինձ զստացմանէ այսր Արքայական Պարգեւի:

Ստորագրեալ է. Մահմուտ խան, Դեսպան Պարսից 'ի կայսերական Դրան Ռուսաց՝ 'ի Ս. Փեթերպուրկ:

'ի 10 Սեպտեմբերի 1854 ամի:

67.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Յայտարար նամակի կոմսին Օռլովայ. որով ծանուցանէ նա Տ. Յովհաննու Յովակիմեան Լազարեանց, թէ հաճեալ է կայսրն թոյլ տալ նմա կրել զՇքանշանն Առիւծու և Արեգական զպարգևեալն 'ի Շահէն Պարսից։

—

Գլխաւոր Իշխանապետ
Լազարեան Ճեմարանի
Արեւելեան լեզուաց։

—

'Ի Գանթչինա.
12 Հոկտեմբերի 1854 ամի։
Համար 1252։

Ողորմած Տէր
Յովհաննէս Յովակիմեան,

Թագաւոր Կայսրն, ըստ յայտարարութեանն հասուցելոյ առ 'Նորին Մեծութիւնն՝ յաղագս պարգևելոյ Շահին Պարսից Ձերում Գերազանցութեան զՇքանշան Առիւծու և Արեգական առաջին աստիճանի, Բարձրագոյնս բարեհաճեցաւ՝ զի Դուք ընկալջիք զայն և կրեսջիք։

Զայսպիսի Կայսերական բարեհաճութիւն՝ զհաղորդեալն ինձ 'ի Տ. Նախագահէ Կովկասեան Փոխարքայէն՝ ծանուցանելով Ձեզ, Ողորմած Տէր, խնդրեմ ամենախոնարհաբար 'ի Ձերմէ Գերազանցութենէ՝ վստահ լինել 'ի կատարեալ պատիւ և 'ի հաւատարմութիւն։

Ստորագրեալ է կոմս Օռլով։

68.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Յայտարար նամակի կոմսին Օռլովայ. որով ծանուցանէ նա Տ. Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց, թէ հաճեալ է կայսրն թոյլ տալ նմա ընդունել և կրել զպարգևեալն 'ի Շահէն Պարսից զՇքանշանն Առիւծու և Արեգական:

—

Գլխաւոր Իշխանապետ
Լազարեան Ճեմարանի
Արևելեան լեզուաց:

—

'Ի Գաթչինա.

12 Հոկտեմբերի 1854 ամի:

Համար 1253:

Ողորմած Տէր

Խաչատուր Յովակիմեան,

Թագաւոր Կայսրն, ըստ յայտարարութեանն հասուցելոյ առ Նորին Մեծութիւնն՝ յաղագս պարգևելոյ Շահին Պարսից Ձերում Գերազանցութեան զՇքանշան Առիւծու և Արեգական առաջին աստիճանի, Բարձրագոյնս բարեհաճեցաւ՝ զի Դուք ընկալջիք զայն և կրեսջիք:

Զայսպիսի Կայսերական բարեհաճութիւն՝ զհաղորդեալն ինձ 'ի Տ. Նախագահէ Կաւկասեան Խորհրդոյն՝ ծանուցանելով Ձեզ, ողորմած Տէր, խնդրեմ անենախնամարհաբար 'ի Ձերմէ Գերազանցութենէ՝ վստահ լինել 'ի կատարեալ պատիւ և 'ի հաւատարմութիւն:

Ստորագրեալ է. Կոմս Օռլով:

Բ. ՑՈՒՑԱԿ ԱԶԳԻ ԱԶԳԻ ԸՊԱՀՈՎԱԳՐԱՑ՝ ՀՐԱՄԱՆԱԳՐԱՑ՝ ՅԱՅՏԱՐԱՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՑ՝ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԹՂԹՈՑ՝ ԳՐԵԼՈՑ ԱՌ ԼԱԶԱՐԵԱՆ ՊԱՅԱԶԱՏՍ, ԿԱՄ ՎԱՍՆ ՆՈՑԱ՝ ԱՌ ԱՅԼՍ, 'Ի ՄԵԾԱՄԵԾ ՊԱՇՏՕՆԱԿԱԼԱՑ ՏԷՐՈՒԹԵԱՆ ՅԱՅԼԵՒԱՅԼ ԴԷՊՍ ԵՒ 'Ի ԺԱՄԱՆԱԿՍ։

Տ. Յովհաննու Լազարեան.

1. Գիր Արտօնութեան 'ի Նահանգային Գլխոյ Ազնուականաց և Պատգամաւորաց Եարոսլավլայ, 'ի 29 Նոյեմբերի 1789 ամի, յաղագս Ազնուականութեան Յովհաննու Լազարեան Լազարեանց 'ի տեղակալութեան Եարոսլավլայ։

2. Գիր Արտօնութեան 'ի Նահանգային Գլխոյ Ազնուականաց և Պատգամաւորաց Ս. Փեթերբուրգայ, 'ի 7 փետրուարի 1792 ամի, յաղագս Ազնուականութեան Նորին Յ. Լ. Լազարեանց 'ի Նահանգին Ս. Փեթերբուրգայ։

Տ. Յովակիմայ Լազարեանց.

3. Արտօնութեան 'ի Նահանգային Գլխոյ Ազնուականաց և Պատգամաւորաց Մոսկուայ յ30 Ապրիլի 1792 ամի, յաղագս Ազնուականութեան Յ. Լազարեանց 'ի Նահանգին Մոսկուայ։

4. Գիր վկայութեան 'ի Նահանգային Գլխոյ Ազնուականաց 'ի 26 Նոյեմբերի 1792 ամի, յաղագս Ազնուականութեան նորին Յ. Լազարեանց 'ի Նահանգին Մոսկուայ։

5. Գիր Արտօնութեան 'ի Նահանգային Գլխոյ Ազնուականաց Ս. Փեթերբուրգայ յ30 Օգոստոսի 1814 ամի, վասն կրելոյ նորին Յ. Լազարեանց զդեղնապղնձեայ (бронзовый) շքադրամ (медаль) Ազնուականութեան. յաղագս անցիցն 1812 ամի։

Տ. Յովհաննու Յովակիմեան.

6. Գիր հրամանի 'ի Գիւանատանէ Արտաքին գործոց, 'ի

27 Ապրիլի 1806 ամի, յաղագս Թարգմանական ատեանի Յ. Յ. Լազարեանց:

7. Գիր Արտօնութեան 'ի Նահանգային Գոլոյ Ազնուականաց Ս. Փեթերպուրկայ յ30 Օգոստոսի 1814 ամի, վասն կրելոյ նորին Յ. Յ. Լազարեանց զգերդաստանեաւ շքադրամ Ազնուականութեան յաղագս անցիցն 1812 ամի:

8. Պարգեւագիր տուեալ նմին Յ. Յ. Լազարեանց 'ի 27 Սեպտեմբերի 1840 ամի, 'ի նշանակ երեսնամեայ ամբիծ ծառայութեան նորա:

9. Պարգեւագիր տուեալ նմին Յ. Յ. Լազարեանց 'ի 5 Հոկտեմբերի 1845 ամի, 'ի նշանակ երեսուն և հնգամեայ անարատ ծառայութեան նորա:

Տ. Խաչատուր Յովհաննէսեան.

10. Գիր հրամանի 'ի Դիւանատանէ Արտաքին գործոց յ30 Յունիսի 1811 ամի, յաղագս Թարգմանական ատեանի Խ. Յ. Լազարեանց:

11. Վկայագիր տուեալ նմին Խ. Յ. Լազարեանց 'ի ժողովոյ Դաստիարակութեան Ճեմարանին Ս. Փեթերպուրկայ 'ի 5 Յունիսի 1812 ամի յաղագս հանդիսանալոյն 'ի հարցաքննութիւնս գիտութեանց և լեզուաց:

12. Գիր Արտօնութեան 'ի Նահանգային Գոլոյ Ազնուականաց Ս. Փեթերպուրկայ յ30 Օգոստոսի 1814 ամի վասն կրելոյ նորին Խ. Յ. Լազարեանց զգերդաստանեաւ շքադրամ յաղագս անցիցն 1812 ամի:

13. Ազդարար գրութիւն Նախարարին Արտաքին գործոց՝ Կոմսին Նեսսելրոդայ 'ի 28 Դեկտեմբերի 1816 ամի, յաղագս Բարձրագոյն (Կայսերական) հրամանի՝ որով թոյլատրի նմին Խ. Յ. Լազարեանց կրել զխաչ կարգին Ս. Յովհաննու Երուսաղէմացւոյ:

14. Վկայագիր Կայսերական Տնտեսական Ընկերութեան

Մոսկուայ 'ի 5 Մայիսի 1817 ամի, յաղագս ընդունելոյ նորին Խ. Յ. Լազարեանց զկոչումն Պատուանուն Անդամոյ:

15. Վկայագիր Հանքաբանական Ընկերութեան Ս. Փեթերբուրգայ, 'ի 15 Մայիսի 1818 ամի, յաղագս ընտրութեան նորին Խ. Յ. Լազարեանց 'ի թիւս Պատուանուն Անդամոց:

16. Վկայագիր Կայսերական Ընկերութեան Շինական Տնտեսութեան Մոսկուայ, յ3 Յուլիսի 1823 ամի, յաղագս ընդունելոյ նորին Խ. Յ. Լազարեանց զկոչումն Գործունեայ Անդամոյ:

17. Յայտարարական գիր՝ Ոստիկանապետի Գլխաւոր Տեսչի Կայսերական Բնակութեանց՝ Կոմսին Պենկենտորֆայ, 'ի 17 Դեկտեմբերի 1829 ամի, յաղագս իրաւանցն շնորհելոյ նմին Խ. Յ. Լազարեանց 'ի կրել զարծաթի շքադրամ 'ի տրիտուր վաստակոց նորա ցուցելոց 'ի պատերազմին ընդդէմ Տաճկաց:

18. Պարգեւագիր տուեալ նմին Խ. Յ. Լազարեանց 'ի 16 Հոկտեմբերի 1833 ամի, 'ի նշանակ ամբիծ ծառայութեան նորա:

19. Պարգեւագիր տուեալ նմին Խ. Յ. Լազարեանց 'ի 4 Հոկտեմբերի 1839 ամի, 'ի նշանակ երեսնամեայ անարատ ծառայութեան նորա:

20. Պարգեւագիր տուեալ նմին Խ. Յ. Լազարեանց 'ի 18 Սեպտեմբերի 1843, 'ի նշանակ երեսուն և հինգամեայ անարատ ծառայութեան նորա:

21. Վկայագիր տուեալ նմին Խ. Յ. Լազարեանց 'ի Փարիզեան Ասիական Ընկերութենէ Գրականութեան և Հնութեանց, յամսեան Մայիսի 1847 ամի, յաղագս ընտրութեան նորա 'ի թիւս Անդամոց:

Տ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ.

22. Հրամանագիր 'ի Դիւանատանէ Արտաքին գործոց, յ30 Յունիսի 1811 ամի, յաղագս Թարգմանական պաշտօնի Յ. Յ. Լազարեանց:

23. Աղերսագիր նորին Յ. Յ. Լազարեանց յանուն Կայսեր, վասն մտանելոյ 'ի պաշտօն զինուորութեան:

Տ. Լազարու Յովակիմեան.

24. Գիր Պարգեւական 'ի Նաւահանգստին Գալլոյ Եղնուականաց և Պատգամաւորաց Ս. Փեթերբուրգի յ30 Օգոստոսի 1814 ամի, զերաւանց կրելոյ զդեղնապղնձեայ շքանշան յաղագս անցիցն 1812 ամի:

25. Հրովարտակ տուեալ 'ի 14 Յունիսի 1826 ամի, յաղագս ստանալոյ նորին Գ. Յ. Լազարեանց զԱստիճան Գնդապետութեան:

26. Ազդարար նամակ Վերատեսչին Շտաբի յ8 Օգոստոսի 1826 ամի ընդ համարով 1303, ընդ որում և Հրովարտակն տուեալ վասն այսր աստիճանի:

27. Յայտարարական Գիր փոխանորդին Կառավարչի Վերատեսչական Խորհրդարանի 'ի 28 Յունուարի 1830 ամի, ընդ համարով 749. ընդ նմին և Հրովարտակն՝ որով պարգեւի նմին Գ. Յ. Լազարեանց Ասպետական նշան Ս. Աննայի Բ աստիճանի:

28. Յայտարարական նամակ Գլխաւոր Տեսչի Զինուորական Կրթարանի՝ Օժանդակ Գեներալի Գուբերտի առ Խաչատուր Յովակիմեան, 'ի 11 Մարտի 1837 ամի, յաղագս պարգեւագրութեան Յովհաննու Յովակիմեան աստիճանաւ Ներգործական Խորհրդականի Տէրութեան:

29. Պատճէն 'ի տոմսակէ Տ. գլխաւոր Մենեկայեւի՝ Կոմսին Լիտտայ 'ի 26 Յունիսի 1837 ամի, ընդ համարով 22, յաղագս զգենլոյ ամենայն աստիճանաւորաց արքունի Գրան զմխաձև զգեստ:

30. Պատճէն 'ի Բարձրահրաման (Կայսերական) Հրովարտակէ Պալատական Հաշուէտան 'ի 25 Մարտի 1839 ամի, յաղագս ընդունելոյ Տ. Խաչատրոյ Յովակիմեան զկոչումն Մենեկայեւի:

31. Ծանօթագիր Կոմսին Պենկենտօրֆայ առ Տ. Խաչա-

տուր Յովակիմեան, 'ի 31 Մարտի 1839 ամի, ընդ համարով 1724, զնոյն իսկ իրաց:

32. Շնորհագիր կոմսին Նեսսելրօտայ առ կոմսն Պենկենդորֆ, յ2 Հոկտեմբերի 1839 ամի, ընդ համարով 3810, յաղագս պարգեւընկալութեան Տ. Խաչատուրոյ Յովակիմեան 'ի նշանակ երեսնամեայ ամբիծ ծառայութեան:

33. Պատճէն 'ի ծանօթարար նամակէ կոմսին Պենկենդորֆայ առ կոմսն Նեսսելրօտ, յամսեան Հոկտեմբերի 1839 ամի՝ հանդերձ դարձուցմամբ առաջնոյ նշանին արժանագով ծառայութե՟:

34. Յայտարար նամակ կոմսին Նեսսելրօտայ առ կոմսն Պենկենդորֆ յ30 Հոկտեմբերի 1839 ամի, ընդ համարով 4207. ընդ նմին և Հրովարտակն հանդերձ միով օրինակաւ կանոնադրութեանց, յաղագս պարգեւընկալութեան Տ. Խաչատուրոյ Յովակիմեան 'ի տրիտուր երեսնամեայ ամբիծ ծառայութեան:

35. Յայտարար գրութիւն երրորդ բաժնի սեպհական Դիւանատան Նորին Կայսերական Մեծութեան 'ի 16 Ապրիլի 1841 ամի, ընդ համարով 2219, առ Տ. Յովհաննէս Յովակիմեան, յաղագս պարգեւազարդութեան նորա Ադամանդեան նշանաւ կարգի Ս. Ստանիսլաւայ առաջնոյ աստիճանի:

36. Պատճէն 'ի Բարձրագոյն (Կայսերական) Հրովարտակէ տուելոյ 'ի 11 Ապրիլի 1841 ամի, վասն պարգեւելոյն նշանի Ս. Ստանիսլաւայ առաջնոյ աստիճանի:

37. Յայտարար նամակ Տ. Գենաժելիչի առ Տ. Յովհաննէս Յովակիմեան, 'ի 31 Մայիսի 1841 ամի, ընդ համարով 1932. ընդ նմին և Պարգեւագիրն տուեալ 'ի նշանակ երեսնամեայ ամբիծ ծառայութեան՝ հանդերձ միով օրինակաւ կանոնադրութեանց:

38. Պատճէն 'ի տոմսակէ կոմսին Պենկենդորֆայ յ9 Ապրիլի 1842 ամի, յառաջադրելոյ 'ի տեսութիւն ամենողորմած կայսեր վասն հայցելոյ զվարձատրութիւն Տ. Խաչատուրոյ Յովակիմեան Ադամանդանշանաւ կարգի Ս. Ստանիսլաւայ առաջնոյ աստիճանի:

39. Պատճէն 'ի տոմսակէն՝ յորում առաջարկէ վասն նորա

պարգեւատրութիւն Պատուանշանաւ կարգի Ս. Ստանիսլաւայ առաջ-նոյ աստիճանի (կրկին օրինակ):

40. Ծանօթարար գրութիւն Կոմսին Պենկենտօրֆայ առ Տ. Խաչատուր Յովակիմեան, 'ի 4 Մայիսի 1842 ամի, ընդ համա-րով 1773, յաղագս պարգեւելոյ նմա ամենողորմած Կայսեր ըղ-տուփ պնչադեղոյ (табакерка)` դրոշմածով կենդանագրի Նորին Կայսերական Մեծութեան:

41. Յայտարար նամակ Կոմսին Պենկենտօրֆայ առ Տ. Խա-չատուր Յովակիմեան, 'ի 11 Մայիսի 1842 ամի, ընդ համարով 1890, հանդերձ տուփն պնչադեղոյ` տացելով 'ի խորհրդարանէ Նորին Կայսերական Մեծութեան:

42. Յայտարար նամակ Կոմսին Պենկենտօրֆայ առ Տ. Յովհան-նէս Յովակիմեան, 'ի 22 Նոյեմբերի 1842 ամի, ընդ համարով 4357, յաղագս արգելոյ Արեւելեան լեզուաց Ճեմարանին Մոս-կուայ զկիրառութիւն Արքունադրոշմ Կնքոյ 'ի գործս իւր:

43. Յայտարար նամակ Նախարարութեան Արտաքին տնտե-սական և հաշուեկան գործոց առ Տ. Խաչատուր Յովակիմեան, 'ի 11 Հոկտեմբերի 1843 ամի, ընդ համարով 3272, հանդերձ նշանակաւ երեսուն և հինգամեայ արժանագով և անարատ ծա-ռայութեան:

44. Յայտարար նամակ նոյն իսկ Նախարարութեան առ Տ. Խաչատուր Յովակիմեան, 'ի 5 Նոյեմբերի 1843 ամի, ընդ հա-մարով 3633, հանդերձ Հրովարտակաւն տուելով վասն նոյն նշանի:

45. Պատճէն 'ի Բարձրագոյն Հրովարտակէ վասն Առա-տանշանի Կարգի Ս. Ստանիսլաւայ առաջնոյ աստիճանի` ամենողոր-մածաբար պարգեւելոյ Տ. Խաչատուրոյ Յովակիմեան 'ի 11 Մար-տի 1844 ամի:

46. Յայտարար նամակ Ոստիկանապետի` Գլխաւոր Տեսչի Կայսերական բնակութեանց առ Խաչատուր Յովակիմեան, 'ի 24 Մարտի 1844 ամի, ընդ համարով 1173, յաղագս նախայիշա-տակեալ պարգեւատրութեան:

47. Ազգարար գրութիւն Կառավարչի Շտաբին Ռուսիանաց առ Խաչատուր Յովակիմեան 'ի 13 Մայիսի 1844 ամի, ընդ համարով 1914, ընդ ապահովագրոյն՝ որ զատացմանէ յիսուն ռուբլեաց 'ի Գլխաւոր Կարգաց (Капитулъ) վասն Աստեղանշանի Ս. Ստանիսլաւայ առաջնոյ աստիճանի:

48. Պատճէն 'ի յայտարար գրութենէ Տ. Նախարարի Կայսերական Գրան՝ Իշխանին Վոլքոնսքեայ առ Կոմն Վորոնցով-Դաշքով, 'ի 5 Օգոստոսի 1844 ամի, ընդ համարով 2460, 'ի յայտնութիւն շնորհակալեաց զհսկողացն 'ի պահպանութիւն մարմնոյ 'ի Տէր հանգուցեալ Արքայուհւոյն և Մեծ Իշխանուհւոյն Ալեքսանդրայ Նիկոլայեւնայի:

49. Տոմսակ Գլխաւոր-Հանդիսադետի Պալատան Նորին Կայսերական Մեծութեան առ Տ. Խաչատուր Յովակիմեան, յ8 Օգոստոսի 1844 ամի, հանդերձ վերայիշեալ պատճենիւ գրութեան Տ. Նախարարին:

50. Ազգարար գրութիւն Կառավարչի Շտաբին Ռուսիանաց առ Տ. Յովհաննէս Յովակիմեան, 'ի 13 Հոկտեմբերի 1845 ամի, ընդ համարով 3764, հանդերձ նշանակաւ տուեալով վասն երեսուն և հնգամեայ ամբիծ ծառայութեան:

51. Պատճէն 'ի Բարձրագոյն Հրովարտակէ առ Կառավարող Սինկղիտոսն, 'ի 24 Փետրուարի 1837 ամի, յաղագս ամենողորմած պարգեւատրութեան եղելոյ առ Տ. Յովհաննէս Յովակիմեան՝ աստիճանաւ Ներգործական Պետական Խորհրդականի:

52. Ազգարար գրութիւն Կառավարչի Շտաբին Ռուսիանաց առ Տ. Յովհաննէս Յովակիմեան, 'ի 13 Նոյեմբերի 1845 ամի, ընդ համարով 4026, հանդերձ չորեւք ապահովագրօք զատացմանէ դրամոցն վճարելոց սակս նշանակի արժանաւոր ծառայութեան:

53. Տոմսակ Գլխաւոր Հանդիսադետի առ Տ. Յովհաննէս Յովակիմեան 'ի 23 Դեկտեմբերի 1846 ամի. ընդ նմին և պատճէն գրութեան Տ. Պալատապետի, յաղագս յայտնելոյ զշնորհակալիս Նորուն Կայսերական Բարձրութեանց՝ Մեծի Իշխանին Մի-

խայել փաւլովիչի, և Մեծի Իշխանուհւոյն Ելենէ փաւլովնայի ծնողացն 'ի պահպանութիւն մարմնոյ 'ի Տէր հանգուցեալ Եր-քայուհւոյն և Մեծ Իշխանուհւոյն Մարիայ Միխայլովնայի:

54. Պատճէն յայտարար գրոյ Տ. Պալատապետի Նորին Կայսերական Մեծութեան՝ Իշխանին Միխայէլի փաւլովիչի առ Կոմսն Վորոնցով-Դաշքով, 'ի 20 դեկտեմբերի 1846 ամի, ընդ համարով 3032. յաղագս յայտնելոյ շնորհակալեան՝ որոց գտանն 'ի վերոյնշանակեալ հանգիսի:

Տպեալ.

55. Բարձրագոյն Յայտարարութիւն (Манифестъ) զսահմանադրութենէ նորոյ նշանի արժանագով ամբիծ ծառայութեան վասն ամենայն աստիճանաւորաց, հրատարակեալ 'ի 22 Օգոստոսի 1827 ամի:

56. Բարձրագոյն Հրովարտակ Նորին Կայսերական Մեծութեան առ Կառավարող Սինկղիտոսն, հանդերձ Կանոնադրութեամբ՝ նշանին արժանագով և ամբիծ ծառայութեան յաղագս Զինուորական և Քաղաքական Պաշտօնակալաց, տուեալ 'ի 10 Մարտի 1837 ամի (յերկուս օրինակս):

57. Կանոնադրութիւն 'ի վերայ Լեհաստական Պատուանշանի Կարգին Ս. Ստանիսլաւայ Բարձրագոյնս հաստատեալ 'ի 28 Մայիսի 1839 ամի:

Նամակք Կոմսին Պենկէնտօրֆայ.

58. 'Ի 27էն Սեպտեմբերի 1826, ընդ համարով 203, առ Խաչատուր Յովակիմեան, զի գտցի նա առ Օժանդակ-Գեներալին՝ սակս 'ի կատար ածելոյ զպէսպէս յանձնարարութիւնս:

59. Յ30էն Հոկտեմբերի 1826 ամի, ընդ համարով 81, առ Խաչատուր Յովակիմեան, սակս առաքելոյ զծրարս թղթոց յայլեայլ անձին՝ ընդ ձեռն արքունի թղթատարաց՝ առանց հատուցանելոյ զվարձ:

60. Ի 25էն Ապրիլի 1828 ամի, ընդ համարով 238, առ Խաչատուր Յովակիմեան, հանդերձ անցագրաւն՝ որ յաղագս ուղեւորելոյ 'ի քաղաքն Իզմայիլ։

61. Ի 16էն Յունիսի 1828 ամի, ընդ համարով 441, առ Տ. Խաչատուր Յովակիմեան, առ 'ի գնալ 'ի Քիշենեւ յաղագս գործառնութեանց պաշտօնի։

62. Ի 6էն Օգոստոսի 1828 ամի, ընդ համարով 199, առ Տ. Խաչատուր Յովակիմեան, յաղագս համահաճութեան թագաւոր Կայսեր յընդունել զհայազգին Սարաֆով 'ի հեծելագունդն Պաղախայ։

63. Ի 6էն Հոկտեմբերի 1828 ամի, ընդ համարով 821, առ Տ. Խաչատուր Յովակիմեան. զի վերադարձցի նա 'ի գլխաւոր բնակութենէն 'ի Ս. Փեթերպուրգ։

64. Յ'7էն Յունուարի 1829 ամի, ընդ համարով 11, յաղագս առաջարկութեանն եղելոյ զարժանեաց պարգեւընկալութեան նորին իսկ Տ. Խաչատրոյ Յովակիմեան և որոց գոյանն առ նմա 'ի գլխաւոր բնակութեան։

65. Ի 22էն Մարտի 1829 ամի, ընդ համարով 1293, առ Տ. Խաչատուր Յովակիմեան, յաղագս հաստատելոյ զտեղեկութիւն զԱրքազան Արքեպիսկոպոսն Ներսիսէ։

66. Ի 29էն Նոյեմբերի 1829 ամի, յաղագս տանելոյ ըզտեղեկութիւնս 'ի Կալկաթայէ։

67. Յ'3էն Դեկտեմբերի 1830 ամի, ընդ համարով 4648, յաղագս թոյլտուութեան Տ. Ամարխանայ բնակչի Կալկաթայ քաղաքի՝ գալ 'ի Ռուսաստան։

Ընծայք·

68. Ընծայիր տուեալ Տ. Խաչատրոյ Յովակիմեան 'ի Հրամանատարէ պատերազմող զօրաց, 'ի 21էն Յունիսի 1828 ամի, ընդ համարով 1892, յաղագս անցանելոյ առ գաղթականս Պէլկրատոյ։

69. Ընծայիր տուեալ Տ. Խաչատրոյ Յովակիմեան 'ի Նա-

խաղաղէն Գիւմնասանց Իշխանութեանցն Մոլդաւիոյ և Վալաքիոյ 'ի 23 Սեպտեմբերի 1828 ամի, ընդ համարով 896, յաղագս անցանելոյ 'ի Պուքրեշտ 'ի տեղին՝ ուր բնակէր յայնժամ Նորին Կայսերական Մեծութիւն:

70. Անցագիր տուեալ Տ. Խաչատրոյ Յովակիմեան 'ի Քաղաքական Նահանգապետէն Բեսսարաբիոյ 'ի 24 Ապրիլի 1829 ամի, ընդ համարով 829, վասն ուղեւորելոյ 'ի Քիշնեւայ յՕտեսա:

71. Անցագիր 'ի Զինուորական Գեներալ Նահանգապետէն Ս. Փեթերբուրգայ տուեալ Տ. Խաչատրոյ Յովակիմեան յ7 Յունիսի 1844 ամի, ընդ համարով 1691, վասն գնալոյ 'ի Մոսկուա, և վերադառնալոյ անտի:

Այլ Իրողք.

72. Գրութիւն Գ. Տօլեայ առ Տ. Խաչատուր Յովակիմեան 'ի 26էն Մարտի 1829 ամի, ընդ համարով 883, 'ի շնորհակալութիւն յաղագս հատուցանելոյն ինքեան զտեղեկութիւնս ստացեալս 'ի Կոստանդնուպօլսէ:

73. Երեք պատճէնք 'ի թղթոյն յաղագս թոյլտուութեան 'ի բերել զմարմին անկելոյն 'ի պատերազմին Լեյպցիգեայ Հուսար-Ռոտմիստրի Յարութիւնի Յովակիմեան Լազարեանց:

74. Գրութիւն Կոմսին Ա. Խ. Օրլովայ 'ի 19էն Յունիսի 1848 ամի, ընդ համարով 1840 առաքմամբ երկուց Հրովարտակաց տուելոց յաղագս պարգեւադրութեան Հոգաբարձուի և Կարգավարի Լազարեան Ճեմարանի Ասպետական նշանաւ կարգին Ս. Աննայի առաջնոյ աստիճանի:

75. Գրութիւն Տ. Կառավարչի Հասարին Ստիկանց Սուբէլտայ յ30էն Յունիսի 1848 ամի, ընդ համարով 1953. ըստ նոյն իրաց:

76. Գրութիւն Տ. Պուտքովայ 'ի 10էն Մայիսի 1848 ամի, ընդ համարով 757, յանուն Տ Կառավարչի (Ճեմարանին Լազարեանց), յաղագս Դասատուաց Արեւելեան լեզուաց:

Պաշտօնական Խօսք.

77. Պատճէն Հրովարտակի Երջանկի Գիւանոսին 'ի 1էն փետրուարի 1824 ամի, ընդ համարով 649, յաղագս ամբարձման Տ. Խաչատրոյ Յովակիմեան 'ի պատիւ Գիւմնական Խորհրդականի:

78. Գրութիւն Կոմսին Նեսսելրոտայ առ Տ. Խաչատուր Յովակիմեան 'ի 12էն Սեպտեմբերի 1826 ամի, ընդ համարով 876, յաղագս յանձնարարութեան նորա առ Տ. Օժանդակ Գեներալն Պենկենտօրֆ՝ ըստ Բարձրագոյն հաճութեան Թագաւոր Կայսեր 'ի կատարել զաւանձին յանձնարարութիւնն:

79. Գրութիւն Տ. Ֆոն-Ֆոքայ 'ի 18էն Յունուարի 1828 ամի, ընդ համարով 181, յաղագս ամենողորմած պարգեւատրութեանն եղելոյ առ Տ. Խաչատուր Յովակիմեան՝ Ադամանդեան նշանաւ Կարգի Ս. Աննայի երկրորդ աստիճանի:

80. Գրութիւն Ոստիկանապետի՝ Գլխաւոր Տեսչի Կայսերական բնակութեանց առ Տ. Խաչատուր Յովակիմեան 'ի 17էն Դեկտեմբերի 1829 ամի, ընդ նմին և արծաթի շքադրամ հանդերձ առ այն պատկանեալ ժապաւինաւ 'ի յիշատակ բարեյաջող վախճանի պատերազմին ընդդէմ Տաճկաց:

81. Գրութիւն Կոմսին Պենկենտօրֆայ առ Տ. Խաչատուր Յովակիմեան 'ի 31էն Դեկտեմբերի 1829 ամի, ընդ համարով 1967, վասն ամենողորմածաբար պարգեւեալ Ադամանդեան նշանի Կարգին Ս. Աննայի երկրորդ աստիճանի հանդերձ Կայսերական Թագիւ:

82. Գրութիւն Կոմսին Պենկենտօրֆայ առ Տ. Խաչատուր Յովակիմեան 'ի 13էն Յունուարի 1830 ամի, ընդ համարով 160, ընդ նմին և Հրովարտակ տուեալ վասն Ադամանդեան նշանի Կարգին Ս. Աննայի երկրորդ աստիճանի հանդերձ Կայսերական Թագիւ:

83. Պատճէն Բարձրագոյն Հրովարտակի գրելոյ առ Կառավարող Սինկլիտոսն 'ի 19 Յունվարի 1834 ամի, յաղագս ամե-

նորընծայաբար ամբարձման Պետական Խորհրդականին Խաչատրոյ Յովակիմեան 'ի պատիւ Ներգործական Պետական Խորհրդականի:

84. Պատճէն Հրովարտակի Կառավարող Սենատոսի գրելոյ առ Տեղակալն Ատենադպրի 'ի 25 Յունուարի 1834 ամի, ընդ համարով 4145, յաղագս ծանուցանելոյ զպայմանն Տ. Խաչատրոյ Յովակիմեան՝ երդմնեցուցանելով զնա վասն վերոյնշանակեալ աստիճանի:

85. Պատճէն յայտարար նամակի Կոմսին Պենկենտօրֆայ գրելոյ առ Կոմսն Նեսելրօտ 'ի 25 յունուարի 1834 ամի, ընդ համարով 334, զամբարձմանէ Տ. Խաչատրոյ Յովակիմեան 'ի պատիւ Ներգործական Պետական Խորհրդականի:

86. Պատճէն յայտարար նամակի Տ. Պլուտովայ գրելոյ առ Կոմսն Պենկենտօրֆ 'ի 12 Մայիսի 1834 ամի, ընդ համարով 1143, զառաջադրութենէ կառավարութեան 'ի կազմել զսահմանադրութիւն եկեղեցւոյ Լուսաւորչական Հայոց:

87. Պատճէն յայտարար նամակի Կոմսին Պենկենտօրֆայ գրելոյ առ Տ. Պլուտովն 'ի 21 Մայիսի 1834 ամի, յաղագս կարգման Տ. Խաչատրոյ Յովակիմեան Անդամ ժողովոյն (Комитетъ) հաստատելոյ 'ի յօրինումն սահմանադրութեան Հայկական եկեղեցւոյ:

88. Պատճէն յայտարար նամակի Տ. Պլուտովայ գրելոյ առ Կոմսն Պենկենտօրֆ 'ի 28 Մայիսի 1834 ամի, ընդ համարով 1304, յաղագս խնդրելոյ 'ի Խաչատրոյ Յովակիմեան զտեղեկութիւն զվերոյնշանակեալ գործոյ:

89. Պատճէն յայտարար նամակին գրելոյ 'ի Կառավարութենէ Օժնաւորական Հանրական Պահանդատեղեին Մոսկուայ առ Տ. Յովհաննէս Յովակիմեան 'ի 23 Հոկտեմբերի 1834 ամի, ընդ համարով 5594, յաղագս ամենողորմած պարգևատրութեանն եղելոյ առ նա Ասպետական Նշանաւ Կարգին Ս. Վլատիմիրայ երրորդ աստիճանի:

Գուրջեան ցուցակ ձեռագրաց Ընծոյ գրեանց 'է Լազարեան Դպրատանց առ այլս, կամ յայլոց առ նոսա վասն Ընծայի և եկեղեցական կարգաց գործոյ։

90. Պատճէն աղերսագրոյ գրելոյ 'ի Յովհաննէ Լազարեան Լազարեանց և 'ի ժողովրդականաց Հայոց յամսեան Ապրիլի 1770 ամի, և մատուցելոյ 'ի գլխաւոր Դիւանատունն Քաղաքաւուչի, յաղագս թոյլտուութեան կառուցանելոյ զեկեղեցիս Հայոց դաւանութեան յերկոսին մայրաքաղաքսն 'ի Ս. Փեթերբուրգ և 'ի Մոսկուա, 'ի տեղի առաջնոց առանին եկեղեցեաց։

91. Բնագիր տուեալ յամսեան Յունիսի 1770 ամի, յաղագս տեղւոյ շինութեան եկեղեցւոյ Հայոց 'ի Ս. Փեթերբուրգ 'ի փողոցին՝ որ կոչի **Невскій Проспектъ.** ուր և շինութիւնն 'ի Գլխաւոր Քաղաքաւուչական Դիւանատանէ յանձնեալ լինի Տ. Յովհաննու Լազարեան Լազարեանց, և ժողովրդեան։

92. Հրամանագիր Եպիսկոպոսական Աթոռին Էջմիածնայ առ քահանայս և երեցփոխանս Ս. Կատարինեայ եկեղեցւոյն Ս. Փեթերբուրգայ, 'ի 20էն Նոյեմբերի 1778 ամի. յորում ըստ հրամանի արքայազն արքեպիսկոպոսին Հայոց Յովսէփայ Երկայնաբազուկ-Արղութեանց թոյլատրի Գլխաւոր Խորհրդականին Յովհաննու Լազարեան Լազարեանց ձեռն արկանել 'ի շինութիւն առանձին տանց առ եկեղեցեաւն, և տուեալ լինին իրաւունք թէ՛ նմին Յովհաննու Լազարեան և թէ՛ ժառանգաց նորա՝ բնակել 'ի նոսա իբրև 'ի սեպհական տունս իւրեանց մինչև ցժամանակ դարձուցանելոյ առ նոսա եկեղեցւոյն զգումար դրամոցն ծախելոց 'ի կառուցումն նոցին։

93. Պատճէն յայտարարութեան Պետական Խորհրդականին Յովհաննու Լազարեան Լազարեանց առ Ս. Յովսէփ Երկայնաբազուկ-Արղութեանց Թեմակալ Առաջնորդն Հայոց բնակելոց 'ի Ռուսաստան՝ գրելոյ 'ի 28 Սեպտեմբերի 1779 ամի. յորում յայտնէ նա՝ թէ զերկոսին քարաշէն տունն կառուցեալս ծախուք

իւրովք առ ընթեր եկեղեցւոյն Հայոց Ս. Կատարինեայ՝ ընծայէ յօգուտ եկեղեցեացն Հայոց Ս. Փեթերպուրկայ՝ յետագայ պայմանօքս. ա՛, զի 'ի կենդանութեան իւրում և ամուսնոյ իւրոյ՝ ինքն և իւրքն բնակեսցեն 'ի նոսա, և առասցեն զհաս նոցին. բ՛, զի զկնի մահուան իւրեանց հասք նոյն տանց և վայրացն գերեզմանատան դարձցին յօգուտ եկեղեցեաց. և միայն ժառանգն յարական սերնդոյ ունիցի իրաւունս բնակելոյ 'ի միում յերկոցունց տանցն մինչև ցերրորդ զարմ՝ վճարելով եկեղեցւոյն ամի ամի զ2000 ռուբլիս. գ՛, զի մարմինք ննջեցելոց ազգայնոց Լազարեանց թաղեսցին 'ի միջի եկեղեցւոյ գերեզմանատան, ևն:

94. Օրինակ հրամանագրութեան եղելոյ առ Մայիօր Ֆէրէ յառաջնում բաժնի Քաղաքաւսչական Գիւանատան Մոսկուայ յ30էն Մայիսի 1779 ամի, ընդ համարով 1796, յաղագս թոյլ տալոյ Լազարայ Նազարեան Լազարեանց՝ կանգնել զքարաշէն եկեղեցի Հայոց 'ի թաղն անուանեալ **Мясницкій**:

95. Տոմսակ հրամանագրութեան 'ի 6էն Մայիսի 1782 ամի, ընդ համարով 444, տուեալ Հոգաբարձուին Տ. Յովակիմայ Լազարեան Լազարեանց յաղագս կանգնելոյ տունս փայտեայս 'ի գաւթի եկեղեցւոյն Հայոց որ 'ի Մեասնիցքի անուանեալ թաղին Մոսկուայ:

96. Սահմանագրութիւն գրեալ 'ի Յովհաննէ Լազարեան Լազարեանց յ30 Մարտի 1800 ամի, յաղագս Ս. Փեթերպուրկայ Հայոց եկեղեցեաց կառուցելոց յանուն Ս. Կատարինեայ և Յարութեան Քրիստոսի, 'ի սակս եկեղեցական տանց և հասից, համաձայն յայտարարութեանն գրելոյ 'ի 28 Սեպտեմբերի 1799 ամի առ Սրբազան Արքեպիսկոպոսն Յովսէփ Երկայնաբազուկ-Արղութեանց:

97. Օրինակ առաջարկութեանն եղելոյ 'ի Սրբազան Արքեպիսկոպոսէն Յովսէփայ Երկայնաբազուկ - Արղութեանց առ Եպիսկոպոսական Ատեանն Հայոց Աժդարխանայ յ30 Մարտի 1800 ամի, ընդ համարով 51, վասն հաստատելոյ զսահմանագրութիւնս գրեալ 'ի Ներգործական Պետական Խորհրդականէ 'ի Յովհաննէ Լազա-

րեան Լազարեանց, յաղագս Ս. Փեթերբուրգոյ Հայոց եկեղեցւոյ:

98. Յայտարարութիւն Արքայն Եպիսկոպոսին Յովսէփայ Երկայնաբազուկ - Արղութեանց առ Ներգործական Խորհրդականն Յովհաննէս Լազարեան Լազարեանց յ30 Մարտի 1800 ամի, յաղագս հաստատելոյ զյօրինեալն 'ի նմանէ զսահմանադրութիւն Ս. Փեթերբուրգոյ Հայոց եկեղեցւոյ:

99. Տոմսակ Քաղաքական Գուբեռնատան շինութեանց Մոսկուայ 'ի 23էն Օգոստոսի 1800 ամի, ընդ համարով 1666, տուեալ Խորհրդականին Արքունի Դրան Հոգաբարձուին Մինասայ Լազարեան Լազարեանց, յաղագս կառուցանելոյ զկրկին փայտակերտ բնակարանս առ եկեղեցեաւն Հայոց՝ որ 'ի Մեանիցքի անուանեալ թաղի քաղաքին:

100. Պատճէն յայտարարութեան գրելոյ 'ի Կատարինեայ ամուսնոյ Ներգործական Պետական Խորհրդականին Յովհաննու Լազարեան Լազարեանց 'ի Նախարարակցս ժողովն (Комитетъ) յամսեան Նոյեմբերի 1803 ամի, յաղագս ազատելոյ զեկեղեցական տունսն 'ի քաղաքական հարկատուութեանց, յայտնելով թէ յամէ, երբ և զնչորդ կառուցեալ են Ս. Փ. պուրգոյ Հայոց եկեղեցիք:

101. Պատճէն կարգադրութեան ժառանգացն Ներգործական Պետական Խորհրդականի Յովհաննու Լազարեան Լազարեանց՝ ամուսնոյ նորա Կատարինեայ Իվանովնայի, Խորհրդականի Արքունի Դրան Մինասայ Լազարեան Լազարեանց, և եղբօր նորա Յովակիմայ Լազարեան Լազարեանց, գրելոյ 'ի 1 Յունուարի 1804 ամի, և Բարձրագոյնս հաստատելոյ 'ի 19 Յուլիսի նոյն ամի, և տալոյ ստորագրութեամբ 'ի Ս. Փեթերբուրգոյ Զինուորական Նահանգապետէն 'ի Կոմսէն Տոլստոյ, յաղագս հրաժարելոյ յիշատակեալ ժառանգացն յարտօնութեանց և յիրաւանց տիրանալոյ եկեղեցական շինուածոց, և յաղագս դարձուցանելոյ զայնս յօգուտ եկեղեցւոյ՝ զկառավարութիւն եկեղեցեաց յանձնելով Հոգաբարձուաց, յորոց միջի գլխաւոր լիցի մի ոմն յազգայնոց Լազարեանց:

102. Խնդրական յայտարարութիւն Տ. Նախարարին ներքին

գործոց՝ Կոմսին Քօչուպէյի առ Կատարինէ Իվանովնայ Ղազարեանց՝ զոյգ ընդ պատճէնի Կայսերական Հրովարտակին առ Ս. Փեթերպուրգայ Զինուորական Նահանգապետն, գրեալ 'ի 24 Յուլիսի 1804 ամի, ընդ համարով 3278, յաղագս Բարձրագոյն հաստատելոյ զսահմանադրութիւնն՝ նախայիշեալ եկեղեցւոյ Հայոց. ուր ընդ տառիւ Ա, դնի քաղուած զհիմնարկութեանց եկեղեցեաց. և ընդ տառիւ Բ, պատճէնք Բարձրագոյն ցուցակի և Հրովարտակի:

103. Պատճէն Կայսերական Հրովարտակի տուելոյ Ս. Փեթերբուրգայ Զինուորական Նահանգապետին՝ Կոմսին Տօլստոյայ 'ի 19 Յուլիսի 1804 ամի, յաղագս Բարձրագոյն հաստատելոյ զսահմանադրութիւն ժառանգացն Ներգործական Պետական Խորհրդականին Յովհաննու Ղազարեան Ղազարեանց, և այրի կնոջ նորա, և երկոցունց եղբարցն, տալով ապագայ ժառանգաց Ղազարեան տոհմի զիրաւունս սահմանեալ յառաջնոյ կտակէն:

104. Ցուցակ ժողովրդականաց եկեղեցեաց Հայոց Ս. Փեթերպուրգայ վերաբերեալ առ Հոգաբարձուս նոյն եկեղեցեաց (որք էին՝ Յովակիմ Ղազարեան Ղազարեանց, Գ.. Գ. Շահրիմանով, և Դիւանական Խորհրդականն Ս. Մ. Խուդաբաշեանց), գրեալ 'ի 26 Նոյեմբերի 1804 ամի. յորում գտանին ստորագրութիւնք ամենայն ժողովրդականաց հաստատեալ ձեռամբ Սրբազան Թեմակալ Արքեպիսկոպոսին Հայոց Ռուսաստանեայց՝ Եփրեմայ:

105. Ցուցակ ժողովրդականաց Հայոց գրեալ 'ի 26 Նոյեմբերի 1804 ամի, յաղագս հրաժարման Կատարինեայ Իվանովնայի Ղազարեանց 'ի Հոգաբարձութենէ եկեղեցեացն Հայոց Ս. Փեթերպուրգայ: Բայց ապա ըստ խնդրոյ այնց ժողովրդոց յանձն առնու նա վերստին զայն պաշտօն:

106. Պատճէն յայտարարութեան Նախարարին Ներքին գործոց՝ Կոմսին Քօչուպէյի գրելոյ առ Կատարինէ Իվանովնայ 'ի 14 Մարտի 1805 ամի. յորում յայտնէ նմա 'ի պատասխանի նամակի նորին յաղագս Հոգաբարձութեան:

107. Տոմսակ 'ի Կառավարութենէ բարեկարգութեան Մոսկուայ՝ տուեալ Խորհրդականին Արքունի Գրան Մինասայ Լազարեան Լազարեանց 'ի 11 Օգոստոսի 1805 ամի, յաղագս կառուցանելոյ բնակարանս առ գերեզմանատամբն Վականովքի 'ի պէտս պահապանաց:

108. Տոմսակ 'ի Կառավարութենէ բարեկարգութեան Մոսկուայ՝ տուեալ Խորհրդականին Արքունի Գրան Մինասայ Լազարեան Լազարեանց 'ի 6 Հոկտեմբերի 1806 ամի, ընդ համարով 24111, յաղագս կառուցանելոյ 'ի տեղի փայտակերտ շինուածոյ գքարեայ բնակարանս 'ի սրահի եկեղեցւոյն Հայոց՝ որ 'ի Թաղին Մեամնիցքի:

109. Իսկական վկայագիր Կատարինեայ Իվանովնայի ամուսնոյ Ներգործական Պետական Խորհրդականին Յովհաննու Լազարեան Լազարեաց գրեալ 'ի 17 Օգոստոսի 1818 ամի, յաղագս ջերմեռանդաբար նուիրելոյն նորա յօգուտ Ս. Փեթերպուրկոյ Ս. Կատարինէ եկեղեցւոյն Հայոց զգետին յարեւմտեան կողման այնր եկեղեցւոյ, որոյ երկայնութիւնն է 16 սաժէն, և լայնութիւնն՝ 4. իսկ բովանդակ տարածութիւնն՝ 64 քառակուսի սաժէն:

110. Յայտարարութիւն Արքազն Յովհաննու Թեմակալ Արքեպիսկոպոսին Ռուսախարհնակ Հայոց առ գլխաւոր Հոգաբարձուն Ս. Փեթերպուրկոյ Հայոց եկեղեցեաց՝ Յովակիմ Լազարեան Լազարեանց՝ գրեալ 'ի 27 Յուլիսի 1819 ամի. յորում խնդրէ 'ի նմանէ յանձն առնուլ զգլխաւոր Հոգաբարձութիւնն՝ ունելով իշխանութիւն 'ի վերայ Հայոց եկեղեցեացն Ս. Փեթերպուրկոյ և Մոսկուայ, 'ի վերայ ստացուածոց նոցին և քահանայից և այլոց պաշտօնէից. և զի զկնի մահուան իւրոյ զիշխանութիւնս զայս տացէ որդւոց իւրոց:

111. Պատճէն յայտարարութեան Նախարարին Հոգևոր գործոց և Ազգային Լուսաւորութեան՝ Իշխանին Գոլիցինայ առ Ս. Արքեպիսկոպոսն Յովհաննէս 'ի 23էն Հոկտեմբերի 1823 ամի, տուեալ յառաջարկութիւն զմատուցելոցն ինքեան 'ի Դիւանական

Խորհրդականէն 'ի Յովհաննէ Յովակիմեան Լազարեանց և 'ի Խոր-
հրդականէն Եղբօրն Գրան 'ի Խաչատուրյ Յովակիմեան Լազա-
րեանց՝ զկանոնս և զկարգս Լազարեան Ճեմարանին կառուցե-
լոյ 'ի Մոսկուա: Յայսմ գրուածի հարցանէ Նախարարն, թէ որ-
պիսի պայմանօք նշանակեալ կան տունք եկեղեցեացն Հայոց Ս. Փե-
թերբուրգայ և Մոսկուայ:

112. Պատճէն յայտարարութեան Սրբազան Եպիսկոպո-
սին Յովհաննու առ Նախարարն հոգևոր գործոց և Ազգային Լու-
սաւորութեանն գրեալ առ իշխան Գոլիցին 'ի 21 Նոյեմբերի
1823 ամի, յորում 'ի պատասխանի հարցման նորա յայտնէ՝ թէ
Հայոց եկեղեցիք Ս. Փեթերբուրգայ և Մոսկուայ, և տունք նո-
ցին, նոյնպէս և Ճեմարանն որ 'ի Մոսկուա, կառուցեալ են և
պահպանին ծախիւք տոհմին Լազարեանց, և կառավարին 'ի նո-
ցանէ. և թէ՝ ինքն Եպիսկոպոսն յիւրմէ կողմանէ օգտակար
համարի ձեռնտու լինել յիշեալ Ճեմարանին կառուցելոյ 'ի կըր-
թութիւն Հայ մանկտւոյ, և օգնել այնմ 'ի հասից եկեղեցեաց:

113. Յայտարարութիւն Սրբազան Խնամակալ Եպիսկո-
պոսին Ռուսաստանաբնակ Հայոց Յովհաննու առ Յովակիմ Լազարեան
Լազարեանց՝ Գլխաւոր Հոգաբարձուն եկեղեցեաց Հայոց Ս. Փե-
թերբուրգայ և Մոսկուայ, գրեալ յ7 Մայիսի 1824 ամի, ընդ
համարովք 167 և 168. յորում երկրորդելով զլիակատար կա-
ռավարութիւնն 'ի վերայ յիշատակեալ եկեղեցեացն, մնայ նպաս-
տել Ճեմարանին Լազարեանց որ 'ի Մոսկուա՝ 'ի հասութից տանց
եկեղեցւոյն Ս. Փեթերբուրգայ, ծախելով ամի ամի տասն կամ եր-
կոտասան հազար ռուբլիս, և կամ փոխանակ նպաստիցն ամ բաւ
ամ՝ տալ միանգամ 'ի փոխ զկարևոր գումար դրամոց 'ի պէտս
Ճեմարանին: Նոյնպէս եւ մնայ նպաստել նաև եկեղեցեացն Հայոց
որ 'ի Մոսկուա՝ 'ի հասութից եկեղեցեացն Ս. Փեթերբուրգայ:

114. Սահմանադրութիւն Սրբազան Եպիսկոպոսին Յով-
հաննու գրեալ 'ի 14 Յունուարի 1826 ամի, ընդ համարով 23.
յորում մնայ 'ի փոխ տանել 'ի պէտս Լազարեան Ճեմարանին

որ 'ի Մոսկուայ՝ պհարկաւոր դրամս 'ի հասից Ս. փեթերբուր-կայ Հայոց եկեղեցեաց եւ տանց նոցին՝ յետ լցուցանելոյ պէտս յիշեալ եկեղեցեաց, եւ պհաշիւ դրամոցն ընկալելոյ նշանակել յար-ձանագրութիւնս Ճեմարանին:

115. Պատճէն սահմանադրութեան Սրբազան Թեմակալ Ար-քեպիսկոպոսացն Յովհաննու եւ Գրիգորի, գրելոյ 'ի 19 Օգոս-տոսի 1826 ամի, ընդ համարով 173, յաղագս Արեւելեան լե-զուաց Ճեմարանին Լազարեանց՝ որ 'ի Մոսկուա, եւ յաղագս այ-լոց Հայկական ուսումնարանաց եղելոց 'ի Ռուսիա. յորում եդեալ է խնդրել զԲարձրագոյն հաստատութիւն սահմանաց վասն յիշեալ Ճեմարանին՝ յետագայ պայմանօքս. ա, զի ամենայն վարժարանք Հայոց որք 'ի Ռուսիա (բաց 'ի կղերիկոսական դպրոցաց կառու-ցելոց 'ի Թեմակալ Արքեպիսկոպոսաց) կախեալ կայցեն զԼազա-րեան Ճեմարանէն Մոսկուայ. բ, զի աշակերտք՝ որք ձրի ստանան զուսումն 'ի Ճեմարանի Տեարց Լազարեանց, զկնի աւարտելոյ զընթացս ուսման՝ հաճութեամբ ծնողաց իւրեանց նուիրեսցեն զան-ձինս 'ի պաշտօն եկեղեցական, կամ 'ի պաշտօն վարժապետական 'ի դպրոցս Հայոց. գ, զի Ճեմարանն ունիցի զառանձին գլխաւոր կառավարիչ, եւ կառավարեսցի 'ի Հոգաբարձուէն եղելոյ 'ի Լա-զարեան տոհմէ. դ, զի նոյն Ճեմարանն կարգեսցի 'ի թիւս Ուսում-նարանաց հանդերձ իրաւամբք Գիմնազիա անուանեալ վարժարանաց:

116. Կարգադրութիւն Սրբազան Թեմակալ Արքեպիսկոպո-սին Յովհաննու գրեալ յ7 Նոյեմբերի 1826 ամի, ընդ հա-մարով 362. յորում՝ զկնի մահուան Յովակիմայ Լազարեան Լա-զարեանց՝ Գլխաւոր Հոգաբարձու նշանակէ զորդիս նորա զՊե-տական Խորհրդականն զՅովհաննէս Յովակիմեան, եւ զԴիւանական Խորհրդականն զԽաչատուր Յովակիմեան, իսկ 'ի բացակայութեան նոցա՝ զԳնդապետն Լազարոս Յովակիմեան Լազարեանց, տալով նոցա զնոյն իսկ իշխանութիւն եւ զիրաւունս՝ զորս ունէր հանգու-ցեալ հայր նոցա 'ի Հոգաբարձութեան իւրում:

117. Պատճէն յայտարարութեան Պետական Խորհրդականին

Լազարեան առ ՚Նախագահն Գ․իւանին Մոլդավիոյ և Վալախիոյ՝ գրեալ յ30 Օգոստոսի 1828 ամի, սակս պէսպէս իրաց․ ընդ նոսին և յաղագս եկեղեցեաց Հայկական դաւանութեան։

118․ Ինքնագիր նամակ Սրբազան ՚Ներսիսի Թեմակալ Արքեպիսկոպոսին Հայոց Աստրախանի և Բեսարաբիոյ առ Հոգաբարձուն եկեղեցեաց Հայոց Ս․ Փեթերբուրգայ և Մոսկուայ՝ առ ՚Ներգործական Պետական Խորհրդականն Խաչատուր Յովակիմեան Լազարեանց, գրեալ ՚ի 28 Մարտի 1835 ամի․ որով Թոյլ տայ տանել զընդհանուր նորոգութիւն տանն եղելոյ առ ընթեր եկեղեցւոյն Հայոց Ս․ Փեթերբուրգայ կառուցելոյ յանուն Ս․ Կատարինեայ։

119․ Այլ նամակ ՚Նորին Բարձր Սրբազնութեան առ նոյն ՚Ներգործական Պետական Խորհրդականն, գրեալ ՚ի 18 Դեկտեմբերի 1836 ամի․ յորում յայտնէ՝ թէ ընթերցեալ զհաշիւ ծախելի գրամոց՝ որք պիտոյ են վասն նորոգութեան տանն Ս․ Փեթերբուրգայ եկեղեցւոյն Հայոց, պատշաճ համարի զյիշեալ նորոգումն։

120․ Այլ նամակ ՚Նորին Բարձր Սրբազնութեան առ նոյն ՚Ներգործական Պետական Խորհրդականն, գրեալ ՚ի 27 Ապրիլի 1838 ամի․ յորում շնորհակալ լինի նախայիշեալ Հոգաբարձուաց վասն աշխատանացն՝ զոր յանձն առին նոքա յօգուտ եկեղեցեաց, և մանաւանդ վասն փոխատուութեան դրամոց առանց տոկոսեաց ՚ի նորոգումն տան եկեղեցւոյն։

121․ Այլ նամակ ՚Նորին Բ․ Սրբազնութեան առ նոյն ՚Ն․ Պ․ Խորհրդականն, գրեալ ՚ի 6 Յուլիսի 1838 ամի․ որով ըզհաշուեցուցակն առաքեալ առ ինքն ՚ի տեսութիւն և ՚ի քննութիւն զծախս նորոգութեան եկեղեցական տանն՝ դարձուցանէ անդրէն շնորհապարտութեամբ իւրով։

122․ Այլ նամակ ՚Ն․ Բ․ Սրբազնութեան առ նոյն ՚Ն․ Պ․ Խորհրդականն՝ հանդերձ թարգմանութեամբ ՚ի Ռուս լեզու, գրեալ ՚ի 10 Սեպտեմբերի 1837 ամի, ընդ համարով 196․ յաղագս միաւորելոյ զհինգ եկեղեցին Հայոց երկոցունց Մայրաքաղաքաց և

զԵրեւելեան լեզուաց Ճեմարանն Լազարեանց որ 'ի Մոսկուա՝ 'ի մի կառավարութիւն ըստ տնտեսական մասին, նաեւ յաղագս հաստատելոյ զառանձին Բաշխ 'ի յիշեալ Ճեմարանին 'ի դաստիարակութիւն Հայազգի մանկանց՝ առ 'ի մտանել յեկեղեցական պաշտօն, եւ 'ի կարգիլ վարժապետ յայլ դպրոցս Հայոց։

123. Տպագրեալ Հրովարտակ Կառավարող Ծերակուտին 'ի 21էն Հոկտեմբերի 1837 ամի, հանդերձ Բարձրագոյն կանոնօք ժողովոյն Նախարարաց հաստատելովք յ31 Օգոստոսի նոյն ամի, յաղագս պարգեւելոյ Երեւելեան լեզուաց Ճեմարանին Լազարեանց որ 'ի Մոսկուա՝ զիրաւունս եւ զարտօնութիւնս հաւասարս ուսումնարանաց երկրորդ դասակարգի։ Վերաբերութիւնք (յօրինակս) պաշտօնատար անձանց 'ի սակս գծագրելոյ զկանոնս յաղագս կարգելոյ յԵրեւելեան լեզուաց Ճեմարանին Լազարեանց որ 'ի Մոսկուա՝ զառանձին Բաշխ 'ի դաստիարակութիւն Հայազգի մանկանց առ 'ի մտանել 'ի կոչումն եկեղեցական եւ 'ի պաշտօն վարժապետութեան. եւ յաղագս այլոց հանգամանաց այնր կղերական բաժնի։

124. Կարգադրութիւն Հայոց Սինհոդոսին Էջմիածնի գրեալ 'ի 5 Օգոստոսի 1839 ամի, հանդերձ գծագրութեամբ կանոնաց յաղագս հաստատելոյ 'ի Ճեմարանին Երեւելեան լեզուաց զառանձին Բաշխ Կղերաց։ Այն այս Կարգադրութիւն յաղագս Կղերական Բաշխի գրեալ 'ի Հայ լեզու՝ տպագրեալ եւ հաստատեալ է 'ի Ծայրագոյն Պատրիարքէն եւ 'ի Կաթողիկոսէն ամենայն Հայոց 'ի Յովհաննէ Կարբեցւոյ, եւ յանդամոց Սինհոդոսին Էջմիածնի (*)։

125. Տպագրեալ Հրովարտակ Կառավարող Սինկղիտոսի 'ի 4 Մարտի 1841 ամի, հանդերձ կանոնօք Բարձրագոյնս հաստատելովք յ31 Յունուարի 1841 ամի, յաղագս հաստատելոյ յԵրեւելեան լեզուաց Ճեմարանին Լազարեանց որ 'ի Մոսկուա՝ զառանձին Բաշխ Կղերական վասն դաստիարակութեան Հայազգի մանկանց առ 'ի մտանել յեկեղեցական պաշտօն եւ 'ի լինել վարժա-

(*) Զամբողջ օրինակ այսր Կարգադրութեան գիտ յերրորդում մասին գրքիս։

պետ յայլ գալոցս Հայոց, եւս և յաղագս միաւորելոյ զեկեղեցին երկոցունց մայրաքաղաքաց և գլխաւոր ճեմարանն ըստ ստուեական մասին 'ի մի կառավարութիւն որ յանձն լինի առանձին Հոգաբարձուի որ պարտի լինել հանապազ 'ի տոհմէ Լազարեանց՝ անցանելով ազգէ յազգ ըստ իրաւանց անդրանկութեան։

Գ. ՕՐԻՆԱԿՔ ՏԱՊԱՆԱԳՐԱՑ ՆՆՋԵՑԵԼՈՑ ԼԱԶԱՐԵԱՆՑ, ՈՐՈՑ ՄԱՐՄԻՆՔ ԱՄՓՈՓԵԱԼ ԿԱՆ 'Ի Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԻ ՀԱՆԳՍՏԱՐԱՆԻՆ ՀԱՑՈՑ՝ ՈՐ 'Ի Ս. ՓԵԹԵՐՊՈՒՐԿ։

1.

ՏԱՊԱՆԱԳԻՐ

Յովհաննու Լազարեան Լազարեանց.

Հայերէն.

Առաջի տապանագրիս հանգչի մարմին կառուցանողի տաճարիս՝ բարեգործ առն՝ Ներգործական Պետական Խորհրդականի և Ս. Յովհաննու Երուսաղէմացւոյ նշանակիր Հրամանատար Ասպետի, Յովհաննու Լազարեան Լազարեանց փառաւորելոյ բազմօրինակ օգտակար գործովք և բարեպաշտ կենօք, ծնելոյ 'ի Ջուղայ յամի 1735, 'ի 23 Նոյեմբերի, և հանգուցելոյ 'ի Տէր 'ի 1801, 'ի 24 Հոկտեմբերի։

Ռուսերէն.

Предъ сею надписью почіетъ тѣло соорудителя храма сего, добродѣтельнаго мужа Дѣйствительнаго Статскаго Совѣтника и Ордена Св. Іоанна Іерусалимскаго Командора Ивана Лазаревича Лазарева, прославившагося многими полезными дѣяніями и благочестивою жизнію, родившагося въ Жульфѣ въ лѣто 1735-е Ноября 23-го и скончавшагося 1801 Октяря 24 дня.

2.

Ամուսնոյ նորա Կատարինէայ Յովհաննէսեան Լազարեանց.

Կատարինէ Յովհաննիսեան Լազարեանց սերեալ 'ի Միրզախանեանց տոհմէ, ամուսին Ներգործական Պետական Խորհրդականի և Հրամանատար Ասպետի՝ Յովհաննու Լազարեան Լազարեանց, ծնաւ 'ի 1 Ապրիլի 1850 ամի, և վախճանեցաւ 'ի 18 Օգոստոսի 1819 ամի յեօթանասներորդ ամի կենաց իւրոց։

Катерина Ивановна Лазарева, урожденная Мирзаханова, супруга Дѣйствительнаго Статскаго Совѣтника и Командора Ивана Лазаревича Лазарева, родилась 1-го Апрѣля 1750, а скончалась 18-го Августа 1819 года на 70 году житія ея.

3.

Մինասայ Լազարեան Լազարեանց.

Յայսմ վայրի հանգչին ոսկերք առն բարեպաշտի՝ Խորհրդականի Արքունի Դրան Մինասայ Լազարեան Լազարեանց, ծնելոյ 'ի Ջուղայ, և փոխելոյ 'ի յաւիտենական կեանս 'ի հասակի եօթանասուն և երկուց ամաց 'ի 18 Յունուարի 1809 ամի։

На семъ мѣстѣ покоится прахъ благочестиваго мужа, Надворнаго Совѣтника Мины Лазаревича Лазарева, родившагося въ Жульфѣ и переселившагося въ вѣчность на 78 году жизни своей въ лѣто 1809 Генваря 18 дня.

4.

Յովհաննու Խաչատուրեան Լազարեանց (*).

Թոռն Յովհաննու Լազարեան՝ որդի Ներգործական Պետական Խորհրդականի՝ Սենեկապետի Խաչատրոյ Յովակիմեան և կատարինեայ Մանուկեան Լազարեանց, Յովհաննէս Խաչատրեան Լազարեանց, ծնաւ 'ի 12 Մայիսի 1844 ամի, և վախճանեցաւ 'ի 26 Նոյեմբերի 1850 ամի։ Ծնողքն կորուսին 'ի նմա զմխիթարարեր ժառանգն իւրեանց, որ արդիւնացուցանել ունէր զբարի բարի ակնկալութիւնս նոցա։

Внукъ Ивана Лазаревича, сынъ Дѣйствительнаго Статскаго Совѣтника и Камергера Христофора Екимовича и Екатерины Емануиловны Лазаревыхъ, Иванъ Христофоровичь Лазаревъ, род. 12 Мая 1844, скон. 26 Ноября 1850 г. Родители потеряли въ немъ утѣшительнаго преемника, соединявшаго въ себѣ лучшія надежды.

5.

Յարութիւնի Յովհաննէսեան Լազարեանց.

Աստ ամփոփեալ կայ մարմին քսան և երեքամեայ միակ որդւոյ Յովհաննու Լազարեան՝ Յարութիւնի Յովհաննիսեան Լազարեանց՝ Առաջներորդ Մայօրի և Ընդհանրական Աջակցի, ծնելոյ 'ի 24 Յունիսի 1768 ամի, և վախճանելոյ 'ի 12 Յունուարի 1791։

Здѣсь покоится тѣло единственнаго 23-хъ лѣтъ сына Ивана Лазаревича, Премьеръ-Маіора Генералъ Адъютанта Артемія Ивановича Лазарева, родивш. 24 Іюня 1768 г., скончавшагося 12 Января 1791 года.

(*) Զչափածոյ արձանագիր չիրմի նր գիտ 'ի Պատմ. Մասն Ա. էջ. 35։

6.

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ ԼԱԶԱՐԵԱՆՑ.

Աստանօր ամփոփեալ կայ մարմին Թիկնապահ գուսարեան գնդի Շթապրօթմիսթրի և զանազան նշանաց կրող ասպետի՝ Յարութիւնի Յովակիմեան Լազարեանց, ծնելոյ յամի 1791, և և անկելոյ յարիւնահեղ պատերազմին որ առ Լէյփցիկաւ 'ի 4 Հոկտեմբերի 1813 ամի, 'ի 22 ամաց հասակի:

Здѣсь покоится тѣло Лейбъ-Гвардіи Гусарскаго полка Штабъ Ротмистра и разныхъ орденовъ Кавалера Артемія Екимовича Лазарева, родив. въ 1791 г., убитый въ кровопролитномъ сраженіи подъ Лейбцигомъ Октября 4-го 1813 года, на 22 году жизни своей.

7.

ԱՂԵՔՍԱՆԴՐԱՅ ԴՈՒՍՏՐ Խ. Յ. ԼԱԶԱՐԵԱՆՑ.

Աստ հանգուցեալ կայ ութամսեայ դստրիկն Ներգործական Պետական Խորհրդականին Խ. Յ. Լազարեանց՝ Աղեքսանդրայ, վախճանեալ 'ի 27 Յունուարի 1839 ամի:

Здѣсь покоится 8-ми мѣсячный младенецъ Александра, дочь Дѣйствительнаго Статскаго Совѣтника Х. А. Лазарева, которая скончалась 27 Января 1839 года.

8.

ԿԱՏԱՐԻՆԷԱՅ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ ԼԱԶԱՐԵԱՆՑ.

Ընդ շիրմաւս այսուիկ հանգուցեալ կայ մարմին բարեպաշտուհւոյն Կատարինեայ Յովակիմեան Լազարեանց, ծնելոյ 'ի 5 Ապրիլի 1787 ամի, և փոխելոյ 'ի յաւիտենական կեանս 'ի 22 Մայիսի 1811 ամի:

Подъ симъ памятникомъ покоится тѣло благочестивой Екатерины Якимовны Лазаревой, родившейся въ 1787-мъ г. Апрѣля 5-го и преселившейся въ вѣчность Мая 22 1811 года.

ՕՐԻՆԱԿՔ ՏԱՊԱՆԱԳՐԱՑ ՆՆՋԵՑԵԼՈՑ ԼԱԶԱՐԵԱՆՑ, ՈՐՈՑ ՄԱՐՄԻՆՔ ԱՄՓՈՓԵԱԼ ԿԱՆ 'Ի Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՋ ՀԱՆԳՍՏԱՐԱՆԻՆ ՀԱՅՈՑ ՈՐ 'Ի ՄՈՍԿՈՒԱ:

9.

Խաչատրոյ Լազարեան Լազարեանց·

Յանդիման վիմիս ամփոփեալ կան ոսկերք Ազնուատոհմիկ առն՝ Խաչատրոյ Լազարեան Լազարեանց, որ ծնեալ 'ի Նոր Ջուղայ մերձ յԱսպահան յամի 1741, 'ի 12 Դեկտեմբերի, փոխեցաւ 'ի կեանսն յաւիտենից 'ի 11 Յունիսի 1774 ամի, 'ի Մոսկով:

Предъ симъ почіетъ прахъ благороднаго мужа Христофора Лазаревича Лазарева, родившагося въ новой Жульфѣ, что близъ Испагани, лѣта 1741-го Декабря 12-го дня, переселившагося въ вѣчность въ 11-е Іюня 1774 года въ Москвѣ.

10.

Ղազարու Նազարեան Լազարեանց·

Աստանօր հանգչին ոսկերք առն բարեպաշտի Ազնուականին Ղազարայ Նազարեան Լազարեանց, ծնելոյ 'ի 1700 ամի, յԱպրիլի 3, և փոխելոյ յաստեացս յ8 Յունուարի 1782 ամի, 'ի Մոսկով:

Здѣсь почіетъ прахъ благочестиваго мужа, Дворянина Лазаря Назаровича Лазарева, родившагося въ лѣто 1700 Апрѣля 3-го, переселившагося въ 1782 году, Генваря 8-го, въ Москвѣ.

11.

Աննայի Յովակիմեան Լազարեանց·

Աստանօր հանգչին ոսկերք օրիորդին Աննայի դստեր Ազնուական առնն Յովակիմայ Լազարեան Լազարեանց, ծնելոյ յ8 Մայիսի 1781 ամի, և վախճանելոյ 'ի 16 Օգոստոսի 1793 ամի, 'ի Մոսկով:

Здѣсь почіетъ прахъ дѣвицы Анны, дщери благороднаго мужа Екима Лазаревича Лазарева, родившейся 1781 года, Мая 8-го, скончавшейся 1793-го Августа 16-го, въ Москвѣ.

12.

Աննայի Ներսէսեան՝ Կենակցի Մինասայ Լազարեանց.

Ընդ շիրմաւս հանգչի մարմին Աննայի դստեր Ներսէսի Խաստատեանց՝ ամուսնոյ Խորհրդականին Արքունի Դրան Մինասայ Լազարեան Լազարեանց, ծնելոյ յ8 Յունուարի 1750 ամի, և փոխելոյ ՚ի կենացս յ9 Յունիսի 1802 ամի, ՚ի Մոսկով։

Подъ сей надписью покоится тѣло Анны, дщери Нерсеса Хастатова, супруга Надворнаго Совѣтника Мины Лазаревича Лазарева, родившейся 1750 года, Генваря 8, преставившейся 1802 года, Іюля 9-го, въ Москвѣ.

13.

Միւս Աննայի Յովակիմեան Լազարեանց.

Ընդ վիմաւս այսուիկ հանգչի մարմին Աննայի՝ երկրորդ դստեր Ազնուական առնն Յովակիմայ Լազարեան Լազարեանց, ծնելոյ ՚ի 29 Սեպտեմբերի 1797 ամի, և հանգուցելոյ յ8 Յունիսի 1804 ամի, ՚ի Մոսկով։

Подъ симъ камнемъ покоится тѣло Анны, второй дщери благороднаго мужа Іоакима Лазаревича Лазарева, родившейся 1797 года 29 Сентября и почившей 1804-го Іюня 8-го, въ Москвѣ.

14. 15.

Յովակիմայ Լազարեան Լազարեանց, և ամուսնոյ նորա Աննայի Սարգսեան (*).

՚Ի տեղւոջս յայսմիկ հանգչին մարմինք հոգւոցն հանգուցելոց՝ առն բարեպաշտի Յովակիմայ Լազարեան Լազարեանց վախճանելոյ ՚ի 24 Յունուարի 1826 ամի, և առաքինազարդ ամուսնոյ նորա Աննայի Սարգսեան, որ վախճանեցաւ ՚ի 11 Մարտի 1820 ամի։

На семъ мѣстѣ покоится тѣло въ Бозѣ почившихъ душъ: благочестиваго мужа Іоакима Лазаревича Лазарева, скончавшагося 1826 года, Генваря 24 дня и добродѣтельной супруги его Анны Сергѣевны, скончавшейся 1820 года, Марта 11 дня.

(*) Զհատածոյ արձանագիրս դամբանաց սոցա եդեալ եմք ՚ի Պատմ. յէր. 22.

16.

Աննայէ Յովակիմեան՝ ամուսնոյ Ղազարու Ղազարեանց.

Աստ հանգչի մարմին Աննայի դըստեր Յովակիմայ Ջուղայեցւոյ՝ և ամուսնոյ արժանապատիւ առն Ղազարու Ղազարեանց, որ փոխճանեաց զկեանս ՚ի 13 Յունուարի 1770 ամի ՚ի վաթսընամեայ հասակի (*):

Здѣсь покоится тѣло Анны, дочери Жульфинскаго уроженца Іоакима, и супруга достопочтеннаго мужа Лазаря Лазарева, скончавшейся въ 1770 году, Генваря 13 дня, на 60-мъ году жизни своей.

(*) Գերեզման սորա կայ յեկեղեցւոջ Հայոց որ ՚ի Փրեսնա անուանեալ թաղն Մոսկուայ:

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ՅԵՐՐՈՐԴՈՒՄՍ ՄԱՍԻՆ ԱՌԱՋԻ ԳՐՔԻՆ

—

Ա. Պատմութիւն շինութեան եկեղեցեաց Հայոց՝ որ 'ի Փեթերպուրկ։

Բ. Պատմութիւն շինութեան Լազարեան Ճեմարանին որ 'ի Մոսկուա, և նկարագիր արդի հանգամանաց նորին։

Գ. Քաղածոյ բանք յայտնեալ գրուածոց՝ յորս գովութեամբ յիշատակին Պայազատք Լազարեան Տոհմի։

Դ. Ճառք ազգի ազգիք՝ յայտնեալ դէպս յայտնեալ անձանց ասացեալք 'ի պատիւ Լազարեանց։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՇԻՆՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑԵԱՑ ՀԱՅՈՑ՝ ՈՐ 'Ի ՓԵԹԵՐՊՈՒՐԿ.

Զշինութենէ եկեղեցեաց Հայոց որ 'ի Մոսկուա՝ խօսեցեալ եմ յառաջնում մասին մատենիս (յեր. 18. 19.)։ Մնայ աստանօր խօսել համառօտիւ զշինութենէ եկեղեցեաց Հայոց եղելոց 'ի Ս. Փեթերպուրկ, և զշինուածոցն առ նոքիմբք եղելոց։

Կառուցումն եկեղեցեաց Հայոց 'ի Ս. Փեթերպուրկ, և շինուածոյն առ նոքիմբք եղելոց։

Առաջին եկեղեցին Հայոց որ 'ի Ս. Փեթերպուրկ՝ յանուն սրբոյ Կուսին Կատարինեայ, կառուցեալ է յամին 1779 *) 'ի Նեվսքիյ անուանեալ մարքունի պողոտայի։ Հոյակապ շինուած նորա՝ գործ է երևելի ճարտարապետին Ֆելտենգայ [1])։ Երկրորդ եկեղեցին որ յանուն սրբոյ Յարութեան, կառուցեալ է յայնմ մասին Մայրաքաղաքին՝ որ կոչի Վասիլեվսքիյ, առ գերեզմանատամբն Հայոց յամին 1791 [2]**)։

---

*) Թուական շինութեան եկեղեցւոյս 'ի գիրսն Собр. Акт. (Հատ. Գ. յէջ 79) դնի՝ 1771. և այլ ուրեք՝ 1780. բայց յայսմ վրիպակք են այդպիսի յանզգուշութենէ գրչի կամ տպողի։

1) 'Ի Բարձ. Հրով. յէջ 121։

2) 'Ի Բարձ. Հրով. յէջ 121։

**) Գետինն՝ յորոյ վերայ են առաջին եկեղեցին և շինուածքն որ առ նովաւ՝ տարածի ըստ երկայնութեանն զառաջեաւ մեծի փողոցին յ31 սաժէն, ըստ լայնութեանն դէպ 'ի թիկունս՝ 45 սաժէն. որով բովանդակ տարածութիւնն հաշուի 1395 սաժէն քառակուսի։ Նոյնպէս և գետինն՝ յորոյ վերայ կայ երկրորդ եկեղեցին և պարտէզն նորին հաշուի 10,000 սաժէն քառակուսի, որպէս որոշեալ է Արքունի Հրամանաւ։

Զերկուսին եկեղեցիսդ ևս կանգնեաց իւրովքն սեպհական արդեամբք Ներգործական խորհրդականն Տէրութեան Ռուսաց՝ Յովհաննէս Լազարեանց, ծախելով 'ի շինութիւն նոցին մինչ ց120000 ռուբլի թղթադրամ [1]*): Յաւել ապա (յամին 1784 և 1789) կանգնել առ առաջնով եկեղեցեաւն զերկուս քարակերտ շինուածս քառայարկս՝ 'ի բնակութիւն, զորս և նուիրեաց 'ի հասոյթ նոյն տաճարացն: Յետ վախճանի նորա, յամին 1806 կանգնեցաւ 'ի թիկանց կուսէ նոյն եկեղեցւոյ յերկուս թեւս և այլ շինուած եռայարկ: Յամին 1835, 1836 և 1837 վերանորոգեցան աջակողմեան և ձախոյն կողման շինուածքն յաւելմամբ, և եղեն հնգայարկեանք:

Կարգաւորութիւնքն՝ զորս արար հիմնադիրն տաճարացս Յովհաննէս Լազարեանց 'ի մասին տնտեսութեան եկեղեցեացդ յիշատակելոց և շինուածոցն որ առ նոքօք, տեսանին լիով 'ի բուն իսկ Պայմանագրի նորա **), յորում գրի այսպէս:

,,Կառուցանելով զերկուս քարաշէն եկեղեցիս աստ 'ի Ս. Փ. պուրկ, զմին յանուն մեծի վկայուհւոյն Կատարինեայ, և զմիւս յանուն սրբոյ Յարութեան առ գերեզմանատամբ՝ սեպհական արդեամբք իմովք, կարգելով 'ի նոսին քահանայս և եկեղեցական սպասաւորս բաւականացեալս յինէն նշանակեալ թոշակօք 'ի փառս անուան Աստուծոյ Բարձրելոյ. և 'ի մխիթարութիւն Հայրենակցացն իմոց՝ ազգի Հայոց՝ կանգնեցի և զերկուս տունս առ Ս. եկեղեցեաւն մեծի վկայուհւոյն Կատարինեայ 'ի վայելումն իմ և իմոց ժառանգաց մինչ ցվճարումն ծախուցն 'ի հասից եկեղեցեացն՝ ըստ տեղեկութեան Եպիսկոպոսական Ատենին Աժդարխանայ: 'Ի ծախս անդ շինութեան եկեղեցեացն (որ հասանէր յայնժամ ցհարիւր հազար ռուբլի) յաւելեալ այժմ և զծախս շինուածոց տանցն առ նոքօք եղելոց՝ գումար բովանդակ ծախուցն հաշուի հարիւր քսան հազար ռուբլի. թղթ:

,,Մինչև ցայսօր ոչ ինչ ընկալեալ 'ի հասից եկեղեցւոյն, և ստիպեալ 'ի սիրոյ և 'ի ջերմեռանդութենէ առ եկեղեցի և ազգ մեր՝ նուիրեմ զնոյն

---

[1]) 'Ի գիրսն Собр. Акт. հատ. Գ. յէջ 430. և 'ի Բարձ. Հրովարտ. յէջ 121:

*) Թէպէտ և 'ի շինութեան եկեղեցեացս՝ յայլոց ևս լեալ են քանի մի նուիրատուութիւնք՝ բայց այնք մանաւոր ինչ էին, առ ձեռագիր յիշատակարանն, և կարի նուազ քանակաւ, մինչ զի չէր հնար նոքիմբք և եթ առնել ինչ երևելի:

**) Պայմանագիրս այս գրեալ յամին 1799, 'ի 6 Հոկտ. հաստատեալ է 'ի Թեմակալ տռն Եպիսկոպոսէ Ռուսաստանի Հայոց 'ի Յովսէփայ Երկայնաբազուկ-Արղութեանց յամին 1800, յ30 Մարտի, ընդ համարով 51, և տպեալ է յամին 1842 'ի Մոսկուա, հայերէն և ռուսերէն 'ի գիրսն Բարձր. Հրովարտ. յէջ 125—133:

շինուածն 'ի յիշատակ սրբոց տաճարացն: Ուստի և կարևոր համարեալ ածել առ յայտն 'ի կարգ և 'ի սահման զհաստոյթն զօրս ունի Ս. եկեղեցին տանել 'ի շինուածոց անտի և 'ի վայրացն եղելոց առ ընթեր Ս. տաճարին Յարութեան, արարի զսոյն զայս Պայմանագիր, և խնդրեցի 'ի Բարձր Սրբազնութենէ Յովսէփայ արք եպիսկոպոսի Հայոց Ռուսաստանի հաստատել զնոյն ըստ հետևեալ կարգի:

,,Նախ՝ մինչ ցվախճան կենաց իմոց և կնոջ իմոյ Կատարինեայ Յովհաննիսեան, այն երկու տունք հանդերձ ամենայն շինուածովքն, նոյնպէս և հաստոյթն որ 'ի նոցանէ, և ծախքն որ վասն նոցին, եղիցին ընդ կառավարութեամբ և իշխանութեամբ մերով. ուստի և սպասաւորք եկեղեցեացն զմէնջ ունիցին զկախումն ըստ տնօրէնութեանն՝ զոր արարեալ եմք յաղագս նոցա:

,,Երկրորդ՝ զկնի մահուան մեր երկոցունց, տունն՝ որ յելանելն յեկեղեցւոյ անկանի ընդ ձախմէ, հանդերձ նմին պատշաճեալ շինուածովք (բաց 'ի ներքին զարդուցն կամ կահուց), եւ և խանութքն՝ որ գտանին 'ի ներքոյ միւսոյ տանն, նմանապէս և վայրքն որ առ տաճարաւ Ս. Յարութեան՝ 'ի վեր անդր յիշատակեալք, մնասցեն ընդ կառավարութեամբ Հոգաբարձուացն եկեղեցւոյ, որք պարտին լինել չորք. մին 'ի մերոց ժառանգորդաց, երկուքն՝ 'ի մերազնեայ պատուաւոր անձանց, և չորրորդն՝ 'ի խոհեմագոյն քահանայից կամ եկեղեցականաց. որոց վերահասու լեալ ամենայն հասից և ծախուց եկեղեցեացն՝ զարդիւնսն բաժանեսցեն յերիս մասունս: Զմի մասն կարգեսցեն 'ի թոշակ սպասաւորաց եկեղեցւոյ ըստ իւրաքանչիւր աստիճանի՝ հայելով 'ի ժամանակին հանգամանս, 'ի պահպանութիւն փոքրիկ դպրոցի առ եկեղեցեաւ, 'ի նորոգումն կամ 'ի բեղեկ շինուածոցն, 'ի պահել դռնապանս կամ պահակապանս, և 'ի կիր առնուլ վասն ներքին և արտաքին պիտոյից եկեղեցւոյ: Զերկրորդ մասն ամ յամէ տացեն 'ի Դրամատունն արքունական (ламбардъ) կամ յայլ ապահով տեղի, աւելեալ գումարն՝ երբէք երբէք 'ի գործ դիցի 'ի պէտս նորոգութեան եկեղեցեաց կամ շինուածոց, և կամ վասն շրջապատելոյ քարեայ պարսպաւ զտաճարն Ս. Յարութեան, և կամ վասն կանգնելոյ առ նմին շինուածս պատշաճաւորս: Իսկ Զերրորդ մասն 'ի կիր առցեն Հոգաբարձուք յօգուտ աղքատաց և չքաւոր անձանց Հայոց, յաղատել զգերիս, և յայլ Աստուածահաճոյ գործս. որոց վասն ունիմ առնել զառանձին կարգադրութիւն:

,,Երրորդ՝ տունն որ յելանելն յեկեղեցւոյն անկանի ընդ աջմէ, հանդերձ շինուածովքն նմին պատշաճելովք, յետ մահուան մերոյ տացի 'ի բնակութիւն երիցագունին յարական ժառանգորդաց Տոհմի մերոյ մինչ ցերրորդ սերունդ, ընկալեալ 'ի նոցանէ անփոփոխ 'ի վարձ ամի ամի վասն եկեղեցւոյն զերկու հազար րուբլի: Ունի ժառանգն իրաւունս՝ կամ անձամբ բնա-

կել 'ի նմա, և կամ պլում տալ զայն վարձու *). միայն թէ անթերի հասուցէ Հոգաբարձուաց զկիշատակեալ գումարն։ Ներքին Նորոգութիւն տանն յանձն լիցի ժառանգին. իսկ արտաքինն՝ Հոգաբարձուաց եկեղեցւոյն։ Եւ յաւարտիլ երից սերնդոցն՝ հաւասարեսցի և նոյն տուն ընդ միւսոյն. և հասք և ծախք բոլորովին կախեալ կայցեն զՀոգաբարձուաց, ըստ Նշանակելոցն 'ի վերոյ։

,,Չորրորդ՝ 'ի միջի Ս. Յարութեան տաճարին որ առ Հանգստարանաւ, միայն արենակիցք իմ թաղեսցին. իսկ այլք՝ 'ի Հանգստարանի, զհետ երթեալ ամենայնիւ բարեշինութեան։"

'Ի լրումն և 'ի բացայայտութիւն այսց իրաւանց և սահմանադրութեց, վասն ճշգիւ պահպանութեան և անշուշտ կատարման՝ համաձայն օգտի եկեղեցեաց Լուսաւորչական Հայոց՝ և կարևորագոյն պիտոյից նոցին, 'ի կարգաւորութեան ցուցակին որ յաղագս հաստատութեան առանձին բաժնի եկեղեցականաց 'ի Լազարեան ճեմարանի Արևելեան լեզուաց՝ 'ի պէտս դաստիարակութեան Հայազգի մանկանց յեկեղեցական կոչմանէ եղելոց, եդեալ կան կանոնք ստորագրեալք 'ի ծայրագոյն Պատրիարգէն և 'ի կաթողիկոսէն ամենայն Հայոց 'ի Յովհաննէ, և 'ի հնգից Անդամոց Սինհոդոսին Էջմիածնի 'ի 21 Յուլիսի 1839 ամի։ Յամենայն ընթացից գործոյն և 'ի կշռադատութեանցն նմին կցորդելոց՝ ժողովն Տեարց Նախարարաց մատոյց զնախագաղափար այսց կանոնաց 'ի Բարձրագոյն հաստատութիւն, յորոյ վերոյ՝ յ31 Յունուարի 1841՝ ամի ձեռամբ Նորին Կայսերական Մեծութեան գրեալ է ,,կատարեսցի": Կարգաւորութիւնս այս ընդ ձեռն առաջին Բաշխուածոյ Կառավարող Ծերակուտին՝ հրովարտակաւ 'ի 14 Մարտի 1841 ամի՝ ըստ Բարձրագոյն հրամանի տպագրեցաւ և հրատարակեցաւ առ 'ի գործադրութիւն և 'ի կատարումն †)։

Համառօտիւ 'ի մէջ բերցուք աստանօր զոմանս 'ի կանոնաց անտի պարունակելոց 'ի 20 յօդուածս **) յորս ակնյայտնի տեսանի Նպատակ Կառավարութեանն։

1.) Ըստ 'ի ժամանեցուցանել 'ի լաւագոյն վիճակ զեկեղեցիս Հայոց 'ի Ս. Փեթերպուրկ և 'ի Մոսկուա, և 'ի կրթել զեկեղեցականս նոցին, հա

*) Իրաւունքս այս բացորոշեալ է և 'ի Կայսերական հրովարտակի հաստատելոյ 'ի 19 Յուլիսի 1804 ամի (տես 'ի Բարձր. Հրով. յէջ 123)։

†) 'Ի Բարձ. Հրով. յէջ 277 — 279։

**) Կանոնքս այսոքիկ ստորագրեալ են 'ի Կառավարչէ Նախարարութեան Ներքին գործոց յՕժանդակ Զօրավարէն 'ի Կոմսէն Ստրոկոնովայ, և հաստատեալ են 'ի Կայսերէ յ31 Յունուարի 1841 ամի։

տատեալ է 'ի Լազարեան ճեմարանի Արեւելեան լեզուաց որ 'ի Մոսկուա՝ Նախայիշատակեալ Բաժինն վասն պատրաստելոյ զմանկունս եկեղեցականաց Հայկական դաւանութեան 'ի 15 է ց20, 'ի մտանել 'ի կոչումն եկեղեցական կամ 'ի պաշտօն վարժապետական 'ի Կղերիկոսական դպրոցս Թեմական եպիսկոպոսաց, և կամ 'ի ծառայութիւն 'ի Սինոդոսին Էջմիածնի և յայլ Հոգևոր Ատեանս Հայոց (Տես մինչ ց6 յօդուածն)։

7.) Կառավարութիւն ստացուածոց եկեղեցեաց Հայոց յերկոսին մայրաքաղաքս, և Լազարեան ճեմարանին որ 'ի Մոսկուա՝ յանձնեալ է առանձին Հոգաբարձուի, որ իբրև Գլխաւոր Կառավարիչ տնօրինէ զամենայն գործս առ այն վերաբերեալս։ Զնմանէ առ հասարակ կախեալ կայ անընդմիջապէս տնօրէնութիւն ամենայն հասից և ծախուց դրամոց, և բովանդակ Տնտեսական մասն, և այլն։

8. 9.) Վասն օգնականութեան Հոգաբարձուի 'ի կատարել զպարտաւորութիւնս նորա, ընտրին 'ի միջոյ ժողովրդականաց Հայոց Ս. փեթերպուրկայ և Մոսկուայ, և հաստատին 'ի Հոգաբարձուէ վասն երից ամաց՝ երկու անձինք, որք անուամբ Երէցփոխանի կամ Եկեղեցպանի՝ ընդ առաջնորդութեամբ Հոգաբարձուի հոգ տանին զամենայն ներկայ գործոց։

10.) 'Ի լրանալ տարւոյն Եկեղեցպանք կամ Երէցփոխանք զհամար գործոց իւրեանց 'ի մասին Կառավարութեան, և առանձինն զհամար եկեղեցական գանձուց՝ տան Հոգաբարձուի, որ զստացեալն 'ի նոցանէ զհաշիւ հաղորդէ 'ի վերաքննութիւն 'ի Հոգևոր Ատեանն (Консисторія) Հայոց Նոր Նախիջևանայ և Բեսսարաբիոյ։

16.) Հայեցեալ 'ի մեծամեծ նուիրաբերութիւնս արարեալս 'ի Տոհմէն Տեարց Լազարեանց 'ի կառուցումն և 'ի պահպանութիւն ճեմարանի Արեւելեան լեզուաց, և եկեղեցեաց մայրաքաղաքացն, և շինուածոցն առ նոքօք եղելոց, իրաւունքն սահմանելոյ զկոչումն Հոգաբարձուի եկեղեցեաց Հայոց երկուց մայրաքաղաքաց՝ և Արեւելեան լեզուաց ճեմարանին որ 'ի Մոսկուա տուեալ է 'ի մշտնջենաւորս Տոհմին Տեարց Լազարեանց, և անցանէ ազգէ յազգ ըստ իրաւանց անդրանկութեան (Տես մինչ ց20 երորդ յօդուածն) [1]։

[1] 'Ի Թարգ. Հրով. յէջ 281 — 293։

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՐՈՎԱՐՏԱԿԻՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻ Ա.

*տուելոյ սակս Ս. Փեթերպուրկայ Հայոց եկեղեցեաց և եկեղեցական տանց, ևս և սակս կառավարութեան նոցին *)։*

—

Զինուորական Հանրական Նահանգապետին Ս. Փեթերպուրկայ Կոմսին Տօլստօյի։

Քաջանգք հանգուցեալ Ներգործական Պետական Խորհրդականին (Յովհաննու) Լազարեանց, այրի ամուսին նորա Կատարինէ Լազարեան, և եղբարք նորա՝ Խորհրդական Արքունի Դրան Մինաս (Լազարեանց), և Ազնուական Յովակիմ Լազարեանց, արարեալ զհամամիտ կարգաւորութիւն՝ որով ինքնակամ հրաժարին յիրաւանցն պատկանելոց ինքեանց 'ի կառավարութեան Ս. Փեթերպուրկայ Հայոց եկեղեցեաց և ստացուածոց նոցին, խնդրեն հաստատել զյօդուածն պարունակեալս յայնմ կարգաւորութեան՝ առ առնել անդադրյնս հաստատելոյ և յապահովելոյ առյապայն զօդում այնց եկեղեցեաց և զեղանակ պահպանութեան նոցին։ Յօդուածքս այսոքիկ բովանդակեն յինքեանս զերկուս գլխաւոր պարագայս։

ա. Քաջանգք Ներգործական Պետական Խորհրդականին (Յովհաննու) Լազարեանց՝ առ օգտի եկեղեցեացն Հայոց ընկենուն յանձանց և 'ի ժառանգաց իւրեանց զիրաւունսն շնորհեալս նոցա կարգադրութեամբ առաջին սահմանողին 'ի 1799 ամի 'ի յարաբերութեան առ նոյն եկեղեցիս, և հաստատեալս 'ի հանգուցեալ Պատրիարգէն Յովսէփայ 'ի 1800 ամի։

բ. 'Ի կարգաւորութեանն որ 'ի նոցունց առաջադրի՝ մեծաւ ճշգրտութեամբ և մանրամասնաբար որոշին նոքա զեղանակ կառավարութեան եկեղեցական հասից և զընտրութիւն հոգաբարձուաց եկեղեցեաց։

'Ի զնին առեալ զայսոսիկ յօդուածս, և տեսեալ՝ թէ կարգաւորութիւնքն 'ի սոսին պարունակեալք հակառակին ինչ ոչ սահմանադրութեան առաջին սահմանողին, այլ մանաւանդ հային յօգուտ և 'ի բարեկարգութիւն եկեղեցեաց Հայոց, իրաւացի համարիմ Ես՝ թոյլ տալ ժառանգաց Պետական Խորհրդականին (Յովհաննու) Լազարեանց՝ զկարգաւորութիւնս արարեալս 'ի նոցունց և ընդ ամին 'ի բնագրին եդեալս՝ ածել 'ի կատար ըստ յետագայ պայմանաց։

---

*) Որ տպեալ է Հայերէն և Ռուսերէն 'ի գիրսն Բարձ. Հրով. յէջ 133 — 137։

ե. Որովհետեւ օգուտք և առանձնաշնորհութիւնք վերաբերեալք առ եկեղեցիս Հայոց՝ յառաջնոյ սահմանողէ նոցին յանձնեալք են ոչ միայն այժմու ժառանգացն, այլ և յետագայից նոցա մինչ ցերրորդ զարմ, այնր աղագաւ և հրաժարումն յայսց առանձնաշնորհութեանց՝ նշանակեալ յարգի կարգաւորութեան՝ մարթի վերածիլ առ այժմեան ժառանգս և եթ. բայց զյետնորդս նոցա՝ առանց նոցին հաւանութեան՝ պարտաւորել ոչ կարէ։ Ուստի կախի զկամաց ժառանգացն երկուց ապագայ զարմից յանձն առնուլ զառաջին կամ զվերջին կարգաւորութիւնն՝ այնու միայն պայմանաւ, զի 'ի յանձն առնուլն զառաջինն՝ ստանձնեսցեն և զամենայն պարաւանդութիւնս՝ նմին յարակցեալս։

զ. Զամենայն մանրամասնեայ հանգամանս վերաբերեալս առ կառավարութիւն եկեղեցեաց Հայոց և ստացուածոց նոցին՝ նոյնպէս և առ ընտրութիւն Հոգաբարձուաց, թոյլ տալ ժառանգաց՝ ներգործական պետական խորհրդականին (Յովհաննու) Լազարեանց՝ 'ի կատար ածել ըստ կարգացն նոցունց առաջադրելոց։

է. Որովհետեւ ըստ արդեանս կարգաւորութեան՝ տունքն կառուցեալք յառաջնոյ սահմանողէն յօգուտ եկեղեցեաց Հայոց՝ վերածին 'ի սեպհական ստացուած այնց եկեղեցեաց, յայն սակս և պարտ է ազատս կացուցանել զնոյնս 'ի քաղաքական հարկատուութեանց, ըստ իրաւանցն՝ որ 'ի հասարակի սահմանեալ կան վասն տանց և ստացուածոց վերաբերելոց առ եկեղեցիս այլոց քրիստոնէական դաւանութեանց։

'Ի Ս. Փեթերպուրկ, 'ի 19 Յուլիսի 1804 ամի։

Բնագիրն ստորագրեալ է իսկական ձեռամբ Նորին Կայսերական Մեծութեան

ԱՂԵՔՍԱՆԴՐ։

Ընդ բնագրին համեմատեաց կոլլէժսքիյ Ասեսօր

Նիկօլայ Ախտուէէվ։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

—

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՇԻՆՈՒԹԵԱՆ ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻՆ, ՈՐ 'Ի ՄՈՍԿՈՒԱ, ԵՒ ՆԿԱՐԱԳԻՐ ԱՐԴԻ ՀԱՆԳԱՄԱՆԱՑ ՆՈՐԻՆ։

Տեարց Լազարեանց ճեմարանն Արեւելեան լեզուաց որ 'ի Մոսկուա՝ կառուցեալ է յամի Տեառն 1815 *), 'ի ներգործական պետական խորհըրդականէ և 'ի Հրամանատար Ասպետէ՝ 'ի Յովհաննէ Լազարեան Լազարեանց, և յեղբօրէ նորա 'ի Յովակիմայ Լազարեան Լազարեանց **). և առ 'ի մշտնջենաւոր պահպանութիւն՝ յապահովս է կացուցեալ պէսպէս կարեւոր շինուածովք և գլխովք դրամոցն՝ զորս նուիրեալ են ընդ ժամանակս ժամանակս՝ թէ նախայիշատակեալ հիմնադիրք նորին, և թէ որ այժմ կան երեքին ժառանգք նոցա՝ Յովհաննէս՝ Խաչատուր և Ղազար Յովակիմեան— Լազարեանք [1])։

«Ճեմարանս այս՝ որ առ 'ի պատիւ և 'ի յիշատակ Հիմնադրաց և Պահպանողաց իւրոց՝ կրէ զկոչումն Լազարեանց կամ Լազարեան Ճեմարան Արեւելեան լեզուաց ***), յամէն 1825 մինչև ցայժմ գտանի ընդ հովանաւորութեամբ

---

*) Հիմնարկութիւն ճեմարանիս սկսեալ է և վճարեալ յընթացս 1813 և 1814 ամաց. իսկ դասատուութիւնն 'ի նմա սկսեալ է յամին 1816 (Տես 'ի Կարգադր. Ճեմ. յէջ 12)։

**) Բովանդակ ծախք շինութեան ճեմարանին և շինուածոյն որ առ նովաւ՝ հասուին 300000 ռուբլի թղթադրամ կամ 1,500000 ղուռուշ տաճ. (Տես 'ի Բազմավէպն 1843 ամի. յէջ 188)։ Գումար դրամոցն՝ յամի Տեառն 1830 էր 900,000 ռուբլի թղթադրամ ըստ նշանակեցելումն 'ի Կարգ. ճեմար. յէջ 12. 17. այլ արդ ամ ըստ ամէ առաւել եւս աճեաց նորանոր ընծայաբերութեամբք Լազարեանց և այլոց բարերարաց ազգիս։

[1]) 'Ի Կարգ. ճեմ. յէջ 16։ 'Ի Բարձ. Հրով. յէջ 219։ Եւ 'ի Գում. Հրով. յէջ 3։

***) Ծողովն կարգեալ վասն շինութեան Ուսումնարանաց, յՕրագրութեան իւրում 'ի 26 դեկտեմբերի 1827 ամի որոշեաց զուսումնարանս զայս անուանել Լազարեանց ճեմարան Արեւելեան լեզուաց (Лазаревыхъ Институтъ Восточныхъ языковъ) (որպէս գնի 'ի Գում. Բարձ. Հրով. յէջ 69)։ Եւ յայլում Օրագրութեան՝ որ արարաւ 'ի 1828 ամի յամսեան Մարտի՝ սահմանեաց անուանել Տեարց Լազարեանց Հայկական ճեմարան Արեւելեան լեզուաց Армянскій Лазаревыхъ Институтъ Восточныхъ языковъ (որպէս գնի 'ի Կարգ. ճեմար. յէջ 17)։ Եւ 'ի Բարձ. Հրով. յէջ 219։ Եւ 'ի Բազմավէպն 1843 ամի. յէջ 188)։

Օգոստափառ կայսերացն Ռուսաց, [1]) կալով նախ՝ ընդ գլխաւոր և անմիջական հոգատարութեամբ Զօրագլխապետին Թնդանօթական զօրաց՝ կոմսին Ալեքսեայ Անդրէասեան Արաքչէյեվայ [2]) ապա՝ ընդ ընդհանուր տեսչութեամբ Աջակցի կայսերական Մեծութեան Զօրագլխապետին հեծելազօրաց՝ կոմսին Աղեքսանդրի Քրիստափորեան Պենկենտորֆայ։ Իսկ այժմ կայ ընդ իշխանապետական վարչութեամբ Պայծառափայլ կոմսին Ալեքսեայ Ֆեօդորովիչի Օռլովայ։

Յառաւել պայծառութիւն ճեմարանիս՝ հրամանաւ Տէրութեան յօրինեցան 'ի Ս. Փեթերպուրկ 'ի Նախարարական ժողովյն Ազգային Լուսաւորութեան առանձին կարգադրութիւնք, զորս նոյն իսկ ճեմարանն հրատարակեաց տպագրութեամբ 'ի Հայ և 'ի Ռուս լեզու յամի Տեառն 1830. տուան ապա և այլ պէսպէս ազատութիւնք, իրաւունք և առանձնաշնորհութիւնք ընդ ժամանակս ժամանակս, որպէս տեսցի համառօտիւ 'ի յաւելուածի մատենիս, և ընդարձակարար 'ի մատենի կանոնադրութեանցն, որ նոյնպէս կրկին լեզուօք՝ Հայերէն և Ռուսերէն տպագրեցաւ աստ 'ի Մոսկուա 'ի տպարանի ճեմարանի յամին 1852։ Իսկ եթէ աստէն իսկ փափաքիցէ ընթերցողն ունել ինչ տեղեկութիւն զնպատակէ՝ զկառավարութենէ՝ զիրաւանց և զառանձնաշնորհութեանց, եւ և զհանգամանաց արտաքին և ներքին կերպաւորութեանց այսր ուսումնարանի, շատասցի եդելովքս 'ի ստորև։

Նպատակ Ճեմարանին։

1. Նպատակ ճեմարանին՝ է վարժել զհայազգի և զօտարազգի մանկունս կարևորագոյն ուսմամբք Եւրոպական և Ասիական լեզուաց, այնպէս՝

Իսկ 'ի կանոնադրութեան նոյն ճեմարանի՝ որ կայսերական հրովարտակաւ հաստատեցաւ 'ի 10 Մայիսի 1848 ամի, գրեալ կայ, թէ „'ի յիշատակ նուիրանաց Տոհմին Լազարեանց առ հիմնադրութիւն և պահպանութիւն այսր վարժարանի՝ անուանեալ լինի Լազարեան (Лазаревскій) ճեմարան Արևելեան լեզուաց (Տես 'ի նոյն կանոն. գլ. Ա. կանոն 1)։

[1]) 'Ի բազմավէպն 1843 ամի. յէջ 188։

[2]) Սա ինքն 'ի նամակի իւրում առ Յովակիմ Լազարեանց 'ի 17էն Յունուարի 1825 ամի, յետ յայտնելոյ զկարգիլն իւր Իշխանապետ ճեմարանի ըստ խնդրոյ նորա և ըստ բարեհաճութեան կայսեր, յաւելու „Քաղցր լիցի ինձ յոյժ ընդ անուամբ Իշխանապետի ճեմարանին՝ որ առանձինն ածէ փառս Տոհմին Լազարեանց, լինել գործակից յառաջադիմութեան նորին համաձայն նպատակի հիմնադրայն։" (Տես 'ի Գում. Բարձր. Հրով. յէջ 5)։

զի աւարտողքն 'ի նմա զընթացս ուսմանց ըստ սահմանադրեալն կարգի, եթէ իցեն յաշխարհական վիճակէ՝ կարիցեն ծառայել Տէրութեան՝ մտանելով յարքունի պաշտամունս թէ՛ 'ի Զինուորականս և թէ՛ 'ի քաղաքականս. իսկ եթէ իցեն յեկեղեցականաց Հայոց՝ կարիցեն ծառայել հայրենի եկեղեցւոյ իւրեանց՝ ստանձնելով զպաշտօն եկեղեցական՝ ըստ տնօրէնութեան հոգևոր Իշխանութեան [1]:

Կառավարութիւն:

2. Գլխաւոր Իշխանապետութիւն Ճեմարանին յանձն լինի առանձին ումեք կարգելոյ յՕգոստափառ Կայսերէ, որ վարէ զայս պարտաւորութիւն ընդ անմիջական Բարձրագոյն տեսչութեամբ Նորին Մեծութեան [2]:

3. Զկառավարութիւնն Ճեմարանի կացուցանեն. ա, Հոգաբարձուն և Օգնականն նորա. բ, Կառավարիչն. գ, Վերատեսուչն. դ, Խորհրդարանն և ե, Կառավարութիւնն [3]: Ի պէտս գործակատարութեան և հաշուարարութեան ըստ ամենայն մասանց Կառավարութեանն՝ կարգի 'ի Ճեմարանի Գրագիր, և այլ ոմն գործակից նմա [4]:

4. Ծայրագոյն Պատրիարգն և Կաթողիկոսն ամենայն Հայոց՝ է Նախագահ Պատուաւոր Անդամ Ճեմարանին. նոյնպէս և վիճակաւոր Արքեպիսկոպոսք Հայոց՝ են Պատուաւոր Անդամք Նորին [5]:

5. Կարգ ընդունելոյ և արձակելոյ զպաշտօնեայս Ճեմարանին՝ հիմնաւորի 'ի կանոնս ընկալեալս 'ի վարժարանս որ ընդ Նախարարութեամբ Ազգային Լուսաւորութեան, նոյնպէս և յաւանդեալս 'ի ցուցակս Վերատեսչական վիճակի քաղաքական Իշխանութեան Բարձրագոյնս հաստատեալ յամի 1846, 'ի Սեպտեմբերի 5: Հիմն ունելով զայսոսիկ կանոնս, այն ամ-

---

1) 'Ի Կարգ. Ճեմ. յէջ 18: 'Ի Գում. Բարձ. Հրով. յէջ 115—117: 'Ի Բարձ. Հրով. յէջ 225—227: 'Ի Կանոնադր. Ճեմ. յօդ. 2. 3. և 'ի բազմավէպն 1843 ամի, յէջ 189:

2) 'Ի Կանոն. Ճեմ. յօդ. 6:

3) Հոգաբարձու Ճեմարանին այժմու՝ է Սենեկապետն Կ. Դրան՝ Յովհաննէս Յովակիմեան Լազարեանց: Օգնական նորա՝ է Սենեկապետն Կ. Դրան՝ Խաչատուր Յովակիմեան Լազարեանց: Կառավարիչ է հրաժարեալն 'ի Զինուորական պաշտամանէ և մտեալն 'ի քաղաքական ծառայութիւն աստիճանաւ Դրան Խորհրդականի՝ Գեներալ Նիկողայոս Դաւթեան Տէլանեանց: Վերատեսուչ է Դրան Խորհրդական և Ասպետ՝ քաջատոհմիկ Մկրտիչ Յովսէփեան Էմին՝ այրն գիտնական:

4) 'Ի Կանոն. Ճեմ. յօդ. 7:

5) 'Ի Կանոն. Ճեմ. յօդ. 8:

նայն պաշտօնեայք՝ որք 'ի վարժարանս Նախարարին Ազգային Լուսաւորու-
թեան ընկալեալ և արձակեալ լինին 'ի Նախարարէն, 'ի Լազարեանց Ճե-
մարանին ընկալեալ և արձակեալ լինին 'ի Գլխաւոր Իշխանապետէ նորին [1]:

6. Գլխաւոր պարտաւորութիւն Հոգաբարձուի Ճեմարանին՝ եղեալ
կայ յայսմ՝ զի գտանիցէ զհնարս առ 'ի ծաղկեցուցանել զնոյն Ճեմարան,
և զի ամենայն ոգւով հսկեսցէ 'ի ներգործութիւնս ամենայն անձանց՝ որոց
յանձն է կառավարութիւն Ճեմարանին: Նա ինքն վճռէ զայն ամենայն
գործս 'ի Ճեմարանին՝ զորս 'ի վարժարանս Նախարարին Ազգային Լուսա-
ւորութեան բացորոշեն Հոգաբարձուք Համալսարանաց և ուսումնական շըր-
ջանաց նոցին [2]:

7. Օգնականն Հոգաբարձուի Ճեմարանին՝ անմիջապէս գոլով ենթար-
կեալ Հոգաբարձուին, զոյգ ընդ նմա մասնակցի յամենայն կառավարու-
թիւնս Ճեմարանին: Իսկ 'ի դէպս բացակայութեան կամ հիւանդութեան
Հոգաբարձուին՝ ընու զամենայն պարտաւորութիւնս նորա, և վայելէ զամե-
նայն իրաւունս նորա: Իսկ Հոգաբարձուն գոլով անմիջապէս ստորակար-
գեալ Գլխաւոր Իշխանապետի Ճեմարանին, առաջի առնէ նմա զամենայն
գործս՝ որոց վճռողութիւնն զանցանէ ըստ չափ իշխանութեան տուելոյ ին-
քեան: Եւ մարթի ունել սա զառանձին Դիւանադպիր [3]:

8. Հոգաբարձուն Ճեմարանի ընտրեալ լինի 'ի գերդաստանէ Լազա-
րեանց [4]: Եթէ ոք 'ի Տոհմէ Լազարեանց՝ որում պարտ իցէ ըստ սահմա-
նադրութեանցս այսոցիկ ստանձնել զպաշտօն Հոգաբարձուի, ոչ ունիցի զա-
տիճան՝ զսեպհականեալն այսմ պարտաւորութեան, յայնժամ պատուոյ աղա-
գաւ կրելով զաստիճանն զայն՝ կարող է լինել տեղակալ նորա, բայց
հաստատի տիրապէս 'ի պաշտամանս յայսմիկ՝ երբ արքունի սպասաւորու-
թեամբ ստասցի զաստիճան աւագութեան, որ կարեւորն է առ այս վախ-
ճան ըստ հասարակաց կանոնի: Նոյնպէս և Օգնականն Հոգաբարձուի ընտ-
րեալ լինի 'ի Տոհմէ Լազարեանց, զհետ գնալով կարգի 'ի վեր անդր բա-
ցատրելոյ [5]:

9. Կառավարիչն Ճեմարանի՝ է անմիջական իշխան և լիակատար կար-

---

1) 'Ի կանոն. ճեմ. յօդ. 9:

2) 'Ի կանոն. ճեմ. յօդ. 10. 11:

3) 'Ի կանոն. ճեմ. յօդ. 12. 13. 15:

4) Որպէս հիմնեալ և որոշեալ է յ2 թուահամարի Բարձրագոյնս հաստատեալ սահմանադրու-
թեան ժողովոյն Նախարարաց 'ի 29 Մարտի և 26 Ապրիլի 1838 ամի, եւ և 'ի թուա-
համարն 16. 17. 18. 19 կանոնաց Բարձրագոյնս հաստատելոյ յ31 Յունուարի 1841 ամի:

5) 'Ի կանոն. ճեմ. յօդ. 14:

դաւորիչ նորին ըստ ամենայն մասանց. և գոլով ստորակարգեալ Հոգաբարձուի՝ ընտրեալ լինի 'ի նմանէ համաձայնութեամբ Գլխաւոր Իշխանապետին։ Նա ինքն կատարէ 'ի ճեմարանի զնոյն ամենայն պարտաւորութիւնս՝ զորս կատարեն Կառավարիչք Համալսարանաց և Վարիչք Լիկէոնից (Լիցէյից), Վարժարանաց (Գիմնազիայից), և այլոց նոյնօրինակ ուսումնարանաց։ Է՛ նա և անփոփոխ Նախագահ Խորհրդարանի և Կառավարութեան ճեմարանին։ Մանրամասն պարտաւորութիւնք և իրաւունք նորա առհասարակ սահմանին յառանձին կարգադրութեան՝ զոր պարտի տալ նմա Հոգաբարձուն՝ հաստատութեամբ Գլխաւոր Իշխանապետին։ Նմին իսկ Կառավարչի յանձն լինի տալ ամենայն պաշտօնակալաց 'ի ճեմարանին զառանձին կարգադրութիւնս և հրահանգս հաստատեալս 'ի Հոգաբարձուէն [1]։

10. Վերատեսուչն ճեմարանի է անմիջական Օգնական Կառավարչի առ հասարակ յամենայն մասունս Կառավարութեան 'ի ճեմարանին։ Նա միայն խնամ ունի դաստուութեանց, և հսկէ 'ի վերայ Բարեկարգութեան ճեմարանին և բարեբարոյութեան աշակերտելոց։ 'Ի բացակայութեան կամ 'ի հիւանդութեան Կառավարչին՝ սա լցուցանէ զամենայն պարտաւորութիւնս նորա 'ի ճեմարանի, և նախաթոռ նստի 'ի Խորհրդարանի և 'ի Կառավարութեան։ Ընտրեալ լինի և կարգի սա առաւելապէս 'ի թուոյ Ուսուցչապետաց ճեմարանին՝ պահելով նաև զպարտաւորութիւն Ուսուցչապետի. բայց մարթի ընտրիլ և յօտար անձանց, այսինքն յայնց՝ որք չիցեն 'ի թուոյ Ուսուցչապետաց ճեմարանին [2]։

11. Խորհրդարանին յանձնեալ լինի 'ի ճեմարանի կարգադրել առհասարակ զամենայն առարկայս ուսմանց։ Խորհրդարանն ընդ Նախագահութեամբ Կառավարչին՝ բաղկանայ 'ի Վերատեսչէն, յՈւսուցչապետաց, և յաւագ վարժապետաց։ Բաց յայդցանէ՝ յԱնդամս Խորհրդարանին մարթին ընտրեալ լինել հաւանութեամբ Հոգաբարձուին՝ նաև այլ անձինք համբաւեալք ուսումնականութեամբ կամ փորձառութեամբ 'ի դաստիարակութեան մանկանց, և որք յանձն առնուցուն գործակից լինել յառաջադիմութեան ճեմարանին։ Առարկայք, պարտաւորութիւնք և կարգ գործակատարութեանց 'ի Խորհրդարանի աստ՝ նոյն են ամենեին որ ինչ 'ի Խորհրդարանս Համալսարանաց և Լիկէոնից եղելոց ընդ Իշխանութեամբ Նախարարին Ազգային Լուսաւորութեան [3]։

12. Կառավարութեան ճեմարանին յանձն լինի բարեկարգել զտնտե-

---

1) 'Ի կանոն. ճեմ. յօդ. 16—21։

2) 'Ի կանոն. ճեմ. յօդ. 22—24։

3) 'Ի կանոն. ճեմ. յօդ. 25—27։

տական և զքաղաքական գործս։ Կառավարութիւնն ընդ Նախագահութեամբ Կառավարչի Ճեմարանին՝ բաղկանայ 'ի Վերատեսչէն, և 'ի չորից Խորհրդականաց՝ զորս հաստատէ Հոգաբարձուն, զմին 'յՈւսուցչապետաց կամ 'յաւագ վարժապետաց Ճեմարանին, իսկ զերիսն՝ 'ի Հայոց հանապազ 'ի Մոսկուա բնակելոց։ Առարկայք, պարտաւորութիւնք և կարգ գործակատարութեանց 'ի Կառավարութեան Ճեմարանին՝ նոյն են որ ինչ 'ի Կառավարութեան Համալսարանաց և Լիկէոնից ընդ իշխանութեամբ Նախարարին Ազգային Լուսաւորութեան եղելոց [1]։

13. Աշակերտք Ճեմարանին բաժանին 'ի Հասութատուս և 'ի կէսհասութատուս։ Աշակերտք հասութատուք բնակեալք 'ի Ճեմարանի՝ ընդունին բաց յուսմանց նաև զհանդերձս և զկերակուր. իսկ կէսհասութատուք որք երթեւեկեն 'ի Ճեմարանն վասն ուսման՝ ընդունին միայն զճաշ։ Թիւ հասութատուաց սահմանի 'ի 140 աշակերտս, և եթէ տեղին ներեսցէ՝ թիւ նոցա մարթի և ևս աւելուլ առաջարկութեամբ Կառավարչին և հաստատութեամբ Հոգաբարձուին։ Թիւ կէսհասութատուաց ոչ բացորոշի, այլ կախի զկարգադրութենէ Կառավարչին և Հոգաբարձուին [2]։

14. 'Ի թուոյ 140 հասութատուաց՝ չորեքին են հասութատուք Նորին Կայսերական Մեծութեան, և դաստիարակին ծախիւք Արքունի գանձատան։ Չորեքտասուն աշակերտք 'ի բնակչաց Կովկասու և յայնկոյս Կովկասու եղելոց՝ դաստիարակին նոյնպէս Արքունի ծախիւք, և պատրաստին պաշտօնէայ 'ի սահմանս Կովկասու և յայնկոյս Կովկասու [*]։ Երեսուն աշակերտք անուանին Լազարեան հասութատուք, և դաստիարակին տոկոսեօք դրամագլխոցն ընծայելոց 'ի գերդաստանէ Լազարեանց, և եկամուտք կալուածոց շնորհելոց 'ի նոցանէ Ճեմարանին։ Երկուք յաշակերտաց անուանին Գասպարեան հասութատուք, և վարժին տոկոսեօք դրամագլխոյն ընծայելոյ 'ի Գասպարեան վաճառականէն [**]։ Գտանին նաև երկու հասութատու աշակերտք՝ որք կոչին Մնացականեան հասութատուք, և պահպանին

---

[1]) 'Ի Կանոն. Ճեմ. յօդ. 28—30։

[2]) 'Ի Կանոն. Ճեմ. յօդ. 31—33։

[*]) Համաձայն երրորդ յօդուածոյ կարգադրութեանն հաստատելոյ 'ի 11 Յունիսի 1849 ամի յաղագս դաստիարակութեան աշակերտաց եղելոց՝ 'ի բնակչաց Կովկասու և կողմանցն որ յայնկոյս Կովկասու, արքունի ծախիւք 'ի Բարձրագոյն և 'ի մասնաւոր Ուսումնարանս Կայսրութեան, փոխանակ 14 աշակերտաց 'ի բնակչաց Կովկասու և յայնկոյս Կովկասու կողմանց՝ դաստիարակին 20 արքունի ծախիւք առ 'ի մտանել 'ի ծառայութիւն 'ի սահմանս Կովկասու և յայն կոյս Կովկասու։

[**]) Ըստ Բարձրագոյնս հաստատեալ առաջարկութեան Նախագահին Կովկասեան Ժողովոյ՝ հրատարակելոյ 'ի 24 Դեկտեմբերի 1848 ամի ընդ համարով 2068։

տոկոսեօք դրամագլխոյն ընծայելոյ 'ի Մնացական անուն քաղաքացւոյ Տփի-խիսայ։ Քսան աշակերտք յեկեղեցականաց կրթին եկամուտք եկեղեցեաց Հայոց՝ որ 'ի Ս. Փեթերպուրգ և 'ի Մոսկուա. որոց վասն ևս ըստ կարգաւորութեան Սինոդոսին Ս. Էջմիածնի կայսերական հրամանաւ հաստատեալ է 'ի ճեմարանի առանձին բաժին կամ բաշխ (отдѣленіе) *)։ *Իսկ մնացեալ եօթանասուն աշակերտք դաստիարակին ծախիւք ծնողաց կամ ազգականաց, և անուանին Ուսանողք սեպհական հասութիւ* [1])։

15. *'Ի թիւս հասութատուաց Նորին կայսերական Մեծութեան ընկալեալ լինին որդիք աղքատ՝ բայց գովութեամբ ծառայող՝ աստիճանաւորաց, առաւելապէս 'ի Հայոց՝ 'ի Վրաց և 'ի Թաթարաց՝ բնակելոց 'ի ներքին նահանգս Ռուսաստանի, ըստ խնդրոյ ծնողաց կամ ազգականաց. զորոց զընտիրն միջնորդութեամբ Գլխաւոր Իշխանապետի ճեմարանին պարտ է առաջի առնել Բարձրագոյն բարեհաճութեան Նորին Մեծութեան։ Հասութատու ուսանողք 'ի Կաւկասէ և յայնկոյս կողմանց Կաւկասու՝ ընտրին ըստ անմիջական բացորոշութեան գլխաւոր կառավարչաց այնց կողմանց՝ 'ի բնակչաց անդր ծնելոց, և 'ի մանկանց աստիճանաւորաց Ռուսաց։ Լազարեան և Գասպարեան հասութատուք ընտրին յորդւոց աղքատագոյն ծնողաց Հայոց՝ առաւելապէս որբք, ըստ առաջարկութեան Խորհրդարանին և հաստատութեան Հոգաբարձուին։ Ծնողք որք յօժարին տալ զմանկունս իւրեանց 'ի դասս հասութատուաց, տան վասն այսր զխնդրագիր Հոգաբարձուին, նոյն և զառանձին վկայական 'ի սակս աղքատ վիճակի իւրեանց։ Հասութատուք յեկեղեցականաց ընտրին յորդւոց եկեղեցական պաշտօնէից Լուսաւորչական դաւանութեան Հայոց. նոյնպէս և այն անձինք 'ի Հայոց՝ որք ցանկան զորդիս իւրեանց նուիրել 'ի վիճակ եկեղեցական։ Ընկալեալ լինին նոքա բացորոշութեամբ Հոգաբարձուի ճեմարանին՝ հաւանութեամբ եկեղեցական իշխանութեան Լուսաւորչական Հայոց* [2])։

16. *Ծնողք և ազգականք՝ որք յօժարին կարգել զորդիս իւրեանց 'ի թիւս աշակերտաց սեպհական հասութիւ ուսանողաց և կէսհասութատուաց, տան զխնդրագիր կառավարչի ճեմարանին։ Յամենայն խնդրագիրս՝ որ տուեալ լինին յաղագս ընդունելոյ զմանկունս 'ի ճեմարանն, պարտ է յարել նաև զվկայականս վասն ծննդեան և մկրտութեան, այլ և վասն պատուաստի ծաղկան, և զկոչմանէ ծնողացն, ըստ հասարակաց սահմանադրութեան* [3])։

---

*) Զայսմ բաժնէ տես 'ի վախճանի այսր մասին մատենիս 'ի ծանօթ։

[1]) 'Ի Կանոն. ճեմ. յօդ. 34։

[2]) 'Ի Կանոն. ճեմ. յօդ. 35—38։

[3]) 'Ի Կանոն. ճեմ. յօդ. 39. 40։

17. Ամենայն աշակերտք՝ որք ընկալեալ լինին 'ի ճեմարանն [*]), յառաջագոյն փորձին: Ընկալեալքն յառաջին կամ 'ի ստորին դասատունն՝ պարտին գիտել ընթեռնուլ և գրել 'ի Ռուսաց կամ 'ի Հայոց լեզուի, ևս և գիտել զառաջին կանոնս Թուաբանութեան: Աշակերտք մարթին ընկալեալ լինիլ ոչ միայն յառաջինն, այլ և ուղղակի յերկրորդ՝ յերրորդ և 'ի չորրորդ դասատունն, եթէ 'ի հարցափորձութեան անդ ցուցանիցեն՝ թէ ունին արդէն զբաւական գիտութիւն այնց առարկայից՝ որք աւանդին 'ի ստորին դասատանն: Յառաջին և յերկրորդ դասատունս ընկալեալ լինին մանկունք՝ որք չիցեն պակաս քան զտասնամեայ հասակն, և ոչ աւելի քան զերեքտասանն. իսկ յերրորդ և 'ի չորրորդ դասատունս այնք՝ որք չիցեն աւելի քան զհնգետասանամեայս: 'Ի հարցափորձի աշակերտաց յՈւսական կողմանց եկելոց՝ ըստ բացորոշութեան Խորհրդարանի և ըստ հաստատութեան Հոգաբարձուի շնորհեալ լինին ինչ ինչ բացառութիւնք [1]):

18. Իւրաքանչիւր հասութատուք թէ՝ յորդւոնուստ և յեկեղեցեաց խնամեալք և թէ՝ 'ի ծնողաց պահպանեալք՝ յիւրաքանչիւր ամի վճարեն ճեմարանին երեք հարիւր ռուբլի արծաթ: Բաց յայդմանէ, 'ի մտանել աշակերտաց 'ի ճեմարանն՝ 'ի պէտս նախնական պիտոյից վճարեն միանգամ միայն երեսուն և հինգ ռուբլի արծաթ: Ծնողք կամ ազգակիցք կէսհասութատու աշակերտաց վճարեն հարիւր վաթսուն ռուբլի արծաթ 'ի տարւոջ: Հատուցումն դրամոց առհասարակ վասն իւրաքանչիւր աշակերտաց լինի երկիցս յամին, յառաջին աւուր Յունուարի և յառաջին աւուր Յուլիսի: Եթէ յընթացս Յունուարի և Յուլիսի սեպհական հասութիւ դատխարակեալ աշակերտք ոչ վճարեսցեն զպահանջեալ դրամն, արձակեալ լինին նոքա 'ի ճեմարանէն: Եթէ ոք 'ի հասութատուաց յընթացս կիսոյ տարւոյ 'ի սակս զինչևիցէ պատճառի արտաքս ելանիցէ 'ի ճեմարանէ, վճարն դրամոյ նորա ոչ դարձուցանի նմա յետս, այլ մնայ յօգուտ ճեմարանին [2]):

19. Առարկայք ուսմանց ճեմարանին են

ա. Ուսումն կրօնական:

բ. Արևելեան լեզուք. 1, Հայոց. 2, Արաբացւոց. 3, Պարսից. 4, Տաճկաց. 5, Վրաց և 6, Թաթարաց:

գ. Առարկայք աւանդեալք 'ի վարժարանս (Գիմնազիայս), որք են. 1, Գրականութիւն Ռուսաց. 2, Մաթեմաթիկա և Բնագիտութիւն. 3, Աշխար-

---

[*]) Աշակերտք ընկալեալ լինին երկիցս 'ի տարւոջ, յամսեան Յունուարի և 'ի Յուլիսի: ('Ի կանոն. ճեմ. յօդ. 42):

[1]) 'Ի կանոն. ճեմ. յօդ. 41:

[2]) 'Ի կանոն. ճեմ. յօդ. 43. 44:

հագրութիւն զոյգ ընդ վիճակագրական տեղեկութեանց. 4, Պատմութիւն ընդհանուր և Ռուսաց. 5, Օրէնք Ռուսաց. 6, Լատինական լեզուն. 7, Գերմանականն. 8, Գաղղիականն։

Դ. Արուեստք. 1, Վայելչագրութիւն. 2, Նկարչութիւն և գծագրութիւն. 3, Կաքաւումն [1])։

20. Աշակերտք՝ որք պատրաստին յեկեղեցական վիճակ Լուսաւորչական Հայոց դաւանութեան, ուսանին զհետագայ առարկայս. 1, զլեզուն Ռուսաց, ես և զմին յեւրոպականաց, այն է՝ կամ զԳաղղիացւոց կամ զԳերմանացւոց. զլեզու Հայոց, ես և զմին յարեւելեան լեզուաց, այն է՝ կամ զՊարսից, կամ զՏաճկաց, կամ զԹաթարաց. 2, զՄաթեմաթիկա, զԲնաբանութիւն, զԱշխարհագրութիւն և զՊատմութիւն. իսկ յարուեստից անտի զՎայելչագրութիւն և զՆկարչութիւն. 3, զՈւսումն կրօնական և զԼրացուցիչ գիտութիւնս՝ որք պարունակին զհետագայ մասունս, այնք են՝ բովանդակն հաւատապատում Աստուածաբանութեան՝ համաձայն կանոնաց եկեղեցւոյ Լուսաւորչական Հայոց, բովանդակն մեկնութեան Աստուածաշունչ գրոց, Բացատրութիւն Պատարագի, և Պատմութիւն Եկեղեցական։ Բաց յայդցանէ՝ բացատրեալ լինին նոցա պարտաւորութիւնք ճշմարիտ հովուաց եկեղեցւոյ առ աստիճան իւր, առ կառավարութիւնն և առ մարդիկ առհասարակ։ Աշակերտաց՝ նուիրողաց զանձինս 'ի վաճառականութիւն՝ աւանդին լրացուցիչ գիտութիւնք, այնք են՝ Տումարագիտութիւն, ես և գիտութիւնք վերաբերեալք առ վաճառականութիւն և առ վաճառելի նիւթս [2])։

21. Առհասարակ ամենայն աշակերտք ճեմարանին՝ բաց յեկեղեցականաց, պարտաւոր են ուսանել զմին յԱրեւելեան լեզուաց՝ ըստ սեպհական ընտրութեան իւրեանց, զՏաճկացն, զՊարսիցն, կամ զԹաթարացն՝ օգնութեամբ Արաբացի լեզուին։ Ամենայն Հայք առանց բացառութեան պարտին ուսանել զլեզուն Հայոց, Վիրք՝ զՎրացն, Թաթարք՝ զԹաթարացն։ Կաւկասեան հաւատոյ աշակերտք ուսանին զլեզու սահմանաց իւրեանց [*])։ Ուսումն Գերմանական և Լատին լեզուաց ոչ է պարտաւորութիւն վասն ամենայն աշակերտաց, այլ թողեալ լինի 'ի կամս նոցա՝ ուսանիլ զայնս, կամ ոչ։ Աշակերտք որք պատրաստեն զանձինս մտանել 'ի Համալսարան, հարկաւ պարտին ուսանել զլեզուն Լատինական [3])։

---

[1]) 'ի կանոն. ճեմ. յօդ. 45։

[2]) 'ի կանոն. ճեմ. յօդ. 46. 47։

[*]) Համաձայն 34 յօդուածոյ Բարձրագոյնս հաստատելոյ 'ի 11 Յունիսի 1849 ամի Սահմանադրութեան յաղագս դաստիարակութեան 'ի Կաւկաս և անդր քան զԿաւկաս ծնելոց՝ և Արքունի հաշուով ուսանողաց 'ի Բարձրագոյն և 'ի միանաւոր ուսումնարանս Տէրութեան։

[3]) 'ի կանոն. ճեմ. յօդ. 48։

22. Բովանդակ տևողութիւն ուսմանց բաժանի յութ դասակարգս, յորոց վեցք՝ են աւանդեալքն 'ի Գիմնազիայս, կամ Հանրականք. իսկ երկուք՝ մանկականք կամ վերինք, 'ի պէտս Արևելեան լեզուաց։ Բաց յայսցանէ գոյ 'ի Ճեմարանի և առանձին Նախակրթական բաժին 'ի սակս վարժութեան մատաղահաս մանկանց. զոր Իշխանապետքն Յովհաննէս և Խաչատուր Յովակիմեանք — Լազարեանք յամի 1850 հրամանաւ Տէրութեան հաստատեցին առ յիշատակի վաղամեռիկ մանկանն Յովհաննու Խաչատրեան Լազարեանց՝ նուիրելով 'ի պահպանութիւն նորին զվաթսուն հազար ռուբլի արծաթ *)։ Բաժանումն տարւոյն ըստ դասատանց, և կարգումն ժամուց ուսմանց, յանձն լինի խորհրդարանի Ճեմարանին՝ հաստատութեամբ Հոգաբարձուին։ Ուսումն Արևելեան լեզուաց սկսանի 'ի ստորին Գիմնազիական դասատունս, և աւարտեալ լինի 'ի վերին կամ 'ի մանկական դասատունս։ Վերին դասատունքս առաւելապէս կարգին յուսումն Արևելեան Գրականութեան, 'ի գործադրական վարժութիւն Արևելեան լեզուաց, և 'ի դասատուութիւն Գրականութեան Ռուսաց։ Դասատուութիւնն 'ի Ճեմարանի աւանդի այնու եղանակաւ, որ արդէն ընկալեալ է կամ յապայն ընկալեալ լիցի 'ի վարժարանս՝ ընդ Իշխանութեամբ Նախարարին Ազգային Լուսաւորութեան եղելոյ [1])։

23. 'Ի պէտս դասատուութեան 'ի Ճեմարանի կարգին Դասատուք կրօնական ուսմանց, Ուսուցչապետք, Աւագ և Կրտսեր վարժապետք։ Դասատուք կրօնական ուսմանց կարգին առ աւանդել զուսումն կրօնի, մին՝ վասն Ռուսաց դաւանութեան, և միւսն՝ վասն Լուսաւորչական Հայոց դաւանութեան։ Բաց յայսցանէ, առ ուսուցանելոյ զկրացուցիչ գիտութիւնս՝ աշակերտաց պատրաստողաց զինքեանս առ եկեղեցական վիճակ, կարգի ոմն Դասատու յեկեղեցականաց Լուսաւորչական Հայոց։ Ուսուցչապետք կարգին. 1, վասն Ռուսաց Գրականութեան. 1, վասն Հայոց լեզուի. 1, վասն Արաբացւոց և և Պարսից. և 1, վասն Տաճկաց և Թաթարաց։ Աւագ Ուսուցիչք կարգին՝ 1, վասն Գրականութեան Ռուսաց. 1, վասն Հայկականին. 1, վասն Արաբացւոց և Պարսից. 1, վասն Վրաց. 1, վասն Թաթարաց և Տաճկաց. 1, վասն Լատին լեզուի. 1, վասն Օրինագիտութեան Ռուսաց. 2, վասն Մաթեմաթիկայի (յորոց մին ուսուցանէ զԲնագիտութիւն, իսկ միւսն զՉափական Աշխարհագրութիւն). 1, վասն Պատմութեան (որ և ուսուցանէ զՔաղաքագիտական Աշխարհագրութիւն զոյգ ընդ Վիճակագիտական տեղեկութեանց). և 1, վասն Վաճառագիտութեանց։ Կրտսեր Ուսուցիչք կարգին.

---

*) Զայսմ Բաժնէ բանք լիցին 'ի վախճանի այսր մասին մատենիս, 'ի ծանօթութիւնս։

[1]) 'Ի կանոն. Ճեմ. յօդ. 49—51։

1, վասն Ռուսաց. 1, վասն Հայոց. 1, վասն Գաղղիացւոց. և 1, վասն Գեր-մանական լեզուի: Բաց 'ի դոցունց՝ գտանին ևս 'ի Ճեմարանի. 1, Ուսուցիչ Պատկերահանութեան և Գծագրութեան. և 1 ևս՝ վասն Վայելչագրութեան *): 'Ի կարգելն զՈւսուցչապետս և զՈւսուցիչս՝ պահպանին կանոնք հաստատեալք 'ի սակս կարգելոյ զՈւսուցչապետս 'ի Լիցէյս, և զՈւսուցիչս 'ի Գիմնազիայս՝ ընդ տեսչութեամբ Նախարարին Ազգային Լուսաւորութեան գտեալս [1]):

24. 'Ի սակս ժամուց դասատուութեան ուսմանց, բաժանման ժամանակաց, ազատութեան ժամանակի յուսմանէ, եղանակի հարցաքննութեան, և և այլոց մանրամասն հանգամանաց Ուսումնական կազմածոյ Ճեմարանին, ընկալեալ լինին այն կանոնք՝ որք արդէն սահմանեալ են 'ի պէտս Լիցէյից և Գիմնազիայից՝ ընդ տեսչութեամբ Նախարարին Ազգային Լուսաւորութեան եղելոց [2]):

25. Վասն հսկողութեան 'ի վերայ աշակերտաց՝ կարգին առանձին 'ի Ճեմարանի աւագ և կրտսեր վերակացուք, որք անմիջապէս ստորադրին Վերատեսչին [3]):

26. 'Ի Ճեմարանի գտանին Նպաստք ուսումնականութեան. 1, Մատենադարան. 2, Դրամադարան. 3, Թանգարան Բնագիտութեան և Ձախագիտութեան: Խնամակալութիւն դոցին յանձն լինի Վերակացուաց կամ Վարժապետաց՝ ըստ ընտրութեան Կառավարչին և հաստատութեան Հոգաբարձուին [4]):

Իրաւունք և առանձնաշնորհութիւնք:

27. Ճեմարանին պարգևեալ են այն ամենայն իրաւունք և առանձնաշնորհութիւնք՝ զորս ունին Լիցէյք՝ ընդ տեսչութեամբ Նախարարին Ազգային Լուսաւորութեան գտեալք: Յայտնիկ իրաւունս հիմնեալ. ա, Ունի Ճեմարանն զիւր սեպհական կնիք՝ գծագրութեամբ Կայսերական Արծուենշանին: բ. Ազատ է 'ի վճարելոյ դկշռական դրամս յառաքելն զնամակս և զայլ իրս առ գործադրութիւն իւր վերաբերեալս, եթէ չիցեն այնք ծանր քան զմի փութ: գ. Ազատ է 'ի կիրառութենէ արծուէնշան թղթոց, և 'ի

*) Վասն ուսուցանելոյ զպար կամ զկաքաւ՝ կարգի Ուսուցիչ պայմանաւ իւիք. և վասն այսորիկ ոչ համարի նա 'ի կարգս Արքունի Պաշտօնակալաց:

[1]) 'Ի կանոն. Ճեմ. յօդ. 52—54:

[2]) 'Ի կանոն. Ճեմ. յօդ. 55:

[3]) 'Ի կանոն. Ճեմ. յօդ. 56:

[4]) Անդ. յօդ. 57:

վճարելոյ զսակ հարկաց, և յայլոց հարկատուութեանց, և առհասարակ յամենայնէ՝ որ վերաբերին առ գործադրութիւնս նորին։ Գ. Ունի իրաւունս յանուն իւր 'ի լոյս ընծայել զճառս, զքննութիւնս, զցուցակս, և զհաշիւս. միայն թէ այնք կանխաւ զննեսցին 'ի Խորհրդարանի՝ ըստ կանոնաց քննողաց զգիրս։ Ե. Զայն ամենայն մատեանս՝ զորս 'ի սակս ուսումնական պիտոյից տացէ բերել յօտար աշխարհաց, թոյլ տուեալ լինի մուծանել յայս Տէրութիւն առանց վճարելոյ զարքունի հարկս։ Զ. Ազատ է 'ի վճարելոյ զտնական հարկս վասն շինուածոյն իւրեան պատշաճելոյ, թէ 'ի տալոյ իջեւանս զօրաց, և թէ 'ի վճարելոյ դրամս. Նոյնպէս ազատ է և յայլ ամենայն քաղաքական հարկատուութեանց, բաց 'ի յարդարելոյ զքարայատակ փողոցի և 'ի լուցմանէ լապտերաց։ Է. Ունելով զիւր սեպհական Տպարան, մարթի ունել և զկրպակ գրավաճառութեան [1])։

28. Ամենայն աստիճանաւորք 'ի ճեմարանի ունին իրաւունս կայսերական ծառայութեան, և վայելեն զամենայն արտօնութիւնս պարգևեալս անձանց ծառայողաց 'ի վարժարանս՝ ընդ տեսչութեամբ Նախարարին Ազգային Լուսաւորութեան եղեալս, իմա՝ 'ի Լիցէյս Տէմիտովեան և Պեզպօրօտկօնեան. Նոյնպէս և 'ի վարժարանի Ազնուականաց և 'ի Գիմնազիայս՝ որ 'ի Մոսկուա, և յայլ նման ուսումնարանս *)։ Կառավարիչն, Վերատեսուչն, Դասատուք Կրօնական ուսմանց, Դասատուք լրացուցիչ եկեղեցական ուսմանց, Ուսուցչապետք, Աւագ և Կրտսեր վարժապետք, Ուսուցիչն Նկարչութեան, և Վերակացուք ճեմարանին, նոյնպէս և ընտանիք նոցա ընդունին զմշտնջենաւոր թոշակ, և առ մի նուազ նպաստ դրամոց **)։ Իսկ թոշակք և նպաստք այլոց պաշտօնատարաց ճեմարանին և ընտանեաց նոցա սահմանին ըստ հասարակաց կանոնադրութեան։ Այս ամենայն ծախք վճարին 'ի գումարէ Արքունի Գանձատան։ Վասն այսորիկ 'ի թոշակաց անտի ծառայողաց 'ի ճեմարանի 'ի բաց առեալ լինի յօգուտ Գանձարանին օրինադրեալ մասնն [2])։

29. Աշակերտք ուսանողք 'ի ճեմարանին՝ ժառանգեն զյետագայ իրաւունս։

---

[1]) 'Ի կանոն. ճեմ. յօդ. 58—65։

*) Որպէս նշանակին 'ի 714, 715, 716, 721—724, 728. 737, 738, 741—750 անահամարսն. յերրորդ հատորն Հաւաքման Սահմանադրութեանց յաղագս ծառայութեանց ըստ բացորոշութեան Տէրութեան. տպ. յամին 1842. և 'ի յաւելուածն նորին։

**) Համաձայն կանոնաց հաստատելոց տալոյ նպաստ՝ 'ի սակս վարժարանաց, և բացորոշելոց 'ի անահամարսն 480—546. յերրորդ հատորն Հաւաքման Սահմանադրութեանց տպագրելոց յամի 1842։

[2]) 'Ի կանոն. ճեմ. յօդ. 66. 67։

ա. Աշակերտաց՝ յառաջադէմ զարգացելոց 'ի բովանդակ լրացեալ ուսմունս՝ ոչ միայն 'ի Հանրական՝ այլեւ 'ի մասնական դասատունս, և արժանացելոց գովասանական վկայականաց, 'ի մտանելն 'ի քաղաքական ծառայութիւնս՝ տուեալ լինի երկոտասաներորդ աստիճան. և 'ի յառաջանալն յաստիճանս՝ համարեալ լինին նոքա յառաջին դասակարգի. իսկ 'ի մտանելն 'ի զինուորական ծառայութիւն՝ ունին նոքա իրաւունս հաւասարս Ուսանողաց (Սթուտենթից) Համալսարանաց՝ առ ստանալոյ զառաջին աստիճան զօրական պաշտօնակալի (Օֆիցերի), եթէ միայն հմտութեամբ պաշտամանն արժանի լինիցին այնմ [1]։

բ. Աշակերտք՝ որք աւարտեն զընթացս ուսմանց 'ի հասարակ կամ 'ի Գիմնազիական դասատունս, ստանան զամենայն իրաւունս այնց աշակերտաց՝ որք աւարտեն զուսմունս 'ի նահանգական Գիմնազիայս։ Ըստ այսմ կանոնի յառաջադէմ աշակերտքն զկնի աւարտելոյ զԳիմնազիական գիտութիւնս, եթէ ոչ կամիցին ուսանիլ զգիտութիւնս 'ի բարձր կամ 'ի մասնական դասատունս, այլ կամին արտաքս ելանել 'ի ճեմարանէ, վարձատրին ոսկեղէն կամ արծաթի մետալիւ՝ գովասանական վկայագրով և մատենիւք, ըստ դատողութեան Խորհրդարանի ճեմարանին, և հաստատութեան Հոգաբարձութեան։ Աշակերտք՝ որք գովանի յառաջադիմութեամբ աւարտեն զԳիմնազիական գիտութիւնս, և ըստ ծագման ծննդեան իւրեանց ունին իրաւունս մտանելոյ յԱրքունի ծառայութիւն, և գանձեն իւրեանց զլխակատար գիտութիւն օրինաց Ռուսաց, յելանելն իւրեանց 'ի ճեմարանէ՝ վարձատրին աստիճանաւ չորեքտասաներորդ կարգի։ Իսկ աշակերտք 'ի զաւակաց անձնական Պատուաւոր Քաղաքացեաց՝ վաճառականաց՝ և ժողովրդականաց (մէշչանին), արժանացեալք ընդունել 'ի վարձ ոսկի կամ զարծաթի մետալս, ստանան զկոչումն Պատուաւոր Քաղաքացեաց [2]։

գ. Աշակերտք ճեմարանին՝ որք ոչ աւարտեն զամենայն Գիմնազիական գիտութիւնս, և ելանեն 'ի ճեմարանէն՝ յետ աւարտելոյ զուսմունս 'ի հինգերորդ կամ 'ի չորրորդ դասատունս, ընդունին զվկայագիր, յորում նշանակին առարկայք ուսմանց, և յառաջադիմութիւնն յիւրաքանչիւրսն յայտնանէ։ Հիմն ունելով զայսպիսի վկայագիրս, եթէ 'ի նոյն նշանակեալ իցէ բաւականապէս յառաջադիմութիւնն յամենայն առարկայս բացորոշեալս 'ի ցուցակին՝ որ եդեալ կայ 'ի 600 տնահամարն երրորդ հատորոյ Օրինաց յաղագս ծառայութեանց նշանակելոց 'ի Տէրութենէն, 'ի հինգերորդ շարունակութեան, աշակերտք ճեմարանին 'ի բարձրանալն յառաջին կարգ աս-

1) 'ի կանոն. ճեմ. յօդ. 70։

2) 'ի կանոն. ճեմ. յօդ. 70։

տիճանի կամ պատուարժան քաղաքացւոյ՝ ազատեալ լինին յայնմ հարցափորձութենէ, զոր պահանջէ վերոյիշեալ տնահամարն։ Իսկ այն աշակերտք յորոց 'ի վկայագիրս ցուցանին ոչ ամենայն առարկայք նշանակեալք 'ի ցուցակին, կամ թէ յումանս յայնցանէ նշանակեալ իցէ անբաւական վկայութիւն, այնպիսիքն օրինաւոր կարգաւ հարցափորձեալ լինին թէ 'ի սոյնս և թէ 'ի պակասեալ առարկայսն [1])։

Դ. Աշակերտք ճեմարանի՝ որք պատրաստեն զանձինս առ վաճառականութիւն, յաւարտել զբովանդակութիւն ուսմանց՝ ստանան զայն ամենայն իրաւունս և արտօնութիւնս՝ զորս ընդունին աշակերտք ուսանողք 'ի վերնագոյն վարժարանս վաճառականութեան (փանսիօն)՝ որ 'ի Ս. Փեթերբուրգ։ Ըստ այսմ այնք յաշակերտաց ճեմարանի՝ որք ըստ իրաւանց ծննդեան ոչ պատշաճին առ սերնդական պատուանուն քաղաքացութիւն, յետ աւարտելոյ զբովանդակ ուսմունս 'ի ճեմարանի՝ արժանի լինին ընդունել 'ի կառավարող Սինկղիտոսէն զկոչումն անձնական պատուանուն քաղաքացութեան [2])։

Ե. Առ քաջալերութիւն աշակերտաց ճեմարանին գերազանցելոց 'ի տարեկան հարցաքննութեան՝ տուեալ լինին պարգևք. որոց ուսանին 'ի հանրական և 'ի գիմնազիական դասատունս՝ պարգևքն տուեալք աշակերտաց գիմնազիայից. իսկ որոց ուսանին 'ի միմնաւոր դասատունս՝ պարգևքն տուեալք 'ի Լիցէյս՝ ընդ տեսչութեամբ Նախարարին Ազգային Լուսաւորութեան դնեալս [3])։

Պարտաւորութիւնք աշակերտաց։

30. Առհասարակ ամենայն աշակերտք ճեմարանին, թէ ուսանողք Արքունի թոշակաւ և թէ ուսանողք գլխովք դրամոց՝ ճեմարանին, այն է Հաստատուք Նորին կայսերական Մեծութեան, աշակերտք կովկասայինք և յայնկոյս կովկասու եղեալք, և Լազարեան աշակերտք, պարտական են աւարտել զբովանդակութիւն ուսմանց 'ի ճեմարանի, և ապա անհրաժեշտ ծառայել զամս վեց, Հաստատուքն Նորին կայսերական Մեծութեան՝ անդ, ուր կայսերական Մեծութիւնն հրամայէ, ըստ առաջարկութեան Գլխաւոր Իշխանապետի ճեմարանին. Հաստատուքն 'ի սահմանաց կովկասու և յայնկոյս կովկասու եղեալք՝ անպատճառ 'ի նոյն սահմանս, ըստ բացորոշելոյ Գլխաւոր կառավարչաց այնց տեղեաց։ Լազարեան Հաստատուքն՝ ըստ

---

[1]) 'Ի Կանոն. ճեմ. յօդ. 70։
[2]) 'Ի Կանոն. ճեմ. յօդ. 72։
[3]) 'Ի Կանոն. ճեմ. յօդ. 76։

որոշելոյ հոգաբարձուի Ճեմարանին՝ կարգին կամ 'ի Ճեմարանի անդ՝ իբր վերստին աւանդիչք ընկալեալ ուսմանց, իբր վերակացուք, իբր կրտսեր ուսուցիչք Արեւելեան լեզուաց, և կամ յայլ վարժարանս Հայոց՝ ըստ հասարակ կանոնաց։ Սակայն Լազարեան հասութատուք՝ թոյլտուութեամբ հոգաբարձուին կարող են ազատաբար մտանել 'ի ծառայութիւն և կամ 'ի համալսարանս՝ առ կատարելագործելոյ զանձինս 'ի գիտութիւնս, պարտաւոր գոլով յետ աւարտելոյ զուսումն 'ի համալսարանի՝ նոյնպէս ծառայել զամս վեց 'ի Ճեմարանի, եթէ յայնմ պարտաւորութենէ ոչ ազատեսցին 'ի հոգաբարձուէն։ Յընթացս այսց ամաց ոչ ոք 'ի վերոյ գրեալ հասութատուաց մարթի արձակիլ 'ի Ճեմարանէ, բաց 'ի դիպուածոյ ծանր հիւանդութեան, բայց և յայնժամ այսու անփոփոխ պայմանաւ՝ զի յառողջանալն 'ի հիւանդութենէն՝ դարձցի վերստին 'ի նոյն ծառայութիւն, ըստ բացորոշելոյ վերոյգրեալ մեծաւորաց, առ աւարտելոյ զանկատար մնացեալ ժամանակն ծառայութեան [1]։

'Ի համալսարանին Մոսկուայ գտանին հինգ պարապ տեղիք վասն Սթուտենթից յաշակերտաց Ճեմարանին, որք յետ աւարտելոյ անդանօր կամ զլիակատար կամ զԳիմնազիական ուսումն, ցանկան լսել նաև դասատուութիւնս 'ի համալսարանի։ 'Ի սակս իւրաքանչիւրոց այսց Սթուտենթից տուեալ լինի յԱրքունի Գանձարանէ երեքհարիւր ռուբլի արծաթ, համաձայն այնմ օրինաց՝ ըստ որոյ վճարեալ լինին այդպիսի դրամք 'ի պէտս Սթուտենթից 'ի Կովկասեան աշակերտաց *)։ Նոքա բնակին խառն ընդ Սթուտենթից Կովկասեան աշակերտաց, և կան ընդ տեսչութեամբ մի և նոյն Գլխաւոր Վերատեսչի։ Այն այս Սթուտենթք 'ի Լազարեանց Ճեմարանէն՝ յետ աւարտելոյ զուսումն 'ի համալսարանի անդ, ըստ կարգադրութեան հոգաբարձուի Ճեմարանին՝ կամ մնան 'ի Ճեմարանի անդ՝ առ 'ի կատարել զպէսպէս պարտաւորութիւնս, և ծառայել անդանօր ոչինչ պակաս քան զվեց ամս, և կամ արձակեալ լինին 'ի հոգաբարձուէն՝ առ 'ի ծառայել 'ի կողմանս Կովկասու կամ անդր քան զԿովկաս. ուրանօր նոյնպէս պարտին ծառայել զամս վեց, և վայելեն զայն զամենայն իրաւունս, որք սեպհական են Սթուտենթից Կովկասեան աշակերտաց առհասարակ [2]։

Սմանք 'ի Լազարեան հասութատուաց՝ ըստ բացորոշելոյ հոգաբարձուին՝ կարեն նոյնպէս պատրաստել զինքեանս 'ի վիճակ վաճառականութեան՝

[1]) 'Ի կանոն. Ճեմ. յօդ. 71։

*) Որպէս նշանակեալ կայ յերկրորդում ծանօթութեան 36 յօդուածոյ կանոնացն Բարձրագոյն հաստատելոյ 'ի 11 Յունիսի 1849 ամի։

[2]) 'Ի կանոն. Ճեմ. յօդ. 71։

Եւ այդպիսիք յաւարտելն զուսմունն՝ ըստ բացորոշելոյ Հոգաբարձուին կարեն յանձն առնուլ զվիճակ վաճառականութեան, կամ մնալ 'ի ճեմարանի, և կամ կարգիլ ուսուցիչ յայլ դպրոցս Հայոց: Ցերկուսին վերջին դիպուածս վայելեն նոքա զայն ամենայն իրաւունս՝ որ սեպհական են աշակերտաց պատրաստողաց զինքեանս՝ յՈւրքունի ծառայութիւն, պարտաւոր գոլով նման այնց ծառայել զամս վեց:

Պատպարեան Հասուլթատուք յաւարտելն զուսմունս՝ արձակեալ լինին 'ի ճեմարանէ, առ սահմանելոյ ըստ կամաց իւրեանց զգործս վաճառականութեան [1]:

Վերաշանցեալքն յուսմունս վաճառականութեան 'ի Լազարեան Հասուլթատուաց՝ ըստ առաջադրութեան Հոգաբարձուի ճեմարանին և ըստ հաստատութեան Գլխաւոր Իշխանապետին՝ մարթին ըստ ներելոյ հանգամանաց առաքիլ յայլ երկիր արտաքոյ սահմանաց Տէրութեան՝ առ կատարելագործելոյ զանձինս յուսմունս և 'ի գործս վաճառականութեան, ընդունելով զթուղթ արձակման *[2]:

Աշակերտք՝ որ յեկեղեցական վիճակէ, յաւարտելն զբովանդակութիւն ուսման՝ անկանին ընդ իշխանութեամբ եկեղեցական Մեծաւորաց Լուսաւորչական Հայոց [3]:

Դիւանատուն Ճեմարանին:

31. Ճեմարանն ունի զԴիւանատուն, յորում յօրինին օրագրութիւնք թղթոց՝ որք առաքին անտի արտաքս, և որ ընկալեալ լինին 'ի ներքս. և համառօտաբար նշանակին յայնս բովանդակութիւնք իւրաքանչիւր թղթոց, թուահամարք այնոցիկ, և օրն՝ յորում ընկալեալ կամ առաքեալ լինին: Ցայսմ իսկ դիւանատան պահպանի դիւանն գործոց, և ցուցակագիր նոցին [4]:

Հիւանդանոց Ճեմարանին:

32. 'Ի ճեմարանի յառանձին տեղւոջ գտանի հիւանդանոց ընդ տեսչութեամբ հմուտ բժշկի. ուր և վասն հանապազօրեայ բարեկարգութեան հսկէ 'ի վերայ հիւանդաց պաշտօնեայ մի (ֆէլդշէր) [5]:

---

1) 'Ի կանոն. ճեմ. յօդ. 73:

*) Ըստ 447 տնահամարոյ չորեքտասաներորդ հատորոյ Հաւաքման Սահմանադրութեանց տպ- եալ յամի 1842, յաղագս թղթոց արձակման:

2) 'Ի կանոն. ճեմ. յօդ. 74:

3) 'Ի կանոն. ճեմ. յօդ. 75:

4) 'Ի Գում. բարձր. Հրամ. յէջ 135: 'Ի կարգ. ճեմ. յէջ 26:

5) 'Ի Գում. բարձր. Հրամ. յէջ 137: 'Ի կարգ. ճեմ. յէջ 27:

Ուսումնական նպատակ 'ի Ճեմարանի:

33. Ճեմարանն վասն ամենայն աշակերտաց պատրաստեալ ունի ըստ ուսումնական նպատակ կամ գործիս՝ միայն առ 'ի գործածութիւն, որպիսի են արուեստակերտ գունդք, աշխարհացոյցք և այլն: Բայց յայսցանէ՝ ունի ևս 'ի պատրաստի զՄատենադարան, զբազում Զախարերական և Բնաբանական գործիս, զազգի ազգի բերս երից տարերաց բնութեան, և զհանդիսարան հին դրամոց և մետալից: Զբեանս 'ի մատենադարանի եղեալս (որք առին լինել աւելի քան զտասն հազար) կարեն վարել միայն ընտիր աշակերտք. իսկ ընտրողութիւն նոցին՝ ըստ առանձին կանոնաց առ այս նուէթ վերաբերելոց կախի զխոհականութենէ Վերատեսչին [1]:

Տպարան Ճեմարանին:

34. Առընթեր Ճեմարանին գտանի գործարան տպագրութեան, զոր յամի Տեառն 1829 կառուցին հարազատ ժառանգք հիմնադրաց Ճեմարանին՝ Ներգործական պետական խորհրդականքն և Ասենեկապետքն կայսերական Դրան Յովհաննէս և Խաչատուր Յովակիմեանք—Լազարեանք, ծախեալ վասն այնր յարդեանց իւրեանց իբր 30 հազար ռուբլի թղթադրամ [2]: Եւ հետզհետէ նորոգեալ ճոխացուցին պէսպէս գրովք այլևայլ լեզուաց *): 'Ի գործարանի անդ տպագրեցան ընդ ժամանակս ժամանակս յոլով ուսումնական և բանասիրական մատեանք՝ ճառք և օրագրութիւնք յայլևայլ լեզուս: 'Ի թուոյ անտի տպագրեալ մատենից՝ մի է և կրկնահատոր բառարանն 'ի Հայ լեզուէ 'ի Ռուս յօրինեալ աշխատութեամբ Ներգործական պետական խորհրդականի Աղեքսանդրի Մակարեան Խուդաբաշեանց. զոր յամին 1838 արդեամբք իւրովք 'ի լոյս ընծայեցոյց Հոգաբարձու Ճեմարանի Իշխանապետն Յովհաննէս Յովակիմեան Լազարեանց՝ ծախեալ 'ի պէտս տպագրութեան եօթանասուն և երկու հազար ռուբլի թղթադրամ [3]. որոյ վասն ընկալաւ նա և զԲարձրագոյն բարեհաճութիւն Օգոստափառ Կայսեր Նիկողայոսի Առաջնոյ:

---

[1]) 'Ի Կարգ. Ճեմ. յէջ 40. 42: 'Ի Գում. Բարձր. Հրամ. յէջ 157. 159: 'Ի Բազմավէպ 1843 ամի. յէջ 189:

[2]) Տես 'ի գիրսն Собр. Актовъ. հատ. Ա. յեր. 119:

*) Իմա՝ Հայոց, Ռուսաց, Լատինաց, Յունաց, Գաղղիացւոց, Գերմանացւոց, Անգղիացւոց՝ Իտալացւոց, Հունգարաց, Վրաց, Արաբաց, Տաճկաց և Պարսից, որպէս հրատարակեալ է 'ի Գում. Հրովարտ. տպ. 'ի Ս. Փեթերբուրգ յամի 1839. յեր. 187. և 'ի Կարգադր. Ճեմ. տպ. յամի 1830. յէջ 76:

[3]) Տես 'ի Գումարն Հրովարտակաց տպ. 'ի Փեթերբուրգ. յամի 1839. յեր. 187: (Իսկ 'ի Собр. Акт. հատ. Ա. յէջ 456. ծախք տպագրութեանն գնի 50000 ռուբլի թղթադրամ):

Արձանն կանգնեալ 'ի պարտիզի Ճեմարանի:

35. 'Ի պարտիզի՝ որ կայ 'ի թիկանց կողմանէ ճեմարանին, յամի 1822, 'ի Դեկտեմբերի 12 կանգնեցաւ արձան հոյակապ յանթափ երկաթոյ (чугунный), 'ի բարձրութիւն երեքտասան կանգնոյ, ագուցիկ մարմարեայ պատկերօք, 'ի յիշատակ հիմնադրաց ճեմարանին *):

'Ի պատիւ այսր հանդիսի եղև յայնժամ երևելի և պարտուպատշաճ ժողով 'ի մեծի դահլիճի հարցաքննութեան յառաջակայութեան Գլխաւոր կառավարչի նահանգին, և այլոց բազմաթիւ այցելուաց՝ մեծանուն անձանց. ուր և բացախօսեալ եղեն տաղերգութիւնք և ճառք յազգի ազգի լեզուս և նուագեցան երաժշտութիւնք [1]:

Արձանն ունի զձև բրգան: Մակագրութիւնք 'ի վերայ նորին՝ են յետագայքդ:

Յառաջոյ կողմանէ՝ որ հայի 'ի Ճեմարան.

„Տաճարս այս գիտութեան կառուցեալ է յաւուրս թագաւորութեան կայսեր Աղեքսանդրի Ա. յամի 1815. 'ի Մայիսի 1:"

„Նիկողայոս Ա. կայսր պարգևեաց Արևելեան լեզուաց ճեմարանին Լազարեանց զամենայն իրաւունս և արտօնութիւնս շնորհեալս Լիցէյից, 'ի 10 Մայիսի 1848 ամի:"

»Сей храмъ наукъ воздвигнутъ въ Царствованіе Государя Императора Александра I-го въ 1815 году Маія 1 дня.«

»Императоръ Николай I-й даровалъ Лазаревскому Институту Восточныхъ языковъ всѣ права и преимущества, предоставленные Лицеямъ Маія 10 дня 1848 года.

---

*) Կշիռ արձանիս է 1000 փութ. իսկ ծախքն արարեալ վասն այսր՝ հաշուի իբր 15,000 ռուբլի թղթադրամ: (Տես 'ի Գում. Հրով. յեր. 189), կամ 10,000 ռուբլի թղթ. (որպէս նշանակեալ է 'ի Соб. Акт. հատ. Գ. յէջ 51):

[1]) 'Ի Գում. Բարձր. Հրով. յէջ 189:

Յորմն խորանի՝ որ հայի յեկեղեցին Ս. Նիկողայոսի, 'ի ներքոյ պատկերի Ներգործական Պետական Խորհրդականին Յովհաննու Լազարեան Լազարեանց.

„Դասեցի 'ի կաճառ շողշողուն աստեղաց
Անաղօտ արուսեակն լոյս 'ի յազգ Հայկազանց.
Գերապանծն Յովհաննէս փառք իւրոց Հայրենեաց
Դափնազարդ ձեմեցաւ յաղթական կամարաց":
„Նարեկի շառաւիղ յարմատոց Դիւցազանց
Որդեգիր մօր բարւոյ Ռուսիոյ սահմանաց,
Յանձանձիչ տղայոց հայրագութ անմոռաց
Ճշմարիտ հատուցող իւր զպարտ հայրենեաց:"

Ընդ 'ի վերոյ պատուանդանի

„Ներգործական Ներքին Խորհրդականի և Ասպետի Յովհաննու Եղիազարեան Եղիազարեանց, Հիմնադրի շինուածոյս":

Дѣйствительному Статскому Совѣтнику и Командору Ивану Лазаревичу Лазареву, завѣщателю и основателю Института.

Отъ древня племени Арменіи рожденный
Россіей - матерью благой усыновленный,
Гайканы! вашихъ онъ сиротъ не позабылъ!
Разсадникъ сей души признательной творенье!
Даруя чадамъ здѣсь покой и просвѣщенье,
Отчизнѣ той и сей онъ долгъ свой заплатилъ.

'Ի յորմն խորանի, 'ի ներքոյ պատկերի Տ. Յովակիմայ Լազարեան Լազարեանց.

„Ընդ աշխէն գործունեայ դու Իշխան Վեհապանծ,
Մեք թոթովքս 'ի բարբառ պակասիմք 'ի մտաց:
Զարթիցէ Հոմերոս պարագլուխն հագներգուաց.
Ուսուցէ ներբողել վայելուչ ըստ արդեանց":
„Յարունակ դու չքնաղ 'ի տոհմէ քաջազանց
Հայկազեան գըրոհիս ես պսակ պարծանաց:
Անմոռաց կատարիչ զպատուէր կտակաց.
Բարձրացար 'ի պատիւ, և 'ի փառս հայրենեաց":

„Յովակիմայ Եղիազարեան Եղիազարեանց, կատարողի զկամս Հիմնադրին, Բարերարի և Հոգաբարձուի շինուածոյս“։

Іоакиму Лазаревичу Лазареву, исполнителю воли основателя, благотворителю, учредителю и Попечителю Института.

Сей, брата своего достойнѣйшій ревнитель,
Начатый подвигъ имъ устроилъ, расширилъ:
Соплеменныхъ покровъ, безродныхъ охранитель,
Для церкви, для наукъ, для блага бѣдныхъ жилъ.

Յետոյ առ կողմանէ՝ որ հայի 'ի մնացանն Տ. Ովկէմեանէ, 'ի ներքոյ պատկերաց Աննայ Սարգսեան Ղազարեանց՝ ամուսնոյ Տ. Յովակիմայ Ղազարեան Ղազարեանց, և որդւոյ նորա Յարութիւնի Յովակիմեան Ղազարեանց Գնդապետի Թիկնապահ զօրու և Ասպետի *)։

„Ընդէր յայս անշունչ տախտակ քարեղէն
Զանուն քո բարի սևակաւ գրեն,
Զոր քո որբ որդիքս տուիք ոսկեղէն
Մայր մեր՝ գրեցաք 'ի սիրտ մարմնեղէն“։

„Որդի հարազատ հօր իւր համանման,
Փառաց հայրենեաց արժան անսասան,
'Ի դաշտ Արեսի արի զօրական,
Ժառանգորդ անմահ անմոռաց անուան։

Аннѣ Сергѣевнѣ Лазаревой, супругѣ Якима Лазаревича, и сыну его, Лейбъ-Гвардіи Гусарскаго полка Штабъ-Ротмистру и Кавалеру Артемію Якимовичу Лазареву, положившему животъ въ сраженіи подъ Лейпцигомъ, Октября 4-го 1813 года. Пожертвовавшимъ знатный капиталъ въ пользу Института.

Какъ добра мать, сиротъ съ горячностью любила,
И памятникъ себѣ въ сердцахъ ихъ утвердила.

*) Երկոքին սոքա նուիրեցին զմեծ գումար դրամոց յօգուտ Ճեմարանին։

Ծանօթ. Հայկական մակագրութիւնք և տաղաչափք յօրինեալ են յայնր ժամանակի աշակերտաց Ճեմարանին. իսկ ռուսերէնքն յՕբոլէնսկոյ Փրոֆէսորէ և 'ի Գեղական խորհրդականէ յԱ. Փ. Մերզլեաքովայ։

Средь мира благъ Творецъ, гроза среди враговъ,
Во цвѣтѣ лѣтъ онъ палъ за вѣру и отцовъ! [1])

36. Թէ՛ արտաքին երեւյթն և թէ՛ ներքին յօրինուածն ճեմարանի երևեցուցանէ յինքեան զգեղեցիկ զբարեկարգ և զնորօրինակ իմն ճարտարապետութիւն՝ զոյգ ընդ տնտեսական կերպաւորութեան: Յառաջոյ գլխաւոր շինուածոյն կայ ճակատ (ФРОНТОНЪ) 'ի վերայ սեանց. իսկ 'ի յետուստ 'ի կողմն պարտիզի գտանին մոյթք: 'Ի ճակատու անդ կան ձևացուցեալ փայլուն քանդակք երկգլխանի թագապսակ Արծուոյ՝ դրօշակաց, և այլն: 'Ի վերայ սրտի Արծուոյն նկարեալ կայ ոսկեղէն տառիւք անուն Օգոստափառ կայսեր ամենայն Ռուսաց՝ Նիկողայոս Ա. և 'ի ստորև նորին՝ այս ոսկետառ մակագրութիւն Ռուսերէն Лазаревскій Институтъ Восточныхъ Языковъ 1815. (այս է Լազարեան ճեմարան Արևելեան լեզուաց 1815):

37. Մասունք շինուածոյ ճեմարանին են՝ դասատունք, ննջարանք աշակերտաց, բնակարանք Կառավարչի Վերատեսչի և Վերակացուաց, հիւանդանոց, սեղանատուն, խոհակերոց, բաղանիք, դահլիճ հարցաքննութեան աշակերտաց, մատենադարան, բնական և չափաբերական հանդիսարան, դրամադարան, սենեակ ընդարձակ վասն կաքաւոյ և թատերական խաղուց, ևն:

38. 'Ի դահլճի հարցաքննութեան գտանին պատկերք ճարտարարուեստ նկարեալք.

ա. Աղեքսանդրի Բ. յայժմու թագաւորողի Ինքնակալ կայսեր ամենայն Ռուսաց:

բ. Նիկողայոսի Ա. } կայսերաց 'ի Տէր հանգուցելոց:
գ. Աղեքսանդրի Ա. }

դ. Առաջին Գլխաւոր Իշխանապետի ճեմարանին՝ Պայծառափայլ կոմսի՝ Աղեքսէյ Անդրէևիչ Արակչէևիայ վախճանելոյ 'ի 1834 ամի:

ե. Երկրորդ Գլխաւոր Իշխանապետի ճեմարանին՝ Պայծառափայլ կոմսի՝ Աղեքսանդր Խրիստոփորովիչ Պենկենտորֆայ վախճանելոյ 'ի 1844 ամի:

զ. Երրորդ Գլխաւոր Իշխանապետի ճեմարանին՝ Պայծառափայլ կոմսի՝ Աղեքսէյ Ֆէօդորովիչ Օռլովայ:

է. Նախագահին կայսերական խորհրդարանի և կաւկասեան ժողովոյ՝ Զինուորական Նախարարի Քնեազ Աղեքսանդր Իվանովիչ Չէրնիշևիայ:

---

[1]) 'Ի Գամ. Բարձր. Հրով. յէջ 189—193:

Ը. Կտակողի և Հիմնադրի ճեմարանին՝ ներգործական պետական խոր-հրրդականի և Հրամանատար Ասպետի Յովհաննու Լազարեան Լազարեանց՝ վախճանելոյ 'ի 1801 ամի։

Թ. Հիմնողի և Հոգաբարձուի ճեմարանին՝ Տ. Յովակիմայ Լազարեան Լազարեանց՝ վախճանելոյ 'ի 1826 ամի։

Ժ. Հոգաբարձուի ճեմարանին ներգործական պետական խորհրդականի, և Սենեկապետի կայսերական Դրան՝ Յովհաննու Յովակիմեան Լազարեանց։

ԺԱ. Օգնական Հոգաբարձուի ճեմարանին՝ ներգործականին պետական խորհրդականի, և Սենեկապետի կայսերական Դրան՝ Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց։

ԺԲ. Գնդապետի Թիկնապահ զօրու՝ Յարութիւնի Յովակիմեան Լազարեանց՝ անկելոյ 'ի պատերազմին՝ որ առ Լէյփցիկաւ յամին 1813 [1])։

ԺԳ. Յովհաննու Խաչատրեան Լազարեանց՝ ծնելոյ 'ի 12 Մայիսի 1844 ամի, և վախճանելոյ 'ի 26 Նոյեմբերի 1850 ամի։

Կան անդանոր և կիսարձանք *)։

Ա. Մեծին Պետրոսի.
Բ. Պօղոսի Ա.
Գ. Աղեքսանդրի Ա.
Դ. Նիկողայոսի Ա.
} Օգոստափառ կայսերաց ամենայն Ռուսաց։

Ե. Հիմնադրի ճեմարանին՝ Յովհաննու Լազարեան Լազարեանց։

Զ. Կառուցողի ճեմարանին՝ Յովակիմայ Լազարեան Լազարեանց։

Է. Որդւոյ Հիմնադրի ճեմարանին՝ Յարութիւնի Յովհաննիսեան Լազարեանց։

Ը. Յովհաննու Խաչատրեան Լազարեանց։

Կան և երկու պղնձի տախտակք՝ յորս առանձին առանձին նշանակին այցելութիւնք Օգոստափառ կայսեր Նիկողայոսի Փաւլովիչի և Ժառանգի նորուն Աղեքսանդրի Նիկոլայեվիչի, Ռուսերէն տառիւք ըստ այսց օրինակաց։

Его Императорское Величество Государь Императоръ Николай Павловичъ осчастливилъ Высочайшимъ посѣщеніемъ Лазаревскій Институтъ Восточныхъ языковъ 1834 года 4-го Октября.

---

[1]) 'Ի Գում. Բարձր. Հրով. յէջ 203։

*) Ոմանք 'ի կիսարձանացս՝ են գաճեայք, (որպէս Մեծին Պետրոսի, Պօղոսի Ա, Աղեքսանդրի Ա.) և ոմանք՝ 'ի պղնձոյ (որպէս՝ Յովհաննու Լազարեան Լազարեանց, Յովակիմայ Լազարեան Լազարեանց, Յարութիւնի Յովհաննիսեան Լազարեանց, Յովհաննու Խաչատրեան Լազարեանց). իսկ կիսարձանն կայսեր Նիկողայոսի Ա. է յընտիր մարմարիոնէ։

Его Императорское Высочество Великій Князь Государь Наслѣдникъ Цесаревичь Александръ Николаевичъ Высочайше посѣтилъ Институтъ 1837 года 25 Ноября.

39. ՚Ի Սենեկի որ վասն կաքաւոյ՝ գտանին նոյնպէս պատկերք ոմանց յառաջնոց կայսերաց Ռուսաց, և այլոց երևելի անձանց, այլ և աշխարհացոյցք մեծամեծք և այլ ազգի ազգի նկարք: Անդանօր կան և կրկին տախտակք պղնձիք կախեալք զորմոյ, յորոց վերայ ոսկեգիր դրոշմեալ կան անուանք աշակերտաց արժանացող յառաջադիմութեանն աւարտողաց զընթացս ուսմանց յայսմ Ճեմարանի, ըստ հետևեալ կարգի:

ՏԱԽՏԱԿ Է.

Воспитанники Лазаревскаго Института Восточныхъ языковъ, окончившіе курсъ ученія съ полными успѣхами и примѣрнымъ поведеніемъ.

—

Яковъ Арзановъ.
Давыдъ Арзановъ.
Рафаилъ Кистовъ.
Яковъ Арапетовъ.
Василій Середниковъ.
Артемій Аваковъ.
Семенъ Султанъ - Шахъ.
Іосифъ Александровъ.
Сергѣй Тиграніанъ.
Іосифъ Черкесовъ.
Мартынъ Долговъ.
Григорій Арапетовъ.
Иванъ Мираковъ.
Кн. Григорій Манукъ - Бей.
Кн. Семенъ Абамеликъ.
Николай Деляновъ.
Карлъ Криденеръ.
Артемій Катрановъ.
Сергѣй Іоаннесовъ.
Иванъ Деляновъ.
Иванъ Пондоевъ.
Мыгырдичь Іоаннесовъ.
Егоръ Ахвердовъ.
Иванъ Лорисъ - Меликъ.
Степанъ Бастамовъ.
Дмитрій Яблочковъ.
Василій Кологривовъ.
Кн. Захарій Половандовъ.
Константинъ Сомовъ.
Иванъ Шардинъ.
Графъ Николай Толстой.
Андрей Казаковъ.
Захарій Барсиговъ.
Иванъ Александровъ.
Сергѣй Фриде.
Дмитрій Бѣляевъ.
Петръ Шаншіевъ.
Степанъ Хуланжаевъ.
Тигранъ Теръ - Гукасовъ.
Александръ Козловъ.
Владиміръ Леонтовичъ.
Александръ Салтыковъ.
Григорій Ребристовъ.
Василій Малевинскій.
Сергѣй Николаевскій.
Николай Ѳеоктистовъ.
Гавріилъ Хатисовъ.

1848 года.

Гампарцумъ Папазовъ.

1849 года.
Иванъ Зиновьевъ.
Серафимъ Паткановъ.

1850 года.
Иванъ Спешневъ.
Андрей Карѣевъ.
Василій Ахвердовъ.

ՏԱԽՏԱԿ Բ.

Воспитанники Лазаревскаго Института Восточныхъ языковъ, окончившіе курсъ ученія съ отличными успѣхами и примѣрнымъ поведеніемъ.

—

8-го КЛАССА

1851 года.
Иванъ Зиновьевъ.
Николай Ахвердовъ.
Василій Атамановъ.
Захарій Гулуловъ.

1852 года.
Григорій Мишвеловъ.
Андей Карѣевъ.
Лука Меликъ - Бегляровъ.

1853 года.
Михаилъ Зеновьевъ.
Герасимъ Эзовъ.

1854 года.
Кн. Василий Горчаковъ.
Яковъ Гюзеловъ.
Дмитрій Малютинъ.

1855 года.
Валерій Горачко.
Мыгырдичъ Хазанджіевъ.
Зармайръ Мсеріанцъ.

6-го КЛАССА.

1851 года.
Валентинъ Скородумовъ.
Михилъ Зиновьевъ.
Николай Зиновьевъ.

1852 года.
Дмитрій Малютинъ.
Кн. Василий Горчаковъ.

1853 года.
Николай Попоевъ.
Василій Горачко.
Мыгырдичъ Хазанджіевъ.

1854 года.
Александръ Зеленой.
Хитаръ-Бекъ Хитаровъ.
Карапетъ Халибовъ.

1855 года.
Исаакъ Аладжаловъ.
Каспаръ Іоаннесовъ.

40. Ի կայսերական Բարձրագոյն ողորմութեանց պարգեւեցան ճեմարանին ընդ ժամանակս ժամանակս պէսպէս իրաւունք, առանձնաշնորհութիւնք, և պատուութիւնք:

Յամին 1828, յամսեան Մարտի ըստ Բարձրագոյն Հաստատեալ Օրագրոյ Նախարարական Ժողովոյն (Комитетъ) եղելոյ յաղագս բարեկարգու-

թեան ուսումնական շինուածոց (դպրոցաց կամ ուսումնարանաց) ճեմարանն ընկալաւ զկոչումն Армянскій Лазаревыхъ Институтъ Восточныхъ языковъ *)։

Յամին 1829, 'ի 10 Մայիսի ընկալաւ զազատութիւն 'ի քաղաքական հարկատուութենէ [1])։

'Ի նմին ամի 'ի 4 Յունիսի ընկալաւ զթոյլտուութիւն յաղագս բանալոյ զգործարան գրատպութեան 'ի Մոսկուա [2])։

Յամին 1834, 'ի 18 Հոկտեմբերի ընկալաւ զիրաւունս կարել տալոյ յօձիս զգեստուց (մունտիրաց) տասանց յառաջադէմ աշակերտաց իւրոց զոսկենկար օղակս (золотыя петлицы) առ 'ի խրախոյս այլոց ուսանողաց [3])։

Յամին 1835, 'ի 20 Նոյեմբերի կարգեցաւ յերկրորդ դասակարգի Արքունի ուսումնարանաց՝ հաւասար Գիմնազիոյից [4])։

Յամին 1837, յՕգոստոսի 31 ընկալաւ զամենայն իրաւունս և զարտօնութիւնս Արքունի և առանձնական ուսումնարանաց. այն է՝ ա. զի անձինք՝ որք ստանձնեն զյետագայ պարտաւորութիւս 'ի ճեմարանի, համարեսցին 'ի Ներգործական Արքունի ծառայութեան։ բ. զի պարտաւորութիւնքս այսոքիկ ըստ կարգի պարտաւորութեանց Քաղաքական պաշտամանց, սահմանեսցին ըստ այսմ։ Հոգաբարձուն ճեմարանի համարեսցի 'ի հինգերորդ դասակարգի. Կառավարիչն՝ յեօթներորդ դասակարգի. Վերատեսուչն յութերորդ դասակարգի. Աւագ ուսուցիչք Բանասիրական գիտութեանց և Արևելեան լեզուաց՝ յիններորդ դասակարգի. Կրտսեր ուսուցիչք քերականութեան և Եւրոպական այլազգի լեզուաց՝ 'ի տասներորդ դասակարգի. Ուսուցիչք Նկարչութեան և Վայելչագրութեան, նաև և Վերակացուք՝ յերկոտասներորդ դասակարգի. իսկ Քարտուղարն և Տնտեսն՝ 'ի չորեքտասներորդ դասակարգի։ գ. զի ամենեքեան՝ որք գտանին յայդոսիկ պարտաւորութիւնս, ունիցին զիրաւունս ամբառնալոյ յնս բարձրագոյն աստիճան՝ ըստ սահմանադրութեան եղելոյ 'ի 25 Յունիսի 1834 ամի, և ըստ յաւելուածոյն 'ի նոյն վերադրելոյ, վերածելով զնոսա յայն դասակարգս՝ առ որս իւրաքանչիւր ոք 'ի նոցանէ ըստ իւրում ուսումնական վկայականի պատկանի [5])։

---

*) Տես 'ի գիրսն կոչեցեալ Բարձրագոյն Հրովարտակք և արձանագրութիւնք տպ. 'ի Մոսկուա յամին 1842. (յէր. 219)։

[1]) Տես զայսմանէ 'ի ծանօթ. 9. 'ի վախճանի այսր մասին մատենիս։

[2]) Տես զայսմանէ 'ի ծանօթ. 10։

[3]) Տես զայսմանէ 'ի ծանօթ. 11։

[4]) Տես զայսմանէ 'ի ծանօթ. 12։

[5]) Տես զայսմանէ 'ի ծանօթ. 13։

Յամին 1838, 'ի 26 Ապրիլի ընկալաւ զհաստատեալն յՕգոստափառ Կայսերէ ցուցակ դասակարգութեան պաշտօնակալաց իւրոց ըստ հանդերձից մունտիր անուանելոց [1]), ըստ այսմ.

Դասակարգութիւն ըստ մունտիրաց.

Հոգաբարձուն Ճեմարանի		Հինգերորդ։
Կառավարիչն		Վեցերորդ։
Վերատեսուչն		Եօթներորդ։
Բժիշկն	Եթէ ունիցի զաստիճան Տօքթօրի	Ութերորդ։
	Եթէ իցէ Շտապ-Լէքար կամ վիրաբոյժ	Իններորդ։
	Իսկ եթէ ունիցի միայն զկոչումն Լէքարի	Տասներորդ։
Աւագ դասատուք		Իններորդ։
Կրտսեր ուսուցիչք		Տասներորդ։
Ուսուցիչք նկարչութեան և վայելչագրութեան		Տասներորդ։
Վերակացուք		Տասներորդ։

Ամենայն աստիճանաւորաց յիշատակելոց 'ի ցուցակիս թոյլ տուեալ լինի զգենուլ զմունտիր և զմունտիրական ֆուաքս ըստ այնց ձևոց և յօրինուածոց՝ զորս կրեն նոյնօրինակ կոչմանց աստիճանաւորք 'ի Գիմնազիայս ուսումնական շրջանակին Մոսկուայ. որոց թոյլատրի ևս կրել զկարուած պարանոցի ո՛չ 'նահանգային՝ այլ Արքունական դրօշուածով 'ի վերայ կոճակաց։

Տնտեսն և Քարտուղարն ոչ յիշատակեալք յայսմ ցուցակի, հիմնեալ 'ի վերայ կանոնացն պահպանելոց 'ի Գիմնազիայս՝ ոչ կարեն կրել զայլ մունտիրս, բայց միայն զմունտիրական ֆուաք՝ առանց սուսերի, հանդերձ բոլորակաձև գդակաւ [2])։

Ըստ զօրութեան Հրովարտակի և Սահմանադրութեան Ժողովոյն Նախարարաց եղելոյ 'ի 21 Մարտի 1838 ամի ընդ համարով 784, սահմանադրեալ եղև 'ի սակս միակերպութեան որդեգրաց՝ հասութատուաց՝ և ամենայն աշակերտաց Ճեմարանին՝ զգեստ ըստ ձևոյ մունտիրի՝ մթագին կանաչ գունով, կարմրագոյն վերջաւորօք, կանգուն և սևագոյն օձեօք, և դեղին կոճակօք՝ յորս դրոշմեալ իցէ կնիքն Կայսերական [3])։

Յամին 1848, 'ի Մայիսի 10, ամբարձաւ 'ի Բարձրագոյն աստիճան, ընդունելով 'ի վերայ առաջնոց իրաւանց և առանձնաշնորհութեանց՝ և զկոչումն Լազարեան կամ Լիկէոնի (Լիցէյի) և զհաստատեալն յՕգոստափառ Կայ-

[1]) Տես զաւանդնէ 'ի ծանօթ. 14։

[2]) Տես 'ի գումարն Հրովարտակաց ապ. 'ի Փեթերպուրկ յամի 1839. (յեր. 93—95։

[3]) Տես 'ի նոյն գիրս (յեր. 177)։

սերէն ամենայն Ռուսաց զնոր կանոնագրութիւն, զորոյ զկարեւոր քաղուածսն եդաք 'ի վերոյ *)։

Յամին 1851, 'ի փետրուարի 17. ընկալաւ զԲարձրագոյն Բարեհաճութիւն հանդերձ շնորհակալութեամբ յաղագս բանալոյ զառանձին Նախակրթական Բաժին յանուն և 'ի յիշատակ Յովհաննու Խաչատրեան Լազարեանց վախճանելոյ 'ի մատաղ հասակի [1])։

Օգուտ Ճեմարանին.

41. Ճեմարանն՝ որ 'ի սկզբանէ անտի հիմնարկութեանն մինչև ցարդ յարատեէ պայծառապէս և փայլեցագոյն կարգօք, գոլով իբրու կենդրոնական իմն գլխաւոր վարժոց ազգին Հայոց, լուսաւորէ ազգի ազգի գիտութեամբք զմանկունս նորա՝ որպէս և զօտարազգիս՝ եկեալս յայլևայլ քաղաքաց և կողմանց։ Մի յառաւելագոյն հաւաստեաց ասացելոցս՝ այն է, զի յոլովք յԱզնուականաց Ռուսաց և այլոց ազգաց յօժարափոյթ կամօք տան զմանկունս իւրեանց 'ի Ճեմարանն 'ի թիւ հասութառու աշակերտաց՝ Նախադասելով զայն քան զայլ բազում ուսումնարանս Տէրութեան [2])։ Յաշակերտաց Ճեմարանին իբրու 500 անձինք մտեալ են ցարդ 'ի Զինուորական և 'ի Քաղաքական ծառայութիւնս. և ոմանք ես նուիրեալ են զանձինս գիտնական վիճակի կենաց, և ամենքին հանապազորդեն 'ի ծառայութեան յառանձին օգուտ Կայսրութեան։ Դարձեալ՝ վաճառական կապակցութիւն հարաւային կողման Ռուսաց, և կենցաղական յարաբերութիւն Նորա ընդ Ասիական ազգաց և Տէրութեանց, նոյն և կառավարութիւն Կովկասեան սահմանաց և նահանգացն անդր քան զԿաւկաս՝ պէտս ունի անձանց հմուտ եղելոց Հայկականս բարբառոյ և այլոց Արևելեան լեզուաց։ Այսմ պիտոյից Տէրութեան՝ գուն գործէ Ճեմարանն տալ զկարևորն բաւականութիւն [3])։

---

*) Ռուս բնագիր կանոնագրութեանս զոյգ ընդ Հայկական թարգմանութեան տպագրեցաւ 'ի Մոսկուա յամի 1852։

[1]) Տես զայսմանէ յՏ ծանօթ։

[2]) Տես 'ի ծանօթ. 15. և 'ի Բարձ. Հրով. յէջ 225։

[3]) 'Ի Գում. Բարձր. Հրով. յէջ 211։

ԱՆՈՒԱՆՔ

աշակերտաց ուսելոց ՚ի Լազարեան Ճեմարանի արդեամբք Տեարց Լազարեանց։

—

Աբգար Զաքարեանց։
Աբէլ Աբամէլիք, Քնեալ։
Աբրահամ Աթարբէկեանց։
Ալեքսան Գասպարեանց։
Ալեքսէյ Մարոզով։
Ալեքսանդր Ադամեանց։
— Եւդոկիացի։
— Զաքարեանց։
— Ժարով։
— Խաչիկեանց։
— Կանդինցեանց։
— Կուրսեանց։
— Հէճուպեանց։
— Հէննէր։
*— Մաղիրեանց։
— Մինասեանց։
— Միրզլեակեանց։
— Շահազիզեանց։
— Շլթեանց։
— Չիթով։
— Չիմիչկեանց։
— Պաժանեանց։
— Պորխեանց։
— Ռէյսիխ։
— Րոտինեանց։
Ամբրոսիոս Մելիքեանց։
Անանիա Սուլթան-Շահ։
Անդրէաս Զաքարեանց։
— Սամուէլեանց։
— Չերքասով։
Ասթաֆիյ Լէնց։
Աստուածատուր Աբէլեանց։
— Ալլատանեանց։
— Զարեհեանց։
— Թարումեանց։
— Թուլայեանց
— Խամանուրեանց։
— յԱրարատայ։
— Պիպիկեանց։
— Փիրատեանց։
— Քողպեռլեանց։

Ատոմ Շահխաթունեանց։
Արշակ Սայաթնեանց։
Աւետիք Եղեանց։
— Մամիկոնեանց։
Բաղդասար Կարապետեանց։
*Բարսեղ Ադամեանց։
— Կոխէնեանց։
— Յակոբեանց։
— Մերեանիկեանց։
— Վարդանեանց։
Գաբրիէլ Երեցփոխեանց։
— Մաղլումեանց։
— Մամիկոնեանց։
— Մանուչարեանց։
— Տոլկեանց։
— Տ. Աստուածատրեանց։
Գասպար Մելիքեանց։
— Յովհաննիսեանց։
— Սարհաթեանց։
— Սոսփանեանց։
Գէորգ Ադամեանց։
— Հախվերդեանց։
— Համմէր։
— Մելիք-Շահնազարեանց։
— Սուրէնեան։
— Տիգրանեանց։
— Տոռոսեանց։
Գրիգոր Աթարբէկեանց։
— Աղափիրեանց։
— Գարագաշ։
— Եավրուեանց։
— Եկուլեանց։
— Խաչիկեանց։
— Վիրսեանց։
— Մամիկոնեանց։
*— Միշվէլեանց։
— Մուրատեանց։
— Շահնազարեանց։
— Շելքովնիկեանց։
— Շիշեանց։
— Պարսամեանց։

Գրիգոր Սուքէնեանց։
—— Վահրամեանց։
—— Վարդանեանց։
—— Տատաշեանց։
—— Տէրվիշեանց։
—— Փափազեանց։
Դաւիթ Արզանեանց։
—— Մազանտարեանց։
—— Մարտիրոսեանց։
—— Նազարեանց, Քհնայ։
—— Տատաշեանց։
Թէոդոր Աստուածատրեանց։
Դիոնէսիոս Կարկոյեանց։
Եղիա Խաթունեանց։
—— Պէժանեանց։
Եմիլիան Ախաշեանց։
Ենովք Եէտիքէսեանց։
Եուլիոս Պլիմ։
Երաստ Աթարչիկեանց։
Երեմիա Կիւզել-Կէօզեանց։
Եփիմ Տէվեաթով։
*Զարմայր Մսրեանց։
*Զաքար Գնունի։
—— Գուլուլեանց։
—— Եսենժարեանց։
—— Յովհաննիսեանց։
—— Պարսամեանց։
Թարաս Հալաճեանց։
Թէոդոր Ոէյսխի։
Թէոդորոս Խատամեանց։
—— Զումաքեանց։
Թովմաս Արղութեան-Երկայնաբազուկ, Քհնայ։
—— Արրակեանց։
—— Նացվալեանց։
Իսահակ Թուֆլիկեանց։
Իվան Թուրկեննիվ։
—— Լիւպաթովիչ։
—— Շարտին։
—— Պէրսեյեվ։
—— Վէլիչքին։
—— Փրոնին։
Լուսարապի Արամէլիք, Քհնայ։
Խաչատուր Աւագեանց։
—— Դաւթեանց։
—— Ելիմիրզեանց։
Խաչատուր Եիւզբաշեանց։
—— Երևանցի։
—— Լամիզեանց։
—— Յովհաննիսեանց։
—— Պողեանց։
Խաչերես Խանթարճեանց։
*Կարապետ Եզեանց։
—— Եվրէյեանց։
—— Խալիպեանց։
—— Մաթէոսեանց։
—— Սանասարեանց։
—— Վարդանեանց։
—— Քռասիլնիկեանց։
Կոզմաս Բարսղեանց։
Կեռասիմ Մարանով։
—— Մօտօչին։
Կոստանդին Թաուշեանց։
—— Մինասեանց։
—— Շուլց։
Համազասպ Համազասպեանց։
Համբարձում Փափազեանց։
Հիւսէյին Բօղդանով։
Ղազար Մէրճանեանց։
Ղուկիանոս Միրապեանց։
Մակար Եարալեանց։
—— Մուրատեանց։
—— Մէրէպրակեանց։
Մանուէլ Խէրումեանց։
—— Չէրքասով։
—— Սապլիկեանց։
Մատթէյ Շլթիպլէր։
Մարկոս Մարուքեանց։
Մարտին Կուացէն։
Մարտիրոս Գարագաշեանց։
—— Գուչնարեանց։
—— Մէլիքեանց։
—— Տոլկեանց։
Մելքոն Խիթարեանց։
Մինաս Խալիպեանց։
—— Ծարուկեանց։
—— Քապզիմանեանց։
—— Քուրսեանց։
Միքայէլ Արամէլիք, Քհնայ։
—— Հենիքսեանց։
—— Միխնասարեանց։
—— Պատկանեանց։

Միքայէլ Պօպով։
——— Սթարքովսքի։
Մովսէս Վարդանեան։
Մկրտիչ Աթթարեան։
——— Արխիտէքթօրեան։
——— Գալուստեան։
——— Եվրէյեմ։
——— Եթիլխանեան։
——— Եմին։
——— Թամնլտարեան։
*——— Խաղանձեան։
——— Մելնիքեան։
——— Շահինեան։
——— Պապայեան։
——— Վաղարշապատեցի։
Յակոբ Արղանեան։
——— Եկուլեան։
*——— Կիւզէլեան։
——— Ղազարեան։
——— Ճէվահիրճի։
——— Պէրկեան։
Յարութիւն Ալամդարեան։
——— Ալլահվէրտեան։
——— Աւագեան։
——— Անխեան։
——— Գասպարեան։
——— Երուսաղեմցի։
——— Թէրկէսեան։
——— Խատամեան։
——— Կուզանեան։
——— Ղորղանեան։
——— Չօլախեան։
——— Պէկեան։
——— Սարգսեան։
Յովակիմ Մէլիքեան։
Յովհաննէս Ալլատանեան։
——— Աղէքսանդրեան։
——— Աստուածատրեան։
——— Արարատեան։
——— Գասպարեան։
——— Գարակուլեան։
——— Գօնճայեան։
——— Եվլեան։
——— Երեւանեցի։
——— Երէցփոխեան։
——— Թէլէթեան։

Յովհաննէս Լեոնեան։
——— Խազէզեան։
——— Կաթենիկեան։
——— Համազասպեան։
——— Միրաքեան։
——— Մուրատեան։
——— Նազարեան։
——— Շահ-Պուտախեան։
——— Շմաւոնեան։
——— Ոսկանեան։
——— Չայլախեան։
——— Պատկանեան։
——— Պէրպէրեան։
——— Պոնտոյեան։
——— Սարգսեան։
——— Սիմէօնեան։
——— Սուքիասեան։
——— Վոտոչչինեան։
——— Տաթեան։
——— Փոլթարայեան։
Յովսէփ Աղէքսանդրեան։
——— Աստուածատրեան։
——— Թամիլտարեան։
——— Ղազարեան։
——— Նազարեան։
——— Չէրքէզեան։
——— Պոնտոյեան։
——— Ֆիթոնեան։
Ներսէս Արարատեան։
——— Մելիքեան։
Նիկողայոս Ալէքսանեան։
——— Ազապատեան։
——— Զալուբովսքի։
——— Թէօկրիտով։
——— Թուրկէնեվ։
——— Քարով։
——— Իկրումեան։
——— Մաքսումեան։
——— Շուլց։
——— Ուկրէխլիձ։
——— Պաժանեան։
——— Պապանեան։
——— Պօթթ։
Ոսկան Յովհաննիսեան։
Ովրեստէս Յովհաննիսեան։
Ուրուշան Գեղամեան։

Պետրոս Ռուբենեանց։
—— Թամամշեանց։
—— Կանչէվ։
—— Պաղարեանց։
—— Մարտիրոսեանց։
—— Նետօվէսեանց։
—— Շանշեանց։
—— Սիմէօնեանց։
—— Րիէփիփ։
Պղատոն Վասիլեվիչ։
—— Գրիգորիեվ։
—— Նասթավին։
Պօրիս Եդամանեանց։
Պօղոս Եսլանեանց։
—— Էկուլեանց։
—— Հէննէր։
—— Մելքոնեանց։
—— Շթիւրմէր։
—— Պէժանբէկեանց։
—— Սէփէրեանց։
—— Վախթինեան։
Ռափայէլ Պատկանեանց։
—— Քխտեանց։
Սահակ Ելածալեանց։
Սամուէլ Երրահամեանց։
Սարգիս Էկուլեանց։
—— Լաքրուասեանց։
—— Խոճայեանց։
—— Խորասանեանց։
—— Ճիկէրեանց։
—— Միրզայեանց։
—— Յովհաննիսեանց։
—— Շահինեանց։
—— Պարսացեան։
—— Պօնտոյեանց։
—— Սերեպրակեանց։
—— Տիգրանեանց։
Սերովբէ Պատկանեանց։
Սէրկէյ Կլինքա։

Սիմէօն Կոնդիցեանց։
—— Ձալըխեանց։
—— Պապիկ։
—— Սուլթան - Շահ։
—— Քռամինցեանց։
Սողոմոն Երամէլիք, Քննաղ։
—— Մարկոսեանց։
Սողոմոն Նուպարեանց։
—— Վարդանեանց։
Ստեփան Երշակունի։
—— ԵՒադեանց։
—— ԵՒանեանց։
—— Րստամեանց։
—— Գուգուլեանց։
—— Օքարբէկեանց։
—— Խոլանձեանց։
—— Մերձանեանց։
—— Նազարեանց։
—— Շիշլիքեանց։
—— Պաղիրկեանեանց։
—— Պոպով։
—— Սարիեանց։
Սփիրիտոն Լիպաթովիչ։
Վահան Եմկէրեանց։
Վասիլի Լաթրշով։
—— Պօթթ։
Վիկտոր Եվրամով։
—— Տէֆրէն։
—— Փէթերման։
Վլատիմիր Մինտէր։
—— Շթիւրմէր։
—— Պրավին։
—— Վլասով։
Վրթանէս Քողպետլեանց։
Տիմոթէ Օերշէլքով։
—— Քուսուքով։
Րոպէրթ Մալեվիչ։
Քառլ Կէրց։
Ֆէօտոր Շմիտէր։

Ծանօթ. Ա. Որոշեալքն աստղանշանաւ աւարտեալ են զբովանդակ ընթացս ուսմանց ՚ի վերի- այն է ՚ի Լիցէյական դասատունս, և ընկալեալ են զՎկայական վկայագիր ուսման (Аттестатъ) հանդերձ իրաւամբք աս. ԺԲ. Աստիճանի։

ԱՆՈՒԱՆՔ

աշակերտաց ուսանողաց յաժմուս 'ի Լազարեան ճեմարանի արդեամբք Տ. Լազարեանց.

—

ա. 'Ի Գիմնազիական և 'ի Լիցէական դասատունս:

Աստուածատուր Աստուածատրեանց:
Արշակ Միխանսարեանց:
Աւետիք Վատուժեանց:
Գէորգ Աբամէլիք, Քնեազ:
——— Խաչատրեանց:
Գրիգոր Ալաճալեանց:
——— Գալուստեանց:
——— Շահազիզեանց:
Դաւիթ Մէլիք Բեկլարեանց:
Զաքար Քողպետլեանց:
Խաչատուր Յուսիկեանց:
——— Տապախեանց:
Կարապետ Արղանկուլեանց:
Մակար Միրզաբէկեանց:
Մանուկ Փալապանեանց:
Մանուկ Սատաթեանց:
Միքայէլ Վանեցեանց:
——— Տէրվիշեանց:
Յարութիւն Վարդանեանց:
Յովհաննէս Եղեանց:
——— Թամամշեանց:
——— Տէր Ստեփանեանց:
Նիկողայոս Մամիկոնեանց:
——— Վարդանեանց:
Պետրոս Թամամշեանց:
——— Յովհաննիսեանց:
Ռուբէն Ջալալեանց:
Սերովբէ Մսերլեանց:
Սմբատ Շահազիզեանց:

բ. 'Ի Պատրաստողական դասատուն:

Աղէքսանդր Վարդանեանց:
Աստուածատուր Շատինեանց:
Արսէն Զոհրապեանց:
Գաբրիէլ Սամպօլցեանց:
Գրիգոր Կաթընիկեանց:
Թովմաս Բէժանբէկեանց:
Կարապետ Ալամխանեանց:
Ղազար Պոպով:
Մկրտիչ Յովհաննիսեանց:
Յարութիւն Տէր Կարապետեանց:

Ը. Զանուանս աշակերտաց՝ որք ուսեալ են ծախիւք արքունի գանձատան, որպէս և զանուանս Գասպարեան և Մնացականեան որդեգրաց, և զայնոսիկ աշակերտաց՝ որք ուսեալ են ծախիւք ծնողաց կամ ազգականաց իւրեանց, գտցեն խնդրողք 'ի մատենին՝ որ ընդ անուամբ Историческій очеркъ Лазаревскаго Института, տպագրեալ 'ի Փ. պուրկ յամին 1835:

ԱՇԱԿԵՐՏՔ

Յառաջադէմ եղեալք աշակերտաց՝ ուսանողաց 'ի Գիմնազիական և 'ի Լիցէական դասարանս:

—

Ալեքսանդր Զելեօնկյ:
——— Ճուլթենստորֆ:
——— Շմիթթ:
Անդրէյ Մէնթէլ:
Ասադ Թամրիզեանց:
Գէորգ Սերեպրեակեանց:
Իվան Րէպրիսթով:
Յովհաննէս Տէր Յակոբեանց:
——— Փիրատեանց:
Նիքօլայ Անսիօ:
Պետր Խոխլով:
Սարգիս Ալամխանեանց:
Ստեփան Ալամխանեանց:
Վլատիմիր Վրաուսի:

ԱՇԱԿԵՐՏՔ

աշակերտաց ուսանողաց յեկեղեցական բաժնէ:

—

Աղեքսանդր Տէր Գաւթեանց:
Բարսեղ Տէր Ստեփաննեանց:
Գալուստ Տէր Մարտիրոսեանց:
Գասպար Վրաջալեանց:
Գէորգ Ապովեանց.
——— Սայաթնեանց:
Գրիգոր Տանտուրեանց:
Օսքար Մէլիքեանց:
Խաչատուր Տէր Կարապետեանց:
——— Տատաշեանց:
Կարապետ Սադունեանց:
Մարտիրոս Սիմէօնեանց:
Միքայէլ Սողոմոն-Բէկեանց:
Յակոբ Ճախնազարեանց:
Յովհաննէս Զարիֆեանց:
Նիկողայոս Տէր Յակոբեանց:
——— Տէր Յովսէփեանց:
Պետրոս Շահինեանց:
Սէթ Տէր Մինասեանց:

Բարձրագոյն այցելութիւն 'ի Ճեմարանն:

ա. 'Ի 4 Հոկտեմբերի 1834 ամի, յերկրորդում ժամու յետ կէսաւուր, հանգուցեալն 'ի Տէր Ինքնակալ կայսրն ամենայն Ռուսաց Նիկողայոս Ա, ընդ Օժանդակ Զօրապետին կոմսին Աղեքսանդրի Բենկենտորֆայ, բարեհաճեցաւ բախտաւորել զԼազարեան ճեմարանն Արեւելեան լեզուաց՝ Բարձրագոյն այցելութեամբ իւրով. և առանձին իմն բարեյօժարութեամբ սրտի ընկալաւ 'ի Հրամանատարէ ճեմարանին 'ի Գեներալ-Մայիօր Բիմանայ ըՂ համարատոմսակ զհանգամանաց ճեմարանին: Հաճեցաւ նաև զննել մանրամանաբար զամենայն մասունս այսր հոյակապ շինուածոյ [1]):

———

[1]) 'Ի Գաւառ. Բարձր. Հրով. ձէՂ 109:

'Ի ժամանակի անդ այցելութեան իւրոյ՝ Նորին կայսերական Մեծութիւնն արժանի արար մեծի պատուոյ զյիշատակեալ Հրամանատարն ճեմարանի՛ հարցումն առնելով 'ի նմանէ զամենայն իրաց վերաբերելոց առ ճեմարանն. Խօսեցաւ ընդ Դասատուի Տաճկական լեզուի՛ ընդ Առաքելոյ Շահումեան, ընդ որդեգրի Սիմոնի Կանդինցեանց Նորոգ դարձելոյ յԱնգղիոյ, և ընդ որդեգրի Սողոմոնի Տ. Ղուկասեան Տփխիսեցւոյ [1]:

Յետ այցելութեան բարեհաճեցաւ Ինքնակալ Կայսրն յայտնել Նախայիշեալ Գլխաւոր Իշխանապետի ճեմարանին զիւր բաւականութիւն զքաջ յօրինուածոյ և զբարեկարգութենէ. և վաղվաղակի եղև հրատարակումն ըստ կանոնաւոր կարգի վասն այսօրինակ անմոռանալի բախտաւորութեան ճեմարանին յՕրագրին Ռուսաց յանուանեալն „Մեղու Հիւսիսային“, ընդ համարով 227, բանիւքս այսոքիւք „'ի 4 (Հոկտեմբերի) Նորին Մեծութիւնն բարեհաճեցաւ յայց ելանել Լազարեան ճեմարանին Արևելեան լեզուաց, և Նահանգական Գիմնազիային (Մոսկուայ), ընդ որս՝ մանաւանդ ընդ առաջինն՝ գոհ եղև առաւել յոյժ [2]:

Բ. 'Ի 25 Նոյեմբերի 1837 ամի, 'ի տասներորդում ժամու առաւօտուն, Նորին կայսերական Բարձրութիւնն՝ Ժառանգն Աթոռոյ կայսրութեան Ռուսաց Աղէքսանդր Նիկոլայեւիչ, որ այժմ Թագաւորէ, արժանի արար իւրումն այցելութեան զԼազարեան ճեմարանն Արևելեան լեզուաց. հաճեցաւ յակն արկանել մի ըստ միոջէ զամենայն գլխաւոր մասունս այսր շինուածոյ, և զգոհութիւն իւր զկարգաւորութենէ և զբարեշինութենէ նորին՝ յայտ արար Գլխաւոր Իշխանապետին 'ի վեր անդր յիշատակելոյ:

'Ի Լրագրին Մոսկուայ 'ի 4 Դեկտեմբերի 1837 ամի, ընդ համարով 97, տպագրեցաւ այս յօդուած բանի. „'Ի 25 Նոյեմբերի 'ի 10 ժամու առաւօտու, Նորին Բարձրութիւնն՝ կայսերազն Ժառանգն՝ այց արար Լազարեան ճեմարանին Արևելեան լեզուաց որ 'ի Մոսկուա. ուր ընդ առաջ ելին Նմա Գլխաւոր Իշխանապետն այնր ճեմարանի՝ Օժանդակ-Գեներալ կոմսն Բենկենդորֆ, և Հոգաբարձու Նորին Ներգործական Պետական Խորհրդականն և Սենեկապետն Յովհաննէս Յովակիմեան Լազարեանց: Անդանօր ետես Նա զվայելուչ կարգ և զբարեշինութիւն յամենայնի“:

Այս Բարձրագոյն այցելութիւն՝ կրկին անգամ՝ հրատարակեցաւ 'ի Հիւսիսային Մեղու անուանեալ Օրագրին Ս. Փեթերբուրգոյ, 'ի 13 Դեկտեմբերի 1837 ամի, ընդ համարով 283 [3]:

[1]) Անդ 'ի նոյն յէջն:

[2]) Անդ յէջ 109—111:

[3]) Անդ յէջ 113:

ՑՈՒՑԱԿ

ԱՅԼՈՑ ԵՒՍ ԱՅՑ ԱՐԱՐՈՂԱՑ ՃԵՄԱՐԱՆԻՆ:

Արևելեան լեզուաց ճեմարանին Լազարեանց՝ երջանկացելոյն Բարձրագոյն այցելութեամբ կայսեր Նիկողայոսի Ա, և ժառանգի նորա Աղեքսանդրի Նիկոլայեվիչի (զորոց ասացաւ վերագոյն) բազում և այլ այցելուք եղեն 'ի սկզբանէ անտի հիմնարկութեանն մինչև ցայժմ. յորոց ոմանք զննեցին զայն, և այլք առաջակայ գտան 'ի ժամանակս խրախճանական հանդիսից և հրապարակական հարցաքննութեանց [1]: Այլ աստանօր առաջի դիցին անուանք նշանաւորացն և եթ, որք են *):

1. Իշխանն (Принцъ) Բրուսիոյ՝ Ալպերտ, որդի արքային Բրուսիոյ Ֆրիդրիքայ Վիլհէլմայ, ընդ այլոց բազմաց Գեներալաց և Իշխանաց:
2. Դուքսն Վիրտեմպերկոյ՝ Գեներալ-Օթինֆանթէրի և Գլխաւոր կառավարիչն հաղորդակցութեան ճանապարհաց, ընդ այլոց Գեներալաց:
3. Իշխանն Օլտէնպուրկոյ, ընդ գերդաստանի իւրում և ընդ Գեներալաց:
4. Իշխանն Պարսից՝ Խոսրով-Միրզայ, թոռն Ֆէթ-Ալի Շահին Պարսից, հանդերձ համօրէն աստիճանաւորօք Դեսպանութեան. յորոց սակի էին Գլխաւոր Հրամանատարն զօրաց Պարսից Ամիր-Նիզամ, Միրզայ-Մասուտ, Միրզայ-Սալէ, Միրզայ-Պապա, և այլ յոլով Խանք և Աստիճանաւորք **):
5. Լիահրաման և ծայրագոյն Դեսպանն Օսմանեան Տէրութեան Խալիլ փաշայ Եազուղեան, Նէճիպ Էֆէնտի Նախարար Սուլթանի և Կնքապահ, Սարիմ Էֆէնտի՝ Դիւանադպիր Դեսպանի, Վոկորոտին Յոյն՝ Առաջին Թարգման, Սահակ Տրդատեան Հայ՝ Երկրորդ Թարգման, և այլ Աստիճանաւորք 'ի Տաճկաց, Հազարապետք, և այլ անձինք 'ի սպասաւորաց փաշային ընդ Գլխաւոր Իշխանաց Մոսկուայ և այլոց Գեներալաց:

---

[1]) 'Ի Գում. Բարձր. Հրով. յէջ 221:

*) Ըստ ցուցանելոյ ձեռագիր Տարեգրի ճեմարանին:

**) Արքայազուն Իշխանիս յուղարկ եղեն՝ Զինուորական — Նահանգապետն Մոսկուայ, Գեներալն հեծելազօրաց Քնեազ Դ. Վ. Գալին, Գեներալ-Մայօր Բեննենկամփ, Ներգործական Պետական Խորհրդականն և Սենեկապետ Պալատան՝ Պուլկաքով, Քօմէնտանթն Մոսկուայ, Քաղաքական Նահանգապետն, Գլխաւոր Քաղաքապետութիւնն, և այլ բազում Գեներալք:

6. Մարմոնդ Մարաջախտ Գաղղիացի՝ Դուքս Ռակուզիոյ և Դեսպան Գաղղիացւոց՝ հանդերձ ուղեկցօք։
7. Լորտ Տեռնշիրայ, դեսպան Թագաւորին Անգղիացւոց՝ հանդերձ ուղեկցօք։
8. Պարոն Աղեքսանդր Հումպոլդ, Եւրոպացի մատենագիր և ճանապարհորդ, մի 'ի պաշտօնատարաց Արքային Բրուսիոյ, Ներգործական Ներքին Խորհրդական ընդ այլոց Ուսումնապետաց և գիտնական անձանց 'ի դասուէ ճանապարհորդաց։
9. Ատենադպիր կայսրութեան՝ Ներգործական Ներքին Խորհրդական Կոմս Ն. Պ. Ռումեանցով։
10. Ներքին Խորհրդական և Քարտուղար Տէրութեան՝ Կոմս Քափօտիսթրիա։
11. Կոմս Ա. Ա. Արակչէեվ, Գեներալ Թնդանօթական զօրաց, Գլխաւոր Իշխանապետ Լազարեան Ճեմարանի։
12. Դ. Պ. Թրոշչինսկիյ, Ներգործական Ներքին Խորհրդական և Նախարար Արդարադատութեան։
13. Աւգոստինոս Մետրապօլիտ Մոսկուայ։
14. Ֆ. Ֆ. Կոմս Օսթէն-Սաքէն, Գեներալ-Ֆելտմարշալ, հանդերձ ուղեկցօքն։
15. Իշխան Պ. Խ. Վիթկէնշթէյն, Գեներալ-Ֆէլտմարշալ։
16. Իշխան Ա. Բ. Կուրակին, Նախարար Ներքին Գործոց, Ներգործական Ներքին Խորհրդական։
17. Իշխան Դ. Ի. Լոպանով-Ռոստովսքիյ, Գեներալ Օթ-Ինֆանթերի, Նախարար Արդարադատութեան։
18. Ա. Ս. Շիշքով, Ծովապետ, Նախարար Ազգային լուսաւորութեան, ընդ Հոգաբարձուի և Ուսումնապետաց Համալսարանի։
19. Պարոն Պ. Պ. Քամփէնհաուզէն, Արքունի Ներքին Խորհրդական։
20. Կոմս Ա. Պ. Թորմասով, Զինուորական ընդհանուր Նահանգապետ Մոսկուայ։
21. Եպիսկոպոսն (Экзархъ) Վրաստանի, և Արքայորդին Վրաց Անտոն։
22. Յովհաննէս՝ Վիճակաւոր Արքեպիսկոպոս Հայոց Աժդարխանայ։
23. Իշխան Ն. Պ. Եւսուփով, Ներգործական Ներքին Խորհրդական։
24. Գրիգոր՝ Վիճակաւոր Արքեպիսկոպոս Հայոց Բեսսարաբիոյ։
25. Կոմս Ն. Ս. Մորտվինով, Ծովապետ, Անդամ Խորհրդարանի Տէրութեան։
26. Տոսիֆէյ՝ Արքեպիսկոպոս Վրաց։
27. Վ. Ս. Լանսքոյ, Ներգործական Ներքին Խորհրդական, Կառավարիչ Նախարարութեան Ներքին Գործոց։
28. Թէոփիլակտ և Իննովկենտիյ՝ Արքեպիսկոպոսք Ռուսաց՝ հանդերձ ոմամբք կարգաւորօք Կղերիկոսական Դպրոցաց և Վանահարբք։
29. Իշխան Ե. Ի. Լոպանով-Ռոստովսքիյ Ներգործական Ներքին Խորհրդական, և Գլխաւոր Սենեկապետ Արքունեաց։
30. Գեներալ-Լէյթենանթ Պէթանքուր Զինուորական ճարտարապետ։

31. Ներգործական Ներքին Խորհրդական Ի. Ի. Տմիթրիեվ։
32. Հանրական Նահանգապետ Նոր Ռուսաստանի և Պեսսարապիոյ, գեներալ Օթ-ինֆանթերի, Օժանդակ գեներալ, կոմս Մ. Ս. Վորոնցով։
33. Նախագահ Խորհրդարանի Տէրութեան, Ներգործական Ներքին Խորհրդական քնեազ Վ. Փ. Քօչուպէյ։
34. Գեներալ Օթ-ինֆանթերի, և Օժանդակ գեներալ Ա. Տ. Պալաշով։
35. Գեներալ Հեծելազօրաց և կոմս Լանժերոն։
36. Արքեպիսկոպոս Վրաստանի Պաֆնութիյ։
37. Օժանդակ գեներալ Հեծելազօրաց. Զինուորական Նախարար, կոմս Ա. Ի. Չէրնիշեվ։
38. Գեներալ Զինուորական ճարտարապետաց, Անդամ Խորհրդարանի Տէրութեան, կոմս Ք. Ի. Օփփէրման։
39. Օժանդակ գեներալ, գեներալ Օթ-ինֆանթերի, Գլխաւոր կառավարիչ Հաղորդակցութեան ջրընթաց ճանապարհաց Ք. Թ. Թոլ։
40. Մարզպան Իշխանութեան Վալաքիոյ, քնեազ Իփսիլանթիյ։
41. Գեներալ Թնդանօթական զօրաց քնեազ Եաշվիլ։
42. Հանրական Զինուորական Նահանգապետ Մոսկուայ, գեներալ Հեծելազօրաց Տ. Վ. Գալիցին, ընդ Քոմէնտանթին Մոսկուայ, ընդ Քաղաքական Նահանգապետին, և ընդ Գլխաւոր Քաղաքատեսչին։
43. Գեներալ Օթ-ինֆանթերի, Անդամ Խորհրդարանի Տէրութեան Ա. Ն. Պահմէթիեվ։
44. Ներգործական Ներքին Խորհրդական, Անդամ Խորհրդարանի Տէրութեան Ա. Ն. քնեազ Սալթիքով։
45. Նախարար Ազգային Լուսաւորութեան, գեներալ Օթ-ինֆանթերի, քնեազ Ք. Ա. Լիվէն, ընդ Հոգաբարձուի Համալսարանին Մոսկուայ՝ գեներալ-Մայօրի Ա. Ա. Փիսարեվյ, և ընդ կարգավարի և ընդ Ուսումնապետաց։
46. Ներգործական Ներքին Խորհրդական, կոմս Ս. Պ. Ռումեանցեվ։
47. Գեներալ-ֆելտմարշալ, կոմս Ի. Ի. Տիպիչ Զապալքանսքիյ, Հանդերձ այլովք գեներալօք։
48. Ներգործական Ներքին Խորհրդական, Անդամ Խորհրդարանի Տէրութեան, քնեազ Ա. Ն. Գալիցին։
49. Նախարար Արդարադատութեան, Ներգործական Ներքին Խորհրդական, քնեազ Ա. Ա. Տոլկորուքիյ։
50. Գեներալ Օթ-ինֆանթերի, քնեազ Ա. Ի. Կօրչաքով։
51. Գլխաւոր Հանդիսապետ Պալատան, կոմս Փոթոցքիյ։
52. Նախարար Ներքին Գործոց, Օժանդակ գեներալ, գեներալ Օթ-ինֆանթերի, կոմս Ա. Ա. Զաքրեվսքիյ։

53. Գեներալ Հեծելազօրաց Ա. Ս. Կոլոգրիվով:

54. Գլխաւոր Իշխանապետ Լազարեան Ճեմարանի, Գեներալ Օթ-Ինֆանթերի, Գեներալ Հեծելազօրաց, Օժանդակ Գեներալ, կոմս Ա. Խ. Բէնկէնդորֆ, հանդերձ այլովք Գեներալօք:

55. Նախարար Ազգային Լուսաւորութեան, Ներգործական Ներքին Խորհրդական Ս. Ս. Ուվարով, ընդ Հոգաբարձուի՝ կարգաւարի և Ուսուցչապետաց Համալսարանին Մոսկուայ:

56. Նախագահ Խորհրդարանի Տէրութեան, Ներգործական Ներքին Խորհրդական Ն. Ն. Նովոսիլցեւ:

57. Նախարար Ներքին Գործոց, Քարտուղար Տէրութեան, Ներգործական Ներքին Խորհրդական, Դ. Ն. Բլուտով:

58. Գեներալ Թնդանօթական զօրաց, Անդամ Խորհրդարանի Տէրութեան Ա. Պ. Եռմոլով:

59. Գլխաւոր Սենեկապետ Պալատան, Անդամ Խորհրդարանի Տէրութեան, կոմս Գալիցին:

60. Նախարար Գանձուց, Գեներալ Օթ-Ինֆանթերի, կոմս Ե. Փ. Կանկրին:

61. Օժանդակ Գեներալ, Գեներալ Հեծելազօրաց, կոմս Փ. Փ. Փալէն:

62. Ներգործական Ներքին Խորհրդական, Անդամ Խորհրդարանի Տէրութեան, կոմս Մ. Մ. Սփերանսքի:

63. Գլխաւոր Սենեկապետ, Դ. Լ. Նարիշքին:

64. Ներքին Խորհրդական, Հոգաբարձու Համալսարանին Մոսկուայ, Քնեազ Ա. Պ. Օպօլէնսքի, ընդ կարգաւարին և Ուսուցչապետաց:

65. Դեսպան Ռուսաց 'ի Պարսկաստան, Ներգործական Պետական Խորհրդական Ա. Ս. Կրիպօէտով:

66. Միձակաւոր Արքեպիսկոպոս Հայոց Աժդարխանայ Սերովբէ:

67. Գեներալ-Լէյթէնանթ, Քնեազ Մատաթով:

68. Ներքին Խորհրդական, Անդամ Խորհրդարանի Տէրութեան, Սինկղիտիկոս Ջ. Ե. Քարնէեւ:

69. Դմիտր Եպիսկոպոս Աթանասեան՝ Ցաջորդ Միտրապօլտին Մոսկուայ:

70. Գլխաւոր Սեղանապետ Պալատան Ի. Ց. Քութայսով:

71. Օժանդակ-Գեներալ, Գեներալ-Լէյթէնանթ Կ. Խ. Բէնկէնտորֆ:

72. Օժանդակ-Գեներալ, Գեներալ-Լէյթենանթ, Զինուորական Նահանգապետ Օրէնպուրկայ, կոմս Պ. Պ. Սուխթէլէն:

73. Հոգաբարձու Համալսարանին Մոսկուայ, Օժանդակ-Գեներալ, Գեներալ-Լէյթէնանթ, Սինկղիտիկոս, կոմս Ս. Գ. Ստրոգոնով:

74. Օժանդակ-Գեներալ, Գեներալ Օթ-Ինֆանթերի, կոմս Է. Փ. Քոմարովսքի:

75. Գեներալ Օթ-Ինֆանթերի, Ռուտզեվիչ:

76. Օժանդակ գեներալ, գեներալ Օթ-Ինֆանթերի, կուսակալ Վրաստանի, Պարոն Գ. Վ. Ռոզէն։
77. Օժանդակ գեներալ, գեներալ Հեծելազօրաց, Ն. Ի. Տէփրէրատովիչ։
78. Գեներալ Օթ-Ինֆանթերի, Վոինով։
79. Ներքին խորհրդական, Սենկլիտիկոս, կոմս Գ. Վ. Օռլով։
80. Գեներալ Օթ-Ինֆանթերի Ի. Ս. Ափրաքսին։
81. Օժանդակ գեներալ, գեներալ-Լէյթէնանթ Ա. Ի. Քրասովսքի։
82. Օժանդակ գեներալ, գեներալ-Լէյթէնանթ, Հանրական նահանգապետ Վիլէնայ, քնեազ Ն. Ա. Տօլկօրուքի։
83. Օժանդակ գեներալ, գեներալ Հեծելազօրաց, նախագահ խորհրդարանի Տէրութեան, քնեազ Ի. Վ. Վասիլչիքով։
84. Գեներալ Օթ-Ինֆանթերի, Սենկլիտիկոս, և կուսակալ Վրաստանի, Ն. Փ. Ռթիշչեվ։
85. Զինուորական նախարար, գեներալ Օթ-Ինֆանթերի, կոմս Ս. Կ. Վեազմիթինով։
86. Արքայազունք Վրաց, Միքայէլ, Եղիա, և Օքրոփիր։
87. Օժանդակ գեներալ, գեներալ-Լէյթէնանթ, Սիփեակին։
88. Զինուորական նախարար, գեներալ Օթ-Ինֆանթերի, կոմս Ա. Ի. Թաթիշչեվ։
89. Օժանդակ գեներալ, գեներալ Օթ-Ինֆանթերի, քնեազ Խ. Ա. Լիվէն։
90. Ներգործական ներքին խորհրդական, Սենկլիտիկոս, կոմս Կ. Կ. Սիվէրս։
91. Օժանդակ գեներալ, գեներալ Օթ-Ինֆանթերի, կոմս Պ. Վ. Գոլենիշչեվ-Քութուզով։
92. Գեներալ-Լէյթէնանթ, Կ. Փ. Քնօրրինգ։
93. Գեներալ Օթ-Ինֆանթերի, Անդամ խորհրդարանի Տէրութեան, Կ. Վ. Թուլմոլմին։
94. Գեներալ Թնդանօթական զօրաց Ա. Պ. Նիքիթին։
95. Օժանդակ գեներալ, գեներալ Հեծելազօրաց, Գլխաւոր Իշխանապետ Վրաստանի, Մարքիզ Փաուլուչի։
96. Գեներալ Թնդանօթական զօրաց, Զինուորական նախարար Պարոն Պ. Ի. Միլլէր-Զաքօմէլսքի։
97. Գեներալ Օթ-Ինֆանթերի, կոմս Փ. Ք. Էսսէն։
98. Օժանդակ գեներալ, գեներալ-Լէյթէնանթ, Ա. Ա. Քավէլին։
99. Օժանդակ գեներալ, գեներալ-Լէյթէնանթ, Փ. Ա. Քլէյմիխել։
100. Օժանդակ գեներալ, գեներալ-Լէյթէնանթ, Պարոն Ֆ. Ք. Գէյսմար։
101. Զինուորական նահանգապետ Տփխիսայ, Օժանդակ գեներալ, գեներալ-Լէյթէնանթ, Ս. Ս. Սթրէքալով։
102. Օժանդակ գեներալ, գեներալ Հեծելազօրաց, կոմս Օռլով-Տէնիսով։

103. Օժանդակ գեներալ, գեներալ-Լէյթէնանթ, Փանքրաթիեւ։
104. Գեներալ Հեծելազօրաց, կոմս Փ. Փ. Փալէն։
105. Ներգործական ներքին խորհրդական Անդամ խորհրդարանի Տէրութեան, Ք. Ք. Ռօտօֆինիքին։
106. Օժանդակ գեներալ, գեներալ Հեծելազօրաց, քնեազ Ա. Գ. Շչերպաթով։
107. Գլխաւոր Սեննեկապետ Պալատան, Ք. Ա; Նարիշքին։
108. Գեներալ Թնդանօթական զօրաց Գ. Ա. Իգնատիեւ։
109. Գեներալ-Լէյթէնանթ, Հանրական Նահանգապետ Ռիգայի, Պարոն Մ. Ի. Փալէն։
110. Գեներալ Օթ-Ինֆանթէրի, քնեազ Ն. Ն. Խովանսքի։
111. Ներքին խորհրդականն, Քարտուղար Տէրութեան, Սինկլիտիկոս, Ն. Փ. Նովոսիլցեւ։
112. Ներգործական ներքին խորհրդական, Նախագահ Աշնուականաց Նահանգին Մոսկուայ, Փ. Խ. Օպօլեանինով։
113. Հոգաբարձու Համալսարանին Ղազանայ, Ներգործական պետական խորհրդական Մ. Լ. Մագնիցքի։
114. Ներգործական պետական խորհրդական, Բանաստեղծ, և Անդամ Ժողովոյն գիտնականաց, Ն. Ի. Գնէտիչ։
115. Հոգաբարձու Համալսարանին Ս. Փեթերպուրկայ, Ներգործական պետական խորհրդական, քնեազ Մ. Ա. Տօնտուքով-Քորսաքով։
116. Գեներալ-Լէյթէնանթ, քնեազ Փ. Փ. Լափուխին։
117. Ատենադպիր և Բանաստեղծ, կրտսեր Սեննեկապետ Ա. Փուշքին։
118. Կառավարիչ Բաշխուածոյ Նախարարութեան Ազգային Լուսաւորութեան, Ներգործական պետական խորհրդական, քնեազ Փ. Ա. Շիշմաթով-Շիրինսքի։
119. Կարգավարք Համալսարանին Մոսկուայ, Ներգործական պետական խորհրդականք, Ի. Ի. Գէյմ, և Ա. Ա. Անտոնսքի-Փրօքօփովիչ։
120. Ուսուցչապետք Համալսարանին Մոսկուայ, Ներգործական պետական խորհրդականք, Ա. Փ. Մերզլեաքով-Տվիգուպսքի, Լ. Ա. Ցվէթայեվ. Ի. Ի. Տավիտով, Պօլտիրեւ, Քաչէնովսքի, Փ. Ի. Չումաքով, Փերեվօշչիքով, Սենէգիրեւ, Նատէժտին, և այլ բազում կառավարիչք վարժարանաց Մոսկուայ։
121. Քարտուղար Տէրութեան, Ներքին խորհրդական, Ն. Ն. Մուրավեօվ։
122. Ներգործական պետական խորհրդական Ժուքովսքի, երեւելի հեղինակ։
123. Քարտուղար Տէրութեան, Ներքին խորհրդական, Ն. Մ. Լօնգինով։
124. Օպէր-Պէրգ-Հաուփման երրորդ դասակարգի, Սինկլիտիկոս, Ն. Ի. Մէշնիքով։

125. Ոստիկան Մոսկուայ, գեներալ-Լէյթէնանթ, Ն. Ն. Վէրէվքին։
126. Օժանդակ գեներալ, գեներալ-Լէյթէնանթ, Ա. Ի. Նէյտկարթ։
127. Գեներալ-Լէյթէնանթ, Ա. Ա. Վոլքով։
128. Ներքին խորհրդական, Սինկղիտիկոս, Քնեազ Փ. Փ. Կակարին։
129. Գեներալ-Լէյթէնանթ, Փոլուէքթով։
130. Ներքին խորհրդական, Սինկղիտիկոս, Ե. Ա. Տուրասով։
131. Գեներալ Օթ-Ինֆանթէրի, Օժանդակ գեներալ, Մ. Ե. Խրապովիցքի։
132. Գեներալ-Լէյթէնանթ, Օժանդակ գեներալ Փոթէմքին։
133. Ներգործական Ներքին խորհրդական, Անդամ խորհրդարանի Տէրութեան, կոմս Ֆ. Ֆ. Փալէն։
134. Ներգործական Ներքին խորհրդական, Անդամ խորհրդարանի Տէրութեան, Սինկղիտիկոս Պ. Ի. Օզէրով։
135. Ներքին խորհրդական, Սինկղիտիկոս, Ա. Ա. Պաշիլով։
136. Ներքին խորհրդական, Սինկղիտիկոս, Ա. Մ. Ուրուսով։
137. Ներքին խորհրդական, Սինկղիտիկոս Ա. Ա. Եաքովլէն։
138. Ներքին խորհրդական, Քարտուղար Տէրութեան Ա. Ս. Թանէեվ։
139. Ներքին խորհրդական, Անդամ խորհրդարանի Տէրութեան, Սինկղիտիկոս Պ. Ա. Թուչքով։
140. Նախագահ Ազնուականաց նահանգին Թուլայի Ի. Ի. Հայրապետով։
141. Գեներալ-Լէյթէնանթ Զինուորական Ճարտարապետաց, կոմս Սիվէրս։
142. Ներքին խորհրդական, Սինկղիտիկոս Մէրթվագօ։
143. Գեներալ-Մայոր Փ. Ա. Արաքչէեվ։
144. Ներքին խորհրդական, Սինկղիտիկոս Ֆ. Ա. Ֆոնպրին։
145. Գեներալ-Մայոր Պ. Մ. Մէլիքով։
146. Գեներալ-Լէյթէնանթ Գրէյսէր։
147. Գեներալ-Լէյթէնանթ Ս. Ա. Թուչքով։
148. Ներքին խորհրդական, Սինկղիտիկոս Ա. Ֆ. Մալինովսքի։
149. Գեներալ-Լէյթէնանթ, Սինկղիտիկոս Ե. Վ. Քարնէեվ։
150. Ներքին խորհրդական, Ք. Ե. Պուլկաքով։
151. Գեներալ-Մայոր Դ. Ա. Տէլեանով։
152. Գեներալ-Լէյթէնանթ Ք. Ֆ. Քլինպէրխ։
153. Ներգործական Ներքին խորհրդական, Սինկղիտիկոս Պ. Ա. Գէրմս։
154. Ներքին խորհրդական, Սինկղիտիկոս Ֆ. Փ. Լուպեանովսքի։
155. Գեսպան Ռուսաց 'ի Վրաստան՝ Ներգործական Պետական խորհրդական Փ. Ի. Քովալէնսքի։
156. Ներքին խորհրդական Ա. Փ. Նէչայեվ։
157. Գեներալ-Լէյթէնանթ, Սինկղիտիկոս Ա. Մ. Միխայլովսքի-Դանիլէվսքի, Զինուորական մատենագիր։

158. Գեներալ-Մայոր Քնեազ Դ. Ս. Աբամելէք:
159. Ներգործական ներքին խորհրդական, Սենկլիտիկոս Ֆ. Ի. Պրօզին:
160. Ներգործական պետական խորհրդական, Ն. Ս. Վսեվօլօժսքին:
161. Ներքին խորհրդական, Սեկլիտիկոս Քնեազ Ա. Փ. Ապալենսքին:
162. Ներքին խորհրդական, Սենկլիտիկոս Քնեազ Ի. Ա. Լօպանով-Ռոստովսքին:
163. Ներքին խորհրդական, Սենկլիտիկոս Ն. Ա. Նէպօլսին:
164. Բժիշկք պալատան ներգործական պետական խորհրդականք, Տ. Լօտէր, Ռիխթէր, Մուտրով, Հիլտէպրանտ, Արենտ, Մարքուս, և այլք:
165. Ներքին խորհրդական, Սենկլիտիկոս Ա. Վ. Պօլտանովսքին:
166. Գեներալ-Լէյթենանթ Ի. Ն. Սքօպէլեվ:
167. Ներքին խորհրդական, Սենկլիտիկոս Ի. Փ. Փօլիվանով:
168. Ներքին խորհրդական, Սենկլիտիկոս Ա. Ա. Ֆրօլով-Պագրէեվ:
169. Ներգործական պետական խորհրդական Գ. Մ. Պէզօպրազով, քաղաքական նահանգապետ Մոսկուայ:
170. Ներքին խորհրդական, Սենկլիտիկոս Փ. Ի. Ռունիչ:
171. Գեներալ-Մայոր կոմս Դ. Ա. Զուպով:
172. Ներքին խորհրդական Փ. Ի. Տէկայ:
173. Ներգործական պետական խորհրդական, Ակադեմեան Անգամ, Գամէլ:
174. Սեղանապետ պալատան Քնեազ Չէթվէրթինսքին:
175. Գլխաւոր քաղաքապետ Մոսկուայ, կողմնական Օժանդակ կայսեր Գնդապետ Ս. Ն. Մուխանով:
176. Գեներալ-Մայոր Դ. Ա. Սթալիփին:
177. Գնդապետ Ֆ. Ն. Կլինքա, մատենագիր:
178. Ներգործական պետական խորհրդական Ն. Ի. Կրէչ, մատենագիր:
179. Գեներալ-Լէյթենանթ Փ. Փ. Վիրուպով:
180. Գեներալ-Մայոր Ա. Ա. Թրօշչինսքին:
181. Գեներալ Թնդանօթական զօրաց, Քնեազ Ի. Դ. Աբամելէք:
182. Գեներալ-Լէյթենանթ Տ. Թ. Լխանէվիչ:
183. Գեներալ-Մայոր Պօլօկովսքին:
184. Ներգործական պետական խորհրդական, Սենեկապետ պալատան Դ. Ա. Տօնէց-Զախարժեվսքին:
185. Գեսպան Ռուսաց 'ի Պարսկաստան, Գեներալ-Մայոր, կոմս Սիմօնիչ
186. Ներգործական պետական խորհրդական, քաղաքական նահանգապետ Կաւկասու, Մալենսքին:
187. Ներգործական պետական խորհրդական Դ. Փ. Փօղնեաք:
188. Սպարգապետք վանորէիցն` անուանելոց Տօնսքին, Պօղօսավլենսքին, Զլաթոուսթովսքին, Տմիթրիեվսքին, և Պօրիսօկլէպսքին:

189. Գեներալ-Լէյթէնանթ Թնդանօթական զօրաց Ի. Ի. Շլթաուէն։
190. Ներգործական պետական խորհրդական Սերեպրեաքով։
191. Ներգործական պետական խորհրդական Գօլօխվասթով, ընկեր Հոգաբարձուի Համալսարանին Մոսկուայ։
192. Իշխան Դ. Բ. Արղութինսքի-Տօլկօրուքի։
193. Պետական խորհրդական, Սենեկապետ Պալատան, Քնեազ Փ. Ա. Վեազեմսքի, մատենագիր։
194. Գեներալ-Լէյթէնանթ Զինուորական ճարտապետաց, Պաղէն։
195. Ներգործական պետական խորհրդական Ա. Ս. Սիմոնով։
196. Ներգործական պետական խորհրդական Բօկօժին։
197. Գեներալ-Լէյթէնանթ Թնդանօթական զօրաց, Սինկղիտիկոս Պարոն Թասսալէ։
198. Գեներալ-Լէյթէնանթ Թնդանօթական զօրաց Ֆ. Ի. Ափրէլեւ։
199. Գլխաւոր Գործակալ կառավարող Սինկղիտոսի, Ներքին խորհրդական Ս. Փ. Ժիխարեւ։
200. Ներգործական պետական խորհրդական Ֆ. Ֆ. Վիկէլ։
201. Ներքին խորհրդական, Սինկղիտիկոս Ն. Ս. Քաշքին։
202. Գեներալ-Մայոր Զինուորական ճարտարապետաց՝ Եանիշ։
203. Գեներալ-Լէյթենանթ Ն. Դ. Իլօվայսքի։
204. Սենեկապետ Ա. Ն. Մուրավեօվ, մատենագիր։
205. Գեներալ-Մայոր Փ. Ա. Փափքով։
206. Ներգործական պետական խորհրդական Նէկրի։
207. Կոմիսական Օժանդակ կայսեր Գնդապետ, Քնեազ Ն. Ա. Պէլօսէլսքի-Պէլօզէրսքի։
208. Ներգործական պետական խորհրդական Ս. Մ. Պրօնեվսկի, մատենագիր։
209. Գեներալ-Լէյթէնանթ Ի. Ի. Ալէքսէեւ։
210. Գեներալ-Լէյթէնանթ, Ոստիկան Մոսկուայ, Ֆօն-Սթալ։
211. Գեներալ-Լէյթէնանթ Ա. Փ. Զաս։
212. Ներքին խորհրդական, Գլխաւոր Հոգատար կառավարող Սինկղիտոսի Դ. Մ. Մօրօզ։
213. Գեներալ-Մայոր Պ. Ի. Հայրապետով։
214. Կոմիսական-Օժանդակ, Գնդապետ Ա. Ֆ. Լվով։
215 Ներգործական պետական խորհրդական Ա. Մ. Խուդաբաշեւ։
216. Ներգործական պետական խորհրդական Ֆ. Ի. Ցէյէր։
217. Ներգործական պետական խորհրդական Ս. Ս. Լօշքարեւ։
218. Կոմիսական-Օժանդակ, Գնդապետ Ի. Ա. Պարաթինսքի։
219. Ներգործական պետական խորհրդական Ա. Պ. Մէլիքով։
220. Կոմս Ս. Փ. Փօթէմքին։

221. Գեներալ-Մայոր Ն. Մ. Արսէնիեւ։
222. Գեներալ-Մայոր Ս. Ն. Լեափունով։
223. Ներգործական պետական խորհրդական Մօրօզով։
224. Քնեազ Ս. Ն. Գալիցին։
225. Ներգործական պետական խորհրդական Եվրէյնով։
226. Ուսուցչապետ լեզուին վրաց, Անդամ Ժողովոյն գիտնականաց Պրօսսէ։
227. Ներգործական պետական խորհրդական Ի. Ե. Պուխալօ։
228. Ս. Ն. Գլինկա, մատենագիր։
229. Ներգործական պետական խորհրդական, Քնեազ Խանչերլի։
230. Քնեազ Ի. Ս. Սմբատով։
231. Քնեազ Բագրատիոն։
232. Տ. Նախարար Ազգային Լուսաւորութեան Սէրկէյ Սեմենովիչ Ուվարով։
233. Գլխաւոր Իշխանապետ Ճեմարանի, Օժանդակ Զօրապետ, կոմս Աղեք-սանդր Խրիստափորիչ Պենկենտորֆ։
234. Ծայրագոյն Պատրիարգ Ս. Էջմիածնի, Վեհափառ Կաթողիկոս ամե-նայն Հայոց Տ. Ներսէս։
235. Գլխաւոր Իշխանապետ Ճեմարանի, կոմս Ա. Փ. Օռլով։
236. Ծովապետ Ռուսաց Պ. Ի. Րիքորդ։
237. Օպէր-Շէնք կայսերական Դրան, կոմս Մ. Ե. Վիելկորսքի։
238. Ատենադպիր կայսեր՝ կոմս Տ. Ն. Պլուտով։
239. Երեւելի մատենագիր Ռուսաց Ն. Վ. Կօկլ։
240. Տ. Նախարար Ազգային Լուսաւորութեան Քնեազ Փ. Ա. Շիրինսքիյ Շախմաթով։
241. Արքայազն Իշխան Պ. Կ. Օլտենպուրկսքի։
242. Հոգաբարձու ուսումնարանաց եղելոց 'ի շրջանակին Մոսկուայ՝ Օժան-դակ Զօրապետ Վ. Ի. Նազիմով։
243. Գեներալ-Լէյթէնանթ՝ Քնեազ Մ. Զ. Արղութեանց։
244. Գեներալ-Լէյթէնանթ՝ Քնեազ Վ. Ց. Բէհբուդեանց։
245. Տեղակալ կովկասային սահմանաց գեներալ Օթ-Ինֆանթէրի, գե-ներալ Աթիւթանթ Ն. Ն. Մուրավեօվ։
246. Տ. Նախարար Ազգային Լուսաւորութեան Ներքին խորհրդական Ա. Ս. Նօրով։
247. Ծովակալ Զօրապետ Տաճկաց՝ Օսման փաշայ՝ հանդերձ ընկերակցօք։
248. Սրբազնագոյն Արքեպիսկոպոս Ռուսաց՝ Անդամ Սինհոդոսի՝ և Մետ-րապօլիտ Մոսկուայ և Քալոմնայի, Ֆիլարէտ։
249. Գեսպան Պարսից՝ Մահմուտ խան։
250. Առաջին Թարգման Շահին Պարսից՝ Տալութ (Դաւիթ) խան՝ Հայ-կազն Զմիւռնացի։

251. Զօրապետ Տաճկաց՝ Միւհէնտիս Հաֆըզ փաշայ։

252. Գեսպան պարսից՝ Սէյֆ-իւլ-Միւլք-Միրի-փէնճ-Աղպաս-Գուլի խան, հանդերձ իւրայնովքն։

253. Վիճակաւոր Առաջնորդ Հայոց Նոր Նախիջևանայ և Բեսսարաբիոյ. Բ. Ս. Մատթէոս Արքեպիսկոպոս։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1.

„Կողմն շինութեան Ուսումնարանաց (Комитетъ устройства учебныхъ заведеній) յՕրագրութեան իւրում ՚ի 26 դեկտեմբերի 1827 ամի սահմանադրեաց, զՈւսումնարանն Լազարեան անուանել Լազարեանց Ճեմարան Արեւելեան լեզուաց։ Այս Օրագրութիւն ժողովոյն արժանի գտաւ կայսերական հաստատութեան [1]։

„Լազարեանց ճեմարանն Արեւելեան լեզուաց որ ՚ի Մոսկուա, ընդունի զնորոգ կերպաւորութիւն հիմնեալ յայսօրիկ կանոնադրութիւնս, և ՚ի յիշատակ նուիրանաց Տոհմին Լազարեանց առ հիմնադրութիւն և պահպանութիւն այսր վարժարանի՝ անուանեալ լինի Լազարեանց Ճեմարան Արեւելեան լեզուաց [2]։

2.

Յարաբերական նամակ Օգոստափառ Թագաւորակցի ալրոյ՝ Կոմսին Արաքչէեւայ առ Հիմնադիրն և Հոգաբարձուն Ճեմարանի Յովակիմ Լազարեանց գրեալ ՚ի 17 Յունուարի 1825 ամի ընդ համարով 1։

„Նորին կայսերական Մեծութիւնն ամենողորմածաբար զիջեալ յամենախոնարհ խնդիր ձեր, Բարձրագոյնս հրամայել բարեհաճեցաւ, զի Հայկական Ուսումնարանն հիմնեալ ՚ի ձէնջ ՚ի Մոսկուա՝ եղիցի ընդ գլխաւոր իշխանութեամբ իմով։ Յայտնելով ձեզ՝ արդէն իսկ այդ առնեմ զայսմանէ նաեւ Հանրական-Զինուորական Նահանգապետին Մոսկուայ, և միջնորդութեամբ Նախարարին Ազգային լուսաւորութեան՝ Հոգաբարձուին ուսումնարանաց Նահանգին Մոսկուայ։

„Քաղցր լիցի ինձ յոյժ՝ ընդ անուամբ իշխանի ուսումնարանին, որ առանձինն պատուադիր լինի Տոհմին Լազարեանց, լինել գործակից յառաջադիմութեան նորին, համաձայն բարերար նպատակի հիմնադրաց նորին„։

[1] ՚Ի գում. Բարձր. Հրամ. յէջ 69։

[2] ՚Ի կանոն ճեմ. գլ. ա. կան. 1։

Հրովարտակ Նորին Կայսերական Մեծութեան Նիկողայոսի առաջնոյ Ռուսաց, 'ի Կառավարող Սենատն:

„Ըստ Հրովարտակի Նորին կայսերական Մեծութեան՝ կառավարող ծերակոյտն լուաւ զառաջարկութիւն Նախարարին Խրատանց, ընդ որում կցորդէ նա վասն պարտուպատշաճ հրատարակութեան զհաստուցեալն առ նա 'ի Գլխաւոր Իշխանէն Զինուորական գաղթականաց ('ի կոմսէն Արակչէյեւվայ) զպատճէն քաղուածոյ օրագրութեան ժողովոյն Տ. Նախարարաց, զհաստատեալն Բարձրագոյնս յ8 Նոյեմբերի 1824 ամի, յաղագս ենթադրելոյ ընդ Գլխաւոր Իշխանութեամբ նորա զՀայկական ուսումնարանն որ 'ի Մոսկուա: 'Ի քաղուածի ընդ օրագութեան ժողովոյն Նախարարաց բացայայտեալ է, թէ 'ի գումարմանն յ8 Օգոստոսի ընթերցեալ եղև առմանկն Նախարարին Ազգային Լուսաւորութեան 'ի 1 ոյն Օգոստոսի ընդ համարով 2486 (որ մուծեալ էր յՕրագիրն ժողովոյն ընդ համարով 1538) յաղագս Հայկական ուսումնարանին կառուցելոյ 'ի Մոսկուա արդեամբք Ազնուականացն Լազարեանց: Զօրագլխապետն Թնդանօթական զօրաց կոմսն Արակչէյեւ հաղորդեաց Նախարարին Ազգային Լուսաւորութեան, թէ Ազնուականքն Լազարեանք կառուցանելով 'ի Մոսկուա զՀայկական ուսումնարան, խնդրեն յԻնքնակալ կայսրէ զպաշտպանութիւն նորա 'ի վերայ այնր ուսումնարանի՝ ընտրելով զնա ինքն զկոմսն Արակչէյեւ 'ի Գլխաւոր Իշխանապետ նորին. և թէ զայս խնդրէ 'ի Նորին Մեծութենէ և Պատրիարգն Հայոց Նփրեմ: Հաճեցաւ կայսրն Բարձրագոյնս հրամայել, զի այս երկոքին ամենախոնարհ աղերսագիրք առաքեսցին առ Նախարարն Ազգային Լուսաւորութեան 'ի քննութիւն. որպէս զի եթէ նա կարելի համարեսցի զկատարումն այսր խնդրոյ Լազարեանց արդիւնաւորել՝ առանց եղծանելոյ զընդհանուր կանոնս Ազգային Լուսաւորութեան, մուծցէ զգործս զայս 'ի ժողովն Նախարարաց: Առ այս կոմսն Արակչէյեւ յաւելու, թէ ինքն՝ յիւրմէ կողմանէ չհրաժարի 'ի կատարելոյ զբաղձանս Լազարեանց, եթէ չքակտեսցի այնու ընդհանուր կարգն Նախարարութեան Ազգային Լուսաւորութեան: 'Ի գործոց Բաշխից (Департаментъ) Ազգային Լուսաւորութեան տեսանի, զի Ազնուականն Յովակիմ Լազարեանց յաղերսագրի իւրում մատուցելոյ առաջնոյ Նախարարին Ազգային Լուսաւորութեան Քնեազ Գալիցինի՝ բացայայտեալ էր, թէ եղբայր իւր Ներգործական Պետական Խորհրդականն Յովհաննէս Լազարեանց, 'ի կտակին զոր արար յառաջ քան զվախճան իւր՝ սահմանեալ է 'ի հասութից մնացեալ ստացուածոց իւրոց դնել 'ի Խորհրդատունն Որբախնամից (Опекунскій Совѣтъ) զերկուհարիւր հազար ռուբլեայնու դիտմամբ՝ զի տոկոսեօք այսր գումարի կառուսցի և պահպանեսցի 'ի Մոսկուա ուսումնարան 'ի պէտս Հայոց: Նա ինքն Յովակիմ Լազարեան՝ 'ի

մտանելն 'ի ժառանգութիւն եղբօրն՝ յառաջին չորս ամսն ժողովեաց զայս գումար, և եդ՝ ըստ սահմանադրութեանն՝ 'ի Ս. Փ. պուրկայ Խորհրդատունն Որբախնամից. բայց վասն անբաւական գոլոյ տոկոսեաց այնր գումարի առ սկզբնական շինութիւն տանն, յաւել 'ի նոյն քիւրոցն սեպհականաց աւելի քան զհարիւր հազար ռուբլիս, և կանգնեաց 'ի պատկանաւոր վայրի զտուն քարակերտ՝ վայելչական նախանշանակեալն ուսումնարանի։ Որոյ վասն խնդրեաց նա պարգևել այսմ Արևելեան լեզուաց ուսումնարանի զայնպիսի իրաւունս և զառանձնաշնորհութիւնս՝ զորպիսիս ունին այլ ուսումնարանք, և թոյլ տալ անուանել զայն „Հայկական Լազարեանց Ակադեմիա“։ Գաղափարն կանոնաց այսր Ակադեմիայի՝ զոր առաջադրեալ էր Լազարեանն ընդ իւրում աղերսագրի, տուաւ Գլխաւոր Կառավարութեան ուսումնարանաց 'ի վերադննութիւն. և Կառավարութիւնն եգիտ՝ թէ Լազարեանց ուսումնարանին ոչ պատշաճի կոչումն Ակադեմիայի, ըստ որում Ակադեմիա անուանին յատկապէս ուսումնական ընկերութիւնք կամ միաբանութիւնք, որք պարապին առանձնակի 'ի կատարելագործել զգիտութիւնս և 'ի բարգաւաճել զնոսին նորանոր գիւտովք. և եթէ ոմանց 'ի Բարձրագոյն ուսումնարանաց տուեալ լինի կոչումնս այս, այն ևս ոչ այլազգ ինչ, եթէ ոչ՝ ըստ վերին աստիճանի և տեսակի գիտութեանցն 'ի նոսին աւանդելոց. իսկ սկզբնաւոր վարժարանք՝ հանգոյն առաջադրելոյն 'ի Լազարեանէ, ոչ կարեն կրել զայդպիսի կոչումն՝ առանց քակելոյ զհանրական կարգ և զնշանակութիւն բառին. ընդ նմին և առաջարկեալ գաղափարն կանոնադրութեան է պակասաւոր՝ 'ի պատճառս չնշանակելոյն 'ի նմա զբովանդակ առարկայս ուսմանցն՝ որք ունին աւանդիլ 'ի նախայիշատակեալն ուսումնարանի, և զհնարսն՝ որք պիտոյ են 'ի պահպանութիւն նորին։ Զայսմանէ ծանուցեալ եղև Լազարեանին. որ յետ այնորիկ յամին 1823 առաջարկեաց զնոր գաղափար կանոնադրութեան ուսումնարանի իւրոյ, ընդ անուամբ Հայկական Լազարեանց Գիմնազիոյ բարձր գիտութեանց և Արևելեան լեզուաց, ևս և զցուցակ նորին՝ ցուցանելով 'ի նմա զեկամուտն կարգեալս վասն այնորիկ։ 'Ի կանոնադրութեանս յայտնիկ ցուցան առարկայքն՝ որք աւանդիլ ունին 'ի նշանակեալ ուսումնարանի, և 'ի մէջ այլոց ուսմանց՝ նաև Գրականութիւնն Հայոց՝ Արաբացւոց՝ Պարսից և Տաճկաց։ Վասն որոյ և խնդրէ յաղագս Ուսումնարանիս զանազան առանձնաշնորհութիւնս՝ որք պարգևեալ են վերին Ուսումնարանաց եղելոց 'ի Ռուսաստան։ Ժողովն գիտնականաց՝ որ գտանի առ Գլխաւոր Կառավարութեան ուսումնարանաց, արարեալ վասն այսր կանոնադրութեան զիւր նշանակութիւնս, 'ի կողմանէ իւրմէ խորհուրդ ետ զՀայկական Գիմնազիայն Լազարեանց հաւասարել յիրաւունս և 'ի պարտաւորութիւնս ընդ այլոց Գիմնազիայից՝ առաջադրելով Համալսարանին Մոսկուայ 'ի վերայ այսր հիման՝ գծագրել զգաղափար կանոնադրութեան և

ցուցակ վասն այսր ուսումնարանի, և մատուցանել ապա զայնս Կառավարութեան առ 'ի հաստատութիւն: Գործս այս վախճան էառ այսպէս: Նախարարն Ազգային լուսաւորութեան առաջարկելով զայսմանէ Ժողովոյն Նախարարաց՝ յիւրմէ կողմանէ յաւելու, թէ որովհետև Հայկական ուսումնարանն Լազարեանց ոչ միայնէ յընդհանրական զանգուած ուսումնարանաց եղելոց 'ի շրջանակս Համալսարանաց ըստ սահմանադրութեան, և պատկանելոց վերատեսչութեան իւրաքանչիւր Համալսարանի, և չէ՛ կախեալ ցարդ զՆախարարութենէ Ազգային լուսաւորութեան, այլ է առանձին իմն ուսումնարան՝ կարգեալ մեծաւ մասամբ 'ի կրթութիւն Հայ մանկտւոյ, յայն սակս վարկանի նա՝ թէ ուսումնարանս այս առանց եղծանելոյ զընդհանուր կարգն՝ որ եդեալ կան 'ի Նախարարութեան Ազգային Լուսաւորութեան, կարէ անկախ կալ զայսմ Նախարարութենէ, և գտանիլ ընդ տեսչութեամբ առանձին իշխանի, զորմէ 'ի նոյն առթի կախեսցի և գծագրութիւնն կանոնաց յաղագս այսր ուսումնարանի: Ժողովն Նախարարաց վարկանի, թէ ըստորում Նախարարն Ազգային լուսաւորութեան գտանէ՝ թէ ուսումնարանն կառուցեալ արդեամբք Լազարեանց՝ առանց խախտելոյ իւիք զընդհանուր կարգն՝ կարէ անկախ կալ զՆախարարութենէ Ազգային լուսաւորութեան, և մնալ ընդ տեսչութեամբ առանձին Իշխանապետի, յայն սակս համաձայն խնդրոյ Լազարեանց ենթադրել զուսումնարանս զայս ընդ Գլխաւոր Իշխանապետութեամբ Գեներալին Թնդանօթական զօրաց՝ Կոմսին Արակչէյեվայ՝ ըստ յօժարութեանն ցուցելոյ 'ի նմանէ առ այս. առ որ և խնդրել զԲարձրագոյն բարեհաճութիւն: 'Ի գումարմանն յ8 Նոյեմբերի ծանուցաւ Ժողովոյն Նախարարաց, թէ Բարեհաճեցաւ Կայսրն ընդ սահմանադրութիւն Ժողովոյն: Ժողովն վճռեաց՝ քաղուածօվն յօրագրէ հաղորդել զայնմանէ Նախարարին Ազգային լուսաւորութեան 'ի սակս արդեամբք ընլոյ զայն: Հրամայեցաք՝ զայսմ վճռահատութենէ Ժողովոյն Տեարց Նախարարաց Բարձրագոյնս հաստատելոյ՝ զեկուցանել հրովարտակօք ամենայն Նախարարաց, Ձինուորական Նահանգապետաց, և այլոց Գաւառակալաց, Նահանգային կառավարութեանց և Գատարանաց: Նոյնպէս տալ տեղեկութիւն Սրբազան Կառավարող Ծերակուտին և ամենայն բաժնից նորին: յ30 Յունիսի 1825 ամի *):

---

*) Օրինակ հրովարտակիս գտանի 'ի լիակատար Հաւաքմունս օրինաց Կայսրութեան՝ Բուռոց աղ. յամին 1830. 'ի հատ. Խ. յէր. 346. 'ի համարն 30403. ընդ վերնագրով ,,Հրովարտակ Սենեկիատի ըստ սահմանադրութեան Ժողովոյն Նախարարաց հաստատելոյ 'ի Կայսերական Մեծութենէ՝ յաղագս ենթարկելոյ զՀայկական ուսումնարանն որ 'ի Մոսկուա՝ ընդ Գլխաւոր Իշխանութեամբ Գեներալին Թնդանօթական զօրաց՝ Կոմսին Արաքչէյեվայ''

3.

Յամսեան փետրվարի 1828 Ատենադպիրն Տէրութեան Մուրավեօվ, ըստ Բարձրագոյն հաճութեան (կայսեր) մատոյց 'ի վերազննութիւն Նախարարին Ազգային լուսաւորութեան քնեազ Լիվէնայ զամենախոնարհ խնդիր պետական խորհրդականացն Յովհաննու և Խաչատրոյ Լազարեանց և Արքեպիսկոպոսին Հայոց Յովհաննու՝ յաղագս ենթարկելոյ զՃեմարանն Լազարեանց ընդ Գլխաւոր իշխանութեամբ Օժանդակ-Զօրապետին Կոմսին Պենկենտորֆայ։

Ժողովն բարեկարգութեան վարժարանաց հնարաւոր համարելով զկատարումն այսր խնդրոյ, որոշեաց՝ թէ նաև յայսմ դիպուածի Ճեմարանն ոչ պարտի մնալ արտաքոյ հանրական տեսչութեան Նախարարին Ազգային լուսաւորութեան, եւ և յենթարկիլն նորին նորոգ իշխանութեան։

'Ի համառօտ քաղուածի օրագրութեան գումարման ժողովոյն, հանդէպ այսր յօդուածոյ՝ Ինքնակալ կայսրն բարեհաճեցաւ իւրով իսկ ձեռամբ գրել „Համաձայն եմ“։

Հետևելով այսմ Բարձրագոյն հաճութեան Օժանդակ-Զօրապետն և Սպարապետն Հեծելազօրաց՝ կոմսն Ա. Խ. Պենկենտորֆ՝ յանձն էառ յամին 1828 զկոչումն Գլխաւոր Իշխանապետի Արևելեան լեզուաց Ճեմարանին Լազարեանց [1]։

4.

Հրովարտակ 'ի Կոմիտէն Կայսերական և Թագաւորական Աստղանշանացն Ստանիսլաւայ։

Յօժարամիտ գոլով 'ի բարենախանձ եռանդն Գասպարով անուն Հայ վաճառականին Մոսկուայ, որ նուիրեաց զյիսուն հազար ռուբլի թղթադրամ՝ յաղագս դաստիարակելոյ զերկուս որբ մանկունս վաճառականաց Հայոց՝ նախ 'ի Լազարեան Ճեմարանի Արևելեան լեզուաց, և ապա յուսումնարանի վաճառականութեան՝ որ 'ի Մոսկուա, առ 'ի գործ դնել զնոսա 'ի վաճառականութեան ընդ Ասիոյ, Ամենողորմածաբար պարգևեմք նմա՝ համաձայն միջնորդութեան Նախարարին Արքունի Գանձարանի և արժանաւոր

---

[1] 'Ի գումար. Բարձր. Հրով. յէջ. 19.

համարելոյ ժողովոյն նախարարաց՝ զՄեր կայսերական և Թագաւորական զԱսպետանշան Ս. Ստանիսլաւայ երրորդ աստիճանի, հանդերձ իրաւամբքն որ պատկանին վաճառաշահ անձանց ըստ 81 երրորդ կանոնի սահմանադրութեան նշանի Ս. Ստանիսլաւայ: Որոյ վասն հրամայեմք Քափիթուլին տալ Ասպետիս այսմիկ զնշանն Ասպետական ընդ սահմանադրեալ հրովարտակի:

'Ի բնագրին սեպհական ձեռամբ Նորին կայսերական Մեծութեան ստորագրեալ է

ՆԻԿՈՂԱՅՈՍ:

Ցարսքոյէ Սելօ.
21 Օգոստոսի 1842 ամի:

Ստորագրեաց Նախարար Արքունի Գանձարանի, Գեներալ Հետեւակազօրաց
կոմս Կանկրին:

Վաւեր է. Կառավարիչ Ե. Տէր-Ժէնէն:

Ընթերցաւ Գրասեղանապետ:

5.

Հրովարտակ՝ հանեալ յՕրագրէ Սենատոսի տպագրեալ 'ի 6 Հոկտեմբերի 1842 ամի, ընդ համարով 80:

'Ի Սեպտեմբերի 9. (ծանուց. 'ի ձեռն Նախարարին Արքունի Գանձարանի): Գասպարով անուն Հայ վաճառականն Մոսկուայ՝ ակներև տեսանելով, զփոյթ և զջանս կառավարութեան յուզելու զվաճառականութիւն մեր յԱսիա, և 'ի ձեռն բազմամեայ վաճառականութեան իւրոյ ընդ այնմ մասին աշխարհի՝ արդեամբք ծանուցեալ, թէ կարէր Ռուսաստան մեծագոյն ստանալ օգուտս 'ի վաճառականութենէ ընդ Ասիոյ՝ եթէ էր 'ի գործ եդեալ զայն 'ի ձեռն անձանց՝ առ այն պատրաստելոց, դիմեաց առ նոյն Նախարարն Արքունի Գանձարանի՝ հայցելով զմիջնորդութիւն նորա յընդունել զբարձրագոյն բարեհաճութիւն Նորին կայսերական Մեծութեան: (Եւ են խնդիրք նորա):

ա̄. Ընդարձ մուծանել յԱրքունի Գանձարանն Մոսկուայ՝ 'ի սեպհական ստացուածոց իւրոց զյիսուն հազար ռուբլի Թղթադրամ, այնու պայմանաւ՝ զի

բ̄. Տոկոսեօք քսան և հինգ հազար ռուբլի դրամոցն դաստիարակեսցի մանուկ մի յորբ զաւակաց վաճառականաց Հայոց՝ նախ 'ի Լազարեան ճեմարանի Արևելեան լեզուաց, և ապա յՈւսումնարանի վաճառականութեան՝ որ 'ի Մոսկուա։

գ̄. Տոկոսիք միւս քսան և հինգ հազար ռուբեաց տացին յօգուտ Նորին իսկ Գաւապարովայ՝ ցորչափ կենդանի իցէ նա. իսկ զկնի մահուանն այնք ևս 'ի գործ դիցին 'ի դաստիարակութիւն այլոյ մանկան։

դ̄. Յաւարտել որդեգրացս զընթացս ուսման յառաջադիմութեամբ և և բարի վարուք, տացի իւրաքանչիւրումն առ մի նուագ հարիւր ռուբլի արծաթ 'ի մնացելոցն տոկոսեաց։

ե̄. Որդեգիրքս այսուքիկ անուանեսցին Գաւապարովեանք, և ընտրութիւն նոցա կախեալ մնասցէ զնմանէ. իսկ զկնի մահուան նորա՝ զխորհրդարանէ Լազարեան ճեմարանի։

զ̄. Պահպանութիւն գլխոյ դրամոցս և տոկոսեացն, ընդ նմին և կրթութիւն որդեգրացս յԱսիական վաճառականութեան՝ կախեալ կայցէ զԲաշխուածոյ արուեստակերտուածոց (отъ Департамента Мануфактуръ) և ըղներքին վաճառականութենէ։

Զկնի ամենահպատակօրէն ազդ առնելոյ զայսմանէ Օգոստափառ Կայսեր, Նորին Մեծութիւնն բարեհաճեցաւ 'ի 24 Յուլիսի՝ Բարձրագոյնս հրամայել, 'ի կատար ածել զնշանակեալ կարգադրութիւնն Գաւապարովայ։

6

'Ի Խորհրդարանն Հայկական Լազարեան Ճեմարանի Արեւելեան լեզուաց՝ որ 'ի Մոսկուա:

—

Նախարարութիւն Արքունի Գանձարանի, Բաշխուած ձեռակերտաց և Ներքին վաճառականութեան:

—

Բաժին 2.
Գրասեղան 1:

—

'Ի 13 Օգոստոսի 1842 ամ.
Համար 3274:

—

Ըստ Բարձրագոյն Հրամանի: Ցաղագս ընծայելոյ վաճառականին Գասպարովայ զ50 հազար ռուբլի թղթադրամ 'ի կրթութիւն երկուց որբ մանկանց վաճառականաց Հայոց:

Երկրորդ ատեանի Հայ վաճառականն Մոսկուայ՝ Գասպարով, ակներև տեսանելով զփոյթ և զջանս կառավարութեան յուղղել զվաճառականութիւն մեր Ազգիս, և 'ի ձեռն բազմամեայ վաճառականութեան իւրոյ յայնմ սահմանի՝ արգեամբք ծանուցեալ, թէ Ռուսաստան կարէր 'ի ձեռս բերել շահս մեծամեծս 'ի վաճառականութենէ ընդ Ասիոյ՝ եթէ 'ի գործ դնէր զայն 'ի ձեռն արանց առ այն պատրաստելոց, դիմեաց առ Նախարարն Արքունի Գանձարանի՝ հայցելով ըզ միջնորդութիւն նորա վասն ընդունելոյ զԲարձրագոյն բարեհաճութիւն Նորին Կայսերական Մեծութեան:

ա. Ընդարձ մուծանել յԱրքունի Գանձարանն Մոսկուայ 'ի սեպհական ստացուածոց զյիսուն հազար ռուբլի թղթադրամ, այնու պայմանաւ՝ զի

բ. Տոկոսաւք քսան և հինգ հազար ռուբլի դրամոցն դաստիարակեսցի մանուկ մի յորբ զաւակաց վաճառականաց Հայոց՝ նախ 'ի Լազարեան Ճեմարանի Արեւելեան լեզուաց, և ապա յուսումնարանի վաճառականութեան՝ որ 'ի Մոսկուա:

գ. Տոկոսիւք միւս քսան և հինգ հազար ռուբլեաց տացին յօգուտ Նորին իսկ Գասպարովայ՝ ցորչափ իցէ նա կենդանի. իսկ զկնի մահուանն՝ այնք ևս 'ի գործ ածցին վասն դաստիարակութեան այլոյ մանկան:

դ. Յաւարտել որդեգրացս զընթացս ուսման յառաջադիմութեամբ և բարի վարուք՝ տացի իւրաքանչիւրումն առ մի նուագ հարիւր ռուբլի արծաթ 'ի տոկոսեացն մնացելոց:

Ե. Որդեգիրքս այսոքիկ անուանեսցին Գասպարովեանք, և ընտրութիւն նոցա կախեսցի զնմանէ, իսկ զկնի մահուան նորա՝ զԽորհրդարանէ Լազարեան Ճեմարանի:

Զ. Պահպանութիւն գլխոյ դրամոցս և տոկոսեացն, ընդ նմին և կըրթութիւն որդեգրացս յՌուսական վաճառականութեան՝ կախեալ կայցէ ընդ Բաշխուածոյ արուեստակերտուածոց, և զՆերքին վաճառականութենէ:

Զկնի ամենահպատակօրէն ազդ առնելոյ զայսմանէ Օգոստափառ կայսեր, Նորին Կայսերական Մեծութիւնն բարեհաճեցաւ 'ի 24 Յուլիսի Բարձրագոյնս հրամայել՝ հաստատել 'ի կատար զնշանակեալ կարգադրութիւնս Գասպարովեայ:

Առաջարկելով Գասպարովեայ՝ ըստ զօրութեան նշանակեալ կանոնացս՝ ընտրել արդէն և առաքել 'ի յիշատակեալ Ճեմարանն զորդեգիրն յորբ մանկանց Հայ վաճառականաց, և մուծանել յՈրբախնամ Խորհրդարանն Մոսկուայ զյիսուն հազար ռուբլի թղթադրամ ըստ վերագրեալ սահմանադրութեան, և ազդ արարեալ 'ի նոյն Խորհրդարանն վասն տալոյ զտոկոսս այնց դրամոց՝ ըստ պահանջման Խորհրդարանին Լազարեան Ճեմարանի Արևելեան լեզուաց, պարտ անձին վարկանիմ խնդրել 'ի նմին Խորհըրդարանէ, զի զկնի մուծանելոյ Գասպարովեայ զյիշատակեալ դրամն ('ի Գանձարանն Արքունի), ընկալցի և պահեսցէ առ ինքն զտոմսակ Գանձարանին տուեալ վասն գլխոյ այնց դրամոց, և յանձնեսցէ Գասպարովեայ մինչ ցմահ զտոկոսս կիսոյ մասինն, այսինքն՝ 25 հազար ռուբլի թղթադրամոց. իսկ զմասն տոկոսեաց միւսոյ կիսոյն 'ի գործ դիցէ 'ի դաստիարակութիւն յիշատակեալ մանկանն: Եւ ապա որպէս վասն այսր՝ նոյնպէս և վասն յառաջադիմութեանց այսր որդեգրի տացէ ամի ամի ծանօթութիւն 'ի Բաշխուածն արուեստակերտուածոց և Ներքին վաճառականութեան:

Զբնագիրն ստորագրեցին, Նախարարն Արքունի Գանձարանի Գեներալ հետևակազօրաց՝ կոմս Կանկրին, և Կառավարիչ Ե. Տրուժինին:

7.

Սահմանադրութիւնք և կանոնք Սինոդական Էջմիածնի յաղագս հաստատելոյ 'ի Լազարեան Ճեմարանի Արևելեան լեզուաց առանձին Բաժնի 'ի պէտս պատրաստութեան մանկանց Հայոց յեկեղեցական կոչման եղելոյ:

Լուսաւորչական Հայոց Սինհոդոսն Էջմիածնի 'ի սկզբան Ներգործութեան իւրոյ 'ի 22 փետրվարի 1837 ամի, իբրև ձեռն արկ 'ի կատար բերել զԲարձրագոյն կամս հաստատեալ 'ի 11 Մարտի 1836 ամի զկարգա-

դրութիւնն՝ յաղագս կառավարութեան գործոց Հայաստանեայց եկեղեցւոյ 'ի Ռուսիա, եգիտ դժուարութիւն ըստ երկուց գլխաւոր առարկայից, այն է՝ ա, ըստ յիշեալ կարգադրութեանն կարգել 'ի Սինոդոսն՝ նաև յընդ իշխանութեամբ նորա եղեալ թեմական Եպիսկոպոսական Ատեանս և յԱտեանս Քահանայական զատիճանաւորս՝ վարժեալս ըստ կանոնաց 'ի լեզու Ռուսաց և Հայոց, եւս և յեղանակս քաղաքական ծառայութեան. և բ, կարգել 'ի վիճակս Ռուսիաբնակ Հայոց վասն եկեղեցականաց հոգևոր դպրոցս, որոց պիտոյ են կրթեալ ուսուցիչք Հայկական լեզուի, որք այժմ ըստ սակաւութեան իւրեանց հազուագիւտ են։

Որոնելով զմիջոցս խափանելոյ զդժուարութիւնս զայսոսիկ, և տեսեալ թէ 'ի գլուխ հասուցանել զգործելի կամս Տէրութեան յօգուտ Հայաստանեայց եկեղեցւոյ որ 'ի Ռուսիա, առանց պատրաստելոյ վասն այսր զարս կրթեալս ըստ այժմեան միջոցաց՝ դժուարին է յոյժ, նաև անհնարին, յայս սակս Լուսաւորչական Հայոց Սինոդոսն զմի և եթ կարևոր միջոց տեսանէ վասն այսր, որ օգտաւէտ կարէ լինել որպէս եկեղեցւոյ մերում, նոյնպէս և կառավարութեան Ռուսաց, այն ինքն է՝ կարգել 'ի Ճեմարանին Արեւելեան լեզուաց որ 'ի Մոսկով՝ զառանձին Բաշխ վասն պատրաստելոյ զմանկունս եկեղեցականաց Հայոց, որք կարգեսցին իբրև ուսուցիչք և 'ի թեմական եկեղեցական վարժատունս և յեկեղեցական պաշտօն։ Սովին միջոցաւ յիշեալ Ճեմարանն պատրաստելով զվարժապետս վասն Հայկական ուսումնարանաց, պատրաստեսցէ նաև զլուսաւորեալ քահանայս Լուսաւորչական կրօնի...։ Բայց որովհետև առ 'ի կատար ածել զհասարակօգուտ գործս զայս հարկաւոր են ծախք, վասն այսորիկ և յոյժ օգտաւէտ համարի միաւորութիւն եկեղեցեաց Հայոց Ս. Փեթերբուրգոյ և Մոսկուու և Հայոց Ճեմարանին Լազարեանց 'ի մի ընդհանուր կառավարութիւն 'ի տնտեսական մասին, զկնի որոյ մարթ է պահպանել զյիշեալ ուսումնարանն արդեամբք եկեղեցեաց երկոցունց մայրաքաղաքացս, զի ոչ գոն եկեղեցական ուսումնարանք առ եկեղեցեօք. իսկ հաստատել զայնս առանց նշանաւոր գլխոյ դրամոց՝ կարի դժուարին է, նա թէ և անհնարին։ Այսու դիտաւորութեամբ և ըստ այսոցիկ պատճառաց Լուսաւորչական Հայոց Սինոդոսն Էջմիածնի առաջադրէ սահմանել առ այս վախճան զյետագայ բացորոշ կանոնս, և առաջարկել սահմանեալ եղանակաւ 'ի Բարձրագոյն հաստատութիւն կայսերն։

Գծագրութիւն կանոնաց վասն կրթելոյ 'ի Մոսկուայ Լազարեանց Ճեմարանի Արեւելեան լեզուաց զառանձին Բաշխի վասն եկեղեցականաց և յաղագս Նորաւեշ դաստիարակութեան նորին։

1. Լուսաւորչական Հայոց եկեղեցիք երկուց մայրաքաղաքացն՝ որք են թուով հինգ, վասն հաստատուն և անխափան ճալոյ միաւորին յայսմ հե-

տէ, և բաղկացուցանեն զմի ինչ անբաժան, որ սեպհական միջոցք ձեռընտու կարասցեն լինել բարօրութեան իւրեանց, այնպէս՝ զի տնտեսական պակասութիւն միոյն լցցի առատութեամբ միւսոյն:

2. Միաւորելով այսու եղանակաւ զՀայոց եկեղեցիս Ս. Փեթերբուրգայ և Մոսկուայ, զորս կառոյց ազնիւ տոհմն Տեարց Լազարեանց, միաւորի և Հայոց ճեմարանն Մոսկուայ Արևելեան լեզուաց, կառուցեալն ծախիւք նոյն իսկ տոհմին Տեարց Լազարեանց, որ իբրև օգտակար և միակ դպրոց յիւրում կարգի՝ է վասն ազգիս Հայոց առատաբուխ աղբիւր վասն պատրաստելոյ և լուսաւորելոյ զօգտաւէտ անդամս հասարակութեան, որպէս ըստ եկեղեցական՝ նոյն և ըստ քաղաքական մասին:

3. Կառավարութիւն եկեղեցեաց Հայոց յերկոսին մայրաքաղաքս, նոյն և ճեմարանին Լազարեան Արևելեան լեզուաց, որպէս յառաջն՝ նոյնպէս և այժմ պարտ է յանձնել առանձին Հոգաբարձուի, որ իբրև գլխաւոր կառավարիչ լիցի և վերատեսուչ ամենայն գործոց՝ առ նոյնս վերաբերելոց: Զանօրէնութենէ նորա կախեալ կան առհասարակ հասք և ծախք գումարոյ դրամոց, որպէս և բոլոր տնտեսական մասն. նաև նորա է նշանակել վասն եկեղեցեաց զքահանայս և զեկեղեցական պաշտօնատարս, զկնի յայտնելոյ զայնմանէ Թեմական Կառավարութեան Նախիջևանայ և Բեսարաբիոյ:

4. Ի դէպս բացակայութեան կամ հիւանդութեան Հոգաբարձուին, և առ օգնական լինելոյ նմա ՚ի կատարելն զյանձնարարեալն պաշտօն նորա, ՚ի ժողովրդոցն ընտրեալ լինին երկու անձինք Հայոց Ս. Փեթերբուրգայ և Մոսկուայ և հաստատեալ (լինին) ՚ի Հոգաբարձուէն, որք իբրև երեցփոխանք՝ հոգ տանին ըստ նշանակութեան Հոգաբարձուին զներկայ գործոց և զհաշուից յԹ գլուխս Բարձրագոյն կանօք հաստատեալ ՚ի 11 Մարտի 1836 ամի Կարգադրութեանց յաղագս կառավարութեան գործոց Հայաստանեայց եկեղեցւոյ՝ որ ՚ի Ռուսիա, այնու միայն զանազանութեամբ՝ զի կառավարութիւն Հայոց եկեղեցեաց երկոցունց մայրաքաղաքաց կախեալ կայ ըստ գրութեան 3 յօդուածոյ անմիջապէս զՀոգաբարձուէն, որում ձեռնտու լինին երեցփոխանք, որք ՚ի փոխման ամի տան Հոգաբարձուին զկնուլի հաշիւ գործոց իւրեանց ՚ի մասին սոյամիկ, նաև զհամար գանձուց յիշեալ եկեղեցեաց. զկնի որոյ Հոգաբարձուն հաղորդէ զայնմանէ յԵպիսկոպոսական Ատեանն Նախիջևանայ և Բեսարաբիոյ:

5. Յիւրաքանչիւրում մայրաքաղաքի ունի լինել երեցփոխան մի, որպէս և այժմ:

6. Նոյնքիկ երեցփոխանք եկեղեցեաց Ս. Փեթերբուրգայ և Մոսկուայ, որպէս ասացաւ ՚ի վեր անդր, ընտրեալ լինին մի մի վասն իւրաքանչիւրոյ մայրաքաղաքի ՚ի ժողովրդոց Հայոց յընթացս երից ամաց, որք ըստ նշանակութեան Հոգաբարձուին կարգին ՚ի պաշտօն, և կառավարեն զգործս ե-

կեղեցեաց, որպէս ասացաք արդէն։ Ընտրեալ երէցփոխանն կարէ՝ ըստ նշանակութեան Հոգաբարձուին և ըստ սեփհական յօժարութեան իւրում, մնալ 'ի պաշտաման այսմիկ աւելի կամ պակաս, ըստ կարեաց իւրոց։ Ընձն՝ որ տանի զպաշտօն երէցփոխանի, ազատ է յամենայն քաղաքական ծառայութեանց։

7. Հայոց եկեղեցիք Ս. փեթերպուրկայ և Մոսկովու, նոյնպէս և ճեմարանն Արեւելեան լեզուաց, զոյգ ընդ նոցին ամենայն շինուածք՝ որք առ այնս, ազատ են յամենայն արքունական հարկատուութենէ։

8. 'Ի դէպս հարկաւորութեանց ըստ գործոց եկեղեցեաց և ճեմարանին՝ թղթակցի ընդ Ատենից, կամ ընդ պաշտօնատար անձանց Տէրութեան նոյն ինքն Հոգաբարձուն՝ իբրև գլխաւոր կառավարիչ, և կամ Խորհրդարանն ճեմարանին։ Ատեանք և պաշտօնատար անձինք՝ ըստ գործոցն եկեղեցեաց Հայոց երկոցունց մայրաքաղաքաց և ճեմարանին Արեւելեան լեզուաց, ցուցանեն նոցա զպարտուպատշաճն նպաստ օգնականութեան։

9. Որովհետև արդեամբք Հայոց եկեղեցեաց երկուց մայրաքաղաքացն հաստատել վասն Հայոց և եկեղեցականաց նոցա զառանձին ուսումնարան դժուարին է, նաև անհնարին՝ ըստ զանազան պատճառաց և դժուարութեանց, և առ 'ի չգոյէ միջոցաց և կարեւոր առ այն ընդունակ անձանց, և որովհետև փորձիւ իսկ յայտնի է, թէ վասն իւրաքանչիւր ուսումնական շինուածոյ հարկաւոր են մեծամեծ գումարք դրամոց, առ 'ի հիմնել և պահպանել զայն. բաց յայսմանէ պարտ է ունել և զհոգունակ և զաշալուրջ կառավարութիւն, վասն այսորիկ իսկ պատճառաց յօգուտ թէ՛ եկեղեցեաց մերոց և թէ՛ ազգիս, կարգի 'ի միջնալ Լազարեանց ճեմարանին Արեւելեան լեզուաց առանձին բաշխ վասն պատրաստելոյ զմանկունս եղեղեցականաց Հայոց, առ 'ի մտանել յեկեղեցական ուսումնարանս թեմական նահանգաց և կամ 'ի կարգ եկեղեցականաց։

10. Վասն աշակերտաց՝ որք ըստ տնօրէնութեան կառավարութեան ճեմարանին նուիրեսցեն զանձինս 'ի կարգս եկեղեցականաց, բաց յառարկայից նշանակելոց 'ի կանոնագրութեան ճեմարանի՝ նշանակին առանձին դասաւանդութիւնք։

11. Դասաւանդութիւնքս այսոքիկ պարունակեն յինքեանս զհաւատոյ Աստուածաբանութիւն համաձայն կանոնաց եկեղեցւոյ Լուսաւորչական Հայոց, զմեկնութիւն սուրբ Գրոց, զքարոզչութիւն սրբոյ պատարագի և զեկեղեցական պատմութիւն։ Բաց յայսմանէ՝ պարտ է ուսուցանել աշակերտաց զպարտաւորութիւն ճշմարիտ Հովուի եկեղեցւոյ, վերաբերութեամբ առ աստիճանն իւր, առ Տէրութիւնն, և առ ժողովուրդն առհասարակ։

12. Յորդեգրաց միջնալ ուսումնարանին՝ զկնի աւարտելոյ զընթացսն ուսման ըստ ընդունակութեան իւրեանց՝ ոմանք յիրախոսաղբիւրութենէ առ

ստացեալ լուսաւորութիւն մտաց, իսկ ոմանք վասն առաւելապէս կատարելագործելոյ զանձինս, պարտին ծառայել 'ի ճեմարանի անդ զամս վեց կամ իբրև ուսուցիչք, կամ՝ իբրև վերակացուք, ըստ նշանակելոյ կառավարութեան ճեմարանի. զկնի որոյ մտանեն 'ի զանազան պաշտամունս 'ի Հայոց եկեղեցիս երկոցունց մայրաքաղաքացն և այլոց քաղաքաց: Իսկ որք աւարտեալ են զընթացս ուսման՝ նշանակեալս ըստ կարգադրութեան ճեմարանին, արձակին վկայագրօք, և յետ ընտրեալ և կարգեալ լինելոյ յաստիճան ինչ՝ մտանեն ոմանք յեկեղեցական կառավարութիւնս, և այլք 'ի Լուսաւորչական Հայոց Սինհոդոսն Էջմիածնի, և յեկեղեցական ուսումնարանս Հայոց՝ որք կարգին յայլևայլ վիճակս:

13. Հոգաբարձուն յիշեալ եկեղեցեաց և ճեմարանին Արևելեան լեզուաց ունի զիրաւունս՝ նկատելով զպիտոյս թէ՛ եկեղեցեաց և թէ՛ ճեմարանին՝ տնօրինել զարդիւնս 'ի բաւականութիւն առ հասարակ ամենայն ծախուցն:

14. Միաւորելով այսու եղանակաւ զեկեղեցիս Հայոց Ս. Փեթերբուրգայ և Մոսկվայ և զճեմարանն Լազարեանց 'ի մի կառավարութիւն ըստ տնտեսական մասին, վասն պահպանութեան եկեղեցական Բաշխին՝ որ նորոգ կանգնեսցի, ամի ամի նշանակի մասն հասից եկեղեցեաց երկոցունց մայրաքաղաքացն և մանաւանդ Ս. Փեթերբուրգայ՝ ըստ նկատման Հոգաբարձուին, ցուցանելով պատշաճեալ կարգաւն զծախսն զայնոսիկ 'ի տարեկան հաշիւս յիշեալ եկեղեցեացն և ճեմարանին, համաձայն կարգին նշանակելոյ 'ի 4 յօդուածոյ և կանոնացն գծագրելոց 'ի կարգադրութեան Մոսկվայ Լազարեանց ճեմարանին Արևելեան լեզուաց:

15. Թէ 'ի սակս իրաւացի յարգանաց առ ազնիւ տոհմն Լազարեանց, որ յընթացս աւելի քան յիսուն ամաց՝ չխնայելով բնաւին զաշխատանս և զծախս իւր, նշանաւոր հանդիսացեալ զանձն մեծագործութեամբք յօգուտ հասարակաց, և թէ՛ 'ի սակս բարեպաշտ դիտաւորութեան այնր տոհմին վասն պահպանելոյ յերկուսին մայրաքաղաքսն զտաճարն Աստուծոյ և զլայնանիստ շինուածս առ նովաւ, նոյն և վասն նուիրելոյ գոլով գումարս դրամոց յօգուտ չքաւոր անձանց Հայ ժողովրդոց Աստրախանայ, Նախիջևանայ և Գրիգորիօպոլսոյ, նաև վասն ընծայաբերելոյ զաւելի քան զկէս միլիոն ռուբլիս 'ի կառուցումն 'ի Մոսկով հոյակապ շինուածոյ վասն զետեղելոյ 'ի նմին զմիակ և զազգաօգուտ ճեմարանն Արևելեան լեզուաց, և 'ի պահպանութիւն այնր, արդարութիւնն տայ զիրաւունս նոցա՝ իբրև առաջին պատճառի և հիմնարկուի օգտաբեր շինուածոյս՝ ըստ զօրութեան կանոնադրութեանց գրելոց վասն եկեղեցեաց Հայոց՝ 'ի նախկին Թեմակալ Արքեպիսկոպոսացն Ռուսիաբնակ Հայոց՝ հանգուցելոցն 'ի Քրիստոս Յովհաննու և Գրիգորի, որպէս յառաջն՝ նոյն և այժմ կրել զանուն Հոգաբարձուի

եկեղեցեաց Հայոց Ս. Փեթերբուրգայ և Մոսկուայ և Ճեմարանին Մոսկուայ Արևելեան լեզուաց։ Այս անուն պարտի մնալ անփոփոխ, և անցանել յազգէ յազգ 'ի տոհմին Լազարեանց։ 'Ի սպառիլ ազգին Լազարեանց՝ վերջին Հոգաբարձուն նշանակէ զփոխանորդ զկնի իւրեան կամ 'ի մերձաւոր ազգականաց իւրոց, կամ յօտարաց, զոր ընդունակ և արժանաւոր գտցէ։ Իսկ եթէ ոչ նշանակեսցէ նա, յայնժամ ազգն Ռուսաբնակ Հայոց ընտրէ զարժանաւոր Հոգաբարձու հրամանաւ Թեմակալ Արք եպիսկոպոսին՝ խնդրեալ յառաջագոյն զհրաման 'ի Լուսաւորչական Հայոց Սինոդոսէն Էջմիածնի։

16. Զկանոնս զայսոսիկ՝ որ յաւելումն և բացատրութիւն են առաջնոց, պարտ է ճշդիւ 'ի գործ դնել և կատարել, իբրու զհամաձայնս Լուսաւորչական եկեղեցւոյ և զկարևորս հարկաւորութեան նորին, որպէս զխարդ առաջի առնեն այժմեան հանգամանք նորին։

Բնագիր առաջարկութեանս ստորագրեալ է

,,Ծայրագոյն Պատրիարգ և Կաթողիկոս ամենայն Հայոց՝ Յովհաննէս։

,,Անդամք Սինոդոսի՝ Արք եպիսկոպոս Բարսեղ։

Արք եպիսկոպոս Յովսէփ։

Արք եպիսկոպոս Դաւիթ։

Արք եպիսկոպոս Ստեփաննոս։

Յովհաննէս վարդապետ Դըբեճէ։

Վաւեր է, Ատենադպիր Սինոդոսի՝ Քարթաշով *)։

---

*) Գծագրութիւն կանոնացս ստորագրեալ է յԷջմիածին 'ի 21 Յուլիսի 1839 ամի, և առաքեալ է առ Գլխաւոր Կառավարիչն Վրաստանի՝ առ Գեներալ Հեծելազօրաց Գոլովին 'ի 5 Օգոստոսի նոյն ամի ընդ համարով 1036։

Յայտարարական նամակք Նախարարութեանց՝ յաղագս այսր կարգադրութեան գրեալք, են։

ա. Նամակ Օժանդակ Զօրապետին Հեծելազօրաց՝ Գլխաւոր Կառավարչին Լազարեան Ճեմարանի՝ Կոմսին Պենկենդորֆայ 'ի 17էն Յունիսի 1837 ամի, ընդ համարով 607, առ Նախարարն Ներքին գործոց և Գլխաւոր Կառավարիչն այլոց դաւանութեանց՝ առ Ներգործական Ներքին Խորհրդականն Դ. Ն. Բլուդով, յաղագս կանոնաց հաստատելոյ զառանձին բաշխ 'ի պէտս եկեղեցականաց 'ի Ճեմարանին Լազարեանց։

բ. Նամակ Նախարարին Ներքին գործոց Դ. Ն. Բլուդովայ առ մեծ Իշխանապետն Վրաստանի՝ Կաւկասու՝ և յայն կոյս Կաւկասու եղեալ նահանգաց, առ Զօրապետն հետևակազօրաց Ե. Ա. Գոլովին, 'ի 13էն Օգոստոսի 1837 ամի, ընդ համարով 1931, յաղագս յայտարարութեանց վեհափառ Պատրիարգին և Կաթողիկոսին ամենայն Հայոց՝ Յովհաննու, նոյն և վասն քննութեան և սահմանադրութեան կանոնաց 'ի Սինոդոսին Էջմիածնի 'ի հաստատել զառանձին բաշխ 'ի Ճեմարանին Լազարեանց՝ 'ի պէտս եկեղեցականաց։

Հրովարտակ Նորին Կայսերական Մեծութեան՝ ինքնակալին ամենայն Ռուսաց ’ի կառավարող Սինոդն։

Ըստ Հրովարտակի Նորին Կայսերական Մեծութեան՝ կառավարող Սինկլիտոսս լուաւ զյայտարարութիւն կառավարչին Նախարարութեան Ներքին գործոց, յորում յայտնէ՝ թէ միջնորդութեամբ Գլխաւոր կառավարչին Մոսկովու Լազարեանց ճեմարանի Արեւելեան լեզուաց՝ Օժանդակ Գեներալ կոմսին Բենկենդորֆայ, յաղագս սահմանելոյ ’ի ճեմարանի անդ զառանձին Բաշխ ’ի պէտս դաստիարակութեան Հայազգի մանկանցն յեկեղեցականաց. եւ զկնի թղթակցութեան զայսմանէ ընդ Նախարարին Ազգային Լուսաւորութեան՝ նոյն կառավարիչն Նախարարութեան Ներքին գործոց

գ. Նամակ կառավարչին Նախարարութեան Ներքին գործոց Օժանդակ Զօրավարին՝ կոմսին Ա. Գ. Ստրոգոնովայ ’ի 24էն Դեկտեմբերի 1839 ամի, ընդ համարով 2936, առ կոմսն Բենկենդորֆ, վասն առնլոյն ’ի Վրաստանէ զՎարդապետութիւնն Սինոդոսին էջմիածնի, և վասն առաքելոյն զայն առ նա ’ի քննութիւն։

դ. Նամակ կոմսին Բենկենդորֆայ ’ի 13էն Յունուարի 1840 ամի, ընդ համարով 47, առ կոմսն Ստրոգոնով, յաղագս կարծեաց և համաձայնութեան իւրոյ ընդ կանոնս կարգադրութեան Սինոդոսին էջմիածնի։

ե. Նամակ Նախարարին Ազգային Լուսաւորութեան՝ Ներգործական Ներքին Խորհրդականին Ս. Ս. Ուվարովայ յ9էն Մարտի 1840 ամի, ընդ համարով 237, առ կոմսն Ստրոգոնով, յորում յայտնէ նա զկարծիս իւր՝ թէ զինչ ևս պարտ է յաւելուլ ’ի կանոնսն՝ որ վասն եկեղեցական դպրոցին ’ի ճեմարանի Լազարեանց։

զ. Նամակ կոմսին Ստրոգոնովայ ’ի 20էն Յունիսի 1840 ամի, ընդ համարով 1440, առ կոմսն Բենկենդորֆ, յորում եդեալ զամենայն կանոնսն յաւելուածովքն հանդերձ՝ ցանկայ լսել զկարծիս և զվճիռ նորա։

է. Նամակ կոմսին Բենկենդորֆայ ’ի 11էն Օգոստոսի 1840 ամի, ընդ համարով 1638, առ կոմսն Ստրոգոնով, յորում յայտնէ զհամաձայնութիւն իւր և զկամս ’ի կատար ածելոյ զկանոնսն՝ որ վասն առանձին Բաշխի եկեղեցականաց ’ի ճեմարանին Լազարեանց։

ը. Զամենայն ընթացից գործոյս գրեալ է յայտարար Նամակ ’ի Նախարարութիւն Ներքին գործոց. և յառաջարկելն զայն կոմսին Ստրոգոնովայ՝ տարեալ եղև ’ի ժողովն Նախարարաց։ Զկնի քննութեան եւ ուն համաձայն վճռոյ։ Ժողովն Նախարարաց զկանոնսն՝ որ վասն սահմանելոյ ’ի Մոսկովու Լազարեանց ճեմարանի զառանձին Բաշխ ’ի պէտս կրթութեան Հայազգի մանկանց յեկեղեցական կոչման եղելոց, առաջարկեաց Կայսերն՝ վասն հաստատելոյ. և ’ի վերայ այնր կանոնադրութեան գրեալ է. „’Ի Ս. Փեթերբուրգ քաղաքի յ31 Յունուարի խակական ձեռամբ Նորին Կայսերական Մեծութեան. Կատարել"։

’Ի ձեռն առաջին Բաշխմանց Սինկլիտոսի գրեցաւ պատուէր՝ Հրատարակել տպագրութեամբ զառ ’ի կայսերէ զհաստատեալ կանոնսն, ’ի գործ դնել և կատարել։

եմոյծ 'ի ժողով նախարարաց զյօրինեալն 'ի Սինհոդոսէն Էջմիածնի Լուսաւորչակրօն Հայոց՝ և զուղղագրեալն 'ի նախարարութեան ներքին գործոց զառաջարկութիւնս կանոնաց վասն սահմանելոյ զվերյիշեալ Բաշխն եկեղեցականաց: Այժմ քաղուածով յօրագրութեանց ժողովոյն նախարարաց 'ի 21էն Յունուարի և 'ի 4էն Փետրուարի յայտնեալ է նոյն կառավարչին նախարարութեան ներքին Գործոց, թէ ժողովն զառաջարկութիւնն կանոնաց վասն սահմանելոյ 'ի Մոսկուա Լազարեանց ճեմարանի զառանձին Բաշխ 'ի պէտս դաստիարակութեան Հայազգի մանկանց յեկեղեցականաց՝ առաջարկեաց Օգոստափառ կայսերն 'ի հաստատութիւն. և թէ՝ 'ի վերայ այնր առաջարկութեան 'ի Ս. Փեթերբուրգ քաղաքի 'ի 13 Յունուարի նորին կայսերական Մեծութիւնն ինքնաձեռագիր գրեալ է „Իրաւորել": Զայսմ հրամանէ նորին կայսերական Մեծութեան կառավարիչն նախարարութեան ներքին Գործոց ծանուցանէ կառավարող Սինկղիտոսին՝ առաջի առնելով զընագիրն յիշատակեալ կանոնաց զԲարձրագոյն հաստատեալ 'ի 31 Յունուարի յաղագս սահմանելոյ 'ի Լազարեանց ճեմարանին Արևելեան լեզուաց որ 'ի Մոսկով՝ զառանձին Բաշխ 'ի պէտս դաստիարակութեան Հայազգի մանկանց յեկեղեցականաց, և խնդրէ՝ զի ըստ այնմ հրամայեսցէ որոց անկաւոր իցէ: Հրամայեցին, զյիշատակեալ կանոնս յաղագս հաստատելոյ 'ի Լազարեանց ճեմարանի Արևելեան լեզուաց որ 'ի Մոսկով՝ զառանձին Բաշխ 'ի պէտս դաստիարակութեան Հայազգի մանկանց յեկեղեցականաց, տպագրեալ զհարկաւոր թիւ օրինակաց՝ առաքել հրովարտակաւ վասն հրատարակութեան 'ի նահանգական կառավարութիւնս, իսկ վասն տեղեկութեան 'ի դատաստանական Ատեանս՝ առ նախարարս, առ Զինուորական Գեներալ Գուբեռնատորս՝ որք կառավարեն նաև զքաղաքական պաշտամունս, և առ Գեներալ Գուբեռնատորս. իսկ 'ի Սրբազան կառավարիչ Սինհոդոսն և յամենայն Բաշխս կառավարող Սինկղիտոսի և յընդհանուր ժողովս նոցին հաղորդել ծանօթութեամբ, եւ և տպագրել զայնս յերկրորդմասին հաւաքման հրովարտակաց՝ որ 'ի լոյս ընծայի 'ի կառավարող Սինկղիտոսէն: 'Ի 4 Մարտի 1841 ամի:

Ըստ Բարձրագոյն Հրամանի.

Յաղագս հրապարակելոյ զԲարձրագոյն հաստատեալ կանոնս, որ վասն առանձին Բաշխի յեկեղեցականաց 'ի Լազարեան ճեմարանի՝ որ 'ի Մոսկով:

Յառաջին Բաշխումն:

Կանոնք վասն հաստատելոյ ՚ի Մոսկուա Լազարեանց Ճեմարանի Արևելեան լեզուաց՝ առանձին բաժին ՚ի սոյն կրթութեան հայազգի մանկանց յեկեղեցական վիճակս:

Բնագիր սորին ինքնաձեռագիր ստորագրեալ է ՚ի Նորին Կայսերական Մեծութենէ այսպէս.

„Ածել ՚ի կատար„:

՚Ի Ս. Փեթերբուրգ. ՚ի 31 Յունվարի 1841 ամ.

1. Առ ՚ի ձեռս բերելոյ ընդարձակն Տէրութեան ՚ի բարւոքել զվիճակ եկեղեցւոյն Հայոց և ՚ի կատարելագործել զեկեղեցականս նորին, հաստատի ՚ի Լազարեանց Ճեմարանի Արևելեան լեզուաց որ ՚ի Մոսկուա՝ առանձին բաժին, կարգեալ յառկայէս վասն պատրաստելոյ զմանկունս յեկեղեցականաց Հայոց դաւանութեան՝ առ ՚ի մտանել կամ ՚ի կոչումն եկեղեցական, կամ ՚ի պաշտօն վարժապետութեան ՚ի կղերիկոսական Դպրոցս Թեմական եպիսկոպոսաց, և կամ ՚ի ծառայութիւն յԷջմիածնի Սինհոդոսն Լուսաւորչական Հայոց, յԵպիսկոպոսական և ՚ի Քահանայական Ատեանս: Թիւ աշակերտաց յայսմ բաժնի՝ սահմանի լինել ՚ի 15էն ց20:

2. Վասն աշակերտաց՝ որք ըստ նշանակելոյ կառավարութեան Ճեմարանի ընծայեն զանձինս ՚ի կոչումն եկեղեցական, բաց յառարկայից եղելոց ՚ի կարգադրութեան Ճեմարանի, կարգին և առանձին դասաւորութիւնք:

3. Դասաւորութիւնքս այսորիկ բովանդակեն յինքեանս զՀաւատաճառ Աստուածաբանութիւն համաձայն կանոնաց եկեղեցւոյ Լուսաւորչական Հայոց, զՄեկնութիւն սուրբ Գրոց, զԲացատրութիւն Պատարագի, և զեկեղեցական Պատմութիւն: Բաց յայսցանէ, բացատրին նոցա պարտաւորութիւնք Ճշմարիտ հովուի եկեղեցւոյ առ աստիճան իւր, առ Տէրութիւնն, և առ մարդիկ առ հասարակ:

4. Ամենայն կանոնք Ճեմարանին ՚ի սակս ուսուցանելոյ զլեզուն Ռուսաց՝ յարաբերին նոյնպէս և առ այս բաժին: Աշակերտաց Ճեմարանին՝ որք յանձն առնուն զկոչումն եկեղեցական, պարտաւորութիւն ՚ի վերայ դնի՝ առաջի առնել մե-

ծառայից զվկայութիւն յաղագս գիտելոյ ըստ բաւականին զլեզուն Ռուսաց։

5 Ամենայն աշակերտք յիշատակելոյ Բաշխի, զկնի աւարտելոյ զըն-թացն ուսմանց, ըստ բացորոշելոյ կառավարութեան ճեմարանին՝ հայելով 'ի նոցուն յանձնական հակամիտութիւնս, և համաձայն ՟ա յօդուածոյ կա-նոնացս՝ ընդունին ոմանք զկոչումն եկեղեցական, և այլք զայն պաշտամունս որոց վասն պատրաստեալ եղեն։ Իսկ զայնոսիկ յաշակերտացս, որք ըստ նկատման կառավարութեան ճեմարանի՝ առաւել ընդունակք երեւին, կարէ կառավարութիւնն պարտաւորել, զի նոքա նախ քան զտանձնել իւրեանց զնախանշանակեալ պաշտամունս՝ 'ի ցոյց երախտագիտութեան առ ճեմա-րանն՝ յորում կրթեցանն, ծառայեսցեն 'ի նմա զամս վեց պաշտամամբք վարժապետի և վերակացուի։

6. Որ 'ի ժամանել 'ի նպատակն՝ որոյ վասն հաստատի Նոր Բաշխս այս, Լուսաւորչադաւան եկեղեցիք երկոցունց մայրաքաղաքաց՝ և Լազարեանց ճեմարանն որ 'ի Մոսկուա՝ կցորդին ընդ միով կառավարութեամբ ըստ տնտեսական մասին։

7. Կառավարութիւն ստացուածոց եկեղեցեացն Հայոց յերկոսին մայ-րաքաղաքս՝ և Լազարեանց ճեմարանին որ 'ի Մոսկուա՝ յանձնեալ լինի առանձին Հոգաբարձուի, որ իբրև Գլխաւոր Կառավարիչ տնօրինէ զամե-նայն գործս առ այնս վերաբերեալս։ Զնմանէ կախին անմիջապէս կարգաւո-րութիւնք ամենայն հասից և ծախուց դրամոց առ հասարակ, որպէս և բոլոր տնտեսական մասն։ Նոյնպէս նմա անկանի ընտրել վասն եկեղեցեաց երկուց մայրաքաղաքաց զքահանայս և զկղերս՝ զկնի նախաղեկոյց լինելոյ զայնմանէ Թեմակալ Առաջնորդին Նախիջևանայ և Բեսսարաբիոյ։

8. Վասն օգնականութեան Հոգաբարձուի 'ի կատարումն պարտաւո-րութեանց նորա, 'ի միջոյ հայազգի ժողովրդոց Ս. Փեթերբուրգայ և Մոս-կուայ ընտրեալ լինին և հաստատին 'ի Հոգաբարձուէն վասն երից ամաց երկու անձինք, որք անուամբ Երեցփոխանի՝ հոգ տանին ըստ նշանակութեան Հոգաբարձուին զամենայն ներկայ գործոց՝ համաձայն կանոնաց սահմանելոց յ՟Թ գլուխն Կարգադրութեան Բարձրագոյնս հաստատելոյ յաղագս կառա-վարութեան գործոց Լուսաւորչադաւան եկեղեցւոյ որ 'ի Ռուսաստան, այսու և եթ տարբերութեամբ՝ զի կառավարութիւնն եկեղեցեաց երկոցունց մայ-րաքաղաքաց՝ ըստ 7, երորդ յօդուածոյ այսց կանոնաց՝ կախեալ մնայ ան-միջապէս զՀոգաբարձուէն, որում գործակից լինին Երեցփոխանք։

9. Ընտրեալ Երեցփոխանն կարէ ըստ յօժարութեան իւրոյ հաստա-տութեամբ Հոգաբարձուին մնալ 'ի պաշտամանս յայսմիկ առաւել կամ սա-կաւ քան զժամանակն որոշեալ 'ի նախընթաց 8, երորդ յօդուածի։

10. Երեցփոխանք 'ի լրանալ իւրաքանչիւր ամի՝ լիակատար համարս տան Հոգաբարձուի զգործոց իւրեանց 'ի մասին կառավարութեան և յառ-

կապէս զգանձուց միջնալ եկեղեցեաց։ Եւ նա զստացեալսն 'ի նոցանէ զհաշիւսն տաքէ 'ի քննութիւն յԵպիսկոպոսական Ատեանն Լուսաւորչական Հայոց Նախիջեւանայ և Բեսսարաբիոյ։

11. Յիւրաքանչիւր մայրաքաղաքի ունի լինել երէցփոխան մի. սակայն կոչումն այս չտայ նմա իրաւունս 'ի բաց կալ 'ի քաղաքական՝ կամ յորոց և իցէ հասարակական ծառայութեանց ըստ ընտրութեան հասարակութեան։

12. Եկեղեցիք Լուսաւորչական Հայոց՝ որք 'ի Ս. Փեթերպուրկ և 'ի Մոսկուա, նոյնպէս և Ճեմարանն Արեւելեան լեզուաց հանդերձ ամենայն շինուածովք նոցին՝ ազատ են յԱրքունի և 'ի քաղաքական հարկաց, բայց ոչ և յայնց հասարակական հարկաց՝ որք դնին ոչ միայն 'ի վերայ եկեղեցեաց այլոց քրիստոնէից, այլ և 'ի վերայ եկեղեցեացն Ռուսաց, որպիսիք են՝ սալայատակ առնել զփողոցս, պահել զմաքրութիւն առաջի տան, եւն։

13. 'Ի կարեւոր դէպս ըստ գործոց եկեղեցեաց և Ճեմարանին՝ հաղորդակցի ընդ Արքունի Ատենից և ընդ պաշտօնակալ անձանց՝ Հոգաբարձուն իբրեւ գլխաւոր կառավարիչ, և կամ Խորհրդարանն Ճեմարանի։ Դատաստանական Ատեանք և պաշտօնակալ անձինք ցուցանեն ըստ այսոցիկ գործոց զօգնականութիւն ըստ օրինի։

14. Հոգաբարձուին միջնորդեալ եկեղեցեաց և Ճեմարանին տուեալ լինի իրաւունք, կշռելով զպիտոյս՝ որպէս եկեղեցեաց՝ նոյնպէս և Ճեմարանին, տնօրինել զհասսն՝ այնպէս, զի պակասութիւն միոյն լցցի միւսոյն առաւելութեամբ։

15. Յետ կցորդելոյ սովին եղանակաւ զՀայոց եկեղեցիսն Ս. Փեթերպուրկոյ և Մոսկուայ և զՃեմարանն Լազարեանց 'ի մի կառավարութիւն ըստ տնտեսական մասին, կարեւոր մասն հասից եկեղեցեացն Հայոց երկոցունց մայրաքաղաքաց՝ մանաւանդ եկեղեցեացն Ս. Փեթերպուրկոյ, ամի ամի ծախեալ լինի 'ի պէտս Բաշխին՝ որ 'ի Ճեմարանին Լազարեանց։ Այսոքիկ ծախք ցուցանին կարգաւ 'ի տարեկան հաշիւս միջնալ եկեղեցեաց և Ճեմարանին։

16. Յարգելով զմեծամեծ նուիրաբերութիւնս տոհմին Լազարեանց 'ի կառուցումն և 'ի պահպանութիւն Ճեմարանին Արեւելեան լեզուաց՝ ես և Հայկական եկեղեցեացն մայրաքաղաքաց և շինուածոցն առ նոքիմբք եղելոց, իրաւունքն ստանձնելոյ զկոչումն Հոգաբարձուի եկեղեցեաց Լուսաւորչական Հայոց յերկոսին մայրաքաղաքս՝ և Արեւելեան լեզուաց Ճեմարանին որ 'ի Մոսկուա՝ մշտնջենապէս անկանի նոյն իսկ տոհմին Լազարեանց, և անցանէ ազգէ յազգ ըստ իրաւանց անդրանկութեան։

17. 'Ի սպառել սերնդոյ Լազարեանց՝ վերջին Հոգաբարձուն ընտրէ ինքեան յաջորդ զմերձաւորագոյնն յիւրոց ազգականաց, կամ զայլ ոք 'ի

Լուսաւորչադաւան Հայոց՝ զոր համարիցի յաջողակ և արժանաւոր այնմ պաշտաման:

18. Եթէ ընտրութիւնդ այդ չունիցի տեղի 'ի սակս պատճառաց ինչ, յայնժամ Լուսաւորչադաւան բնակիչք երկոցունց մայրաքաղաքացն ընտրեն զարժանաւոր Հոգաբարձու՝ համաձայնութեամբ Թեմակալ Արքեպիսկոպոսին Հայոց Նախիջևանայ և Բեսսարաբիոյ՝ խնդրելով յառաջ քան զամենայն զհրաման Լուսաւորչադաւան Հայոց Սինոդոսին Էջմիածնի, և ապա զընտրեալն 'ի Հոգաբարձու՝ առաջարկէ գլխաւոր Կառավարութիւնն Ճեմարանի 'ի Բարձրագոյն հաստատութիւն:

19. Եթէ ընտրեալն այսու օրինակաւ 'ի Հոգաբարձութիւն՝ չունիցի զաստիճանն հինգերորդ դասակարգի, յայնժամ այս չհարէ խոչընդոտ լինել նմա առ 'ի յանձն առնուլ զկոչումն՝ զոր ընկալաւ նա ընտրութեամբ. միայն թէ մի՛ երկոքումբք աստիճանօք խոնարհ իցէ քան զաստիճանն՝ յոր կարգեալ է պաշտօնն:

20. Կանոնքս այսոքիկ՝ որք են իբր յաւելուած և բացատրութիւն նախագրեալ կարգադրութեանց, ունին պահպանիլ ճշդիւ և կատարիլ իբրու օգտակարք Լուսաւորչադաւան եկեղեցւոյ Հայոց, և անշուշտ կարեւորք նմին ըստ այժմու հանգամանացն:

Ստորագրեաց. Կառավարիչ Նախարարութեան Ներքին Գործոց,

Օժանդակ Գեներալ՝ Կոմս Սդրոգոնով:

8.

Կայսերական Շնորհակալութիւն:

Բարձրագոյն հրաման՝ յայտնեալ Կառավարող Սենատին:

Փետրուարի 17. (Ի Տ. Կառավարչէն Նախարարութեան Իրաւադատութեան): Ներգործական Պետական Խորհրդականքն և Սենեկապետք՝ Հոգաբարձուն Լազարեանց Ճեմարանի Արևելեան լեզուաց՝ Յովհաննէս Լազարեանց, և Օգնական Հոգաբարձուին Ճեմարանիս՝ Խաչատուր Լազարեանց, օգտակար համարելով կարգել 'ի յիշատակեալ Ճեմարանի զՆախակրթական Բաժին՝ ըստ ցուցակի կարգաւորութեանն առանձինն 'ի նոցանէ յօրինելոյ, նուիրեցին 'ի պահպանութիւն այսր Բաժնի՝ անուամբ հանգուցելոյն 'ի 26 Նոյեմբերի 1850 ամի 'ի մատաղ հասակի՝ Յովհաննու Խաչատրեան Լազարեանց՝ գլուխ դրամոց՝ վաթսուն հազար ռուբլի արծաթ:

Օգոստափառ կայսրն, ըստ ամենախոնարհ առաջարկութեանն մատուցելոյ զայսմանէ՝ կատարելապէս ցուցանելով զհաւանութիւն իւր որպէս 'ի կարգումն միջատակեալ Բաժնին 'ի Լազարեանց ճեմարանի, (այնու պայմանաւ՝ զի համաձայն ցանկութեան հիմնադրացն՝ անուանեսցի այն ,,Նախակրթական Բաժին մատաղահաս Յովհաննու Լազարեանց), նոյն և յընդունելութիւն դրամագլխոյն՝ վաթսուն հազար արծաթ ռուբլեաց, Բարձրագոյնս հաճեցաւ հրամայել, զայսմ նորոյ նշանէ սրտեռանդն փութոյ ներգործական պետական խորհրդականաց՝ Յովհաննու և Խաչատրոյ Լազարեանց՝ յաղագս օգտի ճեմարանին, յայտնել նոցա զշնորհակալութիւն Նորին կայսերական Մեծութեան։

Կառավարիչն նախարարութեան Իրաւադատութեան, զԲարձրագոյն հրամանս զայս՝ որ ընկալաւ նմա 'ի Տ. Օժանդակ Զօրապետէն 'ի կոմսէն Օռլովայ, առաջարկեաց կառավարող Մինկլիտոսին, յաւելլով՝ թէ Նորին կայսերական Մեծութիւնն՝ յետ ընթեռնլոյ զմատուցեալըն 'ի Լազարեանց և զկցեալն ընդ սմին զցուցակ կարգաւորութեան վասն կարգելոյ 'ի Լազարեանց ճեմարանի զՆախակրթական Բաժին, Բարձրագոյնս հաճեցաւ հաստատել զսոյն զայս ցուցակ։

Ցուցակ կարգաւորութեան յաղագս Նախակրթական Բաժնի՝ որ առնի կարգել 'ի Լազարեանց ճեմարանի Արեւելեան լեզուաց։

—

Օգոստափառ կայսրն հաճեցաւ ընթեռնուլ

—

'Ի 10 Փետրուարի 1851 ամի։

ա. Առ 'ի պատրաստելոյ զմանկունս՝ որք ոչ ունին զկարեւորն հմտութիւն՝ առ 'ի մտանել 'ի Լազարեանց ճեմարանն Արեւելեան լեզուաց, կարգի 'ի նմա առանձին Նախակրթական Բաժին։

բ. Բաժինս այս պահպանի տոկոսօք դրամագլխոյն նուիրելոյ 'ի ներգործական պետական խորհրդականաց և Սենեկապետաց Դրան Նորին կայսերական Մեծութեան՝ 'ի Յովհաննէ և 'ի Խաչատրոյ Լազարեանց, և յամուսնոյ վերջնոյս 'ի Կատարինեայ Լազարեանց, անուամբ հանգուցելոյն 'ի մատաղ հասակի 'ի 26 Նոյեմբերի 1850 ամի՝ Յովհաննու Խաչատրեան Լազարեանց։ Բաժինն որ ունի կարգիլ 'ի միջատակ նորա՝ անուանի ,,Նախակրթական Բաժին մատաղահաս Յովհաննու Լազարեանց''։

Գ. Բաժինս այս ենթարկի իշխանութեան ճեմարանին Լազարեանց, և կառավարի միօրինակ ըստ կանոնաց նորին:

Դ. Թիւ աշակերտաց սահմանի լինել 14: Յաշակերտաց դասս ընտրին որդիք աղքատագոյն ծնողաց 'ի Հայոց, առաւելապէս որբք՝ որք չիցեն հասակաւ փոքրագոյնք քան զութամենիս:

Ե. 'Ի Նախակրթական Բաժինս յայս կարեն ընկալեալ լինել նաև հասութատուք: Վասն իւրաքանչիւր հասութատու աշակերտի վճարի ամի ամի 'ի կառավարութիւնն ճեմարանի երկերիւր (200) ռուբլի արծաթ, և առ մի նուագ վասն նախնական ծախուց 'ի մտանելն 'ի Բաժինն՝ քսան և հինգ (25) ռուբլի արծաթ:

Զ. Առարկայք ուսմանց յայսմ Բաժնի են՝ ընթերցումն և գրչութիւն 'ի լեզուս Հայոց և Ռուսաց, սկզբունք Կրօնական ուսմանց, և առաջին կանոնք Թուաբանութեան:

Է. Ուսումն 'ի սմին Բաժնի՝ տևէ 'ի միոյ ամէ մինչ ցերկուս:

Ը. 'Ի կատարել 'ի Նախակրթական Բաժնի զպաշտամունս Վարժապետաց և Վերակացուաց՝ կարգին ըստ նշանակելոյ Հոգաբարձուի՝ այնոքիկ յաշակերտաց աւարտողաց զընթացս ուսմանց 'ի Լազարեանց ճեմարանի կամ 'ի Համալսարանի, որք ըստ զօրութեան 70 երորդ ծանօթութեան կանոնադրութեանց ճեմարանին՝ պարտաւոր են ծառայել 'ի նմա յընթացս 6 ամաց: Ուսուցիչք Նախակրթական Բաժնի՝ 'ի պաշտօնական առանձնաշնորհութիւնս հաւասարին կրտսեր վարժապետաց ճեմարանին. իսկ Վերակացուք (եթէ չկատարիցեն ընդ նմին եւ զպաշտօն ուսուցչի)՝ Վերակացուաց ճեմարանի: Ռոճիկ Ուսուցչաց և Վերակացուաց Նախակրթական Բաժնի նշանակեալ լինի 'ի Հոգաբարձուէն՝ համեմատ վաստակոց նոցա և ջերմեռանդութեան:

Թ. 'Ի Նախարկլթական Բաժնէն՝ աշակերտք զկնի հարցաքննութեան փոխադրին 'ի պարապոյ տեղիս 'ի թիւ Լազարեան և Եկեղեցական աշակերտաց ճեմարանին. իսկ որք չկարիցեն ցուցանել ինչ յառաջադիմութիւն յընթացս միոյ ամի՝ 'ի պատճառս անընդունակութեան կամ հեղգութեան, նոյնպէս և վատաբարոյ երևեալքն, արտաքսին 'ի Բաժնէ անտի:

Ժ. Առաջադրի՝ զմանրամասն հանգամանս կառավարութեան և կարգաց Նախակրթական Բաժնի որոշել յառանձին կանոնս՝ ըստ նկատման Հոգաբարձուին:

9.

Հրաման Զինուորական Ընդհանուր Նահանգապետին Մոսկուայ, տուեալ Պետական Խորհրդարանին Մոսկուայ 'ի 10 Մայիսի 1829 ամի ընդ համարով 1769, յաղագս ազատ կացուցանելոյ շինուածոյն 'ի քաղաքական հարկատուութենէ։

Պատուիրեմ քաղաքական խորհրդարանին՝ զանվճար մնացեալ դրամն 'ի սակս 1826, 1827, 1828 ամաց կիսատոկոսի հաւաքմանն, հանդերձ տուգանօքն առ այն յաւելլովք՝ զորս չև ևս է վճարեալ տունն ուսումնարանին Հայոց, 'ի բաց հանել 'ի հաշուէցուցակէն։ Եւ որովհետև ըստ չորրորդ տնահամարոյ 11 յօդուածոյ Սահմանադրութեանն Բարձրագոյնս հաստատելոյ 'ի 13 Ապրիլի 1823 ամի, ամենայն աքքունական տունք և հրապարակական շինուածք ազատ են 'ի վճարելոյ զգումարն գնահատութեան իւրեանց։ Եւ զի Հայկական ուսումնարանս այս՝ ոչ առանձնականի ուրուք է բնակարան, այլ է շինուած ուսումնական ենթարկեալ ընդ Արքունական տեսչութեամբ, յայն սակս (պատուիրեմ) և զտունս զայս ազատ թողուլ 'ի քաղաքական հարկատուութենէ յապա ժամանակի"։

Յայտարար Նամակ Կառավարչին Երրորդ Բաժնի ատենին Գիւանատան կայսեր՝ Ներգործական Պետական Խորհրդականի Փոն-Փոկայ, առ Հոգաբարձուն Հայկական Ճեմարանին Լազարեանց՝ Պետական Խորհրդականն Յովհաննէս Յովակիմեան Լազարեանց 'ի 17են Մայիսի 1829 ամի։

Ստանալով զյայտարար նամակ Տ. Զինուորական Ընդհանուր Նահանգապետին Մոսկուայ գրեալ յանուն Աղէքսանդրի Խրիստոֆորովիչի *), յորում գրեալ է, թէ „նա առաքեալ է զհրամանագիր 'ի քաղաքական խորհրդարանն Մոսկուայ՝ յաղագս ազատ թողլոյ 'ի քաղաքական հարկաց զուսումնարանն Հայոց որ 'ի Մոսկուա, պարտ ինձ համարիմ, Ողորմած Տէր, ազդ առնել Ձեզ զայսմանէ անյապաղ։

*) Տե՛ս՝ Օժանդակ Զօրագլխականին Պէնկէնտորֆայ։

10.

Յարաբերական նամակ Նախարարին Ներքին Գործոց առ Զինուորական Գեներալ Նահանգապետն Մոսկուայ, 'ի 4էն Յունիսի 1829 ամի, ընդ համարով 1657, յաղագս Թոյլ տալոյ Պետական խորհրդականին Լազարեանց բանալ տպագրատուն 'ի Մոսկուա:

Հաստատեալ 'ի բանս Ձերոյին Պայծառափայլութեան գրեալս առ իս 'ի 28էն ներկայ ամսոյ Մայիսի ընդ համարով 68, յաղագս բարեյոյս գոլոյ Պետական խորհրդականին Լազարեանց 'ի պահպանել 'ի Մոսկուա ըզտպագրատունն՝ զոր նա ընդ եղբարց իւրոց գնեալ է 'ի պէտս Հայկական ճեմարանին որ 'ի Մոսկուա, նաև հայելով 'ի սահմանադրութիւն Ժողովոյն Նախարարաց՝ 'ի հաստատեալն 'ի Նորին Կայսերական Մեծութենէ 'ի 5 փետրուարի այսր ամի, պատիւ համարիմ առաջի առնել Ձեզ՝ Ողորմած Տէր՝ զի թոյլ տաջիք յիշատակեալ Պետական խորհրդականին Լազարեանց բանալ զտպագրատուն 'ի Մոսկուա՝ տալով Նմա վասն այսր զվկայագիր, և պարտաւորելով զնա ձեռագրով՝ առ ճշդիւ և լիակատար պահպանութիւն օրինաց՝ կանոնաց և կարգաց Տէրութեան արդէն սահմանելոց և յապագայն սահմանելեաց 'ի սակս գործարանաց գրատպութեան և վիմագրութեան: Իսկ զժամանակէ բանալոյ նոցա զտպարանն՝ խնդրեմ խոնարհաբար 'ի Ձերմէ Պայծառափայլութենէ տալ ինձ տեղեկութիւն:

11.

Հրամանագիր Օժանդակ Գեներալին Կոմսին Պէնկէնտորֆայ 'ի Կառավարութիւնն Լազարեան Ճեմարանի Արևելեան լեզուաց, 'ի 18էն Հոկտեմբերի 1834 ամի, ընդ համարով 391:

'Ի յայց ելանել իմ յոլով անգամ Լազարեան ճեմարանիդ Արևելեան լեզուաց՝ ես ինքնին ծանօթ եղէ հաւաստեաւ գերազանց հանգամանաց այդր ճեմարանի յամենայն մասունս: Առանձին իմն օրինակաւ ուշադիր լինելով 'ի մաքուրն բարոյականութիւն, համաձայն առաջարկութեան Հոգաբարձուի և Կառավարչի ճեմարանիդ՝ 'ի վարձատրութիւն աշակերտաց գերազանցելոց յուսմունս գիտութեանց՝ առաջի առնեմ Կառավարութեան ճեմարանիդ՝ յօձիս զգեստուց (մունտիրաց) տալոյ աշակերտաց այնպէս իսկ

հանդիսացելոց կարել այժմէն ղոսկենկար օղակս (петлицы)։ Այդօրինակ յատկութիւն անշուշտ 'ի քաջալերութիւն եղիցի այլոց աշակերտաց։

12.

Յայտարար նամակ Նախարարին Ազգային Լուսաւորութեան առ Օժանդակ-Գեներալ Կոմսն Պենկենդորֆ 'ի 17 Օգոստոսի 1834 ամի, ընդ համարով 8098, յաղագս մուծանելոյ զՃեմարանն Լազարեանց յերկրորդ դասակարգ։

'Ի վարկածս Արքունի Խորհրդարանին հաստատելս 'ի կայսերէ 'ի 25 Յունիսի այսր ամի, բաց յայլոց սահմանադրեալ է և այս՝ թէ, Նախարարաց և կառավարչաց առանձին բաժնից առաջադրեսցի խորհրդակցութեամբ միմեանց ըստ տեղեկութեանցն զորս ունին՝ յօրինել և մատուցանել յԱրքունի Խորհրդարանն զցուցակ վերին և միջին դասակարգի ուսումնարանաց՝ ոչ միայն Հասարակաց Քաղաքայնոց, և 'ի սակս առանձին ինչ տեսակի ծառայութեան սահմանելոց, այլ և եղելոցն յառաջին և յերկրորդ դասակարգի՝ Զինուորականացն և Ծովայնոց. որպէս զի այսու օրինակաւ որոշեսցի ճշդիւ՝ թէ որպիսի ուսումնարանք 'ի Տէրութեան համարեսցին Բարձրագոյնք, և որպիսիք՝ միջակայինք։

Հետեւելով այսմ՝ ունիմ պատիւ առաքել առ Ձերդ Պայծառութիւն զցուցակն վերին և միջին դասակարգի ուսումնարանաց եղելոց ընդ իշխանութեամբ Նախարարին Ազգային Լուսաւորութեան, և խոնարհաբար խնդրեմ պատուել զիս ծանուցմամբ՝ թէ չհամարիք արդեօք իրաւացի՝ զԼազարեանց Ճեմարանն Մոսկուայ զեղեալն ընդ տեսչութեամբ Ձերով՝ մուծանել յերկրորդ դասակարգ *)։

*) Ծանօթ. Առ այս նամակ՝ կոմսն Պենկենդորֆ արար պատասխանի՝ յայտնելով 'ի նմա զօգուտն պտղաբերեալ 'ի սոյն Ճեմարանէ, և զարժանաւորութիւնն մտանելոյ յերկրորդ դասակարգ՝ առ առաւել ևս պայծառանալոյ։ Նկատմամբ յայսոսիկ ազդարարութիւնս՝ ընդ ձեռն Նախարարին Լուսաւորութեան մատուցաւ յԱրքունի Խորհրդարանն, և Բարձրագոյն Հրովարտակաւ հաստատեալ եղև 'ի 25 Յունիսի 1835 ամի ցուցակն ուսումնարանաց, յորում Ճեմարանս այս զետեղեցաւ յերկրորդ դասակարգի՝ հաւասարապատիւ ընդ Գիմնազիայից և Զինուորական վարժարանաց։

Հրովարտակ Նորին Կայսերական Մեծութեան ինքնակալին ամենայն Ռուսաց, տուեալ Համալսարանին Մոսկուայ ՚ի կառավարող Սինկղիտոսէն։

Կառավարող Սինկղիտոսս ընկալեալ զձեռագիր Հրովարտակ Նորին Կայսերական Մեծութեան, զտուեալն կառավարող Սինկղիտոսիս ՚ի 20 Նոյեմբերի, զոյգ ընդ ցուցակաց հաստատելոց ՚ի նմանէ ՚ի նոյն աւուր որոց առաջինն է ցուցակ պաշտօնատարութեանց քաղաքական ծառայութեանց ըստ կարգի՝ ՚ի չորեքտասաներորդ աստիճանէ ցհինգերորդն. իսկ երկրորդն է ցուցակ վերին և միջին ուսումնարանաց ըստ կարգին հաստատելոյ սահմանադրութեամբն՝ որ եղև ՚ի 25 Յունիսի 1834 ամի. Հրամայեաց, զյիշատակեալ Հրովարտակն Նորին Կայսերական Մեծութեան, և զցուցակն հաստատեալս ՚ի նմանէ՝ տպագրել այնչափ թուով՝ որչափ հարկաւոր իցէ, և առաքել ՚ի պէտս հասարակածանօթ հրապարակութեան և կատարման յամենայն նահանգս և ՚ի գաւառական կառավարութիւնս, ես և ՚ի պէտս ծանօթութեան և պարտուպատշաճ կատարման՝ առաքել առ Նախարարս, առ Զինուորական ընդհանուր Նահանգապետս, առ Քաղաքապետս, և առ Առենակալս դատարանաց հանդերձ Հրովարտակօք. իսկ Սրբազան կառավարող Սինհոդոսին. և ամենայն բաշխուածոց Նորին և հասարակական ժողովոյն՝ հաղորդել զոյգ ընդ ծանօթութեան։ Հետևելով այսմ ամենայնի՝ յիշատակեալ Հրովարտակն և ցուցակն եդեալ լինի ընդ սմին միով պատճենիւ։ ՚Ի 9 Դեկտեմբերի 1835 ամի *)։

Հրովարտակ ՚ի կառավարող Սինկղիտոսէն։

Ըստ Հրովարտակի Նորին Կայսերական Մեծութեան՝ կառավարող Սինկղիտոսս լուեալ զառաջադրութիւն Տ. Նախարարին Իրաւանց՝ Ներքին Խորհրդականի և Ասպետի Դմիտրեայ Վասիլեվիչ Դաշկովայ. որ և առաջարկեաց ընդ սմին զառաքեալն առ նա ՚ի Գլխաւոր Աջակցէ Կայսեր՝ ՚ի Կոմսէն Պենկենտորֆայ զօրինակ քաղուածոյ յօրագրութեանց Ժողովոյն Տեառց Նախարարաց յ3 և ՚ի 13 անցեալ Օգոստոսի. յորում պարունակի Բարձրագոյն հաստատեալ սահմանադրութիւն Ժողովոյն վասն պարգևելոյ Լազարեանց Հայկական ճեմարանին Արևելեան լեզուաց որ ՚ի Մոսկուա՝ զիրաւունս և զարտօնութիւնս հաւասար ուսումնարանաց երկրորդ դասակարգի։ Հրամայեցաք՝ տպագրեալ որչափ հարկաւոր իցէ՝ զվերոյիշեալ սահմանա-

*) Ծանօթ. ՚Ի ցուցակի անդ ուսումնարանաց երկրորդ դասակարգի նշանակեալ կան քսան և վեց ուսումնարանք, որոց հինգերորդն է Արևելեան լեզուաց ճեմարանն Լազարեանց։

թութիւն Ժողովոյն Տեարց Նախարարաց, առաքել վասն պարտուպատշաճ կատարման առ Տ. Նախարարն Ազգային Լուսաւորութեան, իսկ վասն տեղեկութեան՝ յամենայն կառավարութիւնս նահանգաց և գաւառաց, 'ի Դիւանատունս զօրաց և ժիրաւարանս, առ այլ Նախարարս, առ Զինուորական ընդհանուր Նահանգապետս, առ Զինուորական Նահանգապետս՝ որոց յանձն է և քաղաքական կառավարութիւն, և առ Քաղաքապետս, հանդերձ հրամանագրովք: Նոյնպէս և 'ի Սրբազան Սինոդոսն, յամենայն բաժինս կառավարող Սենեկլիտոսի և 'ի հասարակական ժողովս նորին հաղորդել զայս՝ ազդարարութեամբ, և ժիրաւարանս Ազնուականաց (Герольдія) ծանուցմամբ, և հրատարակել տպագրութեամբ 'ի յայտարարութիւնս Սենեկլիտոսի (Сенатская Вѣдомость): Որոյ վասն դնի ընդ այսմ օրինակ մի: 'Ի 21 Հոկտեմբերի 1837 ամի (Յառաջնում բաժնի):

13.

Քաղուած յօրագրութեանց Ժողովոյն Նախարարաց յ3 և յ31 ամսոյն Օգոստոսի 1837 ամի ընդ համարով 1380:

Ընթերցեալ եղև տոմսակն Գլխաւոր Աջակցի կայսեր՝ կոմսին Բենկենտորֆայ 'ի 28էն Յուլիսի ընդ համարով 3344, վասն պարգևելոյ Լազարեանց Հայկական Ճեմարանին Արևելեան լեզուաց որ 'ի Մոսկուա՝ զիրաւունս և զարտօնութիւնս Արքունի և առանձնական ուսումնարանաց երկրորդ դասակարգի. ընթերցեալ եղև նոյնպէս և յայտարար գրութիւն Նորա առ կառավարիչն գործոց Ժողովոյն Նախարարաց 'ի 24էն Յունիսի ընդ համարով 3710, սակս նոյն իսկ առարկայի:

Ժողովս յետ քննելոյ զգործս զայս՝ 'ի միոյ կողմանէ եգիտ, թէ Արևելեան Ճեմարանն Լազարեանց՝ 'ի քսան ամաց հետէ և աւելի ևս յարատևէ առանց իրիք նպաստից Տէրութեան. և 'ի միւս կողմանէ՝ թէ ոչ միայն բազում առանձնական դպրոցք վայելեն արդէն զիրաւունս մեծամեծս քան զայնս՝ որք խնդրին այժմ 'ի Լազարեանց Ճեմարանէ, այլ և առանին ուսուցիչք անգամ ընկալեալ են զիրաւունս Արքունական սպասաւորութեան և յառաջանալոյ յաստիճանս՝ ըստ սահմանադրութեանն եղելոյ 'ի 1 Յուլիսի 1834 ամի: Այսր աղագաւ Ժողովս չգտանելով արգելանս և ոչ մի՛ առ սահմանելոյ ինչ ինչ իրաւունս նաև պաշտօնակալաց Լազարեանց Ճեմարանին, համաձայնելով ընդ կարծեաց Գլխաւոր Իշխանապետի նորին սահմանեաց,

Ա. Զի անձինք՝ որք յԱրևելեան լեզուաց Ճեմարանին Լազարեանց

'ի Մոսկուա սոանձնեն զպաշտամունս 'ի ստորև նշանակեալս, համարեսցին 'ի ներգործական յԱրքունի ծառայութեան:

Բ. Պաշտամունքս այսոքիկ ըստ կարգի Քաղաքական ծառայութեանց սահմանեսցին այսպէս: Հոգաբարձուն Ճեմարանի համարեսցի 'ի հինգերորդ դասակարգի, Կառավարիչն՝ յեօթներորդ դասակարգի, Վերատեսուչն Դասատանց՝ յութերորդ դասակարգի, Աւագ ուսուցիչք բանասիրական գիտութեանց և Արևելեան լեզուաց՝ յիններորդ դասակարգի, Կրտսեր ուսուցիչք Քերականութեան և Եւրոպական այլազգի լեզուաց՝ 'ի տասներորդ դասակարգի, Ուսուցիչք Նկարչութեան և Վայելչագրութեան, ևս և Վերակացուք սենեկաց՝ յերկոտասաներորդ դասակարգի, և Քարտուղարն և Տնտեսն՝ 'ի չորեքտասաներորդ դասակարգի:

Գ. Ըմենքեան՝ որք գտանին յայսոսիկ պարտաւորութիւնս, ունիցին իրաւունս ամբառնալոյ յեւ Բարձրագոյն աստիճանս՝ ըստ սահմանադրութեանն եղելոյ 'ի 25 Յունիսի 1834 ամի, և ըստ յաւելուածոյն 'ի նոյն յարակցելոյ, վերածելով յայն դասակարգս՝ առ որս իւրաքանչիւր ոք 'ի նոցանէ պատկանի ըստ իւրում ուսումնական վկայագրոյ:

Զկնի այսր, յուսուցիչս նշանակեալ Ճեմարանին մի՛ տարածեսցին այն առանձնաշնորհութիւնք, որք պարգևեցան առանձին սահմանադրութեամբք ծառայողացն 'ի ներքոյ ուսումնական տեսչութեան Նախարարին Ազգային Լուսաւորութեան:

Նարեբախտ գտաւ Ժողովն զկարգաւորութիւնս զայս մատուցանել 'ի Բարձրագոյն վճռահատութիւն Նորին կայսերական Մեծութեան, յայտ առնելով՝ թէ Կառավարիչն Նախարարութեան Ազգային Լուսաւորութեան կայ միայ յիւր առանձնական կարծիս զայսմ՝ առարկայէ բացատրելոյ 'ի պատասխանագրութիւնս Ներքին Խորհրդականին Ուվարովայ առ Գլխաւոր Աջակիցն կայսեր՝ կոմսն Պենկենտորֆ:

Զայսմ սահմանադրութեան Ժողովոյս զհետ եկն իւրաձեռագիր հրաման Նորին կայսերական Մեծութեան՝ այսպէս „Եղիցի ըստ խորհրդեան Ժողովոյն“:

Ժողովս 'ի գումարման իւրում յ31 Օգոստոսի բացորոշեաց՝ քաղուածովն յՕրագրէ հաղորդել զայս ամենայն Գլխաւոր Աջակցի կոմսին Պենկենտորֆայ առ 'ի կատարումն:

(Ի բնագրին ստորագրեալ է)

Կառավարիչ գործոց Ժողովոյն՝ Քարտուղար Տէրութեան, Պոխբին:

Հրամանաքիւ Օժանդակ Գեներալին կոմսին Բենկենդորֆայ յ30 Սեպտեմբերի 1837 ամի, ընդ համարաւ 1157, վասն պարգևելոյ Հայկական Լազարեան ճեմարանին Արևելեան լեզուաց՝ զիրաւունս և զառանձնաշնորհութիւնս հաւասարս այլոց ուսումնարանաց երկրորդ դասակարգի։

'Ի Խորհրդարանն Լազարեան ճեմարանին Արևելեան լեզուաց։

Ըստ Բարձրագոյն (կայսերական) հրամանի արարի ես առաջարկութիւն 'ի ժողովն նախարարաց յաղագս Հայկական Լազարեան ճեմարանի Արևելեան լեզուաց՝ որ 'ի Մոսկուա։ Այժմ կառավարիչն գործոց ժողովոյն Քարտուղարն Տէրութեան Պախտին առաքեաց առ իս 'ի գործադրութիւն զքաղուածն Օրագրութեան ժողովոյն յ3էն և յ31էն Օգոստոսի 1837 ամի, յորում պարունակի սահմանադրութիւնն հաստատեալ Բարձրագոյն հրամանաւ (կայսեր) վասն պարգևելոյ Հայկական Լազարեան ճեմարանին Արևելեան լեզուաց՝ զիրաւունս և զառանձնաշնորհութիւնս հաւասարս այլոց ուսումնարանաց երկրորդ դասակարգի։

Առաքելով առ Նորին Գերազանցութիւնն Հոգաբարձուն ճեմարանի՝ առ Պետական Խորհրդականն և Ասպետն Յովհաննէս Յովակիմեան Լազարեանց, և 'ի Խորհրդարանն ճեմարանի զյիշատակեալ բնագիրն քաղուածոյն ընդ համարով 1380, պատուիրեմ՝ 'ի սակս անփոփոխ և ըստ արժանւոյն կատարելոյ զսահմանադրութիւն ժողովոյն նախարարաց՝ զհաստատեալն Բարձրագոյն հրամանաւ, առնել զամենայն զկարևոր կարգադրութիւնս, նոյնպէս և պահպանել ճշդիւ և արդիւնաւորել զայն ամենայն կանոնս՝ որք օրինօք և հրովարտակօք հրամայեալք են վասն ամենայն ուսումնարանաց երկրորդ դասակարգի։

Արևելեան ճեմարանն Լազարեանց բախտաւորեալ այժմ Ամենողորմած պարգևատրութեամբ Բարձրագոյն իրաւանց և առանձնաշնորհութեանց, պարտաւորի զամենայն ճիգն հոգողութեան ուղղել առաւելապէս յայն՝ զի ճեմարանս այս պայծառեալ՝ հասցէ 'ի գերագոյն կատարելութիւն, որպէս ըստ բարոյական նոյն և ըստ ուսումնական մասին։

Յաղագս ընթացից ուսմանց և դաստիարակութեանց յիւրաքանչիւր դասատունս ճեմարանին, նոյն և յաղագս այլոց մասանց կառավարութեան զամենայն զպատշաճաւոր կարգադրութիւնն զորս պարտ իցէ յաւելուլ, կատարել որպէս հարկաւորն է ճեմարանի, և որպէս պահանջէ կառավարութիւնն։ 'Ի ժամանակին սահմանադրելոյ յառաջնմէ ըստ պատշաճի առաջի առնել Նախարարին Լուսաւորութեան զբացորոշ տեղեկութիւնս և զհամար 'ի մասին ուսմանց՝ 'ի լրումն կանոնացն և տարազուց վաղագոյն հաստատելոց։

Որդեգիրք, հասութատուք և ամենայն ուսանողք պարտաւոր են՝ 'ի սակս վայելչութեան և միակերպութեան՝ զգենուլ զնոյնատեսակ հանդերձս,

որպիսիք մուծեալ եղեն ըստ նշանակելոյ նախկին Գլխաւոր Իշխանապետին Ճեմարանի՝ Գեներալին Թնդանօթական զօրաց՝ կոմսին Արակչէյեվայ, և որպիսիք մինչև ցայժմ են ՚ի կիր. այս է, „Մունտիրն լինիցի ՚ի գոյն թխագոյն կանաչ՝ հանդերձ կարմիր ժապաւինաւ և կանգուն սեւագոյն օձիօք և գլխարկն ըստ սահմանեալ ձեւոյն՝ ՚ի գոյն հանդերձիցն: Նախադաս աշակերտք՝ գերազանցեալք ըստ վարուց և ըստ ուսմանց՝ թուով քսան, համաձայն բացորոշութեան և խորհրդարանի Ճեմարանին՝ առնուն ամի ամի ՚ի վարձ զիրաւունս կրելոյ զօսկենկար օձիս ՚ի վերայ մունտիրի ըստ այնմ կերպի՝ որ վարի մինչև ցայժմ:

Հայելով յիրաւունս այլոց ուսումնարանաց երկրորդ դասակարգի, ըստ նոցին օրինակի թոյլ տալ Հոգաբարձուի և խորհրդարանի Ճեմարանին յօրինել և ՚ի կիր առնուլ ՚ի գործս Ճեմարանի զօրինագրեալ կնիք՝ ըստ կերպի Կայսերականն դրօշմի՝ հանդերձ ուսումնական պատշաճաւոր նշանակօք և առ հասարակ զամենայն կարեւոր յօդուածս ըստ պէսպէս մասանց կառավարութեան Ճեմարանի՝ որպէս պարտ և պատշաճն իցէ՝ ածել ՚ի կատար, օրինակ ունելով զայն կանոնս՝ որք պահպանին յայլ ուսումնարանս երկրորդ դասակարգի:

Կանոնադրութիւնն Լազարեանց Ճեմարանին Արեւելեան լեզուաց տպագրեալ յամին 1830, պարտի մնալ յիւրում զօրութեան առ ՚ի գործադրութիւն ըստ մասանց ընդհանուր կառավարութեան և ամենայն կարգաց՝ համաձայն բարւոք տեսչութեան Հոգաբարձուին և խորհրդարանին Ճեմարանի:

Որպէս զկատարմանէ վերագրելոցդ, նոյնպէս և զայլազայ գործողութեանց Ճեմարանին տաջիք ինձ տեղեկութիւն յիւրում ժամանակի:

14.

Համառօտ բովանդակութիւն ՚ի քաղուածոյ օրագրութեանց Ժողովոյ Նախարարաց, յաղագս յաւելեալ երկուց ըստ Ռուսերէնոյն հաստատելոյ աստիճանաւորութեան՝ ուսուցանողաց պաշտօնէից Լազարեան Ճեմարանին Արեւելեան լեզուաց՝ որ ՚ի Մոսկուա, ՚ի 29 Մարտի և ՚ի 26 Ապրիլի 1838 ամի, ընդ համարով 784:

Ընթերցեալ եղև տոմարն Նախարարին Ազգային Լուսաւորութեան, յորում բացայայտեալ կայ եզրակացութիւն ՚ի մասին սեպհականելոյ Արեւելեան լեզուաց Ճեմարանին Լազարեանց որ ՚ի Մոսկուա՝ զայլ ազգի առանձնաշնորհութիւնս ըստ օրինակի ուսումնարանաց երկրորդ դասակարգի: Ընթերցեալ եղեն և երկու ծանօթարան գրութիւնք նորին իսկ Նախարա-

րի Ազգային Լուսաւորութեան՝ և Գլխաւոր Աջակցի կայսեր՝ կոմսին Պենկենտորֆայ վասն այսր գործոյ:

Քննողն խոսս՝ զի թէև 'ի միոյ կողմանէ անմարթ է չհամարել իրաւացի զծանօթարանութիւնն Նախարարութեան, սակայն յայլմէ կողմանէ չէ՝ մարթ չյարգել և զայն՝ թէ նուէրք հիմնադրին և ժառանգաց նորա՝ բովանդակեալք յառձեռնպատրաստ գումարս դրամոց՝ 'ի շինուածս և յայլ զանազան իրս պատկանեալս ճեմարանի, տարածանին 'ի գումար կարի նշանաւոր. թէ՝ ճեմարանն վերանալով անընդհատ 'ի կատարելութիւն և 'ի պայծառութիւն՝ յընթացս 22 ամաց՝ 'ի հիմնարկութենէ իւրմէ մինչև ցայժմ՝ պահպանեցաւ իւրովքն և եթ սեպհական արդեամբք, և յաջողեցաւ ցուցանել զօգուտն. և թէ՝ այսու պատճառաւ ոչ միայն անկասկածելի մնայ տևողութիւն նորա յապայս, այլ և ընդհակառակն պարտ է համարել, թէ ճեմարանս այս յաւէտ ընդ հպաւորագոյն տեսչութեամբ Տէրութեան՝ հետ զհետէ ունի յառաջանալ 'ի լաւագոյն վիճակ: Թէպէտ հանգամանքս այսոքիկ չտան ճեմարանին իրաւունս առնելոյ առհաւարակ զամենայն առանձնաշնորհութիւնս՝ զորս ունին Արքունի ուսումնարանք. այլ այնու ամենայնիւ անմարթ է ժխտել նմա զնմանս 'ի խնդրեալ առանձնաշնորհութեանցն, և յատկապէս զայնպիսիս՝ որք ոչ գոլով առանձինն պատշաճեալք Արքունի ուսումնարանաց, լինելոց են նշանակք ուշադրութեան Տէրութեան առ այս ճեմարան, և կարեն տալ նմա զառաւելապատիկ հնարս ժամանելոյ 'ի կատարելութիւն:

Քննողն 'ի լրումն կարգադրութեան իւրոյ Բարձրագոյնս հաստատելոյ ց31 Օգոստոսի 1837 ամի, սահմանեաց.

Ա. Թողլով զճեմարանն Լազարեան յընդհանուր տեսչութեան Նախարարութեան Ազգային Լուսաւորութեան, թոյլ տալ հաստատել 'ի նմա՝ յաղագս կառավարութեան 'ի մասին ներքին կողմանց, ուսումնականին և տնտեսականին, զառանձին Խորհրդարան, 'ի վերայ կանոնացն՝ որք ունին սահմանիլ առ այս 'ի Գլխաւոր Իշխանապետէ ճեմարանին, կարգելով ըզ Խորհրդարանս զայս՝ 'ի Հոգաբարձուէ, 'ի Կառավարչէ, 'ի Վերատեսչէ, և յամենից աւագ վարժապետաց:

Բ. Զկոչումն Հոգաբարձուի սեպհականել երիցագունին 'ի տոհմէ Լազարեանց, այլ այնու պայմանաւ՝ զի հաստատեսցի նա 'ի սմին կոչման ոչ յառաջ քան զհասանելն 'ի պատկանաւորն աստիճան. և զի յանկատար հասակի նորա՝ Հոգաբարձութիւնն ճեմարանի՝ յանձնեսցի խնամակալուին կարգելոյ 'ի վերայ նորա: Իսկ 'ի սպառել այսր սերնդոյ՝ 'ի կոչումն Հոգաբարձուի նշանակեսցի մին 'ի մերձաւորագոյն ազգականաց Լազարեանց, կամ ընտրեսցի այլ ոք յազգէն Հայոց՝ համաձայնութեամբ Ծայրագոյն Պատրիարգին Էջմիածնի և Կաթողիկոսին Հայոց, և Թեմակալ Արքեպիսկո-

պոսին սրբոյ վիճակի Հայոց՝ որում պատկանի Նահանգն Մոսկուայ: Բայց յայսպիսում դիպուածի նկատել պա՛րտ է՝ զի անձն ընտրելի առ յիշատակեալ կոչումն՝ կարիցէ ըստ աստիճանի իւրում ստանձնել զայս պաշտօն:

Գ. Զկացուցմանէ Հոգաբարձուի առաջի առնել ՚ի Բարձրագոյն Հաստատութիւն. իսկ զկարգումն կառավարչի և այլոց պաշտօնակալաց Ճեմարանին՝ յանձնել Հոգաբարձուի և Խորհրդարանի նորին՝ հաստատութեամբ Գլխաւոր Իշխանապետին:

Դ. Զգումարաց ելից և մտից սեպհականելոց Ճեմարանին ՚ի տոկոսեաց մայր գումարոյ նուիրելոյ ՚ի հիմնադրողաց և ՚ի նոցուն ժառանգաց, և յառանձին եկամտից, ՚ի լրանալ ամի՝ ընդ ձեռն Հոգաբարձուի և Խորհրդարանի տալ համարս Գլխաւոր Իշխանապետի Ճեմարանին և Նախարարին Ազգային Լուսաւորութեան:

Ե. Զբժիշկն Ճեմարանի դասել ՚ի թիւս ներգործական պաշտօնէից Տէրութեան:

Զ. Աստիճանաւորաց՝ որք ունիցին ՚ի Ճեմարանի զպաշտօն, այս է՝ Հոգաբարձուի, Կառավարչի, Վերատեսչի, վարժապետաց, բժշկի և այլոց՝ որք յիշատակին յերկրորդումն հատուածի սահմանադրութեան ժողովոյն Նախարարաց Բարձրագոյնս հաստատելոյ յ31 Օգոստոսի 1837 ամի, թոյլ տալ կրել զայն հանդերձս (մունտիր և փռաք)՝ որք յատկացեալ են աստիճանաւորաց ունողաց զնոյն պաշտօնս ՚ի Գիմնազիայս ուսումնական շրջանակին Մոսկուայ, բայց Թագաւորական՝ և ոչ գաւառական դրօշմածով ՚ի վերայ կոճակաց, հաւասարելով ՚ի մասին դասակարգութեան հանդերձից կարուածոյ՝ զՀոգաբարձուն Ճեմարանի՝ ընդ պատուաւոր Հոգաբարձուաց Գիմնազիայից. որոյ վասն ևս յանձն առնել Նախարարին Ազգային Լուսաւորութեան՝ զի հաստատեսցէ զառանձին ցուցակ: Իսկ վասն որդեգրաց՝ հասութատու աշակերտաց և ամենայն ուսանողաց՝ նշանակել զզգեստ (մունտիր) ՚ի գոյն մուգ կանաչ՝ հանդերձ կարմրագոյն վերջաւորօք, կանգուն օձեօք պարանոցի (ВОРОТНИКЪ) ՚ի գոյն սև, և դեղնագոյն կոճակօք՝ յորոց վերայ իցէ դրօշուած Թագաւորական:

Է. Զաշակերտսն Ճեմարանի՝ որք պահպանին արդեամբք հիմնադրողաց նորին, պարտաւորել, զի յետ աւարտելոյ զընթացս ուսմանց՝ ծառայեսցեն յայսմ Ճեմարանի ոչ պակաս քան զ6 ամ՝ պաշտամամբք ուսոց կամ կրտսեր վարժապետաց, սահմանելով միայն՝ զի որդեգիրքն այնոքիկ ոչ այլազգ կարասցեն կարգիլ ՚ի նշանակեալ պաշտամունս, եթէ ոչ՝ զկնի աւարտելոյ յառաջադիմութեամբ զլիակատար ընթացս ուսմանց նաև ՚ի Համալսարանի, զկնի քննութեանն առ այս սահմանելոց, և զկնի ընդունելոյ նոցա զպատկանաւորն աստիճան ուսումնականութեան:

15.

Քաղուած 'ի Տեղեկագրոյ Կոմսին Պենկենդորֆեայ, յորում մատուցանէ նա Կայսեր զհաշիւ Լազարեան Ճեմարանի ամին 1836 ամի, և զտեղեկութիւնս զհանգամանաց նորին:

Ճեմարանս այս հիմնեալ 'ի Լազարեանց տոհմէ՝ յարատևէ ցարդ զամս 21, առանց իրիք նպաստից 'ի կողմանէ Տէրութեան, և ամենայն իրաւամբք մարթի համարիլ մի յօգտակարագոյն և յարդիւնաբեր շինուածոց եղելոց 'ի կայսրութեան:

Արևելեան ճեմարանս այս իբրու կենդրոնական գլխաւոր շինուած ազգին Հայոց՝ է իբրու պարտէզ իմն, և կերպաւորէ յինքեան զսերմանս յորոց վաճառականութիւնն և քաղաքականութիւնն քաղէ զպտուղս՝ ընտանութեամբ ընդ ժողովուրդս Ասիոյ:

'Ի ճեմարանի աստ ընդունին զկրթութիւն մանկունք եկեալք 'ի նորանուաճ նահանգացն Հայաստանի և յայլ զանազան քաղաքաց Հարաւակողմանն Ռուսաստանի. այլ առաւելագոյն հաւաստիք ընդհանուր հաւատարմութեան՝ զոր ունի ճեմարանս այս 'ի Մոսկուա, մարթի համարիլ այն՝ զի յոլովք յազնուականացն Ռուսաց, և ծնողք այլոց ազգաց տան զորդիս իւրեանց յայս ճեմարան՝ նախամեծար զայն քան զայլսն համարելով: 'Ի մանկանց անտի դաստիարակելոց 'ի ճեմարանիս՝ 'ի սկզբանէ մինչև ցայժմ իբրու չորեք հարիւր անձինք մտեալ են 'ի Զինուորական և 'ի Քաղաքական ծառայութիւնս: Ոմանք յայնցանէ նուիրեալ են զինքեանս ուսումնական վիճակի. և ամենքին հանապազորդեն 'ի ծառայութեան յառանձին օգուտ Տէրութեան *):

---

*) Տես 'ի Գում. Հրովարտ. տպ. 'ի Փեթերպուրկ. յամի 1839. (յէր. 71—73):

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՔԱՂԱԾՈՅ ԲԱՆՔ ՅԱՅՆԵՒԱՅԼ ԳՐՈՒԱԾՈՅ՝ ՅՈՐՍ ՅԻՇԱՏԱԿԻՆ ԳՈՎՈՒԹԵԱՄԲ ՊԱՅԱԶԱՏՔ ԼԱԶԱՐԵԱՆ ՏՈՀՄԻ։

'Ի Լրագրէն Մոսկուայ տպելոյ յամին 1817, 'ի Փետրուարի 28. ընդ համարով 17 ։

1. „Որովհետեւ 'ի հայրենիս մեր բազմանան Աստուածահաճոյ եւ հասարակօգուտ շինուածք, եւ յաւելու թիւ նախանձաւորաց փառացն Գօլիցինաց՝ Շէրեմէթովաց՝ եւ Տեմիտովաց, սրբազան պարտաւորութիւն համարի իւրաքանչիւր ումեք՝ զամենայն զբարի գործս այնպիսեաց հրատարակել։ Ոյր աղագաւ եւ մեք քաղցրահաճոյ բաւականութեամբ փութամք հաղորդել զկարեւորն տեղեկութիւն զնորաշէն ուսումնարանէն կառուցելոյ եւ պահպանելոյ արդեամբք տոհմին Լազարեանց 'ի Մոսկուա՝ 'ի պէտս կրթութեան եւ դաստիարակութեան մանկանց։

„Ներգործական Պետական Խորհրդականն եւ Հրամանատարն Յովհաննէս Լազարեան Լազարեանց, անխոնջ ջանիւք եւ խոհական յառաջատեսութեամբ գանձելով ինքեան զհարստութիւն՝ փառաւորագունի անուանն պայծառացուցիչ, 'ի մտի եդ զերեւելի ինչ մասն այնորիկ նուիրել յօգուտ համազգեաց իւրոց, եւ այնր իսկ սահմանի՝ որ եղեն նմա 'ի հայրենիս։

„Բաց յայլոց բազմադէմ մարդասիրական գործոց նորա եւ ժառանգաց նորա, բաց 'ի շինութենէ երկուց եկեղեցեաց 'ի Ս. Փեթերպուրկ, եւ երկուց՝ 'ի Մոսկուա, եւ բաց 'ի մեծամեծ պարգեւաբաշխութեանցն յԱժդարխան՝ 'ի Նախիջեւան՝ 'ի Գրիգորուպօլիս՝ եւ յայլ տեղիս, այրս այս բարեգործ հուպ 'ի վախճան կենաց իւրոց յամին 1801 ցանկալով կանգնել զնոր յիշատակարան յօգուտ ընկերաց՝ եթող կտակաւ հարազատ եղբօր իւրում եւ ժառանգի Յովակիմայ Լազարեան Լազարեանց զերեւելի գումար դրամոց 'ի կառուցումն Ուսումնարանի։ Արժանաւոր յետագայք կտակողին՝ բաց յորոշելոցն 'ի նմանէ յերկերիւր հազար ռուբլի թագաւորական թղթադրամոց՝ նուիրեցին յինքեանց զնշանաւոր գումար դրամոց 'ի շինութիւն այնր ուսումնարանի, եւ յապահովս կացուցին զայն՝ հոգալով վաղագոյն զհնարսն յարատեւութեան նորին։ Նորատունկս այս պարտէզ ծաղկի արդէն եւ ուռճանայ"։

'Ի թերթակէն անուանելոյ ,,Դիւան Հիւսիսային'' որ տպագրեալ է յամին 1823:

2. 'Ի 21 համարն յամսեան Նոյեմբ. ,,Բաց 'ի բազմօրինակ բարեգործութեանց՝ զորս ցուցեալ է ցարդ տոհմն Լազարեանց, հիմնեցաւ եւս 'ի նմանէ ճեմարան Արեւելեան լեզուաց 'ի Մոսկուա: Այս շինուած հոյակապ մարդկութեան շահաբեր, արժանի է զտեղի ունելոյ 'ի պատմութեան: Հիմնադիրքն այսր սերմնարանի գիտութեանց՝ ունին իրաւունս ընդունելոյ զմեծագոյն յարգանս 'ի ժամանակակցաց, և զշնորհակալիս՝ յապագայից'':

'Ի Գաղղիական մատենէն անուանելոյ ,,Ուղեւորդ Մոսկուայ'', յօրինելոյ 'ի Տեւլֆէյէ, Թարգմանելոյ 'ի Գլինքայէ, և տպելոյ 'ի Մոսկուա յամին 1824:

3. ,,'Ի Մոսկուա քաղաքի գտանին յոլով շինուածք հիմնեալք յԱսիական և յԵւրոպական ազգաց: Ոմանք յեկեղեցն յօտար սահմանաց՝ ցանկան պահպանել զԱստուածպաշտութիւն իւրեանց՝ զբարբառ և զսովորութիւնս՝ որք տան յուշ ածել զհայրենիսն: 'Ի սոցուն են սակի և գաղթականք Հայոց՝ յերից հարիւրոց ամաց հետէ բնակեալք 'ի Ռուսաստան: Առ ժամանակօք մեծին Պետրոսի առաւել եւս բազմացան նոքա, և հրապարակաւ կատարէին զԱստուածային պաշտամունս յԱժդարխան՝ 'ի Մոսկուա՝ 'ի Փեթերբուրգ՝ և յայլ քաղաքս...: 'Ի թագաւորութեան երկրորդին Կատարինեայ 'ի նորոյ ծաղկեցան գաղթականք Հայոց: Յամէն 1771 և այսր՝ 'ի Մոսկուա և 'ի Փեթերբուրգ կառուցան քանեակ հոյակապ եկեղեցիք Հայոց քարաշէնք 'ի Լազարեան գերդաստանէ: 'Ի Մոսկուա ընդ մէջ ճանապարհացն Փոքրովքեյ և Մեասնիցքեյ անուանելոց, այն է՝ պողոտայն Հայոց, կանգնեցաւ ճեմարանն Լազարեանց, որոյ ճակատ հայի յեկեղեցին Հայոց՝ որ յանուն Սրբոյ Խաչին...:

,,Պատուաւոր գերդաստանն Լազարեանց կամեցեալ նշանաւոր կացուցանել բարեգործութեամբ զբնակութիւն իւր 'ի Ռուսաստան, 'ի կիր էառ զպարգեւս բաղդին 'ի հիմնարկել զհասարակաշահ ճեմարանն Արեւելեան լեզուաց...: Անմոռաց մնասցէ յիշատակ Նախնեացն Լազարեանց՝ արդէն 'ի գերեզմանս հանգուցելոց: Կեան նոքա 'ի բարենախանձ յաջորդս իւրեանց'':

'Ի Պատմութենէն Հայոց յօրինելոյ 'ի Ռուս բարբառ 'ի Ս. Գլինքայէ, և տպելոյ 'ի Մոսկուա յամին 1832:

4. ('Ի Հատ. Բ. յեր. 243. 244). ,,Շահ-Աբաս 'ի նմանութիւն Ջուղայն Հայոց՝ զաւանն շինեալ յիւրմէ առ եւրի Աշպահանայ անուանեաց ,,Նոր Ջուղայ: Յամին 1605 Մանուկ Լազարեանց զուարճացեալ յուսով

վերածնութեան Հայաստանի, նախ առաջին 'ի Հին Ջուղայոյ աճապարեաց 'ի նորն. և հորդեաց ճանապարհ փութալոյ անդր իւրոցն հայրենակցաց, որք 'ի յարգանս ունէին զնա՝ ոչ վասն իշխանականն աստիճանի, և ոչ վասն հարստութեանն, այլ միայն վասն՝ անձնանուէր փութոյն 'ի կազդուրել և 'ի քաջալերել զվհատեալ ոգիս որդւոցն Հայաստանի: Վեհանձն ոգիք անպատում զգան բերկրութիւն 'ի բերկրեցուցանելն զիւրեանց չարչարակիցս":

5. (Ընդ. յեր. 246). „Հայք ոգևորեալ 'ի հրաւիրող ձայնէն Պետրոսի (կայսեր Ռուսաց)՝ որ հնչէր 'ի սիրտս նոցա, աճապարեցին ողջոյն գերդաստանօք գաղթել ('ի Պարսկաստանէ), և հաստել զբնակութիւն 'ի սահմանս Ռուսաստանի: 'Ի թիւս այսոցիկ նոր գաղթականաց էին և յետագայք Մանուկայ Լազարեանց, յորոց 'ի գալն 'ի Ռուսաստան՝ 'ի Մոսկուա և յափունս Նեվայի որոշեցան տեղիք 'ի բնակութիւն Հայոց":

6. (Ընդ. յեր. 248). „Թոռն Մանուկայ՝ Լազար Լազարեանց՝ մինչ էրն 'ի Պարսկաստան՝ ոչ միայն կատարող եղև ազգի ազգի յանձնարարութեանց 'ի Ջինուորական գործս, այլ և կարգեցաւ Տեղակալ քաղաքին Ջուղայոյ":

'Ի Պատմութենէ կայսերուհւոյն Ռուսաց Կատարինեայ Բ, յօրինելոյ 'ի Գաղղիական բարբառ յԻ. Քասթերայ, և տպելոյ 'ի Փարիզ:

7. ('Ի Հատ. Դ. յեր. 135). „Կոմսն Տ. Արթուա ուղևորեցաւ 'ի Ռուսաստան 'ի գարնայնի ժամին 1793: Ճանապարհորդութիւն նորա եղև ընդ ցամաք: Այսպիսի ընծայեցաւ նմա 'ի 'ի Ռոփշա 'ի մեծափարթամ՝ Իշխանէն Լազարեանց՝ սերելոյ յազգէն Հայոց, որ ստացաւ գնոց արծաթոյ զայս տեղի հանդերձ դաստակերտաւն և կալուածովն: Լազարեանց Տէրն ուշ եդ յատկապէս մեծահարկի և նշանաւոր առնել զհիւրընկալութիւնն և զպատուասիրութիւնն: Կոմսն Տ. Արթուա ընթրեաց առ նմա հանդերձ իւրայովքն և այլովք բազմաթիւ Գաղղիացւովք, յորոց ոմանք էին 'ի կուսակցաց Հասարակապետութեան: Յետ այնորիկ Տ. Արթուա չոգաւ վաղվաղակի 'ի Ս. Փեթերպուրկայ յԱնգղիա:

'Ի Լրագրէն Մոսկուայ տպելոյ 'ի 15 փետրուարի 1816:

8. „Յամէն 1814 կանգնեցաւ 'ի մայրաքաղաքի մերում ուսումնարան նոր՝ ծախիւք երկուց եղբարց, Յովհաննու և Յովակիմայ Լազարեանց. որոց անուանք յուշ ածեն առաւել քան զառաւել ազգին Հայոց զերախտիսն աբարեալս 'ի գերդաստանէ նոցին: Ծախիւք Տեարց Լազարեանց հիմնեալք

են երկու եկեղեցիք 'ի Ս. Փ. պուրկ, և երեք՝ 'ի Մոսկուա... Ուսումնարանս այս՝ որ կարի օգտաւէտ է կայսրութեան Ռուսաց, ունի նպաստամատոյց լինել ծաղկելոյ գիտութեանց 'ի մէջ Հայոց":

'Ի Լրագրէն Մոսկուայ տպելոյ 'ի 28 Փետրուարի 1187 ամի, ընդ համարով 17:

9. „Տալով զարժանին գովասանութիւն արարողի այսպիսի բաղձալի գործոց (իմա՝ շինութեան և պահպանութեան ուսումնարանի) Յովակիմայ Լազարեանց, պարտ համարիմք յաւելուլ և զայս՝ թէ 'ի նմին իսկ ժամանակի յորժամ ձեռն նորա հեղոյր առատորէն նուէրս յօգուտ մարդկութեան, երբեմն և սիրտ նորա զիւրն պատարագ: Պատարագս այս՝ է հարազատն որդի նորա, Վաշտապետ և Ասպետ կայսերական Անձնապահ գնդի՝ Յարութիւն Յովակիմեան Լազարեանց: Քաջասիրտս այս պատանի եմուտ 'ի ծառայութիւն 'ի սկզբան անդ հռչակաւոր պատերազմին Ռուսաց՝ որ եղև յամին 1812, կցորդելով յինքեան ընդ ոգեկան կատարելութեանց զարտաքինն գեղեցկութիւն դիմաց, և ընդ զինուորական հրահանգաց՝ զհմտութիւնն բազում արուեստից և լեզուաց, 'ի ժամանակի ահաւոր ճակատամարտին որ առ Լէյփցիկաւ՝ զմահաբերն ընկալաւ հարուած, որով և զըրկեցաւ յարևէ ծաղկափթիթ կենացն 'ի քսանամեայ հասակի *): Էր նա զարդարեալ բազում նշանօք՝ զորս ստացեալն էր 'ի վարձ գովանի ծառայութեանց և այրական քաջութեանցն 'ի մարտս. Էր և սիրելի յաչս իւրոց մեծաւորաց և ընկերաց: Զգալով լիապէս զմեծութիւն կորստեանս՝ որո՞վ իւիք կարեմք պատուել զյիշատակ քաջի զօրականիս, եթէ ո՛չ՝ զայս արձակելով առնա բարբառ 'ի սրտէ „Խաղաղութիւն քոյոցդ ոսկերաց, օրհնեալ ծնունդ հօր բարեպաշտի":

Այլ յայսր ամենայնի վերայ մեղմել կամելով զխստութիւն կսկծանացս 'ի սրտից ցաւակից ընթերցողաց, ազդ առնեմք նոցա՝ զի արժանամեծար հիմնադիրն ուսումնարանին Հայոց Յովակիմ Լազարեանց՝ ունի այլ ևս երիս որդիս, յորոց երկուք, այն է՝ Դիւանական Խորհրդականն և Ասպետն Յովհաննէս Յովակիմեան, և Դիւանական Դատողակիցն (Коллежскій Ассесоръ) և Ասպետն Խաչատուր Յովակիմեան, ծառայեն 'ի Դիւանատան Արտաքին Գործոց. և երրորդն՝ այն է՝ Լազար Յովակիմեան՝ Նաւղակալ

*) Որպէս 'ի Լրագրէն, նոյնպէս և յօրինակէն՝ որ տպեալ է 'ի գիրսն Собраніе Актовъ. (հատ. Գ. յէջ 31) սխալեալ են և գրիչք և տպագրիչք դնելով զմահ Զօրականիս լեալ 'ի քսանամեայ հասակի. քանզի ծնաւ նա յամին 1791, և մեռաւ 'ի 1813: Տես յառաջնում մասին մատենիս (յէջ 23. 24):

(Порутчикъ)՝ գտանի 'ի կայսերական Ընձնապահ Գնդի։ Եւ երկքին միանգամայն ըստ օրինակի Ծնողի իւրեանց ընդարդյս բերմամբ զհետ երթան զամենայն գործոց բարեաց, և հաստատեալ իսկ են 'ի մտի՝ յիւրեանց ևս կողմանէ առաւելուլ 'ի ջանս յաղագս հաստատնելոյ փութապէս զկիշատակեալ ուսումնարանն 'ի հնարաւորն կատարելութիւն։

'Ի կնիք բանիս՝ ասեմք ,,Յիշատակ արդարոյ՝ գովութեամբ, և զաւակք նորա՝ օրհնեալք յաւիտեանս"։

յԻնվալիտն անուանեալ Փեթերբուրգեան Լրագրի թղթոյ յամին 1825. 'ի Մայիսի 2։

10. ,,Պայծառ շինուածոյս այսորիկ (իմա՝ Ճեմարանին Տ. Լազարեանց)՝ է վարժել կատարելապէս զմանկունս Հայոց և այլոց ազգաց 'ի Բարձրագոյն գիտութիւնս և 'ի գլրոցական հրահանգս Արևելեան լեզուաց։ Հիմնեալ է այն 'ի Մոսկուա ծախիւք Տեարց Լազարեանց։ Հանգուցեալ Պետական Խորհրդականն Յովհաննէս Լազարեանց 'ի պէտս այսր շինուածոյ եթող կտակաւ զառանձին գրամագլուխս երկերիւր հազար ռուբլի։ Հարազատ եղբայր նորա Յովակիմ Լազարեանց տալով զայս գումար մշտնջենաւոր ժամանակաւ յԱրքունի գանձատունն յաճումն տոկոսեաց՝ յաւել յայն յիւրմէ աւելի քան զհարիւր հազար ռուբլի, և կանգնեաց զվայելուչ շինուածն։ Այսու եղանակաւ հիմնաւորեալ յամին 1816 Հայկական Ճեմարանն Լազարեանց՝ յընթացս ինանց ամաց ընկալաւ 'ի ծոց իւր աշակերտս 135, յորոց պատրաստագոյնքն՝ թուով 62՝ մտեալ են յԱրքունի ծառայութիւն, և զարգիս կան 'ի վարժսն 73։ Ճեմարանս այս ոչ մտանէ յընդհանուր կազմած ուսումնական շրջանակի, չէ կախեալ զՆախարարէն Ազգային Լուսաւորութեան, այլ կառավարի առանձին կանոնօք, և յամէն 1825 կայ ընդ իշխանութեամբ Զօրագլխապետին հեծելոց՝ Կոմսին Արակչէյեվայ"։

'Ի գրոցն մակագրեալ Собраніе Актовъ, որոյ առաջին հատորն տպեալ է յամին 1833, իսկ երկրորդն և երրորդն՝ յամին 1838, 'ի Մոսկուա։

11. ('Ի Հատ. Գ. յեր. 301 և 302). ,,Յերկրորդում պատերազմին (Ռուսաց) ընդդէմ Տաճկաց՝ առ ընթեր Մեծի Մարաջախտին Քնեազ Գրիգորի Ալէքսանդրովիչի Փոթեմքինայ՝ Թաւրիչէացւոյ անուանելոյ, 'ի մասին տնօրէնութեան քաղաքական գործոց կարգեալ կայր հանգուցեալ Դերգործական Պետական Խորհրդականն Յովհաննէս Լազարեան Լազարեանց։ Մինչ ցառումն Խրիմու մանակից գտաւ նա 'ի յանձնարարութիւնս եղեալս 'ի Գլխաւոր Հրամանատարէն. նոյնպէս ևս 'ի գաղթման Հայոց 'ի Խրիմայ 'ի տեղիսն՝ որ սահմանակից էին յայնժամ, և յԱզով... Բայց յայսմանէ առ

Մեծի Մարաջախտին տանէր յայնժամ յազգէն Հայոց Կիսագնդապետն Մինաս Լազարեան Լազարեանց, և յետ նորա՝ Նախակարգ Թնդանօթական Զօրապետն (Премiеръ Маiоръ) Յարութիւն Յովհաննէսեան Լազարեանց":

12. ('Ի նոյն Հատ. նախայիշեալ գրոց. յեր. 303) „'Ի թագաւորութեան կայսեր (Ռուսաց) Պաւղոսի՝ մասնակից եղեն 'ի տեսչութեան Արտաքին գործոց Տէրութեան Վիճակաւոր Արքեպիսկոպոսն Հայոց Քննեալ Յովսէփ Երկայնաբազուկ-Արղութեանց, և Ներգործական Պետական Խորհրդականն Յովհաննէս Լազարեան Լազարեանց":

13. ('Ի նոյն Հատ. յեր. 304. 305). „'Ի թագաւորութեան կայսերուհւոյն (Ռուսաց) Կատարինեայ Մեծի՝ արժանացան առանձին (կայսերական) բարեհաճութեանց Վիճակաւոր Արքեպիսկոպոսն Հայոց Քննեալ Յովսէփ Երկայնաբազուկ-Արղութեանց, և Ներգործական Պետական Խորհրդականն Յովհաննէս Լազարեան Լազարեանց, 'ի սակս գործոց վերաբերելոց ազգին Հայոց՝ յոլով անգամ բարձրագունի արժանացան պատուոյ և դէմ առ դէմ խօսակցութեան ընդ կայսրուհւոյն՝ միջնորդութեամբ Կոմսին՝ և ապա Իշխանին Օռլովայ, Իշխանին Փոթեմքինայ, և Իշխանին Զուպովայ: Երեւելի ժամանակակիցն Մեծին Կատարինեայ՝ Յովսէփ Բ, կայսրն Հռովմէական պարգեւեաց նմին Լազարեանց Տեառնն զՊարոնութիւն յամին 1786, և ապա զԿոմսութիւն Հռովմէական կայսերութեան յամին 1788: 'Ի նմին իսկ ժամանակի յաջողեցաւ Լազարեանց Տեառնն գտանիլ ստէպ առ Մեծի Իշխանին և Արքայորդւոյն Պաւղոսի 'ի Գաթչինէ: Ըստ Բարձրագոյն Հրամանի եկաց 'ի Պալատն ուրուք ինչ, և արժանի եղև զանազան յանձնարարութեանց 'ի Նորուն Մեծութենէ: Նա ինքն Արքայորդին մինչ լինէրն 'ի Գաթչինէ, 'ի պատճառս մերձ գոլոյ տեղւոյն 'ի Ռոփշա 'ի վայելչակերտ կալուածն Լազարեանց Տեառնն՝ անդր երթայր ստէպ, և բախտաւորէր զնա այցելութեամբն. և ապա զնա ինքն ևս անդր տանէր ընդ իւր 'ի Գաթչինէ, ուր և ինքնին նշանակեալ էր նմա օթևանս մօտ 'ի Պալատն":

14. ('Ի նոյն Հատ. յեր. 310). „'Ի պատերազմին (Ռուսաց) ընդդէմ Տաճկաց յամին 1828, 'ի կայսերական Գլխաւոր բնակարանի՝ 'ի տեսչութեան Արտաքին գործառնութեանց գտանէր Պետական Խորհրդականն Խաչատուր Լազարեանց: Ըստ Բարձրագոյն Հրամանի չոգաւ նա ապա 'ի Մոլդավիա և 'ի Վալաքիա զանազան յանձնարարութեամբք":

15. ('Ի նոյն գիրս. 'ի հատ. Բ. յեր. 298. 299). „'Ի սկզբան ԺԸ դարու ասպնջականեցաւ 'ի Ռուսաստան անուանի մեծատունն Լազար Նազարեան Լազարեանց, որոյ Տոհմն ծագեալ 'ի Հայաստանեայց շահեալ էր վաստակովք իւրովք զվստահութիւն ամենայն համազգի ժողովրդեան: Նախնիք Լազարեանց յամին 1605, ըստ հրաւիրանաց արքային Պարսից Շահաբասայ՝ զառաջինն գաղթեցին 'ի Հին Ջուղայոյ՝ որ 'ի Հայաստան, 'ի Նորն

Ջուղայ՝ որ կայ առ երի մայրաքաղաքին Պարսից Ասպահանայ. և անտի եկն նա (հմա՝ Ղազար Նազարեան) հանդերձ ընտանեօք 'ի Ռուսաստան. ուր 'ի տրիտուր արդեանցն զորս եցոյց գահին Ռուսաց՝ արժանացաւ ընդունել 'ի Մեծէ կայսրուհւոյն կատարինեայ զԱզնուականութիւն Ռուսաց յորդւոց յորդիս... Յետ այնորիկ որդիք և թոռունք նորա գտան 'ի Զինուորական և 'ի Քաղաքական պաշտամունս, կալան զպատուաւոր տեղիս, ընկալան զաստիճանս՝ Շթապ-Օֆիցերի և Գեներալի, և արժանացան կայսերական բարեհաճութեանց 'ի զանազան ժամանակս՝ ստանալով զՆշանշանս Ասպետական կարգաց Ռուսաց և այլոց Տէրութեանց:

16. ('Ի նոյն հատ. յեր. 299). ,,Գործարանն (Ղազարեանց) յիշատակեալ 'ի Հրովարտակի (կայսրուհւոյն կատարինեայ Բ.) է մետաքսեայ կերպասուց, շինեալ յամի 1735. 'ի Պողորոտքի հեռի 'ի մայրաքաղաքէն Մոսկուայ 65 վերստիւք, և անուանեալ Ֆրեանովքի: Գործարանս այս 'ի ձեռն Ներգործական Պետական Խորհրդականին Յովհաննու Ղազարեան Ղազարեանց, և 'ի ձեռն ժառանգաց նորա յայն աստիճան կատարելութեան եհաս, զի 'ի նմա՝ ըստ ապսպարելոյ պայծառափայլ քնեազին Զուպովայ՝ գործեցան 'ի պէտս Արքունեացն փեթերպուրկայ ամենալաւ մետաքսեայ գործածք և թուղթք նկարէնք (обои) նման Գաղղիականացն, որովք պատեալ զարդարեցան բազում սենեակք յԱրքունիս փեթերպուրկայ՝ յանուանեալս Զիմնիյ և Թավրիչէսքիյ: Գործեցան նոյնպէս և այլ թանգագին և գեղեցիկ մետաքսեայ կերպասք, որք 'ի կայսրուհւոյն առաքեցան յԱրքունիս այլոց Տէրութեանց 'ի պարգև:

17. ('Ի նոյն հատ. յետ. 304. 305). ,,Յաւուրս Պաւղոսի կայսեր՝ յամին 1801, ոչ սակաւ ներգործեաց յօգուտ ազգին Հայոց Ներգործական Պետական Խորհրդականն Յովհաննէս Ղազարեան Ղազարեանց ողորմութիւքն շնորհելովք 'ի կայսերէն. զի գտանելով նա յաճախ 'ի Գաւթչինա՝ եղև պատճառ միջնորդելոյ վասն Հայ ժողովրդեան: Նորին Մեծութիւնն բախտաւորէր զՂազարեանն յաճախակի այցելութեամբքն 'ի Ռոփշա 'ի նորուն իսկ կալուածն մերձ 'ի Գաւթչինա: 'Ի չքնաղաշէն աւան անդր երթեւեկէին բազում երևելի անձինք յաւագանւոյն Ռուսաց և այլոց ազգաց. զորս հիւրընկալէր Ղազարեանն:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

—

ՃԱՌՔ ԵՒ ՔԵՐԹՈՒԱԾՔ ԱԶԳԻ ԱԶԳԻՔ՝ ՅԱՅԼԵՒԱՅԼ ԴԻՊՍ ՅԱՅԼԵՒԱՅԼ ԱՆՁԱՆՑ ԱՍԱՑԵԱԼՔ 'Ի ՊԱՏԻՒ ԼԱԶԱՐԵԱՆՑ *)։

Ա.

Բան գովեստի 'ի վերայ Իշխանազնին Յովհաննու Լազարեան Լազարեանց,

վասն շինութեան եկեղեցւոյն Հայոց՝ որ 'ի Ս. Փեթերպուրկ,

Ասացեալ 'ի 28 Նոյեմբերի **) 1782 ամ 'ի Նորին մայրաքաղաքի։

Ա. Համարձակախօս փողն Աստուածային՝ բարձրալուր բարբառն և ճոխաբանն 'ի Մարգարէս՝ կայծակնամաքուրն Եսայիաս, տուչութեամբ Հոգւոյն Սրբոյ գրէ 'ի լրումն մարգարէութեան իւրոյ՝ ասելով թէ՝ Ո՞ ետես այսպիսի ինչ, եթէ երկնեաց երկիր, և ծնաւ ազգ մի ողջոյն միանգամայն. և թէ՝ երկնեաց սիոն և ծնաւ զմանկունս իւր [I])։ Որով և ազգ առնէ ամենայն հաւատացելոց զԱստուածգիտութեանն օրինակ ինչ՝ իբրև զմտաց առաջնորդութիւն, զանհասանելին և զանտեսանելին 'երևելեօքս ձևացուցանել, որով և ճանաչել զճշմարտութիւնն յաւիտենական։

Բ. Արդ ուսեալ իմ 'ի Տեառնաշնորհ մարգարէութենէ նորա՝ հարկ կալայ յանձին՝ գրել ըստ նոյն սարասի՝ ճշմարիտ վկայութեամբ Հոգեպատում տնտեսացն Աստուածային սուրբ գանձուց, առնլով 'ի ձեռնտութիւն խորհրդոյս զԱմովսականին Եսայեայ զբանն թէ՝ ո՞ լուաւ ո՞ ետես, և կամ ում պատմեցաւ այսպիսի գործ Աստուածաշնորհ, թէ երկնեաց Այր

---

*) Զանուանս շարագրողացն տեսցեն որք կամին՝ յաւարտ իւրաքանչիւր ճառիցն և քերթուածոյ։

**) Յաւուր տօնի Ս. Կուսին Կատարինեայ՝ յորոյ անուն կառուցեալ է և եկեղեցին։

[I]) Գլուխ 66. համար 8։

մի՝ որ գոյացեալէ ՚ի նոյն երկրէ՝ Աստուածաքանչ խորհրդով և քրտնավաստակ արդար արդեամբքն իւրով, և ծնաւ զայգ մի ՚ի միում աւուր, ՚ի միում Յօգոստանիստ, Աշխարհաժողով, Քրիստոնէախումբ և պայծառափայլ Քաղաքի. ողջոյն միանգամայն, այսինքն յաւուրս իւր. վասն զի հազար ամն՝ որ մի է համարեալ Տեառն, ըստ Դաւթայ։

Գ. Իսկ ասացեալ զաւակս այս նոր, և ՚ի միում աւուր ծնեալն, է՝ տուն և տաճար՝ Աթոռ և բնակարան Ամենասուրբ երրորդութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. վասն զի սահման Աստուածային է այս սիօնի ծնանել զաւակ, և զաւակին դարձեալ ծնանել ի Սիօն. որպէս Դաւիթ ՚ի սաղմոսին ասէ։ Սիօնի ասի մայր, և մարդ ծնաւ ՚ի նմա, և ինքն իսկ հիմունս էարկ նմա բարձրեալն [1]). և Ամոլսածինն Եսայի ասէ։ Երանի որ ունիցի զաւակ ՚ի սիօն [2]). և թէ՝ զաւակ սուրբ արձանութիւն նորա [3])։ Վասն զի մի և նոյն Հոգի Աստուծոյ է որ տնօրինէ զայս ամենայն. որպէս և գրէ սրբազանն Անգէաս Մարգարէն թէ՝ ես եմ, և բանն իմ, և հոգին իմ ՚ի միջի ձերում, ասէ տէր ամենակալ [4]). և ժողովողն ասէ։ Զի ՚ի ներ ամենեցուն է Ամենակալն [5]). և փողն տարսոնացի սրբազանն Պօղոս՝ գրէ առ առաջին կորնթացիսն ասելով թէ՝ Այլ զայս ամենայն յաջողէ մի և նոյն հոգի, և բաժանէ իւրաքանչիւր որպէս և կամի [6]). և յերիք գլխոյ ՚ի նոյն համարն ասէ։ Զի Աստուծոյ գործակիցք եմք և արդիւնք. և առ հռոմայեցիս գրէ։ Զայս ասեմ շնորհօքն Աստուծոյ, որք տուեալք են ինձ [7]). և թէ՝ խորհիլ ՚ի զգաստանալ իւրաքանչիւր, որպէս և բաժանեաց Աստուած զչափ հաւատոց. և Յակոբոս եղբայր Տեառն ասէ։ Ամենայն տուրք բարիք և ամենայն պարգեւք կատարեալք ՚ի վերուստ են իջեալք առ ՚ի հօրէն լուսոյ [8]). Եւ գիտելիէ զի ՚ի մէջ Աստուածագիծ սուրբ տառից վկայութիւնք բազումք գոն առ այս՝ որպէս և յայտ իսկ է ճշմարիտ բանագիտաց։

Դ. Ուրեմն փառս վերառաքեմ քեզ ո՛վ զարմանահրաշ և սքանչելապայծառ Սուրբ Հոգի Աստուած. որ ըստ խոստման էակցին քո և փառակցին միածնի, տպաւորեալ սերմանես ՚ի հոգիս և ՚ի միտս մարդկանց սեռի՝ առնել գործ ամենաբարի։ Ո՛վ գանձ լուսոյ սուրբ Հոգի Աստուած, որ գանձես ՚ի սիրտս մարդկան գանձ լուսոյ և ճառագայթի։ Ո՛վ անճառելի զօրութիւն և անբաւելի հանճարեղութիւն, որ կերտես և կազմես ՚ի միտս բանականաց՝ առնել գործ հռչականուն։ Ո՛վ սուրբ Հոգի տիրական որ կերպարան կատարելութեանդ քո մեծի՝ գոյացուցանես ՚ի սիրտս մարդկան՝ որպէս կերտեալ օրինակ։ Առաքիչ Տէր և ձայն կենդանի՝ որ շնչես զսուրբ

---

[1]) 86։ [2]) Գլ. 31. հմր 9։ [3]) Գլ. 6. հմր 13։ [4]) Գլ. 2. հմր 5 և 6։ [5]) Գլ. 43։ հմր 29։ [6]) Գլ. 12. հմր 17. [7]) Գլ. 13. հմր 3։ [8]) Կաթուղ. 1. հմր 13։

շունչդ քո աջաւոր 'ի հոգիս բանաւորաց քեզածանօթից. որպէս երբեմն 'ի Մովսէս և 'ի Բեսելիէլ, և զայլն քեզահաճոյս: Ահա փառք քեզ ով անսահման անուն և անբովանդակելի մեծութիւն. որ բազմազգ հնարաւորութեամբ ընդ պայծառութիւն արարածոց հոգաս:

Ե. Վասն որոյ օրհնելով փառաւորեմք զահեղափառն սուրբ անունդ՝ որ 'ի վեր է քան զամենայն ասելի և իմանալի՝ Աստուած իմ սուրբ Հոգի. ուստի ինքնաբուխ բարութեամբդ յօրինեալ տպաւորեցեր 'ի սրտի և 'ի հոգւոջ քեզահաճոյ ծառային քոյ Տեառնապարգև և հնազանդ անուն Յովհաննիսի կազմել և կառուցանել զօրինակն նորոյս փրկութեան մերոյ սուրբ եկեղեցի՝ զնախնի վիճակն մեր երկնանման 'ի վերայ երկրի. տիեզերատարած փառաւորութեամբ և վայելչագեղ յօրինմամբ. որպէս 'ի հնումն՝ հրամայեցեր շինել տաճար 'ի լերին սրբութեան քո և 'ի քաղաքի բնակութեան քո սեղան, 'ի նմանութիւն սրբոյ խորանին զոր յառաջագոյն պատրաստեցեր 'ի սկզբանէ [1]: Յորում անմիջապէս պատարագի բանն Հօր և փառակիցն քո, Բարութն լուսոյ, Թագաւորն հզօր, Երկնաւոր փեսայն, Կենաց մանանայն, Անմահ գառն, Հաշտարար միջնորդն՝ Մեղաց բարձօղն, բնաւից յոյսն, Յաւիտենից ապաւէնն, բանաւոր ողջակէզն, և ամենայն բարեաց պատճառն: Սա միայն լուսաւորէ զմեզ և ուսուցանէ՝ միայնում Աստուծոյ առյինուլ և զամենայն յուսացողութիւն մեր 'ի նա հաստատել: Որ և 'ի սմա սաղմոսեմք, աղօթեմք և օրհնեմք մշտանուագ ձայնիւ զօժանդակդ մեր՝ ով Սուրբ Հոգի Աստուած և զարդարողդ համայնից. և 'ի սմա նմանիմք 'ի զօրս վերինս փառատրողացն զքեզ ընդ Հօր, և ընդ Որդւոյն միածնի անզրաւ յաւիտենիւ: Վասն որոյ աղաչեմ զքեզ Սուրբ Հոգի Աստուած՝ պարգևեա զկեանս երկար և խաղաղական՝ առաւել պայծառութեամբ և զուարճալի բերկրութեամբ ծառային քոյ Յովհաննիսի հանդերձ պատուական որդւովն, մեծահաւատ բնտանեօքն, և ազնիւ եղբարբքն. և գրեա զանուն սոցա և ծնողացն՝ 'ի դպրութիւն կենաց և 'ի կտակս այնոցիկ՝ որոց հեռևելով կազմեաց տուն, և բարձրացոյց տաճար սուրբ խորհրդոյ մեծի:

Զ. Որովհետև հաւատարիմ տնտեսքն Աստուածային սուրբ գանձուց և յղացեալքն սիրմամբ բանի սուրբ Հոգւոյ նորա՝ ծնան վասն մեր զծով գիտութեան Աստուծոյ, և բազմազան օրինակօք արձանագրեցին զօգուտ ամենայն հաւատացելոց, որպէս զի ամենայն ոք յիւրում դարի արիացի առ բարին՝ վասն իւր և վասն հասարակութեան. որպէս և Լուսաւորիչն հոգւոց մերոց՝ Զօրեքտասան Առաքեալն Քրիստոսի Սուրբն Գրիգորիոս՝ քարո-

[1]) Իմաստութեան գլ. 9. 8:

զէր 'ի մեծն Հայս ասելով թէ՝ Յօժար լերուք առ Աստուածութեանն օրէն, և քաղցր ախորժ՝ գործով բարեաց մատակարարեցէք զմիմեանս. և թէ՝ վասն այս ստեղծաւ աշխարհ՝ 'ի բարերարէն Աստուծոյ, և այսու վարիլ պարտին կարգք աշխարհի: Զի և ինքն իսկ՝ տքնողական ջանիւք յուզեալ յատուկ կամեցողութեամբ իւրով՝ ծնաւ ազգ մի ողջոյն միանգամայն կրկնամեռ և կենդանի մարտիրոսութեամբն, և բարձրացոյց զազգս Հայոց 'ի վերայ այսմ լուսաւոր աստիճանի Աստուածագիտութեան. և թողեալ զյիշատակ բարի մշտնջենաւոր և անմահ: Արդ՝ այսքանս բաւականասցի վեհագոյն ընթերցողաց վկայութիւն Սրբազանիցն սուրբ գրոց՝ որ գրեցաւ աստ վասն մտաց առողջութեան:

Է. Այլ արդ՝ աչա՛ առ քեզ են բանքս իմ, և յաղագս քոյ է այսքան ասութիւնք իմոց բանից՝ ո՛վ գերամեծար Ազնուական, ո՛վ յիշատակդ բարեաց, ո՛վ մեծագործդ առ Աստուած և առ յարարածս Նորա: Զի անսպառ խաղացումն 'ի քեզ Աստուածային շնորհացն՝ և արարչակերտ սուրբ Հոգւոյն 'ի վերայ քոյ խմացուածոցդ շարժմունք ծանուցաւ հասարակաց, 'ի ձեռն գեղեցիկ գործոյդ Քրիստոսապակի. որով և զհոգւոյդ բարւոյ ընկալաք զծանօթութիւն: Վասն որոյ ո՛չ միայն գովել զքեզ արժան է՝ այլ և 'ի վերայ քոյ աղօթել. առ 'ի լինել քեզ միշտ այսպիսի պատճառ և աւիթ բարեաց՝ Քոյայնովքդ հանդերձ:

Ը. Արդ այժմ սուրբ սիրով ծանիր և 'ի միտ ա՛ռ զասացեալս զայսոսիկ բանս՝ վասն քոյոյ ճշմարտասիրի, զի ո՛չ թէ նիւթիւ կեղծաւ է այս ասութիւնք իմոց բանից՝ իբր սոսկ մարդահաճութիւն, ո՛չ. այլ Աստուածայինն հրաման պատուիրէ ամենայն հաւատացելոց 'ի ձեռն սրբազանից՝ որպէս և տարսոնացին Պօղոս՝ բացարձակ ձայնիւ և յայտնի համարձակութեամբ պատշաճ իսկ վարկաւ գրել 'ի ճառի առ Հռովմայեցիսն և հարկադրել՝ հատուցանել վարձս վաստակաւորաց ըստ ամենայնի. և Տիմոթէին ասէ [1]): Արարէք աղօթս, խնդրուածս, պաղատանս՝ վասն թագաւորաց և իշխանաց [2]). և բնական բնութիւնս մեր ևս ունի սահման 'ի յԱստուծոյ՝ պատուել ըՎ վաստակաւորս իւր. և վասն այսր պատուիրանի և հարկադրութեան՝ պարտ և պատշաճ վարկայ յիշատակել ատէն զպատճառդ բարեաց և զվերայլրացուցանողդ աքանչելի գործոյս մեծի. և ո՛չ գտր իմ յանձնէ՝ ոսկի կամ արծաթ և կամ այլ այսպիսի թէ ընծայէի 'ի սպաս պատուի վեհանձնութեան քոյոյ Աստուածասիրի. այլ զայս միայն բանեաց անձն իմ պարտաւոր, և պատշաճ վարկաւ բնական սահմանաւ և կտակաւ սուրբ գրոց՝ յանհրկուութից ընծայել պատիւ. զօրօրինակ. որպէս յանհրկուոյթ հոգւոյ և

[1]) Գւ։ 13. Համր 7։ [2]) Ա. գւ։ 2. Համր 2։

'ի մօրաց ծնեալ յաղօթս և 'ի խիստաբանութիւնս՝ առաւել հաճի Աստուած՝ որք մատուցանին նմա ճշմարտութեամբ, քան յայլ նուէրս որ յերկրէ գոյանայ, որոյ վկայութիւնքն գոն խնկապէս ընդ գրով արկեալ. որ և զնոյնասարաս յաներևոյթ հոգւոյ և 'ի մօրաց ծնեալ բոյսս՝ և յուռեալ ընդ սիրոյ բազմազան վկայութեանց իբրև զծաղկանց հոտաբուրից 'ի մի փունջ կապեալ մատուցանեմ քեզ ընծայ՝ և որոց ենն ընդ քեզ սիրով կենակցեալ համայն արենակցաց. Ընկա՛լ աղաչեմ զընծայս զայս իբրև 'ի տկար անօթոյ բանականի մօրաց՝ 'ի գովեստ անուան քոյոյ մեծի։

Թ. Վասն զի դու եղեր առիթ և պատճառ կրկին արմատացուցանելոյ առ հայս՝ հաստատնօրէն զսուրբ սէրն Քրիստոնէական պերճ փառօք և ճոխութեամբ՝ պայծառ և սուրբ Եկեղեցւոյ քոյ դրութեամբն. զռուսացն ասեմ կայսերապերճաց, որք ո՛չ առաւելապէս ծանօթք էին հայկազնեաց՝ դաւանութեանց հաւատոց և հոգևորական արարողութեանց եկեղեցականաց։ Եւ շառաւիղս բարիս ցուցեր ամենցուն պատահողաց՝ Աստուածատուր հանճարով և խորին խորհրդով իմաստիցն քոց բնական բարութեանց և ընտանի սովորութեամբ. և անստուեր անապական և անյաղթական նշան ճշմարտութեան երևեցուցեր ամենայն ազգաց 'ի դէպ պատահողաց. և ծանուցեր բազմաց տարակուսելոց սրտից զելս բարութեան. և յայտնեցեր զքեզ ըստ ամենայն մասանց պատուելի և վերյարգելի, ըստ Աստուածաշնորհ ընդարոյս բնածին բարուց քոց. և զի ո՛չ սակաւ անձինք մխիթարեալ շահին յարկաւ այսուիկ, և ո՛չ սակաւ եղբարք ըստ հաւատոյ, ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ պայծառանան սովաւ հասարակաբար. և սովաւ գտանեմք զոլ զքեզ բարեգործ. Զի իմաստութիւն յելս ճանապարհաց գովի, և 'ի հրապարակս զհամարձակութիւն բերէ [1]). ասէ Սողոմոն 'ի յառակս։

Ժ. Ո՞վ այրդ ուղղադէտ՝ ուստի կնքեցեր զայդ 'ի մտի քում բարւոյ՝ թէ վասն այսր խնկ եմ եկեալ յաշխարհ, զի ձեռնտու լինիցիմ հասարակական բարութեան ազգի իմոյ, ըստ հաւատոյ. որպէս զի ամենեքեան մխիթարեսցին հոգւով, և միաբան օրհնեսցեն զարարիչն ամենայն արարածոց զամենազօրն Աստուած. և նոյն ուղղադէտ մտօքդ և աղուական ջանիւդ բարեպէս ընթացար զարքունականն ճանապարհ և զհետս ուղիղ. և ո՛չ դադարեցար մինչև հասեր յօրհնեալ նպատակն մտացդ խորհրդոյ և հարսին Տեառն սուրբ Եկեղեցւոյ, որով և ստացար զերանութիւնն փրկչական. և զի հզօրագոյն հարկս պահանջէ գործ քո բարեպատճառ. և սպառազինեալ մարմնչի սատկութեամբ ընդդէմ մտացս. վասն որոյ և տայ լեզուի իմոյ զշարժումն զօրեղ՝ համարձակ ասել զբանս զայսոսիկ պատկանեցեալս վասն

[1]) Գլուխ 1. համար 20։

ամենաբարձր գործոյդ մեծի՝ շինութեան և կառուցման հասարակական բարեաց սուրբ եկեղեցւոյ. քանզի Աստուածային աներծանելի լուսովն է զարդարեալ, որում արժան և դէպ իսկ է գովութիւն և բարեբանութիւն համարձակաբար։

ԺԱ. Վասն զի եւ տուր բարձրելոյն Աստուծոյ ըստ տրոց Նորա՝ զուարթ երեսօք և ցնծուն սրտիւ, և բարի ակամբ հոգւոյ քո հայեցար 'ի կատարումն բարեաց յիշատակիդ. վասն որոյ և գրէ սրբազանն Պօղոս առ երկրորդ կորնթացիս ասելով թէ՝ Քանզի զտուրս զուարթս և առատս սիրէ Աստուած [1]). և Սիրաք ասէ։ Յամենայն տուրս քո զուարթացո՛ զերեսս քո [2]). որոց հետևելով՝ արարեր և ցուցեր սէր և միաբանութիւն արամաղնէից եղբարց քոց և հաւատակցաց. և ուսուցեր զարժանաւոր հետաղօտման զօրինակ պատուիրանի փրկչին մերոյ Աստուծոյ՝ բարեսահմանի քումդ մտաց. և հոգի քո բարեբուղխ յօժարի յառաջ ածել յուսով զծաղկափթիթ ժամանակն հայկազեան՝ որպէս էրն 'ի դարս Մեծին Հայկայ, Տիգրանայ, Տրդատայ և հետևողացն նոցին. և հոգի իմ վկայէ զայս ստուգութիւն 'ի քէն. վասն զի ցաւակցութեամբ հետևիս յուսոյ ակամբ վերանորոգել առ հայս զսէր հայրենեաց. և զայս յառաջադրութիւն համարիմ 'ի Տեառնէ յանձնեալ քեզ, ո՜վ արժանավայել պատուելագոյն հոգի մարդասէր, և յիշատակ բարեաց. և յայտնապէս խոստովանեալ հաւատամ՝ որ լցուցանելոց է Աստուած զխորհուրդ բարի մտաց քոց՝ անմահ վարձով, որ կամիս զաւելումն հասարականն համբաւել ճշմարտութեամբ, որպէս զառաջինն հայոց մեծաց հիմնադրողացն զհայաստան, Տեառնապարգև վիճակ զովելի. և բարեհայց կամեցող ես ամենայն այսպիսի վասն քրիստոնէական հաւատոյ պատուի, որպէս երևի ահա գործ քո բարեպատճառ. զի ծառ 'ի պտղոյն ճանաչի, ըստ Տեառն բանի։

ԺԲ. Լուիցեն այս մեծի բարութեան քո՝ ո՞րպէս հոգացար վասն հասարակական բարեաց, և ցուցեր այլոց իսկ զօրինակ բարեհոգութեան, և զկնի թողեր զանուն արժանի գովութեան. վասն զի Այր ողորմութեան ես, որոյ և գթութիւնդ ոչ պակասեն 'ի մարդկանէ. պտուղ բարի և արձան բարձր է առ տէր յիշատակ քո՝ Սուրբ խաչիւ պսակեալ. և հաւատ քո մեծ եղև առ Աստուած՝ որպէս զԵնոքին, զՆոյին և զԱբրահամու, զորոց հաւատոյ յիշատակն տօնելով պատուեմք. վասն զի Տէր կացոյց զվկայութիւն իւր 'ի մարմնոջ նոցա՝ վասն անբիծ հաւատոց իւրեանց. Արդ՝ հաւատս նոցա առ քեզ տեսանի գործով կատարեալ. վասն այնորիկ հաստատնով բանիւ մեծարեմ զպարծանս քո. զի թէ Աստուած վասն հաւատոյ

---

[1]) Թ. 7։ [2]) Լէ. 11։

Աբրահամու օրհնեաց զիսահակ և զՅակոբ և զզաւակս նոցա մինչև յաւիտեան. զի՞նչ արգելու ծառայիս նորա օրհնել, գովել և բարեհռչակել մեծաւ քաղցրաբանութեամբ զքեզ և զծիրանազգեստ զարենակիցս քոյ. որք ո՛չ միայն աստ 'ի Պետրպօլիս ցուցիք զշնորհս մարդասիրական առ ազգս Հայոց Աստուածամերձ գործով, այլ և 'ի մեծն Մոսկով ռուսաստան՝ կառուցանելով զզոյգ եկեղեցիս՝ մինն աստ յիշատակ կենդանեաց, և մինն անդ յիշատակ ննջեցելոց. զորս և զարդարեալ էք Աստուածավայել զարդիւք և սքանչելի յօրինմամբ և դրութեամբ, 'ի զարմացումն ամենայն տեսողաց և 'ի փափագումն ամենայն լսողաց. որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի։

ԺԳ. Զի թէպէտ 'ի բազում տեղիս 'ի գործ ածեն բարեպաշտք ոմանք զայսպիսի Աստուածագործ մարդասիրութիւն, շինեն զեկեղեցիս, գեղեցկացուցանեն զնկարս և յաւելուն զանօթս, սակայն ոչ այսպէս. զի դրութիւն սորա գերագոյն է ըստ երևելոյն՝ ամենայն տեսողաց, և ըստ աներևութին՝ ամենայն լսողաց։ Վասն որոյ և պատշաճ իսկ համարիմ ճառել անաշխատ լեզուաւ զառաւելութիւն օգտութեան սորա և բարձր փառաւորութեան։ Նախ՝ զի 'ի Քրիստոսաշօր և 'ի սուրբ Խաչիւ նորա պսակեալ յՕգոստափառ Կայսերուհւոյ շնորհեալ տեղն սուրբ եկեղեցւոյ, և սիրահրաւէր բարձու հրամանաւ նորա է կառուցեալ. որ և առ ինքն բերէ զճշմարիտ զաւետին ըղ Մարգարէականն Դաւթայ, Լեառն սիօն՝ կողմն հիւսիսոյ՝ քաղաքք Թագաւորի մեծի [1]), 'ի բազմահայելի պայծառ տեղւոջ։ Երկրորդ՝ 'ի հիմանէ նոր շինեալ յոյժ գեղեցիկ և աննման կերտուածովք։ Երրորդ՝ 'ի միոյ յամնէ շինեալ և 'ի կատար հասուցեալ, բանիւ, գործով և արդեամբ. թէպէտ և մասամբ ինչ 'ի յամանց բարեպաշտից իբր զընծայ 'ի տաճարի Տեառն մատուցեալ։ Չորրորդ՝ զի կրկին լուսաւորող և բարձրացուցանող եղև Արամազնէից հոգևորաց և մարմնաւորաց, և հզօրագոյն օժանդակ եկամուտ բազմաց իւրագաւանից։ Հինգերորդ՝ Մայր եղև և ամրութիւն ամենայն եկեղեցեաց Հայկազունեաց՝ որք կան կառուցեալք 'ի տանս Ռուսաստանայ. զի որքան սա հաստատուն, է նոքա անշարժք են, յորոց և վկայութիւնս ներկայացեալ երևւի նոյնպէս և յոյս մեծ եա Սուրբ Աթոռոյն մերոյ Միածնաիջի և 'ի բնակիչս նորա։ Վեցերորդ՝ բարեկամս և ընտանիս արար զազգս իւր ընդ հոգևորացն և ընդ մարմնաւորացն Կայսերապերճ ռուսազնեաց՝ յայտնի փառաւորութեամբ, ցուցանելով նախ զծնումն իւր, զձեռնադրութիւնն քահանայի, զմկրտութիւնն, զպսակն և զԱստուածամատոյցն սուրբ պատարագ. և զայլ մասունս սուրբ և լուսափայլ դաւանութեան, և արարողութեան լուսաւորչակրօնից իւրոց. որով և բարձրացոյց զանունն մեր՝ 'ի միջի յոգնաթիւ

[1]) Սաղմոս 47։

բազմութեան ժողովրդոց քրիստոնէից։ Երրորդ՝ ակնկալութիւն մեծ յառաջադէմ վասն Հայոց յանդորրութիւն ներկայիցս և ապագայիցն, մարդասէր ողորմութեամբ ամենաբարձրելոյն Աստուծոյ. և զի ո՛չ սակաւ ողորմութիւն գտանէ ազգ մեր սովաւ, ուրախութիւն և պարծանք. զի ուր ուրեք յորժամ լսեն՝ ո՛չ սակաւ մխիթարին հոգւով, գոհութիւնս ՚ի վեր ընծայեն Տեառն Աստուծոյ, և նովաւ օրհնեն զբարեպատճառ կառուցանող. և մանաւանդ բազում օգտութիւն խնկ կայ մեզ ՚ի սմանէ՝ որ ՚ի մէնջ և ՚ի բազմաց անգիտելի է. ուրեմն Թողից և զմանաւորսն վասն երկարութեան. զի որք մտադրութեամբ հետեւին՝ կարող են իմանալ զօգուտ սորա. վասն զի սա ծնաւ վասն մեր զպտուղս բազում բարեաց ՚ի զովացումն մշակացս անբիծ քրիստոնէութեան հաւատոյ երեկոյացեալ ժամանակիս։

ԺԴ. Արեմն ուրախ լե՛ր և ցնծա՝ փառս տալով ամենակալ և ամենաբարի արարչին Աստուծոյ, զի աչք նորա է առ սիրողս իւր. որով և զանձս բարիս գանձեցեր քեզ յաւուրս բարութեան կենաց քոց՝ կառուցմամբն սրբոյ եկեղեցւոյս հասարակական բարեաց. որ առնելոց է զքեզ արժանաւոր երանութեանն Աստուածային և ժառանգորդ արքայութեանն երկնից, նաև զայնոսիկ որք կամակիցք և գործակիցք եղեն քեզ առ գործս այս լուսափայլ. Ո՞վ պատճառ բարեաց և հեղ անուն հոգի, համբարձ զձեռն քո՝ փառս և գոհութիւնս մատո յամենայն գոյից համարուն զօրութեանն Աստուծոյ՝ որ յառաջնցոյց զքեզ ՚ի գործ պաշտամանս այսորիկ մեծի խորհրդոյ կառուցման սուրբ եկեղեցւոյ, ՚ի լուսաւորութիւն և ՚ի փառաւոր պայծառութիւն հայկազեանս սեռի. և շնորհեաց քեզ զամենաբաւական զօրութեան շնորհն իւր երկնային, որով կարող եղեր ըստ ամենայնի ՚ի կատար հասուցանել զսուրբ տուն Աստուծոյն քո. որոյ աղագաւ բազումք երանեն զքեզ և գովեն, և արդարակշիռ լեզուաւ կոչեն զքեզ միշտակ բարեաց. և իբրև զփող՝ մեծագոչ ձայնիւ քարոզեն ՚ի բազում տեղիս զփարթամ բարեգործութիւն քո, զի և զամենայն զպատշաճն լցեր, և զետեղեցեր ՚ի սմա զուխտ աստիճանաւորաց զինուորեցելոց հոգւով՝ ՚ի պաշտօնակատար սպասաւորութիւն Ամենասուրբ Երրորդութեանն, յորոց օրհնիս միշտ ընդ Աստուծոյ հոգւով։

ԺԵ. Հայեաց և տես ո՞վ զուարթդ միօք և զօրացեալդ արագահաս օգնականութեամբն երկնային՝ թէ ո՞րքան մեծ է ՚ի քեզդ աւանդեալ խորհուրդ՝ կառուցանել զԱստուածընկալն սուրբ Սիոն ՚ի կողմանս հիւսիսոյ՝ զերեւոյթն փրկութեան մերոյ, և լինիլ քեզ գործակից այնոցիկ՝ որք նախ քան զքեզ հոգւովն Աստուծոյ վարժեալ և վերին իմաստութեամբն կարապետեալ, նախակարդ յառաջադրութեամբ զսոյն սքանչելի և խորին խորհուրդ՝ կանխապէս խորհիւ կազմեցին։ Ուստի և դու ըստ հանճարոյ շնորհի քումդ իմաստից ՚ի տուողէն վերնոյ բանին զօրութեան՝ կառուցեր զյարկ

հոգեկեցոյց, բարեաց և անջինջ յիշատակ համայնիցդ հոգւոց՝ զսուրբ սիօնն խորհրդոյ անկապուտ բարեաց, և լեառն ընդ որ հաճեցաւ Աստուած բնակիլ [1]. Վասն զի է՛ երկին յերկրի բազմապատկարար պարգևատու. և այսու գործովդ ծանուցար ամենից՝ յատնապէս գոլ գերաղանց մարդասէր հոգւով: Քանզի հաւատով դիմեցեր, յուսով ընթացեր, սիրով կատարեցեր. զիշխանս կոչեցեր. օծումն ցուցեր, փառաւորեցեր. զօրէնս պատմեցեր, ըղմիտս նորին բացեր, տեղեկացուցեր. ընտրիս արարեր, սեղան մեծ բացեր, և կերակրեցեր. զփափագ քո առեր, բաղձալւոյդ հասեր, 'ի կատար եկեր. զազգ քո սիրեցեր, պայծառացուցեր, շնորհիւ լցեր. բազմաց օգնեցեր. փառաց հասուցեր, յարգոյ արարեր. Օծեալ սուրբ տան քոյ, պատմէ ըղխան Քոյ, ազգին հայկազնոյ. անձինդ պատուելոյ, գործոյդ հրաշալւոյ, առ հայրս եղելոյ. այսքան մեծ բարւոյ, առ Տէր ցանկալւոյ, և գերյարգելւոյ. արժան յիշելոյ, առ Տէր դիմելոյ, և աղօթելոյ. վասն տոհմին Քոյոյ, համայն կենդանւոյ, և ննջեցելոյ:

ԺԶ. Եւ արդ՝ տեսանելով իմ զայս ամենայն և լսելով՝ միտք իմ հակի առ այնս ոմանս բնակօղս աստ, որք յառաջ քան զքեզ եղեն յաղգէ հայոց՝ որք ո՛չ են ընդ ձեռամբ արկեալ զփոյթ 'ի գործ շինութեան սուրբ եկեղեցւոյ և զօժանդակութիւն հասարակաց. իսկ դու այժմ այպիսի եղեալ ծանուցար. ապա ուրեմն յայտ է թէ՝ ամենեցուն քան զքեզ Նախագունիցն ճանաչիս վեհագոյն, և բարձրագունից զովութեանց արժանաւոր. վասն որոյ պատկանաւոր համարեալ զարձանագրութիւնս բանից, կամեցայ 'ի յիշատակ անմահ թողուլ զայս քեզ՝ և որք զկնի քո են գալոց ցեղք Վեհազինք: Վասն զի սէր միաբանութեան հայոց ցամաքեալ երեւի, և ո՞վ է՛ որ յառաջանայ գործել զայսպիսի բարութիւն, և ցուցանել զմարդասիրութիւն առ դաւանակիցս իւր ազգ բազմազան դիմաւ. քանզի են ոմանք յորժամ զօրանան արդեամբ՝ առ չարն հակին, զստորանկումն եղբարցն կամելով, և ո՛չ վասն Քրիստոսի խորհին զօգուտ հասարակաց. վասն այնորիկ հարկ է այսպիսիս ատեբրել գործ՝ և ընդ գրով արկանել, զի որք բարիքն են՝ առաւել արիասցին, և առ չարահակ դիտօղքն բարիասցին. որպէս և ունիմք օրինակ առ այս զկտակս սրբազանիցն. և մանաւանդ ո՞վ իցէ այնքան ապերախտ՝ որ զպտուղ այգւոյն ուտիցէ, և զանկօղս նորա ոչ օրհնեսցէ ըստ պատշաճի արժանաւորութեանն, և ո՛չ գոհարանեսցէ զնմանէ ուղղութեամբ. վասն զի լուսատու ճրագ գործոյս այսորիկ 'ի վերայ բարձրաբերձ աշտանակի է եդեալ. և զբազումս զուարճացուցանէ լուսովն իւրով. և եթէ ազգն հայոց 'ի գործ ածիցէ զսուրբ սէր հաւատոյ միաբա-

---

[1]) Սաղմոս 67:

նութեան, կարողէ միանալ սմա և զատիլ 'ի բազմատանջ կսկծանաց անօրինաց. զի ակներև տեսանի օգնութիւն սորա՝ որք յենուն 'ի սա քրիստոնէաբար, և որք դիմեն առ սա ազգօգուտ դիտմամբ. և սորին ազդաւ 'ի ծագաց մինչև 'ի ծագս աշխարհի ամենայն եկեղեցիք Հայոց, 'ի լսել իւրեանց՝ յարաժամ օրհնեն զքեզ, գովեն և բարեբանեն որպէս ըզ մարդասէր Հոգի. և բարձր պատուով փառաւորեն զքաղցր անուն քո՝ որպէս զգերազանցագունեղ բարերարս իւրեանց, և յամենայն սրտէ բարի կամեցօղս, մատուցանելով նաև զպարտականական զարժանաւոր շնորհակալութիւնս Տեառն Աստուծոյ քո և գործակցոյդ նորա։

ԺԸ. Ո՞վ սուրբ քաջ ըստ բարւոյն, և պատուաւորդ ըստ կամացն Աստուծոյ. Ո՞վ կնքեալդ Աստուածային սիրով. արարեալ գործք քո հնչեցին ձայնս բարեաց ցնծութեան և ուրախութեան 'ի լսելիս Արամազնէից. և մարդասէր Հոգի քո արժանի է յաւիտենական երանութեանն՝ բնակիլ ընդ երջանիկ հոգւոցն սրբոց. և քո խորագոյն և նրբագոյն իմաստութիւնն հաւատարիմ եղև և է՝ ազգին քո՝ որք լուեալ են զպատուական անուն քո. Վասն որոյ և զգերազանց բարերարութիւն քո պարտ է խորագոյնս նշանագրել 'ի սիրտս իւրաքանչիւրոց. Ո՞վ Հոգի հաւատարիմ, որ պատրաստեցեր այսմիկ փեսայի սուրբ եկեղեցւոյ՝ զսիրտ քո բարի, և իբրև զորթ պտղաբերեցեր զբարութիւն վասն հասարակութեան, և պտուղ գործոյ քոյ ծաղկեալ բուրէ զհոտ անուշից՝ յազգաց յազգս մինչև յաւիտեան. և ճոխութեամբ անբիծ խորհրդոյ և բարի մտաց քոց՝ բարձրացուցեր զփառս և ըզ պատիւ հոգևորացն Հայոց մեծաց՝ հանդերձ արդիւնաւորութեամբ երևելեաւ. և զուարթամիտ հանճարեղ արիութեամբդ Տեառնապարգև՝ գերազանցապէս հետևիս հասարակական բարեաց հայկազեանն սեռի. քանզի և յայտնի իսկ է՝ այս ամենից 'ի քեզ պատահօղաց, և զանընդել օտարական և զհեռաւոր աշխարհիկն իբրև զմերձաւոր սիրելիս պատուես արժանաւոր բարձրութեամբ որպէս զքոյդ արիւնակից. խոկամ այնքան առաւելուլ քեզ շնորհն Աստուածային, որքան զառաջինն ունիս ընկալեալ սակս այժմ անձանձիր աշխատանաց քոց և բարի վաստակոց հասարակ տառապելոց. և զի թէ բարութիւն գործել մարդոյ՝ արդարութիւն է առ Աստուած՝ ըստ գրոց, ո՞րչափ ևս առաւել առ նոյն ինքն Աստուած. առ որ մերձեցուցեր զգործս քո՝ տուն և տաճար և Աթոռ կառուցանելով նմա, յորում բնակի իսկապէս և անմիջաբար, և պատարագի և անեղական զօրութիւնն Աստուծոյ Հօր Քրիստոս Աստուածն մեր, որ յառաջնեցոյց զքեզ և փառաւորս արար զփրկչական արեամբն գնեցեալ ծառայդ իւր՝ վասն ծանրութեան աշխատանաց քոց, զորս կրեցեր և կրես միշտ՝ վասն սուրբ և ամենափառաւոր անուան նորա, և վասն ըստ հաւատոյ եղբարց քոց լուսաւորչակրօնից՝ իբրև մի հոգւով միացելոց, և յայտնապէս ծանուցեր ըզ

բղխեալն իմաստուն հոգւոյ քոյ զանխռով ուրախութիւն և եդեմական քաղցրութիւն մշտաւէտ զովացուցիչ հոգւոց և մարմնոց հայկասերից։

ԺԸ. Ո՜վ հոգի մարդասէր, զի 'ի Տեառնէ ես յարեալ և յարմարեալ առ հիւսիսայինս այս գաւառ փառաւորապերճ Արենակցօք Վեհազնուօք 'ի համայնս բարեհամբաւեալք լայնածոց միջոցաւ՝ առաջի հզօրաց և բարձրագունից վեհանձանց հոգեւորաց և մարմնաւորաց. Եւ ես վայելչաբար բազմիս քոյայնովք տամբք ընդ զօրագլուխ կառավարապետս նոցա. և Աստուածային բազմարուղխ և անսպառ ողորմութեամբն՝ զօրութենէ 'ի զօրութիւն յառաջացեալ՝ օրըստօրէ բարձրանայք 'ի պատիւ փառաց ճոխութեան 'ի կայսերական շնորհաց՝ ըստ յաջողելոյ Սուրբ կամաց քաղցրութեան անեղ Արարչին Աստուծոյ. Ո՜վ ընտիրդ 'ի պատուականաց վառելոց 'ի սուրբ սէր անմահ փեսային Քրիստոսի և յաւելեալդ 'ի սուրբ կամս նորա, զի այս սքանչա բարեգունեղ՝ զոր ցուցեր առ Տէր և առ յուսացօղս 'ի նա, է մասն սրբութեան այսմ գործոյ, և կատարումն ըստ գրոց. Վասն որոյ և տայ մնաց իմոց յաւելուլ գովութիւնս 'ի բարի ծանուցումն ամենեցուն մնայ իբր առիթս ցանկութեան, զիւրքն կամեցողութեամբ հետևիլ առ այսպիսի գործ բարեպաշտս. վասն զի հզօր է իբրև զմահ սէրն Աստուածային [1]. ըստ մեծի իմաստնոյն. և այս իսկ հաստատուն է և ամենեցուն ըղձալի՝ այսպիսի գործոց գովասանութիւնք, և օգուտ ևս է վասն բազում իրաց և հասարակական բարեաց. Վասն այնորիկ ոչ յապաղի եղէգնաշամբն գրիչ իմոյ նուաստի՝ արձանագրել 'ի նորումս դարի եղեալ մեծագործ բարերարութիւնս Ազնիւ ազնեայ Յովհաննէս Մեծի իշխանիդ հայոց. որ զնախայիշատակեալ սրբոցն ակնարկելով արծարծեցեր զշնորհ՝ զընկալեալն քո 'ի Տեառնէ Աստուծոյ զողորմութիւն։

ԺԹ. Հայեցարո՛ւք և տեսէք ո՜վ ցանկացօղք բարեաց հայկազունք և միահոգի հաւատացեալք, և 'ի միտ առէք ճշմարտութեամբ՝ զի ոչ միայն վասն իւր վաստակեաց Այրս գովելի. այլ և վասն ամենեցուն խնդրողաց զհաւատս լուսաւորչակրօն. Լուարո՛ւք ո՜վ հաւատարիմ դէտք և տեսուք Աստուածային սուրբ խորհրդոցն, ո՜վ իշխանք մեծամեծք և ամենայն ժողովրդականք հայկազունք, եկա՛յք գովեսցուք զայրս փառաւորագոյն՝ զհեղինակն հասարակական բարեաց, և զբազում մեծարանս կազմեսցուք սմա պատեհ պատշաճողութեամբ, որպէս զի արժանաւորութիւն գործոյ սորա միացի ընդ գովասանութեանս անպակաս հաւասարութեամբ. քանզի զբազումս յառաջեցոյց առ բարիս սքանչելի մարդասիրութեամբ և հաստատուն յարատեւութեամբ, արդար խորհրդով և ուղիղ մտօք հետևեաց նախնեացն սրբոց։

---

[1]) Երգոց Ը. 6։

և զճառեալս սրբազանիցն լրացոյց ջերմ սիրով՝ զնմանութիւն նոցա առ իւր բերելով զձև տեսակի Աստուածամերձ գործոյ. Վասն որոյ արժան է փառօք և պատուօք ճառել և յաւիտենական վարձոյ ընդունակ համարել զսա և զկամակիցս սորա առ այս գործ հրաշալի. Նաև բերկրալիր բերանով և օրհնառաք բարբառով հայցել վասն սոցա զԱստուածային սուրբ շնորհ:

Ի. Նու 'ի վերայ այսր ամենայնի հարկ իսկ համարիմ ձայնել առ արարածապատումն Մովսէս, և ասել ողոքաբար. զարթիր և լո՛ւր մեծդ Աստուծոյ և մարդկան, զի դու որ հոգւովն Աստուծոյ կազմեցեր զսուրբ խորանն վկայութեան ճարտարապետութեամբն Բեսեղիելի, որ լցեալ էր հոգւով Տեառն, և արդեամբ խուռն ամբոխից որդւոցն Յակոբայ հինն Իսրայէլի. ահա՛ այժմ ծառայն Աստուծոյ Յովհաննէս՝ նոյն Հոգւովն Աստուծոյ զօրացեալ և լցեալ հանճարով, սքանչելի խորհուրդ յառաջ բերեալ կառոյց զխորանաձևն փրկութեան նորոյս Իսրայէլի սուրբ զեկեղեցի, ոչ թէ բազում ժողովրդովք իւր օգնութեամբ արդեանց, ոչ. այլ արդար վաստակաւն իւրով միայն. ուրեմն մատո՛ զպաշտօն սորա առ Տէր՝ և հայցեա՛ զողորմութիւն վասն Սորա և իւրայնոցն:

ԻԱ. Զայնեցից և առ Աստուածահայրն ըստ մարմնոյ՝ Մարգարէն Դաւիթ, որ ասէր: Տէր սիրեցի զվայելչութիւն տան քո և զտեղի յարկի փառաց քո [1]. և թէ՝ Ուրախ եղէ ես որք ասէին ցիս 'ի տուն Տեառն երթիցուք մեք. և ասացից՝ լո՛ւր և ուրախ լե՛ր՝ զի որպէս դու սիրէիր զտուն Տեառն Աստուծոյ, ահա՛ ծառայն Աստուծոյ Յովհաննէս՝ հետևեաց Սաղմոսանի քո, և կառոյց յարկ Տեառն, և անդուլ ըղձիւ սիրէ զվայելչութիւն տան Նորա. Վասն որոյ հայցեա զողորմութիւն 'ի նմանէ զի ընդ երկայն աւուրս պահեսցէ զսա, և մասնակից արասցէ սուրբ փառաց իւրոց:

ԻԲ. Լսելի արարից և Արքայածնին Սողոմոնի, որ շինեաց զՏաճար Տեառն, և գրեաց առ յիշատակ թէ Պատուեա՛ զՏէր 'ի քոյոց արդար վաստակոց, և հան նմա պտուղ 'ի քոց արդարութեան արմտեաց [2]. և թէ՝ Լաւ է անուն բարի քան զմեծութիւն բազում և քան զարծաթ և զոսկի՝ շնորհք բարիք [3]. և ինքն աղօթէր ասելով: Տէր տո՛ւր ինձ զքոյոց աթոռոց զդաբանակալ իմաստութիւնդ, և մի՛ խոտան առներ զիս 'ի քոց ծառայից [4]. Ահա՛ վարժեալ 'ի քէն ծառայն Աստուծոյ Յովհաննէս՝ պատուեաց զՏէր արդար վաստակօքն իւրովք կառուցանելով վասն Նորա յարկ ցանկալի, և սիրեաց զանուն բարի քան զարծաթ և զոսկի. և լուաքցուդ սարասի հայցէ 'ի մէջ տաճարիս իւրոյ խնդրելով զիմաստութիւն սրբոյ Աթոռոյ Նորա:

---

[1]) Նլմց. լա. 1: [2]) Սաղմոս իե. 8 և ճիա 1: [3]) Առկ գ. 2: [3]) Իգ. 1: [4]) Իմաստութեն թ. 3:

ԻԳ. Գրեցից և առ Նահապետն մեր և Հայրն Նոյ, որ զՀարիւր ամս ողջոյն հետևեաց և կազմեաց զտապանն սուրբ, որով և ազատեալ ապրեցան իսկ արարածք յամենայն սեռէ երկնաասահմանաբաց հեղեղատէն ջրոց՝ որ 'ի վերայ երկրի. վասն զի օրինակ իսկ էր Նորոյս տապանի սուրբ եկեղեցւոյ. և ասացից. զարթիր և տես զտապանանմանն քո սուրբ զեկեղեցի զկառուցեալն 'ի ծառայէն Աստուծոյ 'ի Յովհաննիսէ, որով ազատեալ և ապրեալ գտանիմք յամենայն հեղեղատէ մեղաց, և կեցուցանեմք միշտ զհոգիս և զմարմինս մեր։

ԻԴ. Այլ արդ՝ և 'ի Նորումս սկիզբն կառուցանող զերկնանմանն սուրբ զեկեղեցի որ 'ի մեծն յանտիոք՝ յորում և քրիստոնեայ իսկ անուանեցաք. Նախապէս զմեծն Պետրոս ասեմ զգլուխն սրբազանից Առաքելոց՝ զամօլն հաւատոյ և զնախնի հիմն սուրբ եկեղեցւոյ, զոր գրէր առ հաւատացեալս ասելով թէ՝ Մեծամեծք և պատուականք աւետիք պարգևեալ են մեզ, զի Նոքիմք Աստուածեղէն բնութեանն լինիցիմք հաղորդակիցք. և թէ՝ զամենայն փոյթ 'ի մէջ առեալ ձերովք հաւատովքն մատակարարեսջիք զառաքինութիւն [1]). առ որ ասելի է թէ՝ ահա հետևեաց Աստուածահաճոյ հրամանի քոյ ծառայն Աստուծոյ Յովհաննէս՝ և մատակարարեաց զառաքինութիւն կառուցանելովն զսուրբ զեկեղեցի, որով և եցոյց զեղբայրսիրութիւն և զսէր. Զայսոսիկ է յանձին կալեալ և 'ի սոսին է յաճախեալ անդուլ ըղձիւ, լսելով և իմաստոյն՝ որ ասէ թէ՝ քան զամենայն ինչ զօրաւոր է Աստուածապաշտութիւն. և ճանաչելն զնա բովանդակ արդարութիւն է և արմատ անմահութեան [2]). և Ինքն իսկ ամենակալն Տէր՝ ասէ բերանով իմաստոյն թէ՝ Ուք պայծառացուցանեն զիս՝ զկեանս յաւիտենականս առացեն. [3]). և այս է պայծառացուցանելն զնա, կազմել անօթ սքանչելի գործ բարձրելոյն սուրբ զեկեղեցի. վասն զի սովաւ լցաւ երկիր ամենայն գիտութեամբ Տն [4]). որպէս ասէ Եսայի. և թէպէտ կայ մեզ ընդ գրով արկեալ առ այս բազում օրինակ և վկայութիւն յիշատակեալ յԱստուածայնոցն սրբազանից յառաջնոց, սակայն ոչ համարձակիմ յերկարել՝ այլ դոյզն դուլ մի ջուր բանի Աստուածութեանն նշուլից օրինակ ինչ ծանուցանել, և զընթերցողսն հրաւիրել 'ի նախանձ վասն գործոց և շնորհացն որք լաւքն են։

ԻԵ. Արդ՝ ահա ըղձալի համարիմ յիշել աստուստ զուարճախառն սրտիւ և պատեհ պատշաճողութեամբ զազնուամեծար զԱրենակիցս քո և զկենակից, և զպատուամեծար և զբարեպաշտ իշխանս՝ որք կամակիցք, արդիւնակիցք և գործակիցք եղեն ընդ քեզ, ազատազգեայ պաշտօնեայք առ այս տաճարս վերնայարկ. որ վասն փրկութեան անձանց ձերոց՝ մատուցէք զմեծութիւն ձեր՝ լսելով իմաստոյն. և զայս գործ ձեր բա-

---

[1]) Կթղ. 2. ա. ե։ [2]) Իմաս. ա. 12։ [3]) Եկղէս. ին. 31։ [4]) Եսայի ժա. 9։

րի՝ ընթանայ ընդ ձեզ 'ի յաւիտեան լծակցեալ ճշմարտութեամբ, զոր ցուցէք հասարակաց, և քաղցրագոյն պտուղ առաքինի հոգւոց ձերոց ընծայեցէք հոյակապեանս սեռի. Նաև ամենեցուն ձեզ պատահողաց ցուցանէք ըղմարդասիրութիւն և զնշան ողորմութեան. Վասն զի տոհմիւ էք օրհնեալ, գործովք բարեպաշտեալ, հաւատով գերազանցեալ, 'ի Տէր պարծեցեալ, գոյիւք ճոխացեալ, անուամբ բարձրացեալ, բարեհռչակեալ և փառաւորեալ. Սկզբնաւորեալք յերևելի գահից, 'ի ցեղէ երևելի իշխանաց, 'ի զարմէ ազնուաց, և առաւելեալք ամենայնիւ բարութեամբն Աստուածային. Լուարուք և 'ի միտ առէք ով վիճակեալքդ այս մեծի գործոյ, ոչ թէ պատահմամբ համարիմ ստացեալ ձեր զայս մեծութիւն և անուն բարութեան՝ ո՞չ, այլ ըստ վերնախնամ ամենակատար աջոյն արարչի տեսութեանն Աստուծոյ. որպէս և տիեզերափայլ սուրբ Աւետարանն Քրիստոսի ասէ թէ՝ ամենայն ինչ նովաւ եղև [1]). և սրբազանն Պօղոս ասէ թէ՝ զորս յառաջագոյն ճանաչեաց, զնոսին և կոչեաց, և զորս կոչեաց, զնոսին և հրաւիրեաց. և զորս հրաւիրեաց, զնոսին և արդարացոյց. և զորս արդարացոյց, զնոսին և փառաւորս արար [2]). զի որպէս առ Աստուած հանգուցեալ նախնեօք և ծնողօք, և ամենայնիւ տամբ ձերով եղեալ էք յառաջագոյն մեծք և երևելիք՝ առաջի ամենայն մեծամեծաց ձեզ պատահողաց և լսողացն յայլուստ՝ հոգևորաց և աշխարհականաց, նոյնպէս և այժմ առ գործս իւր հաճեցաւ նոյն ամենազօրն Աստուած զձեզ կարգել կառուցիչ սուրբ տան իւրոյ Աստուածաբնակի. որպէս և Արքայածնաւն ասէ: Մեծ է մարդ և պատուական այր ողորմած, բայց զայր հաւատարիմ գործ է գտանել [3]). և ըղձամ հոգւով զի առ ամենայն ասացեալս բան՝ հաստատէ վերատեսուչն ձեր հոգի և միտ. ուրեմն տուք փառս ամենիշխան թագաւորին և Տեառն ամենայն արարածոց, որ տնօրինեաց 'ի ձեզ՝ առ ձեռն երևոյթ բերել զնպատակն ճշմարտութեան և աւիթն փրկութեան յայտնի խորհրդն Աստուածային, որ է խնամակալ զօրեղ, յարաժամ բարեխօս, փութաժամն օգնական, և առատ մատակարար ամենայն բարեաց. Ո՜վ անպատմելի և բաղձալի երանութեանս՝ որ շնորհեցաւ ձեզ 'ի Տեառնէ Աստուծոյ, հողածին զարմիցդ ծնանիլ զվերնայարկ անձեռագործ խորանին օրինակ՝ արդար արդեամբ և արի ջանիւ՝ յորում բաղխի երրորդական արարչութիւնն Աստուած. և այն որ 'ի ներքին սահմանս հոգւոյ և սրտի ձերոյ գտանի իսկական բարութիւն, զայնս 'ի յարտաքինս ցուցէք յայտնապէս, զպտուղ իբրև զառհաւատչեայ և գրաւ մարդասիրութեան. որ և նոյն Աստուածայինն սուրբ շնորհ արժանացուցէ զհամայն ծնունդս ձեր և զարենակիցս՝ յարաժամ ցուցանել ազգիս հայոց

[1]) Յօհ. ա. 2: [2]) Հռոմ. ը. 30: [3]) Առակ. ի. 6:

զայսպիսի պտուղ բարութեան և մարդասիրութեան. որպէս զի երջանիկ ծնողք Աստուածամօրք, բարեհարազատ եղբարբք, երկնաղաղարդ և բարեպաշտօն քերբ, համեստափայլ՝ բարեհամբաւ՝ մեծահաւատ և մաքուր բարեաց ընտրող՝ Աստուածազգեաց կողակցօք, բարեծնունդ և օրհնաժառանգ զաւակօք, և յոքնաթիւ արենակցօք ծաղկեցելովք. անսպառ ողորմութեամբ Տեառն եղիցիք բարեհամբաւեալք՝ և մշտնջենաւորապէս հնչեալ պատմեսցի տիեզերալուր ձայն ամենաբարի գործոցն ձերոց. զոր Տէր Աստուածն գթութեամբ խնամոց իւրոց զարմանէ հանապազ. Աչք տեսչութեան ողորմութեանն Աստուծոյ և լոյս երեսաց նորա 'ի վերայ ձեր եղիցի. որով և արժանի լինիջիք Աստուածային անահման և անսպառ բարութեանն վայելելոյ՝ յերկակի կեանս ձեր լուսափայլ պսակօք. ամէն:

ԻԶ. Եւ արդ՝ զի՞նչ մատուցից և կամ զի՞նչ նուիրեցից զորխուրն և զփոխարէնն Անուն բարի Ամենակալ Արարչին իմոյ Աստուծոյ՝ տուողին բարեպատճառ և հոգեւոր վաստակաւորացն ազգիս հայոց՝ այսպիսի անհնոյ և անահման բարութեան և մեծագոյն պարգեւաց. ուստի՞ կամ արծա՞թ և կամ զո՞սկի այսպիսիս որ յերկրէ գոյանայ և երկրաւորաց է սիրելի, ո՛չ. վասն զի անհամեմատ առէ իմաստունն Արքայածին. այլ 'ի խորոց սրտէ և 'ի հոգւոյ ուղիղ մտաց՝ մեծաւ շնորհակալութեամբ և գոհունակ ջերմեռանդութեամբ՝ զաղօթս և զերկրպագութիւնս մատուցանեմ յամենայն յանձնէ և յամենայն զօրութենէ, և անդադար փառաբանութիւնս 'ի վեր ընծայեմ քեզ ամենաբարձրելոյդ իմոյ Աստուծոյ, մեծացուցանեմ և փառաւորեմ զահեղասքանչ Սուրբ Անուն և Տէրութիւն քո. վասն զի մեծագոյն է քան զամենայն գովութիւն և զարմանալի է մեծագործութիւն քո, վասն որոյ պարտաւորեալ հարկաւորիմ փառաբանութեամբ վերաբերացուցանել զօրութեամբ քով, զի զամենայնն դու արարեր, և քև կատարին ամենայն բարեկամեցողութիւնք. իսկ արդ՝ եղիցի զամենայն զօրութիւն անձին իմոյ 'ի լեզուի իմում, և տարածեցից առաջի փառաց սուրբ տաճարի քոյ՝ և 'ի վեր համբարձից զձեռս, զմիտս և զգայութիւնս իմ առ քեզ Տէր Աստուած և արարիչ ամենայնի. և 'ի ծունկս խոնարհեալ մաղթելով հայցեմ յանահմանելի Տէրութենէդ՝ զի որ սփռողդ ես և բաշխողդ ամենայն բարութեանց և քաղցր առ արարածս, հայեսցիս 'ի խնդիրս նուաստ ծառայի քոյ օծելոյ և 'ի մշտապաշտօն նուէրս սուրբ տաճարի քոյ, և շնորհեսցես զլուսապայծառ շնորհդ քո ամենաբարի՝ զի եկեալ առաւել ևս պայծառացուսցէ ամենայն բարութեամբ զհոգի՝ զմիտ և զմարմին բազմավաստակ և բարեպատճառ կամարար ծառային քո Յովհաննիսի և իւրայնոցն ամենից գործակցելոցն առ օգուտս հայկազունեաց. և ընկալ զուխտս, զպաշտօնս, և զամենայն նուէրս սոցա 'ի հաճոյս բարերար և սուրբ կամաց քոց, որպէս զբուրեալ խունկն հաճոյական Մարգարէին քո Դաւթայ որ 'ի խորանին

Սեղովմայ. և որպէս զպատարագն Աբէլի, զՆոյին և զԱբրահամուն, և խառնեա 'ի յոքնահամար զարդս ամենագեղս երկնային սուրբ գանձուցդ. և յիշեա զանուն սոցա յաւէտ 'ի գաւիթ սրբութեան քոյ վերնոյդ Սիոնի Աստուածարնակի, հանդէպ սեղանոյդ սրբոյ Արարչընկալի անդրաւ յաւիտենիւ. Ամէն:

ԻԸ. Արդ՝ ըղձիր ընթացից պատմաբան գովասանութեանս՝ առէն կնքեցից, և փոխադրեալ այլաբանեցից 'ի զանազան բարեբաստութիւնս յոլով յոլովմամբ, վասն զի աչք հոգւոյ իմոյ միտ՝ ոչ համբերէ լռել, այլ սպառազինեալ հարկադրէ զիս սաստկութեամբ՝ 'ի վեր գերահռչակել զարժանապատիւ զքո մեծութիւն, ով նախապատւեդ ազնուութեամբ և փառաւորդ տեսլեամբ, օգտակարդ տառապելոց և ցաւակիցդ նեղելոց, իմաստունդ խորհրդով և խոնարհդ սրտիւ, բարեկամեցողդ հասարակաց և ծաղկեալդ առաքինութեամբ. և ըստ պատահմանն դիմաց պատկերի յաւէտ ցանկալի. և 'ի փրկագործ ծննդենէ աւազանին նորոգութեան Աստուածութեանն որդեգրութիւն՝ դաւանութեամբ հայ և լուսաւորչակրօն բոլոր տամբդ ամենայնիւ. զի մի ես, և 'ի հազարս համեմատեալ բարի համբաւով և քրիստոնէական մարդասիրութեամբ առ ամենայնս բարեգործեալ, 'ի մէջ տիեզերատարած երկրաւորաց. և 'ի ցօղոյ պարգևողին ընտրական սերմն բարեբոյս, և ուղղադէտ պաշտօնեայ տնօրինեցելոյն մարմնով. և զի ճշմարտութեան ջահիւն վառեալ բորբոքի սիրտ քո բոցալոյս անաղօտաբար ճառագայթիւք՝ առ նորահրաշ և գերապայծառ նշանս վերնայարկ և տաճարս սուրբ, որոյ զաւետին օգտակար՝ հոգևոր մարմնաւոր ցնծութեան, ընդհանուր առձայնէ բոլոր հայաստանեացս 'մշտահոս բղխմամբ զմարգարէականն Դաւթայ պարծելով 'ի ձեռն քոյ լեառն Սիոն 'ի կողմն հիւսիսոյ 'ի քաղաք Կայսերուհւոյ մեծի. և ամենայն պատճառ նիւթոյ բանից առութեանս ոչ է 'ի վայր և կամ 'ի զուր. քանզի հարկաւոր է 'ի ծանօթութիւնս բարութեան հրաւիրել զամենեցուն միտս, և մանաւանդ՝ ըստ գործոյն զգովասանութիւնն կշռադատել. զի ոչ լինի միապէս խօսել առ ամենայնս. որ և ակն ունիմ Տերամբ՝ այսմ ամենայնի յայտնի իսկ լինիլ լուսափայլ մտացն Աստուածասիրաց. նա և կար իսկ ոչ է ամենայն մտաց ախորժ մարգարէանալ ըստ պատշաճին. և թէ որպիսի ջերմեռանդ սիրով, և որքան անսահման շնորհակալութեամբ պարտ է լինիլ գոհութիւնս հայոց ազգին յաղագս սոյն մեծաքանչ բարերարութեանց, որ 'ի վեր է քան զճառ շըրթանց և զիմաստ բանից զօրութեանց, և գերազանց քան զասացեալ չափահասմանի խորին խորհրդոյ: Ուրեմն 'ի միտ ածցեն տեսօղքն և լսօղքն սքանչելի գործոյս մեծի, և ցանկալի համբաւոյս զովացուցչի հոգւոց մուծողի 'ի յօդուածս և 'ի զգայարանս իւրաքանչիւրոց առիթս ուրախութեանց՝ քանզի ունիմք մեք հայքս ձիրս պարգևաց շնորհալի յօրս այս հրաշալի տա-

նախմբութեան Սրբուհւոյ և մեծի կուսին Կատարինեայ վկայուհւոյն և սուրբ եկեղեցւոյ նորա, զորս և արկանել միջնորդ և բարեխօս առ ողորմածն և ամենագթածն Աստուած. ընդ որս և աղաչել զի կենսատու և Աստուածային նշանի սրբոյ խաչի անբարբառ բարեխօսութեամբն, և մաքուր մաղթանօք ամենօրհնեալ սուրբ կուսին և Աստուածածնին Մարիամու, և աղաչանօք մեծին Յովհաննու հրաւիրօղ սուրբ կարապետին, և նահատակութեամբ նախավկային մեծի սրբոյն Ստեփաննոսի, և պաղատանօք երկնահրաւէր Առաքելոցն սրբազգեստից, և հայցուածովք արի երջանկացն մարտիրոսաց, և սուրբ աղօթիւք միշտապաշտօն մաքուր միանձանցն ճգնազգեցից, և ամենայն նախընտիր սրբոցն անբծից, և կենդանի մարտիրոսութեամբ Սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, որոց զօրեղ և անդառնալի հայցուածովքն գթացեալ ողորմեսցի և պարգևեալ շնորհեսցէ մարդասէր Հոգի և Աջին Յովհաննէս Իշխանիդ, և որդւոյ քոյ միայնոյ և պատուականի. և համեստափայլ մեծահաւատ զուգակցոյ քոյ բարեպաշտուհւոյ, և շքեղազարդ սիրասուն և աղնիւ եղբարցդ և բարեպաշտ քեռդ երկուղազարդի, և բարի բուսոցն ձերոց ամենից մեծի և փոքու, և ամենից քոց արենակցաց, զԱստուածային և զերկնային անսպառ բարութիւնն բազմապատիկ՝ որպէս զի եկեալ պայծառացուսցէ զձեզ ամենայնիւ բարութեամբ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ անզրաւ յաւիտենիւ ամէն *)։

Ստեփաննոս տեղապահ Հայոց Տփխիսեցի, 'ի ցեղէն Խօջամեան։

Բ.

Արդ ցնծա Յովակիմ՝ վեհաղնեայ Իշխան,
Զի եղեր պարծանաց՝ առիթ Հայկազեան.
Ընդպատում ջանք քոյին՝ Ազգասիրութեան,
Փայլին որպէս արեգակն՝ 'ի լոյս տուընջեան։
Կանգնեցեր հօյակապ՝ չքնաղ ճեմարան.
Ժողովս քեզ յիշատակ՝ և անմահ արձան.
Ուր յարգանդ սեղմեալ՝ մանկունք Արամեան,
Նոր 'ի նորոյ ծնանին՝ յիմաստ գիտութեան։

---

*) Զձեւս զայս տպագրել կարեւոր դատեցաք վասն այնորիկ և եթ՝ որք ըղձանանն գիտել, թէ որպիսում արժանացաւ գովութեան Յ. Լազարեանց՝ կառուցմամբ եկեղեցեացն Հայոց 'ի Կայսերական քաղաքին։

Աղեքսանդր Առաջին՝ կայսր համայն Ռուսաց
Ընկալաւ զայդ դպրոց՝ 'ի խնամս իւր շնորհաց.
Որով ելից զփափագ՝ սրտիդ բաղձանաց.
Եւ բարեբաղդ կացոյց զսերունդս Լազարեանց:
Ցնծութիւն կենաց ձերոց՝ արդ նորոգեցաւ,
Հրաշիւքն Աստուածային՝ ազգին շնորհեցաւ.
Որդիդ անդրանկածին՝ մինչ պսակեցաւ,
Համայն կիրք տրտմութեան՝ 'ի քէն մերժեցաւ:
Օրհնեալ լիցի դաշն այն՝ սուրբ ամուսնութեան
Աղայ Յօհաննիսի՝ Եղիազարեան.
Որոյ ժառանգութիւնն՝ ըստ տնօրէնութեան,
Կացցէ միշտ անփոփոխ՝ այժմ և յաւիտեան:
Որդիք ձեր պատուեցեալք 'ի կայսեր շնորհաց,
Ունին միշտ պահպանել՝ զպատիւ նախնեաց.
Որոց անուանք փայլեալք 'ի գիրս աշխարհաց,
Են և մնան արժանի՝ գովութեանց բազմաց:
Զօրացիր և քաջ լեր՝ երջանիկ Իշխան,
Տես և պսակ որդւոյդ՝ կրտսերն սիրական:
Զի նա է Բենիամին՝ զաւակ ծերութեան.
Որ լինի ձեզ պատճառ՝ վերջին խնդութեան:

Մելքիսեդեկ Արք եպիսկոպոս Գամաղիէլեան Թէֆլիզեցի:

Գ.

Ասի յերգըս՝ սաղմոսերգու՝ տեսանողի,
Թէ փողս հարէք՝ 'ի գլուխս ամսոց՝ յաւուր մեծի.
Առ որ համբուն՝ կաճառք էիցս բանաւորաց,
Խնդամք 'ի սիրտ՝ ընդ մուտ մեր այս՝ յորս տենչանաց:
Բայց նարդենիս՝ յայս ըսկզբան՝ տարւոյս նորոյ,
Նախ արժան է՝ օրհնել զօրհնեալն՝ բղխիւ հոգւոյ.
Այն զի հասոյց՝ ողջամբ անձին՝ յորս սերկեան,
Զաքանազեան՝ Մեհդ վեհաղուն՝ անզուգական:
Բոտմամբ սրտի՝ բամեալ 'ի մի՝ հոգեւորայ,
Կանխեալ առ Տէր՝ ջերմ աղօթիւք՝ առ նոյն գըլթած.
Առ յաւելուլ՝ յանդին կեանս՝ վեհագնութեանդ,
Զգերահռչակ՝ համբաւս անուն՝ զոյգ բարութեան:

Արդ ընդ սմին՝ ըղձամ յօդել՝ զձիրս բնածին,
Որք սեպհական՝ անմիջաբար՝ ձերոյ անձին.
Ո՛չ յերկրպագել՝ Նորին բարւից՝ սովորաբար,
Եւ ոչ հիւսմամբ՝ վսեմ ոճիւ՝ ճոռոմաբար:
Հաւաստի է՝ թէ դուք էք ծառ՝ վերընձիւղեալ,
Յարմնէ ծառոյ՝ Աղաւարեանց՝ շառաւիղեալ:
Տնկեալ 'ի գնացս ջուրց յորդութեան՝ սերտ հաւատոյ,
Բարգաւաճեալ՝ պտղով սիրոյ՝ և սուրբ յուսոյ:
Արդ 'ի ներկայս՝ չքնաղ տոհմից՝ Հայկազունեաց,
Եղէք ահա՝ Հայր խնամատար՝ հոգածութեանց:
Հանգոյն մեծի՝ Հօրն հաւատոյ՝ Աբրահամու,
Էիք և էք՝ ասպընջական՝ ամենեցուն:
Մի՛ լիցի ձեզ՝ ոչ քատակել՝ ըստ նըմանւոյ,
Տապանակերտ՝ Հօրն Նոյի՝ յոյժ արդարոյ.
Արդ զէտ Նորուն՝ կազմեցիք աստ՝ զտապան հոգւոյ,
Առ բարձրանալ՝ յալեաց ծովու՝ յարկըն լուսոյ:
Դուք Յովսէփայ՝ գեղաւորի՝ համանմանօղք,
Յառատաձեռն՝ պարգևս ձրից՝ ըղձակաթօղք.
Քաղցիս սովու՝ թալկացելոց՝ յար կազդուրիչ,
Փշուր հացի՝ կարօտելոց՝ լիացուցիչ:
Պարզ և վճիտ՝ աղբիւր ջրոյ՝ յոլովակնեան,
Ոռոգեցեալ՝ առատօրէն՝ 'ի տունս Հայկեան.
Զովացուցիչ՝ պապակելոց՝ կիզմամբ տապոյ,
Եւ արբուցիչ ծարաւելոց՝ 'ի տենչ հոգւոյ:
Բարունն հանուրց՝ էակն էից՝ արարածոց,
Որ էնն Աստուած՝ լոյսն եռանձնեայ՝ սուրբն սրբոց.
Մ՛իշտ օրհնեսցէ՝ զկեանս ձերոյ՝ Գերազնութեան,
Առ լինելոյ՝ մեզ հովանի՝ պաշտպանութեան:
Իրազեկ եմք՝ յոյժ հաւաստեաւ՝ ամենեքին,
Թէ որբք համայն՝ նաև այրիք՝ մերասերին.
'Ի ձէնջ տածին՝ միշտ և յաւէտ՝ առատապէս,
Յորոցդ բուժին՝ քաղց սովութեան՝ արագապէս:
Ի՜ այս ծնունդ՝ յամուլ մօրացս՝ յորովայնի,
Զոր արդ ձօնեմ՝ պատկառադէմ՝ ձերում Վեհի.
Ընկա՛լ Տէր իմ՝ զայն հիւսուած՝ փանաքիմաց,
Եւ լեր գթով՝ ներողամիտ՝ տհաս մտաց:

Աբրահամ Դպիր *) Վաղարշապատեցի:

*) Յետոյ՝ Վարդապետ:

Գ.

ԳԵՐԱՊԱՆԾ ԻՇԽԱՆ, ԱՌԱՏԱԳՈՒԹ ՀԱՅՐ ԻՄ,

Ողորմած Տէր:

Ո՞չ ապաքէն արժան է ամենաջերմեռանդ որդեկան 'ի գլուխս ամսոց, և յաւուրս նշանաւորս տարւոյ ներկայանալ առաջի Հօր իւրոյ, և որդիական սիրալրութեամբ գոհանալ զնմանէ վասն բազմակերպեան շնորհաց և գթութեանց, որովք վայելէ նա: Արդարև թէպէտ եռանդն սիրոյ և ջերմեռանդութեան բորբոքի 'ի սրտի իմում առ ձեզ, բայց որովհետև եմ ես հեռի 'ի ձէնջ այժմ, վասն այսորիկ թղթով ներկայացեալ 'ի սպասու ձեր, շնորհաւորեմ ամենախոնարհաբար զնոր տարի և զբարի կաղանդ և զյառաջակայ ծնունդ և մկրտութիւն կենսատուին մերոյ Յիսուսի Քրիստոսի, աղաղակելով միանգամայն առ Աստուած.

Յաւիտենից՝ Աստուած հզօր՝ ողորմութեան,
Աղբիւր շնորհաց՝ ամենատատ՝ ձիր փրկութեան...:
Խնամք նուազաց՝ որք են պտուղ՝ մնաց մարդկան,
Քեզ մատուցեալք՝ ջերմ բաղձանօք՝ եռանդութեան,
Որպէս զբուրումն՝ անուշ խնկոց՝ կամ կնդրկան,
Ընկալցիս սիրով՝ և վարձատրես՝ ըստ քում բարութեան:

Ի սկզբան՝ ամիս նորոյ՝ ուրախութեան,
Օրհնեա զպսակ՝ քաղցրութեան քո՝ անճառական,
Իմ բարերար՝ Վեհազնէի՝ Աղազարեան,
Յովակիմայ՝ մեծ Իշխանի՝ տուր զերկար կեան:

Խնամեալ պսակ՝ է նա գլխոյ ազգի Հայկեան,
Ծաղկապաճոյճ՝ յոյժ երփներակ՝ վայելչական,
Ուրեմն Աստուած՝ հանդերձ զարմօք՝ և տոհմական,
Պահեա զնա՝ մշտադալար՝ և անսասան:

Այլ ես երբեմնապէս մտածելով զանպատում մարդասիրութեանց ձերոց՝ որովք լցուցիք զիս, և զանճառելի ազգասիրութենէ ձերմէ քննելով, յորմէ ստիպեալ ձեր՝ որպէս թէ անքուն աչօք հոգայք զբարօրութենէ համազգեաց ձերոց և հայրենակցաց, նուագեմ առ ձեզ.

Ո՜վ պսակ ակնակապ՝ ցնծութիւն Հայկազանց,
Ապաւէն անսասան՝ նման քաջ մազգեզանց,

Նա ունօղս տենչանաց՝ 'ի ստացուած գիտութեանց,
Ուսուցիչ վաստակօք՝ զծաւ պտղոյն գիտութեանց։
Մ'իշտ զաջ քո՝ յիմ վերայ՝ դի՛ր սիրով՝ գթութեանց.
Նարբառով՝ խրախուսման՝ բերկրեցո՛ զձիրս մտաց։

Յարութիւն քահանայ *) Ալամդարեանց։

'Ի 1814. 'ի Դեկտ. 28.
'ի Մոսկով։

Ի.

ՎԵՀԱԶՆԵԱՅ ԵՒ ՊԵՐՃԱՊԱՅԾԱՌ ՀՈՅԱԿԱՊ ԻՇԽԱՆ, ԱՂԱ ՅՈՎԱԿԻՄ։

Քաջազանց նախնեաց դիւցազնացելոց քաջագործութիւնք, և հոյակապ շինուածոց նոցա հրաշակերտ մեծագործութիւնք յիւրաքանչիւր դարս ընդ ոլորտս տիեզերաց հռչակեալք, որոց կարի սակաւուց 'ի բազմաց անուն երբեմն այսօր հետք նշմարին, պատճառս տուեալ քաջարուեստ հեղինակութեան գրչաց, ո՛չ եղեն անհետ գլխովին 'ի յիշատակաց. և ոչ կարաց գողանալ զնոսա 'ի մէնջ հնութիւն ժամանակաց, պաշտպանեալ 'ի մշտնջենաւոր մատենագրական յիշատակութեանց մեզ աւանդելոց՝ ցարդ առ մեզ յածելոց։ Յայսպիսի մեծագործութիւնս արժանի գովաբանական յիշատակագրութեանց քան զամենայն բարձրագլուխ պարծանօք պսակեալ ճանաչի գործ՝ օգտակար հասարակաց, մանաւանդ հայրենեաց։ Եւ զարդիս՝ զհաստունացեալ պտուղ սոյնօրինակ կատարելութեանց տեսանեմք արդիւնացեալ յազգատոհմի վեհանձնացելոցդ. յորս անդրանիկն սկսանի կտակագրութեամբ, և կրտսերն կատարէ արդեամբք։ Ո՛վ գեղեցիկ միաբանութեանս՝ ուր կրտսերն ընդ երիցուն գտանի անդրանկացեալ և երիցացեալ 'ի խումբս գովելեաց, որդեգրելով զմանկունս հայկազունս, և 'ի մի փարախ հայրենասիրութեան հաւաքելով, 'ի յաւէրժական ժառանգաւորութիւն կտակագրեալ դպրոցին, զոր հանդերձեալ էք հիմնարկել, կանգնել, կառուցանել, և հաստատել լոյս կտակաւ աւանդութեան բարեյիշատակ և հոյակապ Իշխանի հանգուցելոյ Վեհազուն Աղա Յովհաննու երէց եղբօր ձերոյ։ Եւ որ առաւել գովելին է՝ ընդ այն զուարճացեալ խնդամ հոգւով՝ զի փոյթ մեծ ունիք յանձին՝ ոչ միայն զի հաստատեսցի դպրոցդ, այլ և ընտրողական հանճարով ճանաչէք՝

*) Տես՝ Վարքագիր։

թէ որպէս հաստատեսցի. որպէս զի դիտումն ձեր, այն է՝ պայծառութիւն ազգիս գեղեցիկ կարգադրութեամբ 'ի լոյս ընծայեսցի։

Արդ՝ զո՞ր գովութիւնս և զո՞ր հաճոյութիւնս մատուցեալ ընծայեսցից քեզ գովանիդ 'ի բազմաց, ո՞րպէս կարացից հատուցանել զպարտիս երախտագիտութեան հասարակաց, 'ի դիմաց հասարակութեան ազգիս դառապելոյ. զի՞արդ ոչ համարձակեցայց զգաստութիւն ժամանակիս կոչել երջանիկ դար, և մայր և դայեակ լուսաւորութեան։ 'Ի բազում գլխոց ձեռնարկել և յօրինել զգովեստս արժան էր, բայց անդիտանամ՝ ուստի՞ սկսայց, և զո՞րն 'ի նոցունց նախամեծար դասեցայց. և այսուիկ տարակուսեալ, և առ սաստիկ ուրախութեան սրտիս՝ յարտասուս սիրոյ հարեալ, վերջանամ 'ի զուգակշիռ հատուցմանէ պարտեաց գովեստից, այլում թողեալ տեղւոյ և ժամանակի և ճարտար գրչի ոսկեգիր դրոշմել 'ի մատենագրութիւնս, առ 'ի յապայս յիշատակ կենդանի և անջնջելի...։

Պօղոս Սեբաստացի։

'Ի 1811. Յունիսի 28.

'ի Թաւրէժ։

Զ.

ՎԵՀԱԶՆԵԱՅ ԵՒ ՊԱՅԾԱՌԱՓԱՅԼ ԻՇԽԱՆ, ԱՂԱ ՅՈՎԱԿԻՄ.

Ո՜վ աղետալի ձայնիս, ո՜վ դառն ժամանակիս. ուր յանակնկալից հասեալ պատեալ զինեւ խաւար տրտմութեան, զերկրական բանս սովորականս՝ 'ի ցաւագինս և յանսովորս յեղաշրջել հնարիմ անհնարին դժուարութեամբ, բռնադատեալ յակամայ կամաց. ո՞րպիսի գրիչ բաւեսցէ զօրել յօրինել բանս մխիթարութեան, 'ի տեսանել զխրտ գործակցութ հօրդ բեկեալ, և ըմբռնեալ 'ի դժնդակ աղէտս ցաւոց և հեծութեանց վասն կանխելոյ վաղաժաման օրհասի Վեհազուն դստեր ձերոյ սիրելւոյ Կատարինեայ Նէկխումեայ։ Բեկցի խորտակեսցի և գրիչ ցաւակցիս, և մի՛ եւս յաւելցի այսուհետև զայսպիսիս ուղղել առ ձեզ բանս մխիթարանաց. բայց ո՞ւր արդեօք գոցին բանք և խօսք։ Մարդկային մտաց գիտք տկարանան, զմտաւածեալ զանջրելի վճիռ մահկանացու բնութեանս. որ զամենեսեան ընդ մի և նոյն օրինօք պարտաւորեալ մահու, ինքն անօրինաբար վարի ընդ մեզ. ոչ յալեաց ծերութեան ամաչէ, և ոչ հասակի մատաղութեան խնայէ։ Ո՜վ վիրաւ անհնարին և անխտիր յափշտակող, ոչ 'ի հզօրաց ակնածու, և ոչ տկարաց խնամածու. որում 'ի դէպ գայ զողբերգականս յարել բանս՝ ասելով։

„Թէ՛ և աղքատն՝ 'ի խրճիթ իւր՝ անընչութեամբ՝ ամրանայ,
անդուլ օրէնք՝ դառն մահու՝ զնա անտի՝ գողանայ։
Եւ մինչ զինուորքն պահապանք՝ հսկեն առ դրամբ՝ արքայի,
սորա և անդ՝ մուտս գտեալ՝ յափշտակէ՝ և տանի։

Այս է անողորմ վճիռ ողորմելի վիճակի առժամանակեայ կենցաղոյս մերոյ։ Ոչինչ գտանեմք անդ ճշմարիտ՝ եթէ ոչ զսուտութիւնն անցաւոր աշխարհի՝ որ 'ի բարեմանութենէ ճշմարտութեան վերջացեալ, զմահն մի միայն ունի իւր սեպհականեալ ճշմարտութիւն՝ պարտաւորեալ նմա և զակամայ հաւանութիւնս հասարակաց։ Արդ՝ այնպիսում վախճանի վիճակեալ գտանի ազգ մարդկան՝ մինչ զի իրաւամբ պարտիմք լալ զծնեալս, զի յերկունս ցաւոց ծնանին, և 'ի ցաւս աշխարհի սնանին. և երանել զննջեցեալս զի զերծեալ 'ի ցաւոց, և զպարտս հասարակաց վճարեալ, զերջանիկ հանգիստ յաւիտենական հանգչին։

Զայս ամենայն քաջ գիտէ կորովամտութիւն Վեհազնութեան ծնողիդ։ Ճանաչէք և զայն՝ զի զմահկանացու ծնայք. ապա և 'ի մահուն մի՛ անդր քան զչափն ցաւեսջիք, այլ՝ զպարտս բնական՝ ընդ բարոյականին բարեխառնեալ վճարեսջիք։ Բայց գիտեմ, զի դառնաղէտ կիրք ցաւոց ծնողական սրտիդ՝ խիստ և խորագոյն գոլով, թերեւս ոչ ազդեսցէ ձեզ գեղ մխիթարական բանից. այլ չի՞ք տարակոյս, թէ յայսպիսի անխուսափելի արկածս աշխարհային վշտաց՝ մեծավայելուչ երկայնմտութեամբ առաքինացեալ՝ 'ի մէջ մահկանացուաց ունիք անմահանալ. աստ՝ գերօրինակ փառօք, և 'ի հանդերձելումն՝ անթառամ պսակօք։ Եւ որ զիրեալդ 'ի մահկանացու կենացս փրկեաց սիրելով, անմահականին արժանացուսցէ կենաց Մխիթարիչ սուրբ Հոգին, 'ի յաւերժական մխիթարութիւն հոգւոյ և մարմնոյ ձերոյ յանտրտում կեանս։ Ողջ լերուք 'ի կրկին կեանս։

Նոյն։

'Ի 1811. Յուլիսի 9.

'ի Պուքրէշ։

Ի.

ԳԵՐԱԶԱՆՑԱՓԱՅԼ ՎԵՀԱԶՆԵԱՅ, ԱՂԱ ԽԱՉԱՏՈՒՐ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ.

Ընդոյդ բարեբար՝ ազգասէր Իշխան՝ ազանց Հայկական,
դու վեհազն արդոյ՝ մեծ անուանակիր՝ Խաչին Փրկչական։
Յարմատոց բարեաց՝ շառաւիղ բարի՝ յօրհնեալ տան Լազրեան,
ծագեցար փառօք՝ իբրև գեղարփի՝ շող արեգական։

Մեծ ուրախութիւն՝ և մեծ ցնծութիւն՝ արդ ինձ բազմացան,
    զի լուսոյդ շնորհաց՝ զգալի աչօք՝ եղէ ես արժան:
Յանեղին աջոյ՝ մշակեալ այգւոյ՝ դուք ձիռ օրհնութեան,
    տեսանիք այսօր՝ իբրև ձիր յաւելեալ՝ տանս Արամեան:
Արդ՝ Մայր մեր Աթոռ՝ լուսեղէն տեղի՝ Միածնին իջման,
    ընկալեալ ինքեան՝ զգին Ձեր անգին՝ բարերարութեան:
'Ի տրիտուր նմին՝ ձօնէ Ձեզ այժմիկ՝ բղխեալ Գեղարդեան,
    ամբիծ մաղթերս՝ իբր զղաստատակն՝ դիմաց Տէրունեան:
Ընդ ձեռն ծառայիս՝ և փոքրիկ որդւոյս՝ իւր սուրբ Մայրութեան,
    Ստեփաննոս անուն՝ չպէտ վարդապետիս՝ որ Արարատեան:
Քան զոր գերագոյն՝ նուէր և պատիւ՝ վայելուչ Ձեր Տան,
    ոչ Մայրն իմ մաքուր՝ և ոչ մեք գտաք՝ յենթ լուսնին կայան:
Մաղթեմ ուրեմն՝ ես առ Տէր երկնից՝ ւերկրի միշտ պաշտպան,
    պահպանել զՁեզ՝ պահպանիչ շնորհօք՝ Նորին սրբութեան:
Ընդ Ձեզ դասակցեալ՝ զտուն զգերդաստան՝ Ձեր Վեհափառութեան,
    պահել անսասան՝ բստ աւուրց երկնից՝ յանհուն յաւիտեան:

Ստեփաննոս վարդապետ Վաղարշապատեցի:

1828. Հոկտեմ. 13.
'Ի Հնչեաստ գիւղ:

Ը.

Վեհ աշխարհակալ՝ Իշխանապետի՝ գերապատիճանելոյ,
այս ճոխական սիրոյ՝ այս նուագ հոգւոյ՝ գեր տաղերգոյնելոյ:

Երկրորդ և երրորդ՝ նամակ Ձեր սիրոյ՝ առ մեզ ժամանեալ,
ծանուցին համակ՝ զխնդումն Ձեր՝ մեկին ճշգրտեալ,
զի բանն տէրունի՝ դոյնպէս մեզ յայտնէ՝ յոր կամք խարսխեալ,
թէ ծառն 'ի պտղոյ՝ յոր պտղաբերծի՝ լինի ծանուցեալ.
ընդ որոյ փոխան՝ որ ընդ մեզ անցին՝ անցք դժգոհեալ,
կամիմք սոյն տողիւ՝ յայտնաբանել Ձեզ՝ համառօտ ջնջեալ:
    Քանզի նամակ ձեր՝ և Աղէքսանդրին՝ վասն մեր գրեալ,
առ Կուսակալն՝ Եկօրիցկիյի՝ լինին ժամանեալ.
վասն որոյ և նա՝ զոյգ ընդ հրամանին՝ Ձեզ հնազանդեալ,
ձեռն էարկ գրել՝ առ պետ քաղաքիս՝ Քամանտադ կոչեալ,

թէ գնա՛ և հա՛րց՝ զհայր Յովակիմ՝ վարդապետ ձայնեալ,
եթէ արդա՛րև՝ 'ի Սանպետրպուրգ՝ կամիցի՞ գնալ.
զի ես տաց նմա՝ զթուղթ հրամանի՝ փասփորդ առացեալ,
որով մարթասցի՝ ամենայն պատւով՝ անդանօր երթալ:

Արդ ըղձոյն նամակ՝ Քամանդատին մեր՝ 'ի ձեռն առեալ,
տես թէ զի՞նչ գործեաց՝ անմիտ խորհրդով՝ համակ վարակեալ.
զի յառաջ քան թէ՝ զգիտումն մեր՝ լինէր նա հարցեալ,
հայոց Փռանկա՛ց՝ եցոյց զնամակն՝ և զպատուէրն եկեալ:

Իսկ եղև իբրև՝ գաղտ խորհուրդն մեր՝ մինչ ցայն օր ծածկեալ,
'ի մէջ քաղաքիս՝ գօգջի՛ք համօրէն՝ եղև քարոզեալ:
անդէն առ նմին՝ շարժեցաւ քաղաքս՝ 'ի հիմանց յուզեալ,
երկոքին կողմանք՝ այն է հայք փռանկք՝ յիւրեանս պատառեալ:
Ոմանք Պօղոսեան՝ այլք Ապօղոսեան՝ բառ գրոյն եղեալ,
մինչ փոքր միւս ևս՝ ժողովուրդքն մեր՝ ըմպեղ քարկոծեալ:
թէ առի՞մ քո՝ յայտպիսի խորհուրդ՝ է մտաբերեալ,
երթալ և կրթել՝ զմանկունս ազգին՝ որ 'ի մենջ զատեալ:
թող զայլ նախատինս՝ որ 'ի գլուխ մեր՝ լինէին կուտեալ,
և զհետս պատուոյ՝ մեծի համբաւոյս՝ խայտառ աղարտեալ:

Այս գործ դառնութեան՝ գող զուր մահու՝ 'ի սիրտ մեր մխեալ,
քաղէր զոգիս մեր՝ և զարև սրտիս՝ արիւնաքամեալ:
Այլ զի՞նչ և իցէ՝ իբրև տեսաք թէ՝ իրն եղև յայտնեալ,
հարկեցաք գաղել՝ զճշմարտութիւն՝ կամաց մեր ծածկեալ:
ստո՛յգ գիտելով՝ թէ 'ի սոցանէ՝ չկարեմք ապրեալ,
առանց վնասու՝ մեծամեծ չարեաց՝ որ ըսպառնացեալ:
յաւել և զպէսպէս՝ հանդամանս իրաց՝ մեզ առա պատահեալ,
զոր պատմեսցուք ձեզ՝ յորժամ իրերաց՝ լիցուք հանդիպեալ:

Իսկ ահա յայս սակս՝ Երբ Քամանտատ մեր՝ 'ի վանս մեր եկեալ,
հարց զկամս մեր՝ յանդիման բազմաց՝ առաջի կացեալ,
թէ կամի՞ս գնալ՝ 'ի Սանպետրպուրգ՝ որպէս գո՛յ գրեալ,
մեք ասացաք թէ՝ ո՛չ կամիմք գնալ՝ զԱյժմն խնացեալ:
Եւ այսպէս հագիւ՝ մարթեցի եղև՝ զամբոխն ամոքեալ,
խաղաղել խռովառ՝ սովին այս բանիւ՝ զվտան չինեալ:

Իսկ այժմ գիտեմք՝ զի Քամանդատ մեր՝ ցարդ ունի գրեալ.
առ Կուպեռնատըրն՝ եկօրեցկիյի զոր 'ի մենջ լուեալ.
նոյնպէս Կուպեռնատրն առ Տէրութիւն ձեր՝ թերևս է յղեալ,
զոր ինչ վասն մեր՝ 'ի Քամանդատէս՝ նմա է ազդեալ,
թէ հայր Յովակիմ՝ ոչ ունի զկամս՝ 'ի տեղդ յայդ գալ,
զի հանդերձեալ է՝ աստի դէպուղիղ՝ 'ի Հռոմ գնալ:

Արդ՝ 'ի լսել ձեր՝ 'ի կուպեռնադէն զայդպէս բան գրեալ,
աղաչեմք սիրով՝ մի՛ խռովեսջիք սիրտք ձեր շփոթեալ,
այլ կացէք հաստատ՝ աներկբայ մտօք՝ 'ի սէր մեր պնդեալ.
և տեսջի՛ք ընդ հուպ՝ զպտուղ ջանից՝ 'ի հունձս եկեալ.
քանզի յետ աւուրց տասանց և հնգից՝ յոր գիրս է՛ տուեալ,
ունիմք անպատճառ՝ ելանել աստի և դէպ առ ձեզ գալ.
զոր յաջողեսցէ՛ բարձրեալն 'ի բարձանց՝ էնն ամենակալ,
անդարձ մաղթանօք՝ կուսին կուսանաց՝ մօրն ամենօրհնեալ:

Յերրորդ նամակի՛ ազդէք մեզ սիրով՝ զառակն հռչակեալ,
բարեկամ ստոյգ՝ յանստոյգ իրս՝ լինի՛ ստուգեալ:
Բայց պարտ է յիշել՝ և զայն միւս առած՝ ինքնին ծանուցեալ,
թէ առ անծանօթն՝ ցանկութիւն երբէք՝ ոչ լինի բերեալ.
որպէս և զայլ միւս՝ գոգ ըստ իմաստին՝ նմին նմանեալ,
թէ յարարածս՝ չի՛ք ինչ սիրեցեալ՝ թէ չէ՛ ծանուցեալ:

Նոյն արդ՝ զայդ կանոն՝ որ անվրէպ է՛ իբր դշխմ եդեալ,
չափեմք զամենայն՝ լծակօք բանին՝ քաջ ուղիղ կշռեալ,
եթէ ըստ չափոյն՝ որով իմն ինչ՝ լինի ծանուցեալ,
ըստ նմին չափոյ՝ 'ի սիրող անձնէն՝ լինի սիրեցեալ:
առջի՛ք յօրինակ յամբաւս սիրելի՝ զառարկայն օրհնեալ,
գոջի՛ք և զնա՝ 'ի ներքոյ այդր՝ կանոնի կապեալ.
զի 'ի հրեշտակաց՝ 'ի սրբոց երկնից՝ շատ է սիրեցեալ,
քանզի 'ի նոցունց՝ է՛ դէմյանդիման՝ պայծառ նկատեալ.
այլ 'ի մէնջ յերկրիս՝ աչօք հաւատոց՝ ընդ աղօտ տեսեալ,
ըստ նմին չափոյ՝ չասացից հազիւ՝ լինի սիրեցեալ:
Բերջի՛ք ապա զայդ՝ և յանկեսջի՛ք 'ի մեր առաջնդեալ,
և զմեզ կալջի՛ք՝ անաշխատ անձամբ՝ 'ի պարտուց զերծեալ.
բայց զորչափութիւն՝ սիրոյ մեր առ ձեզ՝ ունիք իմանալ,
'ի վշտաց աստի՝ զոր վասն օգտի ձեր՝ ունիմք ստանձնեալ:
չունիմք ժամանակ՝ յերկար տողելոյ՝ զգիրս չափեալ,
և ոչ կանոնօք՝ ճիշդ քերթողութեան՝ ըղձս յօրինեալ:

Յայսց գրելոց՝ ունիք խոհական՝ մտօք իմանալ,
թէ չունիք գրել՝ զայլ ևս նամակ՝ առ մեզ ուղերձեալ.
զի ոչ ժամանեն՝ նամակք ձեր առ մեզ՝ յետ սորա գրեալ,
ըստ որում ունիմք՝ անկանել յուղի՝ տեւրամբ սկսեալ:
Միայն մնայ մեզ՝ զխնդիրն մեր՝ յուշ առնել դարձեալ,
զոր 'ի յերրորդում՝ նամակի մերում՝ ունէաք խնդրեալ.
այն է զի տաջի՛ք՝ պատուէր հրամանի՝ այժմէն առաքեալ,
առ գլխաւորս՝ Մոսկով քաղաքի՝ որ իցեն կարգեալ.

որպէս զի սիրով՝ ընկալցին զմեզ՝ յիւրեանս հանգուցեալ,
ըստ որում չունիմք՝ մեք անդ բարեկամ՝ կամ ծանօթ ընտրեալ.
չունիմք առ ժամն զայլ ինչ յաւելուլ՝ ՚ի բանդ ողեալ,
զի և այսքանըս՝ առ անձուկ պահուս՝ հազիւ է գծեալ։

Ողջոյն տիրաձիր՝ օրհնութիւն սիրոյ՝ լինի ընծայեալ,
ընտանեացդ ձեր՝ և բեք ջեք որդւոց՝ յանեղէն տնկեալ։
Ո՛ղջ ուրախ լերուք՝ ամենայն բարեօք՝ հանապազ պարառեալ,
՚ի Թագ պարծանաց՝ կորացեալ գլխոց՝ ազգիս տառապեալ։

Ն. Հ. Յովհաննէս Վարդապետ *) ի ժամանակին կրօնաւոր ՚ի կարգէ սրբոյն Անտոնի աբբայի, ՚ի միաբանութենէ հարցն մերոց Լիբանանու։

՚Ի 21 Յունվ. 1816.
՚Ի Մոզուր։

Թ.

Բարեհամբաւեալ Գերապատուեալ Աղեքսանդր Իշխանայեան։

Տարակուսեալ եմ արդարև զլխովին հայր իմ գորովագութ, և շուարեալ ամենևին բովանդակ մտօքս, ոչ գիտելով թէ ուստի՞ սկիզբն արարից բանից քարտէնիս, կամ զիա՞րդ պատմաբանեցից զկերպարան պատկերի հոգւոյս տխրալի, և կամ ո՞ւր արդեօք յանկեցից զպատուած տողիցս, կամ ո՞րպիսի լուսաբանութեամբ յայտնաբանել զօրեցից զանպատում ցնծութիւնս սրտիս ՚ի գալստենէ աղնուածնունդ և առաքինաշիայլ որդւոցդ համօրէն։ Քա՛րէ անթարգմանելի հրճուանացս և սքանչելապատում աւուրս լուսոյ, յոր ցօլացին քմօք զգացեալ արծարծեցաւ ոգի իմ ՚ի յոգնաթախիծ ծանրավիշտ վհատութեանցս ՚ի տեսութենէ լուսածնունդ զաւակացդ։ Զգիտեմ բնաւ, ընդ ո՞ր ՚ի նոցանէ առաւել սքանչացայց և սխրացայց, զո՞ րք ՚ի նոցունց ՚ի մէջ մատուցեալ՝ առից ՚ի նիւթ բանիցս գովասանութեան ակնելուլ և նազաբանել մանրապատում զովեստաբանութեամբ, զԱստուածազգեաց պարկեշտախայլ զուգակի՞ց քո արդեօք, եթէ զԱստուածապօր խոհեմախայլ զփեսայն քո. զԱստուածիմաստ սքանչելահանճար զորդեա՞կն քո արդեօք, եթէ զշուշանախայլ վարդափթիթ զդստերս քո։ Զգօրեմ բնա-

---

*) Յետոյ՝ Միքայէլ Եպիսկոպոս Սալլանթեան։

ւին՝ թէ զո՞ր յառաքինութեանց նորա 'ի հանդէս բերեալ՝ հրեշտակաձայն լեզուաւ հրաշալեանեցից, զխոնարհութեան նորա զծայրագո՞յն աստիճան, թէ զվեհանձնութեանցն պայծառափայլութիւն. զազնուականութեանն բարեշո՞ւք բարեփառութիւն, եթէ զընկերասիրութեանն հրանիւթ բոցավառութիւն. զմաքրափայլ վարուց նորա զոսկեճաճա՞նչ ջահաւորութիւն, եթէ զլուսանիւթ խորհրդոյն վճիտ յստակութիւն: Սքանչացեալ եմ ապաքէն անպատիր խորհրդովք, և չիշխեմ բնաւ՛ թէ զի՞նչ խօսեցայց, կամ ո՞ւմ նմանեցուցից զսոսա. զի զազնուականս տեսեալ է իմ բազում, այլ զնմանս սոցա ոչ ուրեք. զիշխանս և փարթամս աշխարհիս տեսեալ եմ յոգունս, բայց զվերբերիչս վարուց սոցա ոչ ուստեք: Վասն որոյ յանչափ 'ի ծայրածաւալ ցնծութենէս այլ յայլմէ եղէ գլխովին, և ոչ բաւէի շարժել զգրիչ իմ և հաւասարել զբանս արժանապարտ գովեստից սոցա, այլ բերանաբաց մնացեալ՝ երգէի զեսայեան առած. „Ո՞վ են սոքա՝ որք իբրև ըղձագս աղաւնեաց թռուցեալ՝ երամովին ձագախառն գան առ իս", բերելով բերանով ըստ Նոյեանն աղաւնոյ զշիւղ խաղաղութեան յերկրէդ աւետեաց: Սիրատարփ նետիւք խոցեցայ 'ի լերդակողմն սրտիս՝ իբրու օրինակ եղջերու՝ 'ի գերամաքուր սիրոյ սոցա. ոսկենիւթ շղթայիւք պարանեցայ 'ի յանլոյծ կապանս ընդ մէն մի իւրաքանչիւր 'ի սոցանէ, բայց առանձինն օրինակաւ կապեցաւ ոգի իմ ընդ ոգւոյ երջանկազարմեան պատուականագիտ և ամենագովհար որդւոյ քում Խաչիկ Աղային, որպէս երկրորդ յովնաթան ընդ դաւթի. հատոր հոգւոյ իմոյ եղև սա արդարև, յորմէ ոչ երբէք բաժանեցայց՝ ոչ կենօք և ոչ մահու, զի սքանչելի եղև սէր նորա առ իս իբրև զսէր կանանց, ըստ հոգերգողին նուագերգութեան: Այլ ո՞վ սքանչելեացս, զի յայսմ վայրի սպառին բանք իմ և կապին միտք իմ, կարկի լեզու իմ և կարճի գրիչ իմ առ 'ի արուեստաբանել զգթալից հօրէդ իմմէ. զի թէ պտուղք քո այսպիսի ինչ, զի՞նչ ինչ արդեօք արմատդ քաղցրութեան: եթէ աշակերտքդ զայսօրինակ, ո՞րպիսի ինչ այն ուսուցիչդ բարութեան. Այլ աւա՜ղ որդւոյս զրկելոյ և կարօտելոյ 'ի քաղցրագութ հօրէդ, զի անտես մնացի 'ի վայելչութենէ տեսլեան քոյ, որում յայսչափ ժամանակս սպասեալ մնայի և մաշէի կարօտիւ զգայդ և զցնծել. ո՞ տայր ինձ զթևս զօրէն արծուոյ՛ զի խոյացեալ սլանայի և յանդիման լինէի արդարև հայրագութիդ, 'ի ձգել զտեսիլս քաղցրութեան քո ցյագուրդ հոգւոյ, և 'ի չորեքկնել զերեքկնոզի զօլոր սիրոյն՛ զԱստուածազգեաց զօդն միութեան զընդքեզ կապոյն պնդութեան. վասն զի անշուշտ իբրու առ ճշմարիտ հայր իմ դիմեցի 'ի գիրկս քո, և ահա զրկեալ գտայ 'ի վայելից տեսութեանդ, և չգիտեմ՝ առ իմէ: Երանի՜ թէ մօտակայ լինէին ըստ առաքելագատում բանիցն՝ բանսարկուք մեր, որք արկին 'ի միջի մերում զայսչափ գաղջութիւն սիրոյ՝ վատանուն առնելով զձեզ 'ի լսելիս մեր ազգի ազգի թե-

նալից բանիւք, քանզի կարի յոյժ այլազգ պատմեցին մեզ վասն ձեր որք որոմնացանք՝ բժիշկք մեղանչականք և մխիթարիչք չարեաց, ըստ յոբայ. իսկ յորժամ հասին ընտանիք ձեր, հայեցեալ ծանեաք՝ զի որչափ հեռի են արեւելք յարեւմտից, այնչափ լայնատարածման միջոցաւ անմասն գտանի Աստուածատուեան գերդաստան ձեր յայնպիսի արատոյ. վասն որոյ հիացեալ փառս մատուցաք արփիահրաշ գերարուն մեծութեան Աստուածապետական մեծվայելչութեան, և անարժանութեամբ մերով աղօթանուէր մաղթանօք հեղաք զանձինս յանդիման փառաց քրովբէանխառն աթոռոյ սրբութեան Նորա, մաղթելով օրհնել զտուն ձեր իբրև զտունն Աբրահամու՝ Իսահակայ և Յակոբայ և Դաւթի. յաւիտեան հաստատել զզաւակ քո, և շինել յազգէ յազգ զաթոռ քո. նոյն և զԱստուածահաճոյ զազգաշահ զսկզբնաւորեալ զգործն մեր բարերջանիկ վախճանաւ կնքեալ պսակել:

Բայց աւանիկ զոր խնդրեցաքս յամենատատ յանարգամեծար տեառնէն հաւատովք, անդէն առ նմին ընկալաք 'ի գոգս մեր 'ի չափ շարժուն և թաթաղուն. և զոր խոստացան բերանով՝ ելից ձեռօք իւրովք՝ որպէս և այսօր, դամադիտ լինել մեզ ըստ բղձից տարփանաց. վասն զի ըստ գեղգեղ գեղարանութեանց՝ ամոք և ողոք՝ բանաւոր և ազդեօր խրատարանութեանցդ, զորս ըստ արժանի կատարելամիտ հասակիդ, ըստ զուարթածաղիկ ալեացդ զուարճացելոց, ըստ գեղեցիկ 'ի մանկութենէ մինչև ցաւագոյթ սննդեանդ, մանաւանդ առաւել՝ ըստ Աստուածագործ սրբութեան օրինադիր կրօնից, լի՛ ամենայն կարգօք Աստուածաբանեալ էիր առ մեզ՝ Աստուածայնովն զինազարդեալ իմաստութեամբ. ըստ այնմ և մեք երեքեանս հոլոնեալ ժողովեալ 'ի մի խորհուրդ միակցորդ ընտրութեան՝ յետ բազմադիմի քննութեանց մտաց տեսութեանց, պարտիմք մտադիւր յառաջատես լինել և 'ի յուշի կալեալ զնորուն Տեառնդ զինքնասաց բանին բարբառոյ զօրութիւն, զերբեմն մարդասիրութեան առ մեզ կատարեալ և քաջ յարմարեալ, զաւազաշէն հիմնադրութեանն աւել զասանութեան զանհնարին հոգեկործան աւեր վաղափուլ քայքայեալ մեծութեան զյիմարացն տարտամութեան անձնադատ կշտամբութիւն. յառնել անդ յետ աւուրց բարկացայտ հոծակաց՝ ալէտատ յուզմանց՝ բռնաձիգ հոսանաց՝ հողեսպառ փորձանաց՝ մնաւարմատ վտանգաց՝ սխալուն լքմանց՝ յանսանձ խորհրդոց, յիժին ծննդոց. 'ի դառն արմատոց, 'ի ձախող հոգւոց, զոր 'ի մարդկան թերութենէ, զոր և յոյսոյն պղծութենէ, զոր յասանցս բռնութենէ, զոր 'ի մարմնոյն զօրութենէ, զոր 'ի մտաց թիւրութենէ, զոր 'ի հոգւոյն ծուլութենէ, որ զկնդաւ մահաբեր, որ և զաչօք վրիժաբեր, որ զձեռօք փշաբեր, որ զմարմնով թիւնաբեր, որ զհոգւով անիծաբեր, և որ զհետ սոցա շղթայաբար աղխաղխիլն՝ զբովանդակն իմանալով. վասն զի քան զապարանս շինուածոց՝ բարեզարդ բնակութեանց՝ բարեյարմար տեսութեանց՝ բազմա-

բուեստ պերճութեանց խարխուլ 'ի հիմանց՝ 'ի գայթ հատելոց, լու եւ համարի յիմաստնոց դասուց՝ փոքրիկ անպաճոյճ՝ երգ տախտակաման՝ անշարժ 'ի բաղխմանց՝ փքարեր փչմանց: Եւ զի այս այսպէս կնքեալ և պահի առ Աստուծոյ և մարդոյ, հա՛պա դուն գործեսցուք այժմ 'ի սկզբան զհիմն 'ի վերայ վիմի արկանել անխախուտ, զի և վախճան նորա օրհնեսցի պսակաւ քաղցրութեան և խաղաղութեան, որպէս զի այնպէս ապա մարթասցուք յետ ժամահամբոյր կենցաղոյս արժանաժառանգ գտանիլ լուսապատար օթևանացն պատրաստեալ յարդարեալ յանեղաշէն աջոյ բարձրելոյն բնակելոյ 'ի բարձունս, և ցօղալից ամոքախառն ձգելոյ զհամեղաճաշակ ստինս քաղցրութեան՝ մօրն կենդանութեան անբիծ անարատ մաքրութեան՝ անաբորադիր կոյս անդաստանին՝ անզուգական այգւոյ սիրեցելոյն՝ յանկեան 'ի տեղւոջ պարարտութեան՝ յԱստուածատունկ 'ի դրախտին փափկութեան, եթէ զնորին և 'ի կեանս յայս զարիւնադիծ կտակս ճգնողական կենացն՝ և զհանդէս սխրալի բարեմասնութեանց անդատապարտ կատարելութեանցն՝ նպատակ եդեալ՝ հանդէպ երեսաց՝ տեսութեան մտաց՝ 'ի խորհուրդ դիպաց՝ հանդիպահայեաց հայելեաց, քաջաքաջան ճգանօք՝ քաջադօտի մրցանօք՝ թեւակոխեսցուք զնմանօրինակ տիպ կերպարանացն նորին խորարմատ յանձինս նկարել, և 'ի սիրտ և 'ի հոգի անջինջ արձանագրել:

Նոյն:

'ի 15 Յունիսի 1816.

'ի Մոսկուա:

ժ.

ԴԻՒՑԱԶՆԱՓԱՅԼ ԵՐՋԱՆԿԱԶԱՐՄ ՄԵԾ ԻՇԽԱՆԱՊԵՏ, ԱՂԱՅ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ.

Անծափափագ տենչանօք շնորհաւորեմ Ձեզ զմուտ առաջիկայ Նոր Տարւոյս, և զծնունդ Յիսուսի Քրիստոսի փրկչին մերոյ, և մանաւանդ ըզ Տօնախմբութիւն շնորհալից անուան Ձեր 'ի 15 ամսոյս: Տացէ ամենագութ Տէրն մեր երկար ամօք, անսասան կենօք, անփորձ հոգւով և մարմնով հասանել Ձեզ 'ի ցանկալի նպատակ գերերջանիկ ելից յանվախճան ուրախութիւնս անմահական կենաց, որ պատրաստեալ և պահի երկիւղածաց նորա. որում ըստ անարժան կարեացս ոչ դադարեմ աղօթանուէր մաղթանօք հետևել:

Արժանի արա, ով անարգամեծար Տէր, ընդունել զայս սակաւ բան ոտանաւոր չափեալ 'ի վերայ անուան Ձեր, 'ի պատիւ տօնի Ձերոյ. զոր այսօր անագան ուրեմն ծանեայ, և 'ի ժամուս շտապով տողեալ՝ առաքել փութացայ 'ի նշան խոնարհամիտ ծառայութեան իմում Աստուածատուեան դերդաստանի Ձերում։

Յովհաննէս.	ոսկեձոյլ.	համասփիւռ.	արփնագեղ.
Ոսկեձոյլ.	համասփիւռ.	արփնագեղ.	ջէն անեղ.
Համասփիւռ.	արփնագեղ.	ջէն անեղ.	կենաց դեղ.
Արփնագեղ.	ջէն անեղ.	կենաց դեղ.	քաջ զօրեղ.
Նարօտ Պու.	Նորաաքանչ.	Էաձիր.	սիւն ազգիս.
Նորաաքանչ.	Էաձիր.	սիւն ազգիս.	լուսակիզ.
Էաձիր.	սիւն ազգիս.	լուսակիզ.	'ի տօնիս.
Սիւն ազգիս.	լուսակիզ.	'ի տօնիս.	Մկրտչիս։

Նոյն։

'Ի 13 Յունվարի 1823 ամ.

'ի Մոսկով։

ԺԸ.

Դե-յաղնափայլ Պ. Ենգաղնեայ Ռոբերտայ Տեարց, Միծապետի համազգի եղբարց։

Հասեալ է ժամ, զի փառաւորեսցի Իշխանապետն Յովհաննէս, որով և Աստուած փառաւորեսցի 'ի նմա։ Հասեալ է ժամ, և արդէն իսկ է, զի մեռեալն Յովհաննէս Լազարեան լուիցէ ձայնի որդւոց իւրոց. լուիցէ և կեցցէ յաւիտենութեան։ Հասեալ է ժամ, զի իմաստուն երկրագործն առա Յովհաննէս, և երջանկայարմ ժառանգք նորա, որ յայտնապէս սնուցին սերմանեցին զսերմն գիտութեան 'ի բանաւոր երկիր մանկանց ազգիս, այժմ հնձեսցեն զպտուղս քաղցրութեան որպիսիք բարութեան։ Այժմ գիտասցեն գերապատիւ բարերարքն և ազգայինք, որ երկիր իցէ արդիւնաբեր հարիւրաւոր, որ վաթսնաւոր, և որ երեսնաւոր. որ իցէ մշակ աշխատասէր, և որ փարձկան դատարկասէր։ Մանաւանդ թէ ինքեանք իսկ աշակերտեալք ծանիցեն զչափ անձանց իւրեանց, և զծուլութեանն պակասութիւն լցուցանել հասցեն։ Զի որ ինչ փորձաքարն՝ ոսկւոյն, նոյն է և տարեկան քննութիւնն՝ ուսանողաց։

Զնծայ վաճառականն, յորժամ 'ի գլուխ ածին հաշիւ արարեալ շահավաճառութեան իւրոյ, գտանէ զգումար իւր բազմօք աւելեալ: Եւ թէ ծառայ ոք իցէ այնպիսին, մեծի ուրախութեան լինի պատճառ Տեառնն իւրոյ, և առատ վարձուց վասն անձին: Եւ զիա՞րդ ուսանող ոք զրկեսցէ ըզ բարեբարս կամ զծնողս իւր քաղել զպտուղ բազմամեայ աշխատանաց և ծախուց նոցա: Բայց որպէս լինի քննութիւն ուսման և գիտութեան աշակերտաց, նմանէ՛ թէ լինէր ևս նոյնպիսի քննութիւն վասն բարի վարուց և առաքինութեան նոցա. զի այս ո՛չ նուազ հարկաւոր է քան զայն: Գիտութիւն առանց բարի վարուց ոչինչ է, յոչինչ օգտէ, և բազմօք ևս վնասէ: Որպէս տուն առանց հիման, նոյնպէս և գիտութիւնն առանց բարի վարուց ո՛չ երբէք կարէ գոյանալ և հաստատիլ: Գիտութիւն ենթակայանայ 'ի միտս, և առաքինութիւն բնականայ 'ի կամս, և երկոքեան 'ի հոգին: Բայց կամքն՝ եթէ չիցէ կրթեալ 'ի բարին, եթէ ապականեալ իցէ անկարգ սիրով պատուոյ կամ ընչից կամ զարշ մարմնոյ, յայնժամ խաւարեցուցանէ զմիտս, և ո՛չ թողու նմա համարձակ շահատակել 'ի դաշտ գիտութեանց: Որպէս թանձր ծուխ արգելու և ո՛չ ներէ աչաց տեսանել զառաջեդեալ առարկայն, նոյնպէս և մոլութիւնք և չար կիրք ո՛չ թողուն մտաց ուսանիլ զգիտութիւնս: Վասն զի չարագործ անձն է իբրև ծով ալեկոծեալ յանկարգ կրից, յորում միտքն ո՛չ կարէ գտանել զխաղաղութիւն առ ուսանիլ զգիտութիւնս:

Ո՛ր և իցէ սէր՝ բայց առաւելապէս անկարգ սէրն ունի զայս յատկութիւն, զի յափշտակէ, և զկնի իւր ձգէ զայլ կարողութիւնս հոգւոյն, մանաւանդ զմիտս, և հրամայէ զի ամենայն հարկանցին առնելով զիւրեանց սեփհական գործս, ծառայեսցեն միայն սիրեցելոյն: Առցուք յօրինակ զփառասէր ոք, և քննեսցուք զասացելոցս զճշմարտութիւն: Յորժամ սէրն փառաց և պատուոյ թագաւորէ 'ի հոգի ուրուք, հրամայէ մտաց, զի զանց արարեալ զայլն՝ մտածեսցէ միայն զհնարս որսալոյ զպատիւ և զփառս. հրամայէ բերանոյ՝ զի վասն պատուոյ իւրոյ խօսեսցի և քարոզեսցէ. հրամայէ ականջաց՝ զի զձայնս պատուոյ լուիցէ. հրամայէ ոտից՝ զի զկնի փառաց ընթասցի. հրամայէ այլ ամենայն կարողութեանց՝ զի աշխատ լիցին ըստ կարի 'ի փառաւորել զինքն: Այսպէս առնէ ևս գարշելի սէրն մարմնոյ, և սէրն արծաթոյ, այլովքն հանդերձ: Արդ կշռեա՛ դու այժմ. յորժամ միտքըն լինի պարտաւոր միշտ ծառայելոյ անկարգ իմն սիրոյ, կարօղ է արդեօք այնուհետև հիմնապէս ուսանիլ զգիտութիւնս և զնուրբ իմաստութիւնս, որք յամենայնի պահանջեն զանդորր միտս: Բայց 'ի բնական ապացուցութենէս՝ դու յաւել և զգերբնական ճշմարտութիւնս սուրբ աւետարանին, որ ուսուցանէ, թէ յանձն չարարուեստ ո՛չ մտանէ իմաստութիւնս, զի սուրբ հոգին իմաստութեան փախչի 'ի մեղաւորէ, և ո՛չ բնակի

'ի մարմնի վարեցելոյ մեզօք. զոր ամենայն ուրեք վկայեն սուրբ գիրք և հաւատք. որով և արդարանայ վճռական առաջն Աստուածայնից, որք ասեն թէ ամենայն մեղաւոր է ոգէտ. որ ճշմարիտ է ոչ միայն 'ի գործնականս, այլև 'ի տեսականս: Բայց աննելի էին այս չարիք, թէ յայսմ միայն զկայ առնոյր վնասն. վասն զի չարագործութիւնն ոչ միայն չթողու ումեք ուսանել ինչ հիմնական, այլև եթէ ուսցի ևս զայլուրենս ինչ գիտութեանց, զայն ամենայն վարէ 'ի վնաս իւր և այլոց. քանզի ուսեալ չարագործն առաւել վնասէ քաղաքին կամ ազգին, քան զոգէտ մեղաւորն: Ուրացողն Յուլիանոս՝ վասն զի գիտնական համարէր՝ առաւել վնասեաց սուրբ եկեղեցւոյ, քան զայլ կռապաշտ կայսերս Հռովմայ: Նոյն իսկ Հռովմայեցիք որչափ ինչ առացեալ էին 'ի ժամանակս բարեգործութեան, զամենայնն կորուսին 'ի ժամանակս անառակութեան: Բայց որպէս զի մի խօսեցայց ձեզ զանձանօթ աշխարհէ, զի՞նչ այլ էր պատճառ կործանելոյ թագաւորութեան ազգիս Հայոց, եթէ ոչ մոլի վարք թագաւորաց և իշխանաց մերոց: Յորժամ թագաւորք մեր սիրէին զբարեգործութիւն, յաղթօղ էին Պարսից և Յունաց և այլոց շրջակայ ազգաց: Իսկ այն թագաւորք, որք թողին զբարի վարս, հետևեցան զանազան մոլութեանց, կորուսին զինքեանս և զայլս: Վաղարշակ, Տիգրան, Աբգար, Տրդատ, Սմբատ, և այլք բազումք որո՜վ իւիք պանծալի եղեն յազգի և յաշխարհի մերում. ընթերցիր զվարս նոցա, և գտցես, զի ոչ այնչափ ուժամբ և գիտութեամբ, որչափ բարեսէր վարուք: Եւ հակառակ սոցա, Տիրան, Արշակ, Պապ, Մերուժան, Վասակ, և այլ ոմանք 'ի թագաւորաց և յիշխանաց մերոց, վասն զի թողեալ զբարեգործութիւնս՝ հետևեցան զանազան մեղաց, վասն այն եղեն պատճառ անթիւ վնասուց թէ՛ վասն իւրեանց, և թէ վասն ազգին մերոյ: Բայց թողեալ զհնաւորս, քննեսցուք որ ինչ յաւուրս մեր գործեցաւ: Ամենայն ոք գիտէ, զի յառաջ քան զաւուրս զայսոսիկ՝ Գաղղիացիք ազգ իմաստուն և լուսաւորեալ, զամս քսան վէր 'ի վայր շրջեցին զաշխարհ ամենայն, զեկեղեցիս կործանեցին, զքահանայս սպանին, հեղին զարիւն անմեղաց, և ոչ մնաց չարիք՝ զոր ոչ գործեցին: Զի՞նչ էր պատճառն, արդեօք տգիտութիւն և անուսումնութի՞ւն, ոչ երբէք. այլ զի՞նչ, յայտ է՝ թէ չարագործութիւն և անկրօն վարք նոցա. իբր զի ցուրտ էին առ պաշտօնն Աստուծոյ, անարգէին զեկեղեցիս և զքահանայս Աստուծոյ. մոլորեալք էին զկնի փառասիրութեան, չար ցանկութեան, և այլոց մեղաց: Եւ ընդ հակառակն, Չինումաչինք յերկու հազար ամաց հետէ խաղաղութեամբ ունին զթագաւորութիւն իւրեանց, վասն ո՞ր պատճառի, արդեօք վասն լուսաւորութեան և իմաստութեա՞ն իւրեանց, ոչ բնաւ. այլ միայն վասն բնական առաքինութեան իւրեանց, և կրօնասիրութեան:

Յասացելոցս ամենայն ոք տեսանէ, նախ՝ թէ ազգն առաւել ցանկայ, զի անդամք իւր իցեն կրթեալ և բարեգործ, քան ուսեալ և մոլի անջեր-

մեռանդն. բայց ես առաւել կարօտի, զի անդամք իւր ունիցին 'ի միասին թէ՛ զգիտութիւն և թէ՛ զբարի վարս: Եւ վասն այսց առաւել պարտին հոգալ ուսուցիչք և բարերարք մանկանց, զի մի՛ մանկունք տզգիս անմեղ աղանի մտեալ յուսումնարանս, ազուա ախտալից ելցեն արտաքս 'ի վնաս անձին և ազգին: Երկրորդ՝ յայտնի տեսանի, զի թէ գուցէ 'ի մէջ ուսանողացս անուղղելի ոմն, որ բազում անգամ խրատեալ՝ ոչ եկն յուղղութիւն, զայնպիսին պարտ է ըստ օրինակի բժշկաց իբր զփտեալ անդամ հատանել և արտաքսել, զի մի՛ փոքր մի խմոր զամենայն զանգուածն ապականեսցէ: Երրորդ՝ ազգն և աշակերտեալք խնդրեն 'ի դիւցազնափայլ Իշխանացդ շարունակել զխնամս Ձեր 'ի վերայ իւրեանց, որք և բերանալիր գոհութեամբ շնորհակալութիւն մատուցանեն Ձեզ *)

Միքայէլ Վարդապետ Սալլանթեան:

ՃԻԲ.

ՆԵՐԲՈՂ. ԱՐՁԱՆԱԿԱՆ

Ասացեալ 'ի նաւակատիս Արձանի կանգնելոյ յանուն Տ. Յովհաննու Եղիազարեան 'ի Ճեմարանին Հայոց 'ի Մոսկով:

Զարթի՛ր զարթի՛ր Տունդ Արամեան, զարթի՛ր և տե՛ս զեկեալ հասեալ զփրկութիւն քո. զգեցի՛ր զզօրութիւն և զփառս քո, թօթափեա՛ ըզ փոշիդ՝ բնակի՛չ Հայաստանի. յոտն կաց և նիստ. սրբեա՛ զարտասուս յաչացդ և տե՛ս, ե՛րբ գեղեցիկ են 'ի վերայ լերանց քոց՝ ոտք աւետարանչի խաղաղութեան և բարօրութեան, որ աւետարանեաց քեզ զմեծամեծս և զհրաշալիս, որոց մանաւորեալ և եա՛ ծայրացեալ ծովացեալ 'ի ցնծութեան տոփիմ բանալ զբերան և զսիրտ, և հաղորդել հարազատաց զհոսանս հըրճուանացս, զի մարմաջէ զիս ոգի որովայնի, և եռայ սիրտ իմ իբրու տիկ քաղցուոյ, վասն որոյ առեալ վստահութիւն 'ի հանդիսականաց գոչեցից գովեցից զգթութիւն ամենակալին Աստուծոյ. որ առաքեաց առ մեզ աւե-

*) Ճառս այս ասացեալ է 'ի շարադրողէն՝ 'ի հանդիսի տարեկան հարցափորձութեան աշակերտաց Ճեմարանին:

տարանիչ Նոր՝ զմեծամեծարար Իշխանն Յովհաննէս Եղիազարեան, զանզուգբարերարն մեր և բովանդակ ազգիս. զՀիմնադիր և զՀանգստադիր պայծառափայլ Ճեմարանիս. զ՚ի գեղեցկատեղն ոստոց շառաւիղ լուսոյ ընձիւղեալ. զ՚ի Դիւցազն տոհմէ վեհից Սեպուհ երևեալ. զԱստուածագութ ծնողն որբոց և այրեաց մերկացեալ, և զսերմնարանն անպատում բարեաց ամբարեալ, որոյ Արձան կանգնի այսօր ՚ի մերում միջի ՚ի յիշատակ ազգաց յայսմ յաւիտենի, և ինքն անցեալ բազմեալ ՚ի գլուխ պարու այսր ակմբի՝ ոչ մեռեալ, այլ կենդանի. ոչ մոռացեալ, այլ յաւէրժատօնելի. կենդանի ՚ի մահուն, անմահ ՚ի բարութեան մեծաձայն բարբառի ընդ մեզ կենդանարար երախտեօք իւրովք, կենդանի գոլով յինքեան, և կենդանութեան պատճառք մեզ մահացելոցս։

Բայց դու մի՝ զոր լուարդ կենդանութիւն՝ միակողի վարկանիցիս, այլ բազմակողի. նա՝ թէ կամիս՝ հնգակողի, զոր սակաւուք լուսաբանել ոչ՛ինչ տարադէպ դատեսցի թերևս։ Քանզի հինգ ազգս կենաց կամ կենդանութեան որոշեմք յանհատս մարդկան, որք են. կեանք մարմնական, քաղաքական, մտաւորական, բարոյական և երանական. զոր դիւրին է մեկնել ողջամիտ լսելեաց։ Քանզի մանուկ նորոգ ծնեալ ունի զֆիզիգական կեանս, այն՝ որ հասարակ է և անբան կենդանեաց, որում դիմադրի մահն բնական. այն է՝ բաժանումն հոգւոյ ՚ի մարմնոյ։ Եթէ մանուկդ յաճել հասակին ուսցի զդպրոցական գիտութիւնս, ստանայ զիմացական կեանս. որում հակադրի մահն իմացական, այն է՝ տգիտութիւն։ Եւ յորժամ կատարեալ մտօք պիտանի լինի ՚ի քաղաքական պաշտամունս և յընկերութիւն մարդկան, ասի ունել զքաղաքական կեանս, և սմա հակակայի մահն քաղաքական՝ որ է գեղջկութիւն կամ սոպութիւն։ Եթէ ուղղէ նա զվարս իւր ըստ բնական օրինաց, զգենու զբարոյական կեանս. որում դիմադրի մահն բարոյական, այն է՝ մեղանչել ընդդէմ բանականութեան։ Հուսկ ապա թէ այրդ վախճանեալ՝ վիճակեսցի արքայութեան երկնից, կեայ երանական կենօք. որում հակադրի մահն յաւիտենական. որ է դատապարտութիւն ՚ի դժոխս։

Բայց դու տես ինձ յայսմ վայրի, զի կեանքն մարմնական՝ զոր ընդունիմք ՚ի ծնողաց, թէ չիցէ լծորդեալ ընդ այլոց յիշատակեալ կենացդ, յաւէտ մահ է անուանելի քան թէ կեանք. զի կեալ ըստ մարմնոյ՝ բայց առանց համեստ պատուոյ, առանց գիտութեանց և առաքինութեանց, զի՞նչ այլ իցէ, բայց եթէ կեանք չորքոտանեաց, յոյր սակս ոմանք ՚ի նախնեաց Նախամեծար ընտրեցին զմահ ֆիզիգական, քան զքաղաքական կամ զբարոյական։ Յովնան մարգարէ տեսեալ թէ քաղաքն Նինուէ ոչ կործանեցաւ յետ երից աւուրց, որպէս քարոզեացն. խնդրէր զմահ բնական. զի համարէր զինքն կարծեցեալ սուտ մարգարէութեամբ արդէն մեռեալ քաղա-

քապէս: Լուկրետիոյ բամբիշն Հռովմայեցի, զոր լլկեաց Սեքստոս շամբուշն Հռովմայեցի, կարծելով զանձն մեռեալ 'ի գոյն բարոյական, եբարձ յանձնէ և զգոյն ֆիզիգական: Նոյն էր դատաստան և մեծին Աղեքսանդրի, որ զանձն առաւել պարտաւոր խոստովանէր ուսուցչի իւրում, յորմէ ընկալեալ էր զկեանքն իմացական և քաղաքական, քան ծնողին իւրում՝ յորմէ միայն զգոյն ֆիզիգական: Եւ իրաւամբք. զի որպէս էական կերպ բնութեան մարդոյս՝ է Հոգին բանական, նոյնպէս և էական կերպ իմացական գոյոյ են գիտութիւնք, վասն որոյ որպէս յանջատիլ բանական Հոգւոյ մեռեալ է կենդանին. նոյնպէս 'ի բառնիլ գիտութեանց՝ մեռեալ է մարդն յիմացական կարգի. ուստի այր տգէտ և զուրկ 'ի գիտութեանց մեռեալ է կենդանւոյն, և միայն 'ի պատկերի շրջի. զոր և բնական լուսով նշմարեաց Արիստիպպոս փիլիսոփայ: Քանզի յաղաչել ուրուք զնա վարժել զորդի իւր 'ի գիտութիւնս, խնդրեաց 'ի վարձ ոսկիս քսան. և յասել նա, զոյն գնով մարթիմ գնել յաւանակ մի, ած թափեաց իմաստունն 'ի վերայ, երթ գնեա, զի 'ի տան քում լիցին երկու յաւանակք: Ընդ որ չէ՛ մարթ զարմանալ, զի գոյն իմացական այնպէս բաղդատի առ գոյն ֆիզիգական, որպէս գոյն երանական առ գոյն բանական. իմա՛ ըստ երկրաչափական և ո՛չ ըստ թուաբանական համեմատութեան: Այլ մեր թողեալ զայլ ևս բիւրապատիկ յառկութիւնս ասացեալ կենացդ, մատիցուք յայլ ինչ կարեւոր:

Որոյ առողջ իցէ խելապատակ, զօրէ ինքնին խորհրդածել. թէ առաջին պատճառ այդ ամենայն կենացդ՝ է նոյն ինքն Աստուած. իսկ երկրորդական պատճառք են արարածք. զի պատճառ մարմնաւոր կենաց են ծնօղք մեր՝ հայր և մայր. իսկ պատճառ այլոց ասացեալ կենացդ՝ ըստ միաձայն վճռոյ ամենայն իմաստնոց՝ է միայն ուսումնարանն, ուրանօր մանկունք ո՛չ միայն ուսանին զկանոնս և զեղանակ յիշատակեալ կենացդ, այլ և ամս բազումս գործադրութեամբ վարժին յայնս: Իբր զի յուսումնարանի իբրու 'ի սերմնարանի արկանին և բուսանին սերմունք ամենայն գիտութեանց և առաքինութեանց, յորոց ծնանին ազգք ազգք կենաց, և որովք ազատիմք 'ի դիմադրեալ մահուանէ. այնպէս՝ զի թէ ոք դշխնութիւն ձեմարանի վերադասել կամիցի քան դշխնութիւն եկեղեցեաց Աստուծոյ, ոչինչ օտար 'ի ճշմարտութենէ խորհիցի, որ և իմում նուաստախոհ մտաց է համբուրելի. զի թէպէտ մեծ է յոյժ ըստ առարկային՝ կանգնել զտաճար Աստուծոյ կենդանւոյ, բայց այլով տեսութեամբ մեծ ևս է ըստ վախճանին՝ յօրինել ըղ ձեմարան իմաստից. քանզի ձեմարանն ուսուցանէ մեզ զուղղափառ հաւատս և զառաքինակրօն վարս. ձեմարանին է գործ ճարտարել զքանդակաքերթութ գեղարանութիւն. ձեմարանիս կարօտին ճարտարանկար քարոզիչք և ատենաճեմ վարդապետք եկեղեցւոյ. 'ի ձեմարանէս ճառագայթեն երկնաճանապարհորդ կարապետք և հովիւք ժողովրդեանն Աստուծոյ. 'ի ձեմարա-

նիս ճախարակին լեզուք և գրիչք ճակատայարդար ճմլողաց զգլուխ հառակորդաց բարեաց. և ընդէր է ինձ յերկարել 'ի թելս բանից, միով բովանդակն բազկեսցի, ճեմարանաւ ուղղին և ուղղեն զանձինս և զայլս, թագաւորք և իշխանք, դատաւորք և օրէնսդիրք, զինուորք և արհեստաւորք, և առհասարակ ամենայն վիճակ մարդկան զճեմարանն ճանաչէ պատճառ երջանկութեան, որ ըստ հոգւոյ և որ ըստ մարմնոյ, որ յաստի և որ յանտի կեանս։

Այլ արդ՝ եթէ այսպիսի անզուգական բարեաց է պատճառ ճեմարանն, կրկնեմ արդ յուշի քում զառածն փիլիսոփայից, զայն՝ թէ որ ինչ է պատճառ պատճառին, է պատճառ և պատճառելոյն. կամ որ 'ի նոյն գլուխ, պատճառն առաջին բոլորէ յինքեան զպատճառն երկրորդ և զպատճառեալն յայնմանէ. կրկնեմ սեւմ յուշիդ, և մտօ՛ք՝ ած զձեռնարկութիւնդ 'ի գործոց 'ի պատճառն. և կշռեա 'ի լծակս առաջնորդականիդ՝ եթէ հասու ինչ իցես. թէ քանի՞ գերմարդկային առաքինութեամբ զինազարդեալ կենդանի է ցարդ մեծամեծարար իշանն Յովհաննէս. և քանի՞ պատիկ կենդանութեան գործի եղև նա և ազգի մերում. զի ո՛չ միայն կենդանի է հոգւով յերկինս, այլ և կենդանի է յարձանի իւրում, կենդանի 'ի ճեմարանի իւրում, կենդանի յարինակիցս իւր, կենդանի 'ի բովանդակ ազգիս. վասն որոյ և կենդանի անջինջ մնացէ 'ի սրտի մերում, որովհետև ըստ կատարելագոյն հասակին գերագահութեան, և ըստ զուարթածաղիկ խոհականութեան յաւերժայիշատակ լուսածնութեանն, ոչ միայն կամեցաւ զպատճառն կենդանութեան մերում զճեմարանն, այլ և կատարեաց. ոչ միայն սկսաւ, այլ և գլխաւորեալ յանդաւորեաց, թէ ոչ ինքնին անձամբ, սակս յափշտակելոյն 'ի մէնջ նախանձու երկնաւորացն, սակայն 'ի ձեռն հարազատ եղբօրն Յովակիմ մեծ իշխանապետիս, և որդւոց սորա Յովհաննէս, Խաչատուր և Եղիազար ամենագոհար իշխանացս, որ ոչինչ նուազ քան զերանելին զայն՝ վերբերիչ գտանին գերաշխարհիկ գովեստից, ընդ որ մի՛ ինչ յերկուասցիս, զի ո՞չ ապաքէն և Դաւիթ փափաքէր իմն՝ շինել տաճար Աստուածային բնակութեան. այլ արդելեալ յԱստուածակոյս տեսչութենէ, որդի նորա Սողոմոն կատարեաց զշինութիւնն. բայց և ոչ մին վրիպեաց ինչ 'ի վարձուցն. զի նա վասն փափագանացն, և սա վասն արդիւնակատար գործոցն զուգապար ընկալան զարխաւրն. Նմանօրինակ նմին իմն և 'ի բանիս, զի նա իշխանն Յովհաննէս հիմն էարկ, և սոքա նուիրակատար յանկ ածին. նա երկնեաց մայրաբար, և սոքա սնուցանեն դայեկաբար, և թէ նա, և թէ սոքա միաշունչ միախորհուրդ նահատակեալք իբրու լծարարձ ամոլաձիգք և Աստուածալուծ ակօսատարք զանարօրագիր անդաստան մտադատունկ մանկանցս հերկագործեն. և իբրու ծրագարանք եօթնանշոյք զաննշոյլ միտս արփիաւորեն. իբրու բովք հալոցաց քուրայից զխակութիւն խորհրդոցս ձեռնա-

ձուլեն, և զմոլորաշաւիղ վրիպեալս 'ի ծովածուփ կենցաղս՝ զօրէն ուղխացող արուսեկի շնորհաշառաւիղ ղեկավարեն. Հոգեգումար Իշխանքս Յովհաննիսեանք և Յովակիմեանք, 'ի կենսաւէտ տնկոյն ընձիւղեալ բարունակք հրաշանշանք. բեւրուք բերկրալիր բարեօք բարեբաստութեամբ բարեբանեալք. զաւակք արդարութեան, աշակերտք երանութեան, և անդրանկածնունդ որդիք երկանց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, կաճառակիցք կրօնից ազգապետ Նախնեաց մերոց՝ հովուապետք ջոլրեալ գառնամոլ գումարից. վասն որոյ եկայք սիրասնունդ աշակերտակիցք, գոհութիւն բերանալիր ամենաբարեր հատուցուք սերագործ Իշխանացս այսոցիկ. վասն զի սոքա ստեղծողք այսր ճեմարանի. սոքա պարագլուխք պաշտօնապայծառ հանդիսիս. սոքա աթոռակալք և հանդիսայարդար նահատակք այսր հրապարակի. սոքա արդարահրահանգ դաստիարակք մերոց կուրատեղծեալ մտաց. զսոսա օրհնեսցուք. սոցա շնորհապարտ լիցուք. սոցա կենաց բարօրութեան և բարեկենդանութեան հեղցուք զանձինս յանդիման փառաց մեծավայելչութեան Տեառն *):

Նոյն:

ԺԳ.

ԵՐՋԱՆԵԱԿԱՆ ԲԱՑԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԱՍԱՑԵԱԼ՝ 'Ի ՀԱՆԴԻՍԻ ՅԱՅԳԱՊԱՇՏԵԱՄԱՆ Տ. ՅՈՎԱԿԻՄԱՅ ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ,

'ի 29 Յունուարի 1826 ամի, յեկեղեցւոջ Մոսկով քաղաքի:

Ուսուցէք ինձ, աղաչեմ, ազգակից եղբարք, զի՞նչ արժան իցէ ինձ 'ի ժամուս առնել. արդեօք ըստ պաշտաման յանձնառութեան՝ բանս շինութեան արտասուակցորդ եկեղեցւոյդ խօսել, եթէ ողբալ միայն և գուժել զանհնարին տագնապ և զդառնութեան աղունս, յոր գահավէժ արկ զմեզ յաւիտենից բաժանումն վեհազնեայ Տեառն մերոյ անզուգական Իշխանապետիս Յովակիմայ: Աւա՜ղ աւուրս դառնութեան, որ բռնազբօսէ զիս գետ

*) Տպագրեալ ճառս ըստ օրինակին՝ որ 'ի գիրսն Մուզայք Արարատեան. տպ. 'ի Մոսկուա յամին 1829. (յեր. 196—202):

արտասուաց իջուցանել վասն համատարած թշուառութեանցս, յոր պարանոցաթաղ ընկլուզեալ՝ անդիտանամ ընաւին. զո՞ր 'ի վերահաս չարակրութեանցս կոծեցից, զանհնարին սուգ այսց դիւցածնունդ զաւակաց և դստերաց սորա, եթէ զանփարատելի տխրութիւն բովանդակ ժողովրդեանս և ազգիս Հայոց. զողորմելի կոկիծ այսօրիկ որդեգրացս, եթէ զիմս լերդակիզի տաչորանս խարշատեալ սրտիս 'ի սակս անդառնալի հրաժարման շտեմարանիս ամենայն արդարութեան: Զի որ ողջախորհուրդ ոչ զուգաձայնեսցէ, արդարև ամենայն բարեաց օթևան լինել երջանկայիշատակ Իշխանիս մերոյ այսմ, յորոյ հանդէս հաւաստութեան՝ շատ է մի միայն աննարկութիւն 'ի հայելի առաքինազարդ վարուց նորա. յոր եթէ ոք ակնապիշ յառեսցի, ակնախտիղ յագեսցի, զի՞արդ նորահրաշ տարրացեալ ունէր սա յանձին իւրում զամենայն արդասիս ամենայն արդարոց յԱստուածագիծ մատենին գովելոց. վասն զի ոչ ապաքէն բարձեալ բերէր սա յինքեան ամենայնիւ զպատկեր մեծի նահապետին Աբրահամու, եղեալ իբրև զնա, Նախահայր հաւատոց 'ի մէջ եկեղեցւոյս Հայոց, ուսուցիչ և քարոզիչ ուղղափառութեան Հայոց, ջատագով անսխալ դաւանութեան Լուսաւորչական եկեղեցւոյս Հայոց, և պանծալի զաւակ սուրբ Լուսաւորչին մերոյ: Եւ երկրորդ՝ ըստ օրինակի նորա լինելով հայր բազմութեան ազգաց և մարմնաւոր ծնընդեամբ, ըստ որում սա ինքն պանծալի շառաւիղ տանն Եղիազարեանց՝ Աստուածատունկ պտղաբերեալ յամենայն գերմարդկային քաջարարութիւնս, արժանացաւ ընդ տոհմական անդոց և ճոխութեանց, զհռչակաւորն զայն զԱստուածախօս պատգամ լիուլի ճշգրտել յանձին. „Կին քո, որպէս այգի վայելուչ յանկիւնս տան քո. որդիք քո, որպէս նորատունկ ձիթենւոյ շուրջ զսեղանով քով, տեսցես դու զորդիս որդւոց քոց: Այսպէս օրհնեսցի ամենայն մարդ՝ որ երկնչի 'ի Տեառնէ [1]): Այսպէս ծաղկափթիթ օրհնեցաւ 'ի կեանս իւր հոգելոյս Իշխանս մեր իբրև ուռ Քրիստոսի, և ողկոյզ այգւոյ նորա, զամս աւելի քան զութսուն. և վասն զի աւելին քան զայս ցաւօք և հեծութեամբ է՝ ըստ մարգարէին, այսօր ահա ձեռամբ Տեառն ճմլեցաւ 'ի հնձանի եկեղեցւոյ նորա, մատուցեալ գինի անապակ, բաժակ 'ի ձեռին երկնաւոր փեսային 'ի հարսանիս գառինն Աստուծոյ պատրաստեալ վասն իմաստուն կուսանաց անշէջ լապտերօք: Բայց յաւէտ հրաշալին այն է, զի և զկնի երջանիկ փոխման իւրոյ տակաւին կայ և մնայ հայր բազմութեան ազգաց, թողեալ զանեղաշէն զտուն իւր ծառազարդեալ հոգեպտուղ տնկովք դիւցափայլ որդւոց և դստերաց, փեսայից և թոռանց. և եղեալ առաջին արմատ և Նախահայր Ցովակիմեան գերդաստանի, ընդ այսօրիկ յա-

---

[1]) Սաղմ. ճիէ. 3:

ւել նա զայս ևս՝ զի նման Աբրահամու եղեւ հայր բազմութեան ազգաց և հոգևոր որդեգրութեամբ զհարիւրաւոր մանկունս ազգիս զորս և զաղքատս վերստին ծնանելով 'ի լոյս գիտութեանց ազգի ազգի բարձրագոյն ուսմանց. որով և արժանապէս կոչի և է հայր ազգիս Հայոց և հայելլի ամենայն հարց: Բայց տեսցուք 'ի սմա զայլ ևս արդասիս հին և նոր արդարոց:

Ո՞չ ապաքէն 'ի սմա միայն տեսանէաք զճշմարիտ և զանձնման ազգասիրութիւնն և զհայրենասիրութիւնն Տուբիթայ և Պօղոսի, զորոց զնախանձն 'ի սրտին կալեալ, մայրօրինակ յանձանձէր զամենեսեան, կարեկցեալ ամենայն պիտոյից ամենայն համազգեաց իւրոց, մինչև 'ի յօրդութենէ սիրոյն 'ի տեսանել զհայ ոք, նորազուարճ գոգցես կենդանութիւն ստանձնէր յանձին, առաւել ևս արժանագոյն պարծեցեալ իբրաւմիք: „Յառաջադէմ էի 'ի Հայութեան քան զամենայն հասակակիցս իմ, որ յազգին իմում էին, առաւել նախանձախնդիր էի իմոյ հայրենի աւանդութեանց [1]:

Ո՞չ ապաքէն սմա միայն տուեալ է 'ի վերուստ լինել 'ի միջի մերում նոր Դաւիթ, երկրորդ Սողոմոն, 'ի շինել զտաճարս Տեառն, 'ի կանգնել զեկեղեցիս Քրիստոսի, և 'ի բազմացուցանել զսեղանս Աստուծոյ, ո՛չ միայն յազգիս Հայոց, այլև 'ի մէջ ազգի տէրութեանս երկրորդ հայրենեաց իւրոց, յոր գնեցիկ առ մեզ եկանէ սրբաձայնել առ փրկիչն. „Տէր՝ արժանի է սա, որում զամենայն շնորհս քո առնես, զի սիրէ զազգս մեր, և ըզ ժողովրդանոցս սա շինեաց մեզ [2]:

Բայց բա՛րէ անհատութեանս: զի՞ վայրապար զհետ մտեալ եմ, երբ կարացից թուասս ես լուսաբանել զբիւրաւեսակ առաքինութիւն նորա, զիա՞րդ զօրեցից գէթ ստուերագրել ձեզ զխորին խոնարհութիւն նորա 'ի խանդաղատին ընդ ամենեցուն հայրաբար, ո՞րպէս հանդանակեցից ձեզ ըզ հիանալի հեզութիւն և զքաղցրութիւն նորա ընդ մեծս և ընդ փոքունս հոգելից կենցաղավարութեամբ. ո՞րքան երկայնամիտ համբերութիւն 'ի նմա 'ի տասնամեայ աշխատանս 'ի կառուցանելն և 'ի կարգադրելն զգեղահրաշակ ուսումնարանն վասն լուսաւորութեան մանկանց ազգին իւրոյ. ո՞րպիսի աղօթասիրութիւն, Աստուածախօսութիւն, ժուժկալութիւն, խոհականութիւն, կամ որ այլ ևս հանդէսք իցեն Քրիստոնէական քաջագործութեանց և աւետարանական կատարելութեանց:

Դա՛ղ զրկանացս. աւա՛ղ անդառնալի կորստեանս. զի՞նչ կորուսաք՝ հանդիսակից հաւատացեալք, ոչ եթէ ըստ աւետարանական կնոջն դրամ մի կորուսաք 'ի տանն դրամոց, այլ զտաղանշան բարգի՝ զմարգ կորուսաք, ոչ զմի 'ի տասանց, այլ այր՝ մի 'ի հազարաց, զայրն Աստուծոյ կորուսաք,

---

[1]) Գաղատ. ա. 14: [2]) Ղուկ. է. 5:

զոր՝ թէ և հարիւրաւոր ծրագս լուցանիցեմք, թէ և հազարիցս աւել ածիցեմք 'ի տան աշխարհիս, ոչ ուրեք գտանիցեմք, զի գնաց մարդս 'ի տուն իւր յաւիտենից, դարձաւ անձն նորա 'ի հանգիստ իւր, զի Տէր կոչեաց զնա։ Խաղաղութեամբ յայսմ և 'ի սոյն տաճարի տապանի ննջեաց այս բարեկամ Քրիստոսի, նոր Ղազարոս, մինչև եկեսցէ զարթուցանել զնա փրկիչն մեր Յիսուս։

Տացուք ապա սմա զվերջին հրաժարական ողջոյն մեր, փարեսցուք ըղ- փառաղարդ փոշև Նորա, սեղմով կաթողին, հանգիր 'ի Տէր՝ հայր մեր հոգեգորով. հանգիր 'ի Քրիստոս հաւատացեալդ հոգի։ Եւ դու՝ հանգուցիչդ տիեզերաց՝ փրկի՛չ մեր՝ որ խոստացար մեզ անսուտ բերանովդ. եկա՛յք առ իս՝ ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ [1]). ընկա՛լ և հանգո՛ զհրաժարեալ հոգիս՝ յեօթնատեղեան լուսեղէն խորանսդ, ուր ժողովք սրբոց են 'ի խաղաղութեան, հոգւով հեզութեան, յերկնից բարութիւնս. Ամէն։

Նոյն։

ԺԴ.

ԽԱՉԱՊՍԱԿ ԱՍՊԵՏԱՓԱՌ ԱՌԱՋԻՆ ԻՇԽԱՆԱՊԵՏ ԱՂԱՑ ԽԱՉԱՏՈՒՐ,

Ամենողո՛րմ Տէր Տէր։

Օրէնք են՝ ընդ որոց՝ ոք լծով՝ բռնածի.
են օրէնք՝ թարց որոց՝ և աշխարհ՝ ո՛չ կանգնի.
երանի՛՝ երջանիկ ո՛չ միայն՝ որք գիտեն,
այլ որոց՝ հոգւով չափ՝ զոր գիտեն՝ կատարեն։
Դու մեր Տէր՝ լուսափիառ՝ վարդ ծաղիկ՝ պատուական,
զխնամոց՝ ո՛չ պաշես՝ արդեօք փառս՝ աննման.
ծով սիրոյ՝ հայր բարեաց՝ զՁեզ կացոյց՝ Էնն Աստուած,
'ի Ձէնջ լոյս՝ կենդանի՛ ծագեսցի՛ մեր կենաց։
Երանի՛՝ զի բանաս՝ ըղձս Աջ՝ գթութեան,
երանի՛՝ զի 'ի պէտս՝ Դու որբոց՝ բարութեան,
զաշխատանս՝ զվաստակ՝ յանձն առնուս՝ հայրական,
խնամովք՝ պսակեալ՝ զնոսա՝ յաւիտեան։

---

[1]) Մատ. ժա. 29։

Մեր աչա՛ ժամանեալ՝ 'ի Թաբոր՝ քո Տօնի,
ծագելդ՝ 'ի յերկնից՝ լուսափայլ՝ սուրբ Խաչի.
զօրեսցո՞ւք ինչ արդեօք՝ լռութեամբ՝ անցանել.
պարտ մեր սուրբ՝ է դՁեզ՝ երգով ձայն՝ գրուատել:
Խաչաձև՝ չորքանկիւն՝ 'ի չորս կողմն մերս ազգի,
գետ շնորհաց՝ ծաւալեալ՝ իբր յԵդեմ՝ դրախտի.
քառաթև՝ քերովբէ՝ յոր անեղ՝ Էնն բազմի,
ոսկեանիւ՝ լուսոյ կառք՝ ոսկեվառք՝ կենդանի:
Ընծայեա՛ մեզ հաւատ՝ Դու Հերոս՝ դիւցազնի,
'ի քեզ մեր՝ յոյս և սէր՝ Խաչազարդ՝ ոսկեղծի.
ընդ քո ձեռն՝ սպասեմք՝ ընդունել զաւետիս,
քև յաւէտ պարծեսցուք՝ և Դու մեօք՝ բերկրեսցիս:
Ողջակեա՛ մեր՝ Մեկենաս՝ Դու փառօք՝ բարձրացեալ,
հորդեմք մեզ՝ Ձեզ շաւիղ՝ եկ առ մեզ՝ զուարճացեալ.
ընդ չքնաղ՝ ընտանեացդ՝ նորոգեալք՝ զօրութիւն,
կեա՛ց Արև՝ մեր կենաց՝ զի տեսցուք՝ բարութիւն:

Միքայէլ Վարդապետ Սալլանթեան,
և Լազարեան Որդեգիր:

'Ի 5 Սեպտ. 1827.
'ի Մոսկով:

ԺՆ.

ԴԻՒՑԱԶՆԱՓԱՅԼ ՄԵԾ ԻՇԽԱՆԱՊԵՏ,

Անդրէյ Բարքէրար Տէր

'Ի դրանց լուսածագ արփւոյն բենական,
ընդ արշալուսեան պերճ արեգական,
ծագէ՛ մեզ կաղանդ նորազուարճ այսօր,
մուծեալ Ձեզ համայն նոր ամ շնորհաւոր:
Ողադեցաւ՝ հեղուլ նոր լոյս բարութեան,
գնդդ աշխարհի յերես երփնազան.
և յառոյգ մուղայս զօգի գերամբարձ,
գեղգեղել զարարս Վեհից Դիւցազանց:

Բայց քանի՞ չքնաղ հանդէպ մեր աչաց,
Ծագեցաւ Նոր Խաչ Զեղ ձիրք եթերաց.
'ի խրախ մեր սիրտ հեղեալ զնեկտար,
յայտնել զերկրութիւն մանկանցս թերկատար:
Պատուանիշ կայսեր վարձ գործոցդ բարեաց,
Նոր կաղանդ սկիզբն Զեղ բիւրոց ամաց.
Ծնունդ հրաշափառ Տեառն Յիսուսի,
փրկութիւնարեր մարդկայինս ազգի:
Այսչափ մեծ 'ի Զեղ բարիք վերնական,
զի՞նչ զարթուցանեն 'ի սիրտս մանկական,
երկրութեամբ անբաւ գոչեմք ցնծալից.
Շնորհաւո՛ր՝ Տէր մեր, պարգեւ տօնքս համայն:
Այո՛, չէ՛ք սահման կոպար խնդութեան,
սրտիցս յայս հանդէս տօնախմբութեան,
տեսեալ զԴիւցազնդ պսակազարդեալ,
վեհ գերդաստանաւդ յերջանիկ փայլեալ:
Վաղվաղեմք ուղղել զպսակ գովեստից,
բոլորել 'ի գլուխ մեղ խնամալից.
Դիւցազն Յովհաննու աւագ եղբօր Զեր,
աշխարհատիկին կողակցիդ, դստեր:
Ըստ Նոր կաղանդի Զեղ Նոր Խաչ կայսեր,
ըստ ծննդեան Տեառն, ծնունդք յարու սեր.
ազգասիրութեանց վաստակոց փոխան,
որդւոց, թոռանց Զեր մի՛ լիցի վախճան:
Ընկալարուք զայս Նուէր բաղձանաց,
պարտապան խոնարհ Զեր որդեգրաց.
'ի նշան սիրոյ մեր մեծ ցնծութեան,
և լինել արժան Տեառնդ գթութեան:

Նոյնն:

'ի 28. դեկտ. 1827.
'ի Մոսկով:

ԺԶ.

ՔԵՐԹՈՒԱԾ

ՅԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՆԿ ԳԵՐԴԱՍՏԱՆՆ ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ:

Յո՜րն կաց հայեա՛ց Արմա՛տ Հայկազանց,
՚ի պտղաբերեալ յորդիս այս երկանց,
ո՞ւր արդեօք այժմըս ցնծութեամբ յանգչին,
իմ արժանացեալ վիճակի բախտին,
ո՛չ յաղջամղջին յանդունդս մնոտեաց,
՚ի գահ լուսափիւռ յեթերս երկնայնոց:
Մի՛ ննջեր զարթի՛ր գնա՛ յայրարատ,
տես զբարեկից զանտառս բացատ,
ուր դատարկութիւն անտ ամօթալի,
տիրէր ամենուստ անդէն յորդառատ,
տեսցես անդանօր այգիս բարելի,
փթթեալ ծաղկեցեալ ծաղկօք քաղցրալի:
Բայց բա՛րէ զանձամբս հիացումն պատէ,
առ յիմում ճառի զլեզու կապէ,
զի բանան աչա հանդէպ իմ աչաց,
այն դրունք նախկին հին ժամանակաց,
յորս սպրութիւնք իբր աղխք ծովու,
ունէին ՚ի կապ զմիտս մարդոյ,
մերկացեալ համակ, որ ինչ մարդկային,
չերեւէր այլ ինչ, բայց գազանային:
Ապա աշխո՛յժ քաջ բանաստեղծական,
գերազանց ոգի այժմ և յաւիտեան,
առ քեզ ձայնեմ առ յանձին պարտաւեալ,
հանգի՛ր ՚ի յերգ իմ այժմէն մեղկացեալ,
զի ուր քոյդ ճաճանչ աչաց խոտելի,
իբր արեգական յայտնեալ ցայտեսցի,
անդէն նոր լուսով համակ փայլեսցես,
զանքնինն ՚ի ճառ քննութեան արկցես:
Բա՛ց զվարագոյր աղջամուղջ մոայ,
բա՛ց զի քննեսցեն խելք մահկանացուաց,
ո՞ զխաւարն Հայոց մայլ մթութեան,
՚ի լոյս անսատեր փոխէն գիտութեան,

յայտնեաց յայտնեցին գործըք գերազանց,
որք են ընդհանուր հրաշք տիեզերաց։
Ո՞չ մեք երբեմն 'ի թանձրամածեալ,
'ի մութ խաւարի աստ անդ թափառեալ,
դառն արտասուօք զանձինս ողբայաք,
և ընդ մեր վիճակ նզովս կարդայաք,
մերկանդամ իբրու որդին անառակ,
'ի հողի սովեալ հաց որոնէաք,
ո՞ր իցէ երկիրն ուր լոյսն ագանի,
յոր ականց աղբիւր Գիտութեան բղխի։
Բայց շնորհ երկնից 'ի ձայն ցնծութեան,
գտաք աստ զՏուն Եղիազարեան,
որք տեսեալ զսուգ տանս Արմէնի,
փութացան լնուլ զփափագ մեր սրտի,
անցեալ քան զչափ բաշխեն համայնից,
զլուսաւոր գանձ զգոհար իմաստից։
Նորին այն Մովսէս գիւցազն Յովհաննէս,
կանգնեալ զճեմարանս զայս մեծ քաջապէս,
փրկէ զիսրայէլս 'ի փարաւոնէ,
ցուցեալ ճանապարհ յերկիրն աւետէ,
Յովակիմ իշխան Յեսու պանծալի,
լնու զբաղձանս ոգւոց ծարաւի,
որոյ զաւակունք ջանիւք ճգնօք,
պսակեն զհայս գիտութեան փառօք,
բորբոքեալ սիրով յազգ իւր խաւարեալ,
իբր 'ի կարկեհան փոխեն շողշողեալ։
Ի՞մ ապա մեզ այժմ 'ի Ռուսաց տանէն,
բաղձալ դիմել 'ի հռչակեալն յաթէն։
զի այս ճեմարան քաջազն Իշխանաց,
գեր քան զհինն աթէն գտեալ գերազանց,
անզոյգ հեղինակս իմաստուն սոփեստս,
ազգ ազգ Գիտութեանց պատուական Արհեստս,
յինքն տաւաղեալ բերկրալից դիմօք,
գագաթ բարձրացեալ սիգայ պարծանօք։
Վասն որոյ և դուք մանկունք հայկազեան,
լուեալ զձայն փողոյ տանն Ղազարեան,
թողէք այդր զձեր խաւար բնակարան,
փութացէք յայս Նոր Նահանգ Գիտութեան,

ձեզ աստ պատրաստեալ եղբարք ազգակից.
դարնիդեայ պսակ 'ի հառաչէն բնաւից,
գլխիցէք փութով աստ 'ի վայելել,
յանգին և յանգոյգ ձիրս Դիւցազնէից:
Ո՞վ իւ մարթասցեն մեալ միտք մարդկան,
անհետաքրքիր առանց ցանկութեան,
յորժամ յանդիման իւր աչաց փայլին,
բիւրաւոր բարիք Գիտութեանց անդին.
որք միշտ անյապաղ իբր դաստիարակ,
ստիպեն զմեզ ջանիւք բացարձակ,
յարձակիլ փութով գտանել հոգւով,
և սեփականել անձին սուրբ սիրով:
Իսկ դուք ո՛ մուզայք երգիչք Պառնասեան,
Ընկալեալ պարգևս 'ի լոյս անպայման.
փութացէք տաղօք երգօք տաղաղի,
աւէլուել զայս Իշխանս հանդիսի,
զի իւ զօրեսցուք մեք հատուցանել,
զայս պարտս անվճար շնորհեալ մեզ ձրի,
բայց եթ բանալով զպատուհան սրտի,
ընծայել նոցա զպտուղ բարելի.

Սարգիս Խորասանեան:

ԺԼ:

ՔՆՐԹՈՒԱԾ

ԺԱՄՏՈՒԱԾԱԶՈՑԳ ԵՂԲԱՐՍ ՎԵՀԱԶՆԵԱՑ ՏԵԱՐՑ ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ.

Հրաշանգողք հոգեկան վարժութեանց աղքանաղեանս գրոհի, կոթողք անմահութեան հոգեկցորդ եղբարք, հաստարմատ տունկք կենդանութեան, ստիերք հոգեմատեանք, և սիւնք հաստատութեան հիմանց տանս Թորգոմայ, նշոյլք անթարգման մեծամեծարար բարերարութեանց ձեր ընդ ամենայն տիեզերս հրաշազարդեալ շրջափակին լուսապայծառապէս, յորոց անջնջելի յիշատակարան անմահապարգև ճեմարան, բիւրակերպեան ծաղկամբք գի-

ուլթեանց փթթեալ բողբոջեալ, կաթնասուն ստեամբք ջամբեալ դիեցուցեալ մանկանց զճաշակ սրբութեան, զթիւրաթեք խորհուրդս հաստցեալ հմտեցուցեալ, և զանբանական միտս մատաղատունկ մանկանց բժշկաբաշխ աջով նրբաստակակերտեալ, ըստ որմէ և անթիւ գթութիւնք տուատապարգև տեարցդ, անկշռելի համայնահաս ողորմութիւնք ձեռաց, անհասանելի բանական մտաց, գերածայրեալ քան զչափ և քան զկշիռ, 'ի վեր քան զերկիր և անդր քան զծով, յոր կարկի լեզու մեր և գրիչ, ըմբռնեալ կասեալ դեգերեալ, զի 'ի նախանձ անկշիռ բարութեանց բերեալ արժանի արարէք զմեզ կաթին և ռետնոյ քաղցրութեան հոգւոյ, կենդանաստեղծեալ զնուելապատկեր միտս մեր ըստ պատկերի Աստուծոյ 'ի մարդ կատարեալ, առ որ յօժար հայթայթանաց 'ի սակաւաձեռն տրխուր խնամոց, հոգեշարժ քնարիւք ներբողել բարեբանել զՀովիւսդ ունայնասովոր հօտիցս հայկազեան, յաւէլուել, կեցցեն կեցցեն անզուգական բարերարք մեր, կեցցեն մնասցեն յամս բիւրաւորս զօրէն արեգական լուսաւորեալ զաշխարհս Հայոց արփիափայլ ճառագայթիւք իւրեանց, կեցցեն անսասան յորդւոց յորդիս, յազգէ յազգ յաւէրժայիշատակ ընտանեօք, 'ի ծաղկունս ծիրանեօք, 'ի լուսաւորբօք և յանշէջ լապտերս յերկրի, 'ի փառաբանութիւն անուան իւրեանց և 'ի պարծանս Արամեան ազգիս:

Խաչատուր Եւլմէրզեան:

ԺԲ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ԱՍԱՑԵԱԼ 'Ի ՓՈԽՈՒՄՆ ՅԱՍՏԵԱՑՍ Տ. ՅՈՎԱԿԻՄԱՑ ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ՝

'Ի 26 Յունվարի 1826 ամի, 'ի պահու յուղարկաւորութեան հանգուցելոյն 'ի տանն:

Տեսանէք ով որբացեալ մանկունք, զի ննջէ Հայրն մեր ըստ գթոյ մեծանուն իշխանապետն Յովակիմ: Հանգչի 'ի գործոց անդուլ աջակիցն ազգասէր եղբօր իւրոյ Տեառն Յովհաննու: Բայց ո՞րպիսի ինչ իցէ այս Նորոգատուր հանգիստ նորա, զի՞րդ զօրացաւ քունն 'ի նա, զոր տեսանէաք տալ լսել տարածմամբ բազկաց 'ի գգուանս համայնից զձայն սիրոյ զդգ ընդ օրհնութեան և 'ի մէնջ ընդունել զքաղցրալուր բարբառ գոհութեան. զինչ այս նիրհ արտևանացն, ողբալի սրտից համօրէն: Բարէ սրտակէզ աղետիցս. զի ընդ պզանալ առաւօտուն ոչ ևս կանխեաց Հայրն ըստ սովորութեան

իւրում առ որբացեալ որդիս իւր. կապտեցաւ 'ի կենաց յաւիտենանս ժամանակաց. երբ երեւեցուցեալ կենացն եհաս 'ի վերայ գիշերն մշտնջենաւոր։ Ո՞ր արդեօք և բանն փրկանակ, որ առէր գէթ 'ի ժամուս երթայց և զարթուցից զնա։ Ո՛չ այսպէս որպէս կամիմքս, այլ յարուցիչն մեռելոց վերջին փողն զարթուսցէ և զնա յաւուրն յետնում։ Ո՞վ անիմանալիդ յիմանալեացս, խո՛ր են խորհուրդք օրինացդ, որում խոնարհի ամենայն հասակ մարդոյ. Դու ես, որ տիրես կենաց և մահու. Դու միայն կնքես զկամս քո, յոր յառեալ հովանացեալ՝ տպանան տիեզերք ամենայն։ Բայց քեզ՝ սքանչելի օրինակդ առաքինութեանց, ձայնեն գումարք ազգերամ Հայոցս, Տէր ընդ քեզ՝ մեծարգի արդիւնարեր վաստակաւոր մեր. և նախանձայոյզ պաշտպան. Տէր ընդ քեզ՝ հա՛յր մեր, աղաղակեն զաւակք երկանց քոց. ընդ որս և անտերունչ մանկունքս ձայնեմք 'ի մի շունչ. Տէր ընդ քեզ՝ մարդասէր բարերար մեր։

Մեք զրկեալք 'ի հօրէ զրկիմք 'ի ձրից մեծի շնորհաց նորին, 'ի բարեաց ցայսօր ժամանակի վայելելոց 'ի համբարտակեալ. բայց նա զի՞նչ. Թէպէտ և անձայն 'ի մարմնի, սակայն մեծաձայն 'ի հոգի բարբառի ընդ մեզ ասելով. ո՛ մանկունք՝ Թէ և ո՛չ զամենայնն արարի, ո՛չ աշխարժք ցանկութեանց հոգւոյ պակասեցան առ 'ի կատար նոցին, այլ զօրութիւն ձեռին. քանզի մարդոյ մահկանացուի չէ՛ տուեալ կատարելութիւն անվախճան։ Բայց և այնպէս լիութիւն անթիւ բարերարութեանց քոց՝ ո՛ տէր մեր, գումարեալ գեղեցկաձայնէ առ մեզ, երթա՛յք՝ երթա՛յք և տո՛ւք զվերջին համբոյր հօր ձեր հասարակաց, զի այս վերջին նուագ է, յոր կարէ ցուցանել զերեսս և զսիրտ հայրական, խօսել և հրամայել ձեզ 'ի հոգի զօրութեան։ Երթա՛յք՝ ժողով ճեմականաց՝ զվերջին ընծայել և ընդունել զողջոյն հրաժարական 'ի լուսաւորչէ և 'ի քաղցրանուն բարերարէ ձեր. Երթա՛յք և հատուցէք զյետին զայս պարտս ձեր, այլ ի՛ւ իւիք, բայց եթէ արտասուօք, արտասուօք ասեմ. զորպիսի եհեղ երբեմն փրկիչն 'ի վերայ դեսպակի սիրելւոյն Ղազարու։

Արդ՝ ո՛վ լծակցեալ եղբարք, 'ի ժամուս, յորում 'ի մուտս դարձաւորեն կենաց մերոց, բարձաւ 'ի գլխոցս Թագն պարծանաց, պակասեցաւ 'ի մէնջ բոլոր բարեաց օթեանն, աւա՜ղ որդւոցս սիրեցեալ և կարօտեալ 'ի քաղցր հօրէն. աւա՜ղ կենդանութեանցս. զի՞նչ առցուք այժ եղերական, բայց եթէ զամենախնամ տեսչութիւնս շարժել սրտաբուղխ ուխտի խնդրուածովք յընդունելութիւն առաքինի հոգւոյ հայրենասէր ծնողիս՝ յուղփանեմ խորանսն յարկացն յաւիտենից. Ամէն։

Դաւիթ Օտտայեանց։

ԺԹ.

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ԱՍԱՑԵԱԼ Ի ՓՈԽՈՒՄՆ ՅԱՍՏԵԱՑՍ Տ. ՅՈՎԱԿԻՄԱՑ ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ,

'ի 26 Յունուարի 1826 ամի, 'ի պահու յուղարկաւորութեան հանգուցելոյն 'ի տանէ։

Այրասուր հարաւ սուր լալագին աղետից,
Հարաւ փող դառնաշունչ բօթաբեր մեր սրտից.
Իբր քաղցկեղ ընդ հոգիս ճապաղեալ համատիւռ,
Անյագուրդ ճարակմամբ լափլիզէ վիրալից։
Զի Արև հայրենեաց վեհ Դիւցազն Դիւցազանց.
Պանծացեալ բարձրացեալ 'ի դարուս ըստ արդեանց.
Արկ գլուխ քող մահու յայս անշուք յարկ պարտուց.
Զմեզ թողլով լալ սգով յաւէտանջ թախծութեանց։
Ետի որդիք, հեծութիւնք աշխարհ անսահման.
Անտի սուգ, հառաչանք սրտակէզ բորբոքման.
Զի՞նչ ընդ իս, զի՞նչ ընդ ձեզ, զի՞նչ ընդ ազգ Հայկազեան.
Ո՛ սարսուռ՝ ո՛ տագնապ հրալիր անպայման։
Չի՞ք մեր Հայր քաղցրագութ, չի՞ք անզոյգ բարեբար.
Մեր լապտեր բարութեան՝ որբ մանկանց ապիկար.
Մերկացեալ 'ի լուսոյն խնամոց սիրալիր.
Ամփոփեալ առկայծեալ՝ տեսանի անբարբառ։
Խցեցան գնացք աղբեր յորդառատ մեր կենաց.
Ցնդեցաւ ցրուեցաւ Իշխանիս ցօղ բարեաց.
Զրկեցաք 'ի հօրէ՝ յաւիտեան զրկեցաք.
Ընկղմեալ 'ի վտակ յորդահոս արտասուաց։
Արի՛ տե՛ս Հայաստան զտրտմազգեաց տեսարան.
Արի՛ տե՛ս հրաշացի՛ր ընդ շքեղ դամբարան։
Թօթափեա՛ զծիրանի, զգեցի՛ր զքուրձ ողբոց,
Զի շիջաւ քոյդ արփի՛ ուղփաձեմ ճրագարան։
Տե՛ս զդիւցազն պայազատ՝ զղամբար հայրենեաց.
Զայս անշարժ սիւն ազգիս յարշալոյս քոյդ փառաց.
Խաւարեալ 'ի սուգ դառն ազգակցաց 'ի լուսոյ.
Կործանեալ առ 'ի սուգ համօրէն ընտանեաց։

Բարձրացո՛ դքոյդ նշան՝ և կանգնեա՛ զմահարձան.
Յանմոռաց յիշատակ գրոհիս Արամեան.
Զի անմահն 'ի մահուն՝ սխրագործ վեհութեամբ.
'Ի կենաց տենչանաց զրաւի անդարման։
Որդ՝ եկա՛յք ո՛ մանկունք՝ անտէրունչ որբացեալ.
'Ի հեղուլ գետօրէն զարտասուս ծովացեալ.
Համբուրիւ քաղցրութեան երախտեաց, որ անրաւ,
Գգուեսցուք թախծանօք զոտս և զձեռս սառուցեալ։
Մատիցուք 'ի յողջոյն 'ի յետին նուագի.
'Ի քաղցր դէմս մեծանուն տիրաձիր Իշխանի.
Աշկաթեալ ողբասցուք ընդ Հայր մեր որդեսէր.
Փարեսցուք զգագաղաւ 'ի թախիծ սգալի։
Մաղթեսցուք եռանդեամբ զՀաստիչն Էակաց.
Մաղթեսցուք անդադար՝ զի զՀայր մեր գթած.
Հոգեալ անթառամ պսակօք յաւիտեան.
Արժանի արասցէ լուսափայլ խորանաց։

Մարգար Խորայեան։

Ծանօթ. Նախակարգեալ Արձանականն, և որ զկնի երկեակ ողբերգութիւնքդ՝ տպագրեցան անփոփոխ ըստ տպագիր օրինակացն՝ որ 'ի գիրսն Собраніе Актовъ. Հատ. Գ. յեր. 101—109։

Ի.

ՃԱՌ

Ասացեալ 'ի հանդիսի աւարտման երրորդ գումարելոյ 'ի Լազարեանց Ճեմարանի Արեւելեան լեզուաց՝ որ 'ի Մոսկուա, 'ի Սեպտ. 1848 ամի։

'Ի խրախճանականս հանդիսի՝ ուր սիրտք ամենայն լի՛ են զուարթութեամբ, արժան է և լեզուաց զուրախականսն բարբառել. և կարի՛ իսկ յիրաւունս։ Քանզի մեծարեալդ ակմբի գալ գումարել 'ի տեղւոջս, և միայդ միայդ դարձեալ ծաղկելոց դիմաց ժպտումն՝ եկելոյ հասելոյ բարութեան է յայտարար, բարութեան ասեմ՝ որ որչափ ցանկալի մերոց Հայրենասիրացն էր, այնչափ և ակնկալելի 'ի դարուց հետէ։

Ու ի՞նչ Հայք մեր յամսն առաջինս՝ նոյն և 'ի վերջինս՝ խնդալից յորդոր կամաւորութեամբ զընտանութիւնսն լքեալ Հայրենիս ընդ քաղցրագոյն երկնաւ՝ ձեպէին անկանել 'ի բացական վայրս ցրտաշունչ Հիւսիսոյ, եթէ ո՛չ առ երջանկանալ առ յապա զկեանս որդւոց իւրեանց, կամ գէթ զորդւոցն որդւոց։ Եւ ահա ոչ նոքա 'ի յուսոյն՝ զոր ունէին խաբեցան, և ոչ մեք անմասն 'ի բարենշան աւուրս գտաք 'ի խնդութենէ։

Եթէ ողբալոյ աւուրք էին՝ յորժամ դժխեմն բաղդ Հայաստանի յետ զթագին նորա ճաճանչ շիջուցանելոյ, ջանայր և զորդիսն 'ի հոգեզարդն իմաստից լուսոյ թափուր ամենեւին դնել՝ անագորոյն յարուցեալ ոսոխս ընդդէմ Հայկեանս դպրութեան, զՄերուժան ասեմ զուրացողն, զԹիմուրն — Լանկ, և զայլս յեղեռնականացն 'ի չարին արբանեկաց, արդ ժամ իսկ է մեզ խայտալոյ և ցնծալոյ, և ցնծալով՝ զԱստուածն մեր օրհնելոյ զամենայն բարեացն պարգևատու։ Զի դարձեալ ահա, դարձեալ վերստին 'ի մեզ ակն նորա հայեցաւ քաղցրութեամբ. հայեցաւ՝ և անտես չարար. հաճեցաւ նա (թէ օրէն իցէ այսպէս ասել) զուարթացուցանել զսկերս Հարց մերոց՝ որդւոցս ողորմելով։

Ո՛ անքնին Տեսչութիւն... Երբեմն ժամանակի ընդ պալարդուացն բուռն զաւազանօք նախնականն մեր բարբառ՝ ընդ նմին և սուրբ կրօն՝ անհընարին կրէր հալածանս, և գրեա թէ 'ի գլորման կայր վտանգի. իսկ այժմ ամենայն ուրեք բարեպաշտագոյնք 'ի Թագաւորաց և յԻշխանաց, որպէս լսեմք և տեսանեմք, ջան և փոյթ 'ի մէջ առնուն իմաստուն հոգածութեամբ զնոցին հրահանգսն յամենայն 'ի վարժոցս աճեցուցանել։

Արդ սոցաւն պարտին առաքինանալ և ուք միանգամ Հայրենեացն օգտի և բարգաւաճանաց կամեցողք իցեն։ Քանզի ազգի իւրաքանչիւր հաստատութեան կրկին հիմունք են՝ բուն իս, Լեզու, և Կրօնք. յորոց վերայ և այլքն ամենայն կարգաց լաւութեանց յօրինուածութիւնք ամբարձեալ կանգնին։ Ուրանօր ազգայնոյ լեզուին պահպանութեան և պայծառութեան հոգ խնամոյ ոչ իցէ, անդ և կրօնիցն յակաստանի կալ՝ չէ՛ հնար. և 'ի կրօնիցն անկանել՝ անկած իսկ լինիցի և ազգն, և կոչեսցի ոչ այնուհետև՝ ազգ, այլ՝ չազգ։

Երանի՛ կարգամ, բիւր կարգամ երանի մերոյ ժամանակիս մանկտւոյ, որք ընդ տեսանել զլոյս արևու աչօք մարմնականօք՝ անդէն և զհոգւոյն կամ զմտացն փութան զուարթացուցանել զբիբս 'ի սկզբնաբոյս հասակին՝ լոյս առեալ 'ի շահաւետագոյն գիտութեանց։ Այլ եւ նոցա այս աջողէ, եթէ ոչ անդուլ ջանիւք և ամենագովելի սատարութեամբ մերոց Իշխանապետաց՝ նախանձաւորաց ազգիս բարութեան։

Գիտէ՛ աշխարհ, և խոստովանի՛ իսկ ամենայն լեզու Հայկեան, զի Լազարեանցս Տուն անդստին յաւուրց առաջնոց բազմադէմ երախտաւորութեամբ

առ իւր Հայրենիս՝ օրինակ պանծալի հանդիսացեալ ճշմարիտ ազգասիրութեան, գիտաց յաւէտ 'ի նոյն և զայլս խրախուսել. և ցարդ իսկ դադարէ ոչ՝ յայնպէսն առաքինանալոյ՝ օժանս բարեաց ազգին յաւելլով: Ահա և արդիւնք իրացն՝ վկայ անշուշտ ասացելումս կան բանի:

Երեւելեաւս անուանեալ Լեզուաց ճեմարան, մշտնջենաւոր արդարև յիշատակ Աստուածատուրնկ Տօհմիս, որ 'ի հիմնարկութենէն և այսր գոգ իբրու բիւրաւորաց ելով Մայր մանկանց՝ ջամբէր նոցա աննախանձաբար զիմաստից զկաթն, արդ իսկ առաւելագոյն արժանացեալ շնորհի և խնամողօրէն պաշտպանութեան ՕԳՈՍՏԱՓԱՌ ԿԱՅՍԵՐ՝ Մեծին ամեն ՆԻԿՈՂԱՅՈՍԻ, զբարձրագոյն Լսարանի (որում Ռուսականն բարբառ անուն տայ Լիցէյ) ընկալաւ զկանոնադրութիւն՝ յընդարձակել և ևս զառաքինաւէտն վարժից զասպարէզ:

Զի՞նչ ուրեմն յայսմ հետէ Հայկազինն Հայրենասէր. — Զուարճացի՛ զուարճանալով՝ յորժամ տեսանիցէ անդէն զբազուշիմն մանկտւոյ ճեմել աշօղաքայլ՝ 'ի վարժս վեհագունից գիտութեանցն թեւակոխելով: Զի՞նչ ապա և մեք. — Բացցո՛ւք զբերանս մեր և զսիրտ՝ օրհնել զկեանս ՆԻԿՈՂԱՅՈՍԻ՝ զՄեծի Ինքնակալին Ռուսաց, հաստատութիւն յԱստուծոյ մաղթելով Աթոռոյ Թագաւորութեան նորա: Օրհնեսցո՛ւք և զկեանս Ձեր՝ ո՛ Պայազատազարմ Իշխանապետք՝ Արամեանս ազին հզօր խնամակալուք. օրհնեսցո՛ւք զՁեզ, օրհնեսցո՛ւք զբարերաւն շառաւեղդ Լազարեան Տոհմի. որք ոչ միայն սատար հաստահիմն հաստատութեան հանդիսացայք ցայսօր համբաւատենչս ճեմարանի (որ հոգեւոր արգանդն է վերածնութեան մանկանց՝ երկրորդ յետ աւազանին լուսաւորութեան), այլ և գումարս դրամոց 'ի կառոյցս դպրոցաց և յեկեղեցեաց կանգնումն 'ի տեղիս տեղիս՝ առատաձեռնեալ, ազգս ազգս օգտակարաց մատենից 'ի լոյս ընծայեցուցեալ, ձեռն օգնականութեան առ վտանգեալս կարկառեալ, հաց լլուլի՝ աղքատաց քաղցելոց բրդեալ, սիրով քաղցրութեամբ առ ընկերին կարիս մատուցեալ, յամենայնի ամենայնիւ յօգուտ և 'ի պայծառութիւն Հայրենեաց՝ անձնանուէր վաստակեալ, 'ի նոյն և զմի մի 'ի մերձակայցն և 'ի հեռաւորաց քաջալեր բանիւք վառեալ, այո՛ արդարև բիւրուց բարութեանց ազգիս ճանաչիք մատակարարք:

Մովսէս Գրիգորեան Զմիւռնացի,
Հոգեւորդ Ցեղաստանեանի:

ԻԸ.

Ի ՀԱՆԴԷՍ ՏՕՆԻ
ՎԵՀԱԶԻՆՆ ՅՈՎԱԿԻՄԱՅ
ՀԻՄՆԱԴՐԻ ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ:

Ժամս այս, ո՛ մանկունք, կարդայ ձեզ հրաւէր՝
Զաչկունս երկրեղէն ամբառնալ 'ի վեր,
Զիմաստիցըս Տան ըղձեհ կառուցող
Ներկրել յանուշից արտասուաց 'ի ցօղ:

Որդեգի՛րք Լազարեան,
Զայն տուէք օրհնութեան,
Զի յերախտագէտ
Ձեր սըրտէ եւ յիմ,
Խընկեսցի յաւէտ
Վեհազն Յովակիմ:

Արդ ո՞ւր իցէ նա. — Նա հոգւովն անեղծ
Յեթերին 'ի կայս թէ երթ լուսայեղց,
Զմարմինն աստ առ մեզ եթող յաւանդի
'Ի հասարակաց Մօրն 'ի յարգանդի:

Որդեգի՛րք Լազարեան,
Զայն տուէք օրհնութեան,
Զի յերախտագէտ
Ձեր սըրտէ եւ յիմ,
Խընկեսցի յաւէտ
Վեհազն Յովակիմ:

Հա՛յր է նա ազգիս, թէ եւ ո՛չ յերկրի,
Յակումբ աստղաթիւ ծընընդոց բերկրի:
Զի զծընեալըս նա վերածնեալ սընոյց՝
Զիմաստից ըստինս տալով քա՛ղցր 'ի ծուծ:

Որդեգի՛րք Լազարեան,
Զայն տուէք օրհնութեան,

Օ՜ի յերախտագէտ
Ձեր սրտէ և յիմ,
Խընկեսցի յաւէտ
Վ՚եհազն Յովակիմ:

Է՛ մեզ ճեմարանս գըթոտ իբրու Մայր.
Որ թէ չէր, սընունդ կըրկին մեզ ո՞ տայր:
Ա՛ստ մեզ աջողէ պյրանալ 'ի սիրտ,
Աստ մարդկց յոգունց մըխել զանձն 'ի կիրթ:

Որդեգիրք Լազարեան,
Զայն առէք օրհնութեան,
Օ՜ի յերախտագէտ
Ձեր սրտէ և յիմ,
Խընկեսցի յաւէտ
Վ՚եհազն Յովակիմ:

Ահա ՅՈՎՀԱՆՆԷՍ, ահա ԽԱՉԱՏՈՒՐ,
Վ՚եհ մեր Պայազատք, բանիս կան 'ի լուր.
Ոյց լի՛ խընդութեամբ ծաղկեսցին և դէմք՝
'Ի յառաջադէմս թէ զմեզ նըկըրտեմք:

Արդ աղերս մեք առէն
Ուղղեսցուք առ Միշտ-էն,
Օ՜ի հըզօրեղն Աջ
Հովանասցի ցանդ
Յօրհնեալն 'ի ժառանգ
Տոհմիս բարգաւաճ:

Նոյն:

1848.

ԻԲ.

Ի ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԱՒՈՒՐ ՏԱՐԵՄՏԻ

ՈԳԵԱԼ Ի ԼՈՒՐ

ՏԵԱՌՑ ԼԱԶԱՐԵԱՆՑ

Ի ԴԻՄԱՑ ԱՇԱԿԵՐՏԱՑ։

—

Նո՛ր օր, նո՛ր ամիս, նո՛ր և Տարեգլուխ,
Մերկեանս ազդէ բան՝ հանուրց բերկրաբուխ։
Հի՛մ ապա և մեք, Վե՛հ մեր խնամածուք,
Մ՛չ ըղձո՛յն 'ի լո՛ւր Ձեր բարբառեցուք։
Դուք մեր ըստ հոգւոյ ծընո՛ղք արդարև,
Զի Ձեօք մեք տեսաք նոր լոյս, նոր արև։
Բարեօքդ աննախանձ որ ըղձեօք զեղու,
Պարարեալ իբրու կաթամբ և մեղու՝
Հըրճուիմք հոգեպէս, հըրճուիմք և մարմնով,
Հըրճուիմք՝ յիմաստից աճեմք 'ի կորով։
Ընդ տարած թևովք Ձեր հովանաւոր
Մեզ մին մի տարի՝ մի մի դա՛ր է նոր։
Տարիք անցանեն, դարք հոսին գընան,
Ձեր անուանք յանանց դրոշմին 'ի մատեան։
Զերկնաւորն ըղձայր օրհնեմք 'ի սըրտէ,
Զայն՝ որ ըզմեր սիրտս 'ի բարձանց դիտէ։
Օրհնեմք ըզՆորա զանձառ գըթութիւն,
Որ ըզՂազարուն Ձեօք կանգնեաց ըզՏուն,
Աշտանակաբարձ զօրէն ճըրագի՝
Լուսատու յըսփիւռ լինել Հայ ազգի։
Նո՛յն նա պերճ կենօք և գերազանցիկ
Շըքեղ փայլեսցէ ըզՁեզ յամս 'ի ձիգ։
ՅՈՎՀԱՆՆԻՍԴ անուն, այլ և ԽԱՉԱՏՈՒՐ,
Պանծագո՛յն հանուրց հընչեսցի 'ի լուր։

Նոյն։

1849.

ԻԳ.

Ի ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՏՕՆԻ
ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ
ՈԳԵԱԼ ՅԱՇԱԿԵՐՏԱՑՆ ԲԵՐԱՆՈՅ:

Յարեւելից ահա գան Մոգք՝
Աստեղըն ածեալ հրաշաձեւմ.
Գան մեծարել պատարագօք
Զծնեալն Արքայ՝ 'ի Սաղէմ:
Ընծա տեսեալ 'ի խանձարուրս
Յանշուք պատեալ 'ի ձորձիկ,
Ոսկի՝ կընդրուկ տան՝ եւ զըմուռս
Նըմին 'ի ձօն գեղեցիկ:
Նա՛ էր ծագեալն աստղ Յակոբու,
Զոր գուշակեաց Բաղաամ:
Նա՛ էր Փըրկիչն, ում օրհնեգու
Զուարթունք կացին լուսերամ:
Ի՞ւ ապա մեք ընծայաբեր,
Լիցուք Նըմա, ի՞ւ արդեօք,
Որ յանմատոյց յերկինս 'ի վեր
Հօրն ընդ աջմէ կայ փառօք:
Հաւատ, յոյս, սէր, խոստուն պաշտօն
Յամբըծագոյն 'ի լեզուէ,
Հաճոյական Նմա է ձօն
Քան ըղծըլխեալն ըղձալուէ:
Բացցո՛ւք ապա ըզմեր շըրթունս
Ընդ Հրեղինացըն դասու,
ԸզԲանն Աստուած որ 'ի բարձունս՝
Օրհնել 'ի սիրտ, 'ի լեզու:
Որ ըստ օրէ տացո՛ւք եւ ցանգ
Նըմա զաղօթս ըղձական,
Շառաւեղացդ օրհնաժառանգ
Տան Ղազարու ժըտել կեա՛նս:

Նոյն:

1850.

ԻԴ.

Ի ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՏՕՆԻ

Տ. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ ԼԱԶԱՐԵԱՆՑ

ՈԳԵԱԼ Ի ԴԻՄԱՑ ԱՇԱԿԵՐՏԱՑ.

—

Նարբառոյն ձայն յանապատի՝
Մեծ կարապետըն Յովհաննէս,
Տօնիւս այսօր մեծահանդէս
Յեկեղեցիս մեր դըրուատի:
Իսկ որդունակ Անուանակրիդ
Նորուն 'ի գով 'ի գերապանծ՝
'Ի գեղեւկոտ մերոց շըրթանց:
Նանք բըղխեսցեն խըրախուսիթ:
Ո՞ հուես ոչ, ո՞ գիտէ ոչ
Ըզբազմադէմ գերախոհացդ հոյլ,
Զոր Հայրենեացդ ցուցէք անդուլ
Մանկանց բանից դեռաբողբոջ:
Թո՛ղ այլք ոճով առցեն 'ի վէպ
Զարգասաւոր փութոյդ ըղջան
Առաւելեալ յազգիս օճան:
Մեզ գոհանալ միայն է դէպ:
Ուստի մաղթանս 'ի սերտ սըրտէ
Վերառաքեմք առ Տէր Աստուած՝
Աւուրս յաւուրս Ձերոց կենաց
Առաւելուլ և յայսմ հետէ:

Նոյն:

1850.

ԻԵ·

Ի ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՏՕՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՐԴՒՈՅ Տ· ԽԱՉԱՏՐՈՅ

ՅՈՎԱԿԻՄԵԱՆ ԼԱԶԱՐԵԱՆՑ·

Մեծ 'ի ծընունդըս կանանց
Վըկայեցաւ Յովհաննէս,
Զի զԱստուծոյն սուրբ ըզԳառն
Ցուցս, եցոյց յայտնապէս:
Նըմին և դու համանուն՝
Փոքրիկ թէպէտ 'ի հասակ,
Մեծ 'ի քոյում պերճ Տօնի
Պարծանք լիցիս և Դըպրան·
Մեծ է կոչման քո խորհուրդ.
Եւ իմ արդէն մեծ է յոյս,
Եթէ արդեամբք և յոգունց
Լիցիս բարեաց 'ի խրախոյս:
Ուստի զբանիս խուռն դըրուագ
Նուիրել փութամ քեզ 'ի ձօն,
Շնորհաւորեալ ընկերամբ
Ըզնիրայնոյդ մեծ ըզՏօն:

Նոյն:

1850.

ԻԶ.

Ի ՏԵՐԱԺԱՄ ՓՈԽՈՒՄՆ ՅԱՃ. ԽԱՐՋԻՍ *)

ՆՈՐԻՆ

Յ. Խ. ԼԱԶԱՐԵԱՆՑ։

—

Մարդ յաշխարհ ծընար, փոքրիկդ Յովհաննէս,
Յայս մեծ՝ Ղազարուն բերելով Տոհմի.
Բայց մինչչև 'ի տես հասեալ յեօթնամի
Ելեր յաշխարհէ, չըգիտեմ՝ որպէս։
Քանի՞ ցընծութիւն 'ի քում ծընընդեան
Զեղաւ քաղցր 'ի սիրտ 'ի քո Հօր և Մօր.
Քանի՞ և բերանք բարեբաստ զայն օր
Կարդալով՝ Նոցուն խընդակից գըտան։
Յէ՛ սիրուն մանկիկ, յէ՛ դառնիկ մատաղ,
Զի՞մ ըզքո ծընողս 'ի կոծ և յաշխար
Թողեր, գընացեր... Բա՞նտ էր քեզ աշխարհ,
Կամ քան ըզբաստեան քեզ լա՞ւ էր դագաղ։
Կացեր ոչ յերկար ցաւոցդ 'ի մահիճ.
Վաղ ընդ փոյթ հանուրց Մօրն յարգանդ իջեր։
Եւ ո՞ր յայնժամ սիրտ ժուժայր, ո՞ր աչեր
Ո՛չ յեղյեղեցան յարտասուաց 'ի լիճ։
Թ՛ և քո սենեկիկ թափուր 'ի քէն կայ,
(Զի Հօրն հաւատոց չըւեցեր 'ի գոգ).
Բայց ո՞ ցաւագին քո յիշատակօք
Զողբայ՝ չարտասուէ, կամ գէթ չըփըղձկայ։
Նարդաւաճելոյ Տոհմին Վեհապանծ
Պերճ ժառանգակալ այո՛ դու էիր։
Քեւ Վեհն Իշխանաց՝ տխուք ծանրակիր՝
Խորախոյս 'ի բարիս կարդայր Հայկազանց։

---

*) Որ եղև 'ի 26 Նոյեմբերի 1850 ամի։

Արդ ո՞ւր այն հրճուանք, ո՞ւր պանծալին յոյս,
Ո՞ւր եռանդն 'ի սիրտ, ո՞ւր ժըպիտ 'ի դէմս. —
Դարձաւ ամենայնն... Եւ ինձ որ քերթեմս՝
Ջահունք Եթերին 'ի մութ կան յանլոյս:
Թէ երբ այն դիպաւ քեզ մահածուն ախտ՝
Առ 'ի հընարից դեղոցն ապըստամբ,
Ա՛յլք թող պատմեսցեն. իսկ ես կականմամբ՝
Զքո Հաւո՛յն առից աւաղել ըզբախտ:
Եւ դու որ 'ի կայս պըրծեար 'ի յանքոյթ՝
Փոքըրկանց դասուն լինել յարկակից,
Զաղէկէզ սըրտի ծերունւոյն կըսկիծ
Թեւթեւել հայցեա՛ յԷէն բարեգութ:

Նոյն:

ՎԵՐՋ

ՑԱՆԿ

ԵՐՐՈՐԴ ՄԱՍԻՆ ՄԱՏԵՆԻՍ·

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ·

Պատմութիւն շինութեան եկեղեցեաց Հայոց՝ որ 'ի փեթերբուրգ . . . . 5.
Թարգմանութիւն Կայսերական Հրովարտակի Աղեքսանդրի Ա· տուելոյ սակս Ս· փեթերբուրգայ Հայոց եկեղեցւոյն և եկեղեցական տանց, եւ և սակս Կառավարութեան նոցին. 10.

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ·

Պատմութիւն շինութեան Լազարեան ճեմարանի, որ 'ի Մոսկուա, և նկարագիր արդի հանգամանաց նորին. . . . . 12.
Նպատակ ճեմարանին . . . . 13.
Կառավարութիւն . . . . 14.
Խրատք և առանձնաշնորհութիւնք. . . . . 22.
Պարտականութիւնք աշակերտաց . . . . 25.
Դիւանատուն . . . . 27.
Հիւանդանոց . . . . —
Ուսումնական նպաստք . . . . 28.
Տպարան. . . . . —
Արձան կանգնեալ 'ի պարտիզի ճեմարանին, ... 29.
Անուանք աշակերտաց արժանացեալ յառաջադիմութեամբ աւարտողաց զընթացս ուսմանց. 34.
Օգուտ ճեմարանի . . . . 38.
Անուանք աշակերտաց ուսելոց 'ի Լազարեան ճեմարանի արդեամբք Տեարց Լազարեանց. 39.
Անուանք ուսանողաց յայժմու 'ի Լազարեան ճեմարանի արդեամբք Տ· Լազարեանց. . 43.
Բարձրագոյն այցելութիւնք 'ի ճեմարանն . . . . 44.
Ցուցակ այլոց եւս այց արարողաց ճեմարանին . . . . 46.

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ·

Նամակ Կոմսին Արակչէյեւեայ առ Յովակիմ Լազարեանց . . . . 57.
Հրովարտակ Ինքնակալին Ամենայն Ռուսաց 'ի կառավարող Սենկլիտոսն . . . . . 58.
Հրովարտակ 'ի Քաղիթուլն ասպետանշանացն Ռուսաց . . . . 61.
Հրովարտակ հանեալ յՕրագրէ Սենկլիտոսի. . . . . 62.
Նամակ Նախարարին արքունի գանձարանի՝ Կոմսին Կանկրինայ 'ի Խորհրդարանն ճեմարանի. 64.

Սահմանադրութիւնք և կանոնք Սինհոդոսին Էջմիածնի յաղագս հաստատելոյ 'ի Լազարեան ճեմարանի Արեւելեան լեզուաց զատանձին Բաժնի 'ի պէտս դաստիարակութեան մանկանց Հայոց յեկեղեցական կոչման եղելոց . . . . 65.
Հրովարտակ Ինքնակալին Ամենայն Ռուսաց 'ի Կառավարող Սինկղիտոսն. . . . . . 71.
Կանոնք վասն հաստատելոյ 'ի Մոսկուա Լազարեան ճեմարանի Արեւելեան լեզուաց՝ զատանձին Բաժնի 'ի սակս կրթութեան հայազգի մանկանց յեկեղեցական վիճակէ . . 73.
Կայսերական Շնորհակալութիւն. Բարձրագոյն հրաման յայտնեալ Կառավարող Սինկղիտոսին. . . . . 76.
Ցուցակ Կարգաւորութեան յաղագս Նախակրթականն Բաժնի՝ որ 'ի ճեմարանի. . . 77.
Հրաման Զինուորական Հանրական Նահանգապետին Մոսկուայ, տուեալ քաղաքական Խորհրդարանի Մոսկուայ, յաղագս ազատ կացուցանելոյ զճեմարանն 'ի քաղաքական հարկատուութենէ . . . . 79.
Նամակ Կառավարչի Կայսերական Դիւանատան ֆոն-Ֆօքայ, առ Հոգաբարձուն ճեմարանի Յ. Լազարեանց . . . . —
Նամակ Նախարարին Ներքին Գործոց, յաղագս թոյլ տալոյ Լազարեանց բանալ զտպագրատուն . . . . 80.
Հրամանագիր Կոմսին Պենկենտորֆայ 'ի Կառավարութիւնն ճեմարանի . . . . . —
Նամա՛կ Նախարարին Ազգային Լուսաւորութեան, յաղագս մուծանելոյ զճեմարանն յերկրորդ դասակարգ . . . . 81.
Հրովարտակք Ինքնակալին ամենայն Ռուսաց 'ի Կառավարող Սինկղիտոսէն . . . 82.
Քաղուած յօրագրութեանց Ժողովոյն Նախարարաց. . . . . 83.
Հրամանագիր Կոմսին Պենկենտորֆայ վասն պարգեւելոյ ճեմարանին զիրաւունս և զանձնաշնորհութիւնս հաւասար այլոց ուսումնարանաց երկրորդ դասակարգի . . 85.
Համառօտ բովանդակութիւն 'ի քաղուածոյ օրագրութեանց Ժողովոյն Նախարարաց, յաղագս յաւելեալ իրաւանց ըստ Սահմանադրութեան պարգեւելոյ ճեմարանի. . . 86.
Քաղուած 'ի թղթոյ Կոմսին Պենկենտորֆայ, յորում տեսանի հաշիւ Լազարեան ճեմարանի . . . . 89.

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ.

Քաղուածոյ քանի յայլոց գրուածոց.

'Ի Լրագրէն Մոսկուայ . . . . 90.
'Ի տետրակէն անուանելոյ „Դիւան Հիւսիսային". . . . . 91.
'Ի գաղղիական մատենէն անուանելոյ „Ուղեցոյց Մոսկուայ". . . . . —
'Ի պատմութենէ Հայոց յօրինելոյ 'ի Ս. Կլինքայէ . . . . —
Ի պատմութենէ Կայսրուհւոյն Կատարինեայ Բ . . . . 92.
'Ի Լրագրէն Մոսկուայ . . . . 92—93.
Յինվալիտ լրագրէ . . . . 94.
'Ի գրոյն մակագրելոյ Собраніе Актовъ . . . . 94—96.

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ·

Ճառք և ներբողեանք ասացեալք 'ի պատիւ Լուսաւորչեանց:

Ա. 'ի Ստեփաննոսէ քահանայէ Խօջումեան Տփխիսեցւոյ . . . . 97—113.

Բ. 'ի Մելքիսեդեկ Աւագ քահանայէ Ղամազեան. . . . . 113—114.

Գ. յԱբրահամ դպրէ Վաղարշապատեցւոյ (որ ապա վարդապետ) . . . . 114—115.

Դ. 'ի Յարութիւն քահանայէ Ալամդարեանց (որ ապա վարդապետ). . . . 116—117.

Ե.
Զ. } 'ի Պօղոսէ Սեբաստեան . . . . 117—119.

Է. 'ի Ստեփաննոսէ Վարդապետէ Վաղարշապատեցւոյ . . . . 119—120.

Ը.
Թ.
Ժ.
ԺԱ.
ԺԲ. } 'ի Յովակիմայ վարդապետէ (որ ապա Միքայէլ Եպիսկոպոս Սալլանթեան). 120—139.
ԺԳ.
ԺԳ.
ԺԵ.

ԺԶ. 'ի Սարգսէ Խորասանեանց. . . . . 140—142.

ԺԷ. 'ի Խաչատրոյ Եղիմիրզեանց . . . . 142—143.

ԺԸ. 'ի Դաւթէ Օսապաշեանց . . . . 143—144.

ԺԹ. 'ի Մարգարայ Խօրալեան . . . . 145—146.

Ի.
ԻԱ.
ԻԲ.
ԻԳ. } 'ի Մսերայ Մսերեանց Զմիւռնացւոյ . . . . 146—156.
ԻԳ.
ԻԵ.
ԻԶ.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ

7/124